



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



22 12 59

Orhan Uy

Beyazıt

Առաջին

485


Մ. ԱՐԵՂՆԱՆ

Hay shaj'arash...

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ**

602 p.

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀՍՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ



ՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒԱԾԻ

Արտատպած « ԱՐԱՐԱՏ » տպագրից

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅԻ ԱԹՈՌՈՑ Մ. ԷՋՄԻԱԾՆԻ

1899

ИРНО
ЕКАН
191
Всё

Дозволено цензурою 1899г. 2 Марта, г.Тифлисъ.

EREN
27
2/05/98

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՑՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԴԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒԱԾՔ):



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայոց հին «վէպերի» կամ «վէպի» մասին 1850 թուականից ի վեր ուսումնասիրութիւններ են լինում. բայց խնդիրը դեռ ևս պարզուած չէ, այլ մանաւանդ թէ պարզուելու փոխանակ աւելի մթնացել է շնորհիւ երկու ծայրայեղ ենթադրութեանց:

Հանգուցեալ Էմինն,¹ աւելի ցանկութեան քան թէ իրականութեան վրայ հիմնուելով,

1. Էմին, Վեպ հեռոյն Հայաստանի, Մոսկուա, 1850: Ձեռքի օակ ունիմք «Մկրտիչ Էմինի երկասիրութիւնները հայոց շեզուի, գրականութեան և պատմութեան մասին», Մոսկուա 1898:

Էմին, Մոսկուա Խորհրդակցի և հայոց հին վեպերը, քաղցմ. Գ. Խ. Թիւրխ, 1886. ռուս. թւագիրը 1881 թ. հրատ.:

Խորենացու Հայոց Պատմութեան Առաջին գիրքը և Երկրորդ գրքի մի որոշ մասը համարում է մեծ մասամբ, եթէ ոչ ամբողջապէս, ժողովրդական վէպից) երգերից ու գրոյցներից քաղած մի պատմութիւն, Մար Աբասի գիրքը՝ մի կեղծիք, և Մար Աբաս՝ Խորենացու հնարածը: Իսկ Պ. Գ. Սալաթեան 1896 թուին հրատարակած իւր աշխատութեան մէջ՝ գալիս է այն եզրակացութեան, թէ Խորենացու «վէպ» կոչուած աղբիւրները շինծու (Ֆիկտիւ) են, և թէ «վէպ» անուան տակ «ծածկուած են մի ամբողջ շարք զանազան, թարգմանական և ինքնագիր, գրաւոր յիշատակարաններ», որոնք և Խորենացու խսկական, բայց «թաքցրած աղբիւրներն»² են, և թէ Խորենացու շատ անգամ յիշած «Հայոց վէպը» «սովորաբար գրքերի ծագում ունի և մեծ մասամբ Աստուածաշնչի մտիւնների շատ քիչ ճարպիկ փոխադրումն (искусная переработка) է, որ հենց իրեն պատմագրի գրչին է պատկանում»³ :

Ծշմարիտ է, պ. Սալաթեանը եզրակացութեան մէջ «սովորաբար» բառով սահմա-

1. Г. Халатьянцъ, Армянскій Эпосъ въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго. Москва. 1896.

2. Նոյն, եր. 340.

3. Նոյն, եր. 342:

նափակում է իւր կարծիքը՝ բայց նշանակու-
թիւն չունի այդ, քանի որ նա իւր հետա-
դասութեան մէջ, վերլուծելով վէպ համա-
րուած կատրոնները, համարում է թէ Թորե-
նացին զրքերից առնելով՝ յերկրած ու կեղ-
ծած է ամենը:

Ո՞րն է այս երկու կարծիքներից ընդու-
նելին՝ կարծիքների որոնք իրարու հակադի-
րեն:

Այսպիսի դրութեան ժամանակ աւելորդ
չէ խնդիրը նորից ուսումնասիրել: Արդարև,
պ. Մառն իւր լուրջ ու մտացի քննադատու-
թեան մէջ՝ պ. Թալաթեանի գրուածքի շատ
ու շատ թոյլ կողմերի վրայ մտանացոյց է ե-
ղել բայց ցու է, որ այդ քննադատութեան
մէջ հեղինակը «վէպն» ամբողջապէս չէ վեր-
ցրած և ոչ պ. Թալաթեանի և Էմինի կար-
ծիքների ամբողջութիւնը:

Պ. Թալաթեանի հիմունքները շատ թոյլ
ու խախուտ են և յաճախ վէպի հետ կապ
չունեցող: Բայց և այնպէս նա այդպիսի նա-
խադիրներով շատ հեշտութեամբ եզրակացու-
թիւններ է անում: Թէպէտ անվերջ կրկնած
«հաւանական է», «գուցէ», «կարելի է կար-
ծել», «ինչ թուում է» և նման դարձուած-

1. Византийскій Временникъ, Томъ V. вып.
1 и 2. Санктъ-Петербурзь. 1898, стр. 227 հտն.:

ներով՝ նորա աշխատութիւնը, սակայն, կարող է վերջը ոչ-մասնագէտի և ոչ-քննադատական աչքով կարդացողի համար ընդունելի լինել, հոգեբանական այն պարզ օրէնքով, որ թոյլը թոյլի հետ միանալով, իրար զօրացնում են և վերջը զօրեղ տպաւորութիւն թողնում: Սակայն առաջին հայեացքից հենց նորա եզրակացութեան չափազանցութիւնը, ուստի և սխալ լինելը, թւում է ընթերցողին: Ի՞նչպէս մի պատմագիր, որ գիտէ ժողովրդական բանահիւսութիւնը որոշ չափով գնահատել պատմութեան համար, որի ժամանակ, նոյն իսկ պ. Խալաթեանի կարծիքով, «հայոց մէջ, ինչպէս միշտ, ժողովրդական երգեր կային ... և այդ անկասկած է» մի պատմագիր, որի համար պ. Խալաթեանի կարծիքով անգամ «մինչև իսկ կարելի է ընդունել (ДОПУСТИТЬ), որ նա ... իւր ժամանակի երգերից վերցրել է այս ու այն բառերն ու վիպական արտայայտութիւնները»¹ — ի՞նչպէս մեր այդ պատմագիրը, որ այնքան ու այնքան անգամ յիշում է ժողովրդական երգերն ու առասպելները, այնքան ու այնքան անգամ էլ կեղծում է, ոչ մի անգամ չէ՞ օգտւում ժողովրդական երգերից, ստո՞ւմ է զրելով. «Զայս

¹ Халат. Арм. Эпосъ. Եր. 114.

երգելով ոմանց բամբուռանք, լուաք իսկ ական-
ջօք մերովք: Մինչև իսկ, ընդհակառակն, շին-
ծու երգեր և առասպելներ է յօրինում իրե-
նից, այն էլ միշտ մի բառ այս գրքից, մի
բառ այն գրքից առնելով, նախադասութեան
մի կտորն երրորդ գրքից, իսկ միւսը չորրոր-
դից:—Առաջին հայեացքից հենց այս կար-
ծիքն անընդունելի է թւում. որովհետև ըն-
թերցողն իրեն հարց է տալի, թէ այդ պատ-
մագիրն էլ ինչո՞ւ պիտի ստէր և չեղած եր-
գեր ու առասպելներ յերիւրէր, քանի որ
կարող էր եղած ժողովրդական առասպելնե-
րից օգտուել: Գուցէ առարկեն, թէ ծանօթ
չլինելու պատճառով չէ օգտուած ժողովրդա-
կան երգերից ու առասպելներից: Բայց մի՞թէ
հաւատալի է, որ այն հայ պատմագիրը, որ
գիտէ իրեն այնքան ատելի պարսից «փծուն»
և «անձոռնի» առասպելները, չիմանար իւր
հայրենի առասպելները, կամ գոնէ բնաւ
հարց ու փորձ չանէր՝ իւր հայոց պատմու-
թեան մէջ ժողովրդական առասպելների այս
կամ այն կտորից օգտուելու համար:—Ան-
շուշտ, Խորենացու յիշած պարսից առասպել-
ներն էլ շինծու կը համարուէին, եթէ ուրիշ
աղբիւրէ յայտնի չլինէին:

Միւս կողմից էմինն ևս չափազանցու-
թեան մէջ է ընկնում, ուրանալով գրաւոր

աղբիւրը, և «վէպից» քաղած համարելով ամբողջ կտորնէր, որունց համար Խորենացին պարզապէս առում է թէ գրաւոր աղբիւրներէց և առնում: Երբ սխալին ենթարկուում է և պ. Փետաեթի գրելով Խորենացու պորձին ամբողջ առաջին և երկրորդ գիրքը գրեթէ միայն այս [պատմական] երգերէն շինուած են՝ »

Երբ խօսք է լինում Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ եղած հայոց «վէպի» մասին, պէտք է շնորհակալ առանձնապէս որոշելու: Թէ արդեօք Խորենացին յայտնում է, որ վէպից կամ գրոյցներից է քաղում: Թէ չէ: Այս մասին շատ թեթեւ են անցնում ոչ միայն Էմիւր, այլ և պ. Խաչատրեանը, առաջինը վէպ համարելով իսկ երկրորդը յայտնելով, թէ Խորենացին վէպի տեղ է ուզում ծախել շատ բան: մինչդեռ Խորենացին պարզապէս յայտնում է թէ գրաւոր աղբիւրից է առած:

Այդ գրաւոր աղբիւրը կարօք է, սրգարև, որևէ ժողովրդական առասպելի վրայ հիմնուած լինել, բայց կարող է և ամբողջապէս գիտնականների սարքած յերիւրում (կոմբինացիա) լինել: Եւ եթէ Էմիւր թոյլ կողմն է, որ նա Խորենացու մէջ եղած այսպիսի հատուածները վիպական է համարում, առանց

1 Ծերթեր, Հայկական աշխատարարներ, քաղածանց հ. 8. Տոբոտն. Վիլնևա. 1895. եր. 121.

նեղութիւն կրելու համոզելի ապացոյցներ բերելու) — միւս կողմից էլ, եթէ մէկն այդպիսի հատուածների «վիպականութեան» դէմ է գրում, նա իսկապէս Մորենացու մէջ եղած «վէպի» դէմ չէ գրում, այլ ուրիշների ենթադրած մի երևակայական վէպի դէմ, որի հերքումը և շատ դժուար չէ: Եւ պ. Մալաթեանի աշխատութեան գլխաւոր արժէքը, ինչ որ «հայոց վէպին» է վերաբերում, հենց այս կարծեցեալ վէպի հերքման մէջ է:



Ա.

Ա Ռ Ա Ս Պ Ե Լ

(Վէպի — Ջոռյցի — Վիպասանքի — Առասպելների — Երգերի —
Երգք առասպելացի — Երգք Վիպասանացի)

Ի՞նչ ընդհանուր անունով պէտք է կոչել հայ ժողովրդական բանահիւսութեան արդիւնքները, որոնցից օգտուած է Խորենացին: — Անշուշտ, այն ընդհանուր անունով, որով և Խորենացին է կոչում: Սակայն Խորենացունը թողած, կամ, ինչպէս Էմին և պ. Խալաթեան, նորաստեղծ անունով են կոչում՝ «Հայոց հին վէպերը» «հայոց վէպը» կամ ինչպէս հ. Զարբանալեան և պ. Փետտերի, «երգ» բառն ընդհանրացնելով՝ «Գողթան երգեր» և «Հին հայոց ազգային երգերը»:

Վէպ բառը, որ մեր արդի լեզուի մէջ էպոսի իմաստ է ստացել, Խորենացու մէջ բնաւ նոյն իմաստը չունի, ինչ որ վերագրում են անոր Էմին¹ և պ. Խալաթեան,² առանց

1. Վեպ հնոյն Հայաս. եր. 92:

2. Арм. Эпосъ եր. 42, 194:

որևէ հիմունքի, լոկ խօսքով, յեղաշրջելով
բառի հին իմաստը, որ շատ ճիշտ որոշած է
«Հայկազեան լեզուի նոր բառգրքի» մէջ: Վէպ
է «հին զրոյցք» իրական կամ ստայօդ. պատ-
մութիւն՝ արձակ կամ քերթողական. լուր՝
քանիւ կամ գրով, բայց ոչ երբեք միայն
«պատմութիւն քերթողական կամ պատմա-
կան քանաստեղծութիւն. ըստ յետնոց՝ դիւ-
ցազնական քանաստեղծութիւն... չափաբերա-
կան և ոչ արծակ»,¹ ինչպէս ուզում է հա-
ւատացնել Էմիլը շփոթելով, վէպ և երգք վի-
պասանաց:

Խորենացին իսկապէս քանի անգամ որ
վէպ բառը գործածած է, գրաւոր պատմա-
կան յիշատակարանների համար է գործա-
ծած: Ա. բ. ստում է, թէ յոյները հոգ են
տարել «գամենայն ազգաց զմատեանս և զվէպս.
ի յոյն լեզու փոխարկել»: Թէ այստեղ «վէպ»
նշանակում է «պատմութիւն» պարզ է. քա-
նի որ Խորենացին այդ զլիւի մէջ, յայտնելով
յոյների թարգմանած լինելն ուրիշ ազգերի
պատմութիւնները, արդարացնել է ուզում թէ
ինչո՞ւ ինքը իբրև աղբիւր հայոց պատմու-
թեան յիշում է «զԹունացն միայն... զպատ-
մագիրս» և խոստանում է պատմել հայ նա-

1. Էմիլ, Վեպ. հնոյն Հայաս. եր. 92:

հասցեատիրի «ազգարանութիւնը» և «ղչայաստանեաց» նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զզխարդն «... որպէս հաւուստի ի յունականս ոմանս կայ սլաւոմութիւնս» (Ա. ա.): Ծոյն բանին զառնում է նա և Ա. Ե. գլխի վերջերում:

«Վէպ» բառն երկրորդ անգամ գործ է ածած Ա. գրքի բ. գլխի մէջ, ուր կշտամբում է «զանիմաստասէր բարս մերոց նախնեաց», որոնք հոգ չեն տարել Հայոց աշխարհում «գործեալ» «արժանի գրոց յիշատակի» «արութեան գործերը» «մատենագրելու» և գովում է այն օտար թագաւորներին, «որք գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս եւ ի պատմութիւնս»: Թէ այստեղ ևս վէպ épopée չէ նշանակում, այդ պարզ է, քանի որ խնդիրը կատարուած գործերն արձանագրելու մասին է. այլ և «վէպս և պատմութիւնս» գրողներին կոչում է «գիւանագիրք մատենից», որոնք բանաստեղծ չեն հարկաւ. իսկ Ա. գրքի իա. գլխի մէջ նոյն խնդրին զառնալով նոյն «գիւանագիրք մատենից» կոչում է «յիշողութեանցն վերակացուք»: «Որպէս վերագոյն ուրեմն յառաջին ճառսն ամբաստանեցաք զառաջին նախ-

նեացն մերոց անիմաստաւեր բապուց ախար-
ժակս, այս հանգիպի և աստանոր: Բանգի և
որք ի հօրէն նաբուգոդոնսորայ գոյծք զըն-
ցան յլուրեանցն յիշողութեանցն վերական-
ցուաց»:

Երկու համանիշ բարեբոյ Վիվեյո և ի
պատմութիւնս կողքէ կողք գրուելը կար-
ծել պիտի շտայ թէ «վեպ» չէ նշանակում
պատմութիւն: Սորենացու մէջ համանիշ բա-
ռերի այսպիսի կրկնութիւնները այնքան սա-
փորական են որ արիւնակներ բերելն աւե-
լորդ ենք համարում: Երշեղք միայն Ա. ք.
«զմատեանս և զվեպս» անոյ համար միայն
որ այստեղ «մատեան» և «վեպ» (պատմու-
թիւն) համանիշ են գործածուած: քանի որ
մի փոքր պուշ մատենագիրք» և «պատմու-
գիրք» բառերն իրրե համանիշ են ընկու-
նուած: «Եւ ընդ այս մի ոք զարմացի եթէ
բազում սզգաց յեպ մատենագիրք: ... մա-
նաւանդ պարսկի և քարթեպուց: յորս առա-
ւել սզգիս մեայ գտանին բարեւ մնչ իրաց
յիշատակք մեք զյուրացն միայն յիշեցաք
զպատմագիրք» և անտուստ յայտարարութիւն
մերոյ ազգաբանութեանս (հայոց պատմու-
թեան) իրաւացօք յանդիման կացուցանել»:
Կերնուգրի մէջ «մատենագիրք» բառի տեղ
«քաղղեացուց» և «ասարեւտանեաց մատեանք»

է գրած. իսկ հայոց պատմութիւնը պարսից և քաղղէացւոց ոչթէ éropée-ների մատենաների մէջ պէտք է լինէին, այլ պատմագրութեանց մէջ: Այդ երևում է և յիշած Ա. իս. գլխից, ուր դառնում է նոյն խնդրին. «Ապա եթէ ասիցեն, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց բազմաց այսպէս գտանել զանուանս և զգործս, ասեմ: Ի նոցն դիւանաց ասորեստանեայ և պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս» ...: Հմմտ. վերելում յիշած դիւանագիրք մատենից, իբրև վէպ, պատմութիւն գրող: Հմմտ. և Ա. ժդ. «գրագում մատենանս և զգրոյցս», համանիշ «զմատեանս և զվէպս» ձեին, քանի որ, ինչպէս յետոյ կրտսնենք, զրոյց նոյնպէս պատմութիւն է նշանակում:

Այսպէս տեսնում ենք, Խորենացին երկու անգամ միայն «վէպ» բառը գործածած է և այն «պատմութեան» իմաստով:

Այնուհետև Խորենացին գործ է ածում երեք բարդուած բառ, որոնց մէջ «վէպ» դարձեալ «պատմութեան» իմաստ ունի: Բազմապէս (Polyhistor) (Ա. դ.), որ և «պատմագիր» է կոչուում: Այս (Ա. դ.) գլխի մէջ դադարեցնում է որոշ «պատմագիրներուից», ինչպէս և Բազմավէպից, քաղած պատմութիւնը, բայց

Ա. զ. գլխի մէջ նոյն դադարեցրած պատմութեանը դառնալով, նոյն պատմագիրները այստեղ Վիպագիր է կոչուում: Իսկ վերնագրի մէջ «Հնախօս», որով և վէպ դարձեալ նոյնանունով է պատմութեան» հետ: «Վիպագիր» բառը «պատմագրի» իմաստով գործածուած կայ. և ուրիշ հեղինակների մէջ, օրինակ Եւսեբիոսի Զրոնիկոն, Ա. «գրանաստեղծ», զվիպագիրս, զփիլիսոփայս», որտեղ վիպագիր հաստեալ իբրև պատմագիր է գրուած բանաստեղծների և փիլիսոփաների հետ: Եոյն ձեռով՝ Ոսկեբերանի մէջ. «վիպագիրք և փիլիսոփայք, և որ զառասպելսն գրեցին» (այսինքն բանաստեղծներ): Դարձեալ Եւսեբիոսի Զր. մէջ «Կեփաղիոնի վիպագրի՝ վասն ասորեստանեաց թագաւորութեան»: Եոյն տեղում. «Առ որով զլինել մեծ ջրհեղեղին վիպագրեն», այսինքն պատմեն (Տէս նաև ուրիշները. Մ. Բառգ. Հայկ. լեզ.):

Վէպ բառի իսկական իմաստը Խորենացու մէջ իբրև պատմութիւն՝ պարզուած համարելով, թողնում ենք «վիպասանք» բառի մասին իւր տեղում խօսել: Անցնենք զրոյց բառին, որ ըմբն մեկնում է և պ. Խալաթեան՝ ընդունում է իբրև die Sage, сказание, «հապառակն վէպի» (որ չափաբերական է), «պատ-

1. Арм. Эпосъ. Եր. 42.

մութիւն արծազ և ոչ չափաբերական, հին
աւանդութիւնք բերանացի զրուցեալք»¹

Եթէ լաւ ուշադրութիւն գտարձնենք: Կր
տեսնենք, որ զրոյց բառը Խորենացու մէջ
համեմտել է վէպ բառին, և նշանակում է թե
բերանացի խօսքէ գրաւոր սրեւէ պատմութեանը
պատմութիւն:

ա. Գրաւոր պատմութիւն: Այս իմաստով
յառաջ գործածուած ենք պատմ. զրոյց
բառը: «Գիւղից և գաւառաց ևս եւ իւ-
րաքանչիւր պանջի և հանուրց հակառա-
կութեանց եւ դաշանց առ մեզ գտանին
անբաւ զրուցաց մտտեանք» (Ա. գ.) «Ըստ ա-
խարհելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն (գիւ-
ղագիրք) փոփոխել զանուանս և զզրոյցս և
զժամանակս» (Ա. գ.) «Ինդիրն այն մտտին է
թէ արաստին պատմագիրներին մէջ եղած պատ-
մութիւնները, անորքերու մէջ են Ս. Գրքի պատ-
մութիւնից՝ անուններով, պատմուածքով և
ժամանակներով: Հրամայէ (Ծիմաս) զբազում
մտտեանս և զզրոյցս առաջնոցն... ոչքելչէ
Բերեմն զրոյցք նոյնոնիչ պատմութեան գրքե-
րի: Ե՛րկնս... ի զրոյցաց աւանալ» (Ա. Ժգ.)
հասանորեն գրաւոր և ոչ անգիր զրոյցներ
քանի որ նոյն Երկնսը գրաւոր «զրոյցքն» այ-

1. Էմին, վեպ հն. Հայաս. եր. 93:

բել է ուրիշների քաջութեան յիշատակը ոչընչացնելու համար: «Յարմարեալ կարգեցից»... և որ ինչ վասն սոցա զրոյցք... ոչինչ կամամտածական... այլ որ ինչ ի զրոց» (Ա. ԺԹ.) «Զրոյց մատենից տային» (Ա. Գ.), այսինքն զրուած պատմութիւններ էին անում: «Մար Աբաս կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի... յորմէ մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի զրուցացս, երկրորդեմք»... (Ա. Թ.): «Երբ ապա յըղձալին քո հասանիցեմք զրուցաց պատմութիւնն» (Ա. Է.), այսինքն, երբ պէտք է հայոց պատմութիւնը պատմենք: Այսպէս և Բ. ԼԳ. Խոսրովի, Անակի, Լուսաւորչի ծնընդեան պատմութիւնն անելուց յետոյ, «Իսկ զմնացեալս ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»:

Թէ այս բոլոր դէպքերում «զրոյց» զրուոր պատմութիւն է նշանակում, պարզ է: Նոյն իմաստը պահում է զրոյց բառն և բարդութիւնների մէջ: «Թէ ո՛վ կամ ուստի՛ զայսպիսի եգիս զրուցաքանութիւնս» (Ա. Ը). խօսքը Մար Աբասի պատմութեան մասին է: Նոյն իմաստով. «Այս կարգ զրուցաքանութեան դարումն առցէ» (Ա. Թ.): «Վասն Յունացն զրուցաքանս զակնարկութիւն մերոց պիտոյից առնելոյ՝ բաւական է այսչափ» (Ա. Բ.):

«Ծրթեալ հասանիցեմք ի հեթանոսական զրուցակարգութիւնս» (Ա. գ.), գրաւոր պատմութիւնները: Եոյնպէս պատմութեան իմաստով և Ա. գ. «Այսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեան ճառս և զրուցատրութիւնս» (հմմտ. «զրոյցս մատենից տային»), այսինքն, «շարածս բանից», զոր դիւանագիրք արձանացուցանեն ի վէպս և ի պատմութիւնս:—

Այսպէս «զրոյց» բառը մենակ առած, նշանակում է ընդհանրապէս պատմութիւն, իսկ Խորենացու մէջ յատկապէս գրուած պատմութիւն¹:

Է. Բերանացի զրոյցներ:—Այս իմաստով իբրև die Sage, գործածելիս Խորենացին միշտ անգիր հին վաղնջուց նախնական բառերով կամ «յաւանդութենէ հասեալ» «որդի ի հօրէ առնելով յիշատակ» ... «զրուցեն պառաւունք» շրջաբանութիւններով որոշում է ժողովրդական զրոյցը գրաւոր զրոյցից: «Զհամբաւս հինս և զզրոյցս նախնականս յիւրեանց թագաւորաց կամ մեհենից մատեանս գրել» (Ա. ժդ.): Այնուհետև նոյն իմաստով հին անգիր, յաւանդութենէ հասեալ զրոյցներ են

¹. Հմմտ. Մատ. Визант. Временникъ. III. V. 1898 եր. 261.

Ուումպիոդորոսի պատմածները Ա. զ. Ժ. Բ. ը. 5 դ.)՝
որոնց մասին յետոյ խօսք կը լինի: «Ասեմ զրոյց
զսքանչելի ծերոյն... որդի ի հօրէ առնելով զի-
շատակ զրուցացս» (Բ. հե.): «Ընդէր պատրիմք
զրուցով վաղնջուց և պառաւեալ առասպելեօք,
պաղեսաինացիս զմեզ վարկանելով» (Բ. իդ.):
Ափտաւազդի շղթայուած լինելու մասին «զրու-
ցեն պառաւունք» (Բ. կա.): Տորքի մասին ա-
ռասպելն ևս, որ միանգամայն երգ է, երկու ան-
գամ կոչուում է զրոյցք, սակայն այստեղ «զրոյցք»
բառն անգիր զրոյցների իմաստ չունի, այլ ընդ-
հանրապէս պատմութեան, պատմութեան,
անորոշ առումով. «Ոչ Սամսոնի և ոչ Երակլեայ
և ոչ Սազձկին յարմարեն այս զրոյցք» (Բ. ը.):
որ է Տորքի մասին այս «պատմութեաները»
ոչ Սամսոնին և ոչ Հերակլին, և ոչ Սազձկին
են յարմարում: Իսկ երկրորդ դէպքում. Բան-
զի էր արդարեւ սաստիկ հզօր, և այսպիսեաց
զրուցաց արժանի: Որովհետեւ Տորքն արդա-
րեւ սաստիկ հզօր էր և այսպիսի պատմութիւն-
ների (ընդհ. առմամբ) արժանի: Այսպէս հաս-
կանալով, այլ ևս կարիք չենք տեսնում «զը-
րոյցք» բառին այստեղ «ժողովրդական պատ-
մութեան» իմաստ տալու և сказки բառով
թարգմանելու, ինչպէս անում է պ. Մառը:¹

¹. Виз. Врем. V. էր. 261.

հիմնուելով անոր վրայ՝ որ այդ «զրոյցք»-ն առասպել են:

Սրուանդի ծննդեան մասին գրում է (Բ. 1է). «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս»: Այս «զրոյցք» բառից լոկ եզրակացնել կարելի չէ թէ Մորենացին «հաւատացնում է» թէ «հայ ժողովրդական զրոյցներ» կային Սրուանդի ծննդեան մասին, և թէ նա այդ ժողովրդական զրոյցներից, և ոչ թէ մի գրաւոր աղբիւրից է քաղում այդ պատմութիւնը, (ինչպէս յայտնում է պ. Մալաթեանը¹), առանց որևէ հիմունքի: Այդ ձևով հասկանալը Մորենացու լեզուն ապահովապէս թիւրեկ կընշանակէ, քանի որ «զրոյց» բառով Մորենացին, ինչպէս տեսանք, մի տեղ ընդհանրապէս որ և է, միւս տեղերում յատկապէս գրաւոր պատմութիւն, պատմուածք է հասկանում, իսկ ժողովրդական զրոյցը որևէ ածականով կամ նախադասութեամբ որոշում է միշտ², Աւելացնենք և այն, որ նոյն դարձուածք երկրորդ անգամ գործ է ածում Մորենացին Բ. գրքի ձա. գլխի մէջ, Մամիկոնեանների ծագման մասին գրելով. «Որ ունին զրոյց այսպիսի», ուր զրոյցը ժողովրդական չէ, այլ գրաւոր պատմութիւն, որ պատմագիրը Փեր-

1. Халат. Арм. Эпосъ. Կր. 213.

2. Հմմտ. Մառ. Виз. Врем. V. Կր. 261.

մելիանոս եպիսկոպոսի «պատմութիւնից» առաժ պիտի լինի, ինչպէս գրուած է Բ. Հե. «Որ ինչ զկնի մահուանն Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ (Փերմեխանոս), ստոյգ համարելով երկրորդեմք»:

Մենք բերեցիք, ինչպէս կարծուած ենք, այն բոլոր կտորները, ուր Խորենացու մէջ գործածուած է, «զրոյց» բառը: ¹ Այդ բոլոր գործածութիւնները, ինչպէս ընթերցողը կրտեսնէ, չեն կարող թոյլ տալ զրոյցի մէջ արձակի հետ և «խօսքի մը չափակաւն ձեւը տեսնելու», ինչպէս գրուած է լոկ խօսքով պ. Փետտեր: ² Անշուշտ, երգերի մէջ ևս, ինչպէս Տորքի մասին երգի մէջ, զրոյցնիր, այսինքն պատմութիւներ, են լինում: բայց այդ մեզ իրաւունք չէ կարող տալ շրնպունելու, որ զրոյց բառն ևս «ընդհանուր իմաստ» չունենայ, ինչպէս երգ, պատմութիւն, վէպ բառերը, այլ բանաստեղծութեան որևէ տեսակ լինի:

Զրոյց բառի բոլոր գործածութիւնները

1. Կոյուններն անբողջացնելու համար ասեցանք, որ Բ. կգ. պատմագրող Քարդաժակի պատմելու (գրաւոր) համար գործ է ածուած «զրուցե» բառը. հենց իրեն խորհնացու պատմագրելու համար «զրուցնցաք» (Բ. հե.), «զրուցնցի» (Գ. ա.) իսկ Բ. ձգ. քերականի պատմելու համար «զրուցնաց»:

2. Յերբեր, Հայկ. աշխատ. եր. 127 ծան. 2.

մէջ բերելով տեսնում ենք որքան սակաւ բան, իսկապէս ոչ ինչ, առնուած է ժողովրդական գրոյցներից Խորենացու Հայոց պատմութեան մէջ: Մէկն է՝ Բագրատունեաց պաղեստինացի լինելու մասին վաղնջուց գրոյցը՝ որ պատմագիրը գործ է ածում ուրիշի բերանը դրած՝ ծաղրական կերպով և «պառաւեալ առասպելիք» է անուանում: Միւսն է Արտաւազդի շղթայուած լինելու և ինչ պառաւանց գրոյցը՝ որը նոյնպէս քիչ ներքևում դարձեալ առասպել է կոչուում:

Վիպասանք, երգք վիպասանաց կոչում է Արտաշէսի, Սաթենիկի, Արգաւանի և Արտաւազդի մասին երգիչները կամ երգերն ու պատմուածքները. սակայն ադոնց համար նոյնպէս աւելի յաճախ «առասպել, սուսպելարանելով երգել, առասպելեալ երգել, երգել յառասպելսն, երգիչքն առասպելարանեն, երգիչք յառասպելին ասեն» բառերն ու դարձուածներն է գործածում: Իսկ ժողովրդական բանահիւսութեան մնացած գրեթէ բոլոր նիւթերը, որոնցից օգտուած է Խորենացին, միմիայն առասպել անունն են կրում: Առասպել են՝ Շամիրամի, Վահագնի, Տորքի, Արծրունեաց ծագման, Սանատրուկի, Երուանդի հայեացքի, Սմբատի, Արտաւազդի, Վարդգէսի մասին յիշածները: Առասպել է նոյն

իսկ Շարայի մասին ասած առակաւոր խօսքը:

Հայոց պատմութեան համար եղած հայ ժողովրդական բանահիւսութիւնից առասպել կոչումը չունի մի միայն Տիգրանի մասին յիշածը, որ միայն երգ է կոչում. Զորմէ ասէին ի հինսն մեր, որք բամբռամբն երգէին: Առասպելներից իբրև երգ յիշուում են Երգք վիպասանաց (նոյն Թուելեացն երգք, Վահագնի, Տորքի և Արտազգի մասին: Իսկ մնացած առասպելների մասին տեղեկութիւն չէ տրուում, թէ արդեօք երգուել են թէ չէ, և հարկ չկայ, որ անպատճառ երգուած լինին, քանի որ կարող են և պատմուած լինել, ինչպէս և հենց վիպասանքը պատմուած են (Բ. խթ.):

Մեր քնութիւնից երևում է, որ հիմունք չկայ մի ընդհանուր վերնագրի տակ «հայոց հին վէպերի» կամ «վէպի» և կամ «հին հայոց ազգային երգերի» «Գողթան երգերի և ոչ ժողովրդական զրոյցների մասին խօսելու, այլ միայն առասպելների մասին, որոնց մէջ, ըստ Մորենացու, որոշ առածպելներ կոչուում են վիպասանք կամ երգք վիպասանաց:

Պ. Մալաթեանը ցանկանում է, որ Մորենացին «երգք վիպասանաց» խօսքն առած լինի Եփրեմ Մուրին Ասորու Զորք. Թագ. մեկնութեան մի կտորից» որի մէջ յիշուում են

«երգք վիպասանաց» և «վիպասան երգք»¹ և ոչ միայն այդքան, այլ Մարենացու «ազբիւրի» այդ տեղը ցոյց տալուց յետոյ, աւելացնում է թէ այդ բառերն՝ «ինձ համար գոնէ պարզ է, որ ընդհանրապէս սր և է բանաստեղծական երգի նշանակութիւն ունին, մինչդեռ Մովսէսը մասնաւորում է (специализирует) վերջին ասացումքը [երգք վիպասանաց], տալով անոր հայ բապտոզների պատրաստի քերթուածների (поэма), Հայկի, Տիգրանի, Արաաշէսի և արիշների քաջագործութիւնները երգող՝ հայոց եղանակաւոր վէպի (компонованного армянского эпоса) իմաստ»²

Թէ այդ լոկ ենթադրութիւնը սխալ է և Մարենացին իրենից չէ հայ ժողովրդական երգերին ու զրոյցներին «երգք վիպասանաց», ինչպէս և «առատպել» անունը տալիս, այլ հենց այդպէս էլ կոչուել են, այդ երևում է Փաւստոս Բիւզանդի պատմութիւնից, որի մէջ Սրբորդ Դարօ զլ. ժգ. յիշուում է. «Դեգերեալ մաշէին [խառնաձաղանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարաց կամ շինականութեանց] յանուղղայ կրթութիւն ընդ չքնոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սո-

1. Տէս Նոր Բաղդ. Հայկ. յիգուի:

2. Халат. Арм. эпос. Եր. 195.

Վորութեանց, բարբոտիս խուճարուժ միտս
ունելով: Եւ զիւրեանց (==զՀայոց) երգս աւ-
ռասպելաց զՎիպասանութեանն սիրեցեալք
ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատա-
ցեալք, և ի նոյն հանապազորդեալք: Փաւս-
տոսի այս կտորից իմացում է, որ հայոց
հին հեթանոսական երգերը կոչում էին
«երգք առասպելաց», «երգք վիպասանութեան»: «Վիպասանութիւն» և «վիպասանք» բառերի
հարանիշ լինելը յետոյ կրնեսունը: Այսանկ
նկատենք, որ Քիւզանդի այս հոտուածը միւս
կողմից ճշտում է և այն, որ Խորենացին ի-
րենից չէ վիպասանաց երգերին նաև «առաս-
պել», «երգն յառասպելսն» և ին. կոչումը սա-
լիս» այլ որ հինց ժողովրդի մէջ «վիպասանք»
կոչուել են և «առասպելք»:

Գայով պ. Խալաթեանի միւս ասածներին,
պէտք է նկատել, որ նա ուղղակի յեղաթիւ-
րում է Խորենացու կրթանութիւնը: Խորե-
նացին Հայրի ժամն, օրինակ, ոչ երգ, և ոչ
առասպել, և ոչ ժողովրդական զրոյց է
յիշում: Ինչ անոց թէ նորա քաջագոր-
ծութիւնները երգուելին «հայոց եղանակա-
ւոր վէպի» մէջ: Բայց միթէ այսպիսի «վիպ»
յիշում է ուր և է Խորենացին:

Թէ հայոց մէջ երգերը որ և է «գործիքի
նուագակցութեամբ կարող էին երգուել» ի՞նչ

տարօրինակ բան կայ այգտեղ, քանի որ ամեն նախնական ազգերի մէջ իսկ երգւում և միանգամայն նուագւում է: Դնչու մեր աշուղները, մեր ժողովրդական երգիչները սանի թառի կամ այլ գործիքի նուագակցութեամբ պիտի երգեն այժմ իսկ հին ժամանակ այդ պիտի չլինէր: «Բամբիռն, բառը, որի վարիանտներ են «փանդիռն», «բանդիռն», Խորենացու մէջ, սակայն, ոչ թէ «վէպի» հետ է դրած այլ մի տեղ «ցցոց և պարուց» երգերի հետ (Ա. զ.), որ հայոց վիպասանքի հետ կապ չունին. երկրորդ անգամ յիշում է թէ Տիգրանի մասին «բամբռամբ» երգում էին (Ա. իւ.), իսկ երրորդ անգամ յիշում է թէ Վահագնի մասին առասպելը բամբռամբ երգում էին (Ա. լա.): Իսկ միւս առասպելների բամբռամբ երգուելու մասին և ոչ մի խօսք: Այստեղից եզրահացնել թէ Խորենացին ասում է, թէ հայոց «նուագաւոր վէպ» է եղել Հայկի, Տիգրանի, Արտաշէսի և ուրիշների մասին, իմա հայոց բոլոր առասպելները միասին առած(!): Բայց նախ քան այդ պէտք էր ցոյց տալ, թէ հայոց բոլոր առասպելները երգուել են, այն էլ բամբռան նուագակցութեամբ, և ոչ թէ պատմուել, թէ անոնք մի կապակցեալ ամբողջութիւն են կազմել, — այն որ Խորենացին ոչ մի տեղ չէ ասած:

Արժէք չունի և պ. Մալաթեանի ասածը, թէ՛ Մորենացին մասնաւորում է «երգք վիպասանաց» և իբրև «տեքնիկական տերմին» է գործածում, քանի որ այդ մասին ևս ոչ մի հիմունք չէ բերուած:

Սակայն եթէ այդ բառը հայոց մէջ նոյն իսկ իբրև տեքնիկական տերմին լինէր, այդ դեռ ևս արգելք չէր կարող լինել, որ հայ թարգմանիչներն օտար ազգերի նման երգերը հայոց երգերին յատուկ անուններով կոչէին: Բաւական է միայն ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս հայ թարգմանիչներն օտար աստուածութիւններն ու հսկաներն Աստուածաշնչի մէջ Հայկ, Վահագն, Անգեղ ևլն հայ աստուածների կամ հսկաների համապատասխան են դնում: Այդպէս կարող էր և Մփրեմ Մուրին Ասորոյ գրուածքի մի թարգմանիչ հայոց «վիպասան» բառով կոչել ուրիշ ազգերի երգերը:



ՄԻ ԲԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԷՋ.

(Բան, ըանք:—Շրգ ըանիցն:—Երգարանք ըա-
նաւորք:—Բանք երգացն.—Ի ըանսն որ զնր-
Վանէ:—Բան ի նմանէ):

Մի քանի քառ ըստ քնահատճոյս բացա-
ւարկով ըմին և սոցա աւրիչնեքի հետ և պ-
Խալաթեան (սառ ի հարկէ, որպէս զի յետոյ
հերքէ և Խորենացու կեղծիքը ցոյց աւայ), կամ
ժողովրդական աւ սրտամական երգեր են ու-
զում տեանել այնտեղ, աւր Խորենացին այդ շէ
ասում, կամ «Վէպի» ընդարձակութիւնն ու
ամբողջութիւնը, կամ թէ, ընդհակառակն
«Վէպի» արուեստականութիւնը ցոյց աւայ:

Այդպիսի բառերից է ըան(ք), որ մի
քանի նշանակութիւն ունի. նախ իբրև լիմաստ,
խելք, ըանալանութիւն, որի օրինակներ կա-
րելի է դանել Ա. գրքի ա. դիտի մէջ հենց
«Փան ըանին... մեք պատկեր Աստուծոյ»
և ըն. ապա իբրև լնզու, օրինակ «յեղուիլ

յոյն բան» (Ա. բ.), որ և նոյն զլիւր մէջ «ի
յոյն լեզու փոխարկել» փոխել», և այնուհետեւ
խորե խօսք, գրաւոր իմէ բերանացի, այլ և
ընդարձակ առժամք՝ ասելիք, ասած ըան, որեւէ
պատմութիւն: Մեզ համար կա-
րեորն այս վերջին լիատարով գործածութիւնն
է, որը շատ սովորական է Խորենացու մէջ.
«Յաղագս մերոյս յիսկորանն յայսժ ըանիցս»
(=խօսք, պատմութիւն): «Հարուստք և իշ-
խանք ուշխարհիս Հայոց ոչ... հրամայեցին
կարգել զյիշատակս ըանից» (Ա. ա. ժդ.):
«Յայտպիսիս պատկանաւոր դնիլ յարձանու-
դրութիւնս ըանից»: «Զվասն նոցա կշտամբու-
թեան յարմարել զքանս» (Ա. գ.) (խօսքեր):
«Շարածս ըանից»: «Ոչ բանի ինչ աստուա-
ծայնոյ եղելոյ» (Ա. դ.): «Աստուածայինքն ի
ձահ գայցն պատմութիւնք ըանից» (Ա. գ.):
«Զայդ հոգեարացն բարբառին քանից» (Ա. դ.):
«Ըստ աստուածային քանից» (Ա. ե.), որ և
(Գ. դ.) «Որպէս յաստուածայինսն գտանեմք
ասացեալ պատմութիւնս...»: «Սակաւ ինչ (Ա.
դ. զ. ժդ) անցունել քանի»: «Այլում տեղւոյ
և ժամանակի թողեալ, հասուցուք աստանօր
զքանս» (Ա. դ.):

Նկատենք, որ հաստուցուք աստանօր
զքանս» չէ նշանակում «կտրենք այստեղ խօս-
քը», ինչպէս թարգմանել է հ. Ստեփանէ:

այլ «մեր խօսքը, ասելիքն ասենք»: Արդարև
«հատուցանել» կայ մատենագիրներին մէջ «հա-
տանել» բայի իմաստով գործածուած, բայց
«հատուցանել բան» նշանակում է «խօսք աս-
ել» (Հմմտ. Մոր Բառք. Հայկ. լեզուի): Հմմտ.
նոյն գլխի մէջ. «Զորոյ զպատմառն յետոյ
հատուցուք» որ է «պատճառը յետոյ կասենք»
(Ա. ի): «Կարի շատ լինի, թէ զամենայն՝ որ
ինչ արժան է՝ ասիցեմք ի ճառիս քնախա-
կարգելոց արանց զքանս և զգործս», նոյնպէս
սխալ է թարգմանած հ. Ստեփանէ «գործե-
րը և խօսքերը» որ կարող է հասկացուել
վերևում յիշած մարդկանց ասած խօսքերը.
որպիսի խօսքեր ոչ մի տեղ մէջ չէ բերում
Սորենացին: Բանք կարելի է հասկանալ այս-
տեղ համանիշ գործ բառին, ինչպէս աշխար-
հաբար ասում ենք «բան ու գործ», որպիսի
իմաստով ս. Դրքի, Բիւզանդի և ուրիշ մատե-
նագիրներին մէջ ևս յաճախ գործածուած կայ
(Տե՛ս Մոր Բառք. Հայկ. լեզուի): Սակայն
այստեղ «բանք» պատմութիւն էլ կարելի է
հասկանալ, և այս տեղի հաւանական է, քա-
նի որ մի առող ներքևում, յաջորդ (Ա. իա)
գլխի սկզբում, նոյն ինդրին դառնալով
«Թողով զոչ կարևորագոյնն ի ըանից, ասաս-
ցուք որ ինչ հարկաւորն է», ըանք բառը հա-
ւաստեալ իբրև պատմութիւն է գործածած:

«Յառասպելս ԿՃՀմարիտ ըանս ... փոփոխել» :
«Հաւ առնելով առաջիկայիցս իմոց ըանից» :
«Բան ճառիւր» : «Կարգ լեալ ըանից այսպիսի»
(Ա. գ.) : «Ոչ բերէ ասել կարգ ըանիս» (Ա. է.) :
«Ունի գրուէն հնոց և զնախնեացն ըանս (պատմութիւնները) : «Յորում է սկիզբն ըանիցս այսպիսի» (Ա. թ) : «Յառաջ մատուցեալ զբանըս իւր ասէ» (Ա. ժա.) : «Անցանել սակաւութ և ընդ կարգ ըանից պատերազմաց (Ա. ժգ.) : «Ոչ ինչ կամամտածական ի սմա յարմարելով ըան» այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի ըանից արանց իմաստանոց» : Հմմտ. (Ա. ժթ.) «Յարմարեալ կարգեցից, ... և որ ինչ վասն սոցա զրոյցք ... ոչինչ կամամտածական ... այլ որ ինչ ի գրոց : «Այսպէս հաւաստեալ զիտասցութ զկարգ ըանից» (Ա. ժթ) : «Յարէ զկարգ ըանիցս զկնի այսորիկ օրինակ գայս» (Ա. ի.) : «Յառաջ քան զձեռնարկելն մեր ի ըանս՝ որ յողագս մեծին Տիգրանայ» (Ա. իգ) : «Եւ զի՛նչ ինձ ի զիրս յայս արդեօք իցէ ըան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել» (Ա. իդ.) :

Բերած օրինակներէից շատ պարզ երևում է, որ Խորենացու լեզուի մէջ ըան(ք) նշանակում է նախ խօսք և ապա ընդհանրապէս որ և է պատմուածք, պատմութիւն, վերջին

իմաստով համանիշ զրոյց և վէպ բառերին: ¹
Ի՞նչ է նշանակում երգ քանիցն: Պ.
Փետտեր Տիմուկով քանք բառի «պատմութիւն» նշանակելու վրայ, «երգ բանիցն» թարգմանում է «պատմական երգ»: ² Այդ թարգմանութիւնը սակայն անճիշտ է: «Երգ բանիցն» յիշուած է միայն մի տեղ (Բ. Ը.), և այն՝ յատկապէս այդպէս կոչուած է Տորքի մասին «առասպելաց առասպելը», որի մէջ Խորենացու հետ և մենք ոչինչ պատմական (historique) տեսնել չենք կարող, որպէս զի այդ առասպելը «պատմական երգ» անուանենք միայն անոր համար, որ Խորենացին «երգ բանիցն» է կոչած այդ առասպելը: Մոռացում է, որ եթէ քանք Խորենացու լեզուի մէջ նշանակում է «պատմութիւն», այդ պատմութիւնն իր նեղ իմաստով միայն, իբրև յիշատակի արժանի գործերի ու անձերի կատարուած իրողութեանց պատմութիւն միայն չէ առնուում, այլ ընդարձակ առումով, իբրև ընդհանրապէս որ և է պատմուածք, լինի հաւասար պատմութիւն:

1. Հմեռ. բ ս ն նոյն իմաստով եւ հետեւայ տեղերում. Ա. ծբ, իս, իբ, իգ, իե, իբ, յբ, Բ. ա, ե, շ, շա, շգ, ծ («Այս է ճշմարտութիւն բանիցս», առասպելի խօսքի ճշմարտութիւնը), ծբ, կդ, կզ, կբ, հե, ճ, ճզ, ճբ, դա, Գ. ա, ծե, յբ, կբ.:

2. ՃԻՐԻՐ. Հայկ. Աշխատ. Կր. 129, ծան. 1.

Թէ սուտ շինծու պատմութիւն, մի հեքիաթ, որ իւր մէջ ոչինչ պատմական կարող չէ ունենալ: Այսպէս Ա. իր. Քանգի ստեղծմանց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկաց զթագադիր ազգի իննել Բաղրատունեաց: Վասն որոյ ասեմ. մի՛ սյսպիսեաց յլմար ըանից հաւանիր. զի և ոչ մի շաւիղ կամ շուրջունն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդարութիւն ակնարկէ. զի ի ըսյ ըանից և անո՞՞ իմն յազազս Հայկոյ և նմանեացն կակաղէ»: Այսպէս և հենց պարսից փժուէն անճոռնի, սուտ առասպելքն՝ կոչում են «անյարմար և անո՞՞ ըանք»՝ «անմիտ և անհանճար ըանից յարմարանք» (Ա. գրքի յաւելուած): Հմտ. նոյն տեղում ... «Զատելութիւն մեր առ սյսպիսի ըան»:

Արդ, ինչ իմաստով որ սյստեղ Պարսից առասպելների համար գործ է ածած ըան, ըանք բառը, որ երբեք «պատմութիւն» իբրև եղելութեանց պատմուածք, չէ նշանակում նոյն իմաստով գործածուած է ըանք և Տորքի մասին ելգուածի կամ առասպելի համար, որ և հենց պարսից առասպելների հետ համեմատուած է և նոյն կամ նման ածականներով որոշած. «Ստեմ և ես յազազս նորա անյաջ և փցուն, որպէս պարսիկք...»:

քանզի կարի իմն անյարմար թուէին նմա-
երգ քանիցն»

Այսպէս երգ քանիցն նշանակում է (ա-
ռասպելական) պատմութեան երգ, կամ
մի երգ, որի մէջ որ և է բան է պատմում:

Երգարանը քանաւորը պ. Փետտեր նոյն
հիման վրայ հասկանում է նոյնպէս «պատ-
մական երգեր»: Սակայն այդ ևս անճիշտ
է: Ես իւր ասածը հաստատելու համար ոչ
մի ուրիշ հիմունք չէ բերում, բայց եթէ
այն՝ որ քանք պատմութիւն է նշանակում:
Սակայն այդ քիչ է: Բանաւոր բառը պատ-
մական-ի իմաստով Թորենացու մէջ ոչ մի
տեղ, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մէջ,
գտնէ որքան բառարանները վկայում են՝ գոր-
ծածուած մեղ յայտնի չէ: Բանաւոր այստեղ,
ինչպէս սովորաբար, նշանակում է «բանական,
իմացական, մտաւոր, մտացի» այսինք «բանա-
կանութեան», «իմաստութեան» վերաբերեալ,
ինչպէս յաճախ գործ է ածում Եզնիկը: ²

«Բանաւոր» և «բանաւորութիւն» բառե-
րը «մտաւոր» և «իմաստութիւն» բառերի
հետ միասին յաճախ կրկնւում են իբրև հա-

1. Քրքրեր, Հայկ. Աշխատ. եր. 129. ծան. 1:

2. Վեճեցիկի սպ. եր. 97, 101, 158, 153, 170
էջն: Անբանատ. եր. 145:

մանիշ. «Վասն իմաստութեանն, բանաւորութեանն զկենդանական շունչն իմաստակիր մտաւորութեանն»: «Հոգիք մտաւորք և բանաւորք» (Ագաթ.): «Այլ սմե իմաստասէր և բանաւոր» (Վրք. հց.): ¹ «Ոչ ամենայն զնայուն կենդանութիւն մտաւոր և բանաւոր ունի» (Ծղնիկ, եր. 158, 159): Խորենացին «երգարանք բանաւորք» գործ է ուծած մի տեղ միայն ² այն գլխի մէջ (Ա. գ), ուր յատկապէս խօսում է «յողտգս անլիմաստասէր քարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց», ուր ասում է . . . «Ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոցն առաջնոցն առ ի յիմաստն սողամարութիւն» և անկատարութիւն ոգւոյն քանակամի», որովհետեւ մինչդեռ այլոց թագաւորներն իրենց ժամանակի պատմութիւնը գրել են տուել, — որով և ինչպէս (Ա. ա.) գրում է Սահակ Բագրատունուն պատմութիւն գրելու այգպիսի «գեղեցիկ մրտածութեամբ զխոհականութեանն վառ և բորբոք պահելով զկայծակն», զարդարել են զքանն (բանականութիւնը համտ. առաքինու-

1. Տես նոր Բագ. հպյկ. յգաւի:

2. Հ. Սեփակե Խոր. պատմ. բարգմ. մեջ եր. 335-ժան. 14. յիշում է իբր այդ բանն երկու անգամ է գործածուած երկրորդ անգամ Բ. գրիի Ե. գլխի մէջ, ուր սակայն այդ բառը չկայ:

Թիւն բանականին է (սոհականութիւն), — իսկ
«երունք հարցոց պատմութիւն գրիչ շին տուել,
պատմաբան այն չէ, որում է Պարենացին որ հա-
յոց մէջ գիր աւ գարութիւն չէ կրիչ, «այլ
ինչ Թուր որպէս այժմ» և առ հինան հա-
յաստանեաց լեալ անսիրելութիւն իմաստու-
թեան եւ երգարանաց ընկալորաց: Վասն
որոց աւելորդ է մեզ և այլ յագագս անըմանից
արանց թուլամտաց վայրենեաց ճառել»:

Մտածութեան այսպիսի կղանակի մէջ, —
ուր մի կողմում է՝ ոգի բանական, իմաս-
տութիւն: զարգարել գրանն, խոհականու-
թեան, որ նոյն է: բանականութեան կայծա-
կը վառ պահել (պատմութիւն գրիչ տալով),
իսկ միւս կողմում է անիմաստասէր բարբ-
անսիրելութիւն իմաստութեան և երգարա-
նաց բոնաւորաց: առ ի յիմաստն պատմարու-
թիւն, անկատարութիւն որոշն բանականի,
անբանութիւն, թուլամտութիւն, վայրենու-
թիւն, — «երգարանք ընկալոր» տապալածի
մէջ ընկալոր բառը կրթեք «պատմական» կարող
չէ նշանակել, այլ միայն ընկալանն մտացի, ի-
մաստուն, ինչպէս սովորարար նշանակում է,
և «երգարանք բանաւորք» ոչ թէ պատմական
երգեր», կամ chants traditionnels, այլ միայն
chants rationnels, verständige Gesänge:

Անշուշտ անհաւանական կը թուի, որ եր-

գերի այդպիսի անասի լինի Սահայի բնին էլ
հնոց այն է, որ «երգարանք բանաւորք» աս-
ացուածի միջ էրգերի մի անտնային անասի-
պէտք չէ որոնել, ինչպէս անուճ են, այլ
միայն պէտք է ջանուլ հասփանդուլ, թէ ի՞նչ է
ուզու՛մ Խորենացին արտոյցայտել այդ բանով
Յիշենք միայն թէ ի՞նչպէ՛ս Խորենացին պար-
տից առնապիշները «տուտ» փծուէն, անճոռնի-
անյարմար է անո՛ւմ բանք, անտիտ է անհան-
ճար բանից յարմարանք, այլ է երկու ան-
գամ «անբանութիւն» է մի անդամ՝ անանը-
տութիւն» է անուանում (Ա. պրքի Յաւե-
լուած) և «բարբառնջմուռնք» (Բ. հ.)։ Եւ եթէ
ի նկատի աւննանք, որ «իրանացած» հայոց-
ատապարհիկը յուսնոգան կը թափթիւն սաս-
ցած Խորենացու հարմար իրենց մեով եթէ
աւելի անխմաստ չլինէին, աւելի քմաստուէն
էլ չեին լինի և որ հնոց Խորենացին ճարքի
մասին առասպելը նոյն ամականներով է կոչու՛մ
ինչ որ պարսից անասպիշները. Բազրասու-
նեաց ճագման մեզին զրոյցը «իմար» բայ բանք
անո՛ւմ, իսկ Արծրուէնաց մասին առասպիլը
«բաջադանք» (Բ. է) է կոչու՛մ — այն ժամանակ
հասփանդալի կրկն. թէ «եղիպարանք բանաւորք»
առերով ինչ է հասկանաւ՛մ. — Երգեր, որոնք
պարսից առասպելների պէս անճոռնի փծաւն
անհանճար (անտեսարտ), անտիտ, անբան և

«անո՞ճ» չբնէին) այլ ըսնաւոր) այսինքն իմաստալից) մտացի) «ոճով») «պերճ և ոլորկ») մի խօսքով ինչպէս յունաց առասպելները:

Այսպէս, փոխանակ բառի յատուկ նշակութիւնը վերցնելու և ջանալու հասկանալ հեղինակի միտքը, ի նկատի ունենալով հեղինակի հայեացքն ամբողջապէս, ընդունայն տեղը բառերի նոր նշանակութիւններ են ստեղծում, իրենց ուզած բանը պատմագրին վերադրելով:

Սոյնպիսի ընդունայն բացատրութիւն է և «երգարանք բանաւորք» «բերանացի երգորաններ» թարգմանելը, ինչպէս արել է հ. Ստեփանէ, հետեւելով Էմինին, և մինչև անգամ բնութագրել է այդ «բերանացի երգերը» թէ «պարզ բնական և ըստ երևութին բարոյական երգեր էին, առանց պլաբանութեան»¹ Ի՞նչ հիման վրայ: Ո՞րտեղից այդ նկարագրերը:

Թէ հին հայոց մէջ «բերանացի» երգեր եղել են և ոչ թէ «անսիրելութիւն» է եղել այդպիսի երգերի, այլ, ընդհակառակն, այդ հեթոնոսական երգերը նոյն իսկ շատ սիրելի են եղել, «հանապազօրոգեալ» և «դեզերեալ մաշելով» երգուել են քրիստոնէութեան ժամա-

1. Խոն. Պատմ. քաղմ. եր. 335. Եան. 14.

նակ անգամ, «բարբարոս խուժադուժ միասունելով» (Հմմտ. Խորենացու «անբան, թուլամիտ, վայրենի» և ըն բառերը), — այդ գիտենք Քիւզանդից, վերևում բերած կտորի մէջ: Սոյնը յիշում է և Եղիշէն. «Հանապազորդ առատացոյց (Վասակ) զռոճիկսն տաճարին, և յերկարէր զնուազսն ուրախութեան, մաշելով զերկայնութիւն զիշերացն, յերգս արբեցութեան և ի կարբաւս լկտութեան քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսական»: ¹

«Բերանացի» երգեր թարգմանողները մոռանում են, որ Խորենացին չէր կարող ասել, թէ «բերանացի» երգեր չեն սիրել Հայերը, այն էլ «հինքն հայաստանեաց» որոնց համար մի տեղ (Ա. զ) գրում է. «Առաւել յաճախագոյն ... ի նուազս բամբռան և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք», իսկ Ա. իդ. «Զօրմէ ասէին ի հինսն մեր, որք բամբռամբն երգէին», և որոնց բերանացի երգերն և առասպելներն այնքան անգամ յիշում է նա, և այն՝ որ իւր ժամանակ իսկ այդ հեթանոսական հին առասպելները կամ վիպասանք «պատմին ի Գողթան», (Բ. խթ.) կամ «զոր պարեցին ախորժելով, որպէս լսեմ մարդիկ կողմանն

¹. Եղիշէն. յեղանակ. Տփիսիս. 1879. եր. 90:

գինաւէտ դաւառին Գողթան» (Ա. 1.), կամ
թէ ինքն իւր անհանձով լսել է (Ա. 1ա) և այլն:

Եսկապէս Ա. զրքի գ. գլխի մէջ Խորե-
նացու գանդաւոր ոչ թէ «բերանայի» եր-
գեր շլինելու կամ սիրած շլինելու մասին է,
այլ իմաստալից» ոչ փճուէն, մի խօսքով «բա-
նաւոր» երգեր շլինելու և սիրած շլինելու
մասին, և յասկնայէս—մի բան, որ ուշադրու-
թիւնից փախցնում են—գրած, գրի առած,
երգեր շլինելու մասին: Այս երևում է թէ
այդ գլխի ընդհանուր բովանդակութիւնից և
թէ «երգարանք» երգերի մասեան, և ոչ թէ
«երգք» բառը գործածելուց:

Բնկը բառին սմանք երգ բառի իմաստն
են տալի որպէս զի կարոյճանան այդպիսով
եզրակացնել թէ Արայի և Շամիրամի մասին
երգեր են եղել: Այսպէս «Ան ի յոյժ ցան-
կահաննի մոլեգնութեան, ի բանսն որ զնմանէ՛
օրպէս ի տեսութիւն շամչութեամբ փառեալ
էր» (Ա. 16) հատուածը թարգմանում է պ-
Խալաթեան ըստ էմիլի. «իւր ցանկազան ան-
մասութեան մէջ Շամիրամ, ինչպէս (երգ-
ում է) նորմ [Շամիրամի] մասին Երգի մէջ,
գառուում էր Արայի համար ցանկութեամբ»:
Այսպէս հասկանալու համար անհոյս հարկա-

ւոր էր, որ բնագրի մէջ լինէր «որպէս ի բանսն
որ գնմանէ», և քանի որ որպէս բառը չկայ:
ուտոյ և «գառէր ի բանսն որպէս ի տեսու-
թիւն» կարող չէ նշանակել «լինչպէս երգուած
է Երգի մէջ», այն էլ Երգ գլխատառով, իբրև
մի յատուկ որոշ, հանրածանօթ երգի մէջ:
Այս հասուածն աւելի ճիշտ է հասկացել հ.
Ստեփանէն, որ թարգմանել է. «Արայի մաս-
սին երգեր լսելիս այնպէս էր փառւում»...:
Սոյն ձևով հասկանում է և շնորհ. Միաբան
Գ. Տէր Մկրտչեան,¹ որ իբրև ծանօթու-
թիւն գնում է. «Այս կէտում գրեթէ բոլոր
թարգմանիչները չեն հասկանում «բանք» բա-
ռի յատուկ նշանակութիւնը, որ է երգ»: Սա-
կայն սոքա ամենքն էլ ինչպէս և հենց ինքը
Են. Միաբանը, իրենց առաջնորդ ունին Էմի-
նին, որ «Մ. Խորեն. և հայոց հին վէպերը»
գրուածքի մէջ (Թարգմ. եր. 12—13, 53)
Արայի մասին «բանքը» նշանացնում Երգի հետ,
այսինքն իւր երևակայած մի ամբողջութիւն
կազմող ընդարձակ Երգի հետ (ուտաի և զը-
խատառով երգ): Ամենքն էլ ոչ մի հիմունք
չեն բերում թէ ինչու «բանք» պէտք է երգ
կամ Երգ հասկանալ: Են. Միաբանը միայն
իբրև հիմունք գրում է լոկ խօսքով պատ-

¹ Խանկ. Պատ. Մուսումն. եր. 68.

Ճառարանելով թէ «Խորենացին անխտիր գործ է դնում «բանք» կամ «բան», «բանք երգոց» «երգ բանից» ասացուածները երգի իմաստով», առանց կոչումն անելու, սակայն, թէ որտեղ է այդ «անխտիր գործածութիւնը»:

Մենք տեսանք «բանք» և «երգ բանիցն» որտեղ և ինչ ձևով են գործածուած և ինչ են նշանակում: Իսկ «բանք երգոցն» Խորենացին մի տեղ միայն (Ա. Լ.) գործածած է «Թուելեացն երգք» յորս շարին ըսնք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա»: Մի՛թէ այստեղից միայն կարելի է եզրակացնել թէ «բանք» բառի «յատուկ նշանակութիւնն» է երգ: «Բանք» այստեղ ևս իւր սովորական «խօսք» (պատմուածք) նշանակութիւնն ունի, որ և երեւում է «շարին բանք» ասացուածից, որ յօրինուածքի «շարաբանութիւնն» է ցոյց տալի: Շարաբանութիւն կարող է լինել մի երգի համար և մի ամբողջ պատմութեան համար: Այդպէս Ա. գ. պատմութեան համար գրում է «շարածս ըսնից», որ հ. Ստեփանէ «շարագրութիւններ» է թարգմանում: Պատմութեան համար Ա. գ. գլխի մէջ գործ է ածում և «շարագրել» բառը, իսկ Ա. գրքի երկրորդ յաւելուածի մէջ. «զորոց ատեմք զբանս... այսօր ձեռամբ իմով շարագրեմ զայնոսիկ» = շարագրեմ, շարեմ զբանս նոցա): Ծոյն տեղում

քիչ ներքեւ ժամնիր զատելութիւնն մեր առայսպիսի բան, զի ոչ յառաջինսն մեր ասացեալ գիրս, և ոչ ի վերջին բանս արժանաւորեցաք շարել (զայն բան), «Բազում ինչ... պատմի ի մատենին, այլ մեք որ ինչ պիտոյն մերոյ հաւարմանս է. (բանք, պատմութիւն), շարեացուք» (Ա. ժբ.):

Արդ «շարել բան» միեւնոյն թէ «շարադրել բան» կամ մի բառով «շարաբանել» Այսպէս և... «յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ» միեւնոյն թէ «յորս շարաբանին երգք զԱրտաշիսէ», կամ բառացի ինչպէս հ. Ստեփաննէն, նման Էմիինի թարգմանել է «նոցա մէջ շարուած են Արտաշէսի և նորա որդիների մասին եղած երգերի խօսքերը», կամ մի փոքր ազատ, «նոցա մէջ շարուած են Արտաշէսի և նորա որդոց մասին երգուած պատմութիւնները»:

Բանք բառը ոչ մի տեղ Խորենացու մէջ «երգի իմաստով անխտիր» գործածուած չտեսնելով, և ոչ իսկ ուրիշ մատենագիրների մէջ, գոնէ որքան վկայում են բառարանները, ոչ մի հիմք էլ չենք գտնում «ի բանսն որ զնմանէ» հասկանալու «Արայի մասին երգեր» և ոչ թէ պատմածներ: Թէ մեր հասկացածը ճիշտ է, այդ երևում է և Ա. գրքի լազիկոց, ուր «բանք» բառը, նոյն «զնմանէ»

խնայրով հաւածակաւ պատճառի եան և ոչ թէ
 երգի. իմաստով և դործածած. Հաւաստի
 պատճել զբուն և զտաղթի. Տիրաւնն և որ-
 ինչ. ի նմանէ գործք, սկիւղի՝ որպէս ինձ պատ-
 մոցիս ի միջ իմոց բանիցս, որ ինչ յանգագ
 Նրուանգեանս Տիրաւնայ բանք՝ եղիցի և քեզ
 ընթերցողիդ. որպէս այրն և գործք, այսպէս
 և զնմանէ քանի: Եւ շղիտեւք թէ Շամիրամն
 ինչու անպատճառ Արայի մտաքն «երգումը»
 պէտք է լսէր մոլեգին. ցանկու թեւտը վառուե-
 լու համար, քանի որ ծո Արայի մտքին պատ-
 մուածք, խօսուածն էլ կամ ինչպէս հինց ժո-
 դոպիցի մէջ գործ է ածու մ յոյսոր, որոնքին
 էլ կարող էր լսել և վառուել: 1. Բեւաթի Շնորհ.

1. Հմեռ. Ստուանտեան. Մանրակոյ, եր. 125.
 «Աւրե», սա Կրեծի (հայ կոթարդի մը անուն է եղից)
 պատմութիւնը ըրե. ես պիտի գրեմ, բարեկամս ալ միջկ կրեռ:
 — Կրեծ մեր զրկցեց սեկն եր. գուկո (սեւաւսիկ) իննց
 տուե. ինտր բա յն ս ե տ (սիպեր) շաւ եւ. վիր միս կոյ-
 գոյ» ... Բրեռն Կուկո. Իրաւեմեաներ շաւ միջս ըմբռնել
 է «վիպ» բաւք հաւանիչ պատեմ բառի: Իսկ ժողովրդական
 բա յն ս միջկ է բաւ ս, փոխանակ բաւ (ս) մեռի, ինչպէս
 որ է Նոյն բաւն ուրիշ բարբաւնեի մէջ: Հմեռ պատմու-
 պաւս (= պաւս), պաւ բաւաւի, բաւաւի, բաւաւի (եր.
 88), սաւի, սաւի, տրեւ եւ նման մեռեր. որոնց ուղ-
 շաւրն հոյսի մէջ է-ի սեղ --է: Իսկ յն մտ. թ բա յն ս
 բաւս մէջ --ի եւ Ե-ի թողովուն արեւաստնութեան պատճա-
 ուով:

Միաբանն իբուր է գրում այդ մասին՝ թէ
«պէտք է նմանել» որ այս տեսակ առանց
տեսնելու: այլ միայն գովասանական գուսու-
նական երգեր լսելով սիրահարուիլը յատուկ
է բուն ժողովրդական վէպին: Այսպէս է սի-
րահարուում օրինակի համար: Դաւիթը Խան-
դու թ թաթունին:— Եստ ճիշտ է, բայց և
այնպէս այդանցից եզրակացնել թէ «Ուստի
և մենք կատարենալ իրաւունք ունինք հետե-
ցնելու, որ այս գլուխը [Եամիրամի և Արայի
մասին] գրուած է վիպական երգի հիման
վերայ» և թէ «բանք» նշանակում է «երգ»,
բարբոսովին սիալ և կամարական է: Եթէ գո-
վասանական երգ լսելով միայն սիրահարուիլը
յատուկ է ժողովրդական վէպին, ոչ պակաս
յատուկ է անոր մէկի և լոկ գովքն առանց
երգի, մէկի մասին պատմութիւնը լսելով սի-
րահարուելը: Մեր արդի ժողովրդական վէպի
մէջ աղջիկ Թանդու թը Դաւիթի Պղնձէ քա-
ղաքի Թագաւորի աղջիկը Բաղդասարի համ-
բաւը լսելով են սիրահարում Դաւիթին,
կամ թէ, Բաղդասարին: Այսպէս և Եահ-
նամայի մէջ որ Փիրզուսին անշուշտ ժողո-
վարականից է սուած, գեղեցկուհի Թեհմինէն
Ռոստամի մասին պատմութիւնը լսելով սի-
րահարում է Ռոստամին:

- « Բայց շատ անգամ ես (Թեհլինէ) լսել եմ
շատ շատերի բերանից
« Ինձի պատմած զրոյցները քո (Ռոստամի)
հրաշալի գործերից
« Որ դու դէից՝ ոչ առիւծից՝ ոչ նահանգից՝
ոչ ընձից
« Չես վախենում էլն. ...
« Ըո՞ այդ զրոյցն երբ պատմել են է ես այդ
լսել
« Ամեն անգամ շրթունքս կծել—հենց եմ
սարսել զարմացել
« Պարում էի քո այդ լանջ ու պարանոց է
բազուկներ...
« Այժմ ես քոնը եմ: Եթէ ինձ՝ դու կամե-
նաս քո սրտում...
« Առաջինը որ ես պսպէս քեզ շատ կարօտ
եմ քաշել
« Եւ քեզ համար խելքս զլեից հանել՝ քա-
մու եմ տուել» ...¹

Երկրորդ անգը՝ ուր «բան» երգ են թարգ-
մանում: դա Շամիրամի մահուան մասին հա-
տուածի մէջ ասածն է. «Եւ ըսն է նմանէ՞
Ուլունք Շամիրամայ ի ծով» (Ա. ժը.)։ Պ. Մա-
լաթեան² թարգմանում է (լուս Էմինի)։ М.
Пѣснь про нее ... «Եւ Երգը նորա (Շամիրամի)»

1. Երգուի: Ռոստամ էւ Սահրաբ: բարգմ. Ս. Գիւ-
րադեանց: Նուրի 1893, եր. 54:

2. Халат. Арм. Эпосъ. եր. 141.

վրայ»... որի սխալ լինելը ուղղում է հ. Ստեփանէն թարգմանելով. «Եւ նորանից (Շամիրամից) առած երգը» առարկելով թէ բնագրի մէջ «բան ի նմանէ» (ի Շամիրամայ ասացեալ) է և ոչ թէ «բան զնմանէ»,¹ որով ենթադրել է տրւում թէ «իրբ թէ Հայաստանում կար մի երգ, որ սկսում էր այսպէս. «Ուլունք Շամիրամայ ի ծով»: ² Սակայն հ. Ստեփանէն մոռանում է, որ «բան» բառը որ առաջին տպագրութեան մէջ «խօսք» է թարգմանել, երկրորդ տպագրութեան մէջ, անշուշտ Շնորհ. Մխարանի անհիմն նկատողութեան ազդեցութեան տակ, ³ «երգ» դարձնելով, ինքն այդ նկատողութեամբ սոսի մի բառախաղ է անում: քանի որ նորա թարգմանութեամբ էլ ենթադրւում է, թէ Շամիրամի մասին մի երգ կար, միայն ոչ ուրիշների լեզուից առած, այլ Շամիրամի բերանը դրած:

Թէ այդպիսի երգ եղել է՝ կարելի չէ հարկաւ, մակարերել «բանք» բառին ըստ

1. Հնե. «Ձևմանկ բանի (Ա. յա), որ հ. Ստեփանէն թարգմանում է «նորա պատմութիւնը». հնե. «ի բանսն որ զնմանէ» (Ա. ծե), որ հ. Ստեփանէն թարգմանում է. «նորա մասին երգեր»: Ի՞նչ հետեւականութեամբ:

2. Խոր. պատմ. թարգմ. եր. 372. ծան. 110:

3. Խոր. պատմ. Ուսումն. եր. 71. ծան. 1:

քմահաճոյս տուած ք մեկնութիւնից միայն։
Ուստի և «բան» բառի իմաստը պահելով՝
պէտք է «բան ի նմանէ» թարգմանել «նո-
րա (տասձ) խօսքը»։ Աւ հարկք չկայ՝ որ
«Ուրուք Շապրամայ ի ծով» նոյնպէս ան-
պատճառ երգ եղած լինի՝ կամ մի երգի պ-
ռաջին տողը՝¹ «բանի որ դա կայրոյ է և մի
ասած «բան» մի տեսակ առակաւ որ խօսք լի-
նել՝ որ իբր Շամիրամ ասել է։ Աչինջ չէ ա-
պացուցանում այն թէ «մեռնելուց առաջ»
կամ մինչև իսկ մեռնելուց յետոյ՝ գիւցազնի
երգը՝ որի մէջ որբացում է անցեալ գորու-
թիւնն ու փառքը՝ շատ սովորական է ժողո-
վրդական վէպում։² Մտաւցում է՝ որ
աւելի ևս սովորական է գիւցազնի խօսելով
մեռնելու օրինակ՝ Դաւիթ, Ռոստամ, Ռո-
լանդ խօսելով են մեռնում։ Եւ մեռնող մար-
դոց վերջին խօսքը շատ անգամ յիշւում է
յետագայում՝ ելք նոցա պատմութիւնն են
անում։³

1. Երբեք, Հայկ. Աշխատ. եր. 123:

2. Միաբան, Խոր. Պատմ. Ուսումն. եր. 71.

3. Փ. Քիւզանդի մէջ (Ն. դար. Բ. գլ.) կատարւմ ենք,
որ Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Շապուհ բազաւորի փ-
նակը, որով իւր մեռն գերի էին ընկել, պատմութեան
կերպով արձանկում է: Պարսից բազաւորը գերմանում է
ևնրա այս փնակն արարի փոյ, «Եւ եր ի ժամանակին
յայնմի կրիվարն Մուշեղի մեռնակ մի մի. իսկ բազաւորն

(Ապել:—Վիպարուանք:—Երգք վիպարուանց:—
Ի թիւ ասել:—Թուել:—Թուելեացն երգք:)

Մի անգամ որ ասել բայն էմինը հա-
ւասարել է երգել բային, էլ այնուհետեւ յո-
րենացու մէջ պսնել տիղի-անտեղի «երգել»
կամ թէ «պարմել» ասել, են թարգմանում ըստ
քմահաճոյս. եթէ ուզում են երգ զուրս բե-
րել՝ երգել: թէ չեն ասել: Օրինակ, պ. Խաչա-
թեանն ըստ Էմինի՝ Վահագնի մասին «զոգմէ
ասեն առասպելք» թարգմանում է: «սորա
մասին լեզուիդան պարմ է» (ГЛАСИТЬ), իսկ
մի փոքր ներքեի կտորը «ասէին զսա և աս-
տուածացեալ, թարգմանում է: «երգում էին
նաև նորա աստուածացումը» (ВОСИВАЛИ ЕГО
АПОΘЕОЗУ):¹

Սակայն «ասել» չէ նշանակում «երգել»
այլ միայն մի բան «ասել» չայտնել, պարմել,
ինչպէս և աշխարհաբարում: Թեև որևէ մա-
տենագրի մէջ «ասել» ձևաւոր ատումով, լայ-

Գարնից :. ես նկատել գրաչս ի պատկեր զՄուշեղ ներմա-
կուս. և ի ծայն ուրախութեանն իւրոյ զնոր զգրչով ա-
ռաչի իւր, և յիշե հաւապագ զնոյն քանս ասելով՝ թե
ներմակամին գինի արքցի:—Երևանայեցեմ այս պատմու-
թեան թողանջակութիւնը. երեկեացին նոյնպէս սեղմ ընդ
մէջ յերեմ, ինչպէս Շամիրամի առասպելոյ, և վերջացնէր
այսպէս. «եւ թակ ի նմանկ (ասացեալ) ներմակամին
գինի արքցի: Միթե ներմակամին գինի արքցի» ինչիմե՞
մի երգ եւ ոչ թե մի խօսք: Այսպէս և «նոյնն Շամիրա-
մայ ի ծով» մի խօսք է միայն. և ոչ թե երգ:

1. Халат. Арм. эпос. кр. 201.

նարար ունենայ «երգելու» իմաստ, բայց այդ գեռ ապացոյց չէ կարող լինել, որ ինքն իրեն վերցրած «ասեմ» առ հինսն մեր նշանակէր երգեմ»¹ ինչպէս յայտնում է Էմինը և ասեմ-ին վերագրուած այդ իմաստն ապացուցելու համար բաւականանում է միայն գրելով. «Յակ յաշխարհիկ լեզուի մերում պահպանեալ տեսանի (իբրև թէ գրաբարում եղած լինելն արդէն ապացուցած է) ի սովորական բանին խաղ ասել» որ է «երգ երգել»² «Խաղ ասելու» վրայ կուեղացնենք և «երգ ասել», «շարական ասել», «տաղ ասել»։ Սակայն այդ օրինակներն ևս դեռ չեն հաստատում, որ «ասել» նշանակում է «երգել»։

Էմինը և նորան հետևողները մոռանում են, որ, եթէ երգ ասել, խաղ ասել և ըն բաղադրեալ ձևերը մի բառով ասում ենք «երգել», այդ երգելու իմաստը ոչ թէ «ասել» բայն իւր մէջ ունի, այլ երգ, տաղ, խաղ բառերից է ստանում։ Այնպէս ինչպէս օրինակ, Խորենացու մէջ գրոյց(ս) տալ նշանակում է գրուցել, կամ ինչպէս աշխարհաբարում՝ ցոյց տալ նշանակում է ցուցնել, բայց երբեք «տալ» մենակ առած չէ նշանակում «գրուցել», կամ թէ «ցուցնել», կամ ինչպէս մառ ասել նշանա-

1. Էմին, Վեպ Ընոյն Հայաս. եր. 93:

2. Նոյն. եր. 93:

կում է ճառել: քարոզ ասել քարոզել: բայց ոչ երբեք «ասել» մենակ առանձն «քարոզել»: «ճառել»: — եթէ միայն լայնաբար: ձևաւոր առումով չէ գործածուած: — այսպէս և «խաղ ասել»: «երգ ասել»: ասացուածներին «ասել» բառը մենակ վերցրած կարող չէ նշանակել «երգել»:

Արդարև մի բան կարելի է ասել ոչ միայն պատմելով, այլ և երգելով: սակայն թորեհնացու մէջ այնքան յաճախ է գործածուած «ասեմ» բայը պատմելու, յայտնելու, ասելու իմաստով, որ դժուար է կարծել իսկ: որ: — եթէ մինչև անգամ ասել նշանակէր էլ «երգել»: — թորեհնացին մի բանի երգուելով պատմուած, ասուած լինելը յայտնելու համար բաւականաւոր միայն ասեմ բայով: Եւ իրօք, տեսնում ենք, որ նա մի բանի երգուելով կամ երգի մէջ պատմուելը յայտնելու համար միշտ գրում է: «Առէին յերգն» (Ա. լա.): «Ո՛նուազըս բամբուռն և յերգն ցցոց և պարունց զայսոսիկ ասեն յիշատակօք» (Ա. գ.): «Զսրմէ ասէին ի հինսն մեր, որք բամբուռնն երգէին» (Ա. իդ.): «Վիպասանքն յերգելն իւրեանց ասեն» (Բ. ծ.): «Առասպելեալ երգեն, այսպէս ասելով» (Բ. ծ.): «Զայս կամելով երգել յառասպելսն, Դոմեո զոմն ասեն եկեալ» (Բ. ծդ.): — Նոյն իսկ այս բոլոր օրինակներին մէջ,

Թէպէտ և երգի մասին է խօսքը սակայն
որ երգել չէ նշանակում և «երգել» բառով
Թարգմանել կարելի չէ՝ այլ միայն «ասել»
պատմել «յայտնել» թառեցով՝ ինչպէս և գնաւ
կանարար Թարգմանել է Հ. Ասեփանէն:

Մի անգամ որ պիտի բայի կարծեցեալ
երգեմ իմաստը դէն ենք գնում ըստ քմա-
հաճոյս երգ սնուանած մի քանի կտորներ
Սորենացու մէջ դատուում են սոսի պատմու-
թիւն, պատմուածք, միանգամայն և հասկա-
նալի է լինում վիպասանը բառի իսկական
նշանակութիւնը:

«Ասեւ վեպու» չէ նշանակում «երգել գե-
պը», զպատմական երգու» ինչպէս գրում է
Էմինը՝¹ այլ միայն «պատմութիւններ ասել»
անել» քանի որ ինչպէս տեսանք «վեպ» պատ-
մութիւն, պատմուածք է նշանակում և Ռու-
տի և «վիպասանը» նշանակում է ոչ թէ «վեպ
երգողներ», կամ *poètes épiques*,² այլ «վեպ
ասողներ», այսինքն՝ «պատմութիւն անողներ»
կամ մի բառով «պատմողներ»: Միւս կողմից
պէտք է գիտել որ ինչպէս ձիւթ նկատել է
պ. Փետտելը,³ վիպասանը ոչ միայն պատ-
մող է համար է գործածուում ինչպէս «վիպա-

1. Էմին. Վեպ հմ. Հոյ. 1 եր. 93:

2. Եոյն. եր. 93:

3. Քրիստ. Հայկ. Արիպաւ. եր. 128. Ծան.:

անքն յերդելն իւրեանց անն» (Բ. Ծ), այլ
և «պատմեաւծքի» հոմար... «ի վիպասանացն»
որ պատմին «Գողթան» (Բ. խթ):

Վիպասանք, բարդ բանի թէ պատմո-
ղիս և թէ պատմեաւծքի այսպիսի երկու
նշանակութիւն ունենալը տարօրինակ բան չէ
հայոց լեզուի մէջ, օրինակ հենց նոյն կող-
մաւթիւնը, ունեցող «պատմանք» բանը նշա-
նակում է թէ «գողք ամուս» և թէ «ասան-
գողք» «գողեսար» ինչպէս վերջին իմաստով
գործ է տեսնում «գովասանութիւն» համանիշ
«գովասանք» բանին, այսպէս և վիպասանու-
թիւն» համանիշ է «վիպասանք» բանին եր-
կրորդ իմաստով տեսնելով «Երգք վիպասանաց»
տեսչութեան մէջ «վիպասանք» բանն առաջին
(պատմողի) թէ երկրորդ (պատմեաւծքի) իմաս-
տով առնուած լինի նշանակութիւնը նոյն է
մեռած բառի հաւանական է, որ երկրորդ
այսինքն պատմեաւծքի իմաստով լինի քանի
որ այս երկրորդ իմաստով առնուած ժամա-
նակի է համանիշ «վիպասանութիւն» բանին
իսկ «երգք վիպասանաց» ինչպէս տեսանք,
Փաւստոսի մէջ կոչուած են «երգք վիպասա-
նութեան»։ Սակայն այս չէ մերժում, որ ա-
ռաջին «պատմողներն երգ» իմաստով էլ ա-
նուամ լինի։

Այսպէս հայոց վիպասանք (կամ վիպա-

սանութիւն) ինչպէս բառի կազմութիւնը ցոյց է տալիս, և ինչպէս Բ. գրքի խթ. գլխի մէջ պարզապէս վկայում է Մորենացին (մի բան որ Լմինն աչքից փախցրել է) պատմուել են: Բայց քանի որ յիշուում են և «երգք վիպասանաց» (վիպասանութեան) և թէ վիպասանքն (վէպ ասողները) երգում են, ինչպէս և «վիպասանաց» համար «երգիչք» բառն է գործածուում, — ուստի պարզ է և այն որ «վիպասանք» (վիպասանութիւն) ոչ միայն պատմուել են, այլ և մասամբ երգուել: Ինչպէս և մեր արդի ժողովրդական վէպը մանրամասնօրէն պատմուում է, բայց և տեղ-տեղ երգուում է, ինչպէս և պատմելու և մէջէ մէջ երգելու նոյն ձևն եղել է և ուրիշ ազգերի օրինակ: գերմանացւոց մէջ ևս: ¹

«վիպասանքի» (վիպասանութեան) երգուած մասերը բնականօրէն չափաբերական պիտ եղած լինին, իսկ պատմուած մասերի

1. Wilhelm Grimm, Die deutsche Heldensage. Berlin, 1867, եր. 381: Գերմանացւոց մէջ եւս վկայն ասելու (vortragen) համար գործ են ածուում singen (երգել) եւ sagen (ասել) բայերը, իսկ դիցազնական վկայը, նման մեր վիպասանքին, իւր կոչումը՝ Sage, Heldensage ասացել է sagen (ասել) բայից, որովհետեւ նոցա վկայերը հանգամանօրէն ասուելի պատմուել են եւ որոշ մասամբ միայն երգուել:

համար այդ ասել ապահովապէս չենք կարող,
քանի որ կարող են այդ մասերն և արձակ ե-
ղած լինել: Ուստի և Էմինի սահմանումը
«վէպ» բառի համար—թէ «վէպն հնոց ոչ այլ
ինչ էր, բայց եթէ քերթողական պատմութիւն,
չափաքերական, յորում զգործս քաջաց և
թագաւորաց երգէին, որ և առ արգի Եւրոպա-
ցիս Էրօրթօ անուամբ սովորաբար յորջորջի»—
ոչ միայն վէպի համար գլխովին սխալ է, այլ
և «վիպասանքի» համար չէ յարմարում:

Արդարև, «վիպասանքի» մէջ պատմու-
թիւն է լինում, այսինքն որ և է բան է պատ-
մուտում, բայց այդ պատմութիւնը նեղ իմաս-
տով կարելի չէ հասկանալ, ուստի սխալ է և
պ. Փետտերի գրածը թէ «վիպասան» կրնա-
նակէ նախ և գլխաւորաբար «պատմագիր»²
քանի որ «պատմագիր» անունը կարելի չէ տալ
ժողովրդի մէջ պատմութիւնների անող մարդոց:
Այդպիսի ժողովրդական պատմուածքների մէջ,
անշուշտ, շատ բան «պատմական» կայ, պատ-
մական անձերի և իրողութեանց շատ յիշո-

2. Ծիրար, Հայկ. Աշխ. եր. 128. Ժան: Դժբախ-
տաբար գերմաներէն բնագիրը ձեռի օակ յունկիմ, որ օեւ-
նեմք քե բնագրի մէջ «պատմագիր» բառի դիմաց ուր բառն
է: Հայերէն բառերը, շատ անգամ եւ բարգմանչի անփու-
քութիւնից, յաճախ նոյն իմաստը չեն արտայայտում, ինչ
որ օտար յեզուների մէջ կայ:

դուժիւններ են լինու մի բայց աւելի շատ աւ
ռասպելական, դիւցադնական և նոյնիսկ դիցաւ
բանական է լինում. անոնց մէջ՝ այնպէս որ
Փարիզի չէ ժողովրդական պատմութեամբքը «պատ
մութիւն» և պատմողին «պատմագիր» կոչել:
Ժողովրդի աչքին միայն իսկական պատմա
թիւններ են այնպիսի պատմութեամբքները, ո
րոնց շատ անգամ ստասպելական հերոսների
մի ժամանակ իրապէս անգրած լինելուն և նո
ցա կամարած նոյն իսկ գեորնական արարքնե
րին հաւատում է նա, ինչպէս՝ և անանում
ենք նոյնը՝ մեր արդի ժողովրդական գեպի նը
կամ մեր —

Եթրդք գիպասանացն Թորենացու մէջ մի
տեղ (Ե. 1) կոչուած են, «Թուեչեւոյն երգք»
որ Էմիրը (նորան հետեւելով և հ. Ստեփանէ)
«Ժամանակագրական երգեր» է թարգմանում
և արդէ իսկ հանասակ Թորենացու պարզա
պէս ասածին, «Գիպասանաց երգերից» ար
բերում է «Թուեչեւոյ երգերը»: Երկու էին
տեղակք սպասին պատմական երգոց, յորոց
ոմանք սոսկ երգ վիպասանաց, իսկ այլք՝ երգ
թուեչեւաց կոչելին: Յետքս այսքի՛ գրպէս
անուանակոչութիւն իսկ նային ցուցանէ, թե
րեւ կարգի ժամանակագրութեան հետեւին,
այն ինչ առաջինքն երկամայութեան և եթ
գնային զհետս: Այսպիսի տարբերումն ու

1. Էմիրն, Վեպ հե. Հայ. եր. 101:

բնութագրումը զուտ և րեւակայանում է: քանի որ խորհրդանշանը մեջ «թուելեաց» և «փոխասանաց» երգերը: մեջ բերած «բողանդանի» թեմանը նորոգում է: որովհետեւ «արարչական» կարեւոր է ստեղծել որպէս «փոխասանաց» երգերի մի ուրիշ կարգին է միայն: «թուելեաց» երգերը լինելը նայն անդուրէ: Յանտիւր թեման մեջ դրած է: Այդ բնութագրումը «թուելեաց» երգի ոչ այլ ինչ ցուցանէ: Բայց եթէ զերպ: «Թանձանդանի» բայց որքան կենդանի թեման լինելը լինելը կրտսնուր կրկ խօսքով է: Մտնում է: Այդ շոք մեկնութիւնը չէ: արարչական: խորհրդանշանը թարգմանելով թեման ծանօթիւ թեման մեջ դրած ծովեւում: «թուելեաց» բայց «թանձանդանի» թեման թանձանդանի լինելը ինչ անտու թիւն է միայն շանուր հաստատել, «վեպի» թանձանդանի գրողին կարգով քոստանդուլ ընդարձակութիւնը որ անգործութեանը ցոյց տալը:

Այնպէս փոքրից այս թանձանդանի երգերը և զի ստանալ թեմանը: թանձանդանի թեմանը թեմանը փոքր թեմանը բանի է: Եւ այդպէս զի թեմանը թանձանդանի լինելը: արարչական թեման: ունեւնաց: ստանալ է: թեմանը: թեմանը: Թորեւնացին է: Կարգից: «թեմանդանի» թեմանը: «թեմանը» — считать, казаться — բայց յորնակի թիւ:

1. Տեւ և: Անտիւրի բանդ: Մ. Խոր. Հայ. պատ. հր. 389 ծան. 169:

քայանուն ձևով «Թուելիք» — КАЗУАЦІЯ — որ
ինքը պատմագիրը ըստատրում է այլաբա-
նութեան կամ որ նոյն է՝ այլեզորիայի մկտ-
քով: ¹ Բայց աւագ, Պորենացին՝ ոչ մի տեղ
չէ բացատրում «Թե՛, «Թուելիք» նշանակում է
այլաբանութիւն» և կամ «Թուելից երգեր»
նշանակում են այլաբանական երգերս: Այդ
բացատրութիւնը հենց իրեն՝ պ. Սալաթեա-
նինն է, միայն Պորենացու վրին կապած:

Մենք թուելիք բառը (որի սեռականն է
«Թուելիաց»), կազմուած ենք համարում, ոչ
թէ «Թուել» (երևալ) բայից, այլ թուել բայից՝
բայց վերջինս ոչ թէ համարել (համարել,
համիւել) իմաստով առած, այլ այն իմաստով,
որ ունի այդ բայի թիւ պատմաբ «Թիւ տակ»
ձևի մէջ:

Մեր եկեղեցու մէջ մաղթանքները ինչ-
պէս և Առաքելոց Գործքի ու թղթերի ըն-
թերցուածները՝ «Թիւ են աւուած» իսկ աւե-
աբանս՝ մարդարէից ընթերցուածները «ձայ-
նիւ»: Սաղմոսները՝ քարոզները երբեմն երգ-
ուած են, երբեմն «ձայնով» փառում երբեմն
էլ «Թիւ»: Թվեղեցական երգերն ևս որոշ տե-
ներին «Թիւ» են աւուած օրինակ Վոյս զուար-
թը՝ Մեծ Պատին: ²

¹ Халат. Арх. Эпоса кр. 197:

² Shtu Solmajցոյց եւ, օրինակ, 1899 բուռն Արացոյց

«Ճայնիւ» կամ «խճայն ասելը», որ երբեք
իրբե երգ ասելու հետ շփոթու մ'ենք մի տե-
սակ «նշանակաւոր ասելն» է, որ «երգելն» է
«թիւ ասելու» միջին տեղն է ըստուան «... Իսկ
Թիւ ասելն ասանց որն է նշանակի» (Տմնու-
նոր բառք» Ճայնի բնգ.), «սովորական ասելն
է որքան կարեցի պարզ եւ հասկանալի, մե-
տիկ սովորական կարողու է պատմելու ձե-
ւին: Մեր «թիւ ասելը» նոյն է, ինչ որ Փրան-
սիացիք recitation, réciter բառով արտայայ-
տում են: այսինքն անգիր «արած մի ճառ»
սասնաւոր կամ արձակ կտոր» իրբե սովորած
դաս պսել՝ յորտասանել, անողանուցից (dé-
clamation) ցած, իսկ սովորական խօսակցու-
թիւնից կամ ընթերցումից բարձր ճայնով: 2
«Թիւ ասելու» (réciter) այս նշանակու թիւ-

Ս. էջնամանի փետ. 27, 28, մայս 6, 13, 20, 27-
եւն. օտերի հրահանգը. «Լոյս զուարթ քիւ սաս»: «Ասեմ
քիւ զաղմուս Օրհնեա անձն իմ զտր»: «Սարկաւազն քիւ
սասացի զհարոզն Վասն ի վերուս... Վասն ի գիշեր» եւն:
«Ասեմ քիւ զինքն» եւն.:

1 «Ճայն» բառի նշանակութիւններից մեկն է եւ «եր-
գելու եղանակ»: որից եւ «շարակահանգի որ ճայներ»
եւն: Հմե. նոր բառք. հայկ. չեզոքի:

2 Երբեքն սովորական ճայնով կամ սովորականից
էլ ցած ճայնով եւ «քիւ սասում», բայց այդ միայն որոշ
գիպտերում, երբ «քիւ սասելը» ժողովրդին լսելի լինելու
համար լի:

ըրբ որ պար ձեռն անշուշտ զթիւ արարից է սաս-
նում (Տճմարս քիւրեւում արագ սանկ կրդ պ-
սել կէր, ձեկր մարին) ինչպէս ընթերցողք
կրտսնեւ յոյն է զից որ արարարքս ասանք
բարձր ինչ միայն յայտնուելու Աստորարար շնք
ասում «ճարս թիւ կակէ» զարար թիւ աս-
սեց, «դաս թիւ ստեղծ պլ միայն յճաս ասել
քորոյ կակէ քաս կակէ» ուսանալ որ ասանք
անգիր ասել Վ Գանձնեքր Արդ Եթէ ասանք
է «թիւ ասել» նայն նշանակու թիւն ու նին կր
ինչոյ է վիթքին անկր ստեղծուել Եստ Գանկաս
նույն է թէ ինչոյ անկր արար շատ ընդարձակ
գործարք թիւն գանի նմեկ կարեկի է նպակով
«ճայնի» Ե արարարան ստեղծուել արամկրոյ (ԷՅ-
citer) ձեռք Եզարի է «ասել» ինչոյ վերայն Երբ
նպէ Եթէ ընի միայն «նշք գու արթ ասարմու
ասել» կարելի չէ որոյ իմանալ թէ ինչոյ է
պէտք է ասել «ճայնի» ի թիւ» թէ Եր-
գելով Զանի որ «Լոյս զուարթն» ու սարմունկր
երգ են և ստորարար երգում են ուստի
և այդպիսի դէպքում ստորարար երգել էր
կրհասկացողի բայց եթէ կամենում ենք
որ «արմար չերթալի այլ «ճայնի» այսինքն
«եղանակով» ասուի «ճայնի» կամ ի ճայն»
բան ենք աւելացնում Այդպէս և յատկա-
պէս «ստորական ասելու» պատմելու անք
հասկացնելու համար աւելանում է հոմա-

նիշ «թիւ» բառը և հետզհետեւ է զի թիւ ան-
սել» որ բառացի նշանակուած է «թուով
թուի» ձևով ասել» որ նոյն է սովորական
«ասել-սրտամելու» ձևով ասել:

Թիւ բառը սկզբնապէս «ասելու» պատմե-
լու իմաստն ունի սնշուշտ և զի թիւ գւետ-
նել գիտել» ասացուածներս մէջ» որ նշանա-
կուած են բերան ուսանել, գիտենալ: Այս-
տեղ «թիւ» բառը կարող է իրրև nombre,
այսինքն քանակի իմաստով ասուուած լինել
այլ միայն «ասելու» պատմելու» իմաստով:
Այլ ասացուածները բառացի նշանակուած
են «թուի համար» այսինքն «թիւ ասելու»
պատմելու համար ուսանել, գիտենալ: Եւ
որովհետև «թիւ ասելիս» սովորաբար սկզբ-
նապէս անշուշտ միշտ, ոչ թէ կարգացուած
է, այլ բերան է ասուումն ուստի և հասկա-
նալի է թէ ինչպէս «թուի» այսինքն (թիւ)
ասելու համար ուսանելը, ստացել է «բերան
անելու» իմաստ:

Թիւ (~~թասք~~ ասել) արմատից կազմուած
է թուել բայը, որ կարող է նոյն իմաստն ու-
նենալ, ինչ որ ի թիւ ասել: Եւ Թորենացին
երեք տեղ այլ բայը գործ է ածում համա-
նիշ ասել պատմել բայերի: Բ. կղ. Կը-

1. Տես նոր բառգ. հայկ. լեզուի:

բում է. «Զոր (Տիրապետի հաստատած կրթ-
սերագոյն ազգերը) ոչ անուամն պատմես-
ցուք... այլ միայն զոր հաւաստի գիտեմք
զկնիսն». իսկ Բ. Տ. համանման գէղքում
նոյն իմաստը նոյն բառերով միայն «պատմե-
լու» փոխանակ թուել: գործածելով. «Զորս
(Արաաշէսի որդիներին) ոչ կարևոր համարե-
ցաք այժմ անուամն թուել: քայց զկնիսն յոր-
ժամ ի գործ ինչ հասանիցեմք»: ¹ Իսկ Ա. ե.
«ասել» և «թուել» բայերը միևնոյն պարբե-
րութեան մէջ համանման տեղում իրար փո-
խանակում են. «Պատմէ մեզ զայսօսիկ յուզ
իրա հաւատարիմն Արիւղենոս, և ասէ այս-
պէս. Նինոս Արբէեղայ, Զայաղայ, Արբէեղայ,
Անէերայ, Բարեայ, Բէլայ, Նոյնպէս և զմերն
... թուէ այսպէս. Արայն գեղեցիկ՝ Արամեայ,
Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ» և ըն: ²

1. Հ. Սեփականն բարգևառում է. «Ռոնց անունե-
րը յիշել կարեւոր չհամարեցին»:

2. «Թուել» բայը գործածած կայ եւ երկու տեղ,
ուր դժուար է որոշել՝ ասելն: րէ համարելու իմաստով
է: Ա. ե. «Ամբ ժամանակաց Մեկոյոց Գամայ միջև ցնի-
նոս ոչ ուրեք գտանին թուեալ: — հաշուած, րէ պա-
մեալ, ասացեալ: Հ. Սեփականն վերջին ձևով է հասկացած
եւ բարգևանած է յնչ մի տեղ չեն գտնուում յիշուած»:
Իսկ մյուս դեպքն է. «Ռոպիս եզրպատիքի թուեալ հաւասար
Մովսիսի» (Ա. ե.):

Այնուհետև Բ. ը. Կարգում ենք. «Բան-
զի կարի իմն անյարմար թուէին նմա (Տորքին)
երգ ըանիցն վասն ուժեղութեանն և սրտեաց
լինելոյն. որում ոչ Սամսոնի և ոչ Երակիայ
և ոչ Սագձկին յարմարեն այս զրոյցքս:
Բանզի երգէին նմա բունն հարկանել» ...: Պ.
Խալատեանն այս կտորը թարգմանում է.
«Տորքի ուժի և անվախութեան մասին երգի
խօսքերը (слова пѣсни о...) այնքան անյար-
մար էին, որ դժուարութեամբ կարելի է վեր-
րագրել անոնք (... до того нескладны, что
съ трудомъ рѣшишься приписать ихъ) Սամ-
սոնին, կամ Հերակլէսին, կամ մինչև իսկ
Սագձկին»¹ Թէ այս թարգմանութիւնն ան-
ճիշտ է, պարզ է: Դուրս է ձգած նմա բառը
և թուէին դարձրած է էին: Թողնելով դեռ
մի կողմ այն, որ երգ ըանիցն թարգմանած
է երգի խօսքերը և որում շինած է «այնքան
... որ դժուարութեամբ»: Նոյն կտորը հ.
Ստեփանէն թարգմանում է. «Որովհետև
շատ անյարմար ըաներ էր թուում երգը նո-
րա ուժեղ և քաջ լինելու մասին: Այս զը-
րոյցները ոչ Սամսոնին, ոչ Հերակլէսին և
ոչ Սագձկին են յարմարում: Այս թարգմա-
նութիւնն ևս ճիշտ չէ. թուէին յոգնակի

1. Халат. Арм. Эпосъ. кр. 326:

Թիւր դարձրած է կղակի. Թուրք՝ էր որպէս
զի յարմարութի կղակի կառ բառին: Եր կնթ ա-
կաց է դարձրած: Կարի իմն անյարմար դար-
ձրած է շատ անյարմար բաներ: Վնչպէս այդ
բառերը կամ մախարաբէն են դրուած Թուէին
բայի վրայ՝ «կարի իմն անյարմար Թուէին»
շատ անյարմար կերպով Թուում էին: կամ
շատ-շատ իբրև անպիսն կրգ բառին: Վնչն
Թուէին նմա բառերով բովանաւած կրգ բա-
ռից՝ ուրեմն «կարի իմն անյարմար Թուէին
նմա կրգ բանիցն» փոխանակ՝ «Թուէին նմա
կարի իմն անյարմար կրգ բանիցն»: 2 Այնու-
հետև դուրս են ձգած «բանիցն» «նմա» և «ո-
րում» բառերը: 2

Բնագրի այս բոլոր խեղճմաները Թարգ-
մանեղիս՝ առաջանում են «Թուէր բայի ի-
մաստը չհասկանալուց: Որովհետև եթէ «Թուէ-
ին» բառն իւր սովորական իմաստով իբրև
Թուիլ (կրկալ) կամ Թէ ներգործաբար՝ հա-

1. Հմեւ. «Պարսից անյարմար եւ անոճ բանից».
«Անիս եւ անհանձար բանից յարմարումք»: (Ա.
գրքի. Յաւելուած):

2. Անշուշտ, «շատ անյարմար բաներ» բարգմա-
նելով «բաներ» բառը բնագրի մէջ կղած «բանից» բառից
չկ վերցրած, իմնի որ կարելի չէ կարծել, որ բարգմանի-
լը «բռնէին... կրգ բանիցն» նախադասութեան մէջ «կրգ»
ենթակայի, ըստ բարգմանիլի, յատկացուցիլը «բանիցն» դար-
ձրած լինի միեւնոյն «բռնէին» բայի գիսաւոր շարունակի:

մարտի (համարակիչ հանգիստ) հասկանաճք, սցն. ժամանակի այդ հաստատած ըրաւոցի պաշա կրու գայր. «Պարզիցի առ շատ անկարգմանք, կերպարէ թռռում էջն (երեւում էին համարաճիցի) նորան. (Տորքին, տրա հոլով) նորա (խնն՝ Տորքի) ուժեղութեանն եւ սրտա ընկելու մասին պատահաթիւններն (կամ պատահոց) երգ»։¹

1... Հմն. վերեւում «երգ բաժնցն» ասացումն բացարձակն. «երգ բաժնցն վասն ուժեղութեանն եւ սրտայ ընկելուն» բառացի բարգմանած՝ «նորա ուժեղութեանն եւ սրտայ ընկելու մասին պատմութիւններն երգ» աշխարհաբարում գեղեցիկ չէ դուրս գալիս աշխարհաբարի յանդերեան պատճառով: Միևիցևն նկուն գրաբարին յատուկ է գոչականի եզր. կամ յոգն. սեռական հոլովով իբրև անպակասար անձուած որոշիչ բառ գործածուելը եւ միածանակակ սկիւզնոյն որոշիչն իբրև բայանուն կարող է ետեւից ունենալ իւր նախադասութեան խնդիրը [երգ բաժնցն վասն... Հմն. «Չվասն նոցա կշամբութեան յարմարել գրասնս (ն. Գ)», աշխարհաբարում պիտ է գոչականի սեղ անական ղենչ կան, երբ գոչականը իւր խնդիրն ունի, դերբայ ու երկրորդական նախադասութիւն գործածել եւ գրել. «նորա ուժեղութեանն եւ սրտայ ընկելու մասին պատահոց երգ» կամ «երգ, որ պատճառ էր նորա ուժեղութեանն եւ սրտայ ընկելու մասին»:— Այսպէս եւ «յորա շարին բաժնի երգոցն զկրտաշիս եւ զորդւոց նորա» աշխարհաբարում անշի շար է բարգմանել՝ «նրոնց մէջ շարունակ են Արտաշէսի եւ նորա որդւոց մասին երգում (յուսերը) պատմութիւնները»։ Բան թէ... «Արտաշէսի եւ նոցա որդւոց մասին երգերն յուսերը»:

կամ թէ. «Որովհետեւ նորան (Տորքինար. հոլով) թուում էին (երևում էին կամ համարում էին) նորա (իրեն Տորքի) ուժեղութեան և սրտոտ լինելու մասին պատմութիւնների (կամ պատմոյ) շատ անյարմար երգ»։ Սակայն այսպէս անհեթեթութիւն է դուրս գալիս։ Ուստի ոչ թէ պէտք է բնագիրն աղճատել, այլ «թուէին» բառի մէջ ուրիշ իմաստ պէտք է որոնել, և յատկապէս վերևում քննած (թիւ) ասելու իմաստը։

Այդ նախադասութեանն անմիջապէս հետևում է. «Բանզի երգէին նմա բուռն հարկանել» ... որ պ. Խալաթեանը թարգմանում է. «երգում էին նորա վրայ» (пѣли про него), իսկ հ. Ստեփանէն. «երգում էին նորա մասին»։ Թէ «թուէին նմա» նախադասութեան ենթական նոյնը պիտի լինի, ինչ որ «երգէին նմա» նախադասութեան ենթական է, շատ պարզ երևում է շարագրութեան կազմութիւնից։ Արդ «երգէին» յոգն. 3-րդ դէմք կամ իբրև անդէմ է վերցրած, կամ «երգէին ժողովրդի երգիչները» իմաստով։ Այսպէս և «թուէին» յոգնակի բայի ենթական ոչ թէ եզակի «երգ» բառն է, որ քերականօրէն լինել կարող չէ, այլ նոյն ժողովրդական երգիչները պիտի լինին, կամ «երգէին» ձևի պէս և «թուէին» իբրև անդէմ առնուած։ Այս

պիսի գործածութեան մէջ «թուէին նմա երգ», կարող չէ ունենալ «թուում էին (երեւում էին կամ համարում համարում էին) նորան (առ-րակ հոլ.) երգ», իմաստը — այլ մտաւարա-պէս նոյն իմաստը կարող է ունենալ ինչ որ «երգէին նմա երգ» կամ «ասէին նմա երգ» այսինքն «երգում կամ երգ էին ասում նորա-վրայ»: Թուէին բառն այս իմաստով ըմբռնե-լով վերեւում դրած Տորքի մասին հատուածը հասկանալու համար՝ այլ ևս անշուշտ կարիք չկայ բռնազրոսարար յեղաթիւրելու և խեղելու այն ինչպէս արել են պ. Սալաթեան և հ. Ստեփանէ:

Արդ, եթէ «թիւ» արմատը և նորանից կազմուած «թուել» նշանակում է «ասել», «պատմել» (réciter),¹ հեշտ է ասել թէ «թուել»

1. «Թիւ» տրմաթի եւ նորանից կազմած «թուել» բայի նշանակութիւնը «ասել, պատմել», մի օտորինակ բան պիտի չտեսի, քանի որ ուրիշ շեզուներէ մէջ եւս տեսնում ենք նոյն երեւոյթը առաջացած անշուշտ նոյն հոգե-բանութեամբ, կամ քի շեզուներէ իրար վրայ ունեցած ազդեցութեամբ: Այսպէս յունարէն *ὄμιλος* ասել, պատմել, կարդալ, այլն բռնել, համարել. *λόγος* խօսք, բան(f), պատմութիւն, գրոյց, այլն բռնելը, հաշուելը, համարելը: Լատինարէն *computare* բռնել, հաշուել եւ այս ծանր *արտասանել*: Նոյն բառը շահմանեմի դաստ *համարեմ* *compter* բռնել, հաշուել եւ *conter* (գրութեան մէջով միայն օտար, արտասանութեամբ

Ներքին և Երևանի մեջ Այս բանի հար կար-
 մա թիւակն կարող է կրկնակի... Երևանի թիւ
 ունենալ. թիւ «Թուսպներ» արկերն «Թիւ
 պարզներ ասող—պատմագրեր» և թիւ «Թիւ որ ա-
 ծը» այսինքն. թիւ պատմ. ասած պատմա-
 ծը ինչ որ սուսուս պատմութեւ է» քանի
 որ նոյն ասանցիկ մասնակի թիւ ներգործաւ
 կանի և թիւ կարողականի ինչպէս ունի: 1 Եւ

և computare բառից ծագումը հասարակ computer բա-
 ռին) ասելը պատմելը, compte հաշիւ համար, իսկ conte
 գրոյցը վիպ, պատմում: Գերմաներէն Zahl, քիւ արմա-
 օից zählen բռնելը համարելը, և erzählen պատմելը: Միւ-
 ճիւղն արմաօից անգլերէն to tell բռնելը համարելը, և ֆրան-
 ցական և անգլ. պատմելը. Եւ քիւ հաշիւ այլ և
 պատմում: գրոյցը հեթանոս: Ռուսերէն сумама, сумма-
 маго կտողար, ասելը բաշից сумама բռնելը համարելը:

4. Հմեւ. ներգործաբար աննում, օրինակս. Գրքի մէջ.
 «Ինկիչիք առնել շիք բանին և մի շսե շիք միայն համար-
 ղեցիք: Զի եքե ոք շսե շի (շսոք) միայն իցի բանին և
 ոչ առնել շի (անող), նման է վարդոյ... (Թուրք Եակ-
 Ա. 22—23: Հմեւ. Հոսմ. Բ. 13): «Եւ առ եօ գլխօ-
 տնիանսն առնող սնե շե սց (ստեղծակողներին) ա-
 նապիչին» (Իսաաչար. ժո. 19 ելջն): «Եւ ետուն գա-
 ծաքն ի մնու գործելե սց (գործողներ) գործս կտի
 օսնն Տեառն» (Զոր. բագ. ժր. 11): «Եւ գործ կրե շե սց
 (կողներ), իտանին վկայութեան» (Թիւք ք. 47. հմեւ.
 Յուս. Գ. 15. Առակ. ժե. 21. և ուրիշ տեղեր): Կր-
 տաբար գործածութիւնը նոյնպէս ևւ անչի յաճախ է
 քան ներգործաբար: Օրինակ քերէն անչոտք է:

այնպէս «խուելիք» բառն իւր երկու իմաստով և «համառիչ» է «փրկանքներ» բառին որը ինչպէս անձանք, նոյնպէս նշանակում է ի՞նչ «պատմութիւն անտիքներ, անոյ պատմողներ», և թէ «արած պատմութիւնը, պատմածը» անսահմանա՞ծը»

Միևնոյն երգերի «փրկանքաց երգք» և «խուելիաց երգք» կոչումներն ու բնմն համանման նշանակութիւն ունին և իրկուսն էլ մասնութեան մի և նոյն նշանակով են կազմուած, միայն տարբեր արձաններից. այսինքն երկու կոչումն էլ «էնի» ասելու արժանքին ձեից են վերցրած: Մասնութեան նոյն կզանակով է կազմուած, օրինակ, և ռուսաց СКАЗЫТЬ (նսոյ) բառը, որով կոչուած է ռուսաց վէպերի, վիպական երգերի (ОБЫЧНА) պատմողն ու երգողը:

Եթէ մէկը լսած լինի ինչ ինչպէս մեզ նո՞ւմ Քնդոգրդի երգիչները, օրինակ մեր աշուղները, կո՞ւմ «Մասնու Ծ՛ձեր» արտաժողները, ասու՞մ են իրենց վէպերը (աշուղները մե՞ծ մտապէր թուրքերէն), ԱԶԼԱԶ միայն երգելով նկատած կրկինէ, որ նոքա զի թիւ ուսած: Ելայինքն թերան տրած, բարեբա՞նայն:

արդասանելով ասում պատմում են լոկ միպ-
տեսակ ուժով միայն տեղատեղ ձայնը միև-
նոցն ուժով քիչ երկարելով ուրիշ խօսքով
նորա «թուում են», «թիւ են առում»: Վե-
պերն այսպէս «թուելու» «թիւ ասելու»
եղանակը ինչպէս և «թիւ» բառն այդ ի-
մաստով նոր չէ հարկաւ և միայն հայոց մէջ
չէ մեր հին «փրպասանք» էլ շատ տարբեր
ձևով չպէտք է ասած վնին իրենց վէպերը:
Եւ այս շատ հաւանական է երևում այնու-
որ սյդ փրպասանք (կամ նոցա պատմումներ-
ը) կոչուել են «թուելիք», այսինքն «թուողներ»,
«թիւ ասողներ», «սոցղ-պատմողներ»:

1. Հարկ է նկատել, որ «բուելուց» երգերի այս
բացատրութիւնն արդէն գրած էիս, երբ պ. Խաչատրեանի
«Վկայ» մէջ էր. 197, այժմ փախցրած ծանօթութեան մէջ
նկատեցիս, որ պ. Մանն 1890 թուին իւր գրուածքի մէջ՝
„Изо мѣстоѣи поимѣнн оу Арменію“ (եր. 5-6, 130
Зам. Вост. ам. Имп. русск. обш. т. I. 211—241),
որ մէջ չէր շարդուած իւր ժամանակին կարգալ, մի նման
մեւով բացատրած էր բուել բայից: Այդ գրուածքն ապա
մեզ քերելով, ուշախորհամք ծեսակ, որ նորա բացա-
տրութիւնն իսկապէս «կուակուի» (доіаѣка), ինչպէս ինք
կոչուել է: Եւ քեզ ամբ հոյնն է, ինչ որ մեր: Աւելորդ
չի լինի գուցէ նորա բացատրութիւնն ակնոյց դնել այստեղ-
ք ուելիք բառը եւ հանում եմ բուել բայից. այս
երկու բառը հայոց հին քանաստեղծութեան մէջ, ըստ երե-
ւութիւն, Հռոկ (сѣѣіаѣноѣ) նշանակութիւն են ունեցել:



ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅԵԱՑԻՆ ԱՌԱՍԳԵԼԻ ՎՐԱՅ
ԵՒ ԱՌԱՍԳԵԼՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

(Առասպել:—Առասպելի մէջ եղած ճշ-
մարտութիւնը հաւաստելը:—«Ոճով» պատ-
մուածք:—Այլաբանութիւն առասպելի մէջ:

էլ ցոյց են տուել ոսակաւոր յօրինելու, կամ արտաբերե-
լու եղանակներէից մէկը. բայց եւ չեն կարող ասիլ՝ թէ
արդեօք եղածն ակաւոր (ու թաւոտ) կարգաչննն
իբրեւ ահիւստիւ արտասանելննն, թէ առ-
գանդաճիւն (գնդամացիւ) են վերաբերել: Եւ միեւն
անգամ չեն իշխուում այն բանը մօտեցնել թիւ բանին,
որ աստուածաբանական գրեթէ մէջ դրած է որոշ տեղե-
րում, որով չեն երգում, այլ կարդացում են իբրև ի-
րանական սկիզբով. կարծում են, բանական է, եթէ ինն
յարդարի ցոյց տալ մի դեպք միայն, որ իմ յայտնած
եղանակութեամբ գործ է անում բուն բայը, որից, ըստ
իս, անանցունել է բունից բանը: Եւ այդ դեպքն է Տորթի
մասին «բունիկն նմա երգ բանիցն», որ պ. Ման. Բարգ-
մանում է. «Նորակն (որ. հոյ. ի պատիւ նորա) առնողա-
նում էին (ձեռամբօրա) շատ անյարմար բանաւոր
երգաւ Եւ ասպա անմիջապէս անկացնում է. «ձեռն պնդում
այդ (աստղանում էին) բանի վրայ, ինչպէս է. ձեռն չա-
նայ «բունիկաց երգերի» միջոց իմաստը որոշել: Եւ կանցայ
միայն իրեն Մ. Խորենացու խօսքերի հիման վրայ ցոյց տալ
բունիկաց աստղանածի եւ բունիկ բայի միջեւ եղած
ստուգաբանորէն անկայտի կապը:—Գ. Ման. էւ մեր
բացատրութիւնների նմանութիւնը, եւ անկի կէս արտե-
րութիւնը, կրօնական ընթերցողը:

—Թէ ինչպէս է Խորենացին մեկնում առասպելները:— Հայոց առասպելները:— Այլաբանութիւն եւ մեկնութիւն. — Թորան արժէք ունի «գարդարեալ» պատմութիւնը:— Թէ ինչու Խորենացին ուսկաւ է օգտուած անասպելներին:)

Ինչ հայեացք ունի Խորենացին առասպելներէ կամ որ նոյն է ժողովրդական երգերի գրոյցներէ ելն. վրայ. ինչպէս և որ չափով է օգտուում նա այդ նիւթերէջ իւր գրած Պատմութեան մէջ: Այս հարցերի պատասխանը, որ անհրաժեշտ է փմանալ Խորենացու յիշած առասպելներէ ուսումնասիրութեան համար, յիովին կարելի է ստանալ Խորենացու Հայոց պատմութիւնէից:

Առատիւլ բառը Խորենացու մէջ միայն մէկ նշանակութիւն ունի, այն է մի պատմութիւն:— յինի, երգ, գրոյց, միւթոս (mythus), երգ փիպասանաց, առակաւոր սասցուած, թէ ըստ կտան յիբիբած շինծու գրաւոր պատմութիւն:— որ ճշմտրիտ չէ, հաւատոր չէ:

... Իրաւոր առասպելներ: Խորենացին պատմութիւն է գրում և իբրև պատմիչ պէտք է հարկաւ իւր հաճեացած փերպով իւր տղբիւրծերի հաւատարմութեան մտօն մտածէր: Այս հոգսը նա շատ ունի. այլ է թէ

որքան է յաջողեց նորան այդ: Եւ միայն «Հա-
ւաստին» «Ճշմարիտն» ու «անսուտն» է ուզում
գրել: Սոպա կարծիքով ճշմարիտ պատմութիւ-
նըն առասպել է քառնում, երբ պատմագիրներն
իրենց աւզած ձեռք փոփոխում են պատմու-
թեան գասաւորութիւնը, սնունդները, ժամա-
նակը և չհաւաստին որչափ կարացեալ ի բազ-
մացն ընտրեալ բանիցն, կարգեցաք զճնունդս
... որում: ոչ զոք ընդդիմանալ կարծեմ ի
մտն ունողացն բայց թէ զճշմարտութեամն
ոք խորհելով քակել զոմ, յառաստելս զճշ-
մարիտ քանս ախորժելով փոփոխել փութայ-
ցէ» (Ա. Գ.): Հմեռտ արտ... փոփոխելոյ որպէս
կամեցան իւրաքանչիւրքն (վիպագիրք) փո-
փոխել զանսուտնսն և զգրոյցս և զժամանակս:

Խորհնայաւ համար ճշմարիտ պատմու-
թիւն է ամենից առաջ Աստուածաշնչի պատ-
մութիւնը և ապա Սուրբ Հարց գրութիւն-
ները: Իսկ արտաքին պատմագիրները մէջ
կայ բան՝ որ սուտ է: կայ բան՝ որ ճշմարիտ
է: Երբեմն ի ճշմարտէն, երբեմն ի ստէն» (Ա.
Գ.): Ինչ որ ո. Գրքի պատմութեան համեմատ
է ճշմարիտ է: Ինչ որ համեմատ չէ՝ առասպել
է: Եւ սկսայց յորոց և այլքն, որք յեկե-
ղեցոջ և ոյք ըստ Բրիտանոսի, աւելորդ հա-
մարելով զարտաքնոցն երկրորդէլ յաղագս
իսկգրանն առասպելոյ, բայց թէ զհինսն, ժա-

մանակ ինչ արդեօք. և զարոս յայտնիս՝ որ-
րում եւ աստուածայինքն ի մահ զայցցեն պատ-
մութիւնք ըմբից» (Ա. գ.) : Առասպել չէ Խո-
րենացու «սիրելի» «քան զչառս արդարա-
խօս» բիւրոսեանն Սիրիզդեայ պատմածը
թէ «Թառաջ քան զքուրդն... և զբազմաբար-
բառն լինելոյ ձայնի ազգի մարդկան, և զկնի
նաւարկութեան Բսիսութեայ ի Հայս, Զը-
րուանն և Տիտանն և Յապետութէ լինէին իշ-
խանք երկրի, — որովհետեւ այդ պատմութիւ-
նը, թէպէտ և տարբեր անուններով, ս. Գրքի
պատմութեան նման է : Իսկ նոյն տեղում
(Ա. գ.) Զբազաշտի անուանելը Զրուանին
(Սեմ) «սկիզբն և հայր աստուածոցն» առաս-
պել է, որովհետեւ ս. Գրքի համեմատ չէ,
Այսպէս և նոյն տեղում Տիտանի և Յապե-
տութէի կռուի մասին ընդդէմ Զրուանի
գրում է. «Զայսոսիկ թէպէտ առասպելս ոք
թէպէտ մշմարտութիւն հաշուել համարեա-
ցի, ըայց ես որպէս հաւանեալ եմ՝ ըստում
ինչ մշմարիտ է : Իսկ Խորենացին իւր այս
համոզմունքը հաստատում է դարձեալ ս.
Գրքով և կիպրացւոց Կոստանդեայ Ծպիփանոս
եպիսկոպոսի «Հերժուածոցն յանդիմանու-
թիւն» գրքով :

Այս գրաւոր առասպելները եթէ մեզ
հետաքրքրում են՝ հարկաւ, միայն այն տեսա-

Վէտից, որ միեւնոյն կամ նման հայեացք և հասկանալու եղանակ ունի Խորենացիին և ժողովրդական առասպելների նկատմամբ և մինչև իսկ նոյն բառերն է գործ դնում զրաւար առասպել և Ճշմարիտ պատմութիւն, ժողովրդական առասպել և անոր մէջ բովանդակած իտիութիւն որոշելու համար: Այդ բառերն են՝ հաւաստի, ճշմարիտ, անսուտ, ըստոյդ և նմանները, որ զանազան ձևերով յեղյեղում է. ¹ իսկ հակառակն՝ անհաւաստի, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան» (Ա. իր.). «արտաքոյ ճշմարտութեան» (Ա. ե.), և նախ Խելքով գատելով՝ կամ թէ Աստուածաշնչի հետ համեմատելով առասպելի միջից հաւաստին գանելու համար գործ է ածում նոյնպէս ճշմարիտ, ճշմարտութեամբ և յայտնել բառերը. «Յայտարարութիւն սակաւութիւն թէ ըստ արտաքնոցն ասացեալ է Բէլդ. ըստ աստուածային

1. «Եւ եղանկ գոր ինչ հաւաստի և կարծեմք առնուչ» (Ա. գ.): «Ան ի հաւաստեչ ճշմարտութեանն» (Ա. դ.): «Եւ ե ճշմարտե եւ մի ոք յերկուսացի» (Ա. ե.): «Ենե շրինդեղին երիս կարգելով արս անուանիս յառաջ քան զաշարակաշինութիւնն, զկնի նաւարկութեանն Բախուքեայ ի Հայս, ճշմարտե և, (որովհետեւ ս. Գրքի համեմատե ևն). իսկ անուանցն փոփոխեմք եւ բազմօք այրով ստե և (որովհետեւ ս. Գրքի համեմատե յեն): (Ա. գ.): Հնն. Ա. ե. գ. բ. ժր. ժր, շս ելլն:

բանից ճշմարտութեանն Նարրութ է» (Ա. Է)։ «Բայց ծանկի զՄեքատդ տնուն ... ճշմարտութեան Ե» (Ա. Իբ)։ Նման պատմութիւններից ճշմարտութեան համարում է ոչ միայն այն ուր « Իրքի համեմատ է ։ այլ և այն ուր « ընդ » եւ գրութիւն ։ « Այլ ։ հաւաստի մեզ թուեցաւ որ ի Մայ Արայն կատինայէ քրննութիւն քաղղէական մատնից քան զայստսիկ քանզի ընդ իմն ասէ ։ և զպատճառ պատերազմին յայտնէ » (Ա. Ժբ) ։ Իսկ Բագրատունեաց Հայկից սերուած լինելու մասին առասպելն անհաւաստի է համարում ։ « զի ի բայ բանից և անո՞ իմն յողագն Հայկայ և նմանեացն կակաղէ » (Ա. Իբ) ։

1. Հնեո. « Զնշմե » օտ է բնական ոք իւրեանց փակել զո՞ն ։ յառասպելս զճշմարտութեան ախարժեցոյ փոփոխել փոքրացեալ » (Ա. զ) ։ « Յետոյ պատմեացոյ զո՞ն » (Ա. Իբ) ։ « Զի ոչ ճշմարտութեամբ ո՞ն զ պատմեալ ։ եւ ոչ զանունսն նշանակե կամ զտեղի կատարմանցն ։ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդեւ » (Բ. Իե) ։ « Որով եւ սուրբագոյն նա տեղեկացաւ զամենայն ո՞ն » (Բ. ձգ) ։ « ձանեցոմք որ ինչ կարեւորագոյնն է ո՞ն յ բանիս » (Ա. Իգ) ։ « Անցի միայն զտեղիսն նշանակելով զհաւաստին եւ զո՞ն ի բաց բողեւ » (Բ. զ) ։ « Բայց փակել յաղուս եւ ։ որ ասեւ զերիւսս մերոյ Արաբիսկաբեւ » եւ ո՞ն զ ինն պատմեալ ։ եւ կաւակիլ » (Բ. ժգ) ։ « Այս ամենայն ... այրոց պատմեալ յառաջագոյն փան զճեզ ։ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք ո՞ն զ երկրորդեւ » (Բ. յի) ։

Անցնենք ժողովրդական առասպելներին։
Բ. Յունաց եւ սլաւոսից անասպելների
մասին խօսուած է Ա։ դրբի յաւելուածնե-
րի մեջ, որոնք Թորենացու հայեացքը ժողո-
վրդական տառասպելների վրայ՝ շատ պարզ կեր-
պով ցոյց են աւալի մեզ։ Յունաց անասպել-
ները «պերճ. և որորկ»։ «հանգերձ սրաւոճառաւ»
ուրիշ խօսքով, «ոճով» են և «զձմարտութիւն»
իրացն այլաբանաբար յինքեանս ունին թա-
քուցեալ»։ Այսպիսի «այլաբանութիւն» է հա-
մարում և Պրոմէթէոսի առասպելը. «Նւ-
ընդէ՞ր... Պրոմէթէոս գողացեալ զառ ի յաս-
տուածոցն հուր և շնորհեալ մարդկանս. որ
է այլաբանութիւն, և ոչ բերէ ասել կարգ բա-
նիս» (Ա. է.)։

Իսկ պարսից առասպելները Բիւրասպ Աժ-
գահակի մասին համարում է «փճուն և անձու-
նի», «անյարմար և անո՞՞մ բանք», այլ և «անբա-
նութիւն»։ Մոցա հերոսները «սուտ» են ¹ և
հենց առասպելներն էլ են «առասպելք սուտք»,
«անմիտ և անհանձար բանից յարմարանք»,
որոնցով զբաղուելու պէտք չկայ ², քանի որ
այդ տառասպելները շատ հին լինելով՝ նոյն

1. «Ոյ վրիպեցուցանեյ կարելոյ զվրիպեալն եւ բզ-
սուուն»։

2. «Բայց զհնչ արդեօք օարփանք քեզ... զհնչ քեզ
առ այտոսիկ կարօտըրիւն... կամ զհնչ պեօք»։

իսկ պարսիկներին անհասկանալի են: Սակայն և այնպէս Խորենացին պարսից առասպելներն էլ համարում է այլաբանութիւններնչպէս «Պահլաւաց առասպելների» համար (Բ. հ.) պարզապէս գրում է. «... Թողով զառասպելեաց նոցա բարբառնջմունս: Բանգի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յազազս... (գալիս է առասպելների համառօտ բովանդակութիւնը) և որ ինչ այլաբանութեան բերէ կարգ: Այլ մեք սասայուք միայն զստոյգն» որ ինչ ճշմարտութեանն վայելէ պատմութիւն»: Այսպէս և Բիւրասպ Աժդահակի անոճ ու փժուն առասպելներն ևս այլաբանութիւն ընդունելով՝ կարելի է համարում թէպէտ մեծ դժուարութեամբ,² մեկնել, կամ՝ Խորենացու խօսքով՝ «պատճառս տալ անբանութեան նոցա» եւ զարդարել զանզարդան» ուրիշ խօսքով՝ նորից «չարագրել» յունաց առասպելների պէս ոճով՝ «հանդերձ պատճառաւ»՝ «միտս անմտութեան նոցա տալով»՝ «և զկարի վաղուց նոցա իրս և նոցա անհասանելիս յայտնելով» այսինքն՝ մեկնելով

1. «Զկարի վաղուց նոցա իրս եւ նոցա անհասանելիս աւասիկ յայտնեմ»:

2. «Ի վերայ այլոց անհնարիցն հնարաւոր վասն ին արարելոց մեր՝ կուսարեմք եւ զայս»:

«անոճ» առասպելներից հանել այն, ինչ որ «հաւաստի» է:¹

Եւ քնչպէս է Պօրենացին պարսից առասպելները մեկնում կամ իւր խօսքով, «անհասանելին յայտնում»: Նա նախ Բիւրասպին կապում է աշտարակաշինութեան ժամանակի և Ներրովթի հետ իբրև պարսից ճարտար, Ներրովթի իշխանութեան տակ, և այնուհետև ամենայն ինչ ժամանակի հասկացողութեանն ու բանական խելքին յարմարեցնելով. ունհասկանալին, գերբնականը այլաբանութիւն համարելով և ժամանակի հասկացողութեամբ բնականի վերածելով: Բերնը առասպելի վերջին կտորը միայն իբրև օրինակ Առասպելի մէջ ասած է համառօտ, թէ մանուկ սատանան Աժգահակի օւսերը համբուրում է և «անդուստ» վիշապներ են ծնւում կամ բուսնում: և այնուհետև Աժգահակի շարութիւնը շատանում է («շարութեան յաճախութիւն») և նա ի պէտս որովայնի մարդիկ է սպանում («ծախել»): Իսկ յետոյ Հրուդէն անունով մէկը նորան կապում է պղնձի շրջթաներով և տանում դէպի Դրմբաւընդ

1. «Ստրագրոսիւն, որ ինչ սակս Բիրասպեայ հասասիւն»: Հմեմ. «Ժնոցակն գոր ինչ հասասիւն կարծեմք առնուր» (Ա. 9):

լեռը: Ծանապարհին ճբուղէնը ննջում է և
Բիւրասպը քաշում է նորան դէպի բլուրը,
բայց ճբուղէնը զարթնում է և տանում է նո-
րան լեռան այրերն ու կապում է իւր ար-
ձանը կանգնում: նորա դիմաց («զինքն անդրի
ընդդէմ նորա հաստատել»): որից սարսափելով,
Աժդահակ՝ հնազանդեալ կայ շղթայիցն և չէ
կարողանում: Ելնել և ապափանել երկիրը:—
Այս առասպելը Թարեհացին մեկնում է այսպէս.
«Իսկ վիշապաց բուսումն, կամ կատարելապէս
վիշասրանալն Բիւրասպեաց, որ ասի. է այս»
[Թէ նա սկզբց անբաւ մարդիկ զոհել գեերին,
[առասպելի մէջ՝ ծախել զմարդիկ ի պէտս ո-
րովայնի], մինչև ժողովուրդը (բազմութիւն)
տաղտկացաւ նորանից և հալածեց նորան, և
նա փախաւ Դըմբաւընդ լեռան կողմերը: Նո-
րան սաստիկ քշելուց՝ նորա մարդիկը (ամ-
բօխ) ցրիւ եկան նորանից: [Առասպելի մէջ՝
Հրուղէնը Աժդահակին կապած տանում է
սարը]: Այս բանին վստահացած՝ նորան քշող-
ները մի քանի օր հանգստացան այն տեղե-
րում: [Առասպելի մէջ Հրուղէնը ճանապարհին
ննջում է]: Իսկ Բիւրասպը ժողովելով իւր
ցրուած մարդիկը, յանկարծ վրայ է հասնում
և սաստիկ վնաս է տալի նոցա: [Առասպելի
մէջ՝ Բիւրասպը ննջող Հրուղէնին դէպի բլուրն
է քաշում]: Բայց բազմութիւնը յաղթում

է Բիւրասպին և նա փախստական է լինում
եռակից հասնում և պանում են նորան և ձգում
մի ծծմբի մեծ գիհ: [Առաքելի մէջ՝ Հրուդե-
նը զարթնում է եւ տանում: Բիւրասպին լե-
ռան այրեին ու կապում եւայն]:

Ինչպէս ընթերցողը կրտսանէ, Խարե-
նացին իւր մեկնութեան մէջ, թէպէտ և
էականը պահելով, ընդորոգին նոր ընն է պատ-
մում՝ իրենից: Նորա պատմածն այլ ևս առա-
պելի գոյն շունի, այլ պատմական կամ բնական
խրոդութեան: Գուրս են ձգուած կամ բնական,
խելքի մօտիկ լինուած գերբնական և վիպական
գծերը, ինչպէս են՝ վիշապաց բուռումն կամ Բիւ-
րասպի կատարելապէս վիշապանալը՝ Հրուդե-
նի «գինքն անդրի ընդդէմ նորա հաստատելը»
Աժդահակի սարսափահար ու շղթայուած
մնախ այրումը և չկարողանալը դուրս գալ աշ-
խարհն աւերելու: Հրուդէնի ննջելը ճանն-
պարհին, Աժդահակի նորան դէպի սարը քա-
շելը, ի պէտս որովայնի մարդիկ կտորելը և ըն-
Բերած՝ օրինակից շատ պարզ է, թէ Խորենա-
ցին ինչպէս է ըմբռնում առաքելները և
ինչպէս է մեկնում անոնք, «անզարդը զար-
դարում», «անահաստներին յայտնում» և
կամ առաքելի միջից, որ այլարանութիւն է,
«հաւասարին» դանում և առնում:

Ք. Հայոց առասպելները: Երես ասոր-

րինակ կըլինէր, որ Մորենացին նոյն հայեացքը չունենար, մեկնելու և օգտուելու նոյն եղանակը չգործադրէր և հայոց առասպելներէ վերաբերմամբ, ինչ որ յունաց և պարսից: Եւ Մորենացին չէ թաքցնում ու յգ. նա շատ պարզ յայտնում է, որ նորա համար առասպելն առասպել է, լինի յունաց, պարսից թէ հայոց. միայն մէկը կարող է պերճ և ողորկո՛ւ «ոճով» լինել, միւսը՝ ոչ:

Տեսնենք հայոց առասպելները, ամենից առաջ Արտաւազգիինը, որ Աժդահակի առասպելին նման է:

Արտաւազգի մահը պատմելիս (Բ. կա) ասում է, Գօլթան երգիչներն առասպելաբանում են, թէ Արտաւազը նախանձել է հօր փառքին, ուստի և հայրն անիծել է որդուն, որ որսի գնալիս քաջք բռնեն նորսն և տանեն յազատ ի վեր ի Մասիս. այնտեղ մնայ և ըջս չտեսնէ: Այնուհետև ըստ առասպելին, Արտաւազը երկաթի շղթաներով կապուած է մի այրի մէջ, երկու շուն կրծում են շղթան, Արտաւազն աշխատում է ելնել և վերջ տալ աշխարհին, բայց դարբինների կրաւնահարութեան ձայնից կապանքը զօրանում է: Արտաւազի մահուան մասին այս ժողովրդական առասպելը, գերբնական բան. ունենալով իւր մէջ, խելքի մօտիկ ու ճշմարիտ

չէ: Բայց Խորենացին այլաբանութիւն է համարում: Արտաւազգայ... մահ հանդերձ տյաբանելով», ուստի և աւելացնում է մեկնելով: «Բայց է ճշմարտութեամբ այսպէս¹, որպէս ասացաքս վերագոյն»: Իսկ վերևում պատմել է բնական իրողութեան գոյնով: Թէ Արտաւազգը անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ կինձս և իշավայրիս զակամբք Գինայ, ազմկեալ իմն ի ցնորից խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարուն, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի»:

Առասպելն ասում է: «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազգ և վել վրտխանակ եդին»: Բայց այդ գերբնական է, խելքի մտտիկ չէ, ուստի և ոմանք, անշուշտ ա-

1. Հմեռ. մեկնելու ժամանակ գործ դրած մեներ. «Յայտարարութիւն սակաւոյք քե ըստ արտաւազգն ասացեալ է Բէրդ, ըստ աստուածային բանից ճշմարտութեամբ նարուք է (Ա. Կ.): Ծանիր զՍմբատն սնուն... ճշմարտութեամբ է» (Ա. Իբ): «...Որ ինչ սակս Բիւրասպեայ հաւաստիւն»: «Եւ այս է առաջին ճշմարտութեամբ աստուածային»: «Իսկ վիշապացն բուսումն... է այս» (Բ. Յաւելուած): «Յիշատակեցոյք և մեկ կարճաբոսիք, և զայլաբանութիւնն ճշմարտեցոյք»: «Որ է ճշմարտութեամբ ունի այսպէս»: «Այս է ճշմարտութիւն բանիցս»: (Բ. Ժ.) «Բայց ինձ արդարացեալ բութի շուրն այն» (Բ. Կա) և ուրիշները (Ա. Լ. Բ. Ժբ.):

ուսուիւր մեքնելով «համարեցան կախարդել
զսա (զԱրտաւազր) կանանց զարմիցն Աժ-
ուհւնակայ»¹ քտիտի իր ժամանակի հասկացո-
յութեամբ կախարդելուն կարելի էր հաւա-
տայի իոկ որ մարդիկ երեխայ գողանան և օժիղը
դել գնեն՝ ոչ Սահայն Խորենացին աւելի
«բանաւոր» է մտածում. նա Արտաւազրի
կախարդութեամբ լինելուն էլ չէ հաւատում
և գրում է. «Բայց ինձ արդարացեալ թուի
լուրն այն, թէ ի ծննդնէն եւ եթ միշու-
թեամբ լեալ մինչ նովիսն եւ վախճանեցաւ»:

Բերեմն բոլոր «հաւաստին» ինչ որ իբ-
րեւ պատմական բերում է Խորենացին Ար-
տաւազրի մասին, այն է՝ թէ նա խենթ ու
խելագար (մոլի) ծնուել է և որսի ժամանակ
խելագարուած ընկել է Մասիսի վճերից մէկն
ու անհետացել: Մնացածն առասպելներ են,
որոնք, սակայն, «զճմարտութիւն իրացն այ-

1. Մեզ կարծել չպո՛վե՛ք ո՛ւն յա այս մեկնու-
թիւն յե՛ այն հանգամանք, որ Խորենացին նախ քերում է
մեկնութիւնը կախարդելու մասին եւ ապա առասպելը:
Մեկնութիւն լինելը պարզ երեւում է կապող խօսքերից.
«Եւ զայս նոյն երգիւի յառասպելիս ասեն ասյա-
պես»: Հնճո. Ա. գրի Բ. յաւելումս, որի մէջ նոյնպէս
առաջ մեկնութիւնն է քերում եւ ապա առասպելը վերեւի-
նի նման կապող խօսքերով. «Զոր յառասպելիս՝ մա-
նուկ սասանայի, ասեն, սպասաւորելով...»

լարանար յինքեանս ունին թաքտացեալ: Եւ
երբ մի անգամ գիտեմք թէ փնջեղանակով Ժո-
րինացին առասպելների մեջ այդ Վեռքուցեալ
Ճմարտութիւնք կամ Տաւապին մեկնելով
հանում է առասպելից՝ և այն որ նա իւր
պատմութիւնք «ամով» է պրումնս պատուած
չնք յինչ եթէ ասեմք որ Արտաւազրի մա-
սին բոլոր Տաւապին է մի մեկնութիւն է
միայն որ «ամանք» կամ հենց ինքը պատ-
մապիրը, ասել էն առասպելի մէջ պատմաւա-
ծին» 2.

Անցնեմք միւս առասպելներին: Գիտեմք
Արտաշէսի մասին «փրպասանք» առասպել-
ն: Բ. խթ. «փրպասանաց» բովանդակութիւ-
նը բերելուց յետոյ աւելացնում է. «Քիշա-
տակեսուք և մեր կարճառատիւք, և ցայնս
ըսնութիւնն ճշմարտացուք: Ազգս ինչպէս
պէտք է նա այս առասպելի մեջ, եղած այլա-
մանութիւնք ճշմարտի: Անշուշտ, մեզ արդէն
ծանօթ ձեռով «փրպասանաց» էսպէս մասը
պահելով, մեկնութիւններ պիտի անել իւր
կապէս մի նոր բան պէտք է ըստազրէ իրե-

2. Հմե. թէ ինչպէս Խորենացի և Զրուգեհի կապիչն
Ամպահակին այրի մէջ էլին. դարձնում է սպանեցին Ամ-
պահակին եւ ձգեցին մի վրէ: Այսպէս և որսի ժամանակ
Արտաւազրի բռնուիչը ինչպէս էլին. դարձել է Արտա-
ւազր որսի ժամանակ թնկել է մի վրէ եւ կոտել:

նից, վիպականին ու առասպելականին պատմական ու բնական գոյն տալով, գերբնական ու անհաւատալի բաները դուրս պիտի ձգէ: Կամ քաւր ժամանակի հասկացողութեանը յարմարեցնէ: Կամ թէ բանական (rationnel) պիտի դարձնէ: Թէ իրօք այդպէս էլ վարուում է պատմագիրը, այդ մասին յետոյ, երբ վիպասանաց երգի մասին կը գրենք: Յիշենք միայն առաջուց, որ առասպելի մէջ սասած է օրինակ, թէ Սաթենիկ վիշապ կամ վիշապազունը է սիրել: Խորենացին համարում է այդ առասպելութեան սուտ, զի խելքի մօտ բան չէ: Եւ մի թագուհի վիշապ սիրած լինի. սակայն այդ առասպելն իւր մէջ այլաբանօրէն հաւաստի բան կարող է ունենալ. ուստի և վիշապի ու վիշապազանց տեղ, մեկնելով, դնում է Մարք և Մուրացան տէր Արգամ:

Սանատրուկի ձիւնի տակ մնալու մասին «առասպելաբանն» եթէ կենդանի իմն նորահրաշ սպիտակ յաստուածոցն առաքեալ պահէր զմանուկն» (Բ. 19): Բայց քրիստոնէայ և ռացիոնալիստ Խորենացին այդպիսի բանի չէ հաւատում: ուստի և անմիջապէս մեկնում է. «Բայց որչափ եղաք վերահասու այսպէս է. շուն սպիտակ ընդ խնդրակս լեալ պատահեաց մանկանն և գայեկին»:

Արուանդի մասին արոււմ Կն. «Ըստ հը-
մայից դժնեայ գորով ական հայեցուածով-
վան որոյ ընդ այգանալ աչալըջացն սովորու-
թիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս
որձաքարեայս ունել ընդդէմ Սրուանդայ, և
ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել
որձաքար վիմացն»: Պատմագիրն այս բանը
սուտ և առասպել է անուանուամ: Իբրև մի
անհաւատալի բան, բայց և անմիջապէս, հա-
ւատալի կացուցանելու համար, փոխում է
մեկնելով իւր ժամանակի հասկացողութեամբ
և հաւատալիքով. «Եւ կամ դիւական ինչ
առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հա-
յեցուածոցն անուամբ մնասեսցէ զորս կամի»
(Բ. Խբ):

Առասպելչների մէջ «Դոմեա զոմն ասեն
եկեալ» Հայաստան Արտաշէսի դէմ կռուե-
լու: Խորենացին այդ Դոմեաին համարում
է «ինքն կայսրն Դոմետիանոս». բայց որովհե-
տե երեւի, ուրիշ աղբիւրներից գիտէ, որ Դոմե-
տիանոս կայսրը Հայաստան չէ եկել կռուելու,
ուստի մեկնելով բացատրում է առասպելը.
«Ոչ (Դոմետիանոս) եկեալ այսր, այլ զիրաման
նորա եւ զզորս այլաբանելով յամուն նորա
կոչեն» (Բ. Ծդ):

Թողնում ենք միւս առասպելչներն ու
անոնց մեկնութիւնները: Բերած օրինակներից

արդէն երևում է պատմագրի հայեացքն առաասպելներին վրայ, և թէ ինչպէս նա ամեն մի առասպելական պատմուածք, և առ սուս համարելով հանդերձ, կարող է այլարանութիւն համարել և ձեկնելով միջից «այլարան օրէն թարգմեցեալ ճշմարտութիւնը հանել իբրև հաւասար սուրբ պատմութիւն: Սակայն այդ «հաւասարին» ինչպէ՞ս բերած օրինակներից կրտսնէ ընթերցողը մի բուրդովին նոր շարադրած: Իսկապէս յերիւրած պատմութիւն է որ շատ անգամ առասպելի հետ նմանութիւն իսկ չունի:

Այսպիսի յերիւրած «այլարանութիւնը ճշմարտած» առասպելներն այլ ևս անշուշտ ժողովրդական առասպել կոչել կարելի չէ: այլ մի միայն պատմագրի կամ նորա նման մտաճողների մի յօրինուածք: որ թէպէտ և առասպելի հիման վրայ շինած, բայց առասպելի մասին գաղափար ասլ չէ կարող: Ռուստի շատ զգոյշ պէտք է լինել իբր ժողովրդական առասպելից քաղած այսպիսի կտորների վերաբերմամբ: Քանի որ անոնք — «անգարտ» լինելով և ապա «զարգարուած»: «անտճ» լինելով և ապա «ոճով և հանդերձ պատճառաւ շարագրած»: «անհասանելի» կամ «անյայտ իրք» լինելով և ապա «այտնուած»: մի խօսքով, առասպել լինելով, բայց մէջն այլարա-

նութիւնն անսնող պատմագրի փողմից «Ճշմարտեալաբան» կամ «Ճշմարտականութիւնն» շինուած:—կարող են հազուադէպ մի բառ կամ նախադասութիւնն բռնն առասպելից ունենալ իրենց մէջ:

Սակայն չնայելով սորան, պ. Խալաթեանի քննադատութեան մի որոշ մասն այսպիսի «զարդարեալ» իբր ժողովրդական առասպելներին դէմ է ուղղուած, օրինակ վիպասանաց երգի նկատմամբ: Ինքն լատ ինքեան համպանալի է, որ պ. Խալաթեանի քննադատութիւնն այդ կտորներին վրայ կարող չէ անզանցանել, թէ գոյութիւն չեն ունեցել հայոց «վիպասանք», ուստի մենք աւելորդ ենք համարում կանգ առնել այդ մասին: 2

Սակայն պ. Խալաթեանի վարուելու եղանակը ճշմանելու համար մի բան կարելի չէ առանց նկատողութեան թողնել: Չնայելով որ նա գիտէ, որ այդ «այլաբանութիւնը» Խորենացուն է և որ պատմագիրն ինքն է այդ այլաբանութիւնը վերագրում հայ եր-

1. Халатъ Арм. Эпосъ ер. 219 հան.

2. Հմն. այս մասին, ինչպէս և առասպելի մեկնութեան մասին, Ման. Визант. Времен. III. V. 1598 եր. 254 հան.:

գիշերին, ¹ բայց և այնպէս նա յաճախ այդ «այլաբանութիւնը» գործ է ածում իբրև մի միջոց հայոց հին «վէպի» գոյութիւն չունենալը ցոյց առնուի համար, երբեմն ծաղրելով, ² երբեմն մոռանալով իւր ասածը և ինքն իրեն հակասելով գրելով, որ իբր թէ Խորենացին յայտնում է, որ «ընդհանրապէս ամեն մի այլաբանութիւն իւր Պատմութեան մէջ ժողովրդական երգիչներին է պատկանում»։ ³ Եւ ոչ միայն այդ, այլ շատ աւելին, իբր թէ Խորենացին «առապակել գործ է ածում առանձնապէս յաճախ ժողովրդական քանաստեղծութեան տեսակներից մէկի նշանակութեամբ, և առաջակել բառով հասկանում է ոչ միայն միթոս (միթոս), այլ ըստ երևութիւն, և այլաբանութիւն, այն էլ այլաբանութիւնը երգի մէջ. այսպէս ասած — այլաբանական երգ»։ ⁴ Եւ էլ այնուհետև պ. Խալաթեանն ազատ է համարում իրեն «առասպելք» թարգմանելու «այլաբանութիւն» ⁵ և իբրև հիմունք ծառայեցնում է «թուելիք» բա-

1. Халат. Арм. Эпосъ кр. 198, 247-305.

2. Նոյն, 198. 250, 251, 268 և ուրիշներ:

3. Նոյն կր. 245.

4. Նոյն, կր. 44:

5. Նոյն, կր. 45. Նաև ծան. 8. 9:

«ին քանհամոյարար տուած այլարանութիւն նշանակութիւնը»

Բայց պ. Խալաթեանը մտանում է դարձեալ որ, եթէ առասպելը թարգմանում է մի տեղ «այլարանական երգ», միայն այն հիման վրայ, որ Խորենացին առասպելի մէջ այլարանութիւն է տեսնում:—էլ ինքնինչ հիման վրայ ասում է թէ Խորենացին «առասպելը» ասելով հասկանում է և «միթոս» (ΜΗΘΥ) և ի միջի այլոց իբրև կոչումն բերում է «մի պարսից առասպելեաց» յաւելումը և Բ. գրքի է. գլուխը էլն: 1. Եթե անգերում են յունաց և պարսից առասպելները և Հագամակերտում Արծրունեաց մասին պատմուած արծուի հովանի անելու առասպելը: Եթէ հայոց միւս առասպելներն «այլարանական երգ» են, չգիտեմք ինչու Հագամակերտում պատմուած առասպելը մեթոս պիտի լինի: Միւս կողմից՝ բանական դատողութիւնն ասում է որ եթէ հայոց առասպելները Խորենացու անոց մէջ տեսած այլարանութեան պատճառով այլարանական երգ է համարոււմ պ. Խալաթեանը, պարսից և յունաց առասպելներն էլ նոյն պատճառով այլարանական երգ պիտի համարէր, քանի որ, ինչպէս տեսանք:

1. Նոյն եր. 44. նաև ծան. 4:

Մտրեմացին այդ աստասպեղներն էլ, այդպիսի
 նութիւն է համարում: Իսկ եթէ վերջիններս
 միմոյ են, նոյնը պիտի լինին և հոյսոյ ա-
 ստասպեղները, ինչէ շնորհամբոյ թացարտա-
 թիւն է, և գորով, ցանկանալս որ հայրոց աս-
 տասպեղներն, այլարան անհանր ճիշդ դատեն:

Այսպէս Մտրեմացու մէջ իբրև աստա-
 սպեղ յիշուածը մեզմէ էլ անստորելի քանի որ
 կարելի է շնորհեմացու հարեացքի խառն-
 պեղներն վրայ և նորա անբաժ մեկնութիւնը
 (Mythenentwicklung) իբրև գիտնոր ծառայեցնելու
 Սա Մտրեմացին մենայն չէ նկելլ որ աստա-
 սպեղն մէջ այլաբանութիւնն է պահուած: Արտաս-
 սպեղն միմոյ մեկնութեամբ միշտ պարտելի
 են մարդիկ և զարմարան ձեռք մեկնել: Եթէ
 այժմեան գիտութեան մէջ իշխումն է այն
 միտքը թէ աստասպեղն շտաբ հայրեւորեցի
 մի այլարանական կամ գերանցական աս գի-
 լիստիայական գաղտնիք կրթութանդովէ իւր
 մէջն աստիճան կարելի չէ սիմբոլիզմն
 այլարանական (symbolisch allegorisch) մեկնա-
 թիւնն որք միմոյնն որ թիւստեաններն
 և աստասպեղներն ծառայը մեկնութեամբ իր
 կարգն երևոյթներով պիտի չորացուող լոյս
 մի ժամանակ էջ այլարանական և եւ ճիշտա-
 կան մեկնութիւնն էր իշխումն Ս. Մտրեմա-
 ցին իհարկէ մեզաւոր չէ որ իւր ժամանա-

Աի գիտութեան մէջ իշխող հայկոցքի համեմատութիւնը որ տառապեբարեան է և անհասկանալի պարտանութիւն է համարում և իբրև ուսիանալիստ բաժնական խելքի ժօտիկ մի պատմուածք շինելով ժարդկօրէն պատմութեամբ և մեկնում տառապելը: Այն ինչ որ Պարենացու համար մեծ արժէք ունէր — առասպելների մեկնութեամբ յարինամ, յերիւրած պատմութիւնը մեզ համար հարկանալու է: Աւստի և հայոց առասպելների մասին դատելուց առաջ միշտ պէտք է որոշել թէ որն է են այդ առասպելները, այսինքն թուն ժողովրդական անջատել Պորենացու «գարդարեայ» առասպելներից, — մի անհրաժեշտ բան որ ամեն հետազօտող պէտք է անէ բայց պ. Պարթեկանը դժբախտաբար նեղութիւն չէ կրել անելու, թւտի և նա հայոց ժողովրդական առասպելների մասին յաճախ պարզ դողափար անգամ չունի: Ընայդ անելը դժուար չէ քանի որ Պորենացին ինքն էլ սովորաբար որոշ ասում է թէ որն է բուն առասպելը և որը իւր «գարդարեայ» պատմութիւնը:

Թեպետև ցաւ է որ յերիւրած կտորները բաւական մեծ տեղ են բռնում Պորենացու մէջ բայց բարեբախտաբար յաճախ նա նախ բերում է և առասպելի կարճա-

առտ բովանդակութիւնը, երբեմն մինչև իսկ առասպելի խօսքերով, և ապա իւր մեկնութիւնը կամ յերիւրումը: Այսպիսի գէպքերում «մեկնութիւնը» կամ դարձեալ բնաւ նշանակութիւն պիտի չունենայ, կամ այն չափով միայն նշանակութիւն պիտի ունենայ, որ բուն առասպելի բովանդակութիւնն իմանալով կարելի է քննադատելով աւելի հեշտութեամբ ընդունել թէ այս կամ այն բառն ու առացուածը «մեկնութեան» մէջ առասպելից է վերցրած, թէ չէ:

Մի երրորդ ձևով էլ օգտուում է Մորենացին առասպելներից, բերելով անոնց բովանդակութիւնն առանց «մեկնութեան», կամ այն պատճառով, որ արհամարհում է այդ առասպելները, ինչպէս Հաղամակերտում պատմուածը և Տորքի առասպելը, կամ բաւականանում է միայն այնու, որ իւր՝ որևէ զրաւոր աղբիւրից առած պատմութեանն իբրև վկայութիւն է կոչում: Ինչպէս Շամիրամի մահուան առասպելը:

Մորենացին ինչքան էլ առասպելներ յիշում է, չենք կարող ասել, թէ շատ է օգտուում առասպելներից: Աղոր պատճառը, հասկանալի է, Մորենացու հենց այս հայեացքն է առասպելների վրայ: Մորա աչքին, ըստ ժամանակի հասկացողութեան, ամեն մի զրաւոր յի-

շատակարան, թէկուզ անվաւեր մի գրուածք, որովհետեւ իւր մէջ հաւատալի բան ունի, աւելի մեծ արժէք ունի, քան թէ առասպելը, որը, եթէ չէ մեկնուած և միջի «հաւատախն» առած, նոյն իսկ սուտ պատմութիւն է համարուում: Եւ որովհետեւ Խորենացիի պատմութիւն է գրոււմ և ոչ թէ առասպելաբանութիւն, ուստի և որքան կարելի է քիչ՝ այն էլ յաճախ «մեկնելով» է օգտուում առասպելներէրից, որպէս զի մի՛ գուցէ իւր գրած պատմութեան արժէքն ընկնի առասպելներով: Այսպէս օրինակ Բ. կդ. որոշ կերպով գրոււմ է նա. «Որչափ էր հնար, փախեաք յաւելորդ և պաճուճեալ բանից և որ ինչ յանհաւաստին հայէր ըսնն եւ մտածութիւնն. միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ եւ կամ ի մէնջ՝ զարդարոյն եւ զճմարտի: Զնոյն և աստանօր պատրաստելով, արգելում զընթացս ըսնից յոչ պատշաճէն և որ զանհաստատութեանն ի ներքս ածել ակնարկէ կարծիս: Եւ զքեզ, որպէս բազում անգամ, և այժմ աղաչեմ, մի՛ յաւելորդսն հարկաւորել զմեզ. և սակաւ կամ յոլով բանիւք՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս՝ ընդ վայր եւ աւելորդ ցուցանելով գործ. զի նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վտանգս»:

ՎԱՀԱԳՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Կարծեցեալ թէոզոնիա: — Մ. Էմինի կարծիքով «Հայոց Վէպը» սկսուել է թէոզոնիայով «գիցարանական» աւանդութիւնով. դորա մէջ հանդէս էին գալիս առաջին աստուածները և նոցանից առաջացած հսկաները, որք մարտնչոււմ էին դոցա ցէմ, ինչպէս երբեմն Տիտանները — Չեւի դէմ: Այդ աւանդութեան բովանդակութիւնը, ինչպէս որ էր առհասարակ հին ազգերի մէջ, կազմոււմ էին աստուածների ծնունդը եւ աշխարհի սկիզբը»¹: — Եւ այդպիսի դիցավեպի «նախերգանքն» է համարոււմ Էմինը Խորենացու մէջ եղած Մար Աբասի պատմութեան սկիզբը (Ա. Թ.), որի մէջ խօսոււմ է հսկաների աշտարակաշինութեան և լին. մասին:

Թէ Էմինի այդ տեսութիւնը զուտ երեւակայական է, շատ պարզ է: Խորենացին ոչ մի տեղ չէ յիշատակած թէ այդ հասարակածը «վէպից» է առած, և կամ հայոց առաս-

¹ Էմին, Մ. Կորեկ. եւ հայոց հին վիպերը, քարգծեր. 36. հս.:

գրիներք հետ որևէ կայ է. ոչնչացած
այլ. ընդհանրապէս պատմագիրք: պարզա-
պէս վերջում է. թէ դա Մայր Աթոռի գրքի
սկզբն է. ձերեմն Խորենացին այդ կտորը
մի գրաւոր ազդեցից է արձուցնում ոչ «վե-
պից» կամ «ժողովրդական երգերից»: Թէ այդ
գրաւոր ազդեցից Մայր Աթոռ Խորենացու
ստեղծածն է. թէ իւր իզուր է. թէ Անա-
նունն (Սուր Ազաթանգեղոս) է. կամ այլ
որ,— այդ արդէն ուրիշ խնդիր է: Ով էլ ան-
նի այդ գրաւոր ազդեցից հեղինակը, կարող
էր իրենից յերիւրած լինել այդ պատմու-
թիւնը, քողելով մի այլ գրաւոր ազդեցից:
Եւ արդէն պ. Խալատեանը համոզելի կեր-
պով ապացուցել է, որ այդ հատուածը «կազ-
մուած է մի յունական ազդեցից հիման
վրայ», քանի որ աշտարակաշինութեան մի
նման պատմութիւն «գրեթէ նոյն արտայայ-
տութիւններով գտնուած ենք Եւսեբիոս Կեսա-
րացու Զրոնիկոնի մէջ»: Ուրեմն այդ հա-
տուածը թէ ըստ Խորենացու վկայութեան
և թէ ըստ իւր բովանդակութեան, հայ ժո-
ղովրդական առասպելների հետ առնչութիւն
չունի:

Վահագնի առասպելը:— Բայց այդպի-

՝ օր քնաւորութիւն չունի հայոց միակ դի-
ցարանական առասպելը: Վահագնի մասին
պռասպելը, որը, սակայն, ոչ թէ հայոց երե-
ւակայական «Վէպի» սկզբի երևակայական-
թէոզոնիական մասի մի հաստաւածն է, ինչպէս
առում է Էմին, այլ մի անջառ Երգ:

Բերենք Խորենացու այդ կտորն ամբողջ-
քանի որ մեր յօդուածի ընթացքում պիտի
պէտք գայ մեզ այդ¹. Սորա որդի Բար, Տի-
րան, Վահագն՝ զորմէ ասեն առասպելը աշ-
խարհիս.

Երկնէք երկին, երկնէք երկէք:

Երկնէք և ծիրանի ծովն.

Երկն ի ծովուն ունէք և զկարմրիկն եղեգնիկ.

1. Թաշոյր հասուածն ամբողջապա վերցնում
ենք Ս. Էջմիածնի գրադարանի Մ. Յ. № 1686 մեռա-
գրից, որի հետ քառացի նոյն են № № 1669, 1672,
(վերջինիս մէջ ա չ ք ու ն ք ն փոխանակ ա չ կ ու ն ք ն),
իսկ № № 1665, 1671, 616 ունին՝ «եւ ծովն ծի-
րանի», «ա չ ք ու ն ք ն». № 1665 քացի այդ՝ օտ-
րերում է դարձեալ «Եւ ընդ եղեգան փող քոց էյա-
նէր», «քամրամբ» ընթերցումներով, իսկ № 616 ու-
նի «Սա Տիգրանայ որդիք Բար՝ Տիրան՝ Վահակն» ըն-
թերցումը: Այս կարգի մեռագիրներին պատկանում է
ևս Լամբրոնացու օրինակը: Ս. Էջմիածնի գրադարանի
մնացած օսան ու մկլ մեռագիրները օպագրածի ծեսակին
են պատկանում, քայց օտրեր ընթերցումներով, որոն-
ցից մի քանիսը Լամբրոնացու օրինակին են մօտենում:

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի քոցոյն վազէր խարտեաշ պաասանեկիկ,
Նա հուր հեր ունէր.
Ապա թէ բոց ունէր մօրուսն,
Եւ աշկունքն էին արեգակունք:

Եւ զայս երգեալ ոմանց փամբուամբ՝ լուսաք-
մերովք իսկ ականջօք: Յետ որոյ և ընդ վի-
շապաց ասէին յերգին կռուել նմա և յաղ-
թել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեսայ նա-
հատակութիւնսն նմա երգելոյ» (Ա. լա.):

Ուրեմն, ըստ Խորենացու, Վահագնի-
մասին այս պատմութիւնը գրքերի՝ ճագնում
չունի, այլ մի առասպել է, որ երգուել է,
եթէ Խորենացին Ե. դարու մարդ է, այդ
դարում, իսկ եթէ աւելի ուշ ժամանակում
է ապրել, Է. կամ Ը. դարում՝ այս վերջին
դարերում, — երկու դէպքում էլ այնպիսի
ժամանակի երբ քրիստոնէութիւնն իրօք իշ-
խում էր, ժշմարիտ է Խորենացու այդ վկա-
յութիւնը, թէ՛ նա բացարձակ ստում է,
իրենից մի երգ է ստրքում Վահագնի վրայ
և ասում է թէ մեր ականջով լսեցինք այդ:
Ուրիշ խօսքով, Վահագնի այդ առասպելը
ժողովրդական է, թէ՛ մի շինծու բան, ինչ-
պէս աշխատում է ցոյց աւել պ. Խալաթեանը
Վահագն Աստուած: — Վահագն, որի աս-

առաջադրուած թիւեր բացի Մորենացուց յայտնի է և Ազաթանդեղոսից, Բիւզանդից և Աստուածաշնչից, Մորենացու մէջ դարձած է մտրդ և յատկապէս Տիգրանի որդի: Թէ հայոց նախարարների որդէ ցորդի ղասաւորութիւնը ինչպէս և ամբողջ ժամանակազրութիւնն ու ազգաբանութիւնը, Մորենացուներ կամ նորա գրաւոր պարբերներինն են: այդ յետոյ կրտսններս Այստեղ նկատենք միայն որ այդ ազգաբանութեան կարկատած լինելն երևում է որինչ, միաձնու յիշատակութիւնից, սորա (Տիգրանայ) որդի... Վահագն... սորա Առաւան, սորա Փերսեհ, սորա Զարեհ... սորա Արմոզ, սորա Բազամ, սորա Վան, սորա Վահէ, սորա Կանուններ, որոնց մասին պատմագիրը ոչինչ կամ գրեթէ ոչինչ չէ տասմ՝ բացի Վահագնից:

Հայոց Վահագն առաջադրու համարուելը Մորենացուց իբրև անցեալ ժամանակների հայ նախնիքներից մէկը՝ անշուշտ հեռուսնք է քրիստոնէութեան կամ աւելի ռազմական լիզմի: Եւ հետևաբար ժամանակից ի վեր արդէն առարածուած և ապա քրիստոնէանների մէջ սովորական գարձած մի սևամուկ էր, առողաւածները համարել հազոյն ժամանակներում եղած նշանաւոր վարդիկ, որոնք յետագայում առաւելածացել են Այսպէս, ոչ

Տոյն Խորենացու մէջ Վահագն Հայոց նախ-
 նիքներից մէկն է՝ այլ և Անանիա Երևակա-
 ցու մէջ՝ մարդ են համարուժ Վահագն և
 Բարշամ։ Քորսեան ամանք յառաջնոցն Հայոց
 ասանցին՝ թէ ի ինքն ձմերանի Վահագն նախ-
 նին Հայոց գողացան զյարդն Բաղասմայ (Բար-
 շամայ) Ասորոց նախնոյն. զոր և մեք սովո-
 րեցանք ինքնուրեքեմք Եարդգողի հետ ա-
 նուանեմք)։

Սոյն ուսմունքին հետեւելով և ս. Լու-
 սանորիչ Աղաթանգեղոսի մէջ (Խրիստի տպ.
 1882 թ. 42) մարդ է համարուժ Անահիտ
 դիցանհոռն։ Այլ զոր դուր կոչես մեծ Անա-
 հիտ անկին, լեալ իցնն արդեօք մարդիկ որ
 յայնեամ երբեմն ժամանակի։ Բան զի դիցա-
 պաշտ կանարդիւթեամք զմարդիկն որ յայն-
 ժամն էին ցնորիւք կերպս ի կերպ լինելով
 դիւանցն՝ հաւանեցուցին մեհեանն շինել և
 պատկերս կանգնել և երկիր սրօզանել։ Սոյն-

1. Անանիայի Երևակունոյ Մնացորդի բանից Ս.
 Պետրոսի, 1877 թ. 48։ Այսեղ Բարշամ ա-
 նուան անք Բաղասմայ և սակայն և Արշախի (Հրե
 Հաւատքի Թ. 293) մերի օսկ ուսնցած մեռագրի մեք կեղ
 և Բարշամայ Ասորիսանայց. Արշախի։ Բարշամ է
 գում եւ պր. Գեղեք (Zur. arm. Götterlehre Nr. 120
 Ber. u. d. Verh. d. K. Gesellsch. 1896). Վեհեկի գրա-
 դարածի մեռագրի ընդօրինակութիւնն ստացած լինելով։

պէս և Եզնիկ (Վենետիկ տպ. եր. 122) մարգ
է համարում Ջրուանին. «Ջի և Ջրուանին իսկ
մարդ լեալ է, այլ մի քաջ առ Տիտանօքն.
և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամե-
նայն ազգք հեթանոսաց՝ զքաջս առ դիցա-
զունս ունել, հայեցեալ քէշակարկատին պար-
սից՝ Թէ որովհետև մարդիկ աշխարհին զնա
առ աստուածս ունին, ես զերկնից և զեր-
կրի և զամենայն արարածոց արարչութիւնն
ի նմանէ կարծեցուցից»:

Այսպէս և Խորենացին, — գուցէ և Վա-
հագնի մասին առասպելի երգիչները, բայց
ոչ առասպելը, զի անոր մէջ ոչ մի բառ չկայ,
որ Վահագնի իբրև մարգ մտածուած լինելը
ցոյց տայ, — նոյն և հեմերական ուսմունքին
հետևելով, համարում է Վահագնին մի մարդ,
ուստի և զնում է նորան իւր յերկերած ազ-
գաբանութեան մէջ: Բայց որովհետև նա կար-
ծում էր, որ այդ մարդ Վահագն պաշտուել
է յետագայում աստուածանալով, և ինքն էլ
Վահագնին զնում է աստուածների շարքի
մէջ՝ հաւասար Հերակլէսին, ուստի և նա
Վահնունեաց նախնի (Ա. լա. Բ. Ը. Ժբ.)
Վահագնի մասին երգի բովանդակութիւնը
մէջ բերելուց յետոյ, հարկաւոր է համա-
րում աւելացնել. «Այլ ասեն զսա և աս-
տուածացեալ, և անդրի ի Վրաց աշխարհին

կանգնեալ շափ հասակի սորա պատուէին զս-
հաք» (Ա. լա.)¹։ Այս հաստատածը երգի բու-
ժանդակութեան շարունակութիւնը համարե-
լու, ինչպէս ընդունում են Էմին, պ. Խա-
լաթեան և ուրիշները ոչ մի հիմունք չկայ։ Ծո-
ցա հիմունքը միայն՝ ապագրածով՝ ասեինս-
մեր բերածով՝ ասեն՝ բայն է, որ շրջեր են
Թարգմանում ըստ քմահաճոյս։ (Տես Բ.
գլուխ ասեմ՝ բայի մասին)։ Այդ կտորը,
ինչպէս հենց նիւթը և պատմելու ձևը ցոյց
են տալի, միայն պատմելի խօսքերն են, որ
նա. գուցէ նոյն իսկ վահագնի մասին եր-
գողներից լսելով, և կամ գրաւոր աղբիւր-
ներից քաղելով, իրենից կցել է իւր պատ-
մութեան մէջ՝ իւր մարդ ընդունած վահագ-
նի յետագայում աստուածացած լինելը յայտ-
նելու համար միայն։

Ի՞նչ աստուած է վահագն։— Պատե-
րազմի արտուած, գլուխ է պ. Խալաթեանը²
հիմնուելով Ազաթանդեղոսի այն կտորի վրայ։

1. Վեցրտե ս. էջիստեկի գրգարանի № 1665
ձեռագրից. որիև նման են №№ 1671, 1672, 616 իսկ
№№ 1669, 1686 ունին միայն շէյ եւ ասեն զսս եւ
աստուածացեայ սարսեր ընկերցուածք։ Մնացած ձեռագրե-
ներն ունին սպագրածի պէս. ասյլ անկիև զսս եւ...
ընկերցուածք։ Ուրիշ սարսերուրիւնները քողմուս ենք։

2. Халат. Арм. Эпосъ, стр. 202:

ուր. Յերթասի հրովարդակի մէջ ասուած է:
 «Բաճառ թիւն հասցնի ձեզ ի քաջնաւ հասցնէ ո՞ր
 Բայց այդ տիր միայն իրելե քոնի ներկայա-
 ցնամ աստնեւաճը և քաջնալիւն շնորհու մ-
 իսկ այդքան ինչպէս և Աստուծոյն համարել-
 տանիւն լինելը հերակլէսին՝ զհետք քաւականդ
 անբարոյցնիւ շնն որ ևս պատերեպոյն պատ-
 տուած եղոմ լինի Աիւս կողմից այնչափ շն
 ասպարուցուած և Աստուծոյն որոնք և յար-
 թուութեան աստուած համարելը 2: Հիմնուե-
 լով թերեւս Աստուծն անուան ծագումն զիսկ
 պարտից՝ Արեթ թարեալ քաւուած ու անուանից-
 Բայց եթէ պարտից Արեթ թարեալն յարթու-
 թեան պատուած է հայաց Աստուծոյն այդ-
 յաստեպոյնիւնը կարող երաւ նեկալ Աշտնաննալ-
 Աստուած ինչը մի ազգից միսին անցնելու յ-
 յետոյ միշտ անպատճառ շն պահուած իրենց
 բնուածութիւնը Իսկ որսի անտուած համա-
 րելը հիմնուելով ինչ-որ երկիկի գրոյցի վրայ-
 որ պատմուած է ս. Աթանազիոսիսի Աստուծոյն
 իրաւունքի յաջորդի—մասին բնաւ արժէք
 չունի 3 քանի որ այդ գրոյցը կարող է ոչ ան-

1. Արարեպետ Թիւիս 1882: էր. 83.
 2. Geizer, Zur arm. Götterlehre, էր. 108.
 3. Տես Հ. Գնչեկի Հեազոտարիւն հայ պիցարա-
 նութեան քաղ. Հ. Յ. Թարսեան Անեկի, 1897: էր.
 36. քաղանի ծանօտութեւնը՝ քաղ. Հ. Բ. Մարգարեանի

պատճառ Վահագնից անցած լինելն և Աթա-
նազինէսին:

Որսի աստուած կամ «անտառի երէ-
ների պաշտպան», կամ թէ յազթութեան
և պատերազմի աստուած լինելը, որ միայն
մակաբերութիւններ են, եթէ ճիշտ էլ լինին,
դեռ չեն բացատրում Վահագնի բնաւորո՞ւ-
թիւնը կամ Ֆիզիկական ծագումը, որ ունի
աստուածը, ինչպէս ճիշտ նկատել է պ. Գե-
լցի, գրելով. «Աստուծու Ֆիզիկական բնաւո-
րութիւնը, որ ծննդեան անասանի մէջ դեռ
պարզ երեւում է, յետնագոյն ժամանակում
արդէն շատ յետ է մղուած և դժգունացած:
Վահագն ներկայանում է արդիբրև որսի և յազ-
թութեան աստուած»: ¹ Ուրիշ խօսքով, Վա-

Ագարանգեղոսի Ռումեւսիւրոբիւնից, եր. 215—218:
Աւելորդ չի լինի նկատել, որ ցարդ Հայաստանի զանազան
կողմերում այս կամ այն սրբի, գլխաւորապէս Ասորւ-
ստանի վրայ պատկուել է նոյն եղևիկի գրոյցը, որ մեծ
այլաբանութիւն չենք համարում, ինչպէս և Սարգսեանը
այլ իրօք մի հին գրոյց, որ արբերիւն է անցել Ռեքան-
տութիւնից: Ոչ մի տեղիք չկայ, սակայն, այդ գրոյցը Վա-
հագնին վերագրելու, և ոչ իսկ ս. Արամազինեան հա-
մարելու միայն Վահագնի յայտոյ:

¹ Gelzer, Zur armen. Götterlehre, եր. 108: Պե՛տ
է նկատել, որ այս կարեւոր ուսումնասիրութիւն հայերէն քաղա-
կութեան մէջ, որ յիշուած է Ասիւրոյ ծանօթագրութեան մէջ,
կան խոշոր սխալներ. օրինակ, մեր քերած սոյն կտորը,

Հազն սկզբնապէս Ֆիզիկական ծագում ունի
և յետնապէս միայն, եւ Հեմելրաբար մտա-
ծուելով, իրրե մարդ է ներկայանում, կամ
թէ վերացական գաղափարների, ինչպէս են
յաղթութիւն ու քաջութիւն, մարմնաւորում
աստուած:

Ի՞նչ Ֆիզիկական ծագում ունի Վահագն,
կամ ղ՞ր Ֆիզիկական երեոյթի անձնաւորու-
մբն է նա: Ահա թէ ինչ պէտք է իմանալ:

«Der im Geburtsmythus noch deutlich erkennbare physische
Charakter des Gottes ist nun späterhin stark zurück-
gedrängt und verblasst. Vahagn erscheint als Iagd—
und Siegesgott», բարգմանած Կ. Ստեփան Լորա ք և դ ա-
բ ա յ ս (?) բնաւորութիւնը, որ ա ռ դ Կ և պայծառ կեր-
պով կը ճանչցուի ծննդեան առասպելին մէջ, աւելի ուշ
ժամանակ քոչարոն վիճ յայտնի կը շինի: Վահագն
կը ներկայանայ յիւրաւի որսի եւ յաղթութեան դիմ:
(Կր. 25). Նոյնպէս եւ հետեւեալ կտորը. «Diese Genea-
logie ist natürlich wertlos, um so wichtiger das be-
kannte kleine Fragment eines auf Vahagn bezüglichen
Liedes», որ նշանակում Կ. Ուրսան աչս ազգաբանու-
թիւնը արժեք չունի հարկաւ, այնքան աւելի կարեւոր Կ
(կշիռ ունի) Վահագնին վերաբերեալ երգի յայտնի փոքրիկ
հատուածը: Վեճեցի բարգմանիչը տրամագծօրէն հակառակ
Կ դրեց, բարգմանելով, «Բնականաբար արժեք չունի այդ
ազգաբանութիւնը, ինչպէս նաեւ Վահագնի մասին
աւանդուած երգին այն ծանօթ պատարիկը» (Կր. 32).
Ինչու Կ գայիս, որ երգն եւս արժեք չունի, միևնդեռ հե-
ղինակը մեծ արժեք Կ տալիս անր:

Վահագնի մասին առասպելի իսկութիւնը հասկանալու և անոր ոչ-շինծու լինելն իմանալու համար:

Վահագն արեգակ: — Առասպելաբանութեան մասին քիչ ու շատ ծանօթութիւն ունեցող ամեն ոք իսկոյն կընկատէ, որ արեգակնանման աչքերով, հրամազ ու բոցաճօրուս պատանեակ աստուածը, երկնքի և երկրի, ծիրանի ծովի և մի բոյսի — եղեգնի որդին, բնութեան մի երեոյթի անձնաւորում պիտի լինի: Եւ այդ նկարագիրը բաւական յարմարում էլ է արեգակին: Ուստի և հ. Ալիշան (Հին Հաւատք, եր. 86) Վահագնի այդ նկարագիրն արեգակին է վերագրում: Վահագնի այս մերձեցումն արեգակին նոր չէ. Փիլոն Երրայեցու Վասն տաօընքանեան օրինաց, գրուածքի մէջ արդէն կայ. «Բանզի կոչեն ամանք... գհուր Հեփեստոսն և արեգական (վարիանտ՝ արեգակն) զՎահագնն»: ¹ Այսպէս և աւելի ուշ դարերի գործ «Տօ-

1. Փիլոնի բարգանուրիւնը մեռի օսկ լուսննալով՝ օշունձ եմք պ. Խաչարեանի «Վեպից», եր. 202, ծան. 5. և Բ. Մաս, «Նիւրեր», եր. 51: Նոյն հասուածք քերած է և Հայկ. լիգ. Նոր բառգրքի մէջ Վահագն բառի օսկ. «Արեգական զՎահագն (Յուն. զԱպոլոն), և լուսնի՛ն զԱրեւնիս (այսինքն զԱնահիտ), և Արուսեակ զԱստղիկ (այսինքն զԱփրոդիտ)»:

նական մատեանի» մէջ յիշուած է. «Մմանք զարեգակն պաշտեցին, և Վահագն կոչեցին. և այլք զլուսին, և Արտեմիս ձայնեցին»: Բայց այս երկու կտորը որոնցից Փիլոնի մէջ յիշուածը նշանակութիւն ունի, քանի որ այդ թարգմանութիւնը հին է համարում, դեռ բաւական չեն կարծելու, որ Վահագն Արեգակի կամ Ապոլոնի հետ նոյն է եղել: Այդ հատուածները միայն այն են ցոյց տալիս, որ բնօրինակ թարգմանիչը կամ յօդիսողը Վահագնին Ապոլոնին են մօտեցրել, մինչդեռ ուրիշները և աւելի շատերը, որոնց թւում և Խորենացին» յայտնի է, Վահագնին հուսատարում են Հերակլէսին: Այս երկուութիւնն սնշուշտ այն պատճառով է, որ մեր աստուածներից ոչ մէկն էլ կատարելապէս համապատասխան չէր կարող լինել յունաց այս կամ այն աստուծուն, այլ որոշ զօծերով կարող էր պստ միանգամայն և այն աստուծուն մօտենալ աւելի կամ պակաս չափով:

Մենք Վահագնին սկզբնապէս արեգակի աստուած չենք համարում, այլ բնութեան մի ուրիշ երևոյթի յատկապէս ամպրոպի անձնա-

1 Տես նոր բառք. Հայկ. լեզ. Վահագն: Հ. Ալիշան (Հին Հաւաստ կր. 86) մէջ է բերել նոյն հասրւածը, միայն Վահակն ընթերցուածով:

ւորում: Մակայն նախ քան մեր կարծիքը բացատրելը, աւելորդ չի լինիլ տեսնել այ. Պալաթեանի կարծիքը Վահագնի վրայ եղած երգի մասին. և կընեն ընթերցողները, եթէ մի փոքր երկար պիտի կտնգ առնենք այդ մասին: Հարկաւոր է մի տեղամ ծանօթանալ այ. Պալաթեանի համեմատելու եղանակին, որ նա յաճախ գործ է գնում իւր գրքի մէջ:

Մի նմուշ այ. Պալաթեանի «Նետազօտութիւնից».— Պ. Պալաթեանն ևս Վահագնին արեգակ և նորա երգն արեգակի ծագման նկարագիր է համարում: Բայց, դժբախտաբար՝ ինչպէս շատ դէպքում, այստեղ էլ տարտամութեան մէջ է մնում: Սա գրում է. «Արգարե, այս հատուածը, թէպէտ և ոչ ամբողջապէս, Պորենացու աշխատութեան մէջ գուցէ, միակ պահպանուած օրինակն է ուշ ժամանակի երգի, որ փոխաբերական արտայայտութիւններով, հաւանօրէն, պատկերացնում էր արեգակի ծագումը»: Մի ուրիշ տեղ (եր. 205) այդ «ոչ ամբողջապէս բառը պարզում է փակագծերի մէջ. «Պորենացու դարում, գուցէ, կար էլ ժողովրդի մէջ որեւէ քնարական ոտանաւոր, որ ըովանդակում էր արեգակի ծագման նկարագիրը, բայց այդ

երգն այն ձևով, որ ունի մեր պատմագրի մէջ, (քացի, գուցէ, առաջին շորս տողից)՝ վստահելի չէ (возбуждаеть недобрие): Եւ տրամադիր եմ անոր մէջ տեսնելու արուեստորէն (искусственно) դէսից - դէնից քաղած մոտիւններ, որոնք ուշ ժամանակի երգի ձևով յերկրուած են, սակայն ոչ միշտ յաջող. իսկ այդ մոտիւնները, ինչպէս ուրիշ դէպքերում վերցրած են զրաւոր աղբիւրներից, յատկապէս Աստուածաշնչից և Անտինիա Երրկացուց, որոնցից քաղելով՝ երգը սարքել է Խորենացին: Այնուհետև պ. Խալաթեանը գրում է (եր. 208). «Այդ երգն արուեստական է կամ գոնէ, հայ պատմագրի կողմից մշակութիւն (переработка) է կրել,» այսինքն, ժողովրդական երգն եղել է բայց Խորենացին փոփոխել է: Եւ այսքանը կարծես բաւական չէ, պ. Խալաթեանը (եր. 203.) գրում է նաև. «Եւ ենթադրում եմ որ այս «երգը» լաւագոյն դէպքում կարող է եղած լինել մի քնարական ոտանաւոր, սակայն առանց առնչութիւն ունենալու վահագնի հետ»:

Զանի՛ տեսակ բան է ասում պ. Խալաթեանը: 1. Եթէ երգն արուեստական է և Խորենացին է սարքել Աստուածաշնչի և Երրկացու մոտիւնների վրայ, բայց այն ժամանակ

էլ ի՞նչպէս կարող է դա միակ օրինակը լինել ժողովրդական երգի: 2. Եթէ Խորենացին սարքել է միայն երգի երկրորդ մասը՝ իսկ սկզբի երեք (ըստ պ. Խալաթեանի չորս) տողը՝ «երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն» ժողովրդական են, բայց այն ժամանակ էլ ի՞նչ իմաստ ունի խօսել արեգակի ծագման մասին և ասել թէ գուցէ կար էլ մի ժողովրդական երգ արեգակի ծագումը նկարագրող: 2^է որ սկզբի տողերն առանձին վերցրած, առանց երկրորդ մասի, կարելի չէ իբրև արեգակի ծագում մեկնել: Մեր խելքից գտնէ բարձր է այդ և պ. Խալաթեանը չէ ասում մեզ, թէ ի՞նչպէս կարող է ինքը մեկնել: 3. Ի՞նչպէս կարող է միևնոյն արուեստական երգը, որ շինած է Աստուածաշնչի և Շիրակացու մոտիւներով, լինել միանգամայն և զրական մշակութիւն կրած մի ժողովրդական երգ: 4. Կարող է մի արուեստական երգ, որի ինչ մոտիւներով սարքուած լինելը ցոյց է տալի պ. Խալաթեանը, լինել միանգամայն և ժողովրդական երգ, թէպէտ և ոչ Վահագնի վրայ:

Ահա թէ ինչ է նշանակում «գուցէններով» և «ես ենթադրում եմ — ներով» խօսելու և քանի՞ տեսակ իրար հակասող բան կարե-

լի չէ միենոյն երգի մասին ասել: Բայց ինչ արժէք ունին այդպիսի անհիմն «գուցէները»: Այդ «գուցէները» քիչ ու շատ արժէք ունի միայն նոյն «գուցէն», թէ Խորենացին, «բայցի գուցէ առաջին երեք տողից», սարքել է այդ երգն Աստուածաշնչի և Եիրանկացու մտաբաների վրայ: Այստեղ գոնէ աշխատում է պ. Խաղաթեանը հիմնել իւր կարծիքը: Տեսնենք նորա հիմունքը:

Չունենալով ձեռի տակ բաւարար նիւթ շինծու հայ թագաւորի (Վահագնի) պատմութեան համար, բայց ցանկանալով աստուած-հերոսի փայլով ներկայացնել նորան, հայ պատմագիրը մի ինչ որ երգ շինել է ուղղում նորա վրայ: Որովհետեւ նա Փիլոնի թարգմանութիւնից գիտէր, — այդպէս է ցանկանում պ. Խաղաթեանը, որ Խորենացին անպաաճառ իմանար Փիլոնի թարգմանութիւնից, — որ «Վահագն արեգակի հետնոյն է» այսինքն հաւասար է Ապոլոնին, ուստի նա ուղղում է Վահագնի վրայ այնպիսի երգ շինել, որ արեգակի ծագման նկարագիր լինի: — Բայց հաւատարմ գիտնենք, որ Խորենացին Աստուածաշնչից, գուցէ և ուրիշ մեղերից, գիտէ, որ Վահագն նոյն է Հերակլի հետ, և ինքը Խորենացին էլ երկու տեղ իւր պատմութեան մէջ (Բ. ժր. ժղ.) Վահագնին Հերակլի հետ է նոյնացնում: —

Այդ նշանակութիւն չունի նորա քէՖն ուզում է, որ Վահագն այստեղ Հերակլից հեռանայ և Ապոլոնին մօտենալով արեգակ դառնայ:— Բայց հենց իր «շինած» երգի բովանդակութիւնը մէջ բերելիս էլ Խորենացին Վահագնին Հերակլի հետ է համեմատում և ասում. «և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին»:— Այդ էլ նշանակութիւն չունի. Խորենացին պէտք է այստեղ Վահագնին իբրև արեգակ մտածած լինի, որովհետև Փիլոնի թարգմանութիւնը չէր կարող անյայտ լինել նորան:— Բայց ակօր Խորենացին այդ առասպելը ներհակի պէս չէ մեկնում և ոչ մի ակնարկ չէ անում, թէ այդ երգի մէջ արեգակի ծագման նկարագիրն է:— Այդ էլ նշանակութիւն չունի. Բաւական է, որ մենք այդ երգի մէջ արեգակի ծագման նկարագիր ենք տեսնում: Ուրեմն պարզ է, որ Խորենացու համար էլ Վահագն արեգակ է, որ երգն արեգակի ծագումն է ցոյց տալիս և Խորենացու շինածն է: Եւ ահա թէ ինչպէս.

Մի բարի օր, երբ Վահագնի վրայ երդ շինել է ուզում, կարգում է Փիլոնի մէջ Վահագն արեգակի հետ նոյնացած և Ապոլոնի տեղ դրուած: Ի՞նչպիսի պատկեր տամ իմ արեգակն-Վահագնին, մտածում է այդ ժամանակ

պամամագիրը և շիւարած մնում թէպէտեւ նա քաջ ծանօթ լինելով յունական առասպելներին՝ գիտէր, որ արեգակն-Ապոլոնը (= արեգակըն-Վահագն) ներկայանում է իբրև ոսկեգիսակ գեղեցիկ պատանի: Բայց յունական առասպելները չեն օգնում նորան, և նա այդբարի ժամին յիշում է, որ Անանիա Շիրակացու մի գրուածքի մէջ կարդացել է. «Արեգակն... պատանի անմօրուս, ոսկեգիսակ» որի բերանից «ոյս ելանէ» սուտիկ: Եւ ասաւրդէն պատրաստ է Պորենացու համար արեգակն-Վահագնի պատկերը՝ պատանի: Բայց Պորենացին «ճարպիկ» է, որպէս զի չբռնուի իւր գողութեան մէջ, նա Շիրակացու պատանին դարձունւմ է պատանեակ: Եւ ասա այս պատանեակ բառը յիշեցնում է նորան Աստուածաշնչի մի կտորը. «Եւ էր (Դաւիթ) պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ» (Ա. թագ. օէ. 42): Այստեղից էլ վերջնում է խարտեաշ բառը և՛ որպէս զի այս գողութեան մէջ էլ չբռնուի «խարտեաշ» բառն առաջ է դնում և պատանեակ բառը դարձնում է պատանեկիկ ու գրում «խարտեաշ պատանեկիկ»: Ուրեմն երկու բառը գտանք որտեղից է վերցրած. — մէկն Աստուածաշնչից, միւսը Շիրակացուց. և գտանք այնքան բաբեխղճօրէն, որ «մի վարիանտի» մէջ եղած

«խարտեաչ» բառն էլ շնորհապատիւք: Պարզ է, ուրեմն, որ պատասանեկիկը՝ Շիրակացուց է, իսկ «խարտեաչն» Աստուածաշնչից:

Ապա «Շիրակացու մէջ նոյն տեղումն նոյն ճառի մէջ, նոյն երեսին» կարդացել է Յորի գրքից մի կտոր. «Ձիւնչ վայրք իցեն, ուր ծածկեմ ես զարեգակն ի գիշերին»: ¹ Եւ կարծում էք թէ Խորենացին իւր արեգակն-Վահագնի համար այս կտորից էլ օգտուել է: Ո՛հ, ո՛չ: Այդ կտորը ծառայել է նորան միայն Յորի գիրքը յիշեցնելու: Իսկ մի անգամ որ Յորի գիրքը միան է ընկել, նա յիշել է, որ այդ գրքի վերջին գլուխների մէջ գազանք և վիշապ անուան տակ նկարագրուած են երկու սոսկալի գազան՝ ճիագետին (բեհեմոթ) և նորա ընկեր, կոկորդիլոսը (լեխաթան), որոնցից վերջինի նկարագիրը պ. Խալսթեանն իւր Աստուածաշնչի հմտութեամբ համարում է «Հին Կտակարանի սատանայի ահեղ և մեծա-վայելուչ պատկերը» (грозное и величавое изображение): (Ողորմելի՛ սատանայ, որ կոկորդիլոս էլ դարձար): Եւ մտածել է Խորենացին. եկ ես այս սոսկալի վիշապ-կոկորդիլոսի

1. Շիրակացու քերած այդ կտորը հայերէն քաղ-մանորքան մէջ այսպէս է. «Ձիւնչ երկիր իցե յորում շոյս և ագակիցի»: Եւ զիւնչ օղի խաւարի. (Յոր. լր. 19):

(Աւիպեանի) նկարագրից էլ օգտուեմ իմ
«խարտեաշ պատանեկիկի» համար: Չէ որ
այնտեղ (Յոր. խա. 9) վիշտայի համար ասած
է. «Աչք նորա իբրև զգետիլ արուսեկի» ու
դեմն իմ պատանեկիկն էլ աչք պիտի ունե-
նայ: Բայց ինչպիսի աչք: Այդ ժամանակ
Խորենացին իսկոյն յիշոգմ է որ Յայտնու-
թեան գրքի ժԹ. գլխի վէջ նոյնպէս կարդա-
ցեք է «աչք բար» «Եւ աչք նորա (Բանին
Ասատւոյ) ըոց հրոյ»: Եւ շոյութեանկել է մտա-
ծել Խորենացին. ինչպիսի աչք. որով իմ
պատանեկիկին: Թէ ըոց ասին թէ արուսե-
կի) իսկոյն կիմացուի գողութիւնս: Հապա
ինչպիսի աչք. չէ որ աչքը պէտք է լինի
անպատճառ, որովհետեւ այն հրեշ վիշտայ-
լեխութան - կոկորդիլոսը — ըստ պ. Խալա-
թեանի սասանան — աչք ունին Եւ ահա չգի-
տենք ինչպէս — երկի աչքը յիշեցնում է
երեսը — օգնութեան է հասնում: Յայտն. գրքի
ժի ուրիշ ժ. գլուխը ուր ասած է. «Երեսը
նորա (Հրեշտակին) իբրև զարեգակն»: Այս
չաւ եղաւ, ասել է Խորենացին. «Եկ ես Յորի
գրքից և Յայտն. գրքի ժԹ. գլխից աչքը
վերցնեմ, իսկ Յայտն. գրքի ժ. գլխից արե-
գակը, և «գիտմամբ հեռանամ իմ արգիւրից»
որպէսցի աչքի չընկնի թէ ես վերցրել եմ»
աչքը Յորի գրքից և արեգակը Յայտն. գրքից:

Եւ որպէս զի գորով ինչս աննկ ինչ քանու ինչ
 շատեմ. զսոցք ի նորա իջրն զարեգակնս ալ
 աչքն աշխունք շինեմ. արեգակն էլ արեգա-
 կունք է ասեմ. «Անուշկունքն հին արգան-
 կունքն» Ո՛հ, այժմ շատ լու է սչ որ կա-
 րող չէ իննմար իմ իսորգով թիւնը — Դեղձ
 Խորենացի, զի մտածել որ բանի զար յե-
 աոյ պ. Խալսթեանը պիտի իմանար որ աշ-
 կունքն պիտի լինի այք և վիշապ կոկոր-
 դիտն. ոչքն է իսկ արեգակունքը պիտի լի-
 նի արեգակն և Յայանու թեան Տրեշապի
 երեսի արեգակն է:

Այնուհետեւ Յորի գրգի մէջ կարգացել
 է Խորենացին. «Այն բնորոնս նորա ծախս և
 լանէ հնոցի հոց. կայծականց. Անն նորա
 կայծակունք և ըող ի բերանոյ նորա և լանէ»
 Եւ այդ բաւական չէ. Յայանու թեան Թ. գըլ-
 խի մէջ է և «Ելանէր ձուխի զրոյ» և ապա «Ե-
 ի բերանոյ նոցա (ծիոց) հուր և լանէր և ձուխս
 Եւ մտածել է Խորենացին այս կողմների մէջ
 վիշապ - կոկորդիլոս - լեխաթ անի» ըստ պ. Խա-
 լսթեանի ստատիք քթից ծուխ է դուրս գա-
 լի. ծուխ է դուրս գալիս և մի գործից ու ձիւ-
 ըի բերանից. Այլեւս իմ արեգակն ձագման
 նկարագրի մէջ էլ ծուխ դուրս գալը մտցնեմ
 Բայց այս երկու տեղից միայն «ծուխ ելանէր»
 բառերը վերջնեմ իսկ ստորնի թիւն ծիւրի

ընդանի և այն գուրի տեղ գնեմ: Մի անմիտ
բան, ընդ եղեգան փող, որ խփի չիմացուի,
թէ «Ժուխ ելանէր» բառերն այստեղից եմ վեր-
ցրել: Բայց «տատանի» համար առած է նաև,
թէ «բերանից ըոց է դուրս գալի»: Այդ ըոցն
էլ պէտք է վերցնել արեգակի ծագման նկարա-
գրի մէջ: Բոցը ես որտեղից հանեմ, որտեղից
չհանեմ, մտածել է Խորենացին: Եւ ահա նա
այնքան անշնորհք է գտնուում, որ էլ ուրիշ
բան չէ գտնում, որտեղից բոցը հանել կարո-
ղանար, և բոցն էլ «ընդ ելեգան փողն» է
հանում:

Այս են հիմունքները, որ բերում է պ.
Խալաթեանը¹, և այս են զրքերից վերցրած
մտքները: Եւ այս «հետազօտութիւնից»
յետոյ պ. Խալաթեանը շտապում է աւելա-
ցնել. «Այսպիսով Շիրակացու ոսկէզիսակ ան-
մօրուս պատանին Խորենացու մէջ դառնում
է մի պատաննկիկ, որ հուր հեր ունի» ըոց
ունի մօրուս: Բայց թէ այդ կերպարանափո-
խութիւնն ինչպէս է կատարւում, և ինչպէս
«անմօրուս» բառը «բոց ունէր մօրուս» է
դառնում «ոսկէզիսակը» դառնում է «նա
հուր հեր ունէր», և թէ Խորենացին որտեղից
է վերցրել «ելեգան փողը», «Եւ ի ըոցոյն...

¹ Արմ. Յոսոբ I. եր. 206 հս. II. եր. 51.

վազէր» բառերը, — մեզ այդ չէ ասում պ. Մալաթեանը:

Ոսկ առաջին երեք տողը: Ո՛հ, այդ տողերը «դուցէ ժողովրդական երգից» են, որոնք մենակ էլ վերցրած, թէպէտ և անհասկանալի կերպով, բայց գուցէ արեգակի ծագումն են նկարագրում: Եւ կարծում էք, որ եթէ պ. Մալաթեանն իւր ամբողջ գրքի մէջ այսքան մեղմ սրտով է վերաբերում այդ երեք տողին, նա համոզուած է, որ այդ երեք տողը ժողովրդական են: «Դուցէ»: Մենք մեր կողմից գտնէ հաւատացած ենք, որ եթէ այդ երեք տողին խնայում է, անոր համար է միայն, որ ուրիշ գրքերի մէջ, երեխ, անոնց նմանը չէ գտնում: Բայց պէտք չէր վհատիլ. «հետազօտութիւնը» կատարեալ անելու համար պէտք էր միայն որոնել, և այդ երեք տողն էլ, և մնացած բոլոր բառերն էլ դուրս կը գային: Եւ պ. Մալաթեանը թոյլ կը տայ մեզ, որ մենք շարունակենք նորա մեկնողով քննել:

Պ. Մ. առն արդէն նկատել է, որ «պ. Մալաթեանի մէջ բերած Յորի տողերից մէկը (խա. 12) երրայական թնայրից բառացի կարելի է այնպէս թարգմանել, որ աւելի մօտ լինի Մորենացու ընդ եղեգական փող ծուխ ելանէր խօսքին, այնպէս որ «ծուխ ելանէր» բա-

ուերի կողքին լինի և «եղեգն»¹։ Ըհ, Խորե-
նացին, երրայերէնից չէր կարող օգտուել,
կասէ գուցէ պ. Խաչաթեանը։ Բայց «դրա-
դեզն էլ կայ»։ Արի՞թէ նայն Եօրի գրքի մէջ
նոյն երեսին, նոյն դասանի ընկերի համար
չէ ասած, «ընդ ազգի՝ ազգի՝ ծառովք ննջէ,
առ պրտուով և եղեգամբ»։ — «Ի բոցոյն... վա-
զէր» բառն էք ուզում։ Բայց արէք Աւարե-
լոց Գործք ԺԴ՝ 13. և կրգտնէք «Վազեցին»
յամբոխէնը։ Ուրեմն «վազէր» բառն էլ այս-
տեղից է վերցրած, և «յամբոխէն»՝ բառի-
տեղ «դիւմամբ» դրած է «ի բոցոյն»։ Առաջին
երեք տողից էք ուզում։ Ծայրի ԿԶ. 8. կր-
գտնէք «երկնեաց երկիր» խօսքը։ Ուրեմն մեր
պատմագիրը «երկնէր երկիրն» էլ այստեղից
է վերցրած։ Մնացին երկին ու ծովը։ Դեհ,
երկինք ու երկիր ու ծով միշտ իրար հետ կա-
պուած են, ինչպէս և հենց նոյն Ծայրի մարգ-
սկգրում։ «Լուր, երկին, և ունին դիր, երկիր» և
կամ Եայանի ԺԳ. 1. «երկնի և երկրի և ծո-
վու»։ Որ երկիրը երկնոււմ է, երկինքն ու ծովն
էլ հետը պիտի լինին։ Այդ է պահանջոււմ մտքի-
զուգորդութիւնը (ассоциация), որին այսօր
մեծ տեղ է ապրիս պ. Խաչաթեանը իւր հե-
տազօտութեան մէջ Խորենացու հոգին վեր-

լուծելիս: Թէ այդ էլ չէ բաւական և ծոփն ան-
կախ էք ուզումս այդ էլ դժուար չէ: Յորի
գրքի նոյն գլխի մէջ, նոյն երեսին, նոյն վի-
շապ-կոկորդիլոսի—բստ պ Սալաթեանի սա-
տանայի—համար միթէ չէ՞ ասած թէ ծովի
մէջ է լինում և «Ամենայն ոսկի ծովու ընդ
նովաւ իբրև զկաւ ամբաւ: Եւ աջուցանէ զան-
դունդս [ծովու.] իբրև զկատսայ, համարի զծով
իբրև զոչինչ» (Յոր. ՄԱ. 21-22): Ծոփն էլ այս-
տեղից է, ուրեմն: Թէ չէք հաւանում Յայտ-
նութեան գրքից էլ կը հանենք այդ ծովը. մի՞թէ
նոյն Յայտն. գրքի նոյն Ժ. գլխի մէջ, որից
հրեշտակի երեսի արեգակը վերցրել է Մորե-
նացին, բստ պ. Սալաթեանի, և Վահագնի
աչքի համար դրել, մի համար յետոյ (Ժ. 3)
նոյն հրեշտակի համար չէ ասած. «Ծոփ զտան
իւր ան ի վերայ ծովու»: Ծովի ծիրանի
ածականն էք ուզումս Դէ՛ որ մի անգամ
Աստուածաշնչից «ծով» բառը գողանում է
մարդ, այն ո՞վ է, որ «կարմիր ծովը» չի շէշէ:
Բայց խօ՞ Մորենացին գիժ չէր, որ «կարմիր
ծով» գրէր, իսկոյն կիմացուէր, որ ս. Գրքից է.
ուստի «կարմիր» բառն այստեղից վերցրել
դրել է ծովի մէջ եղած եղեգնի վրայ, իսկ
ծովի համար ուրիշ ածական է որոնել: Եւ
չատ հեշտութեամբ գտել է «ծիրանի» բառը,
մանաւանդ որ Աստուածաշնչի մէջ կարմիր

հետ այնքան յաճախ «ծիրանի» է յիշուում (օրինակ՝ Եւք. իր. 5. 8. Լա. 5. Լե. 35. Լթ. 3. 5. 8. 22. և ըն.)։ Ը՛հ, մնացին «հերոս» «երկն», «ունէր», «էին» բառերը։ Վախենում էք՝ որ այդ բառերը չգանենք Աստուածաշնչի մէջ։

Բայց այդպիսով, այդ եղանակով վարուելով, ո՞ր երգի այս կամ այն կտորը կարելի չէ Աստուածաշնչից և մի քանի ուրիշ գրքերից հանել։ Սակայն ի՞նչ արժէք ունին այն համեմատութիւնները, որոնց մէջ հետազօտողը ըովանդակութեան, իմաստի վրայ ուշադրութիւն չէ դարձրած, և միայն ըստեր է վերցրած։ Հայերէն բառերը խօ՛սաւորանի մէջ էլ կան։ Նախ քան համեմատելը պ. Խալաթեանը պէտք է ցոյց տար թէ ի՞նչ իմաստի կապ ու նմանութիւն կարող էր լինել, իւր կարծած, «արեգակի ծագման» և ս. Գրքի վիշապ-կոկորդիլոսի նկարագիրների մէջ։ Թէ արդեօք վիշապ-կոկորդիլոս-լեխաթանը որեւէ առնչութիւն ունի՞ արեգակի ծագման հետ և կարող է այդ հրէշ գազանը, որի փորը պղնձի վահաններ են, յօդերը գայլախազ վէմեր և ըն, իւր արտաքինով գոնէ որևէ նմանութիւն ունենալ «խարտեաշ պատանեկիկի» հետ, որին համարում է «արեգակի անձնաւորում», իսկ եթէ այդ գազան լեխաթանը

որէ է առնչութիւն անգամ չունի արեգակի հետ, և նորա արտաքինի նկարագիրը ոչնչով նման չէ «արեգակի ծագմանը», կամ Վահագնի նկարագրին, ինչ արժէք ունի ասել թէ նորա նկարագրի մէջ ևս յիշուում են «աչք», «ծուխ և բոց ելանէ» բառերը: Միթէ մե՞ծ զարմանք է, որ աշխարհի վրայ «ծուխ ու բոց» են յիշուում, և կամ աշխարհի վրայ «ծուխ ու բոց ելնում են»: Եւ մի՞թէ «ծուխ ելանէ», կամ «բոց ելանէ» խօսքն այնքան ընտրոշ մի ո՞՞՞ է եւ առանձնապէս Աստուածաշնչին միայն յատուկ, որ եթէ մի տեղ «ծուխ ու բոց ելանէ» գտնենք, կարողանանք ասել թէ Աստուածաշնչից է վերցրած: Այն ո՞ր աշխարհում է, որ ամեն լժոնրից ծուխ ու բոց չէ ելնում: Եւ կամ երբ մեր ժողովրդական երգերի մէջ այսօր ծուխ ու բոց բառերի հետ «ելանել» բայն է գործ ածւում. «Սասման կեղնէր բարակ ծուխ», «ըոցեր կեղնն»...: միթէ պիտի ասե՞նք, որ Աստուածաշնչից է վերցրած: Եւ կամ աչքը միայն հրէից բանաստեղծութեան մէջ պիտի մտնէր և միայն վիշապ-լեխաթանն աչք պիտի ունենար, որ երբ հայոց բանաստեղծութեան մէջ մի պատանեկիկ աչկունք ունի, կարողանանք ասել, թէ հայերն Աստուածաշնչից են վերցրել, և թէ այդ աչկունքը լեխաթանի աչքն է կամ Բանին Աստուծոյ: Այդպէս և

արեգակը: Չէ՞ որ այս է ասում պ. Մալաթեանը: Չէ՞ որ նորա համեմատութիւնները զուտ քառական են եւ նոյն իսկ արտայայտութեան ձեւեր չեն, թէպէտ և նա «մոտիւններ» է կոչում: Բայց նման «մոտիւններ» լինելու համար չէ՞ որ հայոց երգի մէջ ևս ինչպէս ս. Գրքի մէջ է, աչքի հետ ըոց պիտի լինէր, և ոչ արեգակն արեգակը երեսի հետ պիտի լինէր, և ոչ աչքի ծուխն ու ըոցն էլ պատանու քթից ու ընրանից պիտի ելնէր և ոչ թէ «ընդ եղեգան փող»: Գոնէ այդպիսի արտայայտութեան նմանութիւններ լինէին պ. Մալաթեանի մէջ բերածները: Այդ ժամանակ գոնէ կասէինք, որ թէպէտև իմաստով իրարուց շատ հեռի, բայց արտայայտութեան մի քանի եղանակով իրար նման են, մի կողմից լեխաթանի ու Բանին Աստուծոյ և միւս կողմից «արեգակի ծագման» կամ Վահագնի նկարագիրները:

Բայց նոյն իսկ եթէ այդպիսի արտայայտութեան նմանութիւններ լինէին, օրինակ, հայոց երգի մէջ էլ լինէր «պատանու քթից ծուխ» ու բերնից բոց կամ կրակ է դուրս գալի», կամ «պատանու երեսքն էին արեգակունք», կամ «պատանու աչքն էին բոց հրոյ», կամ «պատանու աչքն էր արուսեակի նման» — մի՞թէ նոյն իսկ այդպիսի նման արտայայ-

տութիւններն, ասում ենք, որևէ բան կարող էին ապացուցանել, թէ հայոց երգի հեղինակ. Յորի ու Յայտնութեան գրքերից է վերցրած այդ արտայայտութիւնները: Մ'ի՞թէ անսովոր բան է զանազան ազգերի բանաստեղծութեան մէջ՝ հրէշների, վիշապների քթից ու բերանից ծուխ ու բոց դուրս գալը (Հմմտ. հայերէն դարձուածը «քթիցը ծուխ դուրս գալ, ելնել»), կամ երեսն արեգակի, լուսնի, արուսեակի հետ համեմատելը, կամ աչքը կրակի, բոցի, և որևէ աստղի հետ: Համեցէք օրինակներ մեր ժողովրդական բանաստեղծութիւնից.

«Լուսու սւսդ (արուսեակ) ես աւաւտուն»...

Սուրաթդ (շէմքդ, երեսդ) արեգակ կը նմանի,

Պատկերդ արեգական նման տեսայ ես» 1

«Էն ինչ ճօշն էր՝ արեգական նման,

Ինչ կէսօր կամար կըկապի.

Էն ինչ միջնէկն էր՝ լուսնին նման,

Որ տանխնդին կըբարբի.

Էն ինչ պտակն էր՝ Լուսաստղի նման,

Որ աւաւտման կեանքին կը ծաղկի» 2.

«Փոյնդ կըտայ արեգական,

Վարմիր երես արուն կաթան» 3

«Երեսդ ք արեւի պես,

1. Նուասարդեան. Հեփաքներ. 2. 81.

2. Շերենց, Վանայ սագ, եր. 52.

3. Սեդրակեան, Քնար Մշեց. եւ Վան. եր. 22.

Փերչէմդ (հերդ) սումա (ոսկի) թել նման»։¹

«Արեւ նման շողշող կուտաս»։

Յարժամ սիրով գալերդ ւածես»։²

Ահա՛ ձեզ ժողովրդական կամ ժողովրդականի հետեոյութեամբ գրուած բանաստեղծութեանց մէջ երեսն արեգակի՝ լուսնի՝ արուսնակի նման՝ դէս ու դէն ածող ւաչքերն արեգակի նման շողշողուն։ Մի՞թէ Յորի և կամ Յայտնութեան գրքից են վերցրած այդ նմանութիւնները։ Բերե՞նք օրինակներ և աչքերի բոցեղէն կամ հրաշեայ լինելու մասին և քի՛մ ու բերանից ծուխ ու բոց դուրս գալու համար՝ թէ մեր և թէ ուրիշ ազգերի գրականութիւնից։— Բայց աւելորդ է այդ աշխատանքը, քանի որ պ. Խալաթեանի «մտօրէններ» ասածն այսպիսի արտայայտութեան եղանակներ անգամ չեն, այլ լոկ բառական նմանութիւններ, այսինքն «աչք» «ծուխ ելանել» «արեգակն» հատ հատ վերցրած։

Այդ են պ. Խալաթեանի բոլոր հիմունքները։ Ո՛չ նա խօսում է և հայոց երգի չափի մասին, որի համար յետոյ այլ և երգի շինովի լինելուն ապացոյց է համարում և երգի վերջին տողը. «Ինձ թւում է» որ

1. Ճանիկեան, Հնուրիւնք Ակնայ, եր. 445.

2. Թլիւրակի 4. Կոստանեանի հրատ. եր, 29.

երգի այսպիսի վերջը (заключеніе) կարծես խանգարում է նոյն իսկ երգի արեգական ծագման գաղափարը. դուրս է գալի, որ հրաշալի պատանին, որ արեգակի ածնաւորումն է, նոյն իսկ արեգակը, դեռ ունի աչքեր, ինչպէս (словно) երկու արեգակ: Այս անհետեթուութիւնը (несообразность), իմ կարծիքով, նոյնպէս ցոյց է տալի, որ այդ երգն արուեստական է կամ, գոնէ հայ պատմագրի կողմից գրական մշակութիւն է կրած»: ¹

Ինչի մէջ է «անհետեթուութիւնը». անոր մէջ, որ արեգական անձնաւորումն աստուածն արեգականաման աչքեր ունի: Բայց եթէ պ. Թալաթեանը թերթէր մի երկու արեգակն-աստուածների արտաքինի նկարագիրը, կրտսնէր, որ հենց այդ արեգական անձնաւորումն աստուածներն ունին արեգականաման աչքեր. «Ամեն փայլուն, շողշողուն աստուած, որ արեգակն իրրև աչք ունի, կարող է լինել միայն երկինք-աստուած, կամ արեգակն-աստուած, լինի Զևս, Վարունա, Ինդրա, թէ Օդհին»: ² Այսպէս և Միթրան, լուսոյ և արեգական աստուած, միանգամայն և արե-

1. Арм. Эпосъ ևր, 208.

2. Darmesteter, G. Ormazd et Ahriman, Paris, 1877, ևր 33.

գակն) ոչ միայն արեգակնանման բոցեղէն աչքերու ունի, այլ հենց արեգակը նորա աչքն է:

Բայց գուցէ պ. Խալաթեանը այդ «անհեթեթութիւնը» սեանում է երկու արեգակ ձեռի մէջ. սակայն չէ՞ որ երկու բառն իրեն պ. Խալաթեանի աւելացրածն է: Իսկ յոգնակի թիւը, կըհարցնէ պ. Խալաթեանը: Շատ բարի, բայց ո՞վ սասց, որ այդ երգի մէջ «նոյն իսկ արեգակի» նիւթական արեգակի ծագումն է: Այդ գէպքում խօսք չունինք, անհեթեթութիւն է ասել. «Արեգակի աչքերն էին արեգակներ»: Բայց երգի մէջ խօսնիւթական արեգակի մասին չէ խօսքը, այլ մի պատանի աստուծու, այսինքն մարդակերպ աստուծու մասին, որ անպատճառ պէտք չէ, որ «քեալլագեօզ» լինի և միականի: Միթէ «քեալլագեօզ» և միականի է արեգական աստուած գեղեցիկ պատանի Ապոլոնը: Երբ միանգամ աստուածը մարդակերպ է, անշուշտ մարդու պէս էլ աչքերու աչկունք պիտի ունենայ: Իսկ երբ աչկունքն արեգական հետ են համեմատուում միթէ, պ. Խալաթեանը չգիտէ, որ հայոց լեզուի քերականութիւնը պահանջում է, որ էական բայով ստորոգեալը թուով համաձայն լինի իւր ենթականյին և ասուի «աչկունքն էին արեգակունք», քանի որ իմաստն այն չէ, թէ արեգակն է

այդ պատանու աչքերը, այլ աչքերն արեգակ-
նանման էին: Անշուշտ, այս վերջին իմաստով
կարող էր ասուել նաև «աչկունքն էին արե-
գակն»: բայց չմոռանանք, որ սա երգ է, և եր-
գիչը մեզնից ու ձեզնից աւելի լաւ ծաշակ է
ունեցել լեզուի երկու ձևից այն ընտրելու: որ
ներգաշնակութիւն ունի, և յատկապէս «արե-
գակունք» ձևը, որ «աչկունք» բառի հետ կազ-
մում է նմանաձայնութիւն (alliteration), որ
յատուկ է ժողովրդական երգերին և յատկա-
պէս, ինչպէս յետոյ կրտեսնենք, Վահագնի
այս երգին:

Այս են պ. Խալաթեանի հիմունքները,
որոնք, ինչպէս ընթերցողը կրտեսնէ, ոչինչ ու
ոչինչ չեն ապացուցանում: Թէ՛ երգի արուես-
տական, շինծու լինելու, և Թէ՛ երգի մէջ
արեգակի ծագման նկարագիր տեսնելու նկատ-
մամբ:

Երգի մէջ նկարագրուած պատանին և
նորա ծնունդը մնում են և կըմնան որոշ
չափով նման արեգակին և արեգակի ծագմա-
նը, Թէպէտ և ոչ Խորենացին և ոչ երգը ոչ
մի խօսքով ակնարկութիւն չեն անում արե-
գակի վրայ: Բայց մենք չենք համեմատիլ եր-
գի պատանին արեգական աստուածների հետ,
քանի որ, ինչպէս ասացինք, մենք Վահագնի
անձնաւորութեան մէջ ոչ Թէ արեգակն ենք

տեսնումս այլ մի ուրիշ երևոյթ՝ ամպրոպ։ Այսպէս ըմբռնելով միայն հասկանալի է լինում երգի ամեն մի տողն ու բառը, և Վահագնի կռիւը վիշապների հետ, և վիշապաքաղ մակդիրը, և Վահագն սեռունը, և Հերակլի հետ նոյնանալը, և նոյն իսկ երբեմն Ապոլոնի հաւանարի դրուելը։ Բայց նախ քան այդ մի երկու խօսք ևս մեր անպոյտոյցի եղանակի մասին։

Համեմատական եղանակը։— Յայտնի է թէ ինչ մեծ դեր է խաղում համեմատական մեթոդը, ինչպէս շատ գիտութեանց, այդպէս և դիցարանութեան ու ժողովրդական հաւատքի և անասալեարանութեան մէջ։ Ատոուածների ու գիւցնազների գրոյցները, հինգեւրօպական ազգերի մէջ, և անունները իրար դիմաց դնել, անասալեւերն ու գրոյցներն իրար համեմատել, տեսնել թէ ինչպէս առասպելաբանական մտածութեան գլխաւոր անարկանների՝ արեգական ու լուսնի, երկնքի ու երկրի, կրակի ու ջրի, հողմի ու կայծակի մասին զանազան ազգերի մէջ համեմատան բաներ են պատմում և հաւատումս որոնք մի և նոյն «ձևաբանական» (morphologique) հիմունքի վրայ են ածած. ոչ միայն համեմտեց ազգերի մէջ, այլ և ամբողջ մարդկութեան մէջ, յեղով, ժամանակով ու տարածութեամբ իրար

լուց հեռու և տարբեր ազգերի առասպելները համեմատելով՝ նմանութիւններ գտնել և այդ նմանութեանց հիմունքը մի ընդհանուր հոգեբանութեամբ բացատրել, շմուռնալով հարկաւ և մի ազգից միւսին փոխանցուծը: — ահա ուսումնասիրութեան այն եղանակը, որ այժմ իշխում է առասպելաբանութեան մէջ:

Ոչ մի բան այնպէս չի պարզի Ասհազնի Քիզիկական ծագումն ու իտրա առասպելը: որքան համեմատութիւնք, որի ժամանակ հարկաւ, ինչպէս ուրիշ ազգերի զիցարանութեան ուսումնասիրութեան մէջ, մեծ տեղ պիտի բռնեն և մեր այդի ժողովրդական զրոյցներն ու առասպելները: Արդի ժամանակը հասկացու՞մ է հնի, տնցեալի ուսումնասիրութեամբ. բայց արդի ժամանակի ուսումնասիրութիւնն ևս իւր կողմից բանում է մեր առաջ անցեալը, քանի որ անցեալի շարունակութիւնն է ներկան: Այսպէս և մեր արդի ժողովրդական զրոյցներն ու առասպելները, որոնցից շատերը հնի Քիստրիներն ու շարունակութիւնն են, կարող են պարզել մեզ մեր հին առասպելները:

Այնպէս ամալրոպային ստորագած: — Հայոց աստուածների մասին եղած օտկաւ յիշատակութիւնների մէջ ամալրոպի աստուած չէ յիշուում: Խորենացին մի ակն միայն (Բ. 27) զրկում է. Եսուէ կործանեաց զամալրոպային

պատկերն Արամազդայ» սակայն այդ պատկերը Հայաստանում չէ, այլ Վրաստանում Հայոց Արամազդը, որ իրանացիներից է հայերին անցել, հաւանօրէն չէ իշխել ամպրոպի և փոթորկի վրայ, ինչպէս և պարսից Ահուրա Մազդան, Թերևս հելլենիստական ժամանակում, երբ հայոց Արամազդը յունաց ամպրոպային Դիոսի հետ է համեմատուել, վերջինիս ամպրոպային բնաւօրութիւնն Արամազդին վերագրուած լինի, բայց այդ վկայուած չէ, Դժուար է, սակայն, ընդունել, որ հայերն ամպրոպի աստուած ունեցած չլինին, ի նկատի ունենալով, որ գրեթէ բոլոր հնդեւրոպական ազգերի և ուրիշ շատերի մէջ ամպրոպային աստուած ոչ միայն կայ, այլ և յաճախ առաջնակարգ տեղ է բռնում, գրեթէ համանման առասպելներով, և որ ամպրոպն այն Ֆիզիկական երևոյթն է, որ արեգակի հետ, և ըստ շատ առասպելաբանների՝ արեգակից էլ աւելի ազդել է առասպելաբանութեան ծագման վրայ: Ծոյն իսկ եթէ ընդունելու էլ չլինինք, որ հնդեւրոպական նախաժամանակից հնդեւրոպական ազգերին անցած լինի մի այլ պիսի աստուածութիւն, բայց և այնպէս մեր ժողովրդի մէջ ցարդ կենդանի տարածուած, անշուշտ հնուց եկած, բազմաթիւ զրոյցներն ամպրոպի մասին, վկայում են, որ

հայոց մէջ ևս ամպրոպի աստուածութիւնն եղել է, և նոյն իսկ՝ սիրելի ու նշանաւոր:

Այդ հին ամպրոպային աստուածն եղել է Վահագն: Տեսնենք նրա մասին բոլոր աւանդուածները. նախ Վահագնի ծննդեան երգը:

Երկնէր երկին՝ երկնէր երկիր:— Հնդեւրոպացւոց մէջ տարածուած հաւատալիքներից մէկն է, որ «փոթորկի ժամանակ երկինքը երկնում է և մրրկալից ամպը (gewitterschwangere Wolke—բառացի մրրկով յղի) հոգմայիցի ու որոտմունքի հեծածանքներով և պտուտահողմի բախիւնի տակ, ծննդեան ցաւերով բռնւում է՝ մի կամ երկու լուսեղէն էակ ծնելու համար:՝ Այն ըմբռնումը թէ ամպրոպային աստուածը երկնքից ու երկրից է ծնւում՝ գրում է Մաքս Միւլլեր, համեմատական առասպելաբանութեան հիմնադիրը, բոլորովին բնական է: Որովհետև փոթորիկն երկնքից է առաջ գալիս, ուստի և երկինքն իբրև ամպրոպային աստուածու հայրն է ըմբռնւում. բայց փոթորիկն առաջանում է և հետո հորիզոնում երկրի վրայ, շուր երկինքը թւում է թէ գրկախառնւում է երկրի հետ, ուստի և երկիրն ամպրոպային աստուածու մայ-

†. W. Schwartz. Indogermanischer Volksglaube. Berlin, 1885. էր. 55.

ընն է: Այսպէս Ռիգ Վերայում մեծագոր
ամպրոպային աստուծու՝ Դնդրայի ծնունդն
իրբև մի ամպրոպային օգերեւոյթ է ըմբռ-
նւում: որի ժամանակ դողում են երկինքն ու
երկիրը, որոնք և Դնդրայի հայրն ու մայրն են¹:

Այսպէս և, եթէ մեր Վահագնի ծնն-
գեան ժամանակ երկնում են երկին ու երկիր,
Վահագն ներկայանում է իրբև ամպրոպային
և ոչ թէ արեգական աստուած:

Երկնէր եւ ծիրանի ծովն: ²—Այս տողը
ցոյց է տալի, որ երկնի ու երկրի որդի Վա-
հանգն՝ է միանգամայն և ծովածին: Ի՞նչ է
այդ ծիրանի ծովը: Անշուշտ, ոչ երկրաւոր
երկրի վրայ տեղափակուած մի ծով: Երկինքը
ամպերով ծածկուած երկինքը ծովի նմանե-
ցնելը մի սովորական բան է հին ու նոր բա-
նաստեղծների մէջ, և երկինքը, որտեղից ան-
ձրևն է գալի, ջրեղէն երևակայելը յատուկ
է ոչ միայն հնդեւրոպական, այլ և ուրիշ ազ-
գերին: Նոյն ըմբռնումն ունի երկինքի մասին
և մինչև այսօր մեր ժողովուրդը, որ հաւա-
տում է թէ եօթնտակ երկինքի առաջին շերտն
ամպ է, և ամպերի վրայ միւս շերտերը՝ ջրե-

1. M. Müller, Die Wissenschaft der Sprache, Leip-
zig 1893. II. եր. 519.

2. Վարիանս «ծովն ծիրանի»:

րի ծովը՝ որի ծայրն ու վերջն ուլկիանի
վրայ է հանգչում:՝ Այսպէս և մեր ժողո-
վուրդն իր առաւօտեան աղօթքի մէջ կոչում
է «երկինքը ծով ծիրանի»:՝ Այսպէս և ժո-
ղովրդական հաւատալիք է, որ որոտում է,
կրք «պէկոճն քամին» այդ երկնային ծովն է
գալի:՝ Նոյն գաղափարը գտնում ենք և մի
հանելուկի մէջ, — յայտնի է հանելուկների
հնու-թիւնից գալը և հին առասպելական հա-
ւատալիքներ բովանդակելը, — ուր ասում է.

«Կով մի ունիմ հանայ հանայ,
Կոտոշները մարխանայ,
Կաթնաղբիւրէն ջուր կըխմայ,
Արինսածովէն ձէն կըհանայ:՝

Եւ այ՝ հանելուկի պատասխանն է, ո-
րոտմունք և ամպ: Որոտմունք, որ ամպը կամ
ամպեղէն էակը, ըմբռնուած, ինչպէս շատ
հնդեւրոպական ազգերի մէջ, իբրև արջառ,
յաւակապէս կով, հանում է երկնային արիւն,
այսինքն արեւնագոյն (=ծիրանի) ծովի միջից:

՝1. Ազգագրական քերք Ա. գիրք. եր. 348:

2. Գարեգին ս. Յովսէփեան, Փշրանկներ, Թիւրխ
1893, եր. 77:

3. Հմմտ. Ազգագր. քերք Բ. գիրք. եր. 220.

4. Հմմտ. Սրուանձեան Մանանայ, եր. 314, ուր
«կովի» օճ «հանկ» է դրած (քերեւս, հաւթ). «կով» բա-
ռով նոյն հանելուկը գրի առած է պ. Գր. Վանցեան.

Պարսից մէջ ևս ամպրոպի աստուած Տիստրիայի, որ նոյնպէս արջառի կերպարանքով է ներկայանում, կռիւը ջրերը խափանող Ապասոշա դէի գէմ՝ լինում է երկնային Vouroukasha ծովի մօտ, որից և անձրեւում է ամպրոպի աստուածը: ¹ Իսկ Վեդայի մէջ ամպրոպային աստուածը՝ Յուլ Ինդրան՝ անձրեւելու համար՝ պատառում է երկնային ջրերըն արգելող ամպերի կամարը, որ կանգնեցնում է Ինդրայի հակառակորդ Վիշապը, Վրտրան, որ մի և նոյն ամպն է կամ ամպի անձնաւորումը. «Այնտեղ կանգնած էր խաւարը, ջրերը փակող կամարը, Վրտրայի կամարների ներսում— ջրերի լեռը. ծածկոյթով շրջապատուած հոսանքները ցած է զարնում Ինդրան ետեւ է ետե ուղղորդ ճանապարհներով»: ² Կամ օրինակ ուրիշ տեղ. «Զօրութեամբ բարգաւաճած է Ինդրան, որ Մարուտներին բարեկամ ունի. Վրտրային անդամալոյծ արաւ և այդ ժամանակ դուրս թափեց ծովի ջուրը»: ³

Այսպէս, երկնային ծովի գաղափարը, որ ի միջի այլոց յատուկ է և հայերին, մեծ դեր է խաղում ամպրոպի առասպելների մէջ: Բայց

1. Spiegel, Eranische Alterthumskunde, II, 72 f.

2. Der Rigveda, übers. v. Alf. Ludwig. II. 453-10.

3. Նոյն. II. 614. 3.

որ զլխաւորն է և մեզ համար կարեոր, ամպրոպի անձնաւորում աստուածը, որ՝ զինուած կայծակով՝ հոսեցնում է երկնային ջրերը, համարւում է ծնունդ երկնային ջրերի և հնդկաց մէջ, օրինակ, կրում է ապտիա, ջրածին, ջրերի որդի անունը: Այս մակդիրն այնքան առանձնապէս վերաբերում է Ինդրային, որ նա նոյն իսկ ապտիաների ապտիա է կոչւում. զի միայն Ինդրան չէ ջրերի որդի, այլ և նորա երկուորեակ եղբայրը՝ Ագնին, որին նոյնպէս վիշապի դէմ կռիւնք են վերագրում, կոչւում է, իբրեւ կայծական կրակի աստուած, ապամ նապատ, ջրերի զաւակ: ¹ Ապտիա, ջրածին, ջրերի որդի կոչւում է և նոյնպէս վիշապի դէմ կռուող Տրիտա աստուածը, որ Ինդրայի յատկութիւններն ունի, և որին համեմատւում է պարսից Ատվիա թրայետաօնա կամ Թրիտա, որ սպանում է Ահրիմանի մի վիշապ: ²

Այսպէս և մեր Վահագն, իբրև վիշապի դէմ կռուող ամպրոպային աստուած, ծնունդ է երկնային ջրերի ծովի.

Թէ մեր հին առասպելներին ևս յատուկ կարող է եղած լինել ամպրոպի աստուածու ծովածին լինելու գաղափարը, այդ կա-

1. W. Mannhard, Germanische Mythen, էր. 213 հսն.

2. Spiegel, Eran. Alterth. I 440.

րէի է տեսնել և մեր արդի ժողովրդական՝
հաւատալիքներից ու առասպելներից, որոնց
մէջ ծովեան կամ ծովինար դուրս է գալիս
իբրև ամպրոպի և կայծակի կամ փայլակի
անձնաւորում, մի պաշտելի առասպելական
էակ, հրաշնայ ու հրեղէն, որ վերին երկրն-
քում է ապրում և վերահաս ամպրոպից
առաջ խազալով ցոյց է տալի վայրկենապէս
իւր երեսը, որից և փայլատակում է: Մեր
ծովեանի կամ ծովինարի համեմատութիւնն
ուրիշ ազգերի նման առասպելների հետ թող-
նելով, այստեղ նկատենք միայն, որ «ծովեան»
կամ «ծովինար» բառը, կազմուած «ծով»
արմատից, իբրև «ծովի սերունդ, ծովային»,
անշուշտ սկզբնապէս փայլակ ու կայծակի
աստուծու մի մակդիրն է եղել և յետոյ,
ինչպէս յաճախ լինում է առասպելարանու-
թեան մէջ, առանձնացած գործ է ածւում
իբրև յատուկ, այլ և իբրև հասարակ անուն,
կայծակ ու փայլակ նշանակութեամբ:

Միւս կողմից ծովածին է և մեր արդի
ժողովրդական վէպի մէջ կայծակի կամ ամպ-
րոպային հերոս Սանասարն իր Բաղդասար
եղբոր հրա: Յա իրեն անուանում է յատ-
կապէս ծովային: ¹ ունի կայծակի թուր, որ

1. Գարեգին ս. Յովսէփեան «Սասնայ ծներ», եր-
62 հո.

ստացել է ծովից. դւնի ամպրոպային առաս-
պել, կռուելով վիշապի դէմ և կռուի մէջ
հողմ յարուցանելով ու անձրեւելով: Սակայն
այս մասին ևս մանրամասն զրել թողնենք
ուրիշ տեղի: ¹

Երկն ի ծովուն ունէր եւ զկարմնիկն ե-
ղեգնիկ. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ
եղեգան փող բոց ելանէր, եւ ի բոցոյն վազէր
խարտեաշ պատանեկիկ:

Երկնքի և երկրի որդի ծովածին Վահագն
երգի մէջ համարուում է սերուած և մի բոյսից
— կարմրիկ կղկզնիկից: Այսպէս և երկնքի ու
երկրի և ջրերի որդի Ագնին, իբրև կայծական
կրակի աստուածութիւն, ծնւում է միանգա-
մայն և բոյսերից: Ռիզվեդայի մէջ, օրինակ,
երգւում է կայծակ Ագնիի համար. «Բոյսե-
բք կանոնաւոր երևացողին [Ագնիին] իրենց
մէջ են առել իբրև սաղմ. այս Ագնիին ծնե-
ցին մայրական ջրերը, նմանապէս ծնում են
նորան ծառերն ու խոտերը (Kräuter) յաւէտ
յղանալով»: ²

Արդէն վաղուց Կուն, համեմատական
առասպելարանութեան մի ուրիշ հիմնադիրը
Գերմանիայում, իւր մի նշանաւոր աշխատու-

1. Հմտ. M. Abeghian, Der Armenische Volksglaube,
Leipzig, 1899 եր. 83—88.

2. Der Rigveda, übers. v. Ludwig. II. 482, 6.

Թեան մէջ¹ ցոյց է տուել, թէ ինչպէս զանազան հին ազգերի, և յատկապէս հնդկաց, առասպելների մէջ երկնային կրակը բոյսերի հետ կապուած է մտածուած: այսինքն, ինչպէս երկրի վրայ կրակը փայտից է առաջանում հաւատում էին, երկնքում էլ կայծակը փայտից է ծնւում: Ուստի և կայծակը ներկայացնում են յաճախ իբրև զանազան բոյսեր, և կայծակի մարմնացումն են համարուած շատ բոյսեր, որոնք հնումը գործ են ածուել շրջումով սրբազան կրակ հանելու համար: Այդպիսի բոյսերից է, օրինակ, և փշենին կամ փուշը², որ և հայոց մէջ մինչև այսօր, իբրև կրակի մարմնացում, զօրաւոր «կապք» այսինքն պաշտպանութեան միջոց (Abwehrmittel) է համարոււմ շար ոգիների դէմ և մեր «կապքի աղօթքների» մէջ կրակին հաւասար է դասուում: Հայոց մէջ կայծակի մարմնացում ուրիշ շատ բոյսեր կան, որոնց ուսումնասիրութեան տեղը չէ այստեղ, բայց թէ եղեգն ևս այդպիսի բոյսերից է համարոււմ թէ չէ, տեղեկութիւն չունինք: Այդ պէտք է ցոյց տան մեր ժողովրդագրական նիւթերը, որոնք դեռ

1. Adalbert Kuhn, Die Herabkunft des Feuers, Berlin, 1859.

2. նոյն եր. 38.

նոր են ժողովուրդի Անհաւանական բան չէ
այդ՝ քանի որ տեսնում ենք, որ մի գերման
զրոյցի մէջ եղեգն իբրև կայծակ դուրս է գա-
լիս Օդհին աստուծու ձեռին, որ սկզբնապէս
ամպրոպային աստուած է բացատրւում և
Ինդրայի հետ համեմատւում: ¹ Եոյն իսկ եթէ
եղեգն այդպիսի բոյսերից չլինի, բանաստեղ-
ծը չէր կարող—քանի որ երկնային տեսա-
րանը (Himmelscenerie) իսկապէս միշտ երկրա-
ւորի նմանումն է,—աւելի լաւ կերպով ու-
րիշ բոյս ընտել կարմիր կայծակի հրդեհումը
ծիրանի ծովի մէջ նկարագրելու համար, քան
թէ կարմիր եղեգը, մօրուտների եղեգը, որ
ածում է ջրերի միջին: Եղեգի կարմիր մակ-
դիրն ևս կայծակից առնուած պիտի լինի,
քանի որ շատ ազգերի առասպելների մէջ
կայծակի յատուկ գոյներից մէկն է կարմի-
րը ², ուստի և շատ բոյսեր իրենց կարմիր
գոյնի պատճառով հենց՝ համարւում են կայ-
ծակի մարմնացում ³, և յաճախ ամպրոպային

1. Kuhn, Herabkunft des Feuers. եր. 199. F. Schwartz, Die poetischen Naturanschauungen. Berlin, 1864. I. 199. II. 99. Եոյնը եւ Zeitschrift d. Vereins d. Volkskunde, 1892 II. եր. 68.

2. Kuhn, Herabk. d. Feuers եր. 106. F. Schwartz, Poet. Naturansch. I.

3. Kuhn, Herabk. d. Feuers եր. 47.

կամ աստուծու նուիրական գոյնն է կարմիրը՝

Ի՞նչ է ցոյց տալի ծովի ծիրանի ժակդիրը: Այս բառը, որ համեմատուում է հանելուկի մէջ ծովի արիւն (արենագոյն) մեկգրին, կարող է Վահագնի ծնունդը կարծել տալ իբրև արեգակնային ծնունդ, ծագում արշալոյսի ծիրանի ամպերի ծովից: Արդարև, «ամպրոպի երևոյթն և առաւօտեան լուսաբացը զրոյցնելի մէջ շատ անգամ իրար խառնուում են» մի գրոյց, որ սկզբնապէս ամպրոպին է վերաբերում: Բնութեամբ է արևում առաւօտեան լուսաբացին, կամ ներհակը: Անոր պատճառը հենց բնութեան այս երկու երևոյթների նրմանութիւնն է. արեգակը գիշերն աներևոյթ է լինում և առաւօտեան ծագում, այդպէս և փոթորկի ժամանակ արեգակն անհետանում է և անձրևից յետոյ կրկին երևան գալիս: ² Այս իսկ պատճառով առասպելաբանական գիտութեան մէջ իշխող է երկու ուղղութիւն, արեգակնային և ամպրոպային. միևնոյն առասպելներն ու աստուածները ոմանք արեգակով են մեկնում, ուրիշները ամպրոպով, մանաւանդ որ միևնոյն առասպելների մէջ

² F. Schwartz, Die poetischen Naturanschauungen I. էր. 67.

Հենց այս երկու երևոյթի պատկերացումները միացած են՝ առաւօտեան մէջերի և ամպրոպի ամպերի միջից ծագող արեգակի նմանութեան պատճառով¹: Օրինակ Հենց Ապոլոնի մէջ, որին մերձեցրել են մեր Վոհսգնին, միացած են արեգական և ամպրոպի աստուածութիւն, թէպէտև նորա առասպելների մէջ փիշապասպան կայծակի կամ ամպրոպի աստուածը, ծիածանի աղնդով և կայծակի նետով, աւելի զօրաւոր է երևում քան թէ ոսկեգիսակ արեգակնային աստուածը²: Ապոլոնի ծնունդն իսկ, երբ, ինչպէս կայծակի աստուածուհի Աթենասի ծննդեանը, ոսկի անձրև է տեղում, բացառուում է իրրև ամպրոպային ծնունդ³: Այդ «ոսկի տեղն» առնուած է ամպրոպի երևոյթից, երբ թուում է թէ ամբողջ երկինքը կայծակնահարելու ժամանակ փայլում է ոսկուց, որ իջնում է երկիր կամ երկրնքումն էլ մնում է: Դա երկնային ծովի ոսկեգոյն, կարմիր, ծիրանի բոցափառումն է զօրեղ ամպրոպների ժամանակ: Եւ շատ յաճախ բանաստեղծները փոթորկալից երկինքը պատ-

1. Kuhn, Herabkunft des Feuers, էր. 60.

2. F. Schwartz, Poet. Naturansch. I. էր. III հտն.

3. F. Schwartz, Der Ursprung der Mythologie.

կերացնում են իրրև ամպերի հրեղէն ծովո-
րի միջից կայծակը բռնկում է «կարմիր հո-
սանքներով» և բոցավառում իրրև հրդեհ-
կամ ինչպէս գերմանացի բանաստեղծ Գոտ-
ֆրիդ Չոյմէի (Gottfried Seume) մի բանաս-
տեղծութեան մէջ «փորթորկի գալն ու գնալը»
նկարագրուած է.

Գալիս մօտենում է ինչպէս գիշեր:

Նորա առաջից լուսաւորում են կայծակներ:

Եւ ինչպէս մի բոցեղէն ծովի մէջ

Այիֆներն այիֆների վրայ են խռնում»:

Կամ ինչպէս մեր մի հեքիաթի նկարագրի մէջ.
«էնենց մթնում են սար ու ձոր, որ ետ
մուխն ասեմ, դու գիշեր իմնցիր...: Զամին
որ վշշացնում չի, ծառեր են որ գետնի հետ
դղւում են: Ամպն ու շանզը գետինն առել
են. ծովինարն էնէնց խաղում, որ կասես թէ
ուզում ա աշխարքը կրակ տայ»: ¹

Ռիզվեդայում նոյնպէս շատ կրզանենք
ամպրոպի այնպիսի նկարագիրներ, որոնց մէջ
մի կողմից ինդրան արեգակի և արշալոյսի
հետ ներքին յարակցութիւն ունի, լուսաւո-
րում է երկինքն ու երկիրը արեգակով, բե-
րում արշալոյսն ու արևը. միւս կողմից իւր
կայծակներով բոցավառում է երկնային ծովը:

1. Նաւասարդեան Տ. Հայ ժողովրդ. շնիարներ-
ե. եր. 40.

«Սուրայի [արեգակի] անիւը նա [Ինդրա] զօրութեամբ էր առաջ գլորում իրենցոյց տալով կարմիր քոցավառուելով ձայն է արձակում...¹

«Այս հզօր Ինդրան գուրս քշից ջրերի արիծուփ հոսանքը՝ վիշապասպանը մօտ վարից ծովը՝ տեսանելի գարձրից արեգակը՝ դատաւ արջաոր. մի դիշերուայ ընթացքում կատարեց նա օրերի գործը» (Rigv. II. 492, 2):

«Ծնւում է թէ չէ՝ ճամանշներով փայլեցնում է դեղին ցուլը [Ինդրան] ամբողջ պայծառ երկնահամարը. խարտեշածին առնում է դեղին զէնքը՝ դեղին կայծակն իր ձեռը» (Rigv. II. 509, 4):

«Փայլելով ինքը փայլեցրից անփայլը. պայծառ բաց է արել նա ըստ կարգին շատ [արշալոյսներ]» (Rigv. II. 562, 4):

«Նա [Ինդրա] գտել է գունահարուստ տեսքով ծովը պայծառութեան մէջ բնակող Ուշասի (Արշալոյսի) առաջակողմում...» (Rigv, II. 570, 5):

«Կայծակնահարիր, (Ինդրա), ինչպէս Ագնիի (կրակի) քոցերը...» (Rigv, II. 589, 7):

«Ինդրան արեգակնային ճառագայթներով հրդեհում է փնասատուին [վիշապին]. ինչպէս Ագնին [կրակը], երբ սա նուաճում է ան-

¹. Der Rigverda, Übers. v. Ludwig II. 472. 9.

տառները՝ աճել մեծացել է նա (Rigv. II. 590. 9):

«Հենց որ երկնքում մի սիրուն ճառագայթ դրուեցաւ, արագ բացուելով տարածուեցաւ խարտեաշ կայծակը. երկաթեան խարտեաշ առամով զարկեց վիշապին, հազարապատիկ քոցեր ունէր նա, որ խարտեաշն [կայծակը] է կրում» (Rigv. II. 645, 4):

Բերենք և Մահաբհարատայից մի կտոր, որի մէջ երկնային կաթնծովի մէջ (հմմտ. մեր հանելուկի տողը. «կաթնաղբիւրէն ջուր կըսմայ») ամպերի սարի շուրջ փաթաթուում է կայծակի վիշապը, որին երկու կողմից քաշում են աստուածները. «Վասուդհի օձը, մինչ իրեն տարուբեր քաշում էին, փչում էր իր քերանից մի հոսանքով՝ կրակ, ծուխ և քամի, որոնք բարձրանում էին վեր՝ ինչպէս կայծակներով յղի (blitzschwanger) ամպ..... [ամպերի] սարի շուրջը գոռում էր ծովը, ինչպէս մի ամպի խուլ որոտմունք... կրակը ծածկեց յանկարծ սարը քոցերով և ծխով: նման մի սև ամպի, որից կայծակ կայծակի վրայ ցած են թափուում... Եւ ահա անմահ ինդրան ուղարկեց մի ամպ, որ սաստիկ անձրևով հանգրեց հրդեհը»:¹

¹. F. Schwartz, Der Ursprung der Mythologie. էր. 45.

Մենք յետոյ կըտեսնենք, թէ ինչպէս մեր հաւատալիքով ամպրոպի վիշապը քաշում կամ հանում են վեր փոթորկի ժամանակ: Բերած օրինակներն արդէն պարզ ցոյց են տալիս, որ ամպրոպի երևոյթն ըմբռնւում է իբրև մի բոցավառում: հրդեհ երկնային կարմիր բոցեղէն ծովի մէջ: Մոյն կայծակի հրդեհն է նկարագրուած անշուշտ և մեր երգի մէջ եղեգի բոցավառումով:

Երկրի վրայ կրակ վառելու, աւելի ճիշտ շփումով երկու փայտից սրբազան կրակ հանելու գործողութիւնը նախնական հայեացքով նմանեցրած է սերելու, ծնելու (Zengung) գործողութեանը, և վեգաներում ոչ միայն կրակ հանելն իբրև ծնունդ է նկարագրուած, այլ և երկու շփելու փայտերը, որոնք նկարագրուած են իբրև մարդու մարմին, պաշտամունքի մէջ անձնաւորուած իբրև հայր ու մայր են ըմբռնւում և նոցանից առաջացրած կրակն իբրև որդի: Շփումով սրբազան կրակ հանելու այս գործողութիւնը համարուած է կայծակի նշան յունաց, հնդկաց և գերմանների մէջ, և հաւատացել են, որ կայծակի կրակն ևս երկնքում նոյն ձևով է առաջացել: Սակայն, եթէ մի կողմից երկրի վրայ փայտերը շփելով կրակ վառելու գործողութիւնը սերելու, ծնելու գործողութեանն էին նմա-

նեցնում», միւս կողմից և կայծակի կրակի բոցավառումը երկնքում բոյսերից, կամ «կայծակի տոռաջանալը փոխակերպւում էր մի աստուածութեան ծննդեան»¹ և յասկապէս կայծակի անձնաւորում աստուծու, որ երկնքի ու երկրի և երկնային ծովի ու բոյսերի ծնունդ գործով ծնւում է ամպրոպի բոցերի միջից:

Այսպէս և մեր՝ երկնքի ու երկրի և ծովի որդի Վահագն իրրև կայծակի աստուած ծնւում է եղեգնից բոցերի մէջ:

Վահագնի ծնունդը նկարագրուած է իրրև վազել: Այս գիծն ևս իւր համապատասխանն ունի. Դնդրան ևս ծնուելուն պէս, երկնք ու երկիր կարմիր բոցավառելով, վազում է Ղրարային կամ թէ վիշապին սպանելու համար. «Վազելով լարում է Դնդրան իւր վազաններով [ձիերով], արագ աւարի առնելով ջրերը աջ [հարաւի] կողմից»...² Դա կայծակի արագութիւնն է, որից և Դնդրան ու իւր ձիերը վազան կոչումն են ստացել, և Դնդրայի սովորական մակդիրներից է և արագ:³

1. Kuhn, Herabk. des Feuers եր. 70 հան. 255.

2. Der Rigveda, übers. v. Ludw. II. 555, 5.

3. Վազել բայը Հայկ. լեզ. նոր բառքի մէջ բացատրած՝ կ վազել, վազս առնուլ, արշաւել, յարձակել, ի վերայ դիմել, այլ և նսնուլ, խաղալ: Վերջին իմաստի համար հմեմ. Ծ ո վ ի ն ա ռ ը ի ս ո ղ ու մ կ ասացուածք:

Մա հուր հեր ունէր՝ քոց ունէր մօրուս
Եւ աշխունքն էին արեգակունքս:

Այս տողերի մէջ նկարագրուած է ծը-
նուող աստուծու կերպարանքը՝ որ կատարե-
լապէս համապատասխան է ուրիշ ազգերի
ամպրոպային աստուածների ինչպէս՝ Ինդրայի
գերմանական Թուր կերպարանքին: Մախ մեր
նորածին Վահագն մի երեխայ չէ՝ այլ պա-
տանեակ և Խորենացու ձեռագիր վարիանտ-
ներից շատերի մէջ խարտեաշ պատանեակ:
Ինդրան ևս պատկերացում է իրրև խար-
տեաշ պատանի. «Զի մեծ է նոցա զոհի երին,
վսեմ է երգը, դուրզը՝ հաստ որոնց բարե-
կամ է պատանեակն Ինդրա: Արդարև առանց
կուռի իւր ուժով գանձը ձեռք է բերում՝
այն հերոսը՝ որին բարեկամ է պատանեակն
Ինդրա: ¹ «Դու ինքզ առար ու բախու թեամբ»
հին նախնիքներից՝ զոհողներից փառարանուե-
լով, ո՛վ Ինդրա՝ ոսկեհեր, դու առնում ես
[և այժմ] ամեն՝ քո գովաբանութեանն ար-
ժանի կատարեալ, գեղեցիկ ստացուած, դու
որ խարտեաշ ես ծննդից ի վեր» (Rigv. II.

Ինդրան ևս խաղում պարում է, որից ևս usughi է իս-
դացող, պարող մակիրը. Rigveda, II. 552, 3. 472,
7. 495, 4.

¹. W. Mannhard, Germanische Mythen, էր. 232-
Ցես և Rigv. II. 450, 4. 499, 7. 493, 3.

645, 5): Դսարտեաշ և արեգակնաչեայ են և Ինդրայի ձիերը, որոնք նոյնպէս ամպրոպն են պատկերացնում: «Քեզ պէտք է այստեղ բերեն խարտեաշները, սոմա խմելու [պիտի բերեն] ցուին. Ինդրա քեզ արեգակնաչեաները» (Rigv. II. 451, 1. 445, 1. 2): Նորա կայծակը նոյնպէս խարտեաշ և արեգակնաչեանն է (Rigv. II. 457, 6): Ինքն Ինդրան ևս արեգակնաչեայ է (Rigv. III. եր. 317), երեսն արեգակի նման (Rigv. II. 963): Հագնւում է արեգակի գեղեցկութեամբ, անձամբ հրեղէն է. (Rigv. II. 542, 12): Եւ թէպէտ պատանեակի բայց մօրուք ունի ինչպէս և մեր պատանեակ Վահագնը. Դեղմօրուքը, դեղնահերը, երկաթեան, սոմա խմողն արագ խմելով աճեց զօրութեամբ, հիանալի զամբիկների տէրը պէտք է ամեն փորձանքից ազատէ իւր խարտեաշներին» (ձիերին) (Rigv. II. 645. 8):

Պատանեակ խարտեաշ, հրեղէն, օսկեհեր, թէ հուր հեր, դեղնամօրուս, բոց մօրուս, թէ կարմրամօրուս (ինչպիսին է Թոռ), արեգակնաչեայթ է հրաչեայ (Թոռ),— առնուած է հենց կայծակի երևոյթից, նորա այրող, հրեղէն ու բոցեղէն, կամ բոցի ու հրոյ օսկեգոյն, կարմիր ու փայլուն յատկութիւններէից:

Այսպէս տեսնում ենք, որ Վահագնի

երգի մէջ նորա ծննդեան և կերպարանքի բոլոր յատկութիւններն ամբողջապէս մի ամպրոպային աստուծու՝ Ինդրայինն են: Բայց այդ դեռ ամենը չէ: Ինդրան ծնուելուն պէս բոցերի միջից վաղում է ամպրոպի վիշապի՝ ԱՏիի (օձի) կամ Վրտրայի (ամպի, ամպի անձնաւորումի, որ յաճախ ներկայանում է իբրև վիշապ) դէմ կռուելու, և կռուելով յաղթում ու սպանում է նորան: Եւ մի՞թէ նոյնը չէ անում և մեր Վահագն: Դժբախտաբար Խորենացին երգի շարունակութեան միայն համառօտ բովանդակութիւնն է մէջ բերել, ասելով. «Եիտ որոյ (ծննդեան նկարագիրն անելուց յետոյ) և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել: Երբ մի անգամ իմանանք թէ ինչ են վիշապները, այն ժամանակ կարող ենք հաւաստի ասել, որ բնական երևոյթի անձնաւորում Վահագնի կռիւը ոչ թէ երկրի վրայ օձերի դէմ է եղել այլ իրօք իբրև օդերևութի, ամպրոպային կռիւ (Gewitterkampf) է ըմբռնուել ինչպէս Ինդրայի կռիւն է: Մի հայեացք ու հաւատք, որ ցայժմ կենդանի է մեր ժողովրդի մէջ:

Վիշապ եւ ամպրոպային կռիւ:— Առասպելաբանութեան մէջ վիշապը փոթորկի, սլափաւտահողմի և փոթորկալից ամպի անձնա-

ւորումն է, հենց ինքը փոթորիկը, պատուա-
հոյժն ու ամպը—մի շար ոգի, որ սսփորարար
օձի կերպարանքով է ներկայանում, բայց և
զանազան կերպարանքներ է ընդունում: Մո-
րա դէմ կաւում է նոյն օգերևոյթի բարի
անձնաւորումը, ամպրոպային աստուածը, որը
նոյնպէս զանազան կերպարանքներով է պատ-
կերանում:

Ի՞նչ է վիշապը հայոց մէջ: «Վիշապ»
բառը որ ժողովրդի մէջ նաև «ուշապ» է ար-
տասանւում, հաւանօրէն իրանացիներէց է
անցել հայերին և պարսից ամպրոպային օձի՝
Աժիի մակդիրն է: ¹ Եւ արգարև, ամեն ինչ
որ հնումը և այժմ հայոց մէջ պատմւում է
վիշապի մասին, ներկայացնում է նորան իբրև
փոթորիկ, ամպրոպի անձնաւորում: Շատ բան,
հարկաւ, մուժն է, բայց բաւական է, որ մեր
գրոյցները համեմատենք ուրիշ ազգերի զրոյց-
ների հետ, որ մեր վիշապի ամպրոպային բնա-
ւորութիւնը պարզուի:

Ամենից առաջ բերենք մի հատուած, որ
հ. Ալիշան ² վերագրում է Անանիա Շիրակա-
ցուն կամ մի «ուրիշ հին բնախօսի»: «Թա-
լագս փոթորիկ հոյմոյ, զոր ի բաջաղանս և

¹ H. Hübschmann, Armenische Grammatik I. Nr. 247.

² Հին հուսիսի եր. 66. Ծան.

յառասպելս վիշապ հաննել ասեն. փոթորիկն հողմ է՝ որ ի յերկրէ ի վեր ելանէ՝ ուր վիհք ինչ հաստեալ լինին ի քակ և ի խոռոչացեալ տեղեաց ինչ՝ որ ի փող անկեալ ընդ երակս երկրի՝ և ել ինչ գտեալ՝ միաժողով ի վեր դիմեալ թանճրացեալ ամնով ահագին դղրդիւնս առնէ՝ մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել, և վէմս խլել, և զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկենու յերկիր. և այսէ զոր վիշապ հաննել ասեն»։ Նոյն տեղում բերած է և Վսնական վարդապետից. «Յայլ և այլ կողմանց հողմ շնչէ և ընդ իրար դիպի, այն Փոթորիկ ասի. թէ ոչ յաղթեն զիրար՝ ոչորին ընդ իրար, և ի վեր ելանին. տխմարք զայն տեսեալ՝ վիշապ կարծեն կամ այլ ինչ»։ Նոյն գրքի մէջ եր. 153 բերած է «փոթորկի» մասին Սարկաւազ վարդապետից. «Առասպելական ստուծեանն ունին գնել և հաւատալ մի՛ երբեք յանձն առնուցուս վիշապ զնա տնուանողաց»։

Այսպէս մեր «բաջաղանքնիրի» և «առասպելների» մէջ վիշապը ներկայանում է պարզապէս իրրև փոթորկի, պտուտահողմի, ինչպէս և փոթորկալից ամպի, անձնաւորում և միանգամայն իրրև փոթորիկ ու պտուտահողմ՝ «թանճրացեալ ամպով» նման յունաց ծիւփոնին (Τυφώς), որ նշանակում է պտու-

ասհողմի փոթորիկ կայծակներով ու որոտմունքով, և միանգամայն մի առասպելական էակ է օձանման, մի վիշապ, որ «իւր հրեղէն շնչով և ամպերի ծխով կամ շողիով լցնում է երկինքը» և իրրև ամպրոպային վիշապ է ներկայանում: Նա «մերթ իրրև երկրի որդի է երևում: մերթ երկնային զիցուհի Հերայի որդի... առաւելապէս սակայն երկրաւծին է, ինչպէս բոլոր ամպրոպային էակները՝ զիգանտներն ու վիշապների ամբողջ սերունդը, որ երկնքի դէմ է ելնում: զի երկնից, այսինքն հորիզոնի վրայ են բարձրանում նոքա, ինչպէս դեռ ասում ենք, «փոթորիկ է բարձրանում»: 1

Այս գալարուող վիշապը՝ Տիւփոն, որից ծնունդ են առնում բոլոր չար հողմերը, Հեզիոգի Թէոգոնիայի մէջ նկարագրուած է իրրև հարիւրգլխանի օձ, որի աչքերից ու զլուխներից բոցեղէն ճառագայթներ են ելնում: հայեացքն այրում է կրակի պէս. հանում է զանազան հրաշալի ձայներ, մերթ կատաղած ցուլի նման բառաչում է խուլ, մերթ առիւծի նման մռնչում, մերթ շների նման հաջում կամ սուր սուլուցներ հանում: 2 Այսպէս և

1. F. Schwartz, Ursprung der Mythologie, էր. 30.

2. Եոյն, էր. 30 հս.:

մեր վիշապը, իբրև փոթորկի կամ ամպի էակ, Նզնիկի մէջ «կեղծս ի կեղծս է լինում» (եր. 102) այսինքն զանազան կերպարանքներ է ընդունում, մի անգամ օձաձև է երևում, միւս անգամ մարդակերպ (եր. 106), երբեմն իբրև ուղտ ու ջորի կամ այլ դրաստ, և երբեմն իբրև օրսի ետեից ընկած ձիաւոր (եր. 107), Այլ և վիշապի մասին պատմում է Նզնիկ (եր. 103, 106) թէ կալերից ցորենը գողանում է և գրաստի վրայ բարձած կամ ինքը գրաստ դարձած տանում է: Նոյնը պատմւում է շատ ազգերի զրոյցների մէջ վիշապի մասին, իբրև փոթորկի կամ ամպրոպի անձնաւորումի, ¹ կամ գերմանացոց մէջ սրտի մասին, որ պտուտաճողմի անձնաւորումն է: ²

Միջին դարերում արդէն վիշապի տեղ ւստանան է անցնում, և «փոթորկի մէջ իշխող սատանայի պատկերացումը դեռ մնում է պտուտաճողմի վրայ կապուած», ³ շատ ազգերի մէջ, ի թիւս որոց և հայոց մէջ, քանի մեր ժողովուրդը պտուտաճողմն ու «վիշապ հանելն» այժմ կոչում է «սատանի քամի»:

1. F. Schwartz. Poetische Naturansch. II. հր. 89:

2. Manhardt, der Baumkultus, հր. 69, 127, հո. հոյճ. Antike Wald—und Feldkulte, հր. 94. Laistner, Das Rätsel der Sphinx II. 275. 281.

3. F. Schwartz, Ursprung der Mythologie, հր. 30:

Այնուհետև վիշապների մասին պատմը-
ւում է մեզնում թէ «լտոհմականս անդէոյ
ծծեն»,¹ կամ կովերի կաթը ծծում են, և
թէ վիշապների բերանից թունաւոր շողի է
դուրս գալի, որ վնասում է անասուններին
ու մարդոյ: ² Այս գծերն ևս ուրիշ ազգերի
մէջ փոթորկի վիշապի կամ պտուտահողմի
անձնաւորումի մասին են պատմում: ³ Ինչպէս
և թէ մեր և թէ ուրիշ ազգերի զրոյցները
մէջ վիշապների բնակուելը բարձր սարերի
վրայ և քարայրերի մէջ առնուած է պտու-
տահողմի երևոյթից և ամպերի յաակութիւ-
նից:

Թողնում ենք վիշապի մասին պատմուած
ուրիշ զրոյցները, որոնց մտնրամասնութեան
մէջ մաննլու տեղը չէ: Բերածներից արդէն
պարզ երևում է, որ վիշապը մեզնում ևս
փոթորկի, պտուտահողմի կամ փոթորկալից
ամպի անձնաւորումն է:

Այդ առասպելներից մեզ համար արժէք
ունի «վիշապ հանելը», կամ «վիշապի վերա-
նալը երկրից երկինք», ինչպէս զրում է Վահ-

1. Այլշան, Հին Հաւաստի, եր. 194:

2. Հմեռ. Եզնիկ, եր. 107:

3. Manhardt, German. Mythen. եր. 48. Նոյն Au-
tike Wald—und Feldkulte, եր. 103. Schwarzf, Poet. Na-
turansch. II. 164. Նոյն, Ursprung der Mythologie 30. 31.

րամ վարդապետս ¹ Դա ամպրուպային կռիւն
է Տեսանք, ինչպէս յունաց մէջ Տիւփոնն ու
գիգանտները երկրից վերանում են երկինք,
նորա վերանում են յատկապէս ամպրուպային
Ջէսի դէմ կռուելու, որ և իւր կայծակնե-
րով խորտակում է ու ցած զլորում նոցա
Գերմանների մէջ ևս Որոտը (Donner) կամ
Թոոը հալածում է պտուտահողմի անձնա-
ւորումներին՝ արոշներին և ուրիշներին. ² և
«Ջէսի կռիւը Տիւփոնի դէմ նոյն է՝ ինչ որ
նորան համապատասխանող դերմանն զրոյցի
մէջ Թոոի թշնամութիւնը արոշների դէմ՝
Որոտինը վալդվայրների (Waldweiber), գեերի
(Riesen) և ուրիշների դէմ»։ ⁵

Բայց ի՞նչ է այդ կռիւը—վիշապը, պը-
տուտահողմի կամ ամպրուպի շար անձնաւո-
րումը, իւր ընկեր շար ոգիների հետ իրդե
հոյմ «թանձրացեալ ամպով» բարձրանում է,
արեգական լուսոյ երեսը կտրում, կամ փո-
թորի մէջ յարձակում է արեգական վրայ,
որ իրբև աղջիկ է անձնաւորում, և յափշտա-

¹ Աշխատն, Հին Հաւաստ. եր. 172. «Յոյով մար-
դիկ տեսեալ են զի վիշապ վերանայր յերկրէ յեր-
կինս»։

² Manhardt, Baumkultus, եր. 149.

⁵ Manhardt, Ant. Wald—und Feldkulte եր. 102:

կում է նորան. ¹ կամ ուրիշ առասպելներով
երկնային անձրեւաբեր ամպերի ջրերի առաջը
կտրում է և վայր հոսելն արգելում է՝ ա-
նոնց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուր-
գեր կանդնելով: Դսկ փոթորկի կամ ամպրո-
պի աստուածը, որ մի և նոյն օգերեւոյթի
բարի անձնաւորումն է, ինչպէս հնդկաց մէջ
Ինդրան, երբեմն և Ագնին, կայծակներով ու
որոամուռքով, Մարուաների (հողմերի անձնա-
ւորում աստուածներ) հետ կռում է վիշա-
պի և նորա չար ոգիների դէմ: Խորտակում
նորա բուրգերը կամ լեռները, սպանում նո-
րան և ազատում է արեգակն և կամ ջրերը
վայր է հոսեցնում:

Այսպէս և մեր ժողովրդական զրոյցների
մէջ «մեծ վիշապը» հալածում է արեգակը.
նա «չարոց» հետ փոթորկի ժամանակ երկինք
է վերանում արևը, որ իբրև սղջիկ է պատ-
կերանում, կուլ տալու կամ նորա դէմ հա-
կառակելու, որ մարդիկ նորա «լոյս երեսը»
չտեսնեն: Բայց Գարրիէլ հրեշտակը, ուրիշ
հրեշտակների հետ ելնում է նոցա դէմ և
կռում: Որոտն այդ կռուի ժխորն է, փայ-
լակը Գարրիէլի թրի փայլքը, կայծակը նորա:

¹ W. Schwartz, Indogermanischer Volksglaube.
տ. 112.

նետը և ծրածանը նորա աղեղը: ¹ Նոյն առասպելն ուրիշ ձևով պատմւում է թէ թեւաւոր վիշապը, երբ մեծանում է, վտանգաւոր է գտնուում: Բայց այդ ժամանակ հրեշտակները նորան երկրից վեր են հանում փոթորկի ժամանակ: վիշապը կուում է նոցա հետ: հուր շնչում և ջուր փչում երկրի վերայ: կռուից առաջանում է փոթորկի շառաչիւնը: Բայց հրեշտակները շարունակ ծեծելով վեր են հանում նորան, մինչև արևի մօտ: որի կրակն այրում ու մոխիր է դարձնում նորան և մոխիրը թափում է երկրի վերայ: կամ երկնքի բարձրութիւնից թողնում են որ ընկնի գետին ու մանր մանր վիշուի: ²

Շատ պարզ է, որ հրեղէն պատանի Գարրիէլ հրեշտակն իւր կայծակով և աղեղով՝ ամպրոպային կռուի մէջ փոխանակել է քրիստոնէութեան ժամանակ հեթանոսական ամպրոպային աստուծուն: հաւանօրէն հրեղէն պատանեակ Վահագնին, որի կռիւն ևս վիշապների դէմ իրրև այսպիսի ամպրոպային կռիւ պիտի ըմբռնուած լինի, քանի որ մի կողմից

1. Հմմտ. Գրոց Բրոց, եր. 109. Ազգագրական քերթ. II. եր. 220:

2. Հմմտ. Սրուանձեւան, Գրոց Բրոց, եր. 92. Ազգագրական քերթ. I. եր. 351. Հմմտ. M. Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899. եր. 77—8 2.

վիշապն ամպրոպի կամ փոթորկի անձնաւորութենէ, իսկ միւս կողմից՝ Վահագն ամպրոպային աստուծու յատկութիւննէր ունի իւր երգի մէջ: Թէ իրօք այդպէս էլ եղել է, այսինքն Վահագնի կոիւրվիշապների դէմ մեր հին ու նոր ժողովրդական հաւատալիքի համեմատ ամպրոպային կոիւ է եղել, այդ ցոյց է տալի մեզ նաև նորա վիշապաբառ մտկանունը:

Վիշապաբառը:— Ի՞նչ է նշանակում Վահագնի այս մակդիրը, որ կայ Ագաթանգեղոսի մէջ: Անշուշտ, ոչ վիշապ ու քաղ (Drache—Boek), ինչպէս թարգմանում են կամ բացատրել են ուզում սմանք,¹ քանի որ աւանդուած կայ Վահագնի կոիւր վիշապների դէմ: Բայց և ոչ «վիշապասպան» կամ «վիշապ խեղդող»,² ինչպէս թարգմանում են ըստ Ագաթանգեղոսի յունարէն թարգմանութեան: Ըստ իմաստի անշուշտ ուղիղ է այս վերջինը, զի Վահագն յաղթում է վիշապներին. բայց «վիշապաքաղ» բառը բառացի ոչ վիշապ «սպանող» է նշանակում և ոչ «խեղդող», քանի որ «քաղել» բայի «քաղ» արմատն այդ իմաստները չունի:

1. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895-Արիշան, Հին Հայաստ. եր. 153. 173:

2. Hübschmann, Armen. Grammatik. I. 76. H. Gelzer, Zur armen. Götterlehre, եր. 104:

Քաղել Հայկ. լեզուի Նոր Բառգրքի մէջ բացատրած է ի միջի այլոց. «Ժողովել՝ խլել հանել»¹ իսկ այդ բայի քաղ արմատը բացատրած է. «Քաղելի խոտ անպիտան և փնասակար»: Այս իմաստով «քաղ» բառը գործ է ածւում և ժողովրդի մէջ, որից և բաղադրեալ բայը՝ քաղը տալ, կամ քաղհանել, որ է ցանքի միջից փնասակար խոտերը կտրել հանել, ժողովել: Աւելի գործածական է նոյն իմաստով կրկնուած քաղհան(ք) բառը: Այս իմաստի վրայ պէտք է աւելացնել և ժողովրդի մէջ գործածական վեր քաղել ձևը, որ նշանակում է հանել, վերացնել, վերցնել, և գործ է ածւում նաև հմայութեան մէջ, օրինակ «վախը վեր քաղել»: Այսպէս՝ ասում են և «Ամպ ու չանգը վեր է քաղւում» այ-

1. Հա ն ե շ նշանակութեամբ. «Ո՛ր ֆաղէ զհոգիս իշխանաց» (Սաղմ. 26. 13). «Կայր ի օտարկուսի եւ ֆաղէ ի նոցիք նորա». (Յովնան. 7. 8): Հայկ. լեզուոր Բառգրքի մէջ նաեւ. «Սկսաւ ոգի նորա ֆաղիլ ի նմանէ». «Գիրկս արկանեն եւ մա ֆաղէ զշունչ իւր»: Նոյն իմաստով հա ն ե շ բայի հետ կրկնուած. «Քաղէ ի հա ն ե շ զշունչ նորա»: (Եւսեբ. պատմ. 5. 1): Եղիշէի մէջ (Ա. յեղ. եր. 9). «Զի կոչես ի խորհուրդ զայնուսիկ՝ որոց զոգիսն մեր ի մէջ ֆաղէ ա շ հա ն ե շ զանպականդ յապականութիւն»: Եզնիկ (եր. 253). «Ի պատգամաց Հոգւոյն սրբոյ ֆաղ հա ն ե շ. զիկս աւետարանի շնորեշ առնուի՝ եւ զիկսն իբրեւ խոսան ի բաց բողոուի»:

սինքն քաշուում վերանում բարձրանում է: «Բաղել» բայի այս նշանակութիւնն անշուշտ նոր չէ, քանի որ նոյն վեր հանելու, վերցնելու, քարձրացնելով ժողովելու իմաստը կայ արդէն և միայն «քաղել» բայի մէջ, օրինակ՝ «Բաղէին զփշրանս ի ներքոյ սեղանոյ» (Դատ. Ա. 7), Այսպէս և հասկաքաղ (հասկերը գետնից վերցնելով ժողովող), սերմանաքաղ բառերի և «քաղել զոջիլ» ձևի մէջ. նոյնպէս և «Բաղելով գործեսցես զտապանն» (Ժննդ. Զ. 16), որ արդէն Հայկ. լեզ. Նոր Բառգրքի մէջ, համեմատած յունարէն ἐπιսυνάγω բառի հետ, թարգմանած է վերաժողովելով:

Արդ վիշապաքաղ բառացի նշանակում է վիշապ հանող, վիշապ վեր քաղող կամ ցածից վերցնելով ժողովող, այլ և վիշապ քաղահանող, այսինքն, ինչպէս քաղհանքի ժամանակ, վնասակար վիշապները հանող, վերցնող: Որ նշանակութիւնն էլ որ առնելու լինինք, «վիշապաքաղ» բառն արտայայտում է մեր հին ու նոր ըմբռնումը, թէ վիշապները երկրից քաղհանուում, հանուում վերցուում, վերանում են, Եզնիկն (Եր. 107) այդ իմաստը յայտնում է ըստնալ բայով. «Եթէ ըստնայցի ի վեր այնպիսի վիշապն», ուրիշների մէջ նոյն երևոյթն, ինչպէս տեսանք, «բառնալ» բայի համանիշ հանել բայով է արտայայտուած:

«վիշապ հանել» կամ վերանալ բայով. «վիշապ վերանայր յերկրէ յերկինս» կամ Սըրուանձաեանի մէջ քաշուել, վեր քաշել բայով. «վիշապը լեռներէն երկինք կը քաշուի» կամ «հրեշտակները վեր կը քաշեն վիշապները» — սակայն ոչ բոլոր վիշապները, այլ նոցա միջից առնելով, մի տեսակ քաղհասնելով, նոցա որոնք հազար տարեկան սարսափելի մեծացած և վտանգաւոր են, և կարող են «երկիրը կռւլ տալ»,¹ — իսկ աւելի հին ժամանակ նոյն վիշապ հանելն արտայայտուած է քաղել, քաղ բառով, որ նոյն իմաստն ունի, ինչ որ բառնալ, վերցնել, վերանալ, հանել, վեր քաղել, և շն:

Եզրակացութիւնը պարզ է: «Վիշապաքաղ» մակդիրը ցոյց է տալի, որ մեր հին հաւատքի մէջ Վահագնի կռիւը վիշապների դէմ ըմբռնուած է իբրև «վիշապ հանել» որին Ծղնիկի ժամանակից մինչև այսօր, հաւատում է մեր ժողովուրդը: Իսկ «վիշապ հանելը», ինչպէս տեսանք, ամպրոպային կռիւն է, որ ամպրոպային աստուածը մղում է փոթորկի մէջ վիշապի դէմ, որ, ինչպէս ուրիշ ազգերի, այդպէս և մեր հին ու նոր հաւատալի-

1. Սրուանձեան, Գրոց Բրոց, եր. 92, հս.:

քով ամպրոպի պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնաւորումն է: Եւ ի՛նչ է՝ «լեռներէն վիշապներուն երկինք քաշուելը» կամ «վիշապաքաղութիւնը» եթէ ոչ մի առասպելական արայայտութիւն միայն փոխանակ սովորական ասացուածի թէ «ամպ ու շանգը վեր է քաղում լեռների վերայ»:

Վահագն, Վերեթրագնա: — Վահագնի պաշտամունքի՝ իրանացիներից հայերին անցած լինելը և նորա անուան նոյն լինելը իրանական յաղթութեան աստուած Վերեթրագնայի անուան հետ՝ վաղուց ապացուցուած է: ¹ Արդ Վերեթրագնան բացատրում են թէ սկզբնապէս ամպրոպային աստուածութիւն է եղել: ² Թէպէտև պարսից Վերեթրագնայի համար յիշատակուած չկայ վիշապների դէմ կռիւը, որ յատուկ է բոլոր ամպրոպային աստուածներին, «բայց և այնպէս նա ճշտիւ պահպանել է հին Վրտրահան [Վրտրա սպանող, վիշապասպան] աստուածների բոլոր առասպելական և Ֆիզիկական

¹. P. de Lagarde, Armenische Studien, Göttingen. 1877. եր. 141. H. Hübschmann, Armen. Gramm. I. եր. 75. H. Gelzer, zur armen. Götterlehre եր. 104 հսկ.:

². Pott, Etymologische Forschungen, II. 3, եր. 557. Spiegel, Eran. Alterth. II. եր. 98:

գծերը, ¹ և սկզբնապէս ամպրոպային աստուած է եղել Վերեթրագնան, որի անունն իսկ ինդրայի մակդիրն է՝ Վրտրահան, թոյլ ձևով ձայնաւորներից առաջ՝ Վրտրագհնա: ² Արդ, քանի որ մեր Վահագնի անունն ու պաշտամունքն իրանացիներից է անցել հայերին, շատ պարզ է, որ այդ անցումն եղած է իրանական Վերեթրագնայի նախնական ամպրոպային յատուութիւններով հանդերձ, որոնք և երևում են մեր Վահագնի մէջ:

Պարսից Վերեթրագնան, իբրև ամպրոպային աստուած, ներկայանում է բազմատեսակ կերպարանքներով. իբրև պինդ քամի, իբրև ցուլ, ձի, ուղտ, տասնուհինգ տարեկան գեղեցիկ, փայլուն պատանեակ, այլ և իբրև թռչուն, վարագ, քաղ և տղամարդ: Նոյնպէս և Տիստրիան, իրանական ամպրոպային աստուածը, երևում է գեղեցիկ պատանեակի, արջառի և ձիու կերպարանքով: ինդրան երևում է յաճախ իբրև ցուլ: Յուրի կուրը վիշապի հետ փոթորկի ժամանակ կայ և գերմանական առասպելաբանութեան մէջ, ³ թէ մեր հին հաւատքի մէջ ևս ամպրոպային աս-

1. Darmesteter, Ormazd et Ahriman, էր. 125.

2 Grassmann, wörterbuch zum Rigveda.

3. E. H. Meyer, Germanische Mythologie էր. 97, 104.

տուածը զանազան կերպարանքներով երևեցած պիտի լինի, անհաւանական բան չէքանի որ ամպրոպային աստուածներն այդպէս են երևում, մանաւանդ որ մեր հին ու նոր հաւատալիքների մէջ գտնում ենք ամպրոպային էակների համար նոյն կերպարանքները: Ամպրոպային վիշապի իբրև ուղտ, ծիաւոր կամ ձի, ջորի երևելը տեսած ենք, և թէ ինչպէս որոտացող էակը պատկերանում է իբրև քամի, կով, և որ գլխաւորն է, Ծղնիկը (եր. 108) գրում է. «Թէ քառնայցի ի վեր այնպիսի վիշապն՝ ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւրիք»... որից պարզ երևում է, որ «վիշապ հանող» կամ «վիշապաքաղ», այսինքն վիշապ բարձրացնող էակը ներկայացել է և եզան կերպարանքով: Սակայն վիշապաքաղ Վահագնի համար յիշատակուած է միայն հրեղէն փայլուն պատանեակ կերպարանքը:

Վահագն, Հերակլէս:—Թորենացին երգի վերջի բովանդակութիւնից Վահագնի կռիւը վիշապների հետ և յաղթութիւնը բերելուց յետոյ՝ աւելացնում է. «Եւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նրմա երգէին»: ¹ Այս հատուածի քերականա-

1. Մայր Աթոռի գրադարանի Մ. Յ. № № 1686»

կան կազմութիւնը մեզ համար պարզ չէ: Հ. Ստեփանէն թարգմանում է. «Հերակլի քաջագործութիւններին շատ նման գործեր էին երգում նորա մասին»:

Հերակլի նահատակութիւնները կամ առասպելները շատ բազմազան սարերից են կազմուած, որոնցից շատերը զանազան ազգերի մէջ են գտնւում, ի թիւս որոց և իրանացոց մէջ: Իրանական Կերեսասպայի (kereşaspa) արարքները, օրինակ, ահագին վիշապ Սրուվար (Sruvar) օձին սպանելը, համեմատւում են Հերակլի արարքների հետ, ¹ և նոյն իսկ Տրիտա, Կերեսասպա, Հերակլէս, Թոռ, Ինդրա և ուրիշները, իբրև կայծակի հերոսներ կամ աստուածներ, իրենց առասպելներով հաւասարւում են իրար: ² Մաքս Միլլերն արդէն վաղուց ապացուցած է, որ Հերակլէսի արարքներից մէկը, որով նա սպանում է հսկայ Գերիոնէսի արջաուր (ամպերի հօտը) պահպանող շունը, ոչ միայն նոյն Ինդրայի քաջագործութիւնն է, այլ նոյն իսկ շան անունը՝ Օր-

1669, 1665, 1671, 1672, 616 ձեռագիրները հետեւեալ ընթերցուածն ունին. Պեւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ Ասեռասկոռէթիւնսն նմա երգելոյ»:

1. Spiegel, Eran. Alterth. I. 561 հօ.:

2. E. H. Meyer, Indogerman. Mythologie II. եր.

Թրոս ստուգաբանօրէն նոյն է, ինչ որ Դու-
դրայի Թշնամի Վրտրա ¹

Արդ, եթէ Հերակլէս ներկայանում է
իրբէ կայծակի հերոս, շատ բնական է, որ
հելլենիստական ժամանակներում, երբ յու-
նաց ազգեցութեան տակ տեղական աստուած-
ները ոչ միայն հայերի, այլ և ուրիշների մէջ
յունական աստուածների հետ նոյնանում էին
և յունական անուններով կոչւում, մեր Վա-
հագն հաւասար դասուէր Հերակլին, ինչպէս
և եղել է իրօք: Այդ դէպքը միակը չէ պատ-
մութեան մէջ. համանման մտածութեամբ և
գերմանական ամպրոպային աստուած Թո-
ռը կամ Դոնար հռոմայական ազգեցութեան
տակ նոյնացել է Հերկուլէսի հետ ²:

Պ. Խալաթեանը գրում է. «Վահագնի,
աւետական Վերեթրագնայի, և նորա նահա-
տակութեանց մասին զրոյցները, հին հայոց
աշխարհայեցողութեամբ, պէտք է իւրատե-
սակ, անկասկած, իրանական հրանգ (КОЛОРИТЬ)
ուռննային, ուստի և պէտք է նշանաւոր կեր-
պով տարբերուէին յունական առասպելներից
Հերակլի մասին. բայց այս երկու աստուած-

1. Kuhn's Zeitschr. f. vgl. Sprachforschung V.150:

2. Mannhardt, Germ. Mythen. եր. 235.

E. H. Meyer. Germ. Mythologie, եր. 202.

ների արտաքին, այսպէս ասած, զրական մեր-
ձեցման իրողութիւնից էլ հենց բոլորովին
քմահաճոյ եզրակացութիւն է անուժ հայ
պատմագիրը»¹ այսինքն Վահագնին վերա-
գրում է իրենից Հերակլի նահատակութեանց
նման բաներ: Պ. Խալաթեանի պատճառարա-
նութիւնը, սակայն, ոչինչ չէ ապացուցանում:
Հայոց Վահագնի մասին առասպելների «իրա-
նական երանգ» ունենալը կամ չունենալը
բնաւ չէ խանգարում: որ նա ունենար Հե-
րակլի նահատակութեանց նման արարքներ:
Առասպելաբանական գիտութեան այժմեան
դրութիւն ժամանակ, երբ իրարուց տեղով
ու ժամանակով հեռու ազգերի առասպելնե-
րի ու հաւատալիքների մէջ այնքան շատ և
ամբողջական նմանութիւններ են գտնում
երբ եգիպտական առասպելները սլաւոնների
մէջ, հին հնդկական զրոյցներն իսլանդացոց
մէջ են գտնում և նոյն իսկ Հերակլի առաս-
պելներն ուրիշների հետ և իրանացոց մէջ,—
միթէ անհնարին բան է, որ հայոց մէջ ևս
Հերակլի արարքների նման բաներ պատմուած
լինէին մի աստուծու մասին, որ նոյն իսկ
նոյնացել է Հերակլի հետ:

¹. Халат. Арм. Эпосъ кр. 204.

Եթէ այդ նմանութիւնը չէ եղած, հապա ինչով պէտք է բացատրել Վահագնի նոյնացումը Հերակլի հետ: Պ. Խալաթեանը խաբուսիկ բացատրութիւն է միայն տալի, այդ նոյնացումը կոչելով «արտաքին, այսպէս ասած, զրական մերձեցում»: Մինչդեռ այդ նոյնացումները, որ հիլենիստական կամ հռոմայական ժամանակներում եղել են զանազան ազգերի մէջ, լոկ արտաքին ու պատահական չեն և ոչ էլ միշտ «զրական» մերձեցում: այլ որևէ ներքին նմանութեան վրայ հիմնուած: Ինչո՞ւ Միհր, Տիւր կամ Արամազդ չեն նոյնացել Հերակլի հետ, այլ միայն Վահագն: Մի՞թէ արտաքին և պատահական է, որ Արամազդ Դիոսի հետ, Միհր Հեփեստոսի հետ, Անահիտ Արտեմիսի հետ, Աստղիկ Ափրոզիտէի հետ և Տիւր Ապոլոնի հետ են նոյնացել, թէ՞ որևէ ներքին նմանութիւն կայ այդ սաստաածների մէջ: Նմանութիւններն անշուշտ կան, և այդ նոյնացումներն աւելի բան էլ են ցոյց տալի. «Այս կատարելապէս հաստատուն և մասամբ քիչ յարմարող (համեմատեցէք Միհր—Հեփեստոս) համապատասխանութիւնը եզրակացնել է տալի, որ վաղուց ի վեր գործածութեան մէջ էր այն, և թէ մատնագիրները ժողովրդի մէջ իշխող սովորութիւնից են փոխ ա-

ուած այն: ¹ Կարծում ենք պ. Գեղեցիկի այս նկատողութիւնը ճիշտ է, և եթէ նա Միհր—
Հեփեսոսոս «քիչ յարմար» է համարում, հայոց
Միհրի բնութեանը լաւ ծանօթ չլինելու
պատճառով է այդ:

Թէ Վահագնի մասին, բացի վիշապների
դէմ կռուից, և ուրիշ նահատակութիւններ
են պատմուելի, անհաւատալի չէ այդ, քանի
որ արդէն աւանգուած կայ մէկը՝ Բարշամի
յարդը գողանալը, որից և Յարդգողի ծանա-
պարհն է գոյացել, որով անցել է Վահագն:
Եւ մի՞թէ Կաթին ծրի ծագումը յունաց մէջ
է, թէպէտև ուրիշ ձևով, Հերակլի մանկու-
թեան հետ չէ՞ կապուած, և կամ դա այն ծա-
նապարհը չէ՞, որով Հերակլ անցնում է Գերիո-
նէսի արջառը յափշտակած:

Պ. Խալաթեանը բաւական չէ որ Խորե-
նացու վզին կապում է, թէ իբր նա ա-
սում է թէ Վահագնի մասին երգը մի «վէ-
պի» հատուած է, այլ և առարկում է, հար-
ցնելով այսպէս. «Կարելի՞ բան է, որ Խորե-
նացու նման մի մատենագիր ձեռին ունենար
մի ընդարձակ ժողովրդական վէպ, ամբողջ
վիպասանութիւն (цѣлую эпопею), հոյակապ
քերթուած (грандіозную поэму) Վահագնի

¹. H. Gelzer, Zur armen. Götterlehre, ևր. 137.

մասին, և որքան կարելի է լիակատար չօգտուէր նորանից» այսինքն շատ բան մէջ չբերէր այդ «վէպից» իւր պատմութեան մէջ, Նւշտապում է պատասխանել. «Ակնյայտնի է, որ ո՛չ»: Արդարև, շատ ճարտասանօրէն է ստարկած պ. Խալաթեանը և մանաւանդ աւելի ճարտասանօրէն նկարագրած է, թէ ինչպէս պատմագիրը «ամեն յարմար միջոցից բռնուած է» «իւր հայրենիքի պատմութիւնն աւելի փայլուն ու փառաւոր» դարձնելու համար: Բայց և այնպէս նորա այդ ամբողջ առարկութիւնը¹ մնում է լոկ իրրև ճարտասանական ձև, քանի որ նա իրենից մի շինծու բան է ստեղծում ու վերագրում Խորենացուն և ապա իւր ստեղծածը հերքում: «Ամբողջ վիպասանութիւն», «ընդարձակ ժողովրդական վէպ», «հոյակապ քերթուած», և կամ նոյն իսկ Էմինի կարծիքը թէ «Այդ երգի մէջ իրենց պատշաճաւոր տեղն էին բռնում և հայոց պանթէոնի միւս աստուածները»,² լոկ ենթադրութիւններ, են և ընդունայն ենթադրութիւններ, իսկ պ. Խալաթեանի կողմից այլև մի ճարտասանական ձև — ուռեցնել, որ պատառելը հեշտ լինի:

¹. Халат. Арм. Эпосъ, кт. 203.

². Էմին, Մ. Խորենացիև եւ հայոց հիւս վկայերը. կտ. 38.

Խորենացին ոչինչ չէ գրում Վահագնի «վէպի» մասին, ոչ էլ այդ «վէպի» ընդարձակ, «ամբողջ» ու «հոյակապ» (գրանդիոզ) եղած լինելու մասին: Մեր գիտցածը միայն այն է, որ Վահագնի ծնունդն ու արտաքինը նկարագրուում է մի երգի մէջ մի քանի տողով. երևի, մի քանի տողով էլ նորա կռիւը վիշապների դէմ նկարագրուած կըլինէր: Այդպիսի փոքրիկ երգեր էլ կարող էին և նորա միւս նահատակութեանց մասին եղած լինել:

Բայց ինչո՞ւ «աւելի լիակատար» չէ օգտուում պատմագիրն այդ երգերից: Անոր համար արդեօք, որ սուտ է նորա գրածը, թէ՞ չէ ուզեցել: Եթէ սուտ է, մի՞թէ դժուար էր Հերակլի նահատակութեանց մի երկու դէպքի բովանդակութիւն յօրինելը «ճարպիկ» Խորենացու համար, որին այդպիսի ընդունակութիւն, և այն՝ ամենայն հանճարեղութեամբ, վերագրում է պ. Խալաթեանը:—Շատ հասկանալի է, թէ ինչո՞ւ պատմագիրն այդ երգերը մէջ չէ բերում: Որովհետև նա պատմութիւն է գրում և ոչ թէ առասպելաբանութիւն. իսկ մենք գիտենք թէ մեր պատմագիրը՝ որպիսի արհամարհանքով է վերաբերում առասպելներին և յատկապէս անոնց, որ գերբնական բաներ ունին իրենց մէջ: Վահագնի մասին բերածը, Խորենացու հայեացքով ա-

ուսպելի վրայ ոչ միայն քիչ չէ, այլ և շատ է: Ամփոփենք մեր եզրահացութիւնը Վահագնի և նորա երգի մասին:

Վահագն ըստ ամենայնի ամպրոպային կամ կայծակի աստուած է, համապատասխան Դնդրային, կայծակի աստուած Ազնիին, գերմանական Թոռին, պարսից Վերեթրագնային, Տիստրիային ևլն:

Վահագն իբրև ամպրոպային աստուած ծնունդ է երկնքի ու երկրի, երկնային ծիրանի [ամպերի] ծովի և երկնային բոյսերի՝ յաւկապէս կարմիր եղեգնի, որ [ամպերի] ծովի մէջ բոցավառում է, կայծակի աստուած Վահագնի ծննդեան ժամանակ: Իբրև ամպրոպի աստուած՝ հրամազ, բոցամիրուք, արեգակնաչեայ պատանեակ է:

Իբրև ամպրոպի աստուած ծնունելուն պէս վազում է վիշապի կամ վիշապների դէմ կռուելու: Մորա ծնունդն ու արտաքինն ամբողջապէս բնական օդերևոյթից են վերցրած: Կռիւն ևս օդերևոյթի ամպրոպային կռիւն է, քանի որ նորա թշնամի վիշապն ամպրոպային օդերևոյթի անձնաւորումն է: Մոյնը հաստատում է և «վիշապաքսող» մակերով, որ ցոյց է տալի թէ Վահագնի կռիւը վիշապների դէմ մեր ժողովրդի մէջ հին և նոր ժամանակներում յայտ-

նի «վիշապ հսնելն» է: Իբրև ամպրոպի աստուած նա «քաջ» մակդիրն է կրուժ և քաջութիւն շնորհում: քանի որ ամպրոպային աստուածներն, ինչպէս Ինչրան, ամենազօրն են, ուժեղ ու քաջ: Ինչպէս նորա պաշտամունքն ու անունը Իրանացիներից է անցել հայերին, այսպէս և նորա ամպրոպային յատկութիւնը, քանի որ իրանական Վերեթրազնա=Վահազն սկզբնապէս ամպրոպային աստուած է եղել: Նա իբրև ամպրոպի աստուած նոյնացել է հելլենիստական Ժամանակներում Հերակլէսի հետ, այլ և մերձեցել է Ապոլոնին, քանի որ վերջինս էլ ամպրոպային յատկութիւններ ունի. կամ թէ մեր Վահազնի մէջ ևս տեսել են արեգական երևոյթը, զի ամպրոպի և արեգական երևոյթների անձնաւորումները, բնութեան մէջ եղած նմանութեան պատճառով, շատ ազգերի առասպելների մէջ իրար փոխանակում են կամ իրար տեղ անցնում:

Վահազնի երգը, որ բովանդակում է այս հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստուածութեան մասին, հայոց հնագոյն ժողովրդական երգերից մէկն է, թէպէտև ուշ ժամանակ դրի առնուած:



Ե.

Հ Ա Յ Կ Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը

Այս առասպելը (Ա. Թ. Ժ. Ժա) ոչ միայն կարծեցեալ «Վէպից» առած, այլ և ժողովրդական համարելու համար անմիջական հիմունք չունինք: Խորենացին քանի անգամ պարզապէս յիշում է, որ գրաւոր աղբիւրից՝ Մար Աբասից է քաղած այն: ¹

Բայց, հակառակ Խորենացու վկայութեան, ժողովրդական զրոյցներ կամ վէպ են ուզում տեսնել անոր մէջ: Այսպէս շնորհ. Միարան Գ. Տ. Մկրտչեան ² Ա. գրքի Ժ. գլուխն ամբողջապէս Մար Աբասից քաղած համարելուց յետոյ՝ յարում է. «Միայն տեղ տեղ Խորենացին աւելացնում է. «Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» — «Արդարացուցանէ և այս զուսացեալ զրոյցս անգիրս»: Այս յաւելուածներից մենք իրաւունք ունինք հե-

1. «Յ որ մէ . . . երկրորդեմք այժմ»: «Ի նոյն մասէն կ'սկսեալ ասացից»: «Նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ» (Ա. Բ.): «Ասէ» (Մար Աբաս). «Յ ի շի եւ աս սա նօր (Մար Աբասի պատմութեան այս հատուածի մէջ էլ) պատմութիւնս» (Ա. Ժ.): «Եւ յառաջ մատուցեալ գրանս իւր ասէ (Մար Աբաս): Ասէ» (Ա. Ժա.):

2. Խոր. պատմ. ուսումն. եր. 64:

տեյնելու, որ Խորենացու նկարագրութիւնները որչափ Մարաբասի նոյնչափ եւ թերեւս աւելի էլ զրոյցների հետեւութեամբ են զրուած: Եւ ապա քիչ ստորեւ շարունակում է նա. «Խորենացին... Մարաբասի համառօտ հատուածը երկրորդելով, քիչ թէ շատ ենթարկում է իրեն ծանօթ վիպական երգերի և զրոյցների ազդեցութեանը: Եւ նոյն կարծիքն ունի և յաջորդ ԺԱ. գլխի նկատմամբ:

Սակայն այդ սխալ է: Խորենացին Հայկի պատմութեան համար ոչ մի տեղ անգիր զրոյցներ կամ վէպ, վիպական երգ չէ յիշում: Ինչպէս յայտնում են Էմին, պ. Խալաթեան, շնորհ. Միսրան և ուրիշները: Ժ. գլխի մէջ երկու անգամ յիշած «անգիր հին զրոյցները» զարմանալի կերպով սխալ թարգմանելով միայն՝ վերագրում են Հայկին: «Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» թարգմանում է Էմինը. «То оправдывается древними устными сказаніями, «Այս արդարանում է հին անգիր զրոյցներով»: Եոյնպէս և պ. Խալաթեանը¹. «Անգիր հին զրոյցներ, որոնք արդարացնում են հայոց Հայկ նահապետի մասին տարեգրական պատ-

¹ Халат. Арм. Эпосъ кр. 43.

մութիւնը, որ կայ Քաղդէական գրքի մէջ»։ Ուրեմն դուրս է գալի, որ կային ժողովրդի մէջ Հայկի մասին գրոյցներ և Խորենացին ուզում է այդ անգիր զրոյցներով արդարացնել Հայկի ապստամբութիւնն ըստ Մար Աբասի։ Այդ թարգմանիչները, սակայն, մոռանում են, որ այդպէս հասկանալու համար՝ բնագրի մէջ պէտք է լինէր. «Զայս արդարացուցանեն անգիր հին գրոյցք»։¹ Բնագիրը յեղաթիւրելով և այս դերանուան տակ ամբողջ գլխի պատմութիւնը. «Յաղագս ապրատամբութեանն Հայկայ» հասկանալով², ի հարկէ հեշտութեամբ երևակայում է թէ Խորենացու յիշած այդ զրոյցները Հայկի պատմութեանն են վերաբերում, մանաւանդ երբ մարդ մտադրուած է, ինչպէս Էմին, ցոյց տալ թէ հայոց հին պատմութիւնը վէպից, զրոյցներից և չն. քաղուած է, կամ թէ, ինչպէս պ. Խալաթեան, թէ իբր Խորենացին «Վէպի» տեղ է ուզում ծախել շատ բան։

Հ. Ստեփանէն միայն, նկատելով Էմինի սխալ թարգմանութիւնը, բառացի թարգմանում է. «Այս արդարացում է ան-

1. Հմմտ. Ա. յր. «Եւ աշխարհիս մերոյ առասպելք գրագմահմուտ Ասորիս արդարացուցանեն»։

2. Халаф. Арм. Эпосъ, кт. 43. ծան. 3.

գիր հին զրոյցները» իսկ երկրորդ անգամին: «Այս աւանդութիւնն ևս ճշմարտացնում է անգիր զրոյցները»: Սակայն այդ թարգմանութիւնն ևս բոլորովին անսխալ չէ: Այդտեղ ևս բնագիրը յեղաթիւրած է: Հ. Ստեփանէն ևս միւս թարգմանիչների հետ, առանց որևէ ծանօթութեան, գուրս է ձգում ասացեալ բառը, որ յօրենացին զնում է երկու անգամին ևս:

«Ասել» բայը մեր պատմագիրը շատ յաճախ «յիշատակել» «պատմել» բայերի իմաստով է գործ ածում: իսկ «յառաջագոյն ասացաք» (Ա. թ.), «Ռոպէս վերագոյն ասացաք» (Ա. ժբ. ժէ.) ևլն դարձուածների փոխանակ գործ է ածում միայն անցեալ դերբայը՝ ասացեալ: «Սակայն ասացեալ (վերևում յիշատակած) ազգաբանութիւնդ հաւաստի է» (Ա. Ե): «Ոչ յառաջինսն մեր ասացեալ (արդէն պատմած, գրած) գիրս, և ոչ ի վերջին բանս» (Ա. երկրորդ յաւելուած): Նոյն տեղում: «Այս է առաջին նորա ասացեալն և անբարի բարբարութիւնն»¹: «Ոմն Մորփիւղիկեայ միարա-

1. Հ. Ստեփանէն բարգմանում է. «Այս է նորա առաջին եւ անբարի ասուած (եկոչուած, անուանուած) բարերարութիւնը». բայց պէտք է հասկանալ. «Այս է նորա՝ վերելում յիշատակուած առաջին եւ անբարի բարերարութիւնը»: Վերելում (Ա. յաւելուած) յիշած է այդ նոյն

նեալ զասացեալ (վերևում յիշուած) կողմանա-
զայտոսիկ» (Բ. Դ. Գ.): Այսպէս և «Այս արդարա-
ցուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» նշա-
նակում է. «Այս արդարացնում է վերելում՝
յիշատակուած անգիր հին զրոյցները»:

Կընշանակէ վերևում Խորենացին պատ-
մել է անգիր հին զրոյցներ, որոնց ճիշտ կամ
սուտ լինելը պատմագրի համար՝ այդ զրոյց-
ների մասին գրելիս յայտնի չէ եղել, և այժմ
Մար Աբասի պատմութեամբ ճշտում է այդ
վերևում յիշած զրոյցները, և ոչ թէ Մար
Աբասի պատմութեան համար վկայութեան է
բերում անգիր հին զրոյցներ, ինչպէս յեղա-
շրջած կամ յեղաթիւրած հասկանում են:

Որո՞նք են վերևում յիշած այդ անգիր
հին զրոյցները:

Հաւաստեալ Ա. զ. «Յաղագս Ոլոմպիո-
դորայ փիլիսոփայի անգիր զրոյցացն» վեր-
նագրի տակ պատմած հին զրոյցները, թէ մեր
հասկացածը ճիշտ է, շատ պարզ կարելի է
տեսնել զրոյցների բովանդակութիւնից:

Ոլոմպիոդորոսի անգիր զրոյցները, որոնք
բնաւ առնչութիւն չունին Հայկի առասպելի

բառերով, բայց առանց սասցեսալ բառի «նւ անբառի
առաջնոյ նորս բարերարութեանն»: Իսկ երկրորդ անգա-
մին սասցեսալ բառով միայն վերևում յիշած յիշեցն
է յայտնում:

հետո վերաբերում են Հայաստանում կամ Հայաստանի սահմանների վրայ—յատկապէս Տարօնում և այնտեղում ուր Նոյ (Բախուժրէս) ցամաք է կելլի — ջրհեղեղից յետոյ բնակիչներ լինելուն: «Յետ նաւելոյ Բախուժրէսայ [Նոյի] ի Հայս և դիպելոյ ցամաքի» զնայ... մի յորդուոց նորա [Նոյի] կոչեցեալն Սիմ ընդ արեւմուտս հիւսիսոյ գիտել զերկիրն, և զիպեալ դաշտի միում փոքու առ երկայնանստիւ միով լերամբ, գետոց ընդ մէջ նորա անցանելով ի կողմանս Ասորեստանի, դարարէ առ գետովն երկուսնեայ աւուրս և անուանէ յանուն իւր զլեւան Սիմ: և դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկն [այսինքն այնտեղ, ուր տապանը ցամաք էր կելլի]: Իսկ ի կրտսերագունից որդուոցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերօք և հնգետասան դստերօք, և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն, ընակէ անդրէն ի նոյն գետնգետքն, յորոյ անուն և գաւառն անուանէ Տարօն, և զսնուն անդուոցն ուր բնակեցաւն՝ կոչէ Յրօնս: զի անդ զառաջինն սկիզբն կելլ բաժանելոյ որդուոց նորա ի նմանէ»:

Այս անգիր զրոյցների մէջ յիշուած երկու աշխարհագրական տեղերից, ուր Նոյի որդիքը բնակուած են, Տարօնը յայտնի է ՌԻՐՆ է այն տեղը, ուր Բախուժրէս [Նոյ]

ցամաք է ելնում: և ուր Միմ վերադառնում է գէպի Տարօնի կողմերը գնալուց յետոյ: «Ընդ արևմուտս Հիւսիսոյ» (գէպի Տարօն) և «յարևելս Հարաւոյ» (Տարօնից) ուղղութիւնը ցոյց է տալիս: որ տապանի ցամաք ելած: ուստի և Միմի բնակած տեղը, ըստ Ոլոմպիոգորոսի գրոյցների, Տարօնի Հարաւարևելեան Կորդուաց կողմերում պէտք է որոնել: Եւ արդարև, բոլոր Հին աւանդութիւններով տապանը ցամաք է ելնում ոչ թէ Մասիսի վրայ, այլ Կորդուաց կողմերում: «Հնագոյն աւագութիւնը չի գիտել՝ թէ Նոյայ տապանը Մասիսի վրայ է իջած: Ղազար Փարպեցի (Ե. դար) Այրարատ գաւառի՝ ագեւորութեամբ զրած նկարագրութեան մէջ (Գլ: է. և ը.) չի յիշեր բնաւ՝ որ Այրարատայ մէջ Նոյայ տապանին լեռը կայ: Նոյնպէս Մովսէս Խորենացի ոչ Պատմութեան և ոչ Աշխարհագրութեան մէջ ամենևին չի յիշատակեր: Իսկ Փաւստոս Բիւզանդացի (Գ. 10) կաւանդէ՝ որ ս. Յակոբ Մծբնացի տապանին ֆնացորդները գտած ըլլայ ի լերին «(Մ)արարագայ ի սահմանս այրարատեան տէրութեանն ի գաւառն Կորդուաց:» Ըստ այսմ Դ. դարուն հայերն, ինչպէս նաև Ասորիք ու Բաղնլացիք, Նոյայ տապանին լեռը [Արարատ] ոչ թէ Մասիսի սահմանները, այլ Կորդուաց աշխարհին:

մէջ կփնտռէին: Առաջինն, որ իրօք Մասիսը Նոյայ տապանի լեռը կը համարի, է Ս. Հերոնիմոս (Comm. in Isaiam XI 38 vo 1. IV¹ p. 467 ed. D. vallors): Այսպէս ուրեմն օտար զիտնականներու կարկատանք է այս, որ շատ ուշ — յամենայն դէպս ոչ յառաջ քան զԹ. կամ Ժ. Դար — Հայաստան մուտ գտած է:»¹ Թոմա Արծրունին (Պետրք. եր. 19) գեռ զրում է թէ Տապանը Կորդուաց լեռների վրայ է նստել: Ուրեմն, ըստ «Ոլումպիոգորոսի անգիր զրուցացն» Տարօնում և տապանի ցամաք ելած՝ տեղում, — Տարօնի հարաւ — արևելեան՝ Կորդուաց կողմերում [Արարագում] — բանկում են Նոյի որդիքը: Պատմագիրն այս, ըստ Ոլումպիոգորոսի զրուցացն, յիշատակելուց և Հայոց «երգք ցցոյ և պարուց» վկայութեան կոչելուց յետոյ, աւելացնում է. «Եւ այսօրիկ զրոյցք սուտ և կամ արդարև լիալք, մեզ չէ ինչ փոյթ»: Բայց երբ մեր պատմա-

1. Հ. Պեչեր, Համսոս պատմութիւն Հայոց. քաղգմ. Հ. Գր. Քաշկեֆեարեան, Վիեննա 1897, եր. 6 հս: Տևս այս մասին մտերամասներ, ինչպէս և Կորդուաց կողմերի Արարագի մասին, ուր գալիս է Հայկ., К. Патканов, Банскія надписи, С. Петербурга 1881 եր. 92 հսև. Նորայր Բիզանդ, Քենասեր, Պրակ Ա. եր. 43 հսև. 61 հսև. Պրակ Բ. եր. 64. Միարան, Հայկականի, Վարդուշապատ, 1894 եր. 18 հս.

գիրը Հայկի պատմութեան մէջ ըստ Մար Աբասի գտնուած է յիշուած թէ միևնոյն տեղում Արարադում: [ուր տապանը ցամաք է ելել], բնակում են յառաջագոյն ցրուած մարդիկ, ¹ —իսկոյն աւելացնում է թէ «Այս (Արարադոյ երկրում: Կորդուաց մէջ, յառաջագոյն ցրուած մարդկանց բնակած լինելը ըստ Մար Աբասի) արդարացուցանէ զանգիր Հին ասացեալ զրոյցս (Ոլումպիոզորոսի թէ տապանի ցամաք ելած տեղում: որ միևնոյն Արարադն է Կորդուաց մէջ, բնակել է Սիմ):

Այնուհետև շարունակում է Խորենացին ըստ Մար Աբասի. «Եւ ինքն [Հայկ]-խաղաց [Արարադից], ասէ [Մար Աբաս], այլով ասիխուն ընդ արեւմուտս հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում: և անուանէ զանուն լեռնագաշտակին Հարք...: Յիշի եւ աստանօր [Մար Աբասի պատմութեան այս տեղում էլ] պատմութիւնս. հարաւոյ կող-

1. Չու արարեալ գնաց [Հայկ] յերկիրն Արարադայ. որ է ի կողմանս հիւսիսոյ [Բաքիշոնի համեմատութեամբ, Վանի հարաւային կողմերում, Կորդուաց միջ] ... Երբեայ ղնակէ ի շեռնոսիւն միում ի դաշտավայրի յորում սակաւք յառաջագոյն ցրուելոցն դադարեալ ղնակէին, զորս հնագանդ իւր արարեալ Հայկ: շինէ անդ տուն ղնակութեան կաշուածոց եւ օայ ի ժառանգորիւն Կապանայ որդոց Արմենակայ:»

մանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստիւ
միով լերամբն քնակեալ յառաջագոյն սրբ
սակաւք՝ ինքնակամ հնազանդել զիւցաղիննս
Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս
անգիրս»:

Արդ՝ Հարքի հարաւային կողմում Տա-
րօնն է Սիմ լեռան ստորոտներում: Յիշենք
ըստ Ոլոմպիոգորոսի անգիր զրոյցների՝ Սիմի
գնալը Տապանի ցամաք ելած տեղից—Արա-
քաղից—դէպի Տարօն՝ ընդ արեւմուտս հիւ-
սիսոյ՝ որ ուղղութեամբ և Հայկն է գնում և
քնակուելը Տարօնում ի պաշտի միում փո-
քու առ երկայնանստիւ միով լերամբն» որ է
Սիմ լեռը. որտեղ և Սիմի որդին Տարբան
մնում իւր մարդկանց հետ—այն ժամանակ
հասկանալի կը լինի Խորենացու խօսքը թէ
«Արդարացուցանէ եւ այս (Տարօնում առ եր-
կայնանստիւ լերամբն Սիմի յառաջագոյն
քնակութիւն լինելն ըստ Մար Արասի) զա-
սացեալ անգիր զրոյցս» (Ոլոմպիոգորոսի թէ
Տարբան իւր մարդկանց հետ մնում է Ջրհե-
ղեղից յետոյ Տարօնում առ երկայնանստիւ
լերամբն Սիմ)»:

Այսպէս՝ երկու անգամ դործածած այս
դիրանունն տակ պէտք է հասկանալ ոչ թէ
ամբողջ Ժ. դլիսի պատմութիւնը «Յաղագս
ապստամբութեանն Հայկայ» այլ Ջրհեղեղից

յետոյ, Հայկի գալուց առաջ, մարդկանց բընակուած լինելը՝ առաջին դէպքում՝ Արարադում, ուր տապանը ցամաք է ելած կորդուաց մէջ. իսկ երկրորդ դէպքում՝ Տարօնում Այդ երևում է և այն հանգամանքից, որ դժուար է կարծել, թէ պատմագիրը միևնոյն գլխի մէջ երկրորդ անգամ մի քսնի տող միայն յետոյ, միեւնոյն ըստերով նոյն վկայութիւնը կրկնէր նոյն բանի համար՝ «յաղագս ապրստամբութեանն Հայկայ», մանաւանդ որ երկրորդ անգամ գրած է. «Յիշի եւ աստանոր» «Արդարացուցանէ եւ այս» «այս էլ նաեւ այս», որից պարզապէս երևում է, որ երկրորդ այս դերանուան ժակ ուրիշ բան պէտք է հասկանալ, և ոչ ինչ որ առաջին այս-ի տակ հասկացւում է:

Հայաստանում, Հայկի գալուց առաջ, մարդկանց բնակութիւն լինելն առհասարակ բաւական գրադեցնում է Պորենացուն: Այսպէս Ա. ժր. գրում է. «Բայց սքանչելի իմնասէ պատմագիրն [Մար Աբաս], թէ ի յոլով տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ»: Այստեղ «հին անգիր զրոյցների» հետ չէ կապուած առաջուց մարդկանց բնակութիւն լինելը, զի երկրի շատ կողմերի մասին է խօսքը. բայց հենց

որ մասնաւորապէս Տարօնի մասին է լինում
խօսքը՝ զարձեալ նոյն «Հին զրոյցները» մէջ
են գալի. «Զոր [զդժնեայ Սլաքն] ոչ կարեմ
հաւաստեաւ ասել, ի Հայկայ եթէ յառաջա-
գոյն քան զնա եղելոց յաշխարհին, զոր հին
զրոյցքն պատմեն լինել... Զսա կարգէ սա-
կաւ արամբք պահել զլեառնն, որսալ զքօշսն.
որք անուանեցան Սդիւնիք» (Բ. ք): Այստեղ
յիշուած Հին զրոյցները միեւնոյն Ոլումպիոդո-
րոսի Հին անգիր զրոյցներն են, աշխարհը
Տարօնն է և լեռը՝ Սիմ:¹

Նոյն զրոյցները չորրորդ անգամ ևս յի-
շում է պատմագիրը. «Եւ աստ ասեմ զրոյց
զսքանչելի ձերոյն՝ որ ասէր, թէ ի նախնեաց
աւնիմ սովորութիւն, որդի ի հօրէ առնլով
զյիշատակ զրօւցացս այսոցիկ, որպէս Ոլում-
պիոդորայն յաղագս Տարօնոյ եւ Սիմն կո-
չեցեալ լերինն» (Բ. հգ): Այստեղ այդ զրոյց-
ների հին և անգիր լինելը շրջաբանութեամբ
է բացատրում, մինչդեռ մնացած դէպքերում
Ոլումպիոդորոսի զրոյցները, և միմիայն անուր,
կոչւում են միշտ հին, անգիր:

Թէ ի՞նչ են այդ անգիր Հին զրոյցները
և թէ կարճ էին այդպիսի զրոյցներ լինել
հայ ժողովրդի մէջ, այդ մասին յետոյ:

1. Հնեմ. Բ. Կ Սիւրենեաց սեպհականորիւն Ողա-
կան ամրոցը Տարօնում եւ Սիմ լեռը:

Մեր քննութիւնից երևում է, որ Խորհնացու կողմից ոչ մի եւ ոչ իսկ մութն ակնարկութիւն ունինք Հայկի պատմութիւնը ժողովրդական գրոյցներից քաղած լինելուն: Պատմագիրը պարզապէս յայտնում է, որ միայն գրաւոր աղբիւրից է քաղած այն իսկ այդ գրաւոր աղբիւրը, ինչպէս նկատել ենք, կարող է և գիտնականների յերիւրում լինել ամբողջապէս: Տասներորդ գլխում Հայկի պատմութեան մէջ յիշուած հին անգիր զբրոյցները Հայկի և Բէլի առասպելի հետ առնչութիւն չունին, այլ Տարօնում և Արաբագում մարդկանց յառաջագոյն բնակութիւն լինելուն են վերաբերում: Խորհնացին չէ, որ ժողովրդական է համարում Հայկի առասպելը, այլ միայն մեր բանասէրներից Էմին, Միաբան և ուրիշները:

Այստեղ վերջանում է իսկապէս մեր ասելիքը Հայկի առասպելի մասին, քանի որ Խորհնացու յիշած և Խորհնացու ձեռով օգտուած ժողովրդական առասպելների ուսումնասիրութեան տեսակէտից՝ առանձին նշանակութիւն չունին այն թեր ու դէմ կարծիքները, թէ արդեօք Խորհնացու մէջ Հայկի առասպելը ժողովրդական վիպական բնաւորութիւն ունի, թէ՛, ընդհակառակն, մի շինծու յերիւրած բան է: Արդեօք

Խորենացի՞ն է յերիւրեւ այդ պատմութիւնը, թէ՞ այլ ոք: Խորենացին չէ յիշում այդ առասպելի ժողովրդական լինելու մասին: Եւ մեծ զարմանք չի լինիլ, եթէ դա Խորենացու կամ մի ուրիշի յերիւրածը լինի: Բայց կարող է այդ առասպելը նաև ժողովրդական տարր ունենալ իւր մէջ, զի պէտք չէ մոռանալ այն հանգամանքը, որ մի կողմից Աստուածաշնչի մէջ (Սասյի ԺԳ. 10. Յոր. ԼԸ. 31) Օրինոն համաստեղութիւնը Հայկ անունով է կոչուած, որով և Հայկ ներկայանում է, համապատասխան Օրինի, իբրև առասպելական որսորդ: Իսկ միւս կողմից՝ Ագաթանդեղոսի մէջ ևս գործածուած է հայկաբար բառը, հաւանօրէն «հսկայաբար» բառի իմաստով: ¹ Հսկայի իմաստ ունի Հայկ բառը և Փիլոնի թարգմանութեան մէջ, ուր հսկաների մեծութիւնը «հայկաշափ» բառով է արտայայտած: ²

Այս մութ յիշատակութիւնները ենթադրել են տալիս, թէ մի որևէ հսկայ Հայկի մասին զրոյց կամ առասպել կարող է եղած

1. «Առեւայ սխայագորն (Տրդատ) հայկաբար զուրարձանսն» (Ագաթ. Թիւրխու 1882 եր. 446):

2. Տէս Նոր Բաղդ. Հայկ լեզ. «Հայկաշափ» բառի օսկ. նշնակու Ճառտ. Արմ. Զոսո, եր. 75) 118. Իսկ Հայկի մասին աւելի մանրամասն ծանօթութիւններ հ. Ալիշան, Հիւն Հաւասի, եր. 236 հսն. 119 հսն.:

լինել հայոց մէջ, քանի որ գժուար է կարծել թէ թարգմանիչները Հայկ բառն իրենցից ստեղծէին Օրիոն և հսկայ նշանակութեամբ մանաւանդ որ ցայսօր ևս նոյն Վանայ կողմերի, ուր Հայկի արարքները կատարուել են, ժողովրդական երգի մէջ գտնում ենք Խէյքը = Հայկ բառը մի որոշ համաստեղութեան իմաստով: ¹ Եւ երբ մի անգամ որևէ Հայկի մասին ժողովրդական զրոյց կարող է եղած լինել, անհետք չէ ենթադրել թէ Խորենացու զբրաւոր աղբիւրը, Մար Աբաս կամ այլ ոք, յամենայն դէպս, ըստ իւր վկայութեան, ոչ Խորենացին, իւր Հայկի պատմութեան համար օգտուած լինի ժողովրդական զրոյցից: Ուրիշ խօսքով, ժողովրդական տարւրը կարող է, թէ-

¹ Շերեկց «Վանայ սագ», Թիֆլիս, 1885. Ա. եր. 52. «էլաւ Խէյք», ուր ծանօթութեան մէջ դրած է «աստեղաց այն խումբը, որ արշալուստն շատ առաջ տեսնուի և արեւելեան կողմից: Խէյք մերի մէջ յ սառը մի պայմանական նշան է միայն՝ ըստ Շերեկցի՝ վերջի փափկած ֆ ստոի արտասանութիւնը ցուցնելու համար: Հնձե. Տարէյֆ, սիէյֆ, իսակէյֆ, մրայգ, պայգ եւ նման գրութեան մեները: Սակայն «Խէֆ» մերը ենթադրել է սայի «Հայֆ»: Արդեօք բանահաւաքը վերջի կ սառը, որ նոյնպէս փափկում է այդ բարբառի մէջ, շիտթէյ է ֆ ստոի հետ, թէ այդ բառն իրօք ֆ ստոով է Վանայ բարբառի մէջ: Հայկը, ինչպէս հաղորդում է պ. Հ. Ամառեան, Մոկացի կոչում են «Խէֆեռ»:

պէտ և ոչ անմիջապէս մտած լինել Հայկի առասպելի մէջ: Այս ի նկատի ունենալով ահա անհետաքրքիր չէ տեսնել թէ արդեօք Հայկի պատմութիւնը Խորենացու մէջ ունի՞ ժողովրդական վիպական բնաւորութիւն, թէ չէ:

Հայկի առասպելի վիպականութեան խնդիրը:— Այս մասին ևս առաջին անգամ ուշադրութիւն դարձնողն Էմինն է: «Մկարագիր պատերազմին Բէլայ այնքան զեղուն է մանրապատում հանգամանօք ... մինչ զի անհար լինի մտազիր ընթերցողին չնկատել ի նոսին հետս երևակայութեան վիպասանին և այն՝ հայ վիպասանին»: ¹ Մի ուրիշ տեղ ² գրում է. «Այս հասուածներում ընթերցողը հանդիպում է այնպիսի դարձուածների, ւածականների և նկարագիրների» որք յատուկ են ժողովրդական վիպասանութեան»: Նա, Հայկի ամբողջ պատմութիւնը «Վիպասանութիւնից» Խորենացու ձեռով քաղած համարելուց յետոյ, նոյն իսկ աւելի հեռուն է զնում համարելով թէ «Պատմագիրը խանգարում է Նրգերի չափարերական ձևը և վիպասանների բանաստեղծական պատմութիւնըն աւանդում է արձակ ոճով: Այսպէս են՝

1. Էմին, Վեպհ հն. Հայ. եր. 97:

2. Նոյն. Մ. Խորենացի և Հայոց հին վեպերը եր. 39:

օրինակի համար, Հայոց նահապետի արտաքին նկարագրութեան վիպասանական նախերգանքը՝ որպէս և նորա արարքների նկարագրութիւնը»։ Էմինի հետեւողներից Շն. Միաբանը Հայկի առասպելի «պատմուածքի վիպական կերպարանքը» գտնում է «յատուկ անունների ժողովրդական ստուգաբանութեան» տեղագրական ծանօթութիւնների եւ վառվառն քանաստեղծական լեզուի մէջ»։¹

Միւս կողմից պ. Խալաթեանը կարծում է թէ Հայկի պատմութեան մէջ ոչինչ վիպական բան չկայ. դա հռետորական նկարագրութիւն է միայն՝ որի օրինակները գտնուած ենք նոյն Խորենացուն վերագրուած «Պիտոյից» գրքի մէջ»։ Պ. Խալաթեանն այսպէս ընդհանուր խօսքերով անցնելով և «Պիտոյից» գրքից ոչ մի օրինակ չբերելով՝ արուեստական է համարում ոչ միայն Հայկի ամբողջ պատմութիւնը, այլ և նոյն իսկ «մակդիւրները» որոնցով պատկերանում են այս կամ այն զիւցազնի ֆիզիկական և հոգեկան յատկութիւնները»։²

Ահա՛ կարծիքներ միեւնոյն նիւթի մասին, որոնք իրարու հակադիր են։ Արդեօք վիպա-

1. Միաբան, Խոր. Ուսումն. եր. 64 հս.:

2. Халат. Арм. Эпос, եր. 113:

կան բնաւորութիւն ունի՞ այդ պատմութիւնը, թէ չէ: Երկու դէպքում էս մասնագէտ մարդիկ են կարծիք յայանողները: Բայց միւսինոյն Բանը հօ չի կարող վիպական բնաւորութիւն ունենալ և չունենալ:

Ժողովրդական ստուգաբանութիւն. — «Յատուկ անուաների ժողովրդական ստուգաբանութիւն, տեղագրական ծածօթութիւն, վառվռուն բանաստեղծական լեզու » հարկաւ դեռ քուստեղան հիմ չեն կարծելու թէ այդ պատմութիւնը ժողովրդական «ըրոյցներ» հետեւութեամբ է գրուած: Խորենացին կամ իւր գրուածքը արդիւրք, ինչպէս և ամեն մի քննութեան գրող հեղինակի կարող էր տեղագրական քաջ ծանօթութիւններ ունենալ, վտռվռուն բանաստեղծական լեզու գործածել, այլ և՛ ժողովրդի բողոքովն անկամ ստուգաբանութիւններ անել: Երկնք միայն վերջին գործելու կատարուած բողոքութիւ ստուգաբանութիւնները՝ Ակոռի, Արկ ու Ռի, Մարանդ, Մայր անգ և նմանները, որոնք գիտնականների ազդեցից գուրս եկած բաներ են և ժողովրդական ըրոյցներ հետ կապ չունին, եթէ միայն յետոյ գիտնականներից չեն անցել ժողովրդին: Այսպէս և Հայք, Հայկաշէն, Հայք, Գործարանք անուաների ստուգաբանութիւնը կարող է մի մաս-

նաւոր մարդ իւր սենեակում նստած տեղն էլ արած լինել մանաւանդ որ այդ անուանների յիշատակութիւնն ու ստուգաբանութիւնը Մար Աբասից աննելով, Խորենացին ոչ մի ակնարկութիւն չէ անում թէ արդեօք այդ անուաների բացատրութեան հետ կապուած աւանդութիւններ կային իւր ժամանակ ժողովրդի մէջ, թէ չէ:

Երկու տեղ միայն կարելի է կարծել թէ իւր խօսքերն է մէջ բերում Խորենացին. «Զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ եւ զաւանս սյժըմ անուանի Հայոց Չոր: Իսկ բլուրն, ուր քաջամարտիօքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակք»: Ենթադրած տողերը, թէպէտ և Մար Աբասն էլ կարող էր գրել, բայց կարող են նաև Խորենացունը համարուել: Անոնք, սակայն, ոչինչ չեն ասում բուն ժողովրդական ստուգաբանութեան մասին, այսինքն մի ստուգաբանութեան մասին, որի հետ կապուած է ժողովրդական աւանդութիւն: Ամեն պատմագիր էր ինչպէս և մեզինից ամեն մէկը, մի հին անուն իւր ժամանակ փոխուած գաննելով՝ կարող է այդ փոխուած ձևն աւելացնել: Խորենացին Մար Աբասի մէջ Գերեզմանք ձևն

է գտել, իսկ ինքը նոյն տեղի համար լսել է
Գրեթեմանակք, ուստի և իւր ժամանակի
կոչումն էլ աւելացրել է: Միակ կասկածելի
կտորը մնում է, Այսորիկ աղագաւ և գա-
ւառն այժմ անուանի Հայոց Չոր: Արդեօք
Մար Աբասինն են այդ խօսքերը:—որովհետեւ
այդպէս գրել կարող էր և Մարաբասը, որից
նոյնութեամբ օգտուել կարող էր մեր պատ-
մագիրը:—Թէ՛ Խորենացին, գտնելով Մար
Աբասի մէջ ճակատի տեղում շինուած դառ-
տակերտի անունը Հայք, իսկ իւր ժամանակ
գաւառի կոչումը Հայոց Չոր, իրենից աւելա-
ցրած է այդ բացատրութիւնը: Թէ՛ հենց ժո-
ղովրդի մէջ էլ Հայոց Չոր կոչումը Հայկի յաղ-
թութեամբ էին բացատրում: Ետտ հաւանա-
կան է, որ առաջին երկու դէպքից մէկը լինի,
քանի որ, ինչպէս ասացինք, ժողովրդական
աւանդութեան յիշատակութիւն, չէ անում
Խորենացին: Ինչպէս էլ լինի, այդ միակ
մտութ կտորը միայն ժողովրդական ստու-
գաբանութիւն համարելով, շատ խախուտ
հիմք կունենանք այն մասին, թէ Խորենացին
անձամբ օգտուած լինի ժողովրդական զրոյց-
ներից: Սակայն յատուկ անունների այդ ստու-
գաբանութիւնները եթէ ըստ ինքեան ոչինչ
չեն յայտնում Հայկի պատմութեան վի-
պական կերպարանքն ապացուցելու համար:

հարող են ննթաղոնել տալ, որ ժողովրդա-
կանի վրայ հիմնուած լինին անոնք, այսինքն
թէ Մար Աբաս իրենից արած չլինի այդ
ստուգաբանութիւնները, այլ զուցէ, ժողով-
քըրդից վերջրած: Բայց որպէս զի այդ են-
թադրութիւնն արժէք ունենայ, հարկաւոր
են ուրիշ հիմունքներ այդ պատմուածքի
զինպական ինսուորութեան համար:

Ը Մարդիկներ:—Պ. Խալաթեանը մակդիր-
ներն արուեստական է համարում և աշխատելով
ցոյց տալ, որ անոնց մի մասը Ծ—Է դարձ-
ինքնուրոյն և թարգմանական գրուածքների-
մէջ գործածուած կան, այսպէս են երեքը Ղո-
րոյճաճիգ, անձնուայ, լայնալիմ: Իսկ միւս մակ-
դիրներից հինգի համար արամիս նկատողու-
թիւն է ստուժ նա. որովհետե կայ շերկայնա-
բազուկ» բառը և շարարեր գրազուկ իմ որպէս
զաղեզն հաստ», ուստի և Խորենացին ինքն է
կազմել անոնց նմանութեամբ հաստաղազուկ
և հաստաղոնիմ բառերը. որովհետե կան շար-
բակն» և «խաժակն» ուստի և Խորենացին է
կազմել խայտաղն բառը: Այսպէս և «գեղա-
յսպճար» բառի նմանութեամբ Խորենացին
կազմել է գեղանայանոշամ, իսկ «քաջ» բառով
բարբոտ. ամ բազմաթիւ բառերի նմանութեամբ
քաջազմնգոր: Իսկ միւս մակդիրները — քազ-
մակոյտ (հսկայ), անուն խօլաց եւ ուժաւո-

ըաց, յաւերժիւք քաջօք և նրկայնադեգօք հասակօք սկայիւք մըցողօք, աղեղնաւոր, անճարնե զօրութեամբ, ուշիմ և խոնկեմ սկայն, նիզակն արի, երևըթեւեանն, — աղոնց մասին չէ խօսուեմ պ. Մալաթեանը: Բայց և այնպէս նա եզրակացնում է թէ մակդիրներն անգամ չվերածուեմ են հայոց Ծ — Է գարու գրականութեան երկերին»:

Սակայն ոչինչ չէ ապացուցանուեմ պ. Մալաթեանի այդ կարծիքը: Ենթադրենք մի րուպէ, որ Հայկի պատմութեան մէջ եղած բոլոր մակդիրներն էլ Մորենացուց առաջ եղած ուրիշ մասնագիրների մէջ գործածուած լինին, մի՞թէ դա ապացոյց կարող է լինել, թէ Մորենացին այդ մակդիրներն ուրիշներից է քաղել և կամ եղածների նմանութեամբ ինքը շինել: Բանի որ լեզուն նայն հայոց լեզուն է, անշուշտ լեզուի մէջ եղած պատրաստի բառերից պէտք է զգտուէին Աստուածաշնչի և ուրիշ գրքերի թարգմանիչներն և ինքնուրոյն հեղինակները: Այդպէս որ դատելու լինինք, ամեն մի ժողովրդական վէպի գոյութիւն կարող ենք մերժել: Օրինակ, ռուսաց վէպի մէջ որքան յաճախ գործածուած կան сыра (земля), чисто (поле), бѣлая (грудь), калена (стрѣла), красное (солнышко) և նմանները. ըաց երեակայեցէք այդ վէպից

պատմութիւն գրէ որմին, օրինակ մի խորե-
նացի կամ Մար Աբաս. դորա գրած պատ-
մութիւնը հասնէ յետնորդներին, իսկ ժո-
ղովրդական վէպը մոռացուի՝ գրի առնուած
չլինելով: Մի՞թէ յետնագոյն քննադատն ի-
րաւունք կունենայ հերքելու այդ մակդիրներէ
վիպական լինելը, ուստի և վէպի զոյութիւնը՝
բերելով այն հիմքը թէ այդ մակդիր ասած
բառերը՝ сыра, чисто, бѣлая, калена, красно
և շն գործածուած կան այդ խորենացուց կամ
Մար Աբասից առաջ:

Այսպէս պ. Մալաթեանի իբր հիմունքք
Հայկի առասպելի մէջ եղած մակդիրների ա-
րուեստական կամ շինովի լինելու մասին ոչ
մի արժէք չունի: Այդ մակդիրները պահուած
են իրենց վիպական յատկութիւնը:

Տարօրինակ կարծիք:—Սակայն պ. Մա-
լաթեանն այդու միայն չէ բաւականանում. նա
մակդիրները ոչնչացնել աշխատելով՝ Հայկի ա-
ռասպելի ժողովրդական գոյն ունենալն է ու-
ղում ոչնչացնել: Ապոր համար նա ուղղակի
միջոցի էլ է գիմում: Չանալով ուղղակի արմա-
տից կտրել Հայկի առասպելի ժողովրդակա-
նութիւնը, «կտրելի է մինչև անգամ ընդու-
նել, գրում է նա, որ մեր պատմագիրն այս
կամ այն բառերն ու վիպական արտայայ-
տութիւնները վերցրած լինի իւր ժամանակի

երգերից. բայց աւելի քան անհաւանական է, որ այդ երգերը կարողանային բովանդակել վիպասանութիւններ կամ քերթուածներ այնքան հեռաւոր ժամանակներից՝ ինչպէս են Հայկի, Արամի, Տիգրանի և ուրիշների ապրած ժամանակը (эпоха), այսինքն 3000—1500 տարի Մորենացուց առաջ, և յօրինուած լինէին յատկապէս այս առասպելական (легендарный) անճաւորութեանց մասին»։¹ Զգիտենք, պ. Մալաթեանն իսկապէս հաւատում է իւր այս առարկութեան զօրութեանը։ Եթէ Հայկ, Արամ և Նո, առասպելական անձեր են, միթէ նոցա 3000—1500 տարի Մորենացուց առաջ ապրած լինելու ժամանակագրութիւնը ճշմարիտ պատմական իրողութիւն է։ Եւ կարելի է արդեօք այդ առասպելական, իսկապէս կարկատած ժամանակագրութեան չափազանցութեան կամ հեռաւորութեան վրայ հիմնուած՝ ասել թէ երգեր չէին կարող եղած լինել, Պ. Մալաթեանը՝ նախ ժողովրդի յիշողութեան վրայ շատ թոյլ գաղափար ունի և ապա մոռանում է, որ ինքը «պատմութիւն» չէ քննում, այլ առասպել։

Ենթադրենք մի բոպէ, որ Մորենացին ինքը քաղում է Հայկի, Արամի, Տիգրանի

¹. Хлаам. Арм. Эпосы, кт. 114:

պատմութիւնը ժողովրդական երգերից կամ զրոյցներից [բայց ոչ «Վիպասանութիւնից»]: Նա անշուշտ պէտք է օգտուէր իւր ժամանակի երգերից: Եթէ Ս. դարու մարդ է, Ս. դարու երգերից: Իսկ թէ նա այդ երգերի կամ զրոյցների հերոսներին իրենից, կամ նոյն իսկ երգերի վրայ հիմնուելով (յիշենք որ թուերը չափազանցելը ժողովրդականի յատկութիւնն է) 3000 — 1500 տարի առաջ ապրած է գնում մի՞թէ այդ կոհերքէ վիպական երգերի ու զրոյցների գոյութիւնը Խորենացու ժամանակ և այն, որ Խորենացին այդ երգերից օգտուել է: Մի բուպէ երևակայենք, որ Խորենացին ԺԹ. դարու մարդ է, և նա մեր «Սասնու ծռերից» օգտուելով պատմութիւն է գրում: առասպելական Սանասարին գնելով իրենից 2000 տարի առաջ և ըստ այնմ շարում է և նորա առասպելական որդոց՝ Ասիւծաձև Մհերի, Դաւթի և Պստիկ Մհերի ժամանակները: Մի՞թէ այդու կըհերքուի «Սասնու ծռերի» վէպի գոյութիւնը ԺԹ. դարում: Ժողովրդական զրոյցը կամ երգը ճիշտ ժամանակագրութիւն չգիտէ. նա միայն ընդհանուր խօսքերով է անցնում հերոսներին շատ ու շատ տարիներ առաջ գնելով, կամ չափազանց թուեր ցոյց տալով: Ժողովրդական վէպից ու զրոյցից օգտուողն ինքն ար-

գէն պէտք է կազմէ ժամանակագրութիւնը՝
իսկ թէ Պօրենացու ժամանակագրութիւնն
իրենն է կամ իւր աղբիւրներինը՝ այդ մասին
մի անգամ ևս խօսք ունեցել ենք և յետոյ ևս
այդ մասին պիտի գրենք: Յիշենք միայն որ նա
Վահագն աստուծուն ևս որոշ ժամանակում
սպրած է գնում: Մի օրինակ ևս: Շահնամայի
առասպելական հերոսները հօ՞ վիպական են
բայց այդ հերոսներին Փիրզուսին իրենից
քանի՞ հազար տարիներ առաջ է գնում: Բայց
մի՞թէ Շահնամայի գիւցազների առասպել-
ական լինելովը և նոցա սպրած ժամանակ-
ների հնաաւորութեամբը Փիրզուսուց՝ կարելի
է հաստատել: Թէ այդ գիւցազների մասին
Փիրզուսու կամ նորա գրաւոր աղբիւրների
հեղինակների ժամանակ երգեր կամ զրոյցներ
չեն կղել: Այդպիսի դատողութեամբ ոչ միայն
հայոց ու պարսից, այլ և ամեն ազգի վէպե-
րի ու զրոյցների գոյութիւնը կարելի է հեր-
քել:

Միւս կողմից, ասել թէ ինչո՞ւ «յատկա-
պէս այս առասպելական անձնաւորութեանց
մասին» պէտք է երգեր կամ զրոյցներ լի-
նէին՝ այդ ծիծաղելի է: Կարելի՞ է ասել,
օրինակ, թէ ինչո՞ւ յատկապէս առասպել-
ական Պաօշ թագաւորի մասին է պատմում
մի զրոյց կամ ըստ Սրբանձտեանի, վէպ Բու-

լանըխի ժողովուրդը: ¹ Բայց երևակայեցէք՝ մի Խորենացի, կամ նորա աղբիւրը Մար Աբաս, որ այդ «հին ժամանակների կապառտութագաւոր Պոօշի» վէպը լսում է և Պոօշ թագաւորին իւր պատմութեան մէջ առնում ու նորա ապրած ժամանակն իրենից 1500 տարի առաջ դնում: Մի՞թէ այդու կը հաստատուի այն՝ թէ Բուլանըխի ժողովուրդը Պոօշ թագաւորի մասին զրոյց չէ ունեցել:— Մենք աւելի կանգ առանք պ. Խալաթեանի այս կարծիքի մասին քան արժէր: Անցնենք նորա միւս կարծիքին, որ իսկապէս նշանակութիւն ունի որովհետեւ հիմնուած է բանասիրական համեմատութիւնների վրայ:

Հայկի ու Բէլի եւ Սմբատի ու Հեփթաղի կոիւնքը:— Հայկի առասպելի գոյութիւնը ժողովրդի մէջ աժան կերպով ոչնչացնելուց յետոյ՝ պ. Խալաթեանը Խորենացու ինքնուրոյն հեղինակութիւնն էլ չէ համարում այն, այլ կազմած Սերէոսի մէջ եղած [կամ Սերէոսին կցուած] Անանունի հատուածից, Սերէոսից և Սուտ-կալլիսթենէսից:

Մար Աբասի (ըստ Խորենացու) և Անանունի մէջ վաղուց նկատուած առնչութեան (այլ խնդիր է թէ ինչպիսի յարաբերու-

1. Սրուանձեան, Համով— Հոսով, եր. 74

Թեամբ) դէմ ոչինչ չուենիք ասելու, քանի որ, ինչպէս կարծում ենք, ակնյայտնի է այն: Ուստի և Հայկի առասպելի վիպականութեան մասին գրողը կարող չէ Անանունի պատմուածքը ի նկատի չուենալ: Բայց շնք կարող ընդունել պ. Խալաթեանի սեպհական կարծիքը (եր. 120), «Ի՛նչ Մ. Խորենացին Սեբէոսի Պատմութիւնից վերցրել է մի քանի գծեր. Սմբատ Բագրատունու՝ Բուշանաց թագաւորի հետ ունեցած մենամարտի նկարագրից՝ յարմարեցնելով անոնք Հայկի պատերազմին Բէլի հետ: Երկուսի մէջ եղած նման գծերը՝ որ բերում է իւր աշխատութեան Բ. մասի մէջ, եր. 21 հտ. այս են. երկու դէպքում էլ թշնամի զօրքերն իրար դէմ են ելնում. Սմբատը Հեփթաղին, իսկ Հայկը Բէլին սպանում են, և սպանուածների զօրքերն այդ տեսնելով փախչում են»:

ՍԵՔԵՆՍ (եր. 66—67). «Սմբատ ժողովէ զգաւրն... գումարէ այլ գաւրս... և դիմեալ գնայր ի վերայ ազգին Քուշանաց և արքային Հեփթաղեայ... Եւ նա (Հեփթաղ) ընդդէմ ելանէ նորա (Սմբատայ)... Իբրև հասին ի սեղի մարտին...»:

ԽՈՐԵՆԱՅԻ «Եւ կոչեցեալ (Հայկայ) զգօրս իւր, ասէ ցնոսա. «Ելանելն մեր հանդէպ ամբոխին Բէլայ գիպեալ (վարիանտ՝ դիմեալ) ջանասցուք սեղոյն՝ ուր անցեալ կայ ի մէջ խոան քաջացն Բէլ»:

ՍԵՔԵՆՍ. Հեփթաղ «Դիաթաւալ յեկիր կործաներ: Եւ զօրքն նորա իրեն սեսին զարքայն իւրեանց»:

զարհուրեցան և դարձան և քնացին փոխասպիւսն:

ԽՈՐԵՆԱՅԻ. Բէլ Վորգանի՝ յերկիր զարկուցեալ... իսկ ամբոխն տեսալ զայսպիսի ահագին գործ քաջութեան, փախեամ գէպ երեսաց իւրեանց:

Այս է անցքի ամբողջ նմանութիւնը. մնացածը բառերի նմանութիւն է: Սերէոս գործ է ածում խառնամըոխ մտկոյսը, Խորենացին՝ ամըոխ գոյականը: Այնուհետեւ երկուսի մէջ էլ պատմութեան ընթացքում բայց ոչ բոլորովին համանման դէպքերում գործածուած են՝ արք, նիզակ, կռու, մարտ, արքայ, զարհուրել, յարձակիլ, ի միմեանս հասանել, ճակատ: Պ. Խալաթեանն իւր մանրակրկիտ քննութեան մէջ մինչև անգամ այսպիսի նմանութիւնն էլ գծում է. «Խորհէր (Բէլ, երբ Հայկից փախչել է ու գում) ի միջոցի ամբանալ ամբոխին», և «ի մէջ երկուց ճակատուց մարտ եղեալ (Սմբատ և Հեփթաղ) ընդ միմեանս կռուէին»: Մեծ նմանութիւնն զի «միջոց» բառը «մէջ» արմատից է կազմուած:

Մենք այդ նմանութիւններին արժէք չենք տալի, որովհետեւ այդպիսի և այդքանի նմանութիւններ, և աւելին ևս, ոչ միայն Սերէոսի և Խորենացու մէջ եղած մի պատերազմի նկարագրի մէջ կարելի է գտնել, այլ և ուրիշ շատ հեղինակների: Առնենք, օրինակի համար, Եղիշէի մէջ Աւարայրի ճակատ

տամարար և համեմատենք մի կողմից Սերէ-
ոսի, միւս կողմից Խորենացու մեզ հետաքրր-
քրրող կտորների հետ, բերելով բովանդակու-
թեամբ ու բառերով և միայն բովանդակու-
թեամբ նման հատուածներ:

1. ԵՂԻՇԷ 1. ԵՆԼ ՔՈՒԹ ՈՎ ԿՈՄԵՆԵՐԵԱՆ Ի ՆԵՂԻ
պատեազօնն եկեալ հասանկին իւրաքանչիւր զօրօք ամե-
նայն պատրաստութեամբ... Համագունք
հասանկին ի գործ պատերազմին ի գնշան Արաւզու»
(եր. 145 հտ.): Իսկ միւս կողմից «Զօրապլուխն
պարսից քաղաք գայր ամենայն հեթանոսական
քաղմութեամբն և եկեալ հասանկ յաշխարհն Հայոց
(եր. 155):

ԽՈՐԵՆԱԿԻ. «Զօրամտողով լինի ի վերայ նորա
(Հայկայ) նիտանեանն Բեշ անբոխիւ հետեակ զօ-
րաց, գայ հասանկ ի հիւսիսի յերկիրն Արարադայ...
փոռութայր հասանկի ի սահմանս բնակութեան Հայ-
կին... Աժապարեալ հաւաքէ (Հայկ) զորդս իւր
և զթոռունս... Եւ կոչեցեալ զօրս իւր... (եր.
34. հտ.):

ՍԵՐԷՈՍ. «Սմբատ ժողովկ զգարն... գումարէ և
այլ զարս բազումս յօգնութիւն իւր և դիմեալ
գնայր ի վերայ ազգին Բուշանաց և արքային
Հեփթաղեայ: Եւ նա անտի մեծաւ կազմու-
թեամբ ընդդէմ Ելանէ նորա (Սմբատայ). եկին
հասին ի ռեղի մարտին» (եր 66—67):

2. ԵՂԻՇԷ. Աւարդան ճառ է իօսոււմ իւր մար-
դաց. «Եթէ տացէ Յէր յաղթութիւն ի ձեռս մեր
սատակեսցուք զզօրութիւն նոցա... և եթէ հա-

սեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս: քնկալցուք խնդութեամբ սրտիւ... Եթէ զայլս կատարելով... պարծանս անձանց ժառանգեցաք... որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիցիմք... (Եր. 148 հտ.): Ուրեմն մի երկուու-թիւն,—մեռցնել կամ մեռնել:

ԽՈՐԵՆԱՑԻ. Հայկ նոյնպէս ճառ է խօսում իւր մարդոց և նոյն երկուութեամբ. «Կամ մեռցուք... կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն»... (Եր. 35):

ՍԵՔԷՈՍ. Ճառ չկայ:

3. ԵՂԻՇԷ. «Վարդան զգօրագլուխսն կարգէր (յականէ յանուանէ յիշում է թէ որ գունգն ում է յանձնում)... Յանձն իւր [ինքն] առնոյր զգունգն չորրորդ... կարգէր և կազմէր զձակասն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտն դիմ յանդիման Արեաց գնդին առ ափն Տղմուտ գետոյ» (Եր. 173):

ԽՈՐԵՆԱՑԻ. «Կարգէր (Հայկ) զԱրմենակ (և միւսներին)... և ինքն առաջի...: Զի միւս անգամ ձակաս յօրինեսցէ...:

ՍԵՔԷՈՍ. Գնդերը կամ թիւերը կարգելը չկայ, բայց «ձակասեցան դիմ յանդիման միմեանց...: Ի մէջ երկուց ճակատուցն»:

4. ԵՂԻՇԷ. «Գազանացեալ զօրութեամբ յիւրեարս յարձակեին երկոխան (կողմանքն)... Անդ էր տեսանել շառայ մեծի ռազմապիւն և զաղէտս անբաւ քարակուսանացն երկոցունց կողմանցն առ ի յանդուզն յարձակմանկն զմիմեանս բախելով (Եր. 173 հտ. իսկ Խաղիսազի կռուի մէջ. առ յոյժ յանդուգն յարձակմանն):

ԽՈՐԵՆԱՅԻ. «Բազմութիւն անկարգ հրոսակի
ամբոխոյն Բէլայ ցան և ցիր յանդուզն յարձակմամբ
ընդ երեսս դաշտին սուբալոզ . . : Եւ հասեալ եր-
կոցունց կողմանց սկայիցն ի միմեանս . . : Տարազուք
յարձակմանցն . . : Ջայսպիսի անակնուռնելի դիպուած
տարակուսանաց տեսեալ . . :

ՍԵԲէՈՍ. «Եւ յարձակեալք աստի և անտի մեծաւ
տագնապաւ ի միմեանս հասանեիլն : քայց ոչ երկու
զօրքը՝ այլ Սմբատ ու՛ Հեփթաղ :

5. ԵՂԻՇԷ. «Երկոցունց կողմանց բազու՛մ վի-
րաւորք յերկիր անկեալ դիարաւալ խաղային» :
[Իսկ Խաղիտաղի կուռի մէջ «Այր զախոյեան իւր
յերկիր կործանեալ» :

ԽՈՐԵՆԱՅԻ. «Անդ ոչ սակաւք յերկոցունց կող-
մանց . . : տապալ յերկիր կործանեիլն . . . «Բէլ կործանի՛
յերկիր զարկուցեալ» :

ՍԵԲէՈՍ. Սմբատ «հարեալ զնա (զՀեփթաղ)
զաւրութեամբ դիարաւալ յերկիր կործանեալ» :

6. ԵՂԻՇԷ. «Ի վեր հայեցաւ քաջն Վարդան :
և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց
պարսից զօրուն» : «Եւ տա ան ի վեր համբառնայր
Մուշկան նիսալաւորաւ քակեալ զոմանս տեսա-
նէր ի գնդէն Հայոց և զկնի մնացեալ ի հովիտս
լերանցն» (եր. 175) :

ԽՈՐԵՆԱՅԻ. «Հասանեն ի միջոց ինչ դաշտաձև
լերանց . . : ի վեր զերեսս անբարձեալ երևեցաւ
նոցա բազմութիւն» . . :

ՍԵԲէՈՍ. շկայ :

7. ԵՂԻՇԷ. « . . . Որ ի վերայ նոցա նստէր ի բարձր
դիտանցիկ իբրև յամուր քաղաքին» (եր. 176) :

ԽՈՐԵՆԱՅԻ. «Բէլ . . : ի վերայ սասոյ միոյ իբրև
ի դիտանցի» :

ՍԵՔԷՏՈՒ. չկայ:

8. ԵՂԻՇԷ. «Մեծաւ ուժով յարձակէր (Վարդան) ի սեղիւն (ուր էին «ընտիր ընտիր քաջ նահատակաց պարսից զօրուն»):

ԽՈՐԵՆԱՅԻ. «Դիպեալ ջանասցուք սեղոյն, ուր անցեալ կայ ի մէջ խոան քաջացն Բէլ»:

ՍԵՔԷՏՈՒ. չկայ:

9. ԵՂԻՇԷ. «Տեսանէր (Վարդան) զրեօր ընօր քաջ նահատակաց Պարսից զօրուն» (Եր. 175):

«Յանչեւ եւ յսեփե զերեքհազարեան սպանազէսքն պատրաստէր (Մուշկան) և զրեօր ընօր նահատակացն շուրջ զիւրեաւ գումարէր... Եւ գայլս եւ ամենայն զրեօր ընօր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէր» (Եր. 172): «Ի փայլիւն պատենազէն վառելոցն» (Եր. 174):

ԽՈՐԵՆԱՅԻ. «Ծանեաւ Հայկ իխուժք վանելոյն ջոկաթին, յորում Բէլ անաջի ամբոխին եկեալ հասեալ ընտիր եւ վառելով ռմամբ... ընտիր յայնեւ եւ ի մարտի: Եւ տեսեալ Հայկին զախանեան կուս վառելոյ և զարս ընտիրս ընդ նմա անցնելու և անկն...»

ՍԵՔԷՏՈՒ. չկայ:

10. ԵՂԻՇԷ. «Հնչող մն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր...: Անդ էր տեսանել շտապի անգնակի և զաղէտն անբաւ անարկուտանաց երկոցունց կողմանցն, ան ի յանդուգն յարձակմանս զմիմեանս բախելով: քանզի Թանձրամիտքն յիմարէին և վատանսիրտքն լքանէին...» (Եր. 174):

ԽՈՐԵՆԱՅԻ. Ահագին գզրդիւն և վերայ երկրի առնէին շահատակելովն, և ահա պա-

կուցանող սարազուք յարձակմանն զմիմեամբ արկանէին»:

ՍԵՔԷՈՍ. չկայ:

11. ԵՂԻՇԷ. «Ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ»...:

ԽՈՐԵՆԱՅԻ. «Մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի»:

ՍԵՔԷՈՍ. «Ոչ կարէին վաղվազակի զմիմեանս յաղթահարել, զի արք սակաւազաւրք (սկայազաւրք) էին երկոքին»...:

12. ԵՂԻՇԷ. Վարդանն ընկնում է «Քանզի անկեալ էր մեծ սպարապետն Հայոց ի պատերազմին... ցանեալ ցրուեցան» (Տայք) (Եր. 177 հա.):

ԽՈՐԵՆԱՅԻ. Բէլն ընկնում է, «Իսկ ամբոխն օնեսալ զայսպիսի ահագին գործ քաջութեան, փախեսան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց»:

ՍԵՔԷՈՍ. «Եւ զօրքն նորա (Հեփթաղեայ) իբրև օնսին զարքայն իւրեանց (անկեալ), զարհուրեցան և զարձան և զնացին փախստական»:

Եթէ այսպէս շարունակենք, դեռ մի քանի նմանութիւններ էլ կը հասնենք: Ընթերցողը կը տեսնէ, որ Եղիշէի և Խորենացու, Եղիշէի և Սեբէոսի նմանութիւններն աւելի են և մեծ քան թէ Խորենացու և Սեբէոսի: Իսկ միւս կողմից՝ ինչ նմանութիւն որ Սեբէոսի և Խորենացու մէջ կայ, գրեթէ բոլորը կան և Եղիշէի մէջ: Ուրեմն ի՞նչ պիտի եզրակացնել: Արդեօք Խորենացին Սեբէոսից օգտուելուց զառ նոյն բանի համար Եղիշէից

էլ է օգտուել, կամ թէ Եղիշէն Սեբէոսից
ու Խորենացուց է օգտուել, կամ թէ, ընդ-
հակառակն, Սեբէոսը Եղիշէից:

Մեր կարծիքով այդպիսի նմանութիւն-
ները ոչինչ չեն ապացուցանում մի պատմա-
գրի միւսից կախման մասին: Պատերազմնե-
րը միշտ իրար նման են, և միեւնոյն լիզուով
պատմուած պատերազմների նկարագրի մէջ
միշտ կը լինին զօրք, զօրք ժողովել, մարտ
տեղի մարտի, նիզակ, զրահաւորութիւն,
վառեալ, պատերազմի տեղ հասնել, գուն-
դեր բաժանել, իրար վրայ յարձակուել, իրա-
րուց վախենալ, հակառակորդին գեահն գլո-
րել, սպանել, կոտորել, փախչել ևն. ևն: Եւ
մեծ զարմանք չէ՝ որ այդպիսի բառեր կամ
նման նկարագիրներ գտնենք Եղիշէի, Խորե-
նացու, Սեբէոսի և ուրիշ մատենագիրների
մէջ: Այդ բառերն ու նկարագիրները ընդհա-
նուր գործածական ծնւական դարձուածներ
(formelhafte Wendungen) են: Իսկ ապացոյց
հիմնել այդպիսի դարձուածների ու բառերի
վրայ կարելի չէ: Եւ իզուր չէ՝ որ պրոֆ-
Բեռնհայմ իւր «Պատմութեան մեթոդի գա-
սազրթի» մէջ¹, խօսելով մի պատմագրի կա-

¹. Ernst Bernheim, Lehrbuch der Historischen
Methode, Leipzig, 1894.

խումբ միւսից ցոյց սալու եղանակի մասին, առանձնապէս շեշտում է թէ պէտք է բաւական նկատողութեան առնուին այդպիսի ձեական դարձուածները և ապացոյցների թււից դուրս ձգուին անոնք, թէ չէ հետազոտողը սխալ եզրակացութեան կարող է հասնել: Բայց ո՞րքան աւելի սխալ կարող է լինել այն եզրակացութիւնը, որ հիմնուած է միայն այդպիսի դարձուածների վրայ:

Կըներեն ընթերցողները, որ մի փոքր աւելի երկար կանգ առնենք այս մասին, որովհետեւ մեզնում, երբ արդէն սկսել են մեր մատենագիրներն իրար համեմատել և չոճի նմանութիւններից եզրակացութիւններ հանել, համեմատութեան եղանակի այդ էական կողմի դէմ բաւական մեղանշում են: Հարկաւոր է զգուշացնել չոճի մասին այդպէս դատողներին: Ամենայն ժամանակ կան իրողութիւնների գաղափարներ ու մտածութիւններ, որոնց արտայայտութիւնը անկախ կերպով մի մասնաւոր անհատի մտքի մէջ չէ ծնւում, այլ առնւում է լեզուի հասարակաց պատրաստի շտեմարանից: Գիտութեան ամեն ճիւղերի մէջ կան որոշ անքնիկական կամ սոսցուած դարձուած (phrasenhaft) արտայայտութիւններ, որոնք հնաւանդ սովորութեամբ գործ են ածւում որոշ իրողութիւններ ու

յարաբերութիւններ յայտնելու համար մանաւանդ այն ժամանակներում և գիտութեան այն ճիւղերում որոնք արդէն մի կլասիկական մշակուած գրականութիւն և գրական լեզու ունին, ուստի և աւելի մեծ պաշար ունին խօսքի հասարակաց (gäng und gäbe) դարձուածների պատկերաւոր ասացուածների, քարացած բանաձևերի (erstarrte Formeln), աւելի ևս այն ժամանակներում երբ, ինչպէս Միջնադարում, մի օտար լեզու (լատիներէն) էին արուեստական կերպով իւրացնում և անոր սովորովի դարձուածները բանեցնում»¹ :

Անշուշտ, մեր պատմագիրները օտար լեզու չէին սովորում այլ հայերէն. բայց յայտնի ապացուցուած է, թէ ո՞ր դարուց սկսած մեր պատմագիրների համար գրաբար լեզուն այլ ևս կենդանի գործածական լեզու չէր, այլ սովորովի: Եւ արդեօք կարծածից աւելի հի՞ն չէ մեր լեզուի մէջ կատարուած այն մեծ կերպարանափոխութիւնը, որով գրաբար և աշխարհաբար լեզուներ են կազմուել: Եւ արդեօք նոյն իսկ Սերէոսի ժամանակ գրաբար լեզուն նոյնպէս արուեստական կերպով սովորովի չէր, ինչպէս Յովհաննէս Կաթուղի-

¹ Bernheim, Lehrb. der Hist. Meth. եր. 316 հա .

կոսի ժամանակի Զանի դեռ լեզուի կերպարանափոխութեան այս ժամանակը հաստատ չէ որոշուած, ամեն լեզուական կամ «ոճի» քննութիւն դեռ ևս խախուտ հիմքի վրայ կրմնայ։ Մանաւանդ պէտք չէ մոռանալ որ ինչպէս եւրոպական պատմագիրները, նոյնպէս և մերոնք ազատ կերպով օգտուում են Սուրբ Գրքի միեւնոյն դարձուածներից, որոնք այդ ժամանակներում պատմողական ոճի ու լեզուի համար հասարակաց ստացուածք էին. իսկ մեր մատենագիրների համար Սուրբ Գիրքը ոչ միայն իւր դարձուածներով ու պատկերաւոր խօսքերով օրինակելի էր, այլ և իւր կլասիկական լեզուով։ Ի՞նչ է ուրեմն եզրակացութիւնը։ Մատենագիրների իրարուց ունեցած կախումը ցոյց տալուց տուած, «պէտք է հիմնովին ճանաչել նոցա ժամանակի գրականութիւնը և գրական տեսակը, որպէս զի հնարաւոր լինի տարբերելու թէ ինչն է լեզուի հասարակաց գործածութեանը պատկանում և ինչն է մի որոշ մատենագրի առանձնայատուկ արտայայտութեան եզանակը» և եզրակացութիւնը միայն այս վերջինի վրայ պիտի հիմնել։ Բայց այդպէս են վարւում մեր մատենագիրների հետ. թէ՞ նոցա գլխին խաղ են աւնում, եզրակացութիւններ տարածելով, որոնք

«միայն յուշատետրի կարճ նկատողութիւններից են կազմուած», և եզրակացութիւններ հանելով ոճի և արտայայտութեան մի քանի նմանութիւններից, որոնք մի մատենագրի միայն յատուկ սեպհականութիւն չեն, անհատական յատկանշաններ չեն, այլ ընդհանուր:

Մենք ներքեում մի օրինակով ևս ցոյց կըտանք թէ ինչ արժէք ունի այդպիսի շնչին համեմատութեան նիւթերից հանած եզրակացութիւններից մէկը, որ պ. Սալաթեանը յայտարարում է Սերէոսի «ոճի» մասին: Բայց այստեղ աւելորդ չի լինի, որ մի երկու խօսքով ըովանդակութեան նմանութեան վրայ ևս կանդ առնենք:

Պատմական գրուածների համար ժամանակագրական շարքը կամ դասաւորութիւնը որով իրողութիւնների առանձին դիպուածները կամ նոյն իսկ իրողութիւնները պատմում են, կարող չէ ինքն ըստ ինքեան (an und für sich) իբրև մի դատանիշ-կրիտերիում ծառայել, մի պատմագրի կախումը միևսից ցոյց տալու համար, զի «այդ շարքը կամ շարադասութիւնը, իբրև իրերի բնութեան մէջ եղած մի բան, կարող է ներկայանալ ամեն մի հեղինակի՝ անկախ մի ուրիշից»: ¹ Ուստի

¹. Bernheim, Lehrb der. Hist. Meth. եր. 318 հո.

և եթէ Սերէոսի ու Խորենացու, կամ Սերէոսի ու Ծղիշէի մէջ մի որևէ պատերազմի նկարագրի մէջ նման դիպուածների շարքի նոյնութիւն ևս գտնու՞մ ենք, այդ դեռ ապացոյց չէ, որ մէկը միւսից կախում ունի: Հին պատերազմներին շատ յատուկ է նախ զօրք ժողովելը, ապա թշնամու վրայ դիմելը, և այն, որ թշնամին էլ իւր կողմից զօրք ժողովէ և յարձակողի դէմը դուրս գայ, ու երկուսը ճակատեն, այդ ժամանակ զօրավարը ճառ իօսի, խրախուսէ, ապա իրար վրայ յարձակուին, կոտորեն և երբ մէկի զօրավարն ընկնու՞մ է, որովհետև զօրավարն ամենամեծ տեղն էր բռնու՞մ, նորա զօրքերը փախչեն, յաղթողները՝ հտեւներից ընկնեն, կոտորեն, ասպատակեն, գերի, աւար առնեն: Միթէ այս և ասոր նմանները՝ նման կամ նոյն ժամանակագրական կարգով չե՞ն կատարուել գրեթէ ամեն հին պատերազմների մէջ: Եւ միթէ որևէ բան կարո՞ղ է ապացուցանել այն, որ մի մատենագիր վերոյիշեալ դիպուածները նոյն ժամանակագրական շարքով պատմէ, ինչպէս իսկապէս կատարուել է իրողութիւնը:

Այսպէս Հայկի ու Բէլի, Սմբատի ու Հեփթաղի կռիւների մէջ եղած մի քանի ձեական դարձուածների և նոյն իսկ դիպուածների շարադա-

սութեան նմանութիւնը ոչինչ չէ կարող ապացուցանել թէ Խորենացին Սերէոսից օգտուել է: Այդպիսի եզրակացութեան հասնելու համար մի փոքր աւելի բան է հարկաւոր քան մի քանի ընդհանուր պատերազմական գծեր ու բառեր:

Սմբատի ու Հեփթաղի եւ Տրդատի ու Գլթաց թագաւորի կոչումները:— Պ. Խալաթեանը գրում է. «Հերակլի պատմաբանի (Սերէոսի) ընդարձակ աշխատութիւնը իւր' ուրոշ, ազդու կերպով գծազրուած կերպարանքն ունի... լեզուի, ոճի, բառերի գործածութեան... կողմից, որոնք անցնում են նորա ամբողջ պատմութեան միջով և սերտ կապուած են անոր բովանդակութեան հետ, մինչդեռ Անանունի այս զպրութիւնը ... մի խայտաճամուկ քաղուածք է զանազան աղբիւրներից. (եր. 73): Փորձենք այդ «որոշ ոճ» ունեցող պատմադրի մի կտորը միայն համեմատել Ագաթանգեղոսի և Աստուածաշնչի հետ, և յատկապէս մեր Սմբատի ու Հեփթաղի կոչւելը և անանինք թէ նա որքան «խայտաճամուկ» չէ: Հեշտութեան համար մենք Սերէոս և Ագաթանգեղոս մի սիւնակի մէջ կրդենք. իսկ Աստուածաշնչի Դաւթի և Գողթաթի կուռի նմանութիւններից տակին, կտորներ միայն ծանօթութեան նշաններով:

ՍԵՐԻՆՍ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Յայնժամ Սմբատ ժողովի զգաւրն՝ և վերստին սպառազինէ, գումարեւ և այլ զաւրս բազումս՝ յօգնո. թիւն իւր, և դիմեալ զնայր ի վերայ աղօթին Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա. եկին հասին ի սեղի մարտին և ճակատեցան դիմ յանդիման միմեանց: *

Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրածողով շինէր իշխանն Գթաց. և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր աալ մարտապատերազմ ընդ իշխանին Յունաց.....

Արդ պսօզամ յդեառ Սմբատ արքայն Քուշանաց և ասէ. «Զի՞նչ աւգուտ է այսպէս խառնամբոյ մտան ել ի պսօնեազմ՝ սպառեղ զզաւրս մեր... բայց եկ ես և դու միայն մարտիցուք» **

Գաւզամս յդեո օրինակաւս այսուիկ, եթէ ընդէր բնաւ ելան եմք խառնամբոյ ի պսօնեազմ՝ սպառեղ զզաւրս մեր... ես աւասիկ ախոյեան ելանեմք ի մերոց զօրաց ասի, և զու ինձ ի յունականաց այսի. հարցոյք եւ

1 Ուշադրութիւն դարձնել զօրք ժողովելու ի մասս ի կրկնուէրեան վրայ:

* Եւ ճակատեցան Բարայէրացիքն և այլազգիքն հանդեպ միմեանց ճակատ առ ճակատ (Ա. քաղ. ժէ. 21):

** «Տոյք այր մի ևս ևս ևս մեծամարտեցոյք երկուսեան (Ա. քաղ. ժէ. 10)»

դու այսի... Եւ յարձա-
կեալ աստի և անտի մեծաւ
տազնապաւ ի միմեանս
նասանկին... և ոչ կա-
րէին վաղվազակի զմի-
մեանս յաղբահարել...

եկեացոյ՝ ի սեղի մար-
տիկն...! Եւ իբրև յանդիման
եղեն միմեանց կայսերա-
կերպն (Տրդատ) և թա-
գաւորն... ի միմեանս
նասանկին. անդ յաղբահա-
րեր կայսերակերպն ըզ-
թագաւորն:

Աւելորդ չի լինիլ Սէբէոսի պատմու-
թեան շարունակութեան դիմաց Աստուածա-
շնչի պատմութեան շարունակութիւնը դնել:

ՍԵՔԷՈՍ

Ա. ԹԱԳ. ԺԷ.

Եւ զաւրբն նորա
իբրև սեսիկն զարբայն իւ-
րեանց (սպանուած) ...
զնացին փախսական, և
սորա զնե արշաւեալ հա-
սին ասպասակաւ միևչի ի
ԲաՏԼ Շահաստան:

Իբրև սեսիկն այլազգի-
քն թէ մեռաւ զօրաւորն
նոցա (Գողիաթ)՝ փա-
խեան. և յարեան արբ
Իսրայէլի... յարձակե-
ցան զնե նոցա միևչի ի
մուտս Գեթայ...: Եւ
զարձան ասպասակեալն
զնե այլազգեացն(51-53):

Ահա երկու պատմութիւն, մէկը Սեբէ-
ոսի, միւսն Ագաթանդեղոսի մէջ, որոնք ոչ
միայն դէպքի և պատմուածքի նմանութիւն
ունին, այլ և նոյն տեղում իմաստի կրկնու-
թիւն: Սեբէոսը կարող է միայն համառօտած

1. Սեբէոսի մէջ այս վերջին իմասն առաջ է
դրուած, միևչիւն Ագաթանդեղոսի մէջ յետոյ դրուած:

լինել Ազաթանգեղոսի աւելորդարան նկարագիրը, մի երկու խօսք առաջ դնելով, մի երկու բան էլ Աստուածաշնչից օգտուած լինելով: Մենք չենք պնդում այդ բանի վրայ և չենք էլ ասում, որ այդ օգտուելն անպատճառ զիտակցարար է եղել, և ոչ էլ մեր նպատակն էր ցոյց տալ Սերէոսի կախումն Ազաթանգեղոսից կամ Աստուածաշնչից: Բայց մի բան միայն պարզ է, որ եթէ պ. Խալաթեանն այս օրինակն իմացած լինէր, նա այնպէս դրական կերպով չէր խօսիլ Սերէոսի «ազդու գծագրուած որոշ» ոճի, լեզուի և շնամասին և նորա դիմաց չէր դնիլ «խայտաճամուկ» Անանունին, և այդ երկսի ոճի այդպիսի կարծեցեալ մեծ տարբերութեան վրայ որևէ ենթադրութիւն չէր հիմնիլ: Չէ՞ որ Սերէոսն, այդ կտորով գոնէ, շատ աւելի «խայտաճամուկ» է քան Անանունը, եթէ միայն, հակառակ պ. Խալաթեանի կարծիքի՝ Անանունի դպրութիւնն էլ Սերէոսի աշխատանքը չէ:

Բերենք մի օրինակ ևս:

Հայկի ու Բէլի եւ Սամի ու Քերքույի կոիւները:—Ամենից առաջ նկատենք, որ մենք դժբախտաբար պէտք է բաւականանանք պ. Գիւլզադեանի թարգմանած՝ Շահնամայի մի հատուածով միայն, և յատկապէս շեշտում ենք, որ մէկը՝ Հայկի առասպելը՝ գրաբար է գրած:

մեր կլասիկական լեզուով, իսկ միւսը մեր ժամանակի աշխարհաբար: Ուստի և բառերի ու դարձուածների ընտրութեան մէջ մեծ տարբերութիւն կարող է լինել: Բայց տեսէք որքան նմանութիւն սյգ երկու առասպելի մէջ:

Սամ պահլաւանի դէմ ինչու՞մ են Մազանկարանի վայրենի, արագընթաց, կուտազի կռուողները, Սէգ-սար կոչուած նեռ գեերը (հսկաներ), որոնք իրանի կտրիճներից աւելի քաջասիրտ են, կռուարար առիւծների, ահեղ ինժերին իսկ հաւասար, և որոնց գըլխաւորն է փղանման մի սալագագաթ գե: [Հմմտ. Խորենացու մէջ՝ Հայկի դէմ եկող Բէլի յաւերժ քաջերը, երկայնագիւղօք հասակօք, մրցող (կռուող, անհուն իսլ ուժաւոր ու զօրաւոր սկաները]: Այդ հսկաները «մի տեղ ժողովուած խառնամբօխ հրոսակ»՝ Քէրքուլին զուխներն անցած, «չուրս են գալի խուժելով դէպի գաշաը ընդարձակ այնքան սպայ, որ լցւում է մի սարից միւս սար, գալիս են շուտ Սամի դէմ կռուելու միահամուռ բազմութեամբ, այնպէս մթին խուռն ու խրիին գրոհ աալով շատապմամբ՝ հենց շարժ են անում: որ գեաինը դիրդուելով դողդուում է» [Հմմտ. Խորենացի՝ Բէլի յանգուզն և անձոռնի զօրութեամբ ամբօխին

որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառիվայր
հեղեալ՝ փութայրու... յ) միջոց ինչ դաշտա-
ձե լերանց... բազմութիւն անկարգ հրոսակի
ամբոխոյն Բելլայ ցան և ցիր յանդուգն յար-
ձակմամբ ընդ երեսս դաշտին սուրալով,—
Բէլ առաջի ամբոխին եկեալ։— Եւ հասեալ
երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս,
ահագին դիրգիւն ի վերայ երկրի առնէին շահա-
տակելովն։ Մի կողմից այդ դեերի եւ ծու-
ծը դատարկում է Սամի համբաւից», և յար-
ձակման ժամանակ արհաւիրքից խելագար-
ւում է նոցա ամբոխը», իսկ միւս կողմից՝
յարձակման ժամանակ և Սամի «զօրքերի
մէջ երկիւղ է ընկնում» «անուանի քաջե-
րի դէմքը դեղնում» [Հմմտ. Խորենացի՝ Ահս
պակուցանողս տարազուք յարձակմանցն ըզ-
միմեամբք արկանէին]։ Կռուի մէջ ընկնում
են երկու կողմից՝ իսկ Սամը «գետին փռում
մէն մի յարձակումին հարիւրին» և մէն մի
գուրգի տակ տապալում մի դեին» [Հմմտ.
Խորենացի՝ Անդ ոչ սակաւք յերկոցունց կող-
մանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ
սրոյ դիպեալ տապալ յերկիր կործանէին]։
Այնուհետեւ, ինչպէս հայոց առասպելի մէջ՝
նկարագրուած են երկու պարագլուխները՝
Սամ և Քերքույի, Քերքույի՝ «ժանտատեսիլ»
դժնեայ կերպարանքով, փղանման, սալ գա-

գաթով, կտրի՞ մարդ, նո՞ճի հասակով, գլխին
սաղաւարտ, ձեռին պաղպաջաւոր սուր, մէջ-
քին գօտի, վէս և աշխարհակալ Սելմ Եասի
սերունդը, որի մօտ ամենասէգ խրոխտ խի-
զախը հող է համարեալ, որի հսկայ զօրքերը
մըջիւնի ու մորեխի են նմանում բազմու-
թեամբ ու ծածկում գաշտ ու լեռ: [Հմմտ-
Խորենացի՝ Բէլի բնաւորութիւնը և ոյժը,
Բէլ բռնաւոր, որին յաջողել էր բռնանալ և
ունել զամենայն երկիր և տիրել բազմակոյտ
հսկայիցն անհուն խօլաց և ուժաւորաց, և
խրոխտալով ուզում է Հայկին էլ նուա-
ճել: Գլխանոց ագուցեալ երկաթի, գօտե-
ւորեալ զմէջսն, յահեկէ զստինն երկ-
սայրի, կռռ վառեալ ևն.]: Իսկ Սամը՝
որ նոյնպէս հսկայ է, ինչպէս մեր Հայկը, է
սրով և քէյանեան աղեղով, որի կոթը խա-
տանգ փայտից է և փքինը պողպատ, նետը
սրաթռիչ արծուի: [Հմմտ. Խորենացի՝ Հայկ
կորովածիգ և հաստաղեղն, լայնալիճ, նետը՝
երեքթեան, իսկ Հայիի որդիքը՝ արք կորո-
վիք էին յաղեղն և ի սուսեր]: Կռուի յար-
ձակման ժամանակ Սամը իւր աղեղից նետ է
արձակում Զէրքուչիի վրայ և վերջը բռնում
է նորսն և սփյի նման փրթաւում ու զար-
կում գեանին: [Հմմտ. Խորենացի՝ Հայկը մօտ
հասանէ յարքայն (Բէլ), լի քարշէ պինդ

զլայնալիճն... և Ճոխացեալն տիտանեան կործանի՝ յերկիր զարկուցեալ]: Եւ երբ Շահն (արքան) այգպէս նսեմարար ընկաւ փշեց իւր հոգին, նորա զօրքը երեսները դէպի փախուստ գարձրին, ընկան սար ու դաշտ... [Հմմտ. Խորենացի՝ Արքայն տիտանեան փշէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիոի ահագին գործքաջութեան, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց]:

Ահա երկու պատմութիւն, որ էութեամբ նոյն են, այլ և շատ տեղ բառացի նոյն: Երկու դէպքում էլ հսկաներ են իրար դէմ կռուողները, ունենալով իրենց զլիւին մի մի աւելի մեծ հսկայ: Երկու դէպքում էլ նկարագրուած են առանձնապէս այդ գլխաւորները և նոցա պրիթէ նման զինավառութիւնը: Երկու դէպքում էլ յարձակողը, որ յետոյ յաղթուում է, աւելի մեծ բազմութեամբ է՝ մի խառնիխուռն անկարգ հրոսակով, իսկ յաղթողը թուով նուազ է: Երկու դէպքում էլ յարձակման ժամանակ երկիրը դրդում է: Երկուստեք վախենում են, և երկուստեք գետին փռում կամ կործանում շատերին: Երկու դէպքում էլ յաղթող հերոսը նետաղեղ է բանեցնում: Երկու դէպքում էլ թշնամու պարագլուխը սպանւում է գետին զարնուելով: Երկու դէպքում էլ երբ արքան

ապանւում է, նորա ամբոխը գլուխ առած
փախչում է: Եթէ շարունակենք, դեռ մի
քանի «երկու դէպքում» էլ կրբերենք. իսկ
նոյն կամ համանիշ (շեշտում ենք զբարարի
և աշխարհարարի տարբերութիւնը) բառեր՝
որքան ուզէք. — կռուող (մրցող), բազմու-
թիւն, զօրք, ամբոխ, գետին փռել, տապալել
(տապալ յերկիր կործանել), խուռն, կուռ,
գրոհ տալ, խուժել (սուբալ), մօտ գալ
(մօտ հասանել), աղեղ, գօտի, զիմել, գետին
զարնել, հոգին փչել և ըն.:

Ուրեմն ի՞նչ պէտք է եզրակացնել: Արդեօք
Խորենացին Հայկի ու Բէլի կռիւը «շինելու» հա-
մար Սերէոսից է օգտուել, թէ՞ Ագաթանգեղո-
սից, թէ՞ Եղիշէից թէ՞ Աստուածաշնչից, թէ՞
արդեօք այդ բոլորից յետոյ Փիրղուսիից էլ
է օգտուել: Բայց այդ դէպքում խօ՛ Խորե-
նացու ժամանակը ամենավաղը 11-րդ դար
պէտք էր դնել: Թէ՞ արդեօք Փիրղուսին է
շահնամայի համար Խորենացուց օգտուել:—
Բայց գուցէ առարկէ պ. Խալաթեանը թէ,
որովհետև Խորենացուն ծանօթ են եղել
պարսից ուրիշ առասպելները, որոնք մտել են
Շահնամայի մէջ, ուստի և նորան կարող էր
Սամի առասպելն էլ ծանօթ լինել: Ուրիշ
խօսքով, Փիրղուսին ու Խորենացին իրարուց
անկախ կարող էին օգտուած լինել նոյն կամ

առնչութիւն ունեցող աղբիւրներից: Բայց այդ ժամանակ խօսեղիք չէր ունենալ Հայկի առասպելի վիպականութիւնը հերքելու, քանի որ Փիրդուսու աղբիւրները, զրաւոր թէ բերանացի, ժողովրդական ծագում ունին:

Հայկի առասպելն էութեամբ վիպական է: Այս առասպելը, ինչպէս բերած օրինակներից երևում է, իւր էական գծերով մի այնպիսի պատմութիւն է, որ շատ տարածուած է: Մենք բերեցինք իբրև օրինակ Դաւթի և հսկայ Գողիաթի կռիւը, որին նման է Սմբատի ու Հեփթաղի կռիւը, իսկ այս երկսին նման է մասամբ միայն, Տրդատի ու Գլթաց իշխանի կռիւը: Հայկի ու Բէլի կռիւն՝ ասոնց նման լինելով հանդերձ՝ աւելի նման է հսկայ Սամի և Քէրքույի կռուին: Մենք օրինակները, որոնց նմանները յետոյ էլ կըտեսնենք, կարող էինք բազմապատկել: Բայց բերածներըն էլ ցոյց են աւելիս, որ մեր Հայկի ու Բէլի զրոյցը իւր էութեամբ, բովանդակութեամբ ոչ միայն ժողովրդական վիպական ոգուն հակառակ չէ, այլ և շատ նման է հանգունատիպ բազմաթիւ զրոյցներին: Բոլորն էլ իրենց ձևով մի ժողովրդական վիպական ամփոփում են թշնամի ազգերի մէջ եղած նախնական կռիւների, որոնց մէջ պարագլուխներն առաջին տեղն են բռնում:

Այս ժողովրդական զրոյցները, — լինին իրողութեան վրայ հիմնուած, ինչպիսին հարող են լինել Դաւթի, Տրդատի և Սմբատի կռիւները, թէ զուտ առասպելական, — զանազան ժողովուրդների բերանին միատեսակ կերպարանք են ստացել, քանի որ ամեն տեղ էլ ազգերի վիպական շրջանում ընդհանրապէս ոչ միայն պատերազմներն իրար նման են, այլ և այդ պատերազմների մասին կազմուած զրոյցները։ Դա ընդհանուր հոգեբանական երևոյթ է։ Մարդիկ և ազգեր զարգացման միևնոյն շրջաններն են կատարում։ Միևս կողմից, պէտք չէ ժողովուրդների հոգեբանութեան և այն մեծ երևոյթը, որով հին զրոյցները միշտ նորոգւում են։ Նոր կատարուած իրողութիւնների և անցքերի պատմութիւնը ժողովրդի բերանին ստանում է արդէն պարաստի հին նման զրոյցների ու առասպելների կերպարանքը, այսպէս ասած՝ նոր զրոյցը հագնում է հին զրոյցի հագուստը, որով և հինը փոփոխուելով յարատեւում է։ Այսպէս պէտք է հասկանալ Հայկի, Սմբատի ու Տրդատի զրոյցների նմանութիւնը։ Անշուշտ, Սեբեոսը Սմբատի ու Հեփթաղի կռիւը, թէպէտ և Ագաթանգեղոսի պատմութեան շատ նման, իրենից չէ շինում։ Բայց և նա այդ բանը հաւաստեալ լսելով, այսինքն ժողովրդի մար-

դոց, Թէկուզ նոյն իսկ անհանատեսներն զրուցելով է գրում: Իսկ այդ ժողովրդի մարդոց բերանին հենց Սմբատի կռուի պատմութիւնը մի տեսակ հին վիպական կերպարանք ստացած պիտի լինի և մօտեցած Հայկի ու Բէլի կռուին:

Երբ մի անգամ տեսնում ենք, որ Հայկի առաապելն իւր էութեամբ ժողովրդական վիպական գոյն ունի,—որև գլխաւորն է,— այնուհետև մեծ նշանակութիւն է ստանում այն հանգամանքը, որ Հայկի կռիւ իւր մանրամասնութիւնների մէջ, գրեթէ սկզբից մինչև վերջ տարած է շատ վիպական ձևերով, դիւցազնական վիպական կերպարանքով՝ ինչպէս տեսանք, նման Սամի և Բէրբուցիի կռուին: Թուենք գլխաւորները:

1. Երկրի դորդալլ երկու կողմերի հրահաների յարձակման ժամանակ իսկական դիւցազնական վիպական մի գիծ է, որ շատ ազգերի վէպի մէջ կրգտնենք: Բայց չնայելով սորան, չգիտենք ինչպէս պա Խալաթեանը գրում է (եր. 113) հեշտ կերպով «Սոյն իսկ պատմուածքը—Բէլի դեռօրան ուղարկելը Հայկին, կռուի պատրաստուելը, Հայկի ճառն իւր զօրականներին, Բէլի սպառապինութիւնը, ճակատամարտի պատկերը և մի քանի տասնեակ հայերի պատերազմական խոնուկաց:

(НАТИСКЪ) Երկրի անազին ղղրղիւնը՝ [չակերտներն իրենն են],—... ոչինչ վիպական չունի»: Նախ, «մի քանի տասնեակ հայերի» կռուից չէ երկիրը դողում: Ինչպէս գրում է պ. Խալաթեանը ծագումով, այլ երկու կողմի հսկաների կռուից, որոնք, կարծում ենք, «մի քանի տասնեակ հայերից» շատ տարբեր բաներ են: Եւ ապա, եթէ պ. Խալաթեանը շատ չէ, փոքր ինչ ուշադրութիւն դարձնէր ժողովրդական վիպական միտիւններին, կրտսններ վիուվի, որ երկիրը դողում ու թնդում է ոչ միայն հարիւրաւոր՝ Հայկի ու Աէլի նման հսկաների կռուի ժամանակ, այլ հենց այդպիսի հսկաներից մէկի սովորական քայլելիս էլ: Թող մտաբերէ նա միայն Ռոստամի և կամ նոյն իսկ մեր Սասնու ծուռ Դաւթի քայլուածքը:

2. Վիպական գծերից է հակառակ պ. Խալաթեանի ցանկութեան, նաև Աէլի դեսպան ուղարկելը Հայկին, որ սա իրեն հնազանդի: Մենք երկու նման օրինակ միայն կը բերենք: Մեր «Սասնու ծուռերի» մէջ, շնայելով հակայ Դաւթի վնասներ է հասցրել և նոյն իսկ անպատուել է դեանման հակայ Մարամելքին, բայց սա իսկոյն չէ գալի զօրքով Սասուն, այլ նախ գեսպան է ուղարկում: որ իրեն հնազանդի Դաւթի: Երբ իւր գեսպա-

նը հպարտ Դաւթից խայտառակարար յետ է ձանապարհւում: նորնա զօրաժողով է լինում և դալիս Դաւթի վրայ: Բայց այս անգամ էլ գեռ նորից դեսպան է ուղարկում նոյն նպատակով: Կրկին մերժում ստանալուց յետոյ, նոր կուում են, իսկապէս Դաւիթն ու Մըւրամելիքը մենամարտում են, Դաւիթն սպանում է Մարամելքին և կռիւը վերջանում է: Ուրեմն մեզ ծանօթ նոյն պատմութիւնը, որ ուրիշ շատ գծերով ևս նման է իւր ընկերներին:

Շահնամայի ¹ մէջ Բէյքաւուսն արշաւում է Մազանդարանի վրայ և չնայելով որ նա Մազանդարանի թագաւորի բարեկամ հսկայ դեերից խիստ վնասւում է, բայց և այնպէս իւր դիւցազն Փարհադին դեսպան է ուղարկում Մազանդարանի թագաւորին, նամակ գրելով և պահանջելով նորանից հպատակութիւն և իւր աւատականը դառնալ: Մազանդարանի թագաւորը հպարտութեամբ ու խստութեամբ մերժում է: Չնայելով խիստ վիրաւորական պատասխանին՝ Բէյքաւուսը նորից դեսպան է ուղարկում, այս անգամ

¹. Heldensagen von Firdusi, an deutscher Nachbildung, von A. F. Schack, Berlin, 1865. Եր. 143 հան.

Ռոստամին, նամակ գրելով. «Մտադրման քա-
ծուռ է քո խելքը՝ յիմարը միայն կարող է
այդպիսի բաներ մտածել: Փարատիր քո
հոգու այգ հպարտութիւնք: Արեւ
սարկօրէն ինչ որ հրամայում էմ քեզ, թէ
չէ զօրքերս քո դէմ կրվարեմ ու կըսփռեմ՝
ճովէ ճովև քո ուղեղը՝ դեերքի դիակներրի պէս
կերակուր կըտամ անզղներին»¹: Մազանդա-
րանի թագաւորն աւելի ևս խստութեամբ
պատասխան է տալի և զօրաժողով լինելով՝
սպառազինուում է: Զէյ-Զաւուսն էլ իւր զօրքն
է առաջ վարում, աջ ու ձախ զնգերը յանձ-
նելով այս ու այն զօրավարին, ինքը մէջտե-
ղում է մտում: Իսկ զօրքի առաջից զնում
է Ռոստամը: Ապա գալիս է Զույայի (Dschuja)
և Ռոստամի մենամարար, հայհոյալից խօ-
սակցութեամբ, նման մեզ ծանօթ Դաւթի ու
Գոզիաթի, Դաւթի ու Մսրամելքի կռուին
և իւր միւս ընկերներին:

Այսպէս, գեսպան ուղարկելը՝ հպատա-

¹. Հնկն. Խորենացի. Ա. ժա. «Առաք (Բէյ)...
զմի ոմն յորդոց իորոց առ Հայկ... զայ նմա ի հնազան-
դութիւն եւ կեայ խաղաղութեամբ: Բնակեցեր, աւս, ի մէջ
ցրտութեան սառնամանեաց. այլ չեռ ու զեայ մեղկեայ
զցրտութիւն սառնուցեայ ին հպարտացեայ
քարուցոյ, եւ հնազանդեայ ինձ՝ կեաց ի հանդարտու-
թեան, ուր հանոյ է ինչ յերկիս իմում»:

կութիւն և հարկ պահանջելու համար, ինչպէս և դեսպանութիւնից յետոյ զօրք ժողովելը և ինչ մի տարածուած վիպական գիծ է: Ուրիշ օրինակներ բերելն աւելորդ ենք համարում:

3. Վիպական գիծ է խստութեամբ ու կոպտութեամբ խօսելը: որ նախնի ժամանակների կոպիտ բարքերի արդիւնք է: Դեսպանութեան խօսքերից Բէլի պատգամը նուրբ խստութիւն ունի և թէպէտ և Խորենացու կողմից ճարտասանօրէն յղուած, բայց և այնպէս կոպտութիւնը և Զէյ-Զաւուսի պատգամի նմանութիւնը դեռ երևում է: Հայկի պատասխանի համար Խորենացին բաւականացել է ասելով միայն թէ «խստութեամբ» էր: Բայց Անանունի մէջ գտնում ենք նոյն բովանդակութիւնն իբրև խօսակցութիւն Հայկի և Բէլի մէջ: «Զի՛ պնդեալ զաս զհետ իմ՝ դարձիր անդրէն ի տեղի քո՝ զի մի՛ մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց՝ քանզի ոչ վրիպի նետ իմ իմիք»: Պատասխանի ետ Բէլ, և ստէ. «Վասն այնորիկ՝ զի մի՛ անկցիս ի ձեռս մանկտւոյ իմոյ և մ.ռանիցիս, այլ եկ ի ձեռս իմ և կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործս զմանկունս ի տան իմոյ զորսականս»: Պատասխանի ետ նմա Հայկն և ստէ. «Ծո՛ւն ես դու և յերամակէ շանց՝ դու և ժողովուրդ քո: Եւ վասն այնորիկ թափեցից

իսկ այսաւր ի քեզ զհապարձս իմս: 1) «Ծրկու հերոսների իսկական վիպական հայհոյական խօսքերով այս պատմութիւնը թողնում է մի բոլորովին նախնական (altertümlich) և սկզբնական տպաւորութիւն», գրում է այս առթիւ պ. Գեղցեր: 2) Այս նկատողութիւնը շատ ճիշտ է: Օրինակներ բերելն աւելորդ ենք համարում: Յանկացողը կարող է գտնել Շահնամայի ու Իլիականի մէջ, Դաւթի ու Գողիաթի կռուի մէջ և ուրիշ շատ տեղերում:

4. Վիպական գծերից է և Կաղմոսի փախուստը Բէլի բազմութեան առաջից և քաջընթացիկ մարդոց ձեռով իմաց տալը Հայկին: Որ պատրաստութիւն տեսնէ Բէլի դէմ ելնելու: Յիշենք միայն Շահնամայից Գեժգեհէմին, Իրանի և Թուրանի սահմանի վրայ Սպիդ բիրդի հրամանատարին: Սոհրաբը ժողովում է զօրքերի մեծ բազմութիւն, հսկաներ, և մեծ ամբոխով գալիս է Իրանի վրայ: Ծորա գալիս մօտենում են «Սպիդ կոչուած բերդին»: Գեժգեհէմը Սոհրաբին յայթեղ ու յետ մղել չէ կարողանում և «շտապով փախ-

1. Պատմութիւն Աերեոսի եպիսկոպոսի. Ս. Պետերբուրգ. 1879 էջ. 4.

2. Zur arm. Götterlehre, եր. 127.

չուճ է՝ զդէպի երկրի ներսը իւր ամբողջ գեր-
դաստանի մարդկանցով, մի արագընթաց
մարդու՝ ձեռով յայտնելով Շահին. «Մեր
վրայ եկաւ մի բազմաթիւ ձիաւոր, ամենն էլ
կռուարար եւ կտրիճ մարդիկ զօրաւոր»,
որոնց «պարագլուխն է մի պահչաւան քաջա-
տիրտ մի հսկայ, որի հասակը բարձրութեամբ
երկձեղ ընով նստուց է շատ վեր», կամ
«քօյը ըարձր որպէս մի լեռ»: Գեժգեհէմն այս
յայտնելուց յետոյ՝ աւելացնում է թէ իրենք
չկարողանալով կռուել Սոհրաբի դէմ, փախ-
չում են դէպի երկրի ներսը և, եթէ Շահը
յապաղի և զօրքերը չվարէ կռուելու, նորա
երկիրը տակն ու վրայ կը լինի և նորա փառ-
քի ձեռութիւնը կանցնէ: ¹⁾ Ինչ է Կադմոսի
արարքն և Հայկին ուղարկած լուրը, եթէ
ոչ ինչ որ այս Գեժգեհէմն է անում: Նմա-
նութիւնը շատ տեղ նոյն իսկ բառերի մէջ
էլ երևում է: «Բէլ ամբոխիւ հետեակ զօրաց,
գայ հասանէ... մերձ ի տունն Կադմեայ: Փա-
խըստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթա-
ցիկս առաջի իւր առաքէ. Գիտեա՛ս ասէ, ով
մեծդ գիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ
քո Բէլ յաւերժիւք քաջօք, և երկայնադի-

1. Ծրդուսի: Ռուսամ եւ Սոհրաբ, բարզմ. Ս. Գիւ-
գադեանց եր. 70 հսն.

զօք հասակօք սկայիւք մըցողօք: Եւ իմա-
ցեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փա-
խեսցի, և գամ աւաթիկ տագնապաւ: Արգ-
ածապարեա խորհել որ ինչ գործելոց ետ
Հմմտ. Աերէօս (Անանուն) եր. 3. Դիմեայ
գայ Բէլ արքայ ի վերայ քո, և եկն Եհաս
մինչե ի տուն անգր. և ես կնաւ իմօզ
ե որ դւոզք ահաւասիկ կամ փախըս-
տական: Գեժդեհէմի և Կազմաբարարքը սահ-
մանազլխի պաշտպանութեան մի յիշողութիւն է
միայն: Դսկ Կազմեացի, Կազմեան նախարարու-
թիւն, կամ տուն Կազմեայ ըստ Խորենացու-
յայանի է մեր պատմութեան մէջ Հայաստանի
հարաւային սահմանների վրայ: Կազմեայն
ազգի իբրև նախահայր Կազմաս ստեղծուած
քինելը մի տարօրինակ բան չպէտք է համա-
րուի: Մեզ չպէտք է շփոթեցնի Կազմ—ոս
անուան յունական վերջաւորութիւնը 2: Բա-
ւական է միայն յիշենք Ազաթանգեղոսի մէջ
Տրգաս ձևի հետ և յունական վերջաւորու-
թեամբ Տրգատիոս, Տրգատէս ձևերը: Այն

1. Այլշան, Այրարատ, եր. 425, 427. ըստ «Հայ-
յաքի բաժնակի գօրարուի» Կազմեացի, (որից յետոյ գալիս
են Կորդուացի, Արծրունի, Ռշունի և Մոկացի) հա-
նում են 13200 զինուոր, որից անչի մեծ քիւ միայն
Սիւնի ունին արեւելեան սահմանների վրայ:

2. Халат. Арм. Эпосъ, եր. 78.

ինչ որ Ազաթանգեղոսի մէջ բնական է թւում
ինչու թորենացու մէջ Կարմոս ձեռն համար
բնական պիտի չլինի քանի որ թորենացին
պարզապէս չիլում է, որ Մարաբաից և
յատկապէս յունարէնից (Ա. ք. թ.) է առ-
նում այդ պատմութիւնը:

5. Հայկի առասպելի ժողովրդական ծա-
ցումը երևում է յատկապէս և այս կտորից-
«Պսկ բլուրն» ուր քաջամարտիկըն անկաւ
Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս. որ այժմ
ասին Գերեզմանակք¹: Բայց զգիակն Բէլայ պա-
ճուճեալ իմն դեղովք, ասէ [Մար Արաս]՝
հրամայէ Հայկ տանել ի Հարք և թաղել
ի բարձրաւանդակ տեղոջ, ի տեսիլ կանանց
և որդւոց իւրոց» (Ա. ժա.): Այս կտորը
պ. թալաթեանը (I. կր. 121. II. կր. 22)
քաղած է համարում Սուտ-Կալլիսթենէսից,
որի մէջ գրած է. «Սա (կղզին) Փարոս կոչի-
լայց Պրոտէս ի սմա բնակեցաւ. և շիրիմն
Պրոտեայ առ մեզ՝ պաշտաման արժանի եղեալ
Ի վերայ լերին միոյ ըարձու եկեալ բերին
զնա. այդ որ այժմ կոչի դիւցազգի գերեզ-
մանն և ցուցին նմա (Աղէքսանդրի) զաս-
պանն»: Պ. թալաթեանինն են գծածները:

1. Մի խոսք մեռագիրներէ մէջ այս ընթերցումն
է, որ եւ, միշտ պե՛տ է համարել:

Պրոտէս թաղուած է մի բարձր լեռան վրայ, որ կոչուում է «դիւցազգի գերեզման»։ Բէլ նոյնպէս թաղուած է մի բարձրաւանդակ տեղում, բայց ոչ թէ նորա թաղուած տեղն է կոչուում Գերեզմանք կամ Գերեզմանակք, այլ նորա ընկած, սպանման տեղը։ Ահա բովանդակութեան բոլոր նմանութիւնը։ Եւ այդ նմանութիւնը Կալլիսթենէսից վերցրած համարել լեզուական կողմից հիմնուելով սոսկ ոչնչութիւնների վրայ,—այդ, գիտենք, պ. Խալաթեանի վարուելու եղանակի թոյլ կողմն է։ Մի հաս ող այժմ (պ. Խալաթեանը գտել է և մի ըսայց շաղկապ sic!),—ասա՛ բոլոր լեզուական նմանութիւնն ևս։—«Տարօնոյ դաշտի բերանը Աշտիշատայ մօտ՝ կայ մի գեղ, զոր այսօր Բաղչոյ կը կոչեն տեղացիք, ըսայց Տարօնոյ պատմիչ Յովհաննէս եպիսկոպոս Վիշապ անուն կուտայ անոր»¹),—«Իբրև լուաւ շահն [Շահարաս] զայս համբաւ, դարձոյց գերեսս իւր՝ և եկն յԾրուանդակերտն հին, որ այժմ ասի Աղջաղալայ»²)։ Ուրեմն ինչ պիտի եզրակացնել,—Սրուանձտեանն ու Առաքել Դաւրիժեցին Խորենացուց կամ սուտ Կալլիսթենէսից են վերցրել իրենց որ այժմ (այսօր) ասի։

1. Մրուանձտեան, Գրոց-Բրոց, եր. 91:

2. Պատմ. Առաքել վարդապետի Դատրիժեցոյ, Վարդապատ, 1884 եր. 26:

կը կոչեն և ըստ բառերը: Եւ եթէ մեզնից
ամեն մէկն էլ խօսելով մի տեղի հին, բայց քիչ
փոխուած անուան մասին կարող է աւելաց-
նել օրինակ, «Կուաշ որ այժմ ասուում է
Կօշ», ինչո՞ւ Խորենացին չէր կարող գրել
«Գերեզման», որ այժմ ասին Գերեզմանակք»:

Լեզուական նմանութիւնն այսպէս ոչըն-
չութիւն է դառնում. մնում է բովանդա-
կութեան իրական նմանութիւնը, որ է՝
Բէլ ու Պրոտէս բարձր տեղում են թա-
ղուած: Բայց այդ դեռ ապացոյց չէ կարող
լինել, որ Խորենացին սուտ Կալիսթենէսից
է վերցրած, այլ ապացոյց այն բանի, որ
Հայկի առասպելը ժողովրդական ծագում
ունի: Երկենք միայն թէ իրարուց տեղով ու
ժամանակով հեռու ազգերի մէջ որքան շատ
իրարու նման առասպելներ և նոյն իսկ մի
որ և է տեղի հետ կապուած աւանդութիւն-
ներ կան: Չմոռանանք և այն, որ հին Գե-
րեզմանները սովորաբար բարձրաւանդակ տե-
ղերում են շինուած և խիստ շատ տարա-
ծուած է զանազան հին և նոր ազգերի մէջ
ցոյց տալ, սովորաբար բարձր տեղերում մի
տեղ, հսկայի-օղուզի կամ ազնաւուրի գերեզ-
ման կոչմամբ: Թողնենք օտարներին: Միթէ
Հայաստանում այսօր ևս այդպիսի գերեզման-
ներ շատ չկան: Եայտնի են Փոքր Մասիսի

Քրայ եղած Օղուզի գերեզմանները: «Շէյխի քսուած գերեզմանները՝ զորս քրդերը կը պաշտուեն և շատ տեղ Հայն ալ քրդին հետ ուխտի կ'երթայ հոն . . . որք առ հասարակ ծառերու պրակներով շրջապատուած կը լինին, և դարերու վըայ ըարձրադիր»¹⁾: Մի «Ազնաւուրի գերեզման» նկարագրուած է Սրուանձտեանը Մանազկերտի մօտերը, «ութ քայլ մեծութեամբ . . . որ քարակոյտով մը բարձրացած է», որ գիւղի տէր շէխը իւր նախնին համարելով «կը մեծօրէ իրիւ մնարգարէի շիրիմ»: «Այսպիսի մեծագիր և Ազնաւուր անունով գերեզմաններ կը գտնուին ուրիշ ուրիշ», աւելցնում է Սրուանձտեան²⁾: Ծոյնպիսի մի Ազնաւուրի գերեզման նկարագրուած է նա նաև Բօստան Խայա գիւղի մօտ, դարձեալ Մանազկերտի մօտերը, և մինչև անգամ Ազնաւուրի մասին պատմուած մի առասպել է մէջ բերում և թէ «գեղի կնկախքը շէր [երգ] կըկայեն Ազնաւուրի վրայ»³⁾:
Պրոտէսի «դիւցազգի գերեզմանի» աղղեցութեան տակ չեն ստեղծուած, անշուշտ, Հայաստանում այժմեան ոյս հօգաների, Ազ-

1. Սրուանձ. Գրոց-Բրոց, եր. 103:

2. Նոյն, եր. 63.

3. Նոյն եր., 66 հսկ.:

Նաւուրի կամ Օղնւզի գերեզմանները, որոնք
նոյնպէս պաշտամանների առարկայ են՝ ինչպէս
Պրոտէսի գերեզմանը, Այդպիսի գերեզմանները,
ասանցինք, շատ տարածուած են և ոչ միայն
Հայաստանում այլ ուրիշ երկիրներում ուր
ցոյց են ապիւս այս կամ այն դիւցազնի գերեզ-
մանը: Եւ չգիտենք ինչու, երբ Սրուանձտեանի
կամ ուրիշների մէջ, մի այդպիոի գերեզմանի
մասին գրուած ենք գտնում, շատ բնական
ենք համարում, իսկ երբ Խորենացու պատ-
մութեան մէջ գտնում ենք թէ մի տեղ ցոյց
էին ապիւս իբրև հսկայ Բէլի գերեզման, պի-
տի կարծել թէ շինծու է: Պրոտէսի գերեզ-
մանը միայն այդ կարգի բազմաթիւ գերեզման-
ների թուին է պատկոնում ինչպէս և Բէլի
գերեզմանը: Եւ այս հանգամանքը հենց
որով Բէլի առասպելը կապուած է հսկաների
գերեզմանի շատ տարածուած մի ժողովրդա-
կան աւանդութեան հետ, մեծացնում է
հաւանականութիւնը թէ այդ առասպելը ժո-
ղովրդական ծագում ունի:

Երբ այնպէս, չայցի ստասպելն իւր
ընդհանուր բնականութեամբ ու գոյնով
և անոտ վերելում յիշած գլխաւոր մասերով
ժողովրդական վիպական կերպարանք ունի,
այն ժամանակ նոր իրենց նշանակութիւնն են
ստանում և դալիս վիպական կերպարանքը

զօրացնում են և ուրիշների դիտած երեք կողմեր ևս, որոնք մենակ վերցրած առանձին արժէք չունին հարկաւ: Այդ կողմերն են. նախ՝ բազմաթիւ մակղիւրները, որոնք մեծ մասամբ վերաբերում են, ինչպէս սովորաբար վէպի մէջ, հերոսների արտաքինի նկարագրութեանն ու մարմնական յաջողութեանը: Բայց այդ մակղիւրները բուն, հարազատ ժողովրդական համարելու ոչ մի հիմք չունինք: Ի նկատի պէտք է ունենալ և այն, որ Մորենացին անմիջապէս չէ օգտւում ժողովրդից, այլ առնում է մի օտար լեզուով գրուածից: Այնուհետև նշանակութիւն են ստանում նաև զրոյցի մանրապատում հանգամանքը, թէպէտև այստեղ ճարտասանութիւնն էլ կարող է մեծ դեր խաղացած լինել, — և ապա՝ յատուկ անունների ստուգաբանութիւնը:

Հարք բառի ստուգաբանօրէն հայր բառից ծագումը «բանասիրութեան անհամաձայն» է գտնում Գարագաշեան, ¹⁾ որովհետև հայր բառի յոգնակին հարք հղովւում է հարանց, մինչդեռ յատուկ անունը Հարք ունենում է Հարքայ: «Ուստի աւելի տրամաբանական է ենթադրել, գրում է նա, թէ Հարք անուան

1. Ա. Մ. Գարագաշեան, Գննական Գտած. Հայոց Մասն Ա. Թիֆլիս. 1895 եր. 146:

պատահական նմանութիւնը հայր բառին յղանակւոյն հետ թելադրած է այն պատմութիւնը: Այս անհամաձայնութիւնը, սակայն, արժէք ունի, երբ այդ ստուգարանութեան վրայ պատմական տեսակէտից նայենք, ինչպէս և նայում է պ. Գարագաշեանը: Այսինքն, երբ հաստատել ուզենանք թէ իրօք հայրեր — հարք են բնակուել այդ տեղում: Ուստի և յետագայում տեղի անունը հայրք է կոչուել: Բայց մեր նպատակն այստեղ այդպիսի պատմական ձգնարարութիւն գտնել չէ, այլ այն միայն թէ կարող չէ՞ր արդեօք ժողովրդի մեջ նոյն իսկ երկու տարբեր արմատներից ծագած բառերի պատահական նմանութիւնից մի աւանդութիւն ստեղծուած լինել: Ամենայն ազգերի մեջ կան այդպիսի տեղական ժողովրդական աւանդութիւններ, որոնք այս կամ այն տեղի լեռան, աւերակի և ըն ծագումը բացատրելու համար են միայն ստեղծուած: Այդ այսպէս կոչուած պատմառական գրոյցները (ätiologische Sagen) հարկաւ մեծ մասամբ քմահաճոյքաբացատրութիւններ են, յաճախ հիմնուած ստուգարանութիւնների վրայ, որոնք լեզուաբանական տեսակէտից միշտ չեն անպատճառ: Ուստի և այդ բանասիրութեան անհամաձայնութեան վրայ հիմնուելով միայն կարելի չէ ասել թէ հենց ժա-

դովրդի մէջ ևս չէ եղած Հարբ անուան մի այդպիսի բացատրութիւն և թէ այդ շինծու մի բան է¹: Միւս կողմից «բանասիրութեան անհամաձայն» լինելն ևս դեռ բոլորովին չէ ապացուցուած, որովհետեւ յայտնի է համաբանութիւնը (analogie) որքան մեծ դեր է կատարում լեզուների մէջ, և որքան խոնարհման ու հոլովման և այլ ձևեր լեզուների մէջ փոփոխւում են համաբանութեամբ: Եւ մի² թէ այդ օրէնքով չէ որ մենք այժմ վարք — վարքի, բարք — բարքի, աչք — աչքի ենք հոլովում փոխանակ վարուց, բարուց, աչաց հոլովելու, և կամ օտարազգի ծագում ու կազմութիւն ունեցող Տփղիս՝ իբրև յոգնակի առնուելով Տփղիսաց է հոլովւում, փոխանակ Տփղիսի կամ Տփղիսայ հոլովելու: Պ. Գարագաշեան չէ յիշում թէ որ դարու մատենագրի մէջ Հարբ — Հարբայ է հոլովուած²: Բայց որ դարում էլ որ լինի, մի անգամ

1. Халат. Арм. ЭПОСЪ, եր. 76.

2. Արարտ, 1899. № 9. եր. 412 հ. Գարեգին վրդ. Յովսէփեանի «Խոսրովի Թարգմանիչ» յօդուածի մէջ: Մայր Արոտի գրադարանի Մ. Ց. № 730 «Յովհաննու Իմաստասիրի հայոց կաթողիկոսի սակս ժողովոց որ եղեն ի Հայս» մեռագրից առած կտորի մէջ յիշում է Մանակեոսի ժողովի (726 թուին) եպիսկոպոսների բուն «Արիտու Հարբ», առանց վերջի յ օտար:

երբ ՀԱՐՔ բառի ծագումը մոռացութեան է տրուած, կարող չէր արդեօք մեր գրականութեան սկզբի դարերում էլ համարանութեամբ Հարքայ հոլովուել: Մենք, անշուշտ, չենք պնդում, որ ՀԱՐՔ հայր բառի յոգնակին է, այլ այն միայն ուզում ենք ասել, որ այդ քացատրութեան դէմ առարկութիւնը դեռ շատ թոյլ է:

Նախ քան մեր եզրակացութեան ամփոփումին անցնելը, նկատենք մի հանգամանք ևս: Չգիտենք ինչո՞ւ արդի ժողովրդական զրոյցները, որոնք պատմում են Հայկի ու Բէլի մասին Վանայ ծովի շուրջը, անպատճառ յօրենացու ազդեցութեամբ մըտած պիտի համարել ժողովրդի մէջ, և ոչ թէ, յօրենացուց անկախ, հին ժողովրդական զրոյցների սերունդ, որոնք կապուած մնում են Վանայ ծովի շուրջը—և յատկապէս այդ ծովի շուրջը—եղած տեղագրական անունների հետ: «Վանայ մէջ մէկ թաղ կայ, բնակչաց, բերդի պարսպէն դուրս, որ մինչև ցայսօր Հայկականք կրկոչուի... Հայոց ձոր... մինչև ցայսօր Հայոց ձոր կրկոչուի. այնտեղն է Տըրշող գեղը, ուր Հայկի լայնալիճ նետով բացուած հսկայ Բէլի գրահապատ կողի շողը կրտեսնուէր¹. այնտեղ է Հայկ և Աստուա-

1. Ահա մի ստուգաբանութիւն, որ չգիտեմք ժողո-

Ճաշէն անուանով գեղերը..... բնակիչք յժէ
կանուանեն այս [Հայի] գեղը և յաւուռ ձոր
կանուանեն զՀայոց ձորն, որ կրնայ ըսուիլ
ճան Էաւոց ձոր»¹ :

Ծոյն անգում (եր. 48) Սրուանձառանը
պատմում է հետեւեալ պրոցը: «Իստպան գե-
ղէն Զրհորի սահմաններով դէպի Նէմրութ ի
ղաշտակողմն քնալով կրտսնես կարգ մը
անկուածի կամ կանգնուածի պէս սև քարեր,
որոնք հեռուէն և մութ ժամանակ կրնան խա-
րել զմարդ՝ թէ կարաւան են անոնք, կամ
մարդ և ուղա: Տեղացիք Բէլի Ուղտոր և
ուղտապաններ կանուանեն զանոնք, և որոց
համար կրվիպասանեն ու կրսեն թէ «Կաւապաշտ
Թագաւոր է իզեր Բէլը, և մեծ զօրքով
եկեր Հայոց Թագաւորի ու երկրի վրայ կոխ-
Հայոց Թագաւորը Աստուծոյ ձեռնով սպաններ
է զԲէլ, և հաներ Նէմրութայ գլուխ. այնտեղը
փորեր թոնիր շիներ, մէջը կախեր վառեր է:
Աստուծոյ հրամանքով այն կրակը ջուր է կրա-
րեր, զմոխիրն հողի ապի իջուցեր, որ շեղի-
քամին անոր փոշին տանի: Բէլի մարդիկ և
ուղտերն ալ իրենց վախէն քար են կարծր:
Միշտ և այսօր թոնիրն ու ջուրը կայ և այս

վրոյից և անուռ Սրուանձառանը, թէ իրենից և զհետև:

1. Սրուանձառան՝ Կրոց Կրոց. եր. 113 հմ.:

Ջուրն է՝ որ սարի տակով կիջնայ Մեղրագետի
ակնէն կըբզխէ և այդ գետը կըկազմէ:

Նոյն զրոյցի մի ուրիշ ձևը բերում է հ.
Սարգսեան իւր տեղագրութեան մէջ:

Եթէ Սարգսեանի բերածի մէջ, բազմաթիւ
ժողովրդական մտփւնների հետ, գրքերի ազ-
դեցութիւն ևս երեւում է: Սրուանձտեանի
բերած այս զրոյցի մէջ Սորենացու ազդեցու-
թիւն չէ երեւում: Կռապաշտ թագաւորի և
(Սաշապաշտ) հայոց թագաւորի կռիւը շատ
սովորական մի բան է մեր ժողովրդական
զրոյցների մէջ և տեղիք չկայ կարծելու թէ
Սորենացուց է անցած ժողովրդին: Բայց և
այդ կռիւը հենց երկրորդական տեղ է բռնում
մեր զրոյցի մէջ, ուր էականը Բէլի ուղտերի
քարանալն է և Նէմրութ սարի գլխի ջրա-
ւազանի ծագման պատմութիւնը: Բայց այս
վերջին երկու տեսակի աւանդութիւններն էլ
շատ տարածուած են: Զար կտրելու այդպիսի
պատմութիւններ շատ կան, որոնցից մի երկուսն
էլ բերում է Սրուանձտեանը (եր. 50 հտ.):
Նոյնպէս աղբիւրների ջրաւազանը թոնրով և
թոնրում այրուելու մի պատմութեամբ բա-
ցատրելը մի տարածուած աւանդութիւն է, որ
նոյն Սրուանձտեանի մէջ (եր. 53) գտնում
ենք. մի ուրիշ ձևով կապուած նաև Լէզք
գիւղի մօտ եղած աղբիւրի ջրաւազանի հետ:

Դսկ այս աւանդութիւնն իբրև թափառականը
զրոյց՝ դանում ենք և Տ. Նաւասարդեանի
հեքիաթների ժողովածուի մէջ Է. գրքոյկ եր.
39 «Աղքատին պաշ տուող կնիկը» վերնագրով:

Սրուանձտեանի բերած այդ զրոյցն՝ ու-
րեմն, իւր ձևով Խորենացու ազգեցութեան
տակ ստեղծուած համարելու տեղիք չունինք:
Շատ հաւանական է, որ ինչպէս տեղագրա-
կան անունները Հայկ, Հայոց ձոր և լն. Խո-
րենացու ժամանակից ցայսօր, հարկաւ անկախ
Խորենացուց, մնացել են ժողովրդի մէջ, այդ-
պէս և արդի ժողովրդական զրոյցը հին զը-
րոյցների մնացորդն է, որը, շեշտում, ենք
Խորենացու զրոյցին շատ էլ նմանութիւն
չունի: Յայտնի է, ժամանակի հեռաւորու-
թիւնն առանձին նշանակութիւն չունի զը-
րոյցների յարատեւելու նկատմամբ: Եթէ Ա-
նանիա Շիրակացու ժամանակից մինչև այ-
սօր կարող է մնացած լինել Վահագնի յարդ-
գողութեան առասպելը նոյն բնաւորութեամբ,
որ ունի այդ առասպելը Շիրակացու մէջ¹⁾,
ինչո՞ւ անհաւանական պիտի լինի թէ Խո-

1. «Յարդգողը նշան է, որ ժամանակով ուրիշ
արարածոց աստուած իւր մշակները դրկեր մեր երկրի
աստուծոյ կայն յարդերը գողցեր . . . յարդը քափեր
երկնից երեսն ու մնացեր»: Սրուանձտեան, Գրոց-Քրոց
եր. 108.

րենացու կամ Մար Արասի ժամանակից մինչև այսօր կարող էր ժողովրդի յիշողութեան մէջ մնալ Հայկի ու Բէլի առասպելը:

Այս ամենն ի նկատի ունենալով, ինչպէս և այն, որ Հայկ՝ հսկայ նշանակութեամբ և իբրև առասպելական որսորդ՝ Օրինի հաւասար գործածուած ենք գտնում թարգմանիչներին, գալիս ենք այն եզրակացութեան, որ Հայկի ու Բէլի պոասպելն ամենայն հաւանականութեամբ ժողովրդական հիմունք ունի: Եղել է, հաւանօրէն, մի տեղական առասպել հսկայ որսորդ Հայկի և մի օտար բռնաւոր հսկայի՝ Բէլի կռուի մասին, որոնց համար և վանայ լճի շուրջը տեղեր են ցոյց տուել:

Առասպելի կապուելն սւշտարակաւի-նութեան հետ.— Թէ այդ հին ժողովրդական զրոյցն ինչպիսի կերպարանք է ունեցել՝ զըժուար է ասել: Մեր ունեցածը զրական մըշակութիւն կրածն է: Աւելի ևս դժուար է ասել այժմեան միջոցներով, թէ արդեօք հենց ժողովրդի մէջ հայ ազգի ծագումն այդ Հայկ

1. Հայկին իբրև որսորդ և ներկայացնում ևս Բէլի խօսքը Անանունի մէջ. « . . . Ունեւով ի գործս զվանկունս ի օտն իսոյ զորսականս » (Սեբեոս, եր. 4):

հսկայի անուան հետ կապուած է եղել, թէ՛ ժողովրդական զրոյցից օգտուողի սեպհական գիւան է այդ: Յամենայն դէպս, զրոյի մտառ շատ պարզ կերպով երևում է յատկապէս հայ ազգի ծագման հնութեան և աշտարակաշինութեան հետ կապուած լինելու նրկատմամբ:

Ազգերի և լեզուների սկիզբն աշտարակաշինութեան հետ էր կապուած ժամանակի հոսկայողութեամբ՝ սուրբ Գրքին հետեւելով: Խորենացին ևս այդպէս է վարուում իւր մեկնութեան մէջ պարսից ազգի սկզբնաւորութեան և Բիւրասպի մասին խօսելիս: «Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի . Աժդահակայ՝ առ Նեբրութաւ նախնի նոցա: Զանգի ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր . . . զլիւաւորք և ցեղապետք որոշեալք զիւրաքանչիւր սահմանս ժառանգեցին . . . Սա (Բիւրասպ) . . . զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր հնազանդեալ Նեբրութայ» (Ա. Գրքի բ. յաւելուած):

Սոյնպիսի մի շինովի քան է, հարկաւ, Հայոց ազգի ծագումն աշտարակաշինութեան հետ կապելը: Եւ, ինչպէս երևում է, Խորենացու արածն է այդ: Նո՛ր որպէս զի այդ յեզիւրումին հաւատ ընծայուի, կարեօր է համարում առաջուց յայտնել իրենից թէ

Բէլը Ս. Գլքի Ներքովթն է ¹⁾: Բայց նա ոչ մի հիմ չունի այդ ենթադրութեան համար, այլ գրում է լոկ խօսքով. «ՉԲէլայ, առ որով նախնին մեր Հայկ, բազումք բազում ինչ ալ ընդ այլոյ պատմեն. ըսյց ես ասեմ՝ զԿոնստու անուն եւ զԲէլ՝ Ներքովթ լեալ» ²⁾:

Ինչպէս երեւում է, Խորենացու աղբիւրի մէջ այդ նոյնացումը չէ եղել: Եւ այս հաւանական է. թւում նաեւ այնու, որ Անունի մէջ ևս, — թէպէտև Աստուածաշնչի մի քանի ձևերից աւ նկարագիրներէց օգտուել է գրողը — Բէլը Ներքովթի հետ նոյնացած չէ: Այնտեղ ասած է աշտարակաշինութիւնից յետոյ. «ի վերայ առն ընկերի» ³⁾ առնոյր աս-

1. «Թայտարտութիւն սակաւոյ քի ըստ առօտ-
նոցն ասացեալ է Բէլք. ըստ աստուածային թանկց անը-
մարտութեամբ նարուք է» (Ա. Է.):

2. Խորենացու պատմաբանութիւնը՝ «որպէս Ե-
գիպօսցիք թուեն հաւասար Մովսիսի, Եփեսոսու, արե-
գակն, Կոնոնու, որ է Բամ, Բուշ, Ներքովթ». . . շատ
շատ՝ կարող էր, ժամանակի հասկացողութեամբ, Կոնո-
սիսն նոյնացնել Ներքովթի հետ: Իսկ որպէս զի Բէլն էլ
Ներքովթի հետ նոյնանար, հարկաւոր էր գտնել, որ Կոն-
ոնու եւ Բէլ նոյնացած լինէին: Բայց այդ լկայ: Հմեռ.
Ա. Ե. «զՆերքովթ, որ է Բէլ»:

3. Գ. Խաչաբեանը (Եր. 56) քարգմանած է յոգ-
նակի ու ռոսարպայի՝ վերջինը քննարկ մէջ եզակի է՝
քննարկ:

րըն Տիտան, յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի»։ Ուրեմն ընկերի հետ կուում է Տիտանը, որև առաջին թագաւորոն է լինում երկրի վրայ, եթէ միայն «յորում առաջին թագաւորեաց...» չհասկանանք, ինչպէս «յորում» ձեռ պահանջում է, թէ «որի ժամանակ, այսինքն կուի ժամանակ, առաջինը, այսինքն ընկերը, թագաւորեց»...։ Բայց ո՞վ է այդ «ընկերը», որի հետ կուում է Տիտանը։

Եւսեբիոսի Զրոնիկոնի մէջ աշտարակաշինութեան պատմութիւնը (որից յերկուուած է Խորենացու աշտարակաշինութեան պատմութիւնը, ինչպէս ապացուցել է պ. Խալաթեան. I. 48 հտ. II. 1 հտ.) ըստ Աբիդենոսի վերջանում է. «Եւ յետ այնորիկ Կրովն ի Տիտանն մարտ պատերազմի ընդ միմեանս բախէին»։ Իսկ ըստ Բազմավէպի (Սիբիդոյայից առած). «Իսկ յետ ջրհեղեղին Տիտանն և պրումէթե լինէին, ուր և Տիտանն ընդ կրովնի ի մարտ պատերազմի զրգռէր»¹։ (Հմմտ. Խորենացի Ա. զ. Աբիդ ի բռնանալն, ասէ [Սիբիդոյ], Զրուանայ (Կոնոսոսի), ընդդիմացան նմա Տիտանն և Յապետոսթէ,։

¹ Եւսեբի Կեսարացոյ ժամանակակեանք, Վեներիկ. 1818 եր. 38 հտ. եր. 53.

ի մարտ պատերազմի ընդ նմա զրգռելով»)։ Անանունի մէջ ևս Տիտան անունը Նւսերիոսից վերցրած է համարում պ. Խալաթեան (II. եր. 5)։ Եթէ այս հետեւութիւնը ճիշտ է, այն ժամանակ Անանունի հատուածը՝ «ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան» պէտք է հասկանալ ըստ Նւսերիոսի՝ այսինքն թէ այդ ընկերը, որի հետ կառուում է Տիտան, կրօնն (Կռոնոս) է։ Եւ արդեօք «ընկեր» բառը «կրօն» բառի մի ազաւաղում չէ՞ գրչագրիչների մէջ։

Ինչպէս էլ լինի, ըստ Անանունի, աշտարակաշինութիւնից յետոյ երկու կառուողներից՝ կամ «ընկերն» (կրօնն?) է թագաւորում կամ Տիտանը։ Այնուհետեւ շարունակում է Անանուն. «Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր զինքն»... Կարելի չէ այս Տիտանեան Բէլին նոյն համարել վերեւում յիշած Տիտանի հետ, որ ընկերի (կրօնի?) հետ կառուում է։ Բէլը, որի հետ կառուում է Հայկը «Տիտանեան» է միայն, այսինքն Տիտանի սերունդից մի թագաւոր, որ իրեն իբրև աստուած պաշտել տալով «զամենայն ազգս ի ծառայութիւն իւր կոչէր»։

Խորենացին, որովհետեւ Սիրիդայից գիտէ (Ա. զ.), թէ առաջին թագաւորողն ու բռնացողն Զրուանը (=Կռոնոս) է, որի դէմ

կուռում է Տիտանը, և որովհետև նա ինչպէս տեսանք, Կռոնոսին ու Բէլին նոյնացնում է ուստի և աշտարակաշինութեան պատմութիւնից անմիջապէս յետոյ Բէլին (= Կռոնոսին) է թագաւորել և բռնանալ տալիս երկրի վրայ: Այդ անելուց յետոյ, սակայն, նա մոռանում է շուտով իւր արածը և, հետևելով իւր աղբիւրին, Բէլին այնուհետև շարունակ Տիտանեան է կոչում, որով և ինքն իրեն հակասում է. զի Բէլ = Կռոնոս (= Զրուան, որի դէմ կուռում է Տիտան) լինում է փանջամայն և Տիտանեան այսինքն Տիտանի սերունդ:

Առասպելի ծագումը:—Պ. Գեյցիւրը կարծում է՝ Հայկի առասպելի մէջ պահուած է ասորական քաղաքակրթութեան, կուլտուրայի և կրօնի հայոց վրայ ունեցած զօրեղ, սկզբում թշնամական, ազդեցութեան պարզ յայտնի մի յիշողութիւն: Սակայն աղոր համարնախ պէտք էր ցոյց տալ, որ այդ առասպելը բնիկ հայկական է և հայ ժողովրդի մէջ է սկիզբն առել իբրև յիշատակ այն յարաբերութեան, որ հայերն ունեցել են իրենց դրացի հարաւային ազգերի հետ, որոնց աստուածն էր Բէլ: Բայց միթէ կարող չէ այդ զրոյցի մէջ մնացած լինել Հայաստանի նախահայ բնակիչների՝ Ուրարդացիների ասորեստանցոց դէմ մղած պատերազմների յիշատակը, որ յետոյ հայերը ժա-

առնել են Ուրարդացիներից: Յաճախ մի ազգ, բռնելով մի ուրիշ ազգի երկիր, սեպհականում է և սուրա զրոյցներն ու աւանդութիւնները, հարկաւ, փոփոխութիւններով: Միւս կողմից այդ առասպելը, քանի որ իւր եմանները շատ ազգերի մէջ կան, կարող է նաև ուրիշ ազգերից մի փոխառութիւն լինել, որ յետոյ անդամոտիւած է վանայ լճի շուրջը և կարուած Քէլ և Հայկ անունների հետ: Ուրիշ խօսքով, այդ առասպելը կարող է պատճանել այսպէս կոչուած Թափառարկան զրոյցների (Wandersagen) անսակին, որոնք անցնում են մի անձից միւսին, մի տեղից միւսին, մի դիպուածից միւսին: զտնազան ժամանակներում կրկին պատմուած են իրենց գլխաւոր բովանդակութեամբ. որոշ չափով տեղէ տեղ, ժամանակէ ժամանակ Թափառուան շրջում են: Բնակատարար այդպիսի պատմուածքները կրկին ու կրկին փոխանցման ընթացքում բաւականի փոփոխուած են, բայց գլխաւոր մտածիւնները և հիմնական դժեբք նոյն են մնում: Երբեմն նոյն իսկ միթոսը (Mythos) Թափառական զրոյցի փերպորանք է ստանում և կամ նոյն առասպելը, միթոսը մի տեղ:

1. E. Bernheim. Lehrbuch der Histor. Methode. 2te. 264. 2ed.:

Ներկայանում է իբրև բնիկ առասպել, մի ուրիշ տեղ իբրև փոխառութիւն: Այդպիսի մի թափառական առասպելի միթոսի գեղեցիկ օրինակ է Ջուիցերիայի ազատութեան գործի մէջ մեծ դեր խաղացող Տէլի գրոյցը: Տէլը որսորդ է և քաջաձիգ աղելնաւոր, ինչպէս մեր Հայկունա էլ Շուէյցարիա մանող բռնաւորին սպանում է իւր նետով և ազատում իւր երկիրը: Մա նոյնպէս դարերից ի վեր երգով, խօսքով ու պատկերով փառաբանում է նորա անունով կան մատուռ և սարահարթ (Tellplatte) Բայց չնայելով այս ամենին՝ այժմեան հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ այդ ազգային հերոս Տէլի գրոյցը Ջուիցերիայում բնիկ չէ, այլ ամենայն հաւանականութեամբ Դանիացի քաջ Տոկոյի գրոյցն է, որ նոյնութեամբ անցել է Շուէյցարիա, և Տէլն այստեղ ազգային հերոս է դարձել: Մոյն գրոյցը պատմւում է և ուրիշ ազգերի մէջ, և հիմնապէս մի հնդեւրոպական հին գրոյց է, որ առասպելաբանական, միթոլոգիական, հիմունք ունի և նոյնանում է առասպելական հսկաների որդի Էգիլի և իւր երկու եղբայրների գրոյցի հետ: «Ոսկ այգերեք հսկաները հաւասար են գասւում հնդկական Ռնդրա աստուծու, որ իւր նետերով և կայծակներով խորտակում է ամպրոպի ու գիշերուայ դևերի (Dæmon) ամպեղէն

բուրգը՝ երեք զլխաւոր մարտակիցներին: Սկանդինաւական առասպելաբանութեան մէջ Խնդրային համապատասխան է հսկայ Օդհին աստուածը՝ որ իւր հնագոյն կերպարանքով նոյնպէս նետ աղեղ է բանեցնում և կռւում է ձմեռուայ ու խաւարի հսկայ բռնակալների դէմ: Այդ Օդհինը՝ աստուածների և հաւանօրէն մարդկանց հայր՝ ներկայանում է ոչ միայն իբրև զօրավար՝ որ մի զօրքի գլուխ անցած կռւում է մի ուրիշ թշնամի զօրքի դէմ՝ այլ և իբրև կատաղի որսորդ (Wilder Jäger)՝ որի գերեզմանն անգամ շատ անգ ցոյց են տալիս Գերմանիայում: 1.

Այսպէս Յէլի զրոյցը բնութեան մի առասպել է՝ որ իւր հիմքն ունի այն տշխարհայեցողութեան մէջ՝ որ նախնական մարդիկ ունէին բնութեան երևոյթների վրայ: Երա լուսոյ կռիւն է ընդդէմ գիշերուայ և ձմեռուայ՝ որը մանուկ ազգերն ըմբռնել են իբրև մի աստուածային աղեղնաւորի կռիւ: Եւ այնուհետև բանաստեղծել շարունակելով և մարդկային կերպարանք տալով՝ դարձրել են այդ կռիւը քիջաձիգ աղեղնաւորի կռիւ իւր բռնակալ տիրոջ դէմ՝ որին և աղեղնաւորը

1. E. H. Meyer, Germanische Mythologie, Nr. 244:

ապանում է: Ուրիշ խօսքով, առասպելը առասպելականից իջել պատմական է դարձել:

Մի տեղ այդ առասպելը բնիկ է, ամենահին ժամանակներից ի վեր գոյութիւն ունի մի ուրիշ տեղ, ինչպէս Ջուրջերիայում հաւանօրէն, փոխառութիւն է: Մի տեղ պահել է իւր նախնական առասպելական, միթոլոգիական բնաւորութիւնը, մի ուրիշ տեղ, ինչպէս Ջուրջերիայում, պատմական դասնալով աստուածների առասպելը կարգւել է ազգի ազտութեան կռուի հետ և փոխուել գարձել է Տէլի հայրենասիրական գործը:

Արդ, թեթև բաղդատութիւնից անգամ երևում է, որ մեր Հայկի առասպելը միևնոյն Տէլի, կամ Օգհնի առասպելն է: Դա միևնոյն պատգի, քաջաձիգ աղեգնաւորի կռիւն է բռնակալի դէմ: մեր առասպելի մէջ ևս փեղբունը կազմում է քաջ նետաձգութիւնը նետով թշնամուն ապանելը և իւր երկիրն օտար բռնաւորից ազատելը:

Այս համեմատութիւնը միայն բուսական է մեզ ցոյց տալու, որ մեր Հայկի գրոյցի հիմունքը, — լինի այդ գրոյցը մի փոխառութիւն, թէ հայոց մէջ նախաժամանակից ի վեր գոյութիւն ունեցող մի առասպել, — պատմական չէ, այլ առասպելաբանական: Ժամանակ ընդհանուր առասպելաբանական աշխար-

Հայեցողութիւնից: Յետագայում միայն այդ առասպելը, հայերի կամ թէ նախահայերի՝ իրենց հորաւային դրացիների յատկապէս ասորեստանցոց գուցէ և Բաբելացոց՝ հետ ունեցած յարաբերութեան պատճառով, կրել է պատմական ազդեցութիւն: Հին թշնամի դէի, զեմննի տեղ անցել է Բէլը, որ Բաբելարոց, քաղդէացոց և ուրիշների արեգական աստուածն է: Երկնքի և լուսոյ տէր, աշխարհի և մարդկանց արարիչ, որ աստղերին իրենց ճանապարհը ցոյց է տուել: Բէլ կոչուածը, որ նշանակուած է տէր, արոււմ է և ուրիշ աստուածների և աստղերի, ինչպէս և թագաւորների: Այսպէս և հնոց պատմութեամբ Ասորեստանի թագաւորներից մէկը կոչուել է Բէլ, որ ազատել է Բաբելոնն արաբների լծից, և որի որդին է համարոււմ Նինոս: Բայց Բէլն սկզբնապէս արեգակնային աստուածութիւն է: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ մեր հսկայ Հայկն ևս, մի համաստեղութեան կոչոււմ է, պարզ կրլիների, որ հին առասպելը իւր այս կերպարանքի տակ դեռ ևս պահուած է իւր առասպելական բնաւորութիւնը, որով արեգական կամ աստղերի աստուած Բէլի դէմ կոռոււմ է մի աստղային դիւցազն Հայկ¹:

1. Պեճեֆ Է Ակաեչ, որ Հայկ համաստեղութիւնը ո-

Յետագայում արդէն, եւհեմերաբար մտածուելով, Բէլը մեր առասպելի մէջ դարձել է թագաւոր Բաբելոնում (հաւանօրէն ս. Գրքի ազգեցութեան տակ) և Հայկը՝ հայ ազգի նախահայր, և նորա արարքները տեղափակուած են Վանայ լճի շուրջը: Իսկ թէ արդեօք Հայկը ժողովրդի գիտակցութեան մէջ է դարձած Հայոց նախահայր, թէ՞ մի անհատի ստուգաբանութիւն է այդ՝ Հայ և Հայկ բառերի նմանութիւնից, և թէ՞ արդեօք Բէլ անունը Հայոց առասպելի մէջ մտել է Հայերի՝ Ասորեստանցոց ու Բաբելացոց հետ ունեցած յարաբերութեան յիշողութիւնից, թէ՞ դա մի փոխառութիւն է միայն՝ Ուրարտացիներից կամ ուրիշներից, — այդ դժուար է որոշել այժմեան միջոցներով: Յամենայն դէպս, այդ առասպելի գրուելուց ի վեր առասպելական հսկայ ու որսորդ Հայկը փառաւորուում է իբրև ազգային հերոս և հայ ազգի նախահայր:

րոշեայ յօդով և գործածուում եւ սեռականն ունենում և Հայկիև. իսկ Հայկ, իբրև դիւցազն, թէ Խորենացու և թէ Անանուան մէջ գործածուած և անյօդ և յօդով, և հոյոված և թէ Հայկայ և թէ Հայկիև մեռով:

ԱՆԳԵՂ ՏՈՒՐՔԻ ԱՌԱՍՊԵԼԸ.

Անունը:—Ո՞րն է այդ հսկայի անունը, Տուրք թէ Տորք: Մայր Աթոռի գրատան տասնութ ձեռագիրները (որոնցից մէկը վերջերս հանգ. Սարգիս եպիսկոպոսից ժառանգութիւն է մնացած) աչքի առաջ ունենալով կարծում ենք, որ Տուրք պիտի լինի:

Անշուշտ, յօրենացու ձեռագիրները դեռ չեն համեմատուած, և մենք դեռ չենք կարող թուր ձեռագիրների ճիշտ և վերջնական դասակարգութիւնն անել: Բայց յօրենացու ձեռագիրներով պարապողներին արդէն յայտնի է, որ Մայր Աթոռի ձեռագիրները երկու գլխաւոր տեսակի են բաժանուում, որ մենք անուանում ենք առաջինը՝ Անտիպի (Ա.) տեսակ, իսկ երկրորդը՝ Տպագրի (Տ): Որովհետեւ առաջին տեսակից տպագրութիւն չէ եղել, այլ միայն երկրորդ տեսակից:

Թէ Տ. թուր 12 ձեռագիրները մի ընդհանուր ծագում ունին՝ շատ գեղեցիկ կերպով երևում է, ի միջի այլոց, այն բանից, որ թուրն էլ Տուրքի հատուածի մէջ ունին տառասխալով «ղեզութիւն» (№ 1666 ղեզեաւ-

Թիւն, իսկ Սարգիս Եպիսկոպոսինը զէզու-
թիւն) բառը մինչդեռ Ա. ձեռագիրներն ու-
նին ուղիղ՝ գեղութիւն):¹ Այս բաժանումը
թէպէտ և մի տառասխալի վրայ հիմնուած,
հաստատ կարելի է համարել: Սակայն, ան-
շուշտ մեր հիմունքը միայն այս տառասխալը
չէ:

Արդ, Տուրք ձեւն ունին բոլոր Ա. ձեռագիր-
ները (№ № 616, 1665, 1669, 1671, 1672,
1686), և Տ. ձեռագիրներից երեքը (№ № 248,
1663, 1668): Ուրեմն 18-ից կէսը՝ 9(6+3)
ունին Տուրք:

Այս հանգամանքը, որ Տ. ձեռագիրներից
էլ երեքը Տուրք ունին, ստիպում է մեզ Տուրք
ընթերցուածն ընդունել: Որովհետև այդ ոչ
պատահականութիւն կարող ենք համարել և
ոչ սրբադրութիւն մի Ա. ձեռագրի վրայ: Սըր-
բագրութիւն չենք կարող համարել, քանի որ
Տուրքի հատուածի մէջ հենց երկու տեսակի
ձեռագիրները շատ մեծ տարբերութիւններ
ունին իրարուց, և եթէ Տ. տեսակի այս երեք

1. Վեներկի սպագրութիւնն ունի գեզութիւն, բայց
ծանօրութեան մէջ յայտնած է անորոշ կերպով, թէ երեք
օրինակ ունին դեզութիւն: Եւս հետաքրքիր է իմանալ թէ ար-
դեօք սպագրի տեսակին պատկանող ձեռագիրներից մէկն ու
մեկը գեզութիւն ունի, թէ սպագրողներն Ա. ձեռագրի
վրայ ուղղած են դեզութիւն բառը, եւ չինած գեզութիւն:

Ճեռագիրները սրբագրուած լինէին Ա. Ճեռագրի վրայ, անհաւանական է կարծել, որ Տուրք անուան մի — տառը միայն սրբագրուէր, իսկ մնացած աչքի ընկնող տարբերութիւններն անփոփոխ թողնուէին:

Թեթև համեմատութիւնը միայն ցոյց կըտայ մեզ այդ: Մենք Ա. խմբի տարբերութիւնները միայն կարտագրենք.

Ա. Ձեռագիրներ.

ՏՊԱԿԻՐ (Տփիս, 1881).

Բարձր կոպտատրագ անձն
Ի Հայկայ 1

Տորք

Կոչիկն անգեղեայ

Կամիս եւ սեմ վասն 2

Որպէս եւ պարսիկք վասն
Ռոստոմայ Սաձկի 3

Փղոյ ուժ ունէլ անն 4

Կարի աննանագոյնս բուն
եւ նմա երգ բանից վասն

Բարձր եւ կոպտանձն-
Ի Հայկակայ

Տորք

Չայնիկն Անգեղեայ

Կամիս սեմ եւ ես յաղագս

Որպէս պարսիկք վասն
Ռոստոմայ Սազկի

Փղոյ ոյժ անն ունէլ

Բանգի կարի իմն անյարմար
բռնիկն նմա երգ բանիցն

1. № № 1665, 1671 Հայկա. № 616 անպիտանութեն (վերջի և տառը մոռացած).

2. № 616 կամիս եւս սեմ վասն Եորա:

3. № 616 Ռոստոմայ, № 1665 Կարսիք, Ռոստոմայ:

4. № 1665. Ե՛ի փեղոյ № № 1669, 1686, 1672, ուժե՛լ անն. № 1671 ուժե՛լ, բայց գլխին ուն վանգըն աւելացրած է:

ուծեղութեան և սրտեայ յի-
նեղոյ. որք ոչ Սամսոնի և
Երակչեայ և ոչ Սաճկին
ճմանեն այն գրոյցք: ¹

Ուր ոչ գեղութիւն
ձեղիւոյ ²

Եղնգամբքն . . . Եղն-
գամբք ³

Յեզեր ծովուն մեծի Պոն-
սոսի: ⁴

Թշնամեացն

Ի խաղալ . . . իր ասպա-
րէսս ուրուսան ⁵

Ժամանեայ ⁶
Բոյրաճեւս

վան ուծեղութեանն և սրը-
տեայ յինեղոյն, որում ոչ
Սամսոնի և ոչ Երակչեայ
և ոչ Սաճկին յարմարեն այս
գրոյցքս:

Ուր ոչ գոյր գեղութիւն
ձեղիւոյ

Ըղրնգամբք . . . ըղրնգամբք
իւրով

Յեզերս ծովուն Պոնդոսի

Թշնամեաց

Ի խաղալն . . . իրեւ աս-
պարէզս ուր

Ժամանեայ
Բյրաճեւս

1. № 1686 Սամսոնի, № 1665 սրտեայ, Երեկ-
լեայ, Տաճկեայ. գրուցք. № 1669 երգք. № 1671 նման
այն:

2. № 1665 ձեղիւոյ.

3. № 661 եղնգամբքն, եղնգամբքն. № 1671
եղանգամբքն, եղնգամբքն. № 1672 եղնգամբքն (լուս-
անցրում ուղղած՝ եղանգամբքն), եղնգամբքն:

4. № 616 Եւ այլ այսպիսիս . . . յեզր. № 1671
Պոնդոսի, № 1672 մեծի ծովուն Պոնսոսի:

5. № 1665 ութուսասան. № 616 ասպարէզ:

6. № 616 ժամանեայ. № 1665 զկնի նոցա՝ ի պա-
սառման(է), վերջի տառը բաց թողած:

Ո . . . առասպելեաց ¹ ՈՌ . . . առասպելաց
Այսպիսեաց արժանաւոր ² Այսպիսեաց զրուցաց ար-
ժանի

Արդ, № № 248, 1663, 1668 պատկա-
նում ին Տպագրի տեսակին, միայն փոքրիկ
տարբերութիւններով, որոնք են.

№ № 248, 1663, 1668 ՏՊԱԳԻՐ (Տփիսիս, 1881)

Տուրք	Տորք
* Ժաշագիմութեան (և բաց թողած)	Ժաշագիմութեանն
* Անգեղայ (և բաց թողած)	Անգեղեայ
* յերեսաց (և բաց թողած)	Յերեսացն
* փղաց ուժեղութեան (և բաց թողած)	Փղոց Ուժեղութեանն
* յարմարին	յարմարեն
զրոյցք (ս բաց թողած)	զրոյցքս
* դեզութիւն (և բաց թողած)	դեզութիւն
ասպարէսս	և ճեղքել ասպարէզս
* առնուլ	առնու
* ալեաց (և բաց թողած)	ալեացն

Բացի այդ՝ առանձին տարբերութիւններ
ունին.

1. № 1672 այլ և առասպելաց առասպելս.
№ 616 առասպելս այլ առասպել, № 1665 առաս-
պելաց. № 1671 և առասպելեաց այլ առասպել.

2. № 1665 այսպիսեաց զրուցաց.

№ 248

ՏՓԽԹ. 1881.

* յարևմտից	արևմտից
* յորում	որում
* Երակ' զեայ	Երակլեայ
եղընգամբ	ըղընգամբ
եղընգամբ * իւրով (f	ըղընգամբ իւրովք
բաց թողած)	

№ 1663

* Երակլ' եայ	Երակլեայ
* նաւ(ուց՝ աւելացրած	նաւաց
ուրիշի ձեռով):	
եղընգամբ, եղընգամբ	ըղընգամբ, եղընգամբ

№ 1668

Սամփսոնի	Սամսոնի
եղընգամբ, եղընգամբ	ըղընգամբ, ըղընգամբ
* նաւուց	նաւաց

Այդ տարբերութիւններից աստղանիշները, ինչպէս ընթերցողը կրտեսնէ, չեն կարող Ա. ձեռագիրներից առաջացած լինել, քանի որ չկան անոր մէջ: Դոքա մեծ մասամբ բաց թողած տառեր են, ինչպէս են նաև՝ ուժեղութեան, զրոյցք բառերի վերջի ն կ ս, որ է Տ. տեսակի ուրիշ ձեռագիրների մէջ նոյնպէս կան բաց թողած (ինչպէս՝ ուժեղութեան № 1666 և Սարգիս եպիսկոպոսի): Իսկ Սամփսոնի ձևը

միայն երկու անգամ՝ մի Ա. և մի Տ. ձեռագրի մէջ է պատահում: որ և պատահակա-նութիւն է անշուշտ՝ արտօսանութեան ազգեցութեան ասի առաջացած: Արտասանու-թիւնից է առաջացած անշուշտ և եղնգամ (բ)ք բառի գրութեան խառնաշփոթութիւնը: բայց և եղրնկամբ, եղնգամբ (№№ 1666, 1662, 615) գտնում ենք նոյնպէս Տ. տեսակի մէջ, ուր և ըղրնկամբ, ըղրնգամբ ելն:

Այսպէս Տ. տեսակին պատկանող երեք ձեռագիրների սկզբնագիրը բնաւ կարող չէ Տուրքի հատուածի մէջ սրբագրուած լինել Ա. տեսակի ձեռագրի վրայ, որովհետեւ չենք կարող ընդունել, որ սրբագրողն այնքան տարբերու-թիւններից միայն Տուրք բառը սրբագրէր, իսկ մնացածներն անփոփոխ թողնէր: Պատահականութիւն էլ չենք կարող համարել այդ, որ բառի մէջ մի տառ աւելանար և յատկա-պէս — տառը և կազմէր այդ անուան այն ձևը, որ կայ Ա. ձեռագիրների մէջ: Մանաւանդ, որքան տառեր բաց թողնելը սովորա-կան է, այնքան հազուադէպ տառ աւելացնելը:

Տուրք ձևի ծագումն այդ երեք ձեռա-գրի մէջ, ուրեմն, ուրիշ տեղ պէտք է որոնել:

Այդ ձևը գալիս է անշուշտ Տ. տեսակի այն սկզբնագրից, որի մէջ թէպէտ եւ դեղու-թիւն տառաօտխարը մտած էր, բայց դեռ Տուրք

ուենէր: Արտագրողի մէկն ապա այդ լ տառք
բաց է թողել, որով կազմուել է Տուրք ձևը-
մինչդեռ Տուրք ձևը Տ. տեսակի մի ուրիշ օ-
րինակի մէջ մնացել է անփոփոխ: Եւ այսպէս
Տպագրի կամ «ընդունթիւն» տեսակի ձեռա-
գիրները բաժանուել են երկու տեսակի, հե-
տևեալ պատկերով.

X (Տուրք գեղութիւն)		
X1	X2 (Տուրք գեղութիւն)	
X	X3 Տ. ձեռագիրներ	
Ա. ձեռագիրներ (Տուրք գեղութիւն)	№№ 248, 1663, 1668 (Տուրք գեղութիւն)	X4 Տ. Բուեն Եւուր (Տուրք գեղութիւն):

Անշուշտ այս բաժանումների մէջ ուրիշ մի-
ջին աստիճաններ էլ պէտք է հասկացուին,
ինչպէս և Ա. և Տ. տեսակների ստորաբաժա-
նումներ:

Թէ երբ է Տուրք ձևը Տուրք ձևի փոխուելի
չենք կարող ասել. բայց անուշադիր պիտի չը-
թողներ, որ Համբրոնացու օրինակի մէջ ևս
Տուրք է, այլ և Ասողկի: Ուրեմն աւելի հին
օրինակների մէջ ևս Տուրք է:

Յօգուտ Տուրք ձևի է վկայում և այն
հանգամանքը, որ հայոց մէջ կայ Տուրք անուն.

օրինակ, յիշուում է Բասենոյ եպիսկոպոս Տուրք¹։
Յոյն իսկ Խորենացու պատմութեան մէջ
(Բ. խէ) կայ Տուր անունը, որից Տրունիք։ Այդ
երկու անունը, Տուր և Տուրք, նոյնն ենք
համարում։ Դա մի և նոյն տուր, տուրք հա-
սարակ անունն է՝ շնորհ(ք), պարքե(ք) իմաս-
տով (տուրք պարգևաց, տուրք և պարգևք,
տուր և շնորհ), որ իբրև յատուկ անուն է
առնուած, ինչպէս անոր համանիշը նոյնպէս՝
Պարգև և Շնորհք իբրև յատուկ անուն գործ
ածուած գտնուում ենք։²

Պ. Խալաթեանը կասկածի է ենթարկում
Տուրք անունն հայերէն լինելը։ Որովհետև
մտադրուած է ցոյց տալու Տուրքի առասպել-
ի շինծու լինելը, ուստի և «հակամէտ» է են-
թադրելու, թէ Խորենացին Տուրք անունը
վերցրել է Եւսեբիոսի Բրոնիկոնի մի ըմբշի ա-
նունից, որ յունարէնում Մոսքոս է, իսկ հայ
ձեռագիրների մէջ, հաւանօրէն, աղճատմամբ
Տորքոս է դարձել։ Բայց այդ ենթադրու-
թիւնը պ. Խալաթեանը ոչ մի բանի վրայ չէ
հիմնում։ Եսխ քան այդ, նա մեզ պէտք է
ասէր թէ Խորենացին առասպել «սարքելիս»

¹ Халат. Арм. Эпосъ, кр 328. բայց չի յիշուած աղբիւրը, որից վերցուած է։

² Խորենացի Գ. ծ. Պարգև, Պարգևայ. Ամասունոյ։

ինչո՞ւ անպատճառ Սևերիոսից մի անուն պիտի վերցնէր և հայացնելու համար ոս վերջաւորութիւնը դուրս ձգէր: Միթէ հայ անուններ պակասու՞մ էին նորան, և կամ ինքը կարող չէր որևէ արմատից մի անուն շինել: Ասենք թէ Խորենացին անուն չէր գտնու՞մ և անպատճառ Սևերիոսից էր կամենու՞մ վերցնել, բայց ապացուցն՞լ է պ. Խալաթեանը, որ Խորենացու ձեռի տակ եղած Սևերիոսի օրինակի մէջ Մոսքոսն արգէն Տորքոս է դարձած եղել: Ասենք թէ այդ էլ եղել էր: Բայց այն ժամանակ ապացուցն՞լ է արդեօք պ. Խալաթեանը թէ Խորենացու բնագրի մէջ Տորք է եղել և ոչ Տուրք: Բայց այս ապացուցանելու մասին նա չէր էլ մտածի, քանի որ նորան միայն Համբրոնացու օրինակն է յայտնի եղել Տուրք ձեռով, մէկ էլ Անողկինը:

Անգեղ տուն եւ Անգեղեայ. — Ո՞րն է բուն առասպելը: Խորենացու մէջ ոչ մի ակնարկութիւն չկայ թէ նա ժողովրդական երգից կամ առասպելից առած լինի Անգեղ տան նախարարութեան¹ անուան ծագումն

1. Գ. Ա. Գարագաշեան, Բնական պատմ. Հայոց Ա. եր. 251, Խորենացու բնադասութեան մէջ գրում է. «Անգեղ տուն ոչրե ցեղի կամ նախարարութեան անուն էր, այլ Բարձր Հայկ կոչուած նահանգին կամ միոյ ի գաւառաց նորա: Այսպէս կրգանենք վկանեղ տուն յաճախ յի-

Անգեղ Տուրքից: Եւ այդ վերջնում է գրաւոր աղբիւրից. «Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմագիր [Մար Աբաս] ի Պասքամայ ումիմէ ի Հայկակայ թոռնէ լինել» (Ա. իգ.): Իսկ ապա (Բ. Ը.) Տուրքի մասին խօսելիս կրկնում է նոյնը թէ Տուրքն էր «ի զաւակէ Պասքամայ, ի Հայկակայ թոռնէ... որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին անգեղեայ, ...հաստատէ կուսակալ արեւմտից. և յիրեացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տունն»:

Միւս կողմից ոչ մի ակնարկութիւն չունինք նոյնպէս և այն մասին թէ պատմագիրը երգից վերջրած լինի Տուրքի արտաքին տգեղութեան նկարագիրը, ինչպէս և այդ պատճառով հսկայի Անգեղեայ կոչուիլը: Եւս հաւանական է, որ իրեն Մորենացու կամ իւր գրաւոր աղբիւրի շինածը լինի այդ: Պէտքէ ի նկատի ունենալ, որ մեր պատմա-

չուած առ Բիզանդայ եւ Ագաթանգեղոսի»: Դժբախտաբար կարծիք յայնեղը նեղութիւն չէ կրում Ագաթանգեղոս նաչիւր: քէ չէ այնեղ կրգնէր հայոց զգիտւոր նախարաների», «կուսակալների» մէջ նոյն իսկ առաջինը «իշխանն Անգեղ օան» (եր. 461), «զմեծ իշխանն Անգեղ օան» (եր. 502), իսկ ամենամերտդ իշխանն Սիւնեաց աշխարհիկ», ուրից պարզ երեւում է որ, ինչպէս Սիւնիք, այդպէս եւ Անգեղ օան, միանգամայն երկրի եւ ցեղի անուն է:

գիրը սիրով կանգ է առնում միւս նախա-
բարների անունների բացատրութեան վրայ
և այդ բացատրութիւնները, ինչպէս երևում
է, ինքն է տալիս «Եւ զարծրունիսդ գիտեմ
ոչ արծրունիս, այլ արծիւ ունիս, որք ար-
ծուիս առաջի նորա կրէին»: «Գիտեմ զգնու-
նիսդ գինի ունիս, որ առաջի թագաւորին
պատրաստէր զքմպելիսն»: «Ասեմ և զսպան-
դունիսդ ի վերայ զենարանաց, և զհաւե-
նունիսդ՝ բազէակիրս... Եւ եթէ առ ցօփս ոչ
ունիցիս, զձիւնականսդ՝ ամարայնոցաց պա-
հակս և ձիւնակիրս» (Բ. է): Աշխարհն յա-
նուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան
Աղուանք, զի աղու ձայնէին զնա» (Բ. ը):

Եթէ այս բացատրութիւնների կարգին է
պատկանում և Անգեղ բառի մեկնութիւնը՝
«որ վասն առաւել ժահագիմութեանն ձայ-
նէին անգեղեայ... և յերեսացն անպիտանու-
թենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն», այն
ժամանակ անգեղեայ բառը նոյն իսկ կարող
է մեր պատմագրի, եթէ ոչ իւր աղբիւրի,
շինածը լինել:

Այսպէս ուրեմն իբրև Անգեղ Տուրքի
առասպել մնում են միայն այն երկու համա-
ռօտ պատմութեանքները թէ Տուրքը քարեր
է պատառում և թէ նա նաւերի ետեւից
քարեր է ձգում: Պատմագիրն այս պատ-

մուսափները բերում է իբրև երգ եւ առասպել:

Առասպելը:— Չենք կարող ասել թէ Անգեղ Տուրքի առասպելի այս երկու հատուածը Խորենացու սարքածն է և թէ նա ստում է, ներկայացնելով այդ իբրև երգ: Սուա խօսողը մի կարիք պիտի ունենայ: Իսկ մեր պատմագիրը Տուրքի առասպելը նոյն իսկ իբրև վկայութիւն չէ բերում Մար Աբասի պատմութեան համար: Եւ նա կարիք էլ չունէր Տուրքի ուժեղութիւնն ապացուցանելու, ինչպէս և բնաւ կարիք չէ զգում այդ երկու (Բ. է. ք.) գլուխների մէջ յիշած այլ բազմաթիւ նախարարութիւնների նախահայրերի այս կամ այն յատկութիւնը ժողովրդական երգով կամ առասպելով հաստատելու: Խորենացու մտածողութեան եղանակը շատ պարզ է: Սահակ Բագրատունին, ինչպէս առաջին գրքի յաւելուածից երևում է, առանձին «կամք ու փափաք», «տարփանք» է ունեցել հայոց պատմութեան մէջ կարդալու պարսից առասպելներից, որ պատմագիրը, ինչպէս զիտեմք, «սուտ» փծուն, անյարմար բանք» է անուանում: Արդ, երբ նա մի քանի գլուխ յետոյ զրաւոր աղբիւրից առնելով խօսում է Անգեղ տան ծագման մասին, աւելացնում է ակնարկելով Սահակ Բագրատունու այս կամք

ու փոփոագին. «բայց եթէ կասնիս» ստե՛ծ և
ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս
պարսկք վասն Ռոսսոսոմայ Սագճիի հարիւր
և քսան փոոց ոյժ ասեն ունել: Բանզի կա-
րի իմն անյարմար թուէին նմա երգ բանիցն՝
Վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոցն՝
որում ոչ Սամսոնի և ոչ Երակիւայ և որ
Սագճիին յարմարեն այս զրոյցքս: Եւ Թորե-
նացին այնքան արհամարհում է այդ առաս-
պելը, որ չէ բաւականանում «սուտ» փճուն,
անյաջ, անյարմար» բառերով, ուստի և ետեից
աւելացնում է. «Ո՛հ, կարի է առասպելս,
այլ և առասպելաց առտոպելս: Եւ մի բողէ
նայն իսկ կարծում է թէ այդ առասպե-
լի չափազանցութիւնն այն աստիճանի է, որ
անգամ Սահակ Բագրատունին, — որ այդպի-
սի առասպելներ սիրում էր, և որին մի հա-
ճոյք պատճառելու համար միայն բերել էր
այդ առասպելը, — կարող է չհաւատալ. «բայց
քեզ զի՛ է. քանզի էր արդարեւ սաստի՛կ
հզօր, և այսպիսեաց զրուցաց արժանի:»

Կարծում ենք, մարդիկ և աւելի ևս
Թորենացու նման մէկը, այնքան անմիտ չեն,
որ ընդհանրապէս փճուն առասպելներն ար-

1. Բոլորովին աներդ կ վերջի և յօդք: որ չկայ Ա.
ժեսակի մեռագիրների մեջ:

համար հելով հանդերձ՝ առանց կարիքի մի փժուէն առասպել սարքեն իրենցից և նոյն իսկ սարքելիս այդպիսի հսկայական կերպով ծաղրեն իրենց սարքած բանը:

Պ. Խալաթեանի (եր. 326 հտն.) առարկութիւններն այս առասպելի ժողովրդական լինելու մասին նշանակութիւն չունին բառի բուն իմաստով: Մա իւր սովորական ձևով Տուրքի և նորա առասպելի ծագման ժամանակագրութիւնն է քննում, որի ինչ արժէք ունենալը գիտենք, և ապա գրում է. Տուրքի արարքներից «առաջինը, իմ կարծիքով, բոլորովին անհետ-թեթ է», որոհետև «ըղընգամբք արծուիս և այլս այսպիսիս գրելը որձաքար վէմերի վրայ» ենթադրում է հսկայի մէջ որոշ աստիճանի կրթութիւն ու զարգացում (կուլտուրա), գեղարուեստների ծանօթութիւն, որ բնաւ յարմար չէ գալի Տուրքի նման հրեշաւոր ցուցանքին» (ЧУДОВИЩНЫЙ УРОДЪ):— Անշուշտ, պ. Խալաթեանի կարծիքով, մի մարդ, որ «խոժոռագեղ, բարձր, կոպտատարազ, տափաքիթ, խորակն, դժնահայեաց» լինի, «հրեշաւոր ցուցանք» է: Մաշակի դէմ վիճելիք չունինք: Բայց այդպիսի մարդուն մենք, Խորենացու հետ, միայն «ժահագէմ» և «յերեսացն անպիտան» կամ «ագեղ կանուանէինք: Սակայն և այնպէս, ենթադրենք մի ըոպէ, որ այդ

մարզը «Տրեշաւոր ցուցանք» է: Բայց ո՞վ ա-
սաց, որ երգի մէջ ևս այդ Տուրքն իբրև
«Տրեշաւոր ցուցանք» է ներխայնուած: Մի՞թէ
ինքը պ. Խալաթեանը չէ, որ մի քանի տող
վերևում գրել է. «Անգեղի մեծ ուժին Խո-
րենացին իրենից աւելացրել է եւ անասնիք
Տրեշաւորութիւն (УРОДСТВО), Անգեղ անուներ
տգեղ բառով բացատրելու նպատակով»: Բայց
ենթազրեւք մի բուպէ և այն, որ երգի մէջ
ևս Տուրքը ձիշտ այնպէս է նկարագրուած,
ինչպէս Խորենացին ապրիս է մեզ, «խոճոռու-
գեղ, բարձր, կուպտատարազ, տափաքիթ, խո-
րակն և զժնահայեաց», մի՞թէ այդպիսի արտա-
քին ունեցող մի մարդ, որի նմանները երբ, որ-
տեղ և որքան ուզէք՝ կը գտնէք, անբան անասուն
պիտի լինի այն առտիճանի, որ գաղափար չունե-
նայ արժիւններ և նմաններ քանդակելու մասին:
Մարդ ակամայ յիշում է թէ ինչպէս հին
յոյները զարմանում էին, որ այն տգեղ Մոկ-
րատի մէջ բնակում էր ոչ միայն մեծ փիլի-
սոփայի, այլ և քանդակագործի ողի:

Անշուշտ այսբանով չէ սահմանափակում
պ. Խալաթեանն իւր «Տեսագոտութիւնը»: Ծրգի
երկրորդ հատուածի մէջ Տուրքը «աա-
րեական կուպիտ դժ է գործարարում» այ-
սինքն թշնամիների նաւերի եռակից վեմեր է
ձգում: Ուրիշ խօսքով, Տուրքը մի վայրենի

ու անբան է դուրս դառնալ: Բայց չէ՞ որ այդ
«հակասում է» առարկայի առաջին մասին
(ВЪ ПРОТИВНОСТЬ ПЕРВОМУ), որի մէջ Տուրքը
պնդումն զարգացած մեծ սփռարուեցողութեա՞
քանդակագործ է, որ վեճերի վրայ ձողունց,
նեղով արծիւների պատկեր է քաշուած: Բերիչ
խօսքով: նայնն է անուճ: Ինչ որ նախապատ-
մանն ժամանակի ճարգի էլ արեւ են, իրենց
բնական քարայրերի պատերի վրայ թռչուն-
ների պատկեր հանելով: Աթէ պ. Խալաթեանն
առաջաւց միտքը գրած չինէր հերքելու ամեն
ինչ, որ Խորենացու մէջ բերած է իրիւ ժողովրդական
քանակահատկութիւն, նա կրտսե-
ներ՝ պնդածը ոչ մի հակասութիւն չկայ: Այդ
քնդհակասակն: Տուրքը երբու գէպքում էլ
պահում է իւր բնաստութիւնը: — մի վիթխա-
րի քարակոփ, որ կարողանում է տրուան
հարկանել զորձաքար վիճաց, ուր ոչ գար
գեղութիւն, և ձեղքել ըստ կամաց մեծ և
փոքր: և քերել ըզրնգամբ և կողմիլ որպէս
տակառակա նա անշուշտ և իւր թշնամիների
եռելոց՝ պիտի տանու վեճո բլրամէս և ձգե
զինի: Բարեմն իրտեղ է հակասութիւնը:

Բայց ենթադրենք մի քայլ: որ հակա-
սութիւն կայ: Այն ժամանակ հարց է ար-
դեօք ժողովրդական առարկայի կամ երգի
պս կամ այն հարուածների ու միջադէպերի

հակասութիւններով կարելի է հերքել առասպելի կամ երգի գոյութիւնը: Այդ կրնշանակէր ոչ մի հասկացողութիւն չունենալ ժողովրդական բանահիւսութեան մասին, որի մէջ յաճախ միեւնոյն անձնաւորութեանը կապուում են՝ որոշ շերտաւորումներով, զանազան պատմական շրջանների ու գաղափարների, զանազան բնաւորութեան գծեր: Համեցէ՛ք օրինակներ մեր արդի կենդանի Սասնու ծռերից:

Ի՞նչպիսի հսկայ են՝ մեր Դաւիթն ու Մհերը: Ո՛րքան պինդ ու պողպատեայ է մանուկ Դաւիթի մարմինը, որի «Ճոճ ըլլած քիսաւ ի ջարդու քար՝ կրակ էլաւ մօտէն»¹, կամ «ըղունգ առաւ քարին ու կրակ տուեց»²: Մի՞թէ գա միեւնոյն Տուրքի ձեռի ու եղունգի պնդութիւնը չէ՞: Իսկ նորա յո՛ժը: Այդ մանուկ Դաւիթը «ձեռ էթալ, դիւռ շեմքով սարքեարով թռաւ էկաւ»: «ձեռ էթալ մէկ սպնդրի (բարդի) ծառ կռուեց զծէր իպի գետին»): կամ «ձեռ ետու զհոլ դարձիւցից» իրեք խարիր ձիաւոր փերիզ փահլեան սպանից»: Մա երկաթի սուլեր հագած, բարդի ծառըն ունին՝ «ինչ վուտ կը զարկէր գետին» գետին կը գնդէր»: Մորա ձայնից փախչում են

1. Մուսնոսեան, Գրոց Բրոց, եր. 151.

2. Գարեգինս. Յովսէփեան, Մասնայ ծռեր, եր. 26.

գայլեր, արջեր, վագրներ, առիւծներ, որոնց
բոլորին ժողովում է աղայ հսկան և բերում
Սասուն: Եւ մի կողալով դէեր է կոտորում
այն դէերը, որոնք ուռչում են «քանց Պող
բլուր» և որոնց զիականերից նոյն իսկ բարտի
ժառն արմատահան անող և իբրև զէնք գոր-
ծածող Ձէնով Յովանը փախչում է:—Ահա
ձեզ դեռ երեսայ Դաւիթը: Բարձրութիւնն
ու վիթխարութիւնն էք ուզում:—Երբ նա իւր
հօր Սանասարի հագուստը հագին Զուռկիկ
Ջալալինի վրայ է նստում: նման է «սար որ
էլիր ա սարի վրայ»:

Իսկ Մհերը, այդ դէերի ընկերը, որ երբ
ման է գալի, ոտները թաղում են գետնի
մէջ, և ուրի ձեռների տեղը մնում է,
երբ քարին է զարնում:—Միթէ այդ Մհերը
մեր Տուրքին ցեղակից չէ: Եւ գալիս է Ջգիրու
քաղաք, ուր կըլինի որ խարիր քառսուն
գետ իրարու կը խառնուի, կըլինի մէկ գետ,
(Ջգիրու Շատ, Տիգրիս): «Էկաւ էնտեխ, մէկ մեծ
անազին քար էրի, կցից քեաղաքի քեամակ,
գիտու մէջ. գետ. էլաւ էրկու մտող, մէկ ճեող
էն եանէն կիեայ, մէկ էս. էլ քեաղաք չի աւ-
րի: Բրջայ ըալաքն էլ վեար էն քեարին
չինից. իսկի աւերիւ չկայ էն ըերդին»:

Ահա Յուսէփն ամբողջապէս, պոպուս-
տեայ մարմնով, վիթխարի հասակով և ու-
ժով և սրտեայ, որ մատով որձաքարից կրակ
է հանու՛մ, ձեռներով քարերը փոփ է ձգու՛մ:
և վերցնու՛մ է կարծածից աւելի մեծ ժայռ:
Միթէ՞ այդ Դաւիթն ու Մհերը, այդ
լեռնանման վիթխարիքը, որոնք նոյնպէս
բնութեան բիրտ ուժերի հետ գործ ունին,
այդ ուժերն իրեւ զէնք գործադրու՛մ են և
նոյն իսկ, ինչպէս Մհերը, բնութեան բիրտ
ոյժերի անձնաւորու՛մն են:— միթէ անբան ա-
նասուն են դոքա, և «կուլտուրայի որոշ առ-
աքիճանի», և նոյն իսկ բարձր աստիճանի վրայ
չեն կանգնած: Որքան մտաւոր ու բարոյա-
կան մեծութիւն ստե՛ս, որ նոքա չունին
Յանձրայի շինելու համար՝ յիշենք, որ նո-
քա կարգալ գրան, այն էլ աերտերի կամ
վարդապետի մտն են դաս առնու՛մ: նամակ
են գրու՛մ, ստանու՛մ, բերդ ու վանք, եկեղե-
ցի են շինու՛մ: Թաշկինակ գործել ապրտ և
ուզածը վրան նախշել ապրտ: մինչև անգամ
«գիւրբինք» բանեցնու՛մ ևն.:

Լեռնանման կամ, ըստ Եսրենացու, հա-
րիւր քսան փղի ոյժ ունեցող Ռասատմի ա-
ռաջ նոյնպէս ոչ միայն զեարնը, այլ և քարը
գիմանալ չէ կարողանու՛մ:

«Եթէ նա վեր ելլէր մի քարի վրայ ու կանգնէր,

Ծանուցութեաց երկու սաքը քարի մէջը կը խրուէրս
Հակայ Ռոստամն: որ հենց ժայռի մէկ երկունսն է
բռնում:

Ռճախար անգամ ընդից պոկում կուռի օրերում:
Եւ ահագին կորովովք սարը ընդից եր շարժում:
Ծախէ: ահաւ քարը մտն էր մա համարում իւր բռնում: Զ

Ի՞նչ է այս նկարագիրը: Եթէ ոչ մեր
Տուրքիներ: Բայց այդ նոյն Ռոստամն է: որ
անբան անասուն չէ և ներկայանում է:
պարտից ժողովրդի աւանդութեամբ: իբրև
Պարսկաստանի ժայռերի վրայ հին քանդակների
տրարիչ: Ո՛ւմ յայտնի չեն այդ քանդակները
Ծախչի Ռոստամ՝ անուհով: Եւ միթէ միու-
րիչ հսկայ: տիտան Պրոմէթէս չէ՞ որ մրա-
ջընում է ժարդկանց մէջ ուսում: գիտու-
թիւն: արուեստ և ինչ որ պիտանի է զգեղե-
ցիկ ու երջանիկ կեանքի համար:

Բայց մենք օրինակներն աւելորդ ենք
բաղձապատկում: Եթէ այդ ամենը կարող է
անել—և շատ բնականաբար—մի Ռոստամ
ինչո՞ւ մի ուրիշ Ռոստամ: միայն Անգեղ Տուրք
անուհով: կարող չէ անել:

Տուրքի առասպելի երկրորդ մասի—
Թշնամիների նուերի ետեւից քարեր ձգելու
նմանութիւնը Հովերոսի Ողիսականի կիկլոպ

2. Եղբայր: Ռոստամ և Ետեւար: բարձ. Գիւլգա-
ղեանք: եր. 118. 125.

Պոլիփեմի արարքին՝ արդէն վաղուց ցոյց է տուել Էմինը: Բայց այդ «աչքի զարնող նմանութիւնը», որ Էմինը «պատահական» է համարել, պ. Մալաթեանը կարծում է՝ Մորենացին ինքն է «ուղղակի վերցրել որևէ յունական յայտնի ժողովածուից (ХОДЯЧИЙ СБОРНИКЪ): Իսկ ապացոյցը — միայն նման լինելն է: Մի երկու տասնեակ տարի առաջ գուցէ կարելի էր այդպէս ասել, բայց այժմ, երբ արդէն յայտնի է թէ ինչպէս ամբողջ ժողովրդական երգեր, վիպական մեծ ոտանաւորներ, որոնք երբեք գրուած չեն եղել, մի ազգից միւսին, մի լեզուից միւսին են անցնում՝ ժողովրդի բերանին գրեթէ բառացի ոտանաւորով թարգմանուելով, միթէ կարելի չէ՞ ասել, որ Ուրիսականից մի քանի տող, առանց գրաւոր աղբիւրի, յոյներից իրենց դրացի հայերին անցած լինէր: Եւ ինչո՞ւ անպատճառ յոյներից: Որովհետեւ արդեօք Պոլիփեմի այդ հատուածը բնիկ յունական է: Չէ՞ Ուրիսականը բազմազան ազգերի առասպելների մի ժողովածու է: Եւ վերջապէս այդ «աչքի ընկնող նմանութիւնը» շատ էլ տարբերութիւններ ունի վիպական մանրամասների մէջ, այնպէս որ միայն ընդհանուրի մէջ է մնում նմանութիւնը: Եւ պ. Մալաթեանը զգում է այդ, ուստի և մի այսպիսի անվը-

նաս բան է ակելացնում: «Թէ մենք այս-
տեղ գրքերի (КНИЖНЫИ) ազդեցութեան հետ
գործ ունինք, այդ երևում է դարձեալ
(առաջինը ո՞րն է) նորանից, որ Տորքի ա-
ռասպելից առաջ եղած հատուածն ամբող-
ջապէս վերցրած է Եւսեբիոսից: Որ նա-
խորդ հատուածը Եւսեբիոսից է վերցրած,
ուրեմն յաջորդն էլ մի գրքից, Հոմերոսից
պիտի վերցրած լինի:

Անգեղ աստուած:—Այսպէս, Անգեղ
Տուրքի առասպելը մնում է իբրև առասպել:
Տուրքի նման հսկաներ շատ ազգերի առաս-
պելների մէջ կան և նոյն իսկ մեր արդի ա-
ռասպելների մէջ: Բայց որովհետև Խորենա-
ցին շատ քիչ բան է հաղորդում, ուստի մենք
չենք կարող, առ այժմ գոնէ, այդ հսկային
ուրիշ ազգերի հերոսների հետ համեմատել:
Արդէն վերևում տեսանք նման և խիստ
նման գծեր մեր Տուրքի ու պարսից Ռոս-
տամի մէջ: Բայց այդ բաւական չէ Ան-
գեղ Տուրքի բնութիւնը ձիշտ որոշելու
համար:

Պ. Գարագաշեան¹ գրում է. «Անգեղ
թուի լինել հին հայ գիւլցազին կամ աս-

1. Քննական պատմ. Հայոց Ա. եր. 250.

առաւօրեայ անուն: Մեր նախնիք սովոր
էին Հայոց աստուածներուն անուամբ կոչել,
ըստ յարմարութեան, օտարազգի դիւ. զոր.
արինակ. զՕրիոն՝ Հայկ, զՀերակլէս՝ Վահագն. . . .
այսպէս Անգեղ կրթարգմանեն հին Բուշեանց
և Սեմականաց Ներկայ կամ Էրկէլ (Հերակլ,
Հերքիւլ) աստուածը, որ կը յիշուի ի Զոր-
րորդ գիրս Թագաւորաց (Ժէ. 30): Եւ ապա
աւելցանում է նա. «Հաւանական է, թէ
ինչպէս Բուշեանց և Սեմականաց Ներկայը
կամ Էրկէլն՝ նոյնպէս Հայոց Անգեղն պատե-
րազմի սոսկումս էր, անձնաւորեալ պլարա-
նօրէն ի հսկայ անձոնի, կաշքմբուն և
աւերիչ»:

Այս ենթագրութիւնները, սակայն, շատ
կասկածելի են, մանաւանդ մեր հսկայի «ան-
ձունիութիւնը», քանի որ նոյն իսկ ինքը պ.
Գարագաշեան անմիջապէս յարում է, «Ծորե-
նացին Անգեղի ահագին ուժոյն վրայ կը յու-
ւելու նաև սոսկալի տգեղութիւն, որպէս զի
Անգեղ անուը մեկնէ տգեղ նշանակութեամբ,
որ անսովոր (?) է ի մերում լեզուի»: Ու-
րեմն որտեղից գիտէ, որ Անգեղն «անձունի» է:
Սեմական ազգերի Ներգալը նոյնպէս տգեղ և
անձունի չէ: Եւ արեգական բոցակէզ ջեր-
մութեան, այրող ու կորստարել տապի աս-
տուածն է, որ «հրեղէն սուրբ ձեռին, սար-

ափելի փայլք հազած: խողխողում և աւերում է: իրրե պատերազմի աստուած, յաղթութիւն է տալի և թշնամիների երկիրը քանգում: Բայց նա միանգամայն աւելի ևս մեռելների աշխարհի վրայ իշխողն է: ՆորաՔութա քաղաքը յատկապէս մեռելների քաղաք է: Իրրե սանդարամետի աստուած նա նոյնպէս պողարերութիւն է տալի²:

Մեր Անգեղ Տուրքի առասպելի մէջ Ներգալի բնութեան այս գծերը չենք տեսնում: Բացի ուժից և թշնամիների դէմ կռուելու մի դէպքից: Իսկ Աստուածաշնչի թարգմանութեամբ միայն՝ Անգեղ=Ներգալ՝ դեռ չենք կարող հարկաւ մեր աստուծուն կամ դիւցազնին նոյն բնութիւնը վերագրել, ինչ որ օւնի Ներգալը:



Ի.

Վ Ի Գ Ա Ս Ա Ն Գ.

«Վիպասանքի» մէջ մենք երկու կողմն ենք գտնում 1. պաւստմական, միացած կենցաղականի հետ, 2. բուն առասպելական մաս: Այս երկու մասն իրար միացած, իսկապէս կցուած են: Մաի տեսնենք առաջին մասը:

². Lehrbuch der Religionsgeschichte, herausgeg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig, 1897. Եր. 185.

Պատմական—կենցաղական.

Երուանդ:—Ինչպէս տեսանք, Արտաշէսի ու Սաթենիկի, Արգաւանի և Արտաւազդի մասին եղած առասպելներն են կրում նաև վիպասանք անունը:

Պատմագիրը Երուանդի մասին և ապա նորա և Արտաշէսի կռիւը (Բ. լէ—խը) պատմելուց յետոյ՝ յիշում է իւր աղբիւրը. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ուղիւպ քուրմ՝ Հանւոյ՝ գրող մեհնեկան պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի՝ որում եւ պարսից մատեանքն վկայեն և Հայոց երզն վիպասանաց» (Բ. խը): Ուրեմն նա Երուանդի և Արտաշէսի պատմութիւնը մինչև ԽԸ. գլուխն առնում է գրաւոր աղբիւրից, որի ինչ և ինչպիսի լինելը մեզ այստեղ չէ հետաքրքրում¹, Հայոց վիպասանք միայն իբրև վկայութիւն են կոչւում այդ պատմութեան համար:

Ի նկատի ունենալով՝ որ պատմագիրը գրաւոր աղբիւրից է օգտուում, և այն հանգամանքը, որ նա առասպելից օգտուելիս իբր «Ճշմարտելով» փոփոխում է առասպելը և

1. Հնն. Մառ. Визант. Врем. кт. 262:

իրենից ու իւր լեզուով մի նոր բան է պատմում:—գժուար է ասել թէ ինչ է եղել Սրուանդի առասպելը իւր մանրամասնութիւններով: Սրուանդի պատմութեան էակուն մասը վիպական պիտի լինի, միայն Մորենացու լեզուով պատմուած: Կամ ճիշտ ասած, վիպութեան կոչուած վիպասանքի բովանդակութիւնը, ըստ Մորենացու, նոյն պիտի լինէր: Ինչ որ նա բերում է իբրև Սրուանդի պատմութիւն: Հաւաստի ժողովրդական է: անշուշտ: Սրուանդի շար աչքի մասին առասպելը (Հմմտ. գլ. Գ.), որ շատ տարածուած մի ժողովրդական հաւատալիք է հին և նորագգերի մէջ: Մեր ժողովուրդը ցայսօր ևս հաւատում է, որ շար աչքը քարին էլ որ տայ, կը տրաքի: Գուցէ բովանդակութիւնը քննելով հնար լինի մի քանի ժողովրդական վիպական պծեր ևս հանել այդ պատմութիւնից, բայց այդ երկրորդական համարելով թողնում ենք: Մորենացին մեզ միջոց չի տալիս ճանաչելու բուն առասպելը յերկրած պատմութիւնից:

Բարեբախտաբար այդպէս չէ վարւում նա առասպելի երկրորդ մասի վերաբերմամբ:

1. Տ. Նաւաստրդեան, Հայ. ժող. հեփաքներ, Է-եր. 28. Հմտ. M. Abeghian, Der armenische Volksglaube, եր. 122 հոմ.

Այստեղ երկու անգամ նա թերւմ է առաւ-
պելի բովանդակութիւնը (Ա. լ. Բ. խթ.),
ուստի և մինք հրատարակինք բուն առարկելը
որոշելու և հասկանալու:

Պատմականը վիպասանքի մէջ:—Վիպաս-
անքի կամ Թորենացու Արտաշէսի պատ-
մութեան էութիւնը պատմական է: Անոր
մէջ պահուած է պատմական անցքերի յիշո-
ղութիւն, որ ուրիշներն արդէն մնասանք հա-
մեմատել են պատմութեան հետ:

Վրաց Թարսման¹ թագաւորի որդին Հրա-
զամիզդ [ըստ Թորենացու՝ Սրբանդ], սպա-
նում է հայոց Միհրդատ թագաւորին [ըստ
Թորենացու՝ Սանաարուհ] կանանցով և որդի-
ներով հանգերն և իւր հօր օգնութեամբ թա-
գաւորում է Հայաստանում (45—52թ.): Թա-
ռայելով Հնոսի շահերին՝ Սարսմանում է հայոց
զրայ և ասելի դառնում ժողովրդին: Բայց
այդ ժամանակները Պարթևաց Վաղարշ Ա.
թագաւորը յարմար է համարում Հայաստանը
նուսնել: Իւր կրտսեր եղբօրը՝ Տրդատին [ըստ

1. Աստ Թորենացու՝ զնացի օգնում են Երուանդին
(Բ. խց.): Կէ Թարսման քաղաւորն անձաք գալիս և
կուռչու Լեռաշխի դեմ. «Եւ զօրն վրաց, հանդերձ ար-
հայիւն իբրեւոց Թարսմանաւ, թեպէտ և յակրոցն յար-
ձակմանք յառաջեաց յայտին, արագապէս դառնային
ի միւս կողմն փախուցեաց» (Բ. խց.):

Սորենացու՝ Արտաշէս] պարթևական զօրքով
ուղարկուած է Հայաստան թագաւորելու (51
թ.)։ Հայերն ատելով Հրատամիզդին՝ անցնում
են Պարթևաց կողմը։ Հրատամիզդ փախչում
է, և Տրդատ բնակութիւն է հաստատում
Արտաշատում։ Փոփոխութիւնը հռոմայեցոց
հաճութեամբ շէր եղել. ուստի նորա ուղար-
կուած են Դսմեախա Կորբուլտն զօրապետին, որ
արշաւելով Հայաստան անում է Արտաշատն և
սյրում (58 թ.)։ Բայց վերջը Պարթևները
յաղթազ են հանդիսանում և Տրդատ մնում է
Հայոց թագաւոր, միայն գնալով Հռոմ՝ Եբրո-
նից թագաւոր է պտակուում փռասւոր հան-
գիսով, որով և ձանաչում է հռոմայեցոց
գերիշխանութիւնը (66 թ.)։ Տրդատ, որից
սկսւում է Արշակունի հարստութիւնը Հա-
յաստանում, նորագում է, իսկապէս նորից
չինում է Արտաշատ մայրաքաղաքը Հռոմից
բերած արուեստագէտների ձեռով։ Եորա
օրով Ալաններն արշաւումն ասպատակում են
Մարաստան և ապա անցնում են Հայաստան
Հայոց թագաւորը նոցա զէմ է դուրս գալի
կռուով, սև փոքր մի կս՝ և անկանէր ի ձեռս
նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկեց պա-
րան ի պարանոց նարաւ և քարշէր զնա՝ եթէ
չէր նորա աճապարեալ հասանել զայն սրով։
Ալաններն աւերելով աշխարհը՝ քաշոււմ են

իրենց երկիրը:

Պ. Գարագաշեանը¹ Տրդատի այս պատմութիւնն ընդարձակօրէն մէջ բերելուց յետոյ նկատում է. «Թէ Արտաշէսն Բ. Խորենացւոյն նոյն է ընդ Տրդատայ Տակիտոսի, Յովսէպոսի, Սուետոնի և այլոց ժամանակակից պատմագրաց՝ անտի ևս յայտնի է, զի բազում ինչ զոր սղբա կը պատմեն այս Տրդատայ վրայ՝ ի վիպասանաց մերոց կրնժայուի Արտաշիսի: Եւ իսկապէս, Խորենացու պատմութիւնը, — մէկզի դրած անունների տարբերութիւնն ու գէպքերի շփոթութիւնը, — նոյն է ինչ որ Հրազամիզդի և Տրդատ Ա-ի պատմութիւնը: Առասպելի մէջ, օրինակ, երգուել է թէ Հռոմայեցոց կողմից Դոմետոմն եկել է կռուելու Արտաշէսի դէմ (Բ. Ծդ): Դա անշուշտ Տրդատի դէմ կռուող Դոմետիոս Կորբուլոնն է, որ Խորենացին սխալուելով մեկնում է Դոմետիանոս կայսր (Հմմտ. գլ. Գ): Այսպէս և առասպելի մէջ Արտաշատ քաղաքը շինելը և Ալանների գէմ կռիւը յիշեցնում են Տրդատ Ա-ին: Մենք մանրամասն համեմատութիւն անել չենք ուզում, զի մեր նպատակը չէ Երուանդի և Արտաշէսի ամբողջ պատմութիւնը հանել և համեմատել Հրազա-

1. Բնական պատմ. Բ. եր. 242:

միջոցի և Յրդանի պատմութեան հետ: Այդ կարեւոր կը լինէր, եթէ Խորենացին միայն վիպասանից օգտուած լինէր: բայց նա գրաւոր աղբիւրներից էլ օգտուելով՝ յերկրում է աւերող պատմութիւնը: Մենք այն ենք առնուած միայն, ինչ որ պատմագիրն առասպելից վերցրած է յիշում:

Ալանների արշաւանքը: — Խորենացին (Բ. 26) պատմում է Մեծն Տրդատի մի կռիւր հիւսիսականների դէմ, երբ Բասւլաց Թագաւորը սփնդրեաց քեմիտապատ պահանս ձգում, բռնում է հայոց Թագաւորին և ուզում է քարշել նորան: բայց հայոց Թագաւորը սրով կտրում է պարանք և սպանում Բասւլաց Թագաւորին: Այս դէպքը նման է Յովսէպոսի պատմածին հայոց Տրդատ Ա. Թագաւորի մասին:

Պ. Խալաթեանը՝ կարծում է թէ պատմագիրը Մեծն Տրդատի կռիւր Բասիլների դէմ անաղջնագէտ Յովսէպոսից է առնում և վերադրում իւր Տրդատին: Իսկ Յովսէպոսի Տրդատի տեղ նա հանում է Արտաշէս Թագաւորին և արանների դէմ պատերազմի պատմութիւնը մինչև անձնանշանի ու թեան տասիձան վերջարանագիտում է:

Ուրիշ խօսքով, Խորենացին Յովսեփոսի նոյն պատմութիւնից երկու անգամ է օգտուել: Մէկ այդ պատմութիւնն ամբողջապէս, նոյն իսկ հայոց Թագաւորի անունը պահելով, Ա. գարից Դ. գար է փոխադրում և այսպիսով Մերոնի և Վեսպասիանոսի ժամանակակից Տրդատին (Ա.) նոյնացնում է Դիոկղետիանոսի և Կոստանդինի գաշնակից Մեծն Տըրգատի (Գ.) հետ: Մէկ էլ՝ Յովսեփոսի նոյն պատմութիւնից «անձանաչելի» կերպով սարքում է Արտաշէսի կռիւն Ալանների դէմ. բայց այդ ժամանակ «հարկաւ» ակնարկութիւն էլ չէ անում, թէ Յովսեփոսի մէջ մի այդպիսի պատմութիւն կայ. այլ, ընդհակառակն, որպէս զի Յովսեփոսին չհակասի եւ իւր փոխառութեան հետքն աւելի լաւ կորցնի, հայոց վէպն է վկայութեան ընտրում»:

Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ անհասկանալի է մնում, նախ՝ թէ ինչու պէտք է պատմագիրն օգտուէր Յովսեփոսից և նոյն իսկ աշխատէր «չհակասել» նորան, բայց նորա անունը չտար: Իւր պատմութեան մէջ Խորենացին հինգ անգամ (Ա. գ. Բ. Ժ. ԺԵ. իզ. լԵ.) յիշում է Յովսեփոսին, իբրև աղբիւր և վկայութիւն մէջ բերելով: Եւ երևակայեցէք, Յովսեփոսին այսպէս վստահելի պատմագիր համարելով հանդերձ, այստեղ

նորանից օգտուում է, բայց նորա անունը
տալու տեղ՝ հայոց առասպելներն է յիշում
իրբև աղբիւր,—այն առասպելները, որ ինչ-
պէս գիտենք, մեր պատմագիրն այնքան ցած
է գնահատում: Այս մենք չենք հասկանում:
Ոչ մի խելքը գլխին մարդ այս չի անիլ: Իսկ
Խորենացին, նորա ամենախիստ քննադատի
կարծիքով անգամ անմիտ չէ հարկաւ: այլ շա-
րունակ մի կողմից, չափելով, կշռելով ու մտա-
ծելով և նոյն իսկ ճարպիկութեամբ
կեղծող է, և միւս կողմից նոյն իսկ կեղծ աղ-
բիւրներ է ստեղծում և կամ շիւր աղբիւրների
ամենափոքր ակնարկութիւններից և շասած
բաներից (недомолвки) բռնում է, մի հայոց
պատմութիւն շինելու համար: Իսկ այստե՞ղ,—
այստեղ նա յիմարանում է. իւր վստահելի
համարած աղբիւրից՝ Յովսէպոսից օգտուում
է, բայց, երևի, կեղծելու եռանդից մղուած՝
սարքում է մի անվստահելի (իրեն Խորենա-
ցու կարծիքով) աղբիւր—առասպել:

Եթէ նոյն իսկ Մեծն Տրդատի մասին
պատմուած Բասիլների դէմ կռիւք՝ իւր պտ-
քանի անցքով՝ նոյն լինի ինչ որ Տրդատ Ա.-ի
կռիւն է Ալանների դէմ, դարձեալ չենք կա-
րող ասել, թէ Խորենացին այդ պատմու-
թիւնն անպատճառ Յովսէպոսից է առել և
գիտակցօրէն Ա. դարից Դ. դար փոխադրել:

Այդպիսի բան երևակայել չենք կարող: Պէտք
չէ մոռանալ, որ այդ երկու պատմութիւննե-
րը հմտութեամբ հանդերձ, շատ մեծ տարբե-
րութիւններ էլ ունին: Մենք այդ մասին կանգ
առնել չենք ուզում: Միայն նկատենք, որ
ինչո՞ւ անպատճառ միայն Յովսէփոսի մէջ պիտի
լինէր մի այդպիսի պատմութիւն: Միթէ չէին
կարող ուրիշներն ևս նոյն դէպքը, թէկուզ
առանց որոշ ժամանակադրութեան, պատմած
լինել հայոց որևէ Տրդան թագաւորի մա-
սին: Եւ արդեօք Թորենացին ուրիշներէ
առնելով չէ վերադրում այդ պատմութիւնն
իւր Տրդատին: քանի որ նա երկու Տրդատ
չգիտէ, այլ միայն մի Տրդատ: Բիշ է պատա-
հում այն էլ հին ժամանակներում, որ մի դէպք
այս ձևով մէկից անցնում է իւր ամուսնակ-
ցին: Ինչպէս էլ լինի, մեզ հոմերոսայանդ
քանի որ վիզոսանքի մասին է խոսիրը, կա-
րենք այս չէ: այլ այն թէ արդեօք Թորե-
նացին Արտաշէսի հոխան Ալաններէ դէմ Յով-
սէփոսին է վերցրել:

Աթէ Թորենացին: Յովսէփոսի Ալաններէ
արշաւանքի պատմութիւնից օգտուած լինէր
տառադարձնալ անհասկանալի է մնում թէ
այն ժամանակ նա ինչո՞ւ պէտք է իւր թագա-
ւորի անուշը դնէր: Արտաշէս և ոչ թէ Տրդ-
տատ, քանի որ Արտաշէսի տեղ, ըստ Յով-

«Երբ որ Տրդատն էր այդ դարում թագաւորում և Արանների դէմ կռոււմ: Երբնայտ պատմութիւնը ոչ միայն իւր արժէքը ոչնչով չէր կորցնել, եթէ «չինձու» Արտաշէս անուան տեղ Տրդատ լինէր, այլ և շատ կը շահուէր: Չէ որ պ. Երանտեանը հաստատել է ուղղում որ Երբնայտ Արտաշէսի և Սաթենիկի վեպը սպառնալու ժամանակ վերցրել է ինչպէս վեպն տարոջ, այսպէս և Արտաշէս և Սաթենիկ անուաները: Երբնայտ Տրդատի և Աստիտէ թագաւոր անուաները: Ու ստի Տրդատ անունը պահելը շատ անհրաժեշտ էր նորան, թէկուզ իւր «Երբնայտ» ծածկելու համար: Բայց երևակայեցէք, նոյն Երբնայտին, որ հենց այդ պատմութիւնը գրելիս այնքան ճարտար է, որ իւր փոխառութիւններէ հետքը կորցնել է ջանում, և «անձանայեցիութեան» աստիճան ասանց կարիքի փոփոխում է փոխ առած պատմութիւնը, նոյն բարեկէն այնքան անշնորհք է զանուում, որ Արտաշէս և Սաթենիկ անուաներն էլ փոխել չէ կարողանում որպէս զի չերևայ թէ Երբնայտի գրքից է իւր վեպը «սպառնել»: Եւ ոչ միայն

1. Халат. Арм. Эпосъ. кр. 267. а. с. եւ եր. 268 հո.:

2. Սաթենիկ անուան մասին տես Ման. Եւր. Եր. եր. 265 հո.:

այդքան. նա Յովսեփոսից մի պատմութիւն է առնում և աշխատում է «չհակասել» Յովսեփոսին, բայց և այնպէս Յովսեփոսի Տրդատ անունը չէ պահում: այլ մի «շինծու» անուն — Արտաշէս է մէջ բերում:

Բնական խելքն ասում է, որ եթէ մարդ ապուշ չէ, և մի յատահելի աղբիւրից մի պատմութիւն քաղում է մի թագաւորի մասին և աշխատում է «չհակասել» իւր աղբիւրին, էլ կարիք չունի իրենից մի շինծու անուն մէջ բերելու, այն էլ այնպիսի անուն, որ մասնում է իւր մի «կեղծիքը»: Սա այդ թագաւորի անունն «իրենից» էլ Արտաշէս չի դնիլ, այլ եղածը՝ Տրդատ կը պահէ և Ալանների դէմ կռիւն էլ չի տանիլ Դ. Դար:

Բայց կայ արդեօք այնքան նմանութիւն Յովսեփոսի և Խորենացու պատմուածքների մէջ, որ կարողանանք հաւաստի ասել թէ Խորենացին Յովսեփոսից է առած՝ Արտաշէսի կռիւն Ալանների դէմ: Պ. Խալաթեանն «անձանաչելութեան աստիճանի» հարկաւ դիտմամբ, փոխուած է համարում Խորենացու պատմուածքը, բայց և այնպէս, նա այդ «անձանաչելին» ձանաչում է: Իսկ մենք այդ բնաւ չենք դանում: Տեսնենք կէտ առ կէտ և հետը միանգամայն բացատրենք մեր հայեացքը վիպասանքի այս մասի վրայ:

Ոսկէօղ, շիկափող պարանը: — Ամենից առաջ տեսնենք պարանի պատմութիւնը, որի վրայ յատկապէս կանգ է առնում պ. Խալաթեանը: Փրկսի, Խորենացու և Թովսեպոսի մէջ էլ «փոքր նշանակութիւն չունի պարանը»: «Իմ մէջ առանձնապէս կասկած է յարուցանում Թովսեպոսի պատմութեանը, որի մէջ . . . պարանը նոյն դերն է կատարում, ինչ որ Արտաշէսի մասին միջադէպի մէջ: Ուստի, ըստ իս, հազիւ թէ կասկածելի է, որ այս մտաւրը Խորենացին է առել [Թովսեպոսից], և ոչ թէ վէպը»¹:

Թէ ժողովրդական վիպասանք Թովսեպոսից օգտուել չէին կարող՝ այդ մասին խօսք անգամ լինել չի կարող: Բայց թէ պարանի գործածութիւնը կարող էր առանց Թովսեպոսի էլ ծանօթ լինել հայերին և ծանօթ էլ էր, — մի՞թէ կարելի է հերքել այդ: Պարանի գործածութիւնը մի նոր բան չէ: «Պարանը մարտիկ ցեղերի մէջ միշտ ծառայել է կենդանի որս — գազաններ և մարդիկ բռնելու համար»: Դեռ Հերոդոտ (VIII, 85) յիշում է պարանն իբրև Իրանացոց զէնք²: Բայց ինչո՞ւ ենք հեռու գնում: Մի՞թէ Թովսեպոսի պատ-

1. Халат. Арм. Эпосъ кр. 245 հօ.

2. Մառ. Визант. Временн. кр. 264.

մութիւնից հենց չենք տեսնում: որ Ա. դարում հայոց հետ կառուող աշխատեցող պարանն իբրև զենք գործ են անում հայոց թագաւոր պարթև Տրդատի դէմ: Ուրեմն հայերը պարան չէին տեսել, անձանօթ էին այդ զէնքին:

Մի անգամ որ պարանը հայերին ծանօթ էր, կարող էր անշուշտ և հայոց վիպասանքի մէջ մտնել, ինչպէս և Շահաբայի մէջ սիրելի զէնք է պարանը: Եւ մի՞թէ այժմ էլ մեր «Սասնու ծռերի» մէջ ևս չենք տեսնում պարանը, որ մեր դարու զէնք չէ հարկաւ, այլ Խորենացու ժամանակից և գուցէ աւելի հին ժամանակից է գալի: Ոստանայ իշխանը «կապ կ'թալ, զՄհեր կապից: Մհեր ձիով ինկաւ կապ»¹:

Սակայն ի՞նչ է պատմւում մեր վիպասանքի և Յովսէպոսի մէջ պարանի մասին, և ի՞նչ նմանութիւն կայ այդ երկսի մէջ:—Եւ ոչ մի նմանութիւն: Յովսէպոսի մէջ ալանները պատերազմի ժամանակ ուզում են բռնել հայոց թագաւորին, սա կտրում է պարանն և ազատւում: Իսկ հայոց վիպասանքի մէջ հայոց Արտաշէս թագաւորը ձին նստած

¹. Գարեգին ս. Յովսէփեան. Սասնայ ծռեր. եր. 149. Հմմտ. եր. 47:

անցնում է գեար և «ձգեալ զոսկեօղ շիկա-
փոխ պարանն ընկեց ի մէջք օրիորդին ալա-
նաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափաւկ օրիոր-
դին, արագ հասուցանելով ի բանակն իւրօ:

Արտաշէս թագաւորը պարանով ընծում
փախցնում է իւր հարսնացու աղջկան:

Թէ նախնական ազգերի մէջ կանայք որտի
առարկայ են եղել և յստիկացէս արշաւանք-
ներ են գործուել բանի կերպով կին ձեռք
բերելու համար՝ այդ հանրածանօթ է: Դա
հեռաւոր հնութեան վայրենի կենցաղական
գծերից մէկն է, որի հեռքերը մինչև այժմ
դեռ երևում են ոչ միայն մեր հարսանեաց
և Եւրիշ երգերի մէջ, այլ և մեր կեանքի մէջ:
Աղջիկ առեւանգելու սովորութիւնը դեռ չէ
վերացած մեզնում: Ուստի և շատ բնական
է մեր «սիրողի երգի» մէջ կարդալ տղայի
կողմից աղջկան ասած. «Ջիրինտ էնեմ վրադ
կիգամ էլըարով»¹: Այսպէս և դեռ լսում
ենք.

«Փեան կուգայ սուրով զաւով (զարով ?),

Մարդը շատ է՝ կաննէ զօռով»²

Կամ հարս տանելու ժամանակ.

«Աղբօր շիւշէն (?) կոտրտեցին,

Քրոջ վալէն պատուեցին»³.

1. Մրուանձօեան, Համով հոռով. եր. 322:

2. Բնար հայկական, եր. 171:

3. Լայրայեան, Զաւայսիի Բուրմուս. եր. 27:

Հարսի յափշտակութիւնը կամ առեւան-
գումը, յայտնի է, գուրս է գալի շատ ազգերի
վէպերի մէջ՝ սկսած Հոմերոսից մինչև ուու-
սաց վէպը և քրդական երգերը: Ռուսաց
Վլադիմիրը իւր դիւցազն Դունային ուղար-
կելով հարս բերելու, տալիս է նորան զինուոր-
ներ ու շատ ոսկի և ասում է. «Դնա այն
քաջ Լիթովացոց աշխարհը և բարի խօսքով
աղջիկ ուզիր. բայց թէ որ խաթրով շտան-
կանզնիր զօրով առ»:

Ոսկին գլխազնի (ВЫКУПЪ, բաշլըղ) հա-
մար է, գրում է այս առթիւ Միլլերը, իսկ
զօրքը աղջիկը կոռով առնելու համար: «Մեծ
յայտնի չեն, աւելացնում է նա, հնագոյն
ժամանակների աղջիկ ուզելու այս երկու
եղանակը: Թէպէտ և գլխազինը մի փոքր
աւելի ուշ է երևան եկել, բայց երկու եղա-
նակն էլ երկար ժամանակ շարունակ միասին
գոյութիւն են ունեցել, և ինչպէս ուսաց
վէպերից երևում է, գործ են դրուել մերթ
մէկ եղանակը, մերթ միւսը»¹:

Շահնամայի մէջ Սոհրարը գալիս պա-
շարում է Սպիդ բերդը, որի պահապանն էր
Հեջիր՝ մի քաջ մարդ, ուժեղ, կտրիճ: Այս-

¹. Орестъ Миллеръ, Илья Муромецъ и Бо-
гатырство кievское. С. Петербургъ, 1869. кр. 338-

տեղ էր և Գէտտէհէմը՝ որ Հեջիրից յետոյ
բերդի հրամանատարն է լինում: Սա մի քոյր
ուներ, Գուրդաֆրիդ անուկով, զլաւ ձիաւոր
մի աղջիկ, անուանի քաջ մարտիկ: Սոհրարը
կողուի մէջ գերի է ըննում Հեջիրին: Այդ որ
լսում է «պարսն զցող» Գուրդաֆրիդը, իս-
կոյն կռուի դաշտն է իջնում՝ մարդանակ
հազած ու կապած. բայց Սոհրարից յաղ-
թահարուած յետ է դառնում: Սոհրարն
ընկնում է ետեից: Այդ ժամանակ Գուր-
դաֆրիդը բաց է թողնում գիսակները, ինչ-
պէս մեր Խանդուլթ Խաթունը Դաւթից
յաղթուած փախչելիս: Իսկ Սոհրարը՝ տես-
նելով որ նա կին է,

«Շուտ թամբից հանեց նա գալարած իւր պարան,

Գցեց, ընկաւ փոկը մէջին և ևս բռնեց աղչկան:

Երբ աղջիկը պարանի մէջ տեսաւ իրեն պարփակած,

Որքան արեց մէջից դուրս գալ, նա ազատուել

չկարաց.

«Իմ ձեռիցը չես ազատուիլ» ասաց Սոհրարն իւր

գերուն: . . .

Իմ ցանցիս մէջ չեկաւ ընկաւ դեռ ևս մի որս քեզ

նման »:

Աղջիկը ճարը կտրած ասում է.

«Ո՛վ դու քաջերի մէջ արի առիւծ քո գործով, . . .

Մի յուզեր ամեն կողմից վէճ ու ամօթ իմ համար,

Երկու կողմն զօրք հանելով և զարկելով գու իրար,

Ե՛կ մենք ու մենք մեր մէջ հաշտուենք, զա աւելի

լաւ խելք է:

Ինկզբութիւնն է մեծի գործ, ամեն գործից. էջ
վեր է. . . .

Պէտք չէ մեր այս հաշտութեամբը այլ ևս կռիւ
որոնել»:

Սոհրաբը տեսնելով նորա գեղեցկութիւ-
նը՝ սիրահարոււմ է նորան և բաց թողնուած
Ալջիկը մտնում է բերդը և պարսպի վրայից
յորդորում է տղային յետ դառնալ կռուի
դաշտից: Իսկ Սոհրաբը սիրահարուած ցա-
ւում է.

«Կարծես աչքիս զարձանալի մի զարկ գպաւ: կու-
րացաւ»

Որ այնպիսի չքնաղ ողբ իմ ձեռիցը գուրս պրծաւ,
Այն ի՛նչ սիրուն եղնիկ եկաւ ընկաւ պարանս իւր
ոտով:

Իմ պարանի կապից փրկուեց և ինձ կապեց իւր
կապով»:

Նախնական կենցաղական մի գիծ է այս,
հարսնացուն կռուի դաշտում՝ իբրև որս
բռնելու մի յիշատակ, որ դուրս է գալի
Եասնամայի մէջ, անշուշտ, արգէն մեղմնացած
և փոփոխուած, բանաստեղծի նպատակին ու
ծրագրին յարմարեցրած:

Բայց եթէ պ. Խալաթեանի եղանակով
վարուելու լինէինք, Սոհրաբի և Գուրդա-
Ֆրիդի այս միջադէպը կը նոյնացնէինք Արտա-

1. Երգուսի, Ռուստամ և Սահրաբ, քրգմ. Ս. Գիւյ-
գադեանց. եր. 64 հեծ.:

շեփի և Յովթենիկի միջադէպի հետք ընդ որ-
երկուսի մէջ էլ արշաւանք և արշաւողների
ասպատակութիւն կայ Երկուսի մէջ էլ երկու
կողմն ևս քաջեր են Կ. երկուսի մէջ էլ մի
նշանաւոր տղամարդ գերի է ընկում Կ. եր-
կուսի մէջ էլ գերուածի կողմից մի գեղեցիկ
աղջիկ դուրս է գալի գերողի հետ խօսում Կ.
երկուսի մէջ էլ աղջիկը իմաստուն խօսքերով
հաշտութեան է յորդորում յաղթող քաջին Կ.
երկուսի մէջ էլ յաղթական գերողը սիրում
է այդ աղջկանս Կ. երկուսի մէջ էլ գերողը ծին-
հեծած վազում է եւ պարանդ աղջկայ մէջքը
ձգում ու ընկում նորան:

Ասկայն ի դուր ենք թաւում: Ընթեր-
ցողը կը տեսնէ: որ Արտաշէսի ու Սաթենիկի
միջադէպը Ասհրաբի ու Գուրգաֆրիդի այս
միջադէպին աւելի նման է: քան Եովթենիկի մի-
ջն ու պարանդ որսումութեանը: Բայց այդ մեծ
նմանութիւնը մանաւանդ պարանդ որսումու-
թիւնը: հարկաւ դեռ չէ ապացուցանում: որ
Խորենացին Փիրզուսից: կամ Փիրզուսին
Խորենացուց օգտուած լինին: Եթէ մի քան
ապացուցանում է այդ նմանութիւնը: այդ
այն է: որ Խորենացին խկապէս ժողովրդական-

Կ. Երկուսի պատեալն ի մեջ երկուս Երկուսի մէջ
ազգացն: Բայց Երկուսի պատեալն (տոր. Բ. Ե. Ե.):

վիպասանքից է վերցրած այդ պատմութիւնը։ Թողովրդական վէպն է որ շատ ազգերի մէջ այսպիսի նման գծեր, մտախւներ է պարունակում իւր մէջ, շատ անգամ այնքան նման, որ նոյնութեան են հասնում։ Եւ շատ բնական է այդ։ Եստիական կեանքը և այդ կեանքի արտայայտութիւնը շատ տեղ իրար նման են, զի մարդիկ էլ են իրար նման։ Ազոնք ընդհանուր կենցաղական գծեր են միայն։

Բայց ինքը պ. Խալաթեանն էլ զգում է, որ իւր ենթադրութիւնը պարանի նրկատմամբ խախուտ է։ Ուստի նա չէ քաւականանում պարանը Յովսեպոսից հանելով այլ միանգամայն եւ Աստուածաշնչից է հանում, և յատկապէս Եսթերի գրքի այս կտորից (Ը. 4). «Եւ ձգեաց արքայ առ Եսթեր զգաւազանն ոսկի. և յարեաւ Եսթեր երթեալ ի սենեակն (ընդգծածներն իրենն են) արքայի»¹։ «Բայց ուր է այստեղ նմանութիւնը» բացազանչում և հարցնում է պ. Մառը²։— Եստ հասկանալի է թէ ուր է։³

1. Халат. Арм. Эпосъ. I. 267, д. II. 62.

2. Визант. Врем. кр. 265:

3. Բագաւորի «ոսկի գաւազանը ձգելու» սովորեանքն անշահակութիւնը բացատրուած է նոյն Եսթերի գրքի մէջ. «Ամենայն այր կամ կին՝ որ մտակիցէ առ արքայ ի ներքին սենեակն առանց կոչելոյ նորա՝ յի փոխու»։

Յախ «գաւազան» բառի մէջ, որ պիտի փո-
խենք և «պարան» կարդանք, և ապա «ոսկի»
բառի մէջ, որի հետ պիտի միացնենք Յլից
գրքի մէջ (ԻԶ. 29) եղած «օղ» բառը: Չէ՞
որ այդպիսով կըստանանք ոսկեօղ պարան: Ահա՛
թէ ի՛նչ կնշանակէ «ոճը» ուսումնասիրելով
հետազօտել:— Բայց այդքանով չէ բաւականա-
նում հետազօտողը. «շիկափոկ» բառն էլ Աս-
տուածաշնչից է, որովհետեւ այնտեղ (ՅԼՔ,
ԻԶ. 14) «շիկակարմիր մորթ» կայ յիշուած:
«Օրիորդ» բառն էլ Աստուածաշնչից է, որով-
հետեւ այնտեղ (Ծսայի մարգ. ԽԷ. 2. 8.)
«օրիորդ» բառը կայ, այլ և «փափուկ»:— Ո՛հ,
տիկնայք փափկասունք հայոց աշխարհի. դուք
էլ, երեւի, քնքո՛յշ օրիորդներ, ձեր փափու-
թիւնն ու քնքշութիւնը, և նոյն իսկ տիկ-
նութիւնն ու օրիորդութիւնը, Աստուածա-
շնչից էք վերցրել: —

Վարժանք (գլխազին):— Ծրկրորդ կար-
ծեցեալ նմանութիւնն է. «Ծրկու գէպրում»

քիւն. բայց միայն առ որ ձգե արեայ գոսկի գա-
ւազանն, նա միայն ապրի» (ԺԾ. 6): Ուստի եւ
բազումոր, որպէս զի ցոյց օայ Եսթերին (երբ ստ
առանց հրամանի նորս սենեակն է մօճում, եւ յետոյ
հրեկոյ կեանքի համար է խնդրում) քե մերում է, գաւա-
զանը դնում է նորա վրին, եւ կամ ձգում է դէպի նա:

էլ վե՛ծ փրկանք (ВЫКУПЪ) է վճարում: — Թափ սեպտի մեջ՝ մտապ գերեալ թ. ա. գ. ա. Հ ու լ. ի սփ Թարննացու մեջ՝ աղանաց ա ռ ք ա յ ա գ ա տ ե ռ համարս: — Բայց ո՛ւր է այստեղ նմանութիւնը Միայն առանքէն ВЫКУПЪ բառի մեջ, որ թե գերեալների ազատութեան համար վճարած փրկանք է նշանակում: և թե աղայի կողմից աղջկայ Տնողների առած ըստ ընդ: գլխազին կամ ըստ Թարննացու: վարձանք: Բայց մի թե կարելի է երկու տարբեր բան նշանակել, այն պատճառով միայն, որ առանքէնում մի ВЫКУПЪ բառով է արտայայտուում: — Ըստ Թափսեպսի՝ Ալաններն: արչաւում են Մարաց վրայ: տրոփ հետե ոչ ոք նոցա: գլխադրութիւն չարաւ: նոքա աւարի ստան աշխարհը: շատ սխալ ու արժառ քշեցին: Ինքը մտապ Բակաչ թագաւորն էլ վախից փախաւ լեռները և ստիպուած էր հարիւր քանդար փրկանք վճարել բարբարոսների ձեռից իւր կնոջն ու հարձնելն սղանդու համարու Հայոց վրագա

1. Երեւակայական նմանութիւն է եւ այն որ իբր թե երկու պատմութեան մեջ եւ «խօսուած է նմանակցումն (ОТСТУПЛЕНИЕ) մասին»: Թափսեպսի մեջ այդպիսի բան չկայ: Առանց դիմարտօրիւն ցոյց տալու: կնոջն աւ հատնելին քղանու ձեռին քողակոյ՝ փախից լեռները փախչելը: նմանելում չէ: հարկաւ:

սանքի մէջ, ըստ Խորենացու, այդպիսի փրկահանքի հետք անգամ չկայ: Այստեղ ալանները մտնում են հայոց աշխարհը. Հայոց Արտաշէս թագաւորը զօրքով քաջութեամբ կռւում է նոցա դէմ. բռնում են Ալանաց արքայորդուն. Ալանները քշւում են Կուր գետի միւս ափը: Եղբօրն ազատելու համար միջնորդում է ալանաց արքայադուստրը, և Հայոց Արտաշէս թագաւորը տեսնելով օրիորդ Սաթենիկին գեղեցիկ և խելօք, ցանկանում է նորան կնուլթեան առնել. մարդ է ուղարկում ուզելու օրիորդին: Բայց Ալանաց թագաւորն ասում է. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բերս ի բիւրուց ընդ քաջագոյ կոյս օրիորդիս Ալանաց»: Ուրիշ խօսքով, աղջկայ հայրն իւր աղջկայ համար մեծ զլխագին, բաշըրդ է ուզում— մի շատ հին օճորութիւն, որ ինչպէս տեսանք, ցայժմ քնում է մեր մէջ և շատ ազգերի վէպի մէջ դուրս է գալիս: Արտաշէս, երեւի, չէ ուզում մեծ զլխագին վճարել: Ռոմֆհեակ Խորենացին Ալանաց թագաւորի վերեւում դրած խօսքերը մէջ բերելուց յետոյ՝ կցում է. «Ձայս տեղի առասպելարանելով վիպառանքն յերգելն իւրեանց ասեն», և ետեւից բերում է թէ ինչպէս արին Արտաշէս ձին հեծած՝ սրտիւ անցնում է գետով:

պարանը ձգում է օրիորդի մէջքը և բերում նորան իւր բանակը:—Արտաշէսն ուրիմն, այն է անում ինչ որ ցարդ երբեմն անում են հայերն ու աւելի քրդերը, երբ իրենց հարսնացուի համար մեծ գլխագին են ուզում ծնողները: Ծա փախցնում է աղջկան:

Խորենացին այդ պատմութիւնն անելուց յետոյ մէջ բերած առասպելը մեկնում է. «Որ եւ մշմարտութեամբ ունի այսպէս: Զանգի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթենիկ: Այս է ոսկէօղ շիկափոկ պարանն»: Այս հատուածը ժողովրդական երգի հետ բնակապ չունի, այլ Խորենացու մեկնութիւնն է միայն: Խորենացին, երևի չհաւատալով որ Արտաշէսի նման մի մարդ, մի հարուստ թագաւոր, կամեցած չլինի ալանաց թագաւորի ուզած գլխագինը տալ, այլ վայրենի սովորութեամբ, պարանով բռնելով աղջկան փախցրած, առասպելի այդ հատուածն այլաբանութիւն է համարում և մեկնում թէ զաճիշտ չէ, այլ միայն մի այլաբանութիւն է: Ծիշան այն է, որ Արտաշէս մեծ վարձանք է տուել և առել Սաթենիկին: Ուրիշ խօսքով, նա աղջիկ առնելու հնագոյն բարբարոս սովորութեան՝ աղջիկ յափշտակելու տեղ՝ աւելի

Նոր Ժամանակի՝ վարձանքով աղջիկ գնելու
սովորութիւնն է դնում՝ 1:

1. Թեպէս եւ մեր միւրի հետ կապ չունի, բայց
անհետսրհիւ չէ սեանէ թէ ինչպէս է դատում պ. Խաչա-
քեանը Խորենացու այս մեկնութեան առթիւ. «Զարմանալի՜
Յուրք այլաբանութիւն: Օտարո՞ք է մի բան, — երբ այլա-
բանութիւնն այստեղ այն է, որ (շիկափոկ) պարտաւ
նշանակում է այլաբանօրէն կարմիր մորթ, յէ այդ
այլաբանութիւնը հենց այնտեղ պիտի ծագէր, ուր կարմիր
մորթուն այսպիսի սիմբոլիկան նշանակութիւն էին տալիս,
այսինքն աշանների մէջ եւ ոչ բնաւ հայոց մէջ, որովհ
կարմիր մորթու մասին այդպիսի գաղափար չունեին [Ո՞ր-
տեղից գիտէ, որ աշաններն ունեին, իսկ հայերը չունեին]:
Ուրեմն էլ ինչպէս կարող էին հայ վիպասանները բա-
նեցնել այդպիսի այլաբանութիւն: [Բայց ո՞վ սասց, որ
այլաբանութիւնը եղել է երգի մէջ եւ ոչ թէ իրեն Խորե-
նացու բացատրածն է: Զէք հաւատում, կարդացի՞ք պ.
Խաչաքեանի այս գրածի շարունակութիւնը կամ նորա
եզրակացութիւնը]: Պարզ է, որ ինքը Խորենացին է այդ
վերագրում երգիչներին. ուրիշ խօսքով, «այլաբանութիւնը»
[լակտոններն իրենն են], որ այնքան յանախ իրեն վիտրու-
քիւն մէջ է բերում մեր պատմագիրը, պատկանում է հենց
իրեն Խորենացուն»: — Երբ այդպէս է, եւ այդ «այլաբա-
նութիւնն» ու մեկնութիւնն իրեն Խորենացունն է եւ երգի
մաս չէ, էլ ինչո՞ւ են այս դատողութիւնները: Պարզ է,
երկու նպատակով. «նախ՝ Խորենացու ու միայն Խորենացու
վարձանքը, բաշխողը՝ գերիների ազատութեան համար
տուած փրկանքի հետ նոյնացնելու համար. եւ ապա՝
Խորենացու կեղծիքը բռնելու համար: Բայց չէ որ ինքը

Խորենացու մեկնութիւնը, իրենից արած լինի նա, թէ նոյն իսկ երզնիներից վերջրած լինի,—որովհետեւ յաճախ վիպասաններն էլ մեկնում են շատ բան, ինչպէս և նոյնը տեսնում ենք մեր արդի ժողովրդական վէպից— մի աւելորդ բան է, Բայց թէկուզ մեր վիպասանքի մէջ անզամ պատմուած լինէր, թէ Արտաշէսը փախցնում է սղջկան և ապա այս ու այն բաները վարձանք, բաշլրդ է տալիս սղջկայ հօրը:—այդ ևս մի սովորական կենցաղական գիծ է, որ ցայսօր ևս կատարւում է մեր ժողովրդի մէջ: Աղջիկ փախցնելուց յետոյ զլիսագին են տալիս սղջկայ ծնողներին և հաշտւում, ապա հարսանիք անում:

Ուրիշ կենցաղական գծեր: — Եւ իրաւ խորենացին անմիջապէս անցնում է հարսանքին, բերելով հարսանքի նկարագրից մի փոքրիկ կտոր միայն. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայու թեանն Արտաշէսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Մաթինկանն»: Խորենացին, որպէս զի այս հատուածը բառացի չհասկացուի, դարձեալ մեկնում է.

Խորենացին ստու՛մ է իւր յեզուով թէ այդ աջարանիան բացատրուիւմ է իրենն է:—Ո՛հ հէ, ճա չէ ստու՛մ, այդ պ. Խաչարեանը թռնու՛մ է նորան . . . :

«Քանզի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ գահեկանս ճապաղել . . . սապէս և թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ: Այս է ճշմարտութիւն ըսնիցս»: Շատ ծիշտ է Խորենացու այս մեկնութիւնը, թէպէտ և քարձեալ շատ աւելորդ, քանի որ ոչ ոք այնքան միամիտ պիտի չլինէր կարծելու թէ իրօք ոսկի ու մարգարիտ էր տնդում Արտասաշէսի և Սաթենիկի հարսանքին:

Հայոց թագաւորների ու թագուհիների այդ սովորութիւնը, յայտնի է, ցարդ պահում են մեր «թագաւորներն» ու «թագուհիները», ինչպէս կոչուում են հարսն ու փեսան հարսանքի ժամանակ: Այդ սովորութեան մասին առաջին անգամ լսինք՝ է նկատել նոր Զուղայեցոց համար: Սակայն միայն նոր Զուղայեցոց մէջ չէ, այլ շատ տեղ տարածուած է: Մենք իսկ տեսել ենք թէ ինչպէս եկեղեցուց գուրս գալուց յետոյ՝ մանր գրամներ են ցրուում: Գիւղերում, հարկաւ, այժմ փող ցրուելը շատ չէ պատահում: Բայց փողի փոխանակ չամիչ, մրգեղէն կամ ցորեն և լնտեղալը շատ տեղ սովորական է²: Հարսանքի

1. Վեպի Հնոյն Հայաստ. եր. 111. ծան:

2. Գարեգին ս. Յովսէփեան, Փշրանքներ, եր. 61:

ժամանակ փող ցրուելու նոյն սովորութիւնը գտնուած ենք և Շահնամայի մէջ¹։

Այսպէս, երկու պատմութեան, Յովսէպոսի և Խորենացու մէջ իբրև նմանութիւն մնում է մի բան միայն,—այն որ, ըստ Յովսէպոսի Մարաց աշխարհից Ալաններն անցնում են Հայաստան, և, հարկաւ, կողոպուտ առնում, ըստ Խորենացու, «սուպատակաւ հինից ելնում են յաշխարհն Հայոց»։ Էլ ուրիշ ոչ մի նմանութիւն²։ Եւ այդքան նմանութիւնը բնաւ չէ կարող ապացոյց համարուել, թէ Խորենացին այդ պատմութեան համար օգտուել է Յովսէպոսից և դիտմամբ էլ նորա անունը չէ տուած։

Ժողովրդական երգը կարող էր ալանների արշաւանքի յիշողութիւնը պահել և պահել է՝ միացրած ալանաց արքայորդու գերութեան և Սաթենիկի հարսնախօսութեան միջադէպերի հետ։ Վերջին երկուսը կարող են և՛ պատմական իրողութեան վրայ հիմնուած լինել, և՛ լոկ ստեղծագործական երեակայութեան ծնունդ։ Պատմական է ա-

1. Heldensagen von Firdusi, von Shcack, եր-218:

2. Արդար յիմնու համար պէտք է նկատենք, որ պոետականը մի նմանութիւն էլ է գտել,—«գերութիւն» բառը։

լանաց պատերազմը, — իսկ պատերազմների մէջ գերի բռնուելը շատ սովորական, — և մնացածը լոկ կենցաղական գծեր են, որոնք ամենայն պատմական երգերի մէջ էլ կարող են մտնել և մտնում են:

Այդպիսի կենցաղական գծերից է նաև «նախանձ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւնը ընդ միմեանս ի ձեռն կանանցն» (Բ. խթ): Այս նախանձի և գրգռութեան մասին գըրուած է և «Ճշմարտեալ» պատմութեան մէջ (Բ. ծգ. ծե). բայց թէ վիպասանքի մէջ իսկապէս նոյնն է պատմուած եղել ինչ որ այստեղ՝ այդ չենք կարող ասել: Խորհնացին միայն վիպասանքից չէ առնում, և վիպասանքից առածն էլ, գիտենք, փոփոխում է: Ընտանիքի անդամների մէջ այսպիսի նախանձ ու գրգռ գուրս է գալիս և մեր արդի վէպի և ուրիշ ազգերի վէպերի մէջ:

Ի՞նչպէս է կազմում վէպը: — Ի՞նչպէս է եղել, որ վիպասանքի մէջ ալանների արշաւանքը փոխանակ իսկական Տրդատ անուան՝ կապուած է Արտաշէս անուան հետ: Պ. Գարազաշեան նկատում է. «Խորհնացւոյն պատմութենէն, ուր պարանին դէպքը կընծայուի մեծին Տրդատայ՝ յայտնի է, թէ Արտաշէսն նորա կրկոշուէր և Տրդատ, ապա թէ ոչ անմեկնելի կըմնայ շփոթութիւնն, որ

անշուշտ Խորենացւոյն կողմանէ է և ոչ Յովսեփոսի, որ իբր երեք հարիւր ամօք յառաջ է: Այս խօսքերը, որքան հասկանում ենք, ուզում են ասել թէ Խորենացուն ծանօթ է եղել, որ նորա Արտաշէսը կստուել է և Տրդատ, կամ թէ ժողովրդական երգի մէջ մի և նոյն թագաւորը երկու անուն է կրել՝ Տրդատ և Արտաշէս: Սակայն պատճառարանութիւնն այդ չէ արդարացում:

Ժողովրդական երգին շատ յտուել է անունների այդպիսի փոխանակութիւն, հարկաւ ոչ առանց պատճառի: Այդ իմանալու համար նախ պէտք է տեսնել թէ ինչպէս է կազմուում ժողովրդական վէպն ընդհանրապէս և ինչպէս են կազմուել մեր վիպասանքը մասնաւորապէս:

Պատմական մեծ իրողութիւնները, որոնք ազգային կեանքի համար կարևոր նշանակութիւն ունին, և կամ այնպիսի գէպքեր, որոնք առանձնապէս խորը տպաւորութիւն են թողնում ժողովրդի երեակայութեան վրայ, նիւթ են դառնում ժողովրդական պատմական երգերի և աւանդութիւնների: Բայց ասոնք միայն անշատ վիպական երգեր ու աւանդութիւններ են և ոչ թէ ամբողջական և հեռեական մի վէպ, ընդարձակ պատմութեանք, երգերով խառն, ինչպիսին են մեր վիպասանք:

Այսպիսի վէպը կազմուեալ է ժամանակի ընթացքում: Վիպական ոգու մի ընդհանուր յատկութեամբ՝ անջատ երգերն ու աւանդութիւնները, որոնք առաջ են եկել զանազան պատմական դէպքերի ազդեցութեան տակ, ձգտում են հետզհետէ միանալու: Այդ ժամանակ զրոյցներն ու երգերը յաճախ ներքին փոփոխութեան են եթարկւում և ոչ թէ մեքենայաբար իրար կցւում: Բնականաբար ամենից աւելի առժում են հերոսների անունները, մի պատմական անունան տեղն անցնում է միւսը: Առաջանում են անաբրոնիզմներ և, ինչպէս մի ժողովրդական գեղեցիկ երգի մէջ, այսպիսի անհետեթութիւն է պատմւում թէ Սուրբ Վարդան կուում է Լանկթամուրի հետ: Նշանաւոր հերոսներն ու սիրելի անուններն իրենց են քաշում ուրիշների վրայ եղած երգերն ու զրոյցները: Սոքա դառնում են, այսպէս ասած, վիպական խմորման կեդրոնը: Այսպէս Ֆրանսիական վէպի մէջ Մեծն Կարոլոսի անունն են կապուած շատ արարքներ և գծեր, որոնք իրենք չեն, այլ Կարոլինգեան ցեղի ուրիշ թագաւորներինը: Նոյն իսկ Մերովինգեան հարստութեան թագաւորների արարքներն անցել են Մեծն Կարոլոսի վէպին ¹:

1. G. Lanson. Histoire de la Littérature française, Paris, 1895. եր. 18 հո:

Ժողովրդական վէպի վրայ, ուրեմն, աշխատում են ամբողջ սերունդներ, և մի վիպական անձնաւորութեան համար նիւթ են տալի բազմաթիւ պատմական անձեր: Սոցաւրարքները միանում են, հարկաւ, մի որեւէ շօշափման կէտ, հանգոյց գտնելով: Ասել չի ուզիլ, որ միմեանից շուտ միանում են համանուն պատմական անձերի մասին եղած աւանդութիւնները: Մի քանի կարողոսների կամ մի ժքանի Արաաշէսների երգերն ու զրոյցները այնպէս են սուււում, իբրև մի մարդու վրայ լինին: Բայց և տարբեր անուններով մարդոց արարքներն անցնում են մէկից միւսին: Այնուհետև միացման համար իբրև հանգոյց ծառայում է զլիաւորապէս՝ զանազան անձերի գլխին եկած կամ նոցա կատարած դէպքերի համանմանութիւնը: Մման գէպքերի ազդեցութեան տակ հին պատրաստի վիպական երգը, և նոյն իսկ վէպն, իւր մէջ ընդունում է նոր տարրեր, նոր պատմական անցքերից:

Արդ, մեր վիպասանքն ևս բացառութիւն պիտի չկազմեն ուրիշ ազգերի վէպերի մէջ: Մեր ժողովրդական վէպն ևս հիւսուած պիտի լինի հետզհետէ, ժամանակի ընթացքում, և անոր համար իբրև նիւթ ծառայած պիտի լինին մեր ազգային կեանքի պատ-

մական նշանաւոր իրողութիւնները: Եւ քանի որ մեր վիպասանքի կեդրոնը սկզբից մինչև վերջը—Սրուանդի թագաւորելուց մինչև Արտաւազդի մահը իւր հօր անէծքի տակ,— կազմում է Արտաշէս թագաւորը, ուստի և վէպի նիւթ եղած պիտի լինի ամենից առաջ մեր Արտաշէս անուանով թագաւորների պատմութիւնը: Կրնշանակէ Արտաշէս անունը սիրելի է եղել ժողովրդին և Արտաշէսների գործքերն առանձին ապաւորութիւն են թողել ժողովրդի երևակայութեան վրայ: Դսկ որովհետեւ Տրդատ Ա.-ի գործերն ևս երևում են վէպի մէջ, կրնշանակէ նորա ժամանակի արարքներն ևս իրենց ազդեցութիւնն արել են ժողովրդի վրայ և նորա պատմութիւնն ևս որևէ հանգուցով միացել է արդէն պատրաստի ժողովրդական վէպին, կերպարանափոխելով և ընդարձակելով այն: Արտաշէսի վէպը իւր մէջ առել է Տրդատի արարքները, բայց սիրելի ու ժողովրդական Արտաշէսը մոռացութեան է տուել Տրդատ անունը:

Փորձենք վերլուծել մեր վիպասանքի պատմական մասը և տեսնենք ինչպէս հետըզհետէ և ինչ տարրերից է կազմուած:

Արտաշէս Ա. եւ շինուած Արտաշատ քաղաքի:—Տրդատ Ա.-ից առաջ հայերն ունեցել են մի քանի Արտաշէս անուանով թագա-

ւորներ: Ամենից թուաջ Արտաշէս կամ Արտաքսիաս: որ հայոց փառաւոր թագաւորութեան հիմնադիրն եղաւ (189 թ. Զ. ա), որի ցեղից է Տիգրան Մեծն: Սորա թոռն էր նոյնպէս Արտաշէս (33—21): Այսպէս և ըստ Տակիտոսի, Տիրերիոսի ժամանակ հռոմայեցոց ձեռով թագաւորում է հայոց՝ Պանտացոց թագաւորի որդին Ջենոն (18 թ. Զ. յ.), որ սիրելի էր հայերին: «Գերմանիկոս երթայ յԱրտաշատ քաղաք և հաւանութեամբ մեծամեծացն, ի ձայն ցնծութեան բազմութեան՝ ածէ զզխտով նորա զարքունական ապարօշն: Երկիր եպագ ժողովուրդն տեսան իւրում նորոյ և կոչեաց նմա անուն Արտաշէս: ըստ անուան քաղաքին» (Տակիտոս, Տարեգր. Բ. 8)¹: Այս պատմական դէպքը որով թագադրութեան ժամանակ ժողովուրդն օտար ցեղի հայ թագաւորի անունը փոխում է և հայ անունով Արտաշէս է կոչում, ցոյց է տալիս որ հայոց մէջ Արտաշէս անունը սիրելի եւ ժողովրդական է եղել, և թերեւս սովորութիւն է եղել թագաւորներին օտար անունների տեղ հայ անուններով կոչելու: Թէ Ջենոն—Արտաշէսից ժամանակով ոչ շատ հետո Տրդատ Ա.-ի անունն ևս նոյն ձևով

1. Գառաբաշեան, ԳՃՃ. պատմ. հայ. Բ. եր. 197:

փոխուած է եղել Արտաշէսի, թէ չէ՝ մենք այդ չգիտենք: Իսկ թէ ժողովրդական երգը օտար Տրդատ անուան անց կարող էր հայացած և ժողովրդին սիրելի Արտաշէս անունով գովել իւր իմագաւորին:—այդ շատ բնական է, եւր թի նկատի ունենանք վերոյիշեալ սովորութիւնը: Բայց անուան այդ փոփոխութիւնն ունի իւր և ուրիշ պատճառը, որ էական է: Դէպքերի նմանութիւն է այդ, որի մասին յետոյ:

Այստեղ պէտք է նկատենք յստիպապէս Արտաշատ քաղաքի շինութիւնը, որ յիշուած է երգի մէջ: Ըստ վիպասանքի՝ Արտաշատ քաղաքը հիմնուած է կամ շինուած է Արտաշէս (Ա. լ. Բ. խթ.): Եւ այս պատմութեան համեմատ է: Արտաշատը հիմնուած է ըստ Սարգսնի՝ Արտաշէս Ա., (180 թ. Բ. ա.): Այս Արտաշէսի ձեռով է կատարուած և քաղաքական այն մեծ փոփոխութիւնը, որով հայերը՝ երկար դարերի սարկական լծից ազատուելուց յետոյ՝ անկախ ազգային իշխանութիւն և թագաւորութիւն են ունենում: Այսպիսի մեծ իրոպութիւնը չէր կարող իւր խորին ազդեցութիւնը չթողնել ժողովրդի երեւակայութեան վրայ: Եւ զգեցեցի՝ Արտաշատի՝ հայոց քաղաքական կեանքի հազոյն կեդրոնի հիմնուելու առաջին երգը բուն իսկ իւր հիմնադրի՝ Արտաշէս Ա.-ի մասին է ասուել:

Սակայն պէտք է նկատել, որ Արտաշատու շինութեան մասին Արտաշէսի ձեռով բացի անոր «Տիմնանալուց» կամ շինուելուց՝ ուրիշ քան յայտնի չէ վիպասանքից: Ինչ որ Խորենացին (Բ. խթ.) բերում է Արտաշատի շինութեան մասին՝ Խորենացու սեպհական պատմութիւնն է, որի համար պատմագիրը կարող է նաև վիպասանքից օգտուած լինել, բայց իրենից յաւելելուածներ անելով: Ուրիշ խօսքով Խորենացու «զարգարեալ» պատմութիւնն է այդ: Իսկ մենք գիտենք թէ ինչ է նշանակում «զարգարեալ» պատմութիւն ¹:

Արտաշէս Բ. եւ վիպասանք:—Արտաշէս Ա-ից, հայոց փառաւոր թագաւորութեան հիմնադրից յետոյ ժողովրդի վրայ իւր խորին ազդեցութիւնը պիտի թողնէր և թողել է Արտաշէսի սերունդ Մեծն Տիգրանի երկարատև և աշխարհակալ թագաւորութիւնը: Այս մասին յետոյ: Այնուհետև առանձին կերպով յուզել է ժողովրդին Մեծն Տիգրանի թռուան, Արտաւազգի որդի Արտաշէսի (Բ.) պատմութիւնը, որով իսկապէս սկսուած է վէպը՝ իբրև մի հեռեական և ամբողջ պատմուածք:

Այս թագաւորի պատմութիւնը, որ գուցէ շատերին ծանօթ չէ, մենք այժմ կար-

1. Հմմտ. Մատ. ԲուՅ. Երեմ. եր. 255 հօ.

դում անցնում ենք, և իւր համառօտութեամբ մեզ վրայ թերեւս ոչ մի առանձին տրպաւորութիւն չէ թողնում: Գուցէ նոյն իսկ շատ շնչին բան երեւի ժողովրդական երգի կամ վէպի նիւթ դառնալու համար: Բայց այդ միայն մեզ համար և այժմ: Պէտք է երեւակայել Ա. դարում: Բ. ա. հայ ժողովրդի վիճակը, երբ ազգը Արտաշէս Ա.-ի ձեռով նոր օտի էր կանգնել, և այնուհետեւ Մեծն Տիգրան մտութիւն էր մտցրել բաժանումների մէջ և միացրած ուժով իւր ժողովրդին աշխարհակալութեան ճանապարհով տարել, տիրելով շրջակայ երկիրներին և կործանելով Սելեկեան պետութիւնը: Ազգային գիտակցութիւնը նոր զարթնած և ազգային հպարտութիւնը մեծացած էր: Բայց որքան աւելի ճոխացած էր այդ հպարտութիւնն, այնքան աւելի խորը պիտի լինէր և Մեծն Տիգրանի որդու և թոռան ցաւալի վիճակի թողած տպաւորութիւնը: Թանկարժ. Մեծն Տիգրանի, արքայից արքայի այդ պետութիւնն ընկնում է: Այն էլ ի՞նչպէս: Հոյոց արքուն Արտաւազգը իւր կնոջով և օրդիներով գերի է ընկնում Անտոնիոսի ձեռք: Արքան սպանւում է. նորա որդիքը գերութեան մէջ կորած են ժողովրդի համար: Ազատւում է միայն մի արքայորդին Արտաշէս: Հայերից բերդականներ:

որոց զէն ի ձեռին կայր, պաշտանում են Արտաշէսին: Եւ նա իւր կեանքն ազատելու համար ստիպուած է պարթեաց մօտ փախչելու: Իսկ Անտոնիոսը, յանկուցեալ զոմանս կամաւ, զոմանս բռնութեամբ՝ լինել տէր համօրէն աշխահին Հայոց: Հայաստանը յարթուած է և Անտոնիոսի գլուխը հայ խոյրով պահուած: Մեծն Յիգրոնի արքայից արքայութիւնն այլ ևս չկայ: Չկար և սիրելի Արտաշէսի հին, բնիկ ցեղը, որ հարիւր յիսուած տարուց ի վեր փառքով թագաւորում էր: Բայց ահա՛ պարթեաց մօտ ապաստանած արքայորդին Արտաշէս պարթեական զօրքով և օգնութեամբ գալիս է և Մարաց զէմ կռուով յետ ստանում իւր հօր գահը՝:

Ծոր զարթնող և ազգային ինքնաճանաչութեան եկող ժողովրդի երևակայութիւնը գրգռելու համար ի՛նչ աւելի ընդունակ կարող էր լինել քան այս անցքը: Վիրաւորուած ազգային հպարտութիւնը բաւականութիւն էր ստույգած. բնիկ թագաւորի ցեղն իւր գահի վրայ էր նորից: այն էլ մի մեծ կատասարոֆից յետոյ: Իսկ կատասարոֆները, ինչպէս և մեծ յաղթական փառքերը, նոր ինքնաճանաչութեան եկող ազգի կեանքի մէջ, նորա

վիպական շրջանում— ահա՛ երևակայութիւնը
ցնցող պատմական իրողութիւնները: Եւ մեր
վիպասանքի ստուերագիծն արդէն պատրաստ
է այս Արտաշէսի պատմութիւնից: Եւ քննէ
մեր վիպասանքի առաջին մասի բովանդակու-
թիւնը, եթէ ոչ այս Արտաւազդեան Արտա-
շէսի պատմութիւնն ամբողջապէս:

Հայոց թագաւորը (Սանատրուկ) սպանե-
ւում է. կինն ու որդիքը ոչնչանում են. իշ-
խում է օտար ցեղի թագաւոր (Ծրուանդ),
որ հռոմայեցոց բարեկամ է. Հայոց թագա-
ւորական անից ազատւում է հաւատարիմնե-
րի ձեռով Արտաշէս արքայորդին միայն, որ
փախչում է պարթեւաց մօտ. պարթեւաց թա-
գաւորը զօրքով օգնում է նորան և նա գա-
լիս է իւր հօր կորած գահը ձեռք բերում:
Նա բողոքում չարչարում է Մարաց արքը (Բ-
կա): Նա բարեկամ է պարթեւներին. արհա-
մարհում է հռոմայեցիներին, բայց երբ
սոքա զօրքով գալիս են նորա վրայ, հարկա-
տու զառնալով հնազանդում է նոցա: Ահա՛
վիպական Արաաշէսի պատմութիւնը, բայց
ահա՛ և Արտաւազդեան Արտաշէսի իսկական
պատմութիւնը¹: Աւելացրէք վրան և Արտա-

1. Արտաշէս Արտաւազդեանը նոյնպէս պարթեւների
բարեկամ է և թշնամի հռոմայեցիներին, բայց Օգոստոս

շատու շինուածի հին զրոյցն ու երգը, որ Արտաշէս Ա. ի անունով պատմուած կամ երգուած էր սրգէն, և մինք կուենանք վիպասանքի առաջին մասն ամբողջ, մինչև ԽԾ. գլուխը: Երկու տարբեր Արտաշէսների մասին երգուածներն ու պատմուածները ժողովրդի մէջ մի մարդու վրայ պատմուած, մի Արտաշէսի անունով:

Տրդատ Ա. եւ վիպասանքի զարգացումն:
— Այս երկու Արտաշէսների երգն ու զրոյցը կարող էր շատ շուտով մի ուրիշ համանուն թագաւորից ևս, հայերին սիրելի Արտաշէս Գ. ից (18—34 [Թ.] զծեր վերջնել և վիպոյնիչ իւր մեջ¹: Բայց այդ Արտաշէսեան վկայը նս-

կայսեր Հայաստանի սահմանը հասնելու ժամանակ՝ ստպում եր անաչելու նորա ազնոյնքինը:

4. Յայնի է Գրիգոր Մագիստրոսի իւր նամակներից մեկում թերած հասումը, զի գուհիկս աւանդեալ, որ Պարթե Արաշէսն աւուժ է զի վսիմանելն իւրուժ. ըն՝ օայր ինձ զճուի ծխանի, եւ զառաւօթն ճաշասարցի, ձկնացին եղանց եւ զվոզգէն երթուաց. Միք վոզ կարուալ եւ շիկի հարկանեալ, իրպէս օրեն է յագառուաց: Պարթե՛ս կոչուան Արաշէսի համար, երէ ազգի անուն է ցոյց օայիս, Մագիստրոսի իրեն աւելացրածն է. իսկ նորա թերած հասումը հին վիպասանքի մնացորդ պէտք է համարել: Դժբախտաբար Մագիստրոսն աւանդութիւնն ամբողջ չէ թերուժ: 9. Խաչատրեան (եր. 312) այս հասումը յարմար է գտնուժ, եւ իրաւամբ, Արաշէս

բողոք ու կերպարանափոխող տարրեր ընդու-
նել է շատ մտախի ժամանակում կատարուած
այլ նշանաւոր դէպքերից ևս: Միհրդատ
(35—37 թ. և 41—45 թ.), Հրազամիզ
(45—53 թ.) և Տրդատ Ա. թագաւորների
անցքերից: Ի թիւս այլ պատճառների իրեն-
հանգոյց ծագայել է պատմական դէպքե-
րի նմանութիւնը Արտաշիսեան վէպի հետ:
Հայոց թագաւորը՝ Միհրդատ, նոյնպէս սպա-
նուռում է իւր կնոջ և որդիների հետ. իշ-
խում է գտար ու բռնակալ Հրազամիզը. և
Տրդատ Ա. պարթև, մտնում է Հայաս-
տան պարթևական զօրքերով (53 թ.), ժո-
ղովուրդը սիրով ընդունում է նորան, և նա
երկար կռիւներ մղելով նախ Հրազամիզի և
այս հռոմայեցոց դէմ՝ վերջիվերջոյ թագա-
ւորում է փառքով, հաշտուելով և ենթար-
կուելով հռոմայեցոց:

Ինչպէրի համանմանութիւնը մեծ է, և
ժողովուրդն իւր Արտաշիսեան վէպի վրայ
պիտի աւելացնէր և աւելացրել է տարրեր
այս նոր կատարուած դէպքերից:

Գ-իմ (18—35), «որ յայտնի է, ըստ Տակիտոսի, իւր
որսն էլ խնչոյքների սիրով, նոյնպէս և ազգային
սովորութիւններն հաւատարիմ մնալով, որով և ժողո-
վորդն սեռն իր գրաւած»:

Վիպասանքի մէջ Արտաշէս հիմնուժ
Արտաշատ: Տրգաստ Ա.-ի օրով, որ պարթե-
ւական ցեղի առաջին մեծ ու փառաւոր
թագաւորն է, Արտաշատը հիմնովին կործա-
նուում է նորից շինւում է Հռոմից բերել
տուած ճարտարապետների ձեռով: Այդպիսի
դէպքում ժողովրդի ոգևորութիւնը մեծ պիտի
լինէր, և Արտաշատի հիմնուելու հին երգք,
ինչպէս լինում է սովորաբար, աւելի ևս մեծ
ուժով կարող էր կենդանանալ և հին թագաւո-
րի գովեստը նոր թագաւորի համար երգուել
նորի համար և սպասելով սիրելի ու ժողո-
վրդական Արտաշէս անունը: Արտաշատ քա-
ղաքի շինութիւնն ու բեմն, որ երգուում էր
վիպասանքի մէջ Արտաշէսի անունով, և Տրգա-
տի միւս գործերի նմանութիւնը վիպասան-
քի ուրիշ միջադէպերին՝ եղել են վիպական
խմորման կեդրոն: Եւ այնուհետև Արտաշատի
մասին երգն և վիպասանքի առաջին մասը իբրև
թթխմոր իրենց են քաշել և Տրգատ Ա.-ի միւս
արարքների գովեստն ու պատմութիւնը: Ալան-
ների դէմ կռիւն ու նոցա հետ խնամութիւնը,
և Դոմեաթոս Կորբուլոնի գալուստը Հայաստան,
և շատ կենցաղական գծեր, և վերջապէս, ինչ-
պէս յետոյ կրտսաններ, բուն միթական բնա-
ւորութիւն ունեցող առասպելներ:

Այսպէս են հետզհետէ կազմուել վիպա-

անք, և այսպէս միայն կարելի է բացատրել թէ ինչպէս Տրդատ Ա.-ի ժամանակի պատմական գէպքերի յիշողութիւնը կապուած է Արտաշէս անուան հետ: Այսպէս և վիպասանքի գլխաւոր հերոսն Արտաշէս՝ է Արտաշէս Ա., Արտաշէս Բ. (և Արտաշէս Գ.) և Տրդատ Ա.:

2.

Առասպելական ճառ:

Վիշապազունք եւ վիշապը: — Մարք, գարմք Աժդահակայ, Մուրացան նախարարք և վիշապազունք—ի՛նչ կապ այս անունների մէջ: Արդեօք վիպասանքի մէջ այդ անուններն իբրև համանիշ և անխտիր գործածուած են, թէ չէ: Այդ որոշելը դժուար չէ, երբ մի անգամ արդէն գիտենք թէ ինչպէս Խորենացին առասպելն այլաբանութիւն համարելով մեկնում է, մանաւանդ որ պատմագիրն էլ ցոլորաբար յայտնում է թէ ո՛րն է իւր մեկնութիւնը:

1. Խորենացին գրում է (Ա. Ը.). «... Թուելեացն երգք:... յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորա, յիշելով այլաբանաբար և զգարմիցն Աժդահակայ վի-

շապազունս զնոսնս կոչելով զի Աժգահահոյ թ մեր լիպուս է վիշապո: Այս խոսքերից պարզ երևում է, որ երգերի մէջ գործողներին վիշապազունք անունն է տրւում: և թէ ինքը պատմագիրն այդ վիշապ—ազունք (=զարմք վիշապի) անունը այլաբանաբար ընդունելով համարում է: զարմք Աժգահակայ: Նորահիմքը Աժգահակ բառի վիշապ նշանակութիւնն է: Խորենացին, ուրեմն, կարծում է վիպասանքի մէջ «վիշապազունք» կոչումը «Աժգահակայ զարմք» կոչումի հայացրած ձևն է միայն:

2. Վիպասանաց բովանդակութեան մէջ (Բ. խթ.) յիշում է: «Եւ իբր տրիսնք Սաթիսկան ընդ վիշապազունսն՝ առասպելաբար, այսինքն ընդ զարմն Աժգահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտսն Մասեացոց Պատմագիրն այսանդ էլ շատ որոշ գրում է թէ իբրև առասպել (առասպելաբար) պատմում է վիպասանքի մէջ թէ Սաթենիկ վիշապազունք է սիրել: Բայց նա ինքը, ինչպէս բացատրական լայսինքն, բնաբ ցոյց է ասլխտ վիշապազունք դարձնում է զզարմք Աժգահակայ: Սաթենիկի այդ տրիսնքը կամ սէրը Ա: Լ գրած է Արգաւանի համար: Ուստի և Արգաւանը ներկայանում է իբրև վիշապազունք:

3. Թէ Արգաւանն վիշապազն կամ վիշապ է՝

հաստատուում է նոյն տեղում բերած կտորից-
«Մաշ առեն գործել Արգաւանայ ի պատիւ Ար-
տաշխի և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին
վիշապաց» Եոյն պատմութիւնը Բ. Ճա. զգար-
դարեալ» պատմութեան մէջ գրուած է այսպէս:
«Երթալով Արտաշխի ի մաշ Արգամայ, կտակած
իմն անկեալ, իրր թէ դաւել զարքայն խոր-
հեցան, յարուցանեն սրգիքն արքայի ապշոպ
և անդէն իսկ ի հացին քարշեն զալխն Ար-
գամայ: Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱր-
տաշատ Արաաշէս արքայ, դարձեալ արձա-
կեաց զսրգի իւր Մաժան մեծաւ զնդաւ, և
զբազումս յազգէն Մուրացան սպանեանել և
զապարանան Արգամայ այրել ...»: Կընշանակէ
Արգաւանն Արտաշէսին ճաշի է հրախրում
Արտաշատից դուրս իւր կալուածումս ուր
կարծուած են թէ խարդաւանակ է լինում
նորան: Եթէ Արգաւանի այդ տաճարը կամ
ապարանքը, ուր ճաշն ու խարդաւանքն է
լինում, հոչուում է տաճար վիշապաց», ուս-
տի և ինքը Արգաւանն իրրև վիշապ է ներ-
կայանում:

4. Վիշապազունք զարմք Աժդահակայ
համարելուց յետոյ, պատմագիրը բերում է
Արգաւանի այս ճաշը, Արտաւազգի շինելն
«ի մէջ Մարաց զՄարակերս» և Սաթենիկի
սէրն առ Արգաւան և ապա իսկոյն աւելաց-

նում է. ՄԸ արդ ոչ առաւել աստանօր զարմացիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յսզատն ի վեր ի Մասիս: Պատմագիրն ուրեմն ասում է, որ այս պատմութիւններն իսկապէս են անյայտ իրք վիշապաց: Եւ բնաւ չէ թաքցնում այդ, այլ նոյն իսկ հրաւիրում է զարմանալու իւր գրածի վրայ: Բայց ինչո՞ւ համար պէտք է զարմանալ: Անոր համար, որ նա թուելեաց երգերի կցկոուր բովանդակութիւնն է մէջ բերել, այն էլ մեծ մասամբ երգի բառերով: Ի հարկէ ոչ, Դամի զարմանալու բան չէ: Այլ պէտք է զարմանալ նորա սրամտութեան վրայ, որ կարողացել է «յայտնել զանյայտ իրս վիշապաց»,¹ այսինքն անհասկանալի առասպելը մեկնել և հասկանալի կամ «ճշմարտապատմութիւն» դարձնել: Եւ ի՞նչ է այդ մեկնութիւնը, եթէ ոչ երգի մէջ յիշուած առասպելական վիշապազունքը կամ վիշապք դարձնել զարմը Աժդահակայ, այսինքն Մարը:

Այս հատուածից իմանում ենք և այն, որ երգի մէջ վիշապազունք և վիշապք իբրև

1. Հմեռ. Ա. գրի Բ. յաւելուած, Բիւրասպի առասպելի մեկնութիւնը. «... միտս անմտութեան նոցա տալով, եւ զկարի վաղուց նոցա իրս եւ նոցա անհասկանալիս աւասիկ յայտնեմ»:

համանիշ են գործ ածուած, որովհետեւ նախ ասում է թէ երգը վիշապազանց մափն է յիշում և քիչ յետոյ այդ վիշապազանց պատմութիւնը «իրք վիշապաց» է անուանում Այսպէս այստեղ ևս ինչպէս վերևում տեսանք, Արդաւանը թէ՛ վիշապ և թէ՛ վիշապազն է:

5. Թէ երգի մէջ վիշապազունք են յիշուել եւ ոչ թէ Մաթթ կամ զարմք Աժդահակայ՝ դարձեալ երևում է Բ. կա. զլիւից, ուր երգիչներն ասում են թէ «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և դե փոխանակ եգին», որ և «ոմանք», պատմելով այդ «պատասխարը» մեկնել են թէ այդ նշանակում է «կախարչել զսա (Արտաւազդին) կանանց զարմիցն Աժդահակայ»: (Հմմտ. Գլ. գ. եր. 83):

Այստեղից և այն ենք իմանում, որ մեր պատմագիրն իրենից չէ անում այդ մեկնութիւնը, թէ վիշապազունք են զարմք Աժդահակայ կամ մարք: Այլ այդ ծանօթ է նաև ուրիշներին՝ որոնցից առնում է ինքն այդ «պատասխարի» պատմութիւնը:

Խորքնացու մեկնութիւնը:— Տեսնենք թէ ինչ եզանակով դատելով պատմագիրը կամ նոքա՝ որոնցից նա առնում է, այդ վիշապները կամ վիշապազունք նոյնացնում են Մուրացանների հետ:

Վիշապները կամ վիշապագուները առասպելական էակներ լինելով՝ անհաստատալի բաներ են: Ռաջլիննալիստ պատմագիրը, որ նոյնիսկ աստուածներն իրրև մարդ եղած է մեկնում, կարող չէ հաւատալ, որ Սաթենիկ Թագուհին մի վիշապ կամ վիշապագուներ սիրած լինի, և կամ Արտաշէս Թագաւորը նոցա հետ յարարելութիւն ունեցած լինի: Բայց մի անգամ որ նոքա Արտաշէսի պատմութեան մէջ մտնում են, պէտք է ըստ Ծորենացու հայեացքին առասպելի վրայ՝ այլաբանաբար առասպել համարել այդ և մեկնելով Աշմարտել¹: Եւ այդ անում է շատ հեշտ կերպով. «որովհետեւ Ածղահայկ մեր լեզուով վիշապ է», ուստի և երգի վիշապագուներ են զարմը Ածղահայկայ: Իսկ Ածղահայկն էր մարտի Թագաւորը², ուստի և վիշապագուներ են ոչ միայն Ածղահայկայ զարմը, այլ և մարք, որ բնակում են Հայաստանում:

Միւս կողմից, պատմագիրը (Բ. ք) Մուրացան նախարարութեան համար գիտէ. «Ռչասեն՝ նահապետի ազգին՝ Մուրացան անը այլ մտրացւոցն տէր»: Այստեղից կարեւորնում

1. «Բայց յիշատակեցո՞ւք եւ մի կարճաճոսիք, եւ զայլ արամն Երիւնկ անճարտեցո՞ւք», (Բ. Խք):

2. Այս մասին յետոյ եւս, Տիգրանի և Ածղահայկ մասին գրելու, խօսք կ'ունենանք:

է նա Մուրացանների մարացի լինելը: Եւ երբ միանգամ նոքա մարացիք են, մարական ծագում ունին, անշուշտ հասարակ ծագում պիտի չունենային: այլ մի իշխանից կամ թագաւորից սերուած, ինչպէ՞ն շատ նախարարական տներ: Եւ ունից յատկապէս, եթէ ոչ «ի զաւակէ Աժդահակայ մարաց եղելոյ թագաւորի» (Բ. Ը): որի սերունդները բերուած են Հայաստան:

Այսպէս մի կողմից վիպասանքի մէջ յիշուած վիշապք կամ վիշապազունք նոյն են՝ ինչ որ զարմք Աժդահակայ կամ մարք. իսկ միւս կողմից Մուրացանք կամ մարացւոցն տեսրք ունին մարական ծագում և են մարաց Աժդահակ թագաւորի սերնդից: Ուստի բանավարութիւնը հեշտութեամբ պիտի տաներ այն եզրակացութեան: Թէ Մուրացանք են վիշապազունք:

Պատմագիրն իւր այս եզրակացութեան համար իբրև հաստատութիւն գտնում է նոցա բնակութեան տեղի նոյնութիւնը կամ մտախիութիւնը: Եւ Ա. Ը. յայտնում է, որ ըստ թուելեաց երգերի վիշապները, նոյն և վիշապազունք, ընակում են յազատն ի վեր ի Մասիս: Իսկ Բ. խթ. յայտնում է, որ զարմք Աժդահակայ (= Մարք = վիշապազունք՝ առասպելաբար) «ունին զամենայն զառ ստո-

ըտտովն Մասնաց: Իսկ յայանի է, որ Մարք
իրօք գտնուում են Մասիսի արևելեան ստո-
րոաներում մինչև Գողթն: Եղյն վկայութիւ-
նը գտնուում ենք և Փաւստոս Բիւզանդի ու
Կորիւնի մէջ և ուրիշ տեղերում: Ինչպէս և
Խորենացին ինքը Աժդահակայ սերունդն ու
նորա կնոջ հետ գերուած մարերին բնակել է
ապիս «յարևելեայ ուսոց մեծի լերինն» [Մա-
սեաց] մինչև ի սահմանս Գողթանն ... Իսկ ի
միւս կողմանէ գետոյն զբոլոր դաշտն, որոյ
գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն ա-
մուրն Նախճաւանոյ: ... Իսկ Բ. ծա. գլխի մէջ
այդ կողմերը գնում է կալուած Մուրացան-
ների և յատկապէս Մուրացան Արզամի, «որ
ի ծննդոցն Աժդահակայ» (Բ. խդ), և յիշում
է Նախճաւան և «ըստ հիւսիսոյ Ծրասիայ»,
որ, ինչպէս յետոյ կրտեսնենք, Մասիսի գի-
մացն է հասկանում: Եարուբայ դաշտը:

Այսպէս մի կողմից, առասպելի մէջ վի-
շապների կամ վիշապազանց բնակութեան
տեղերը կապուած են Մասիսի հետ, իսկ միւս
կողմից մարաց (կամ Աժդահակայ զարմի ըստ
Խորենացու) բնակութեան տեղերը, նոյն և
Մարացուց տէրերի՝ Մուրացաններինը, նոյն
Մասիսի ստորոտներում են, որով և պատ-
մադիրը հաստատած է համարում իւր բա-
ցատրութիւնները:

Այսպիսի մեկնութեամբ լոկ առասպելի վիշապները նոյնանում են մարաց (Աժդահակայ սերնդի) և մուրացանների հետ: Եւ Մորենացին, իւր ժամանակի հասկացողութեամբ պարծենալու տեղիք ունէր, թէ ինչպէս ինքը յայտնել է «զանյայտ իրս վիշապաց օրք են յազաան ի վեր ի Մասիս»: Բայց մեզ համար այս բոլոր մեկնութիւնները, հարկաւ, նշանակութիւն չունին: Եւ մեր առաջին խնդիրը պէտք է լինի, այդ ամենն իմանալուց յետոյ՝ դուրս ձգելով ինչ որ Մորենացու մեկնութիւնն է, վերականգնել բուն առասպելը:

Սակայն պ. Մալաթեանն, այդ պարզ ճանապարհը թողած, աճապարում է հեշտութեամբ ցոյց տալ թէ վիպասանք Մորենացու սարքածն է: Արգամի և Արտաւազդի թշնամութեան պատճառը համարելով Արտաւազդի նախանձը թագաւորի երկրորդութեան պատուի համար՝ որ ունէր Արգամ, նա խնդիրը բոլորովին սխալ է դնում (եր. 251): «Ամբողջ խնդիրն այն է թէ այդեօք Հայաստանում երբ և է կա՞ր մարացի Աժդահակից սերուած Մուրացան նախորարութիւն, որ կոչուէր Մարացի և Ա. դարում Բրիտանոսից յետոյ այնքան աչքի ընկնող տեղայսինքն թագաւորի երկրորդութիւնը, ունենար այս աշխարհի քաղաքական իշխանու-

Թիւնների (ieparchia) մէջ: Եւ նա թուելով
մի քանի առարկութիւններ, որոնց մի մասը
առարկութիւն անգամ չեն, շապում է եզ-
րակացնելու (եր. 262). «Այնքան հին ժա-
մանակներում Մուրացան նախարարութեան
գոյութիւնը Հայաստանում ինչպէս և նորան
վերագրած առաջնակարգ գերը տէրութեան
մէջ, աւելի քան կասկածելի են: Եթէ այդ
եզրակացութիւնն անհիմն չէ, այն ժամանակ
առիթ էլ չէր կարող լինել (sic!), որ արքա-
յազն Արտաւազը կռուէր ընդդէմ Մուրա-
ցան իշխան Արգամի՝ «Թագաւորի երկրորդ
պատուաւոր կոչումը ձեռք բերելու համար.
ուստի և պէտք է շինծու (Ֆիկտիւ) համարել
այս կռուի յայնարանական պատկերացումը՝
Սպիտակի Թագուհու առ Արգամ ունեցած
տարփազին սիրոց իբր ժողովրդական վէպից
առած վիպական (առճանական) մտերուութիւն:

Անդունենք, որ պ. Խալաթեանի եզրա-
կացութիւնը ճիշտ է. որ առաջին ցարում
Ք. յ. Մուրացան նախարարութիւնը գոյու-
թիւն չունէր: Բայց այդ քիչ կապ ունի մի
վէպի հետ, որի մէջ ոչ թէ Մուրացաններ են
գուրս գալիս, այլ վիշապներ և վիշապազուներ:
Սակայն մի բոլոր ընդունենք, որ ոչ թէ Խա-
լաթեանցու մեկնութեամբ, այլ նոյն խոյ վիպա-
սանքի մէջ վիշապազուներ են ցարմը Աժգաւ:

հակացում Մաքրում Մարացւոցն տեսքում Մու-
բացանք¹։ Բայց վիժէ Մուբացսնների գոյու-
թիւն շունենալն առաջին դարում Ըօ յի կար-
քոյ է ապացոյց վիճել, որ Սպրենացու ժամա-
նակի (Է—Թ դար) ըստ պ. Սալաթեանիս երբ
կային Մուբացանները և շատ լաւ յայտնի
էին) ժողովրդական վէպի մէջ Մուբացան ա-
նունը յիշուած չիին և կապուած մի Ար-
տաշէս Թողաւորի անունն հետ։ Մի՞թէ այդ
անպարտեղիքը կորելի է իբրև փաստ ծառա-
յացնել վէպի գոյութիւնը հերքելու համար։
«Վէպերից (ՅԱՆՈՒՅ) ոչ մէկի հիմնական
իմաստի մասին, դուռ է Բուպայե, պարզ
գաղափար կազմել չէ կարող նա, որ ամենայն
պարզութեամբ չէ իւրացրել այն միտքը թէ
ժողովրդական վէպը դարերի ընթացքում
ապրելով տերունդների բերանին, հասնում է
մեզ չցուած աննախապիտ եւ օտարտաղի ի-
րար նախաւոր անարժանի գնահատման։ Իւրաքան-
չիւր սերունդ, որ իւր նախորդներից ստա-
նում է վիպական աւանդութիւնը, անտր մէջ
մտնում է իւր ժամանակի ակնարկներ (ՈՒ-
ՄԱՅԻ), երբեմն և անբազմ միջագետերու։ Մի
ուրիշ տեղ նոյն հեղինակը գրում է. «Ժողո-

1. Մենք յետոյ կրօնակներ, խկապս Մարտ են
կոչել փառաւոր, որ Մրոսշտի պատմական երգերին կցուել
է միշտպների առասպելը։

վրրդական վէպը երբեմն միենոյն անձի մէջ խառնուած է զանազան ժամանակների և զանազան բնոււորութեան դժեր, և՛ մի աստուծու, և՛ ս. Գրքի կամ որեէ սրբի, և՛ որեէ տիտանի, և պատմական անձի, այն էլ որոշ տեղական պարագայի մէջ:

Այսպէս և մեր վիպասանքի մէջ Արտաշէս թագաւորի պատմութեանը կապուած են ոչ միայն զանազան ժամանակների և տնձերի բուն պատմական և կենցաղական դժեր, այլ և բուն առասպելական հատուածներ: Մէկ՝ Արտաւազդի կռիւը Ազատ Մասիսի վիշապների կամ վիշապազանց հետ, մէկ էլ վիշապ Արտաւազդի փակուելը Ազատ Մասիսում:

Որոշներ այդ առասպելական մասերը նախ ինչ որ վերաբերում է վիշապներին և վիշապազանց, և ապա Արտաւազդի առասպելը:

Վիշապազանց առասպելը:—Ծրկու տեղ (Ա. Լ. Բ. խթ.) առասպելի համառօտ բովանդակութիւնն է բերում պատմողիրը, իսկ մի տեղ (Բ. ծա.) պատմում է «Ճշմարտելով» այսինքն առասպելականին տալով պատմական կերպարանք: Այդ երեք հատուածն իրարու համեմատելով կըստանանք մօտաւորապէս բուն առասպելի բովանդակութիւնը, ընդ ամենը չորս միջադէպ:

ա. Թոռ-էլէայ երգեր. (Ա. Ը):

1. Յազատն ի վեր ի Մասիս բնակող վիշապ կամ վիշապազն Արգաւանն վիշապների տաճարում ճաշ է տալիս ի պատիւ Արտաշէսի և խարդաւանակ լինում նորան:

2 Արտաշէսի քաջ որդին Արտաւազգ՝ ի հիմնանալն Արտաշատու ապարանքի տեղ չգտնելով՝ փնցնում գնում, շինում է ի մէջ Մարաց (= Վիշապաց, վիշապազանց ?) զՄարակերտ:

3 Սաթենիկ տիկնոջ տենչանքը կամ սէրն առ Արգաւան վիշապը կամ վիշապազն:

Բ. Վիպասան+ (Բ. ԻԼ.)

Այստեղ բաց ենք թողնում սկզբում դրած պատմականն ու կենցաղականը ¹ և

¹ Եփեսոնէ, որ, պատմագիրն առանձին կարեւորութիւն չէ տալիս նիւթերն ըստ ժողովրդականին դասաւորելուն: Գոյի վերնագիրը դրած շիկելով «վասն շինուածոյ Արտաշատ քաղաքի», քնակակօրէն աննկից առայ դրած է «շինել զսաղաթն», եւ ապա «իւսանուիրիւն ընդ Ալանի եւ ծնունդ զարմիցն»: Միևիդեռ քուրջնաց երգերի մէջ, ուր երգերի խօսքերով է գրուել, ի հիմնական յն Արտաշատու Արտաւազգ աշդեն յարիանա Ի: Սակայն «հիմնական» բառը հասկացուել է ոչ այնքան «հիմնել», որքան «շինուելու», շինիք դառնալ, լցուել»: Այն ժամանակ «ի հիմնական Արտաշատու» կը հասկացուի. «Արտաշատը որ շինացաւ, շինիք դառնալ» Արտաւազգն ապարանքի տեղ լցուաւ...: Այս դեպքում վիպասանքի եւ քուրջնաց երգերի

առնում ենք միայն, ինչ որ վիշապներին կամ վիշապազանց է վերաբերում: Նկատենք նաև, որ չեն յիշուած թուելեաց երգերի 1. և 2. միջադէպերը. այլ պատմականից ու կենցազականից յետոյ յիշուած է անմիջապէս 3-րդ միջադէպը և մի չորրորդ միջադէպ ևս աւելանում է:

3. (Իբր) արփանք Սաթինկան ընդ վիշապազունսն:

4. Մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն և հերկիզութիւն շինուածոցն:

Գ. Ծշմարտեալ պտորմանին (Բ. Ժ. 3):

Այսանդ տեսնում ենք, որ 4-րդ միջադէպում յիշուած մարտը Արտաւազին է անում: Պատմագիրը իւր «Ճշմարտեալ» պատմութիւնն անելուց յետոյ աւելացնում է. «Այս Արգամ է որ յառասպելին Արգաւանն անուանի և այս պատճառ պատերազմին ընդ Արտաւազըս»: Թորենացու լեզուն և մեկնութեան եզանակը (տես գլ. Գ.) հասկացողը կը տեսնէ, որ այս գլխի մէջ մինչդեռ Արգամ անունն եւ պատերազմի պատճառն իրեն պատմագրինն են, Արգաւան անունը և պատերազմ

պատմական եւ կենցաղական միջադէպերի դասաւորութիւններն իրար չեն հակասում այլ եւս: Եւ այս անչի հաւանական ենք համարում:

քնդ Արտաւազդայ՝ առաւապելիինն են: Ետրե-
նացու մեկնութեամբ միայն այդ երկու տար-
բեր անձերը նոյնացել են: Եւ ի՞նչ է Արտա-

1. Քանի որ վիպասանքի միտքն Արտաշէ Արտաւազ-
դեանի պատմութիւնից կ'առնուած, բուն պատմական իրո-
ղութեան յիշողութիւն կ'Երուանդի բարեկամանաչը մտաց
հետ եւ մտացոց սեր Արգամին բարձրացնելը (Բ. խդ):
Բուն պատմական իրողութեան յիշողութիւն կ'եւ Արտաշէի
քշեմանութիւնը մտաց հետ: Արտաւազդեան Արտաշէսը
կուտ կ'մտաց հետ, իսկ Խորենացի իւր Արտաշէսի հա-
մար գրուած կ'թէ շատ չարչարել կ'Ածդահակի գաղտնիքին,
այսինքն մտաց ազգը (Բ. կս): Սակայն որ Արգամը պա-
տերազմի ժամանակ Արտաշէսի կողմն անցած շինի եւ Ար-
տաշէսը նորան բարձրացրած (Բ. խգ. խե), այդ հակասուած
կ'պատմութեանը: Այս հակասութիւնը հասկանալի թէ
ի՞նչ կ'առաջացել: Մի անգամ որ մեր պատմագիրը,
նոյն իսկ իրեն վկայութեամբ, մտացոց սեր Արգամին
նոյնացնուած կ'վիշապ Արգամի հետ եւ իրենից իրեն
պատերազմի պատճառ դնուած կ'Արտաւազդի նախանձն Ար-
գամին՝ երկրորդութեան պատուի համար, անհրաժեշտ էր,
որ պատմութեան առաջի մասի մէջ Արգամն Արտաշէսից
ստացած շինէր երկրորդական գահը, որ յետոյ հնաւաւոր
շինէր ասել թէ պատերազմի պատճառը նախանձն է: Ար-
գամի անցնելն Արտաշէսի կողմը եւ նորա ստացած
պատիւները անհրաժեշտաբար Խորենացու սւելչացրած-
ներն են: Եթէ այդ դուրս ձգուի, այն ժամանակ կրնայ
այն, որ Երուանդ բարեկամ կ'մտաց եւ մեծացնուած կ'
մտացոց սեր Արգամին, —մի պատմական յիշողութիւն.
Իսկ Արտաշէս շատ չարչարուած կ'մտաց ազգը, — դարձեալ
մի պատմական յիշողութիւն:

ւազգի և Արգաւանի թշնամութեան և պատերազմի պատճառն ըստ Խորենացու: Արտաւազգը՝ անխանձ բերելով ընդ ծերունւոյն Արգամայ, հրապուրեաց զհայր իւր ցասնուչ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի: Այսպէս ընկեցեալ զնա ի պատուոյն, ինքն առնու զերկրորդութիւնն: Ապա շարունակութեան մէջ գրում է. «Իսկ Արտաւազգայ ոչ շատացեալ տունուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն» Ուրեմն այդ նախանձը երկրորդութեան համար՝ պատմագրի մեկնութիւնն է միայն, առասպելի «այլաբանութիւնը ճշմարտելու» և «ոճով» պատմելու համար մէջ բերած:

Պատմագրի աւելացածն է հաւաստեալ և վերջի կտորը. «բայց միայն աննշանաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս ապրեցան ի դրան արքունի»: Մի անգամ որ Խորենացին վիպասանքի վիշապազունք դարձրել է Մուրացանք, անհրաժեշտ պիտի լինէր այս յաւելուածը՝ Մուրացանների սերնդի գոյութիւնը շոշաւացնելու համար:

Ծկատենք և այն, որ պատմագիրն իւր «ճշմարտեալ» պատմութեան մէջ չէ բերում 3-րդ միջադէպը՝ Սաթենիկի սէրն առ Արգաւան: Անշուշտ այն պատճառով, որ չէ հաւատում թէ Սաթենիկի պէս մի տիկին կարող

էր այդ բանն անել: Եւ այս հաւաստի է այնու, որ վիպասանքի բովանդակութեան մէջ բերելիս էլ գրում է. «իւր արփանք Սաթինկան»:

Մնացածը, մի քանի մանրամասներից զատ, նոյնն է, ինչ որ թուելեաց երգերի և վիպասանքի բովանդակութեան մէջ կայ, և այն էլ միևնոյն շարքով:

1. Երթալով արքայի ի ճաշ Արգամայ, կասկած իմն անկեալ, իբր թէ դաւել զարքայն խորհեցան, յարուցանեն որդիս արփային ապշոպ, և անգէն իսկ ի հացին փառէն զայիսն Արգամայ: Եւ խռովութեամբ մեծաւ եկեալ յԱրտաշատ Արտաշէտ արքայ

Ընդգծածները չկան վիպասանքի բովանդակութեան մէջ. կարող են և վէպից առնուած լինել, և Մորենացու աւելացրածը լինել: Վերջին նախադասութիւնը շատ բնական հեռեանք է խորդաւանքի, ուստի և կարող է վիպասանքից առնուած լինել:

2. ա) Պարձեալ արձակեաց զորդի իւր զՄաման մեծաւ զգնդաւ, և բազումս յազգէն Մուրացան սպանանել հրամայեաց, և զուպարանն Արգամայ պրել, և զհարձ նորին, որ կարի չքնաղ էր գեզով և մնացեալ գնացիւք ուից, զոր կոչէին Մանդու ածել ի հարձութիւն Արտաշիսի. Զոր զարձեալ նուաճեալ յեա երկուց ամաց, ի բաց աւլ հրամայէ զինչսն բայց ի հարձէն.

բ) Իսկ Արտաւազգ հանէ ¹ զնախճաւան
և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գեւղս, յօ-
րում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր
ի ժառանգութիւնս:

Այս 2-րդ միջադէպի ա, մասը, որով
Արտաշէսը Մաժանի ձեռով՝ կուում է Ար-
գաւանի հետ և երկու տարուց յետոյ հաշտ-
ուում է, չկայ բովանդակութեան մէջ: Ըու-
թիւնը կարող է վիպական լինել: Իսկ ը, մա-
սը նոյն է ինչ որ թուելիաց երգերի 2-րդ
միջադէպը. «Արտաւազգ . . . շինեաց ի մէջ Մա-
րաց զՄարակերտ, որ է ի դաշտին՝ որ ան-
ուանեալ կոչի Շարուրայ»: Շարուրի դաշտն
է «ըստ հիւսիսոյ Երասխայ»:

3. Սաթենիկ տիկնոջ տրփանքը չկայ:

4. Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոյն Ար-
գամայ, ընդդիմանայ նմա պատերազմաւ. բայց յազ-
թեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնուն-
գըս Արգամայ հանդերձ հարբն, և որք միանգամ
երևելիք յազգէ Մուրացան. և գրուէ յինքն զշէնս
և զամենայն իշխանութիւնս նոցա: Եւ ոչ գբ ապ-
րեաց ի նոցանէ:

Արգամի որդին է միայն իբրև նորութիւն
մէջ մտնում, երևի այն պատճառով, որ Ար-
գաւան վիշապը Մուրացան նախարար Արգամ

1, Երկրորդութեան պատիւն իբրև մեկնութիւն դուրս
ենք ձգում:

դարձած, այն էլ Ծրուանդի ժամանակից, շատ ծերացած էր, և «Ճշմարտեալ» պատմութեան մէջ անհաւաստի կըլինէր, որ նա կռուէր Արտաւազդի դէմ:— Բովանդակութեան մէջ յիշած «հրկիզութիւն շինուածօցն» կամ բաց է թողած, կամ թէ 2-րդ միջադէպի ա, հատուածի մէջ մտցրած «զապարանն Արգամայ այրել»:

Միացնելով այս ամենը, իբրև վիշապազանց առասպելի բովանդակութիւն կըստանանք հետևեալը: «Ճշմարտեալ» կամ «զարդարեալ» պատմութիւնից առած կտորները փակագծի մէջ ենք ղնուած:

1. Յազան ի վեր ի Մասիս բնակում են վիշապներ կամ վիշապազունք, որոնց մասին «անյայտ իրք» են պատմուում: Նորա ունին «տաճար վիշապաց»: Այդ վիշապներից մէկն (և զլխաւորն ու հայրն) է Արգաւանը:

Վիշապ Արգաւանը հայոց թագաւորին (և նորա որդիներին) իւր մօտ ճաշի է հրաւիրում: Արտաշէս թագաւորը գնում է ի պատիւ իւր՝ վիշապաց տաճարում տրուած ճաշին: Արգաւանն ուզում է ճաշի ժամանակ խարդաւանակ լինել կամ գաւել թագաւորին: (Սա զայրացած վերագառնալով Արտաշատ՝ իւր Մաժան որդուն ուզարկում է զօրքով կռուելու վիշապների դէմ և դոցա կոտորելու: Բայց երկու տարուց յետոյ հանգիստ է թողնում նոցա):

2. Արտաշէսի քաջ որդին Արտաւազգ, Արտա-

չառ քաղաքը շէնացած, շէնլիք դարձած լինելով՝ այնտեղ իրեն համար ապարանքի տեղ չէ գտնում։ Նա գնում է վիշապների մէջ մտնում։ Խլում է նոցանից նոցա կալուածները, (Երասխի հիւսիսա-յին կողմում նոցա բոլոր գիւղերն, ապարանքնե-րով կամ տաճարներով ու բերդերով միասին, բոլորն իրեն է սեպհականում)։ Շինում է (չէն է պահում։ շէնացնում ?) «ի մէջ Մարաց» զՄարակերտ (Շարուրի դաշտում) և այնտեղ բնակում։

3. Արտաւազդի մայրը, Սաթենիկ տիկին արք-փանք է ունենում ընդ վիշապազունս կամ անն-չանք ու սէր առ Արգաւան վիշապը։

4. Վիշապները չեն ուզում տանել Արտա-ւազդի արարքները և կուում են Արտաւազդի հետ։ Բայց նոցա իշխանութիւնը քայքայւում է, որովհե-տե Արտաւազդ յաղթում է նոցա, կոտորում է ամենքին, Արգաւանի բոլոր ծնունդն ու իրեն Արգա-ւանին սպանում է, շինուածներն այրում է և իւր ձեռը ձգում նոցա բոլոր գիւղերն ու իշխանու-թիւնը։ —

Այս է ամենը, ինչ որ վիշապազանց կամ վիշապների առասպելին է վերաբերում։ Եւ այս պատմութիւնը Խորենացին, նայն իսկ պատմողներից առնելով իւր մեկնութիւնը, փոխում է Մարաց և Մուրացանների վրայ, և վիշապ Արգաւանը դարձնում է Մարացուոց տէր Արգամ։

Մի կողմ թողնելով պ. Խալաթեանի ըստ ամենայնի թոյլ կարծիքների քննադատու-թիւնը, մենք կրփորձենք հասկանալ այս ա-

աասպելը: համեմատելով մեր և ուրիշ ազգերի կենդանի առասպելների հետ:

Սեւ լեռան կամ Մասիսի վիշապները:—
Թէ ինչ են վիշապները և ինչն են պատմում նոցա մասին: մենք այդ գիտենք (Հմմտ. գլ. Դ.): Հայոց լեռներից շատերի համար ցարդ առասպելաբանում է ժողովուրդը թէ օձեր կամ վիշապներ են կենում անոնց մէջ: Նոքա բնակում են քարայրերում: ուր և ունին իրենց ապարսնքները կամ տաճարները¹. ունին իրենց թագաւորներն ու թագուհիները: զօրքն ու զօրավարը: և իրար դէմ կռիւներ են մղում բոլորովին նման մարդկային կեանքին ու թագաւորութեան: Այդ վիշապներն իսկապէս մարդիկ են: միայն «օձեղէն շապկով» որ ուզած ժամանակ հանում են և մարդկային կերպարանք ստանում: Նոքա մարդոց հետ յարաբերութիւն ունին և մեր կանանց հետ սէր էլ են անում²:

Այդպիսի զլոյցներ շատ են պատմում

1. Հմմտ. եզմիկ. եր. 104. «Եւ ոչ աճարֆ իրեւ մարդկան եւ նոցա (վիշապաց) ի բնակութիւն»: Վարդանի գրածը՝ «Տեսեալ ոմանց քաչաց եւ վիշապաց օճարս ի լեռին եւ բնակութիւն» (Ճառտ. Արմ. Յո. II. եր. 74):

2. Հմմտ. Սրուանձեան, Գրոց Բրոց, եր. 44. M. Abeghian, Der Armenische Volksglaube, եր. 76:

Գողթնեաց սահմանի վրայ, Նախիջևանից ոչ հեռու գտնուող մի գագաթի մասին, որի անունն իսկ Օձալեառն (Ոլանդաղ, Ոլանլու), պէտք է առնուած լինի օձերի այդ պատմութիւնից: Մենք այդ լեռան օձերի կամ վիշապների մասին շատ հրաշալի պատմութիւններ ենք լսել: Բայց ցաւ է, որ զրի առած չլինելով՝ չենք կարող բերել:

Ի թիւս այլ լեռների այդպիսի օձերով կամ վիշապներով բնակուած է համարուում և Մասիսը: որ Արտաւազդի առասպելի մէջ՝ Յայսմաւուրքում, կոչուում է Սեաւ լեառն¹, և հենց ժողովրդի մէջ, ըստ Թաղիադեանի, կոչուել է Մութն աշխարհ²: Ասում են թէ Մասիսի վիշապները մի քանի տարին մի անգամ մեծ կռիւ են ունենում Արագածի վիշապների հետ: «Պէս պէս առասպելներ» ունի յատկապէս Փոքր Մասիսը: «Պատմում են, որ Փոքր Մասիսի վրայ կան վիշապներ և օձեր ահագին մեծութեան, այդ պատճառով խիստ դժուար է և համարեա՛ անկարելի է նորա գագաթը բարձրանալ: «Բարձրանալիս լեռան խորքերից կամ աակից մշտապէս լուում

1. Χαλατ. Αρμ. Ξοσο, II. κτ. 74.

2. Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Դ. Թաղիդեանց, Կալկարայ, 1847, Ա. կր. 167:

են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրտապատառ կարող է լինել»¹ :

Մասիսի հետ կապուած վիշապների այս զրոյցները մօտենում և նոյնանում են նոյն լեռան վրայ թորենացու պատմած առասպելին: Հին ժամանակից ցայսօր Մասիս կամ Սեաւ լեռան ուրեմն համարւում է վիշապների բնակարան, որոնց մասին «պէսպէս բաներ» «անյայտ իրք» են պատմում:

Բայց այս՝ առասպելի ընդհանուր կողմն է միայն:

Առասպելի վարիանտները մեր եւ ուրիշների մէջ:—Միթե՞ական բնաւորութիւն ունեցող առասպելները հեշտութեամբ չեն մոռաց-

1. Ընթիւ հատուածներ Նագաբեանի, Տիխիս, 1883. Ա. եր. 230. Լեւոն Տիգրանեանի ճանապարհորդութիւն «Դպի Փոքր Մասիսի գագաթը»: Աւելորդ չի լինիլ նոյն տեղից բերել եւ հետեւեալը. «Ոմանք էլ ասում են, թէ գագաթի վրայ ազնաւորի (հսկաների) գերեզմաններ կան... Մի քանիսն էլ չեն են, որ գագաթի վրայ ուղտաների քարուան կայ քարացած, նաեւ ուղտապանն էլ այնտեղ քարացած կանգնած է, մեկ ձեռքով բռնած ունի առաջնորդող ուղիս սանձը, իսկ միւս ձեռքին իւր գաւազանը»: Փոքր Մասիսի վրայի լճի (որի գոյութիւնը հերքում է պ. Տիգրանեան) պատմութիւնը, միացած Ազնաւորի կամ Օղուզի գերեզմանի եւ քարացած ուղտերի շարանի այս պատմութեան հետ՝ յիշեցնում է նեմրոս սարի ջրաւազանի եւ Բիւռ ուղտերի առասպելը (Հմեւ. եր. 237 հոս.):

ւում ժողովրդի մէջ: Այլ երկար պահում են, միայն կերպարանափոխ լինելով և ուրիշ առասպելների հետ կցուելով, և կամ իրենցից մասեր միայն մոռացութեան տալով: Միւս կողմից միթափան բնաւորութիւն ունեցող առասպելները մեծ մասամբ միայն մի ազգի չեն պատկանում: Ուստի և շատ բնական է, որ Արտասազգի ու վիշապների առասպելն ևս, ոչ միայն ընդհանուր գծերով, այլ և մասնաւոր միջադէպերով գնտենք այժմ հայոց մէջ և ուրիշ ազգերի մէջ:

Յաւ է որ հարկաւոր գրքերը ձեռի տակ չունենալով՝ չենք կարող բերել աւելի աչքի զարնող օրինակներ և բոլոր մանրամասնութեամբ: Մենք օգտուում ենք միայն մեր ձեռին ունեցածից, որը, կարծում ենք, բաւական է:

Ամենից առաջ նկատենք, որ ինչպէս ուրիշ ազգերի, օրինակ՝ գերման առասպելաբանութեան¹, մէջ այդպէս և մեզում դել (Riesen), վիշապ, աժդահա կամ աժդահար, իրար հետ սերտ կապուած են և յաճախ փոխանակում են իրար: Դոքա միւկնոյն Ֆիզիկական երկոյթի անձնաւորումն են զանազան կերպարանքներով: Այս պատճառով և

1. Mannhardt, German. Mythen. եր. 207.

յաճախ միևնոյն առասպելը թէ զեկերի և թէ վիշապների մասին է պատմուում:

Մեզ հետաքրքրող առասպելի արդի պատմուածքը հայոց մէջ լսել ենք իբրև հեքաթ. նոյնն արդէն զրի առնուած գտնոււմ ենք նաև Սրուանձտեանի ¹ և Տ. Նաւասարդեանի ² ժողովածուների մէջ:

Մի հարուստ թագաւորի (վարիանտ՝ որսորդ) աչքը վախեցել է Յեւ յեռան վրայ բնակող վիշապներից (վար. զեկերի): Ուստի նա մեռնելու ժամանակ կտակ է անոււմ իւր որդուն, որ Սև սար որսի չգնայ:

Քաջ որդին չէ լսոււմ հօր խօսքին. գնոււմ է Սև սար որսի և պատահոււմ է ածղահար վիշապի: Կուոււմ են, և որսորդ արքայորդին կիսատայան է անոււմ վիշապին ու ձգոււմ: Ապա նա մտնոււմ է վիշապի ապարանքը, ախրոււմ է նորա ստացուածքին ու հարսուութեան և ապրոււմ այնտեղ:

Որդին մօրն էլ բերոււմ է իւր մօտ՝ վիշապի ապարանքը: Սակայն մայրը դեղ է անոււմ ու լաւացնոււմ վիրաւոր վիշապին: Մայրը վիշապին ծածուկ պահոււմ է ապարանքոււմ և նորա հետ սիրողութիւն է անոււմ:

Վիշապը մօր սիրտը իւր կողմն ունենալով՝ մօր հետ աշխատոււմ է կորցնել որդուն: Մայրը հիւանդ է ձևանոււմ և վիշապի խորհրդով ուղար-

1. Մանուկայ, էր. 200 «Նեկուար մայր»:

2. Հայ ժող. շեփարհեր. ԵՎ էր. 36. «Նեկուար մայր»:

կում է որդուն այնպիսի բաներ բերելու, որոնցով
ինքը պիտի առողջանար: Իսկ այդ հազուագիւտ
բաները-անմահական խնձոր, ոսկեղջիւր եղնիկի
կաթ, անմահութեան ջուր ևլն.—բերելու հետ կա-
պուած են մեծ վասնգներ որդու կեանքի համար:
Բայց մի հուրի մալաք աղջիկ (վար. պառաւ) օգ-
նում է նորան և ամեն վասնգից ազատում: Մայրը
վերջապէս իմանում է, որ եթէ որդու երկու բու-
թըն իւր նետ աղեղի լարով կապէ, աղան ուժից
կընկնի: Այդպէս անում է: (Վար. գլխի երեք մա-
զըն է հանում): Յղային սպանում է: Սահայն
ւուրի մալաքի շնորհիւ աղան կենդանանում է նա-
րից, սպանում է վիշապին ու մօրը պատժում:
Եւ այսպէս ատէր է մնում վիշապի ապարանքին:

Այս միեւնոյն հեքաթը կայ կատարեալ
նմանութեամբ, կարելի է ասել նոյնութեամբ,
և ուրիշ ազգերի մէջ: Մենք այդ հեքաթ-
ների իսկականը ձեռի տակ չունենալով, բո-
վանդակութիւն առնում ենք Բուսլայեից:

Սլովակների մէջ այդ հեքաթը պամուում
է այսպէս.

«Որդին մի բերդ մաքրելով վիշապներից՝ բնա-
կում է այնտեղ իւր մօր հետ: Բայց բերդի մի
սննեակում մնում է մի վիշապ, որին այնտեղ
չգթայած էին իւր եղբայր վիշապները: Այդ վի-
շապին յաջողում է հրապուրել մօրը, որ իւր սի-
րական վիշապի հետ աշխատում է կորցնել որդուն:
Մայրը հիւանդ է ձեանում և խնորում որդուն,
որ իրեն բժշկելու համար բերէ զանազան հազուա-
գիւտ համեմունքներ, որոնց ձեռք բերելը մահու

չափ վտանգաւոր է. որդուն օգնում է սուրբ Շա-
բաթը (СВ. НОДѢЛЬКА): ... բայց մօրը վերջապէս
յաջողում է կապել որդուն մետաքսէ լարով, նա
կանչում է վիշապին, որ և սպանում է որդուն...
Սահայն ս. Շաբաթը յարուցանում է որդուն ան-
մահական (մեր հեքաթի մէջ ազրիւրի) ջրով ու
սպանում վիշապին»...:

Մոյն աւանդութիւնը կայ և վալախնե-
րի մէջ: Այստեղ որդին, Փլօրիան, արդէն մի
հասարակ մարդ չէ, այլ գերբնական հրաշալի
ծնունդ ունի, նման Մարսի ծնունդին՝ ըստ
Ովիդիոսի:

«Մայրը որդուն՝ Փլորիանին յղանում է խմե-
լով մէջը մի փունջ ծաղիկներ դրած ջրից: Մայր
և որդի բնակում են մի բերդում, որ վիշապների
է պատկանում: Փլորիանը բոլոր վիշապներին յագ-
թում ու կապում է բացի մէկից, որին յետոյ
մայրը սիրում է: Վիշապը դառնում է գեղեցիկ
ազայ և մօր հետ աշխատում է, որ կորցնէ որ-
դուն: Երկու անգամ Փլօրիանը մահից ազատում
է կարծեցեալ բուժիչ միջոցներ բերելով մօրը, որ
հիւանդ է ձեւանում: Բայց երրորդ անգամ մայրը
վիշապի խրատով խնդրում է որդուն, որ գնայ ան-
մահութեան ջուր բերելու մի ազրիւրից, որ Սե-
սարի վրայ պահպանում է շար ոգին»:

Շարունակութիւնը շատ նման է մեր
հեքաթին (ըստ Մաւասարդեանի վարիանտի):
Տղային օգնում են այստեղ ջրի փարիներ
(ВОДЯНЫЯ ДѢВЫ):

Մեր հեքաթի և այս հեքաթների նմանութիւնը նոյնութեան է հասնում:

Նոյն աւանդութիւնը Զեռնագորիայում ոչ թէ հեքաթ է, այլ մի «նշանաւոր երգ»: Միայն վիշապների տեղ այստեղ դեեր են դուրս գալիս, ինչպէս և Սրուանձտեանի զարիանտի մէջ դե է: Այդ երգի մէջ «եթանասուն դեեր և նոցա գլխաւորը սպարում են մի այրում: որդին խնայում է միայն գլխաւորին, որին և սիրում է մայրը: Ս. Շարաթի տեղ երգի մէջ որդուն օգնում է մի վիշապ¹:—Վիշապները մեր քաջքերի կամ պարկերի տեսակին պատկանող սգիներ են:

Մեր վիշապազանց առասպելի և այս հեքաթների նոյն լինելը ակնյայտնի է: Ազոնք միեւնոյն առասպելի տարբեր պատմուածքներ են միայն: Անշուշտ, Մորինացին առասպելն իւր մանրամասնութիւններով չէ բերում: Այնտեղ չենք գտնում օրինակ, թէ Սաթենիկ օրհինը, որ վիշապ Արգաւանին սիրում է, վիշապի հետ աշխատած լինի իւր որդուն կորցնելու: Շատ հասկանալի է թէ ինչու: Ի՞նչպէս կարող էր պատմագիրն այդ մէջ բերել:

¹. Буслатовъ, Истор. очерки рус. народнои словесности. кт. 323. էոյն տեղում յիշած է Печени Вука Караджиджа 2. № 8.

նա որ Սաթենիկի սէրն անգամ բովանդակութեան մէջ իւր տրփանք է անուանում, իսկ «Ճշմարտեալ պատմութեան» մէջ չի էլ առնում այդ սէրը: Սակայն առասպելի մէջ այդ երկրորդական է: Իսկ էականը կայ մեր հին առասպելի մէջ: Էականն է. Հայր Թագաւորը (Արտաշէս) յարաբերութիւն ունի Սև լեռան (Մասիսի) վիշապների հետ. նորա աչքը վախեցել է վիշապներից: Թշնամի է նոցա, բայց, երևի, կռուելով բան անել չէ կարողանում: ¹ Իսկ նորա որսորդ որդին (Արտաւազդ) որ նոյնպէս գերբնական ծնունդ ունի (ինչպէս Փլորիան), տիրում է վիշապների ապարանքին ու բերդերին ²: Մայրը, Սաթենիկ, սիրում է վիշապների գլխաւորին: (Մօր դաւաճանութիւնը չկայ): Եւ Արտաւազդ ոչնչացնում է վիշապներին:

Թէ այս առասպելը, որ այժմ հեքաթի բնաւորութիւն ունի, կարող էր հին ժամանակ հայոց մէջ վիպասանքի և նոյն իսկ երգի

1. Այս իմաստով կարելի է հասկանալ նշմարեալ պատմութեան 2-ր. հատուածը, թէ Մաժան որդուն ուղարկում է վիշապների դէմ, բայց երկու տարուց յետոյ հաշտուել է եւ «ի բաց տալ հրամայե զինչսն»:

2. Խորենացու «ճշմարտեալ» պատմութիւնն այն տրպաւորութիւնն է բողոքում, որ Արտաւազդ հապառակ իւր հօր կամքի է կուում Արգամի դէմ, ինչպէս եւ հեքաթի մէջ որդին հօր կտակի հապառակ է վարում:

նիւթ լինել՝ այդ մասին կասկածել կարելի չէ, քանի որ նոյն առասպելն այժմ ինչպէս ասացինք, Ձեռնագործիայում վիպական երգ է։ Իսկ թէ ինչպէս, կամ ինչ պատճառով է վիշապների այս առասպելը կապուել Արտաշէսի մասին եղած պատմական երգերին՝ այդ մասին յետոյ խօսք կը լինի, երբ Տիգրանի և Աժդահակի մասին կը գրենք։

Վիշապների դէմ կռուի այս առասպելին միացել է վիշապների և մի ուրիշ առասպել, — Արտաւազդի փակուելը Ազատ Մասիսի մէջ։ Տեսնենք այդ առասպելն ևս։

Արտաւազդի քնաւորութեան երկուութիւնը։ — Արտաւազդի առասպելը բացի Խորենացուց յիշում են նաև Եզնիկ, Վարդան վարդապետ, Վանական վարդապետ և Յայսմաւուրք։¹ Ըստ Եզնիկի (եր. 104) Արտաւազդին կապած պահում են վիշապները. «Եւ ոչ որս երբեք՝ որպէս մարդկան արարեալ են վիշապաց, կամ առնիցեն, և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն, և ոչ զոք ի թագաւորագեաց և ի ղիցազանց

1. Նիքերը գեղեցիկ կերպով դասաւորուած կտեղի է գտնել պ. Խաչաբեանի Հայոց Վեպի մէջ. II, եր. 73 հօմ. ուր ևս երեք Յայսմաւուրսից քերած է՝ Գրիգոր Խաչաբեցու, Կիրակոս վարդ. Արեւելցու և Գրիգոր Անաւազե-
512:

ունին կապեալ առ իւրեանս կենդանի... Այլ որպէս զաղէքսանդր խարէին դեք՝ կենդանի կայցէ:.... Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, թէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս և Հրեայք՝ որ իզուր ակնկալութիւն կապեալ կան, թէ Դաւիթ զալոց է՝ շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա»: Արտաւազդն այստեղ ներկայանում է իբրև թագաւորազգի կամ դիւցազն և հայերը նորան սպասում են, որ ելնէ և տիրէ աշխարհին: Այստեղ նա քարի ընաւորութիւն ունի, ուստի և նորան կապողները չար են՝ վիշապներ: Մենք անսանք, վիպասանքի մէջ Արտաւազդ նոյնպէս թագաւորի որդի է, որ կռուելով վիշապների դէմ՝ ներկայանում է իբրև դիւցազն:

Երկու սկզբնապէս տարբեր առասպել, վիշապների դէմ կռուողի և Մասիսի մէջ կապուած չար ոգու առասպելները միանալով վիպասանքի մէջ, ազդել են իրար վրայ: Բարի ու քաջ դիւցազն արքայորդին, որ վիպասանքի մէջ կռուում է վիշապների դէմ՝ ստացել է չար ու նախանձոտ բնաւորու-

Թիւն. իսկ ընդհակառակն Մասիսի մէջ փակուած չար ոգին, ինչպիսին է իրօք Արտաւազդ, Եզնիկի մէջ, անշուշտ ժողովրդից առած, ստացել է բարի բնաւորութիւն, քանի որ նա թագաւորազն ու զիւցազն է: Այտեղից առաջացել է կապեալ Արտաւազդի բնաւորութեան տարբերութիւնը Խորենացու (ինչպէս և միւսների) և Եզնիկի մէջ: Եզնիկի մէջ կապեալ թագաւորազն Արտաւազդի բարի բնաւորութիւնն ուրեմն աւելի նոր է և վիպասանքի առասպելի առաջին մասի ազդեցութեան տակ է առաջացած, թէպէտև աւելի շուտ է գրի առնուած: Առասպելի հնագոյն ձևի նկատմամբ շուտ գրի առնուած լինելը առանձին նշանակութիւն չունի. ճիշտ ինչպէս նորագոյն ձեռագիրներն երբեմն աւելի հարազատութեամբ են պահած լինում սկզբնագիրը այդպէս էլ նոր գրի առնուած առասպելները երբեմն աւելի մօտ են բուն առասպելին քան թէ հները: Մասիսի մէջ փակուած Արտաւազդը բուն առասպելի մէջ չար բնաւորութիւն պիտի ունենայ և ունի: Մենք այդ կրտսնենք իսկոյն:

Արտաւազդ դու կամ՝ վիշապ:— Ըստ առասպելին երգիչների խօսքով. «վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և դև փոխանակ եղին» (Բ. կա.): Ուրեմն նոյն իսկ

վիպասանքի մէջ Արտաշէս Թագաւորի որդի Արտաւազգը, որ վիշապների դէմ կռուող դիւցադն է, համարուել է իրօք մի դիւ: Այդ մի շատ տարածուած ու հին հաւատ է, որ ցարդ ևս ի Թիւս այլ ազգերի կենդանի մնում է մեր ժողովրդի մէջ: Չարուք կամ դեերը փոխում են իրենց երեխաները մարդկանց երեխաների հետ. մարդկանց երեխաները զոզանում են և տեղն իրենցը դնում: Եւ եթէ մանուկ Արտաւազդին զոզացողները վիշապազունք են՝ զոզացածի տեղն ևս վիշապադն կամ վիշապ պիտի դնէին ըստ հաւատին: Արտաւազդն ուրեմն ներկայանում է իրօք իբրև վիշապ, և եթէ դե է ասուած նորա համար, այդ դե բառն ևս պէտք է հասկանալ ընդհանուր իմաստով՝ իբրև չար ոգի: Պէտք չէ մոռանալ և այն, որ ինչպէս նկատել ենք, դե, ազնաւուր և վիշապ, ափշահա սերտ կապուած են իրար հետ և յաճախ փոխանակում են իրար:

Վիշապ Արտաւազդի առասպելը եւ համանման առասպելներ:—Արդ, այդ դե կամ վիշապ Արտաւազգը նախանձում է հօր փառքին. հայրն անիծում է նորան, և նա քաջ-

1. E. H. Meyer, Germ. Mythologie, Die Wechselbälge, եր. 78, 117, 137 եւլն. M. Abeghian, Der armen. Volksglaube, եր. 108:

քերից բռնուելով որսի ժամանակ շղթայուում է Մասիսի մէջ: Մի օր պիտի ելնէ և վերջ տայ աշխարհին. բայց դարբիններն կռանահարութիւնից զօրանում են նորա շղթաները, որ կրճուում են կամ լիզուում են երկու շներ:

Լեռան մէջ փակուելու այս վիպական պատմուածքը շատ տարածուած և հին է:

Մարկո Կրալեիչը, հարաւային սլաւոնների մեծ դիւցազն, նախանձում է դիւցազն Դուկազինչէի մեծ փառքին: Սա մեռնելիս անիծում է Մարկոյին, որ և իւր հօր անէծքի տակ է: Անէծքի հետեանքն այն է լինում, որ Մարկոյի գերեզմանի տեղն անյայտ է մնում: Բայց ուրիշ և աւելի տարածուած աւանդութեամբ՝ Մարկոն մեծ կռիւ է ունենում և երբ նա ձեռներն երկինք բարձրացրած ասում է. «Տէր Աստուած, ի՞նչ անեմ այժմ», Աստուած զթում է նորան և փակում մի այրի մէջ: Մարկոն սուրը քարի մէջ խրած՝ քնած է. իսկ նորա Շարաց ձին մամուռն է ուտում: Սուրը կամաց կամաց գուրս է գալիս քարի միջից, և երբ ամբողջապէս դուրս գայ, ձին էլ մամուռն ուտէ վերջացնէ, այն ժամանակ Մարկո Կրալեիչը նորից աշխարհ պիտի դուրս գայ ձիով: ¹

¹. Օր. Миллеръ, Илья Муромецъ и Бои. Киев. кр. 797

Մհերի առասպելն աւելի ևս նման է Արտաւազդի առասպելին: Մորա բնաւորութեան մէջ ևս նոյն երկուութիւնն երևում է: Բայց նա աւելի չար է քան բարի: Մորա գերբնական ծննդեան մասին մէջ ոչինչ յայտնի չէ: Բայց նա հասարակ հերոս չէ. մեր արդի վէպի ամենազօրեղ դիւցազն է: Բնաւորութեամբ դիւական, քանի որ ընկերութիւն է անում դեւերի հետ: Մա կուում է հօր հետ, նախանձում է հօրը: Հայրն անխնայ է նորան, որ անժառանգ՝ լինի և անմահ մնայ: Մա տանջւում է հօր անէծքի տակ:

Ո՛վ տէր Ասուած,

Իմ խօր անէծք ձի խասիր ի,

Իմ միջաց երակ քաշիր ի . . .

Ո՛վ Տէր Ասուած, զքիզ իմ կանչիր,

Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանայ քար: 2

Եւ մհերը, ինչպէս Արտաւազդը որսորդութեան ժամանակ փակւում է վանայ քարայրի մէջ. «իրիշկից, տեսաւ մէկ ագռաւ կէր, կրխուսէր, նետ-անեղ առից, էզար, դիպաւ ագռաւին. . . Ագռաւ փախաւ, էնիկ ձին յիտիւ կինաց, խասաւ մէկ քեար, տեսաւ,

1. Առասպելն ևս որոյի յունի (Բ. կա.), մի գիծ որ պատմագիրը կարող է վիպասանից առած լինել:

2. Մ. Արևիկան, Դասիր և Մհեր, եր. 58.

որ պետց ի մաղազայ ի »...¹: Եւ Մհերը փակուում է քարայրի մէջ, մինչեւ աշխարհի վերջը: Երբ ցորենի հատը դառնայ մանսուրի շափ, նա պիտի ելնէ և կոտորում անելով աշխարհն աւերէ կամ ինչպէս Արտաւազդը՝ «առնել վախճան աշխարհի»: Սակայն ուրիշ աւանդութեամբ, նա այդ ժամանակ պիտի «մարտիրոսուի»: այսինքն հաւատք պաշտպանելու համար նահատակ պիտի դառնայ: Ազգն ուրեմն սպասում է նորան, ինչպէս Արտաւազդին ըստ Եղնիկի, միայն ուրիշ ձևով: Արտաւազդն՝ աշխարհական հայեացքով՝ պիտի տիրէ աշխարհին և թագաւորէ, իսկ Մհերը՝ քրիստոնէական հայեացքով՝ պիտի նահատակուի: Եւ այս տարբերութիւնը քրիստոնէական դարերի հայոց պատմական կեանքի արդիւնք է:

Մհերի բնաւորութեան մէջ ևս այս երկուութիւնը շատ բնական է, քանի որ Մհերի առասպելը, սկզբում անջատ մի բան, կապուել է Սասունցոց վէպի հետ և դիւական Մհերը դարձել է ժողովրդին սիրելի դիւցազն Դաւթի որդին, ինչպէս Արտաւազդն Արտաշէսի որդին:

Աժդահակի եւ Հրուղէնի առասպելը

1. Գ. ս. Յովսէփեան, Սասնայ ծներ ևր. 150:

Խորենացու մէջ տեսանք: Աժդահակը, վիշապ Դահակը, կամ Զոհակ, որին չար ոգին ստեղծել է մարդկային ազգը ոչնչացնելու համար, երեք գլխանի մի վիշապ է, երեք բերանով և վեց աչքով: Դիւցազն Փրեդունը (ըստ Խորենացու Հրուդէն) յաղթում է նորան Կաւէ դարբնի օգնութեամբ, և շղթայում Դրմաւենդ սարի վրայ: Մորա արիւնը կաթկթում է գետին, երբ նա ցնցւում է, երկրաշարժ է լինում: Աժդահակն այսպէս պիտի մնայ մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակուի և կէս օրուայ մէջ շատ շատ չարիք պիտի գործէ աշխարհում: մինչև Սամը նորան պիտի յաղթէ և ստիպէ ընդունելու Ճշմարիտ հաւատը: Պարսից մատենագիրները յիշում են մի աօն, որ կատարւում է ի յիշատակ Զոհակի շղթայուելուն, և մինչև այժմ իսկ Դրմաւենդ քաղաքում, ասում են, կատարւում է այդ աօնը: Թողնում ենք համեմատութեան բերելու յունական վիշապ Տիւփոնին, որը նոյնպէս լեռան վրայ շղթայւում է:

Գերման առասպելաբանութեան մէջ որոտմունքի աստուած Թոռը թշնամի է առհա-

1. Fr. Spiegel, Eranische Alterthumskunde I. եր. 532 հտն. Manuhardt, German. Myth. եր. 86 հսն.

սարակ հսկաներին (Riesen) և հսկայ Լոկին (Loki), որ խորամանկ է և Ալֆի (Alf) պէս արադ կերպարանափոխ է լինում (Հմմտ. մեր վիշապների կեղծս ի կեղծս լինելը):¹ Սա խարդաւանքով սպանում է Բալդրին, և Թոռ աստուածը շղթայում է նորան ու պինդ կապում ժայռից մի քարայրի մէջ: Աստուածները նորա գլխին ամրացնում են մի Թունաւոր որդ: Երբ որդի թոյնն ու լորձուկը նորա երեսին է կախում, նա այնպէս ցընցւում է, որ ամբողջ երկիրը դողում է, երկրաշարժ է լինում: Լոկին այդպէս պիտի մնայ մինչև աշխարհի վերջը, երբ պիտի արձակուի և վերջ տայ աստուածներին և մարդկանց: Ուստի Սկանդինաւիայում վտանգաւոր դրուժեան մէջ այժմ էլ ասում են. «Լոկին աղատուել է կապանքից» իսկ գերմանացոց մէջ. «Սատանան արձակուել է»: Ուրիշ աւանդութեամբ Լոկիի տեղ աստուածները շղթայած են Փենրիս գայլին (Senriswolf), որ աշխարհի կատարածին (Ragnarok) պիտի արձակուի երկինքն ու երկիրն աւերելու: ²

Մեր Արտաւազդի առասպելը կապուած է մի ժողովրդական հաւատալիքի և սովո-

1. E. H. Meyer, Germ. Mythol. եր. 165 հսկ.

2. E. H. Meyer, Germ. Myth. եր. 107.

բութեան հետ. Դարբինները «յաւուր միա-
շաբաթուջ երիցս կամ չորիցս բախեն զսալն,
զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ»:
Ինչպէս Արտաւազդի առասպելը, նոյնպէս և
առասպելի հետ կապուած այս հաւատն ու
սովորութիւնը բնիկ հայկական չէ: Յոյնը
գտնուած ենք և Գերմանացոց և ուրիշներէ
մէջ: Մանհարդը¹ խօսելով Լոկիի շղթայուե-
լու առասպելի մասին գրուած է. «Զայցբուր-
գում, Տիրուի շատ հովիտներում գարբիննե-
րը սովորութին ունին տօն երեկոնները) օրուայ
աշխատանքը վերջացնելուց յետոյ, երեք հա-
րուած տալու մերկ սալին: Այս անուամ են,
որպէս զի Լուցիֆերի² շղթաները նորից ամրա-
նան: Որովհետև եթէ նա ազատուի, ամբողջ
աշխարհը կաւերէ: Տեղ տեղ, օրինակ՝ Վիլլզէ-
նաուում, այս սովորութիւնը կապուած է
Կատաղի գայլի (Grimmiger Wolf) յիշողու-
թեան հետ: Նա ինն երկաթեայ դռների ե-
տևում երեք տակ շղթայի է զարնուած և
որովհետև շարունակ ամենայն ուժով ճիգ է
թափում ազատուելու, ուստի պէտք է նորա-

¹ Mannhardt, Germ. Mythen. եր. 86 հս. Laist-
ner, Das Rätsel der Sphinx, II. եր. 73. հս.

² Lucifer անունից են ծագած են համարում ու-
մանի Loci անունը (E. H. Meyer, Germ. Myth. եր.
163.):

շղթան ամրացուի. թէ չէ աշխարհն ամբողջ կաւերէ: Վալդկիրիսենում նոյնպէս վերջին դարբինը, որ ամենից յետոյ թողնում է դարբնոցը, կռանով մի անգամ խփում է դատարի սալին, որպէս զի Լուցիֆերը չկարողանայ շղթան խարտել կտրել: Եւ շարունակ խարտում է շղթան, որ քանի գնում բարակում է: Ս. Յակոբի տօնին (յուլիսի 25) մազ է մնում որ կտրուի, բայց մի անգամից դարձեալ հաստանում է: Եթէ նոյն իսկ մի դարբին հին սովորութիւնը չպահէ, Լուցիֆերը ամբողջապէս կըխարտէ կըպրծնի... Սմալանդում նոյն ժողովրդական հաւատքը կայ միայն այն տարբերութեամբ, որ այստեղ Լուցիֆերը ծանր շղթան ոչ թէ խարտում է, այլ իւր ճանկերով կտրել աշխատում»: Եւ նոյն հաւատը կայ և ալբանացոց մէջ. սատանան ամբողջ տարին աշխատում է ազատուել իւր շղթաներից: Աւագ Շաբաթ օրը քիչ է մնում, որ պրծնի. բայց Զատիկ առաւօտեան Փրկիչն երևում է և նորէն շղթայի զարնում սատանային:

Յայտնի է, Էմինն արգէն բերել է Վրաց գոռոզ և հպարտ Ամիրանի առասպելը: Ամիրանին Աստուած կապում է Կովկասեան լեռներից մէկի մէջ երկաթի շղթաներով: «Ամիրանի սուրը մի կողմ է ընկած և միայն

ճորա հաւատարիմ շունն անդադար լիզում է իւր տիրոջ շղթաները... Սակայն Աւագ Հինգշաբթի երկրի խորքից մի դարձին է դուրս գալիս և սաստիկ ծեծում է մաշուած շղթան մինչև որ դարձեալ ամրանում է»¹։

Մեր Մհերի առասպելի հետ մեզ յայտնի չէ թէ արդեօք կապուած է դարբինների այս սովորութիւնը, որ ըստ Էմինի վկայութեան, մինչև այսօր պահուած է Պարսկահայերի մէջ։ Սակայն մեր Մհերի առասպելի մէջ գտնում ենք համանման առասպելների մի ուրիշ գիծ, որ չկայ Արտաւազգի առասպելի մէջ։ Ըստ գերմանական առասպելին, նոյն Լուցիֆերը շղթայուած ընկած է մի քարայրի մէջ, ինն դռան ետևում, ծակատազրրի երեք աղջիկների մօտ (Schicksalsjungfrauen) և պահուած է մի գանձ։ Այսպէս և Մհերը փակուած է Վանայ քարում։ «Այդ դռնով ներսը ծախրի Ֆալակ կըդառնայ... Մհերը շարունակ անոր վրայ կընայի. երբ այդ ծախրը կըդագարի, այն օր Մհեր կազատի, դուրս կելլէ։... Ամեն տարի Համբարձման գիշերը... Մհերի դուռը կըբացուի... ով որ ներս մտնէ, որքան ոսկի կուզէ կառնէ

1. Էմին, Մովս. և իւրոց հին վկայերը, եր. 81.

դուրս կելլէ, վասն զի հոն աշխարհի ոսկին կուտուած է»¹:

Ծախրի Փալակը, իսկապէս Չարխի Փալակը, բախտի, ճակատագրի անիւն է, երկնային անուի (չարխ) և մոլորակային երկնքի (Փալակ) պատկերով, մի ըմբռնում, որ պարսիկներից է անցել. հայերին: Բախտի կամ ճակատագրի հետ կապ ունի և Համբարձման տօնի արդի ժողովրդական հաւատալիքը¹: Բայց մեզ համար հետաքրքիրն այստեղ այն է, որ Մհերի առասպելի հետ կապուած է ճակատագրի ու գանձի այս զրոյցը, որ ունի գերման Լուցիֆերի առասպելը:

Բերած օրինակներով արդէն պարզուած ենք համարում, որ մեր Արտաւազդի առասպելը նոյն է, ինչ որ Մհերի առասպելը, և որ այդ երկուսն էլ մեր հին ու նոր պատմուածքներն են այն ընդհանուր տարածուած առասպելի, որ գտնոււմ ենք շատ ազգերի մէջ: Մենք երկար կանգ չենք առնիլ այս առասպելի ծագման և մեկնութեան մասին: Զանազան առասպելաբաններ այս կամ այն տեսակ մեկնութիւն են տուել: Մանհարդն, օրինակ, այդ առասպելը բացատրում է ամ-

1. Մուամեճեան, Գրոց բրոց, եր. 134.

1. M. Abeghian, der armen. Volksglaube, եր. 50 հօ. 61 հօ.:

պրոպի օղերեւոյթով: Պարսից Զոհակը կամ Աժի Դահականն նոյն է ինչ որ վեդայական Ահին (Abis Dāsaka) օձը, ամպրոպի վիշապը: Ետրան յաղթողն ու կապողը Փրեդուն (Հրդեհէն), հին ձեռով Թրայեսասոնտոն նոյն է ինչ որ հնդկական Տրիտա աստուածը, որ դեւերի և վիշապի դէմ կռուի մէջ Ինդրայի օգնականներէից մէկն է: Բարայրը, որի մէջ ճակատագրի կոյսերն են բնակում: է ամպր. նոցա գանձն է արեգական ոսկին, իսկ այդ պահպանող սատանան կամ Լուցիֆերը նոյն է ինչ որ ամպն ու արեգակի փայլքը փակող վիշապը՝ Վրտրան՝ Ահին, Աժի դահական:

Մեր վիշապ կամ դե Արտաւազդն ուրեմն միևնոյն Աժդահակն է, որով և նորա չար ու նախանձոտ բնաւորութիւնը, որ տալիս է մեզ Խորենացին «Ճշմարտեալ» պատմութեան մէջ, վիւպական զիծ պէտք է համարել: Եւ այդ չար ոգին, վիշապը՝ փակուած է «յազատն ի վեր ի Մասիս», որի վրայ հին ժամանակ հաւատում էին թէ վիշապներ են կենում: Այժմ էլ հաւատում են թէ այնտեղ վիշապներ կան և թէ գետնի տակից լսում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրտապատառ կարող է լինել: ¹

1. Արդի գրոյցները, որքան մեզ յայտնի է, Փոքր

Արդեօք այս գիծն էլ մի մութ յիշողութիւն չէ՞ այն երկրաշարժի, որ առաջանում է Լոկիի, Աժի Դահակի (Զոհակի) ցնցումից: Այդ աւելի հաւանական է թւում, երբ տեսնում ենք Աժդահակի առասպելի մի ուրիշ գիծն ևս այժմ նոյն Մասիսի վրայ կապուած: Ըստ Խորենացու, իչպէս գիտենք, Հրուդէնն Աժդահակին կապելուց յետոյ՝ իւր անդրին հաստատում է նորա դիմաց (զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել): Իսկ մեր նոյն Մասիսի վրայ այժմ առասպելաբանում են թէ այն տեղ «ուղտերի քարուան կայ քարացած և թէ ուղտապանն էլ քարացած կանգնած է»:

Ըաջք:— Ի՞նչ ոգիներ են վիշապ Արտաւազդին կապողները: Եզնիկի մէջ միայն Արտաւազդին կապողները վիշապներ են: Սա-

Մասիսի մասին են: Առասպելը, հարկաւ, հեշտութեամբ կարող էր Մեծ Մասիսից Փոքրին անցնել: Միայն Գրիգոր Խրատիցու Յայամաւորքի մէջ Արտաւազդի մասին յիշում է. «ի Սեաւ Լեւոն որ է աւագ Մասիս»: Աւագ Մասիսն ըստ այսմ Սեաւ շուան մեկնութիւնն է միայն գրողի կողմից: Միւս տեղերում անորոշ է յիշուած, կամ միայն Մասիս, կամ Ազատն Մասիս: Ազատ կոչումը Մասիսի համար յայտնի է Անանուհից (Սեբեոս եր. 7. Հմմտ. Յեքթր, Հայկ. աշխատ. եր. 141. Ժան. 1. Մարր Օ պառառոյ Իստորիս Արմենիս Առոմա): Արդեօք Ազատ անունը Փոքր Մասիսի համար յի եղել, որով Ազատ Մասիս մեր համապատասխան կրկնի այժմեան ժողովրդական Սիս Մասիս եւ Փոքր եւ Մեծ Մասիս մերին: Հմմ. Գառնի գետի ստորին հոսանքի Ազատ Ազու կոչումը:

կայն այդ ինչպէս նկատեցինք, առասպելի նոր ձևն է:

Ըստ Յայսմաւուրքի և ըստ Վանական վարդապետի Արտաւազդին կապողները Աստուածք են: Այս աստուածք կոչումը, եթէ մի կողմից ցոյց է տալիս, որ հեթանոսութեան ժամանակ պաշտուած էակներ են եղել Արտաւազդին կապողները, միւս կողմից ենթադրել է տալիս, որ քրիստոնէութեան ժամանակ այս ընդհանուր անունը՝ աստուածք փոխանակել է բուն հեթանոսական մասնաւոր անունին: Եւ այդ անունն է քաջք, որ գտնում ենք Խորենացու և Վարդան վարդապետի մէջ: Վերջինս գրում է. «Տեսեալ սմանց քաջաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս և բնակութիւնս, ուր և զԱլէքսանդր կապեալ ունին ի Հռոմ և զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս և զԾրուանդ ի գեսս և ի մաայլս»: Իսկ յետոյ գրում է «Բայց մոլորութիւն զիւաց խաբեաց զկուպաշտան Հայոց ի ձեռն քրմացն» որք ասէին թէ զԱրտաւազդ ոմն վիշապք արգելեալ են կենդանի ի Մասիս լեառն. ի նա[և նա] ելանելոց են [է] և զաշխարհս ունելոց»: Վարդանը Արտաւազդին կապողներ է դնում նախ քաջք և վիշապներ, և ապա միայն վիշապներ: Բայց Վարդանի այս գրուածքի հա-

մեմատութիւնը Եզնիկի վերեւում դրած հատուածի հետ ցոյց է տալիս, որ նորա գլխու-
ւոր աղբիւրն եղել է Եզնիկ: Վիշապները նա
վերցրել է Եզնիկից, իսկ քաջքերը մի ուրիշ
աղբիւրից:

Ի՞նչ ոգիներ են քաջք և ինչպիսի
բնաւորութիւն ունին.

Վարդան վարդապետի վերեւում դրած
հատուածից իմանում ենք, որ քաջք և վի-
շապք համազգի էակներ պիտի լինին, քանի
որ նոյն բաներն երկսի վրայ ևս պատմու-
մն: Քաջքերն, ինչպէս և վիշապները, բնա-
կում են բարձր լեռների վրայ և ունին
այնտեղ տաճարներ: Այսուհետև քաջքերի
մասին պատմում են ¹, որ կռիւներ են վա-
րում, որս անում, կաշերից ցորեն կրում և
մառաններից զինի տանում: Եոյնը պատմում
է, ինչպէս տեսել ենք, և վիշապների մասին:
Այս քան նմանութիւնը հենց բուսական է ցոյց
տալու, որ վիշապների և քաջքերի հաւատք
միեւնոյն բնական երևոյթից է ծագած:

Վահագնի կռուի մասին խօսելիս (եր.
151—159) տեսանք, որ վիշապ մեղնում,
ինչպէս և ուրիշների մէջ, պտուտահողմի և
փոթորկալից ամպի անձնաւորումն է: Եորա

1 Հ. Ալիշան, Հին Հայաստ, եր. 194.

գէժ կուում է նոյն օղերեցթի բարի անձ-
նաւորումը՝ Ինդրան, իւր օգնական Մարուա-
ների հետ որոնք հողմերի անձնաւորում
աստուածներ են՝ Բացի Մարուաներից Խոզ-
յային գործակցում են և Ռոհուները (Rohus),
որոնք Մարուաների հետ սկզբնապէս ոգիների
միջնոյն խումբն են կազմում, և որոնց հա-
մապատասխան են գերմանական Էլբերը (Elben):

Համեմատենք քաջքերի բնաւորութիւնը
մեր հին և արդի ժողովրդական հաւատքով՝
Մարուաների, Ռոհուների, Էլբերի բնաւո-
րութեան հետ և կրտսնենք, որ մեր քաջ-
քերը նոյն ոգիներն են, ինչ որ նոքա Եոթա-
յափուպէս նոյնանում են գերմանական Էլ-
բերի հետ:

Էլբերը, ինչպէս և մեր քաջքերը, իշ-
խում են ամբողջ բնութիւն մէջ: Ռուսի և

1. M. Abeghian, Der armen. Volksglaube, kr. 103
հում: Նկատենք, որ մեր արդի ժողովրդական հաւատքի մէջ,
նայեղով գաւառին, այդ ոգիները զանազան անուններ են
կրում: Սովորական է քաջք անունը, իսկ իգականների
համար փարի (հին պարիկ): Սակայն երբեմն քաջք և
փարի շփոթում են, այսինքն ինչպէս փարին նաեւ արա-
կանների համար է գործածում, այդպէս և քաջք իգա-
կանների համար: Այնուհետեւ քաջքերը, իրենց բնութեան
յարկովս, առած կամ փրստնեութեան ազդեցութեան
օակ, կոչւում են չարք, չարուք, զրոգ, դե նոյն
իսկ սասանայ: Գերմանացոց մէջ եւս կրեւր զանազան
անուններ են կրում:

նոցա մասին թէ մեր և թէ գերմանական ժողովրդի մէջ կան շատ զրոյցներ: Մտքա իրենց բնաւորութեան բոլոր նուրբ գծերով և իւրատեսակ առասպելներով ու պաշտամունքի բոլոր ձևերով հնդեւրոպական են: Էլբերի սկզբնական ծագում: գլխաւորապէս օղային է: Կան ամպրոպի, հողմի և ամպի Էլբեր: Առաջին երկուսը, ամպրոպի և հողմի Էլբերը, որոնց համապատասխան են մեր քաջքերը, գլխաւորապէս արական են: Իսկ ամպի Էլբերը իգական են, կին էլբ են (Elbinnen): Սոցա համապատասխան են մեր փարիները, հին պարիկները, գլխաւորապէս ջրի (սկզբնապէս ամպի) հրեղէն աղջիկներ, Պարսից պայրիկաները, հնդկաց ապսարանները, որոնք սուրիշ կարգի ոգիներ են:

Էլբերը, ինչպէս և մեր քաջքերը, նայելով իրենց օղային բնութեանը, մերթ խաւար, տոգեղ, վնասակար, բուռն ու չար են. մերթ լուսաւոր, գեղեցիկ, օգտակար, ծառայութեան պատրաստ և բարի: Ուստի և կոչուում են չար ըսներ (böse Dinger) և նազելիներ, բարիներ (Holden, gude, hilge Hollen): Այսպէս և մեր քաջքերը կոչոււմ են չարք. չարունք (այլ և զրոզ, դե, սատանայ) ¹, և մեզանէ

1, Իրեւ չար կակներ, թէ խոյնը և թէ կշիւք հաշածոււմ են պողպատով և կայծառով:

չաւեր, մեզնէ աղեկներ, աղեկ մանուկ:

Էլբերին վերագրում են ամեն տեսակ մարդկային բան: Բերենք մի քանի գծեր մեր քաջքերի և գերմանական հողմի Էլբերի բնաւորութիւնից: Մոցա շունչը մարդկանց և անասուններին հիւանդութիւն է բերում: Մեզնում յատկապէս սինեակի մէջ փչող քամին և առհասարակ քամու հունչը համարւում է քաջքերի շունչը: Բամուց հիւանդացողը քաջքերի զարկածն է: Էլբերը շրջում են պտուտահողմի մէջ կամ յարուցանում են պտուտահողմի որ նոցա անունով կոչւում է դրուտների քամի (Drutenwind): Այսպէս և մեր քաջքերը կապուած են պտուտահողմի հետ, որ կոչւում է քաջքաքամի: Էլբեր և քաջքեր, երկուսն ևս մարդկանց զարնում են և մարդու խելք թռցնում, խելագարեցնում: Այդպիսիք կոչում են գերմանացոց մէջ Elbentrottsch, Elbst, Drut և չն. իսկ մեր մէջ քաջքակոխ, քաջքակալ, Նոքա երկուսն ևս, իբրև քամու ոգիներ, գող ու խաբերայ են, — գողանում են զանազան բաներ, մոլորեցնում են մարդոց, ճանապարհից շեղում, տանում ամայի տեղեր, կամ ժայռերից ներքև գլորում և նմաններ: Յաճախ մարդկանց երեխաներն ևս գողանում են և տեղն իրենցը գնում: Իբրև հողմի ոգիներ նոքա երկուսն

ևս գրաւիչ երաժշտութիւն ունին. և մեր ու
գերմանացոց մէջ ևս նոցա միշտ տեսնում
են խմբով պարելիս, երգելիս ու, նուազեցիտ
կամ, ինչպէս ասում են, հարսանիք անելիս:
Երբեմն տղամարդկանց ու կանանց խաբում,
ձգում են իրենց ամբօխ — եզնազի, մէջ
սպանելու կամ մնասելու նպատակով: Բայց
միշտ չեն մնասում, օգնում էլ են: Նոցա
բնակաբանները քաջքատուն, քաջարար, քաջ-
քաճոր, գերմանացոց մէջ Alfahölen (քաջքա-
ձոր) — են լեռների վրայ, այրերում, որտեղից
լուում է երգ, ու երաժշտութիւն: Այդտե-
ղից ձայն են տալիս մարդոց, երբեմն իբրև
արձագանգ, և նոցա ձայնը կոչում է քաջ-
քաճայն նոյնպէս, և գերմանների մէջ Albleich,
նորուեգերէն, Huldreslaat: Բնակում են նաև
պէր տներում, աշնանն անբնակ թողած տա-
ղաւարներում: Որս են անում, նստում են
զանազան ծառերի վրայ և այնտեղից զար-
նում մարդոց: Կթում են, կամ ծծում են
կովերի (սկզբնապէս ամպերի կովերի) կաթը:
Թողնում ենք ուրիշ նմանութիւնները:
Բերենք քաջքերի և էլբերի մասին պատմած
երկու զրոյց ևս: Մի զրոյցով նոքա հրաւի-
րում են մի տասամէր օգնելու մի ծննդկան
քաջքի և իբրև վարձ տալիս են սօխ, ու

սխտորի կճեպներ, որ սպի է դառնում: Նկատենք որ նոցա օգային ծագման յիշողութիւն է նաև « քաջքը տոյայ է բերում » խօսքը, որ ասում են անձրև և արև եղած ժամանակը: — Աւելի հետաքրքիր է մի ուրիշ զրոյց, որ պատմում է նաև հնդկական ռազմերի մասին: Այդ զրոյցով քաջքերը գողանում են մի կով կամ երինջ, մորթում ուտում են, և յետոյ կովի ոսկորներն ու մորթին սարքելով կենդանացնում են: Բնութեան մի առաւապել է այդ, որ զանազան կերպով են մեկնում: Քաջքերը հոյժի զգիներ են: Աշնանը քամիները թւում է թէ լափում են ամպերի կովը, օրովհետև ձմեռն սյլ ևս անձրև չէ գալիս, իսկ գարնանը նոյն քամիները նորից բերում են կաթնատու կովը, անձրևարար ամպերը: ¹

Այսպէս մեր քաջքերն ոչ միայն իրենց բնութեամբ, այլ և զրոյցներով նոյն են, ինչ որ գերման էլբերը: Իսկ էլբերին համարատաօխան են, ինչպէս ասացինք, հնդկական ռազմերը, որոնց անուններն անգամ նոյն

1. Նոյն զրոյցը պատմում են եւ գերման. Թոռի մասին. միայն սա անպիսի ուրիշ կենդանակերպ՝ քաղե կենդանացնում, ուսեղուց յետոյ ոսկորներն ու մորթին սարքելով. (Mannhardt Germ. Mythen. եր. 42 հս. 57 հս).

նացնում են: ¹ Մկատենք նաև, որ էլբերի բնութեան հետ կապուած է և դարձնութիւնը: Մոքա դարբնում են Aplgeschoss, կայծակ: Դարբնելու աւանդութիւն մեր քաջքերի մասին յայտնի չէ մեզ: Բայց եթէ Արտաւազդին շղթայողները քաջքերն են, ուրեմն և նոքա հմուտ պիտի լինին դարբնելու արուեստին: Եւ արդեօք քաջքերի այդ դարբնելու մի նշանակը չե՞ն կատարում մեր դարբինները կռանը սային բախելով:

Մի անգամ որ մեր քաջքերը նոյն կարգի ոգիներ են, ինչ որ գերման էլբերը և հնդկական ռահուները, այն ժամանակ հասկանալի է դառնում թէ ինչու քաջքերն են վիշապ Արտաւազդին կապողը: Դոքա նոյն հողմի ոգիներն են, Մարուտներ, Ռահուններ, որոնք գործակցում են Ինդրային, երբ սա կապում է վիշապին: Բարձրագոյն էակների, աստուածների անուններն աւելի շուտ են մոռացւում քան ստորին կարգի ոգիներինը: Այդպէս է եղել և մեզնում: Արտաւազդին կապող աստուծու անունը մոռացուած է, իսկ նորա գործակիցներինը պահուած է:

Ամփոփենք մեր եզրակացութիւնը վիպա-

1. E. H. Meyer, Germ. Mythol. եր. 117 Այս գրից ենք վերցրած և գերմանական էլբերի բնութագիրը:

սանքի մասին: Մեր ուսումնասիրութիւնից հետեւում է, որ Հայոց վիպասանք հղել են մի երգասիրտն պատմութեամբ, որի մէջ միացած են պատմական յիշողութիւններ, կենցաղական գծեր և երկու տարբեր առասպել: Պատմական յիշողութիւններն են Արտաշէս Ա., Արտաշէս Բ., (գուցէ և Արտաշէս Գ.), Հրադամիզդ և Տրդատ Ա. թագաւորների ժամանակից ու արարքներից: Առասպելներն են. 1, թագաւորազն Արտաւազդի կռիւը վիշապ Արգաւանի և վիշապների դէմ ու նոցա կոտորելը և 2, վիշապ կամ դև Արտաւազդի կապուիլը քաջքերի ձեռով Մասիսի մէջ:

Վիպասանք սկզբից մինչև վերջը վիպական հետաքրքրութիւն ունեցող մի պատմութեամբ է: Կեդրոնը կազմում է Արտաշէս թագաւորը, որի ձեռից օտար Երուանդը՝ 1 գահը խլում է: Արտաշէսն ազատոււմ է

1. Խորեմացին մեզ միշտ յի օսչիս հաստա որոշելու Երուանդ անուան վիպական լինելը: Երուանդ քաղաւոր մեզ յայտնի յի: Ինկատի ունենալով Երուանդի անունով եղած տեղերը Երուանդաշատ, Երուանդակերտ ելն. ինչպէս եւ այն, որ Երուանդի մասին առասպել եղել է, — Երուանդուքիւնը եւ Վարդան վարդապետի յիշածը թէ Բաշխերն ու վիշապները Երուանդին կապած ունին շի գետ եւ ի մուշա, — հաւանական պէտք է համարել Երուանդ անուան վիպականութիւնը:

հաւատարիմների, Բագրատունի Սմբատի՝ ձեռով: Պարսից (պարթեաց) օգնութեամբ վերականգնուած է իւր հօր գահը, շինուած Արտաշատ: Ալաններն արշաւուած են: Այնուհետեւ գալիս է Արտաշէսի խնամութիւնն Ալանների հետ, վիշապազանց շառասպելը: Արտաշէսի յարաբերութիւնը Դոմեաթիանոսի հետ, եղբայրների իրար նախանձելը և վերջը վիշապ Արտաւազգի փսկուելու առասպելը:

Եթէ մեր վիպասանքի հետ համեմա-

1. Հաւաստի վիպական և Սմբատ անունը, որ եւ շատ խորհնացու վիպաշարեան (Բ. ծր.) յիշուած է եղել առասպելի մէջ: Բայց այդ գլխի մէջ «երկ նրպես Սմբատ, եւ զիկն յկանս գործեաց» եւ բնակիչ Արտաշատ» խորհնացիկ իւր «ճշմարտեայ» պատմութիւնն է անուով, ուստի դժուար է ասել թէ ինչը վիպասանից է վերցրած եւ ինչը խորհնացու իրեն յերիւրածն է: Գուցէ վիպասանից ոչինչ կամ շատ սակաւ բան վերցրած լինի: Հմեմ. Ման. *Визант. Временн., Халат. Арм. Ծոցո.* Եղբեր պոֆ է ասել եւ յայտոյ ծգ, ծդ եւ ծե գլուխների պատմութեան համար, որոնց կուրքիւնը վիպական պոֆ է համարել, քանի որ վիպասանի քովանդակութեան մէջ յիշուած է Արտաշէսի որդիների նախանձը եւ Դոմեթիանոսի գալուստը Հայաստան: Իսկ Յայտոյ ծգ—ծր. գլուխների պատմութիւնը կարող է վերցուած լինել Ժողովրդական Արտաշէս քաղաւորի անունը կապուած յիշողութիւններից, լինի՞ն գրուոր թէ բերանացի: Խորհնացիկ միջոց յէ օւղիս մեզ որոշելու թէ արդեօք վիպասանից օգտուել է այդ գլուխների համար, թէ չէ:

տենք մեր արդի ժողովրդական վէպը, կրօնս-
նենք՝ որ երկուսն՝ ևս նոյն բնաւորութիւնն
ունին: Սասնու ծռերն, ևս մի երգախառն
պատմուածք է, որի մէջ պատմական, կենցա-
ղական կողմեր միացած են: Կեղրմը կազ-
մում է գլխաւոր հերոսի, Դաւթի կ'անբը
մանկութիւնից մինչև մահը, կենսադրական
ձեռք: Վերջը հայրն անիծում է իւր որդի
Մհերին, որ փակւում է Վանայ քարի մէջ,
որով և վէպը վերջանում է:



Բ.

Տ Ի Գ Ի Ա Ն Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը .

Աղբիւրը:— Ումնից է առնում մեր պատ-
մագիրը Տիգրանի պատմութիւնն ու առաս-
պելը: Ի՞նչ գլխի մէջ Տիգրանի գովեստն անե-
լիս յիշում է ժողովրդական երգերը. «Զոր-
մէ ասէին ի հինան մեր, որք բամբռամբն եր-
գէին»: Եւ ապա աւելացնում է, «Եւ զի՛նչ
ինձ ի գիրս յայս արգեւք բան սիրե-
լի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք
և պատմութիւնք յերկարել»: Պատմագիրն
ուրեմն պարզապէս յիշում է, որ «ի հինան»

հնոց մէջ (Պօրենացու ժամանակի նկատմամբ) երգեր ու զովեստներ եղել են և թէ իւր գրածը քաղուած է այդ երգերից:

Այնուհետեւ, սակայն, երգեր չէ յիշում: Եթէ ոչ մի աղբիւր յիշած չլինէր, պէտք է ընդունէինք անհրաժեշտօրէն, որ յաջորդ գլուխների համար ևս իբրև աղբիւր ծառայել են սկզբում յիշած երգերը: Բայց Տիգրանի և Աժդահակի առասպելը պատմելիս (ԻԾ—Լ. գլուխներ) աղբիւրը յիշում է, միայն անորոշ ձևերով. «որ պատմէն» (ԻԾ.), «ասէ» (ԻԶ. ԻԹ. Լ.), «պատմի և այս» (Լ.):

Թէպէտ և ոչ մի տեղ Մար Արասի անունը չէ տալիս, բայց ոմանք Մար Արասից քաղած են համարում այդ պատմութիւնը, ի նկատի ունենալով, թերևս, որ ուրիշ տեղերում Մար Արասի համար գործածած է միայն «ասէ» բայը: Այսպէս հ. Ստեփանէն իւր Թարգմանութեան մէջ (եր. 384. ծան. 149) գրում է. «Որ պատմէն» խօսքը վերաբերում է ոչ թէ Աժդահակին, ինչպէս հասկացել է Էմինն, այլ հաւանօրէն Մար Արաս Կատինային: Եւ նա ինքն այդ խօսքը Թարգմանում է. «ինչպէս պատմում է»: Սակայն չգիտենք ինչ հիման վրայ, «Որ պատմէն» բառացի նշանակում է «պատմողը», ընա որ պատմում է»: Պէտք չէ աչքից փակցնել, որ այդ բայը ե-

զակի է և վերջաւորութիւնն ունի է տառով-
իսկ վերջի ն տառը յօդ է միայն, որ յաճախ
գրւում է բայերի վրայ:

Եթէ «որ պատմէն» նշանակում է «պատ-
մողը», ինքն ըստ ինքեան երևում է, որ
այստեղ տպագրի մէջ մի բառ պահասում է,
զի անհեթեթութիւն է ասել թէ Աժդահակ
տեսնում է ապագան «ի ձեռն անրջականաց
իմն նախատեսութեանց, օրինակաւս այսուիկ
որ պատմէն»:

Մայր Աթոռի գրադարանի ձեռագիր-
ների մէջ գտնում ենք այդ պահաս բայը՝
«ասէ», որով և ճիշտ ընթերցուածը: Այս-
տեղ Ա. տեսակի ձեռագիրները, ինչպէս և Տ.
տեսակից «Տուրք, դեզութիւն» ունեցողները
(№ № 248, 1663, 1668), նոյնպէս և «Տուրք-
դեզութիւն» ունեցողներից երեքը (№ № 249,
1661 և Սարգիս Եպիսկոպոսի ձեռագիրը)¹
ունին. «Օրինակաւս այսուիկ ասէ որ պատմէն»,
այս կերպ է ասում պատմողը:

Ո՞վ է այդ «պատմողը»: Մար Աբան: Ա-
ռաջին հայեացքից զարմանալի է թւում, որ

1. Այս վերջին երեք ձեռագրները կազմում են
մի առանձին խումբ Տ. տեսակի ձեռագրների մէջ: Պէտք է
նկատել, որ ձեռագրների մի մասը «պատմէն» բառը Ե-ով
ունին, որ սխալ է. Մեկ ձեռագրների լեզուքեան մէջ
մտնել չեն ուզում:

Տինգ անգամին ևս մեր պատմագիրն անորոշ է թողնում իւր աղբիւրը և բաւականանում է ասելով առաջին անգամ՝ «ասում է պատմողը» և այնուհետեւ միայն «ասում է»։ Թորենացին, որ այնքան մեծ կշիռ է տալի գրաւոր աղբիւրներին, Մար Աբասի անունն այստեղ ոչուպէս անորոշ թույնել չէր կարող։ Իսկ ընդհակառակն, երգը կամ առասպելը, որ մի անգամ իբրև աղբիւր յիշեալ է Ի. Գլխի մէջ, կարող էր յաջորդ ԻԴ—Լ. գլուխների մէջ անորոշ թողնել, որպէսզի, ինչպէս մի տեղ նկատել է շնորհ. Մխարան¹, յառախ չերևար թէ օգտուել է միայն երգից կամ առասպելից։ Եւ շնորհ. Մխարանն այս հիման վրայ, — ինչպէս և Լ. գլխի մէջ եղած թուելեաց երգերի յիշատակութիւնն ևս Տիգրանի և Աժդահակի պատմութեան համար մի աղբիւր համարելով, — եզրահանում է. «երևում է որ վիպասանների երգը Աժդահակի պատմութեան կեց շարայարում էր եւ նրա սերնդեան՝ Վիշապազունների զայցնեալը։ Իսկուպէս մենք տեսնում ենք Տիգրանի և Աժդահակի հետ հանդէս դուրս գալիս և Արշակունի Արտաշեսին և Սաթենկանը կամ Սաթինկանը, և Արգամ—Արգաւանին և Ար-

1. Խոր. պատմ. Ռուսումն. եր. 74.

աւազդին: Այս բոլորը ամբողջովին առնուած են վիպասանական երգից, նաեւ (sic) թուելեաց երգերից¹:

Վիպասանաց և թուելեաց երգերը, գիտինք, նոյնն են: Վիպասանաց երգ չէ յիշուում Տիգրանի համար, այլ միայն բամբաւամբ երգ: Իսկ որ Խորենացին Աժդահակի և Տիգրանի առասպելի համար օգտուած լինի թուելեաց կամ վիպասանաց երգերից և մսնաւանդ թէ այդ առասպելի մէջ, իբրև շարայարութիւն, դուրս եկած լինէին Արտաշէս, Սաթենիկ, Արգաւան, Արտաւազդ, — այդ մասին ոչ մի հիմք չունինք:

Տեսնենք Խորենացու գրածը, որ մեզ արդէն մի երկու անգամ պատահած է ուրիշ առթիւ: Մեր պատմագիրը Լ. գլխի մէջ պատմելով թէ Տիգրանը Մարաց գերիներին և Աժդահակի կնոջը բնակեցնում է «յարեւելայ ուսոց մեծի լիրինն մինչև ի սահմանս գողթանն», յարում է. «Յայտնեն զայս ճշմարտապէս եւ թուելեացն երգք... յորս շարին բունք երգոցն զԱրտաշիսէ և զորդւոց նորս, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Աժդահակայ վիշապագունս զնոսա կոչելով. զի Աժդահակդ ի մեր լեզուս է վիշապ: Այլ և ճաշ ասեն զործել Արգաւանայ» և ըն:

1. նոյն. եր. 81.

Դ՞նչպէս պէտք է հասկանալ Խորենացու այս խօսքերը:

Նախ՝ յիշատակութեան ձևից. «Եայտնեն զայս ճշմարտապէս եւ թուելեացն երգք», «նաեւ թուելեաց երգերը» պարզ երևում է, որ մեր պատմագիրն իւր արած պատմութեան համար ուրիշ աղբիւր է ունեցել, թէ չէ ինչո՞ւ պէտք է գրէր, թէ այս յայտնում են նաեւ թուելեաց երգերը: Այստեղից ուրիշն բնաւ եզրակացնել կարելի չէ թէ Խորենացին Տիգրանի և Աժդահակի պատմութիւնն առնում է թուելեաց երգերից, այլ այն միայն՝ թէ Խորենացու՝ ուրիշ աղբիւրից առած պատմութեան նման մի բան պիտի պատմուած լինէր և վկայութեան կանչուած թուելեաց երգերի մէջ:

Ապա՝ կարելի չէ ընդունել մինչև անգամ թէ թուելեաց երգերը վկայութեան են կոչուած Տիգրանի, եւ Աժդահակի ամբողջ պատմութեան համար: Խորենացու խօսքերը մեզ իրաւունք չեն տալիս այդպէս հասկանալու: Ուրիշ խօսքով, «այս» գերանուան տակ ոչ թէ Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութիւնը կարելի է հասկանալ, այլ բնականօրէն միայն Լ. գլխի պատմութեան երկրորդ մասը, թէ Աժդահակի զարմերը, նորա կին Անոյշը և մարացի գերիներ-

ըր բնակում են Մասիսի մերձակայքում։
Թէ այդպէս պէտք է հասկանալ այդ երևում
է հետեւեալներից։

Առաջին՝ պատմագիրը պարզ ասում է
թէ Թուելեաց երգերի մէջ պատմում է
«զԱրտաշիսէ և զորդւոց նորա» և թէ այդ
երգերը յիշում են «այլաբանաբար եւ (նաև)
զզարմիցն Աժդահակայ՝ վիշապազունս զնուսս
կոչելով»։ Ուրեմն Թուելեաց երգերը խօսում
են իսկապէս Արտաշէսի և նորա որդիների
մասին, և յիշում են նաեւ վիշապազունք։
Իսկ «զարմք Աժդահակայ», որ Խորենացին
հասկանում է իբրև Մարք, ինչպէս զիտենք,
Խորենացու մեկնութիւնն է, որ նա ուրիշ-
ներից, առասպելը պատմողներից է առնում
ԾԹէ այդ մեկնութեան սկզբնական աղբիւրը
նոյն իսկ վիպասանները եղած լինին, «մար-
դիկ կողմանն զինաւէտ գաւառին Գողթան», —
մի բան որ շատ հաւանական է, — դարձեալ
Խորենացու խօսքերից այսքանը միայն կարե-
լի է եզրակացնել թէ վիպասանները Թուե-
լեաց երգերի մէջ պատմել են Արտաշէսի և
նորա որդիների հետ և վիշապազանց կամ
վիշապների մասին, բայց Աժդահակի զարմեր,
այսինքն Մարք են համարել այդ վիշապա-
զունք։ Որպէսզի Տիգրանի և Աժդահակի ամ-
բողջ պատմութիւնն էլ հետը հասկանայինք,

պատմագիրը երգերի բովանդակութիւնը գոնէ հետևեալ ձևով պէտք է բերած լինէր. «Յորս շարին բանք երգոցն եւ զԱրտաշիսէ և զորդւոց նորա», ընամւ Արտաշէսի և նորա որդիների մասին»: Բայց քանի որ այդ շահեւ շաղկապն ևս չկայ, ուստի ոչ մի ձևով կարելի չէ հասկանալ թէ թուելեաց երգերի մէջ եղել է Արտաշէսի, նորա որդիների ու վիշազանց պատմութեան հետ նաև Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութիւնը: Եզրակացութիւնը պարզ է: Եթէ թուելեաց երգերի բովանդակութեան մէջ ոչ մի ակնարկութիւն չկայ Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութեան վրայ, ուստի և հիմունք չկայ կարծելու. թէ պատմագիրն այդ պատմութեան համար վկայութեան կոչած լինի թուելեաց երգերը:

Երկրորդ՝ «այս, դերանուան տակ Տիգրանի և Աժդահակի ամբողջ պատմութիւնը կարելի չէ հասկանալ, որովհետև մինչդեռ պատմագիրն այդ պատմութեան մասին յիշատակութիւն չէ անում երգերի բովանդակութեան մէջ, յատկապէս և մանրամասն կանգ է առնում Մասիսի վիշապազանց վրայ: Ես բերում է թուելեաց երգերից մի քանի հատուածներ, որոնք, իրեն յորենացու խօսքով, են «անյայտ իւր վիշապաց, որք են

յազատն ի վեր ի Մասիս: Իրաւունք չունինք կարծելու թէ նա աննպատակ և անկապ բան է անում: Եթէ նա իւր վերեւում գրած պատմութեան համար վկայութեան է կանչում թուելեաց երգերը, բերելով անոնց բովանդակութիւնը, ըստ ինքեան հասկանալի է, որ ներքեի վկայութիւնը և բերած կտորները մի հաստատութիւն պիտի համարուին վերեի պատմութեան համար և յարմարուեն այդ պատմութեանը: Արդ, վերեւում պատմել է թէ Աժդահակի առաջին կինն Անոյշ և բազումք ի սերմանէ Աժդահակայ և ուրիշ շատ մարացի գերիներ բնակում են յարեւելայ ուսոց մեծի լերինս, յանդորրութեան սպառուածի փլածի մեծի լերինս, առ ոտամբ լերինն (Մասեաց). իսկ ներքեւում նա վկայութեան կօշելով թուելեաց երգերը, առանձնապէս կանգ է առնում Մասիսի վիշապների կամ վիշապազանց վրայ, որ ինչպէս գիտենք, հասկանում է իբրև մարք և զարմք Աժդահակայ: Ետտ պարզ է ուրևմն, որ ներքեւում գրած Մասիսի վիշապների ու վիշապազանց (=մարաց, զարմից Աժդահակայ ըստ մեկնութեան) առասպելի կտորները բերուած են իբրև վկայութիւն վերեւում գրած պատմութեան համար թէ Անոյշ և Մարաց գերիները, զարմք Աժդահակայ բնակած են Մասիսի ստորոտներում:

Այսպէս, Խորենացու յայդ վկայութիւնից տեսնում ենք նախ՝ որ նա Տիգրանի եւ Աժդահակի պատմութիւնն ամբողջ ուրիշ աղբիւրից է առնում և ոչ թէ թուեւեաց երգերից: Եւ ապա՝ վերջին երգերը, այն էլ «Ճշմարտապատմութիւն» շինած, վիշապք և վիշապազունք մեկնած իբրև մարք և զարմք Աժդահակայ, վկայութեան են կոչուած պատմութեան միայն վերջին մասի համար, որ է «վասն Անուշայ առաջին կնոջն Աժդահակայ և վասն բնակութեան գերւոյն» Մարաց առոտամբ լերինն Մասեաց:

Եթէ թուեւեաց կամ վիպասանաց երգերից չէ առած Տիգրանի և Աժդահակի պատմութիւնը, կարող է ուրիշ երգերից առած լինել: Ըստ ինքեան մի անհաւանական բան չէ այդ, բայց մենք ընդունել չենք կարող: Իբրև միակ հիմունք զուցէ կարողանար ծառայել այն առարկութիւնը թէ ի՞նչ — Լ. գլուխների մէջ անորոշ թողած ձևերը՝ «ասէ», «որ պատմէն», կարող են նախընթաց ԻԴ. գլխի մէջ յիշուած երգերին վերաբերել: Արդարև, թուեւեաց երգերի բովանդակութեան մէջ (Ա. Բ.) մի տեղ երգի համար եզակի «ասէ» բայն է գործածած. «Նա անց ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակիրտ»: Սակայն երգերի համար այս եզակի

«ասէ» ընթերցուածը շատ կասկածելի է, քանի որ նոյն տեղում ութ տողի մէջ երեք անգամ յոգնակի «ասեն» ենք գտնում: Իսկ մի անգամ «ասէ»: Ուրիշ տեղերում ևս երգերի և առասպելի համար յոգնակի թուով է դնում բայը: Ծեղարձեալ, եթէ Աժգահակի և Տիգրանի առասպելի մէջ լոկ «ասէ» բայը այսպէս երգի համար հասկանալ աշխատենք, ոչ մի ձևով կարելի չէ աղբիւրի առաջին անգամ յիշատակութիւնը. «ասէ որ պատմէն» երգի համար հասկանալ: Մի՞թէ երգի համար կարելի է ասել թէ «ասում է նա» որ պատմում է պատմողը: Այդ «պատմողի» համար է դրած և յաջորդ «ասէ» ձևերը:

Ո՞վ է արդ այդ «պատմողը», որի անունը չէ տալի Մորենացին: Արդեօք Մար Աբաս: Այս պիտի լինէր հարկաւ առաջին ենթադրութիւնը: Սակայն Մորենացու Մար Աբասից օգտուելու եղանակի ուսումնասիրութիւնը և ապա Մար Աբասի (ըստ Մորենացու) և Անանունի (որ Մար Աբասից է առած) համեմատութիւնը ցոյց կը տայ մեզ, որ այստեղ Մար Աբաս չէ նորա աղբիւրը:

Մար Աբաս եւ Անանուն:— Մորենացին Մար Աբասից օգտուելիս կամ նորա անունն է տալի, կամ պատմագիրն, նոյն պատմագիրն, ժամանակագիրն կոչում նորան: Ա. զրքի Թ.

գլխի մէջ դնում է իւր ճրագիրը: «Արդ ի նոյն մատենէ (Մար Արասի) սկսեալ ասացից Յապետոսթէ, Մերոզ, Սիրասթ, Թակլազ, որ է Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմէ Յետ որոյ նոյն ժամանակագիր (Մար Արաս) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակ, և գալլան ի կարգի, զորոյ յառաջագոյն ասացաք»: Արգ, յառաջագոյն յիշած անունների կարգը (ցանկը) գտնում ենք Ե. գլխի մէջ այսպէս. Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արմենակ, Արմայիս, Ամասիս, Գեղամ, Հարմայ, Արամ, Արա, Կընշանակէ Խորենացին Հալկից մինչև Արա գեղեցիկ պիտի քաղէ Մար Արասից: Այդպէս էլ արել է նա, մի քանի բան միայն ուրիշներից առած, աւելացրած է: Ուշագրութիւն պիտի դարձնել այն համաձայնութի վրայ, որ ինչ որ Խորենացին Մար Արասից քաղած է դնում, զրեթէ բոլորը կայ Անանունի (Մար Արաս Մծուրնացու) մէջ: Այստեղ մի քանի բան միայն համառօտ է ինչպէս Արամի անունն է միայն յիշուած: Զէ յիշուած Շամիրամի մահուան մասին միայն: Անշուշտ չկան և այն ամենը, որ

1. Ենոթ. Միաբանը Շամիրամի մահը Խորենացու մէջ Մար Արասից քաղած չի համարում, այլ առասպելից: Երկ այս հայեացքը, որ սակայն կասկածեցի է՝ ճիշտ չիմի, այն ժամանակ Շամիրամի մահուան պատճառքները չէր էլ կարող հարկաւ չիեն Սևանունի մէջ:

Թորենացին ուրիշ աղբիւրից է առնում: Ինչպէս ինչ որ ՃԲ. գլխի մէջ, Մար Աբասից օգտուելուց յետոյ՝ աղբիւրը փոխելով, գրում է անորոշ ձևով «ասեն» «ասին» «ասի» Բզնունեաց, Մանաւազեանց և Խոռխոռունեաց մասին: Չկան Անանունի մէջ նաև Արագած, Երասխի, Երիսկի, Փառախոտ, Յուլակերտ, Մասիս, Գեղ, Գեղաքունի, Սիւնիք (Սիսական), Գեղամի, Գառնի անունների ստուգարանութիւնները կամ այն պատճառով որ Անանունը համառօտ է, կամ թէ Թորենացու իրեն յարմարեցրածներն են ուրիշներից առնելով կամ իրենից: Եւ այս աւելի հասանական է:

ԺՁ. գլխի պատմութիւնը, Վան քաղաքի շինութեան նկարագիրը Թորենացին իրենից է առնում, զննելով իրրև աղբիւր. «որպէս ասեն», «որպէս լսեմք» եւն: Ուստի և այս նոյնպէս չկայ Անանունի մէջ: Մնացածը գրեթէ բոլորը՝ ինչ որ Մար Աբասից է առնում, Աշտարակաշինութիւնից մինչև Արա գեղեցիկ և Ասորեստանցոց աիրապետութիւնը, գտնում ենք Անանունի մէջ:

Այնուհետև արդէն Թորենացի և Անանուն տարբերում են: Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ Թորենացին Արա գեղեցիկից յետոյ ինչպէս ինքն ստում է, զանտ-

զան՝ աղբիւրներից՝ «յարմարելով կարգում է՝ իւր պատմութիւնը: Մար Աբասն անշուշտ մնում է իբրև աղբիւր, բայց նա միակ և գլխաւոր աղբիւրը չէ: Ուստի և նա ԺԹ. գլուխն սկսում է աղբիւրների մանրամասն յիշատակութեամբ և թէ ինքն ինչպէս է օգտուում այդ աղբիւրներից: Մենք այդ հատուածն ամբողջ կարտագրենք, զի յետոյ էլ պիտի պէտք գայ մեզ:

«Որ ինչ զկնի մահուանն Շամիրամայ, Յարմարեալ զամենայն կարգեցից քեզ ի գիրս յայտոսիկ (այսինքն Ա. գրքի մէջ) զազգիս մերոյ զաւագագոյն զարս և զնախնիս, և որ ինչ վասն սոցա զրոյցք և իրակութիւնք իւրաքանչիւր, ոչ ինչ կամամածական և ոչ ինչ անպատշաճ ի սմա յարմարելով՝ բան, այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեաց ապա եւ որ ինչ ի բանից արսնց իմաստնց եւ յայտոսիկ իւրախոհակաց, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս: Եւ ասեմք լինել արդարաբան ի պատմութեանս յայսմիկ ըստ մերոյ յօժարութեան և ուղղամտութեան. իսկ ըստ որոց հաւաքումն, Աստուծոյ լինել յայանիս, և մարդկան գովելիս կամ բասրելիս, և մեք այնոցիկ օտար և բացակացեալ, Բայց զուգութիւն բարբառոյ և հաւասարութիւն թուոյ կարգի պատանեաց՝ զճշմարտութիւն աշխատասիրութեանս մերոյ ակնարկէ. եւ այսոցիկ այսպէս կարգելոց, կամ հաւաստի կամ դոյղն

1. Ա. տեսակի մեռագիրներն ունին «յօրինելով», № 616, «օրինակելով»:

ինչ կասեալ յարդարոյն, սկսայց ինչ եւ որ ինչ զվնի այսոցիկ ի հիւանան պատմութենէ պիտոյից» (Ա. ԺԹ.):

Աղբիւրների այս ընդհանուր յիշատակութիւնը մնում է մինչև Ա. գրքի վերջը և մինչև Բ. գրքի Թ. գլխի վերջը, ուր յիշում է. «Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Աբաս Կատիւայ»: Կընշանակէ այդ պատմութիւնների համար ի միջի այլոց օգտուել է և Մար Աբասից¹: Բայց պատմութեան ամբողջութիւնը և Խորենացու բառերով ասկնք, «մերոց աւագագոյն արանց և նախնեաց», «մերոց արանց, մանաւանդ Թագաւորաց», «պատանեաց», շնախնեաց մերոց պսակաւորաց» (Ա. իգ) անուանների «կարգը» իրեն պատմագրի «յարմարածն ու կարգածն է»:

Սակայն աղբիւրների այս ընդհանուր յիշատակութիւնից յետոյ՝ նա այս կամ այն պատմութիւնների համար մասնաւոր աղբիւրներ էլ է յիշում: Այսպէս ԺԹ - ԻԱ. գլուխների մէջ յիշուած կան զանազան անորոշ ձևերով աղբիւրներ²: Մար Աբասի անունը ոչ

1. Տես Ա. ք. «Յորմէ (Մար Աբասից) մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի գրուցացս, երկրորդեմբ այժմ ին հարցասիրութեանդ, ձգեչն զմեր բնիկ նախարարութիւնս միևչեւ ցհաղդեացոց Սարգսն պաղղայ, եւ եւս մօտագոչն»:

2. ԺԹ. գլխի մէջ, Գնթունեաց ծագման մասին.

մի անգամ չէ տալի՜: Եւ մենք Անանունի մէջ
եւ սպի պատմութիւնից ոչինչ չենք գտնում:

Ի՞նչ գլխի մէջ Բագրատունեաց ծագման
համար իբրև աղբիւր գնում է նախ անորոշ
ձեերով՝ «ասեն» և ապա որոշ ձեով՝ «ասէ
պատմագիրն» (Մար Աբաս): Եւ մենք Անա-
նունի մէջ գտնում ենք յիշուած Բագրա-
տունեաց ծագման մասին (Սերբէ-նուհեր. 9):

Ի՞նչ գլխի մէջ Սենեքերիմի մասին խո-
սելիս, երկու անգամ յիշում է սպատմագի-

«Ստադեալ հաւաստի գտաք ... զոր եւ բարձ արանց ազգի
յայտենի քանակացի գոյ»: Հայկակի համար՝ «ասեն»: Զար-
մայրի համար՝ ոչ մի աղբիւր, բայց յետոյ ԼԲ. գլխի մէջ
ի ճիշդ կանխում է, որ Ասիրիայից սպանուած լինէ Զար-
մայրը: ԻԱ. գլխի մէջ «յորս հազներգութիւնք արգասա-
ւորիմ ի քանս»: Յիշում է թէ Պարոյրի պատմութիւնն
«սոս աշխատաւորացար պատմի»: Վերջն իբրև աղբիւր
ընդհանուր մտնով. «ի հնոցն յիտանաց, քաղաքացոց, ա-
սորեստանեաց եւ պարսից»:

1. Ի. գլխի մէջ Արայեան Արայի համար իբրև աղ-
բիւր ղնում է յոգևակի «ասեն» մտնով եւ անմիջապէս
Անուշաւանի համար շարունակում է. «Բայց յարե
զկարգ քանիցս զկնի աշխարհի օրինակ զայլս»: Գրութեան
այս եղանակից պարզապէս երեւում է, որ ե-
զակի «յարե» խօսքն նոյն աղբիւրի համար է, որի համար
վերեւում յոգևակի «ասեն» է դրած: Արդեօք Մար
Աբասն է այդ աղբիւրը: Հմեռ. Միաքան, Խոր. Պատմ.
Ուս. եր. 73:

րըն»՝ «նոյն պատմագիր» (Մար Աբաս), նախ Արծրունեաց և Գնունեաց, ապա Անգեղ տան ծագման մասին խօսելիս: Եւ դարձեալ Անանունի մէջ գտնոււմ ենք յիշուած Անգեղ տան ծագման մասին (Սերէոս, եր. 6): Բայց որ գլխաւորն է այս իՅ. իԳ. գլուխների մէջ Մար Աբասը յիշուած է ճիշտ այն տեղում և այնպիսի պարականների մէջ, որ շատ նմանութիւն են բերում Անանունին:

Ըստ Անանունի, հայերը Սենեքերիմի մահից յետոյ դուրս են գալիս Ասորեստանցոց իշխանութեան տակից. Արամանեակի (Հայկի) ցեղից չորս տիրապետ — Զարեհ, Արմոգ, Սարհանգ, Շաւաշ — ունենալուց յետոյ հինգերորդի՝ Փառնաւազի ժամանակ հնազանդում են Բաբելացոյ Նաբուպոդոնոսոր թագաւորին: Եւ այնուհետեւ տիրում են հայերին Բաբելացիք, Մարք, Մակեդոնացիք մինչև «ցհամբարձումն Արշակունեաց թագաւորութեանն»: Խորենացին գիտէ Ասորեստանցոց իշխանութիւնից ելնելու այս իրողութիւնը: Միայն նման և մօտիկ լինելով հանդերձ՝ նորա անունների շարքը և թագաւորութեան երկարատեւութիւնը տարբեր են Անանունից: Ըստ Անանունի՝ Սենեքերիմի մահից յետոյ են անկախութիւն ձեռք բերում հայերը և իշխում են Հայկի սերունդները: Ըստ Խորենացու՝ Սենեքերիմի

ժամանակակից Սկայորդուն յաջորդող Պարոյրից է սկսուած հայոց բնիկների, Հայկի սերնդի թագաւորութիւնը: Անանունը Փառնաւազով, յիշելով նորա որդիներին՝ Բաւաւ և Բագարամ¹ վերջացնուած է այդ իշխանութիւնը: Բայց Խորենացին իւր Հայկազանց թագաւորութիւնը ձգուած է և Մարաց և Պարսից թագաւորութիւնների ժամանակ: Ուստի Փառնաւազից¹ յետոյ հինգ լոկ անուններ է դնուած մինչև Տիգրան, երգը յիշելով վերջնիս պատմութեան համար իբրև աղբիւր. և, դարձեալ երգից առնելով, Տիգրանի յաջորդն է դրած Վահագն աստուածը, եւ հետեւեալ մարդ դարձրած: Եւ այնուհետև մինչև Մակեդոնացիք դարձեալ մի քանի լոկ անուններ է շարուած՝ Առաւան, Ներսէհ, Զարեհ, Արմոզ, Բաւաւ, Վան, Վահէ:

Այս եօթն անուններից միջի երեքը նոյն են, ինչ որ Անանունի մէջ՝ սկզբի երկու և վերջի մէկ՝ անունները. Զարեհ, Արմոզ, Սարհաօ, Ծաւաշ, Փառնաւազ, Բաւաւ: Հաւանորէն այս երեք անունը Խորենացին Մար Արասից է առած և չկարողանալով, առանց Տիգրանի ժամանակը խախտելու, Տիգրանից առաջ տեղաւորել, տարել յետ է դրել:

¹. Հս Ծպագրի և Փառնուաս, բայց շատ ձեռագիրների մէջ Փառնաւազ է:

Հարկաւ, նա կարող էր Պարոյր, Հրա-
չեայ, Պաճոյճ, Կոռնակ անուաների տեղ,
Փառնաւազից առաջ Մար Աբասի (ըստ Անա-
նունի) այն հինգ անուաները դնել: Սակայն
նա այդ չէ արել, որովհետեւ Պարոյր և միւս
անուաների համար, ուրիշ աղբիւր է ու-
նեցել և այդ աղբիւրին, ինչպէս յետոյ կը
տեսնենք, աւելի հաւատ է ընծայել քան
Մար Աբասին: Միակ անունը, որ Մար Աբա-
սից առնելով մտցրել է Տիգրանից առաջ ցան-
կի մէջ, դա Փառնաւազն է: Եւ այս առանց
նպատակի չէ: Հարկաւոր էր բաց չթողնել
Բագրատունեաց ծագումը հրէաներից:

Ըստ Մար Աբասի (Մորենացի) Բագրա-
տունիք ծագում են Նարուզոզոնոսորի գե-
րած հրէաներից: Սոցանից մէկին հայոց թա-
գաւորը (որ երևի բարեկամ է Նարուզոզո-
նոսորին) խնդրում է Նարուզոզոնոսորից և
բերում բնակեցնում է իւր երկրում: «և ի
ամանէ ասէ պատմագիրն (Մար Աբաս) լինել
զազգն Բագրատունի»: Արդ, ըստ Անանունի
Նարուզոզոնոսորի ժամանակակիցն է Փառնա-
ւազ, որ և հնազանդում է Նարուզոզոնո-
սորին: Ծիշա է, Անանունի մէջ (եր. 9) Բա-
գրատունեաց նախահայր «Բագարատն Փառա-
զեան» է «յորդուցն Արամենակայ»: նա այս-
տեղ հրէական ծագում չունի: Բայց այդ պի-

տի համարել կամ Անանուէի հեղինակի, այսինքն Մար Աբասից քաղողի մտցրած փոփոխութիւնն, քանի որ, Խորենացու պարզ վկայութեամբ, Բագրատունիք հրէական ծագում ունին ըստ Մար Աբամի. կամ թէ գրչագիրների մտցրած բան պիտի համարել: Եւ այս վերջինը աւելի հաւանական է թուում մեզ: Գրչագիրները շատ հեշտ կարող էին Փառագեան Բագարատին, որ հայոց առաջին արշակունի թագաւորին ընդառաջ է ելնում շփոթել վերևում (եր. 6) յիշուած Բագարամի (Պատկանեանն ուղղում է Բագարատ) հետ, որ նոյնպէս Փառնաւազի որդի է և որդի որդւոց Արամենակայ: Նոյն իսկ Պատկանեանի նման մէկը (Սերէոս. եր. 6. ծան.) Նարուզոդոնոսորի ժամանակակից այս Փառնաւազի որդի Բագարատին շփոթած է երևում Փառագեան Բագարատի հետ, շնայելով որ այս երկուսը ժամանակով իրարուց շատ հեռու են, և նոցա ապրած ժամանակի մէջ կայ Բաբելացոց, Մարաց և Մակեդոնացոց տիրապետութիւնը:

Արդ, եթէ ըստ Մար Աբասի (Անանուէի) Նարուզոդոնոսորի ժամանակակից և նորան հնազանդող է Հայկի սերնդից Փառնաւազ և, Խորենացու պարզ վկայութեամբ, ըստ Մար Աբասի Նարուզոդոնոսորի ժամանակակից հայ-

կազն թագաւորը խնդրում է նորանից Բագրատունեաց նախահօրը՝ ուրեմն մի պատահական բան պիտի չհամարել այն, որ Խորենացու Հայկազն թագաւորների ցանկի մէջ Փառնաւազ անունը գտնում ենք ճիշտ այնտեղ, ուր նա, ըստ Խորենացու ժամանակագրութեան, ժամանակակից է գուրս գալիս Նարեզողոտնոսորին: Ըստ Խորենացու ժամանակագրութեան, (սխալ կամ ուղիղ, այդ մասին չէ մեր խօսքը) Նարեզողոտնոսորն ապրում է ութսուն տարի, «աւելի կամ պակաս»: Սենեքերիմից յետոյ, որի ժամանակակից է մեր Սկայորգին (Ա. իգ.), Արգ, Սկայորգու չորրորդ յաջորդն է Փառնաւազ: Երեք չորս սերունդ ուրեմն պէտք է լեցնէին այդ մօտ ութսուն տարուայ ժամանակամիջոցը: Այսպէս ցանկի մէջ:

Յանկի տակին, սակայն, Բագրատունեաց ծագման մասին գրածով, որ Մար Աբասից է առնում Նարեզողոտնոսորի ժամանակակից է ոչ թէ Փառնաւազը, այլ Փառնաւազի հայրը՝ Հրաչեան, որ և խնդրում է Շամբաթին Նարեզողոտնոսորից: Բայց այստեղ բնագրի ազաւաղում կայ: Գրչագիրների մէջ է միայն Հրաչեան անցել Փառնաւազի տեղը և խիստ պէս վերջինս պէտք է լինի Նարեզողոտնոսորից Շամբաթին խնդրողը:

Թագաւորների իննանուն ցանկի Երուանդ
աակաւակեաց և Տիգրան անուններից յետոյ
գտնում ենք հետեւեալը. «Բանգի և վերջին
Երուանդս¹ և Տիգրան ի սոցանէ ըստ յուսոց
կոչեցեալ ասեմ արդեւք. ոչ կարի հեռագոյն
գոլով ժամանակին, յիշեցուք զանուանս զայ-
սոսիկ: Հրաչեայ. սա կոչի վասն առաւել պայ-
ծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Առ
սովաւ ասեն կեցեալ զԾաբուզողոնոսոր արքայ
բարիլացւոց» ... Հ. Ստեփանէն (եր. 378 ծա-
նօթ. 133) նկատում է, որ այս հասուածի
առաջին մասը (մինչև Հրաչեայ) անհասկանա-
լի է բոլոր թարգմանիչներին: Եւ արդարև,
եթէ Երուանդ և Տիգրան անուններն արդէն
յիշուած կան ցանկի մէջ, էլ ի՞նչ իմաստ ու-
նի ասել թէ, որովհետև վերջին Երուանդն և
Տիգրան և ինչ, ուստի յիշենք անունները²: Հ.
Ստեփանէն այդտեղ ընագիրն աղաւաղուած է
համարում և աղաւաղումը գտնում է «ան-

1. Չնուազիրենքի մէջ նաև սուանց u սառի. «Ե-
րուանդ եւ Տիգրան», այլ «զվերջին Երուանդ եւ Տիգրան»
եղև:

2. Այդ պատճառով և անշուշտ ապառնի յիշեցուի
մեր դարձել անցեալ՝ յիշեցաք (№ 1665), յշգ (= յիշ-
եաց ?) ոք (№ 1671), յիշեց (= յիշեաց) ոք (№ 616).
Վերջին յշգ, յիշեց մեւերն ունին գլխին պատիւ նշանը. իսկ
ոք առանձին և գրուած:

տեղի կէտադրութեան» մէջ, որ ուղղում է «արդեօք» բառից յետոյ եղած, միջակէտը ստորակէտ դարձնելով, իսկ «ժամանակին» բառից յետոյ ստորակէտի տեղ վերջակէտ դնելով: Եւ այնուհետեւ, Երուանդ և Տիգրան անուններն ընդունելով Երուանդ երկրորդի և Արշակունի Տիգրանի համար սասած, Թարգմանում է այդ հատուածը. «Վերջին Երուանդ [Երկրորդ] և Տիգրան [Արշակունի] թերևս սոցա [հայկազն Երուանդի և Տիգրանի] անունով են կոչուած, սոցա նմանող լինելու յուսով, միջոցը շատ հեռու չլինելով: Յիշենք այս անունները» . . . :

Հ. Ստեփանէն շատ ճիշտ ըմբռնել է սխալը և այդ հատուածի իմաստը. և այս վիճակի կարելի չէ համարել: Որովհետեւ Խորենացին «սա» դերանունն է միշտ գործածում ցանկի մէջ յիշուած վերջին անուան համար (օրինակ Յեսուէի, Զարմայրի համար), ուստի և «ի սոցանէ» դերանունան տակ պէտք է հասկանալ ցանկի վերջին երկու անունը՝ Երուանդ սակաւակեաց և Տիգրան: Իսկ Տիգրանները նա որոշում է առաջին, միջին և վերջին անուաներով: (Բ. ժդ. կդ.), Երուանդ սակաւակեացին անուանում է առաջին (Բ. կե), ուստի կարող էր Արշակունի Երուանդին ևս վերջին անուանել: Միւս կողմից չբա-

յուսոյ կոչել» նոյն իմաստով գտնոււմ ենք Խորենացու մէջ՝ և ուրիշ տեղ (Բ. Ճէ.). «Որոյ որդի իւր մեծահասակ և ուժեղ, Սամսոն անուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է հրէիցն՝ «ըստ յուսոյ զնախննացն կոչել անունանս»: Իսկ սկզբի քանզի շողկապը շատ յաճախ «որովհետեւ» չէ նշանակուամ այլ միայն եւ շողկապի իմաստ ունի: Այսպէս, այդ անհասկանալի համարուած հատուածը կատարելապէս պարզուած է՝ կէտադրութիւնն ուղղուած լինելով: Տեսնենք շարունակութիւնը:

Այնուհետեւ Խորենացին գրում է յոգնակի թուով. «Յիշեսցուք զանուննս զայսոսիկ: Այդ յիշելիք անունների տակ ուրեմն այլ ևս Երուանդ և Տիգրան հասկանալ կարելի չէ, այլ ուրիշ անուններ պիտի լինին: Բացի այդ՝ յոգնակի թիւը ցոյց է տալիս, ետեից պիտի յիշուին մէկից աւելի անուններ: Սակայն մենք գտնում ենք միայն մի անուն. «Հրաչեայ. սա կոչի...: Առ յովաւ տասն»...: Կընշանակէ այստեղ մի անուն պակասում է, և յատկապէս «առ սովաւ» խօսքից առաջ, որովհետեւ դրածի իմաստն էլ ուրիշ ոչ մի տեղ թոյլ չի տալ նոր անուն մտցնել: Արդ, ի նկատի ունենալով, որ այդ պակասող անունը կրողը Նաբուգոդոնոսորի ժամանակակից պիտի լինի, և որ ըստ Խորենացու իննանուն

ցանկի Փառնաւազն է ընկնում Նարուգոդոնոսորի ժամանակները, և որ ըստ Մար Աբասի (Անանուն) Փառնաւազն է Նարուգոդոնոսորի ժամանակակից, — ասել է այդ պակասած անունն Փառնաւազ ևս պէտք է լինի: Այսպիսով վերականգնած բնագիրը կըստանանք: «Յիշեսցուք զանուանս զայսոսիկ: Հրաչեայսա կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Փառնաւազ. առ սոփաւ ասնն կեցեալ զՆարուգոդոնոսոր արքայ բարիւացւոց» ...

Մի նկատողութիւն ևս: Խորինացու ձեռագիրներից երևում է, որ ԺԹ. գլխի անունների ցանկն ու մի քանի անունների մասին զրած ծանօթութիւնները, ինչպէս և ԻԲ. գլուխը, մանաւանդ վերջը, խիստ աղաւաղուած են: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու՝ ասենք, որ թեթեւ հայեացքով անգամ մարդ իսկոյն տեսնում է, որ անունների ցանկն այնպէս վերելից ներքեւ սիւնակներով չէ գրուած եղել բնագրի մէջ, ինչպէս այժմ տպագրի մէջ է և շատ ձեռագիրների մէջ: Այլ մի տողի վրայ, ետեւէ ետեւ. նախ երրայեցոց, յետոյ քաղդէացոց և ապա հայոց անունները: Իսկ այս կամ այն անունի վրայ եղած ծանօթութիւնները անմիջապէս շարունակութեամբ գրուած են եղել անունից

յետոյ: Այսպէս, երբայեցոց ցանկը սկզբից մինչև Յեսուս որից յետոյ անմիջապէս պէտք է շարունակել. «ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ կարգի... զայս և բարք ազգի յայտնեն քանոնացի գոյ»: Այստեղից անմիջապէս պէտք է շարունակել երբայեցոց անունները բոլորը մինչև վերջը և ետևից քաղզէացոց և ապա հայոց անուններն այսպէս. «Գոթթոնիէլ, Աւովդ... Դաւիթ և որ ի կարգին: Զաղդէացոց՝ Առիոս, Առալիոս, Սուսառիս... Տետամոս: Իսկ մերոյն Արայի որդի՝ Արայ ի Շամիրամայ կսչեցեալ, և զգործ վերակացութեան աշխարհիս նմա հաւատացեալ: Իսկ նորա՝ Անուշաւան, Պարէտ... Սուր: Առ սովաւ ասեն Յեսու որդի Յաւեայ²: Հաւանակ... Հայկակ: Զամանէ³ ասեն լինել... և մեռանել ի նմին: Ամ-

1. Տպագրի մէջ լիան այս երկու բառերը՝ որ գրուում ենք շատ ձեռագիրների մէջ, և որ ստորագրուած են:

2. Այս ընդգծած բառերը նոյնպէս լիան Տպագրի մէջ:

3. Չև. № 616.: Տպագրի և շատ ձեռագիրների մէջ զՀայկակ, զՀայկակայ, ի Հայկակ և զն ձեռերը: Ճիշտ ընթերցուածը պէտք է գումանէ ձեռն ընդունել, քանի որ մնացածները բոյւրն ևս «սա» դերանունով ունին: Հայկակ անուան կրկնութիւնը յառաջ է եկել գրչագիրների մէջ սխնակներով և իբրև ծանօթութիւն գրութեան մէջ մտնելուց յետոյ, անորոշութիւն յառաջացնելու համար անշուշտ:

պակ ... Զարմայր: Սա օգնական Պրիամու ...
ելլենացուոց: Պերճ ... Սկայորգի:—Յոյն ձևով
և ՌԲ. զլխի մէջ մի տողի վրայ, ետեւէ ետեւ.
«Մարաց առաջին Վարբակիս ... Աժգահակ:
Իսկ մեր առաջին ի Վարբակայ պսակեալ Պա-
րոյր ... Տիգրան»:—Ինչպէս որ այստեղ հա-
յոց անուներն սկսում են «իսկ մեր առա-
ջին» ... խօսքերով, ճիշտ այդպէս և ԺԹ.
զլխի մէջ հայոց անուների ցանկն սկսուած
է եղել. «իսկ մերոյն Արայի որդի» ... խօսքով:
Այս պատճառով հայոց անուների զլխին
զրած «հայոց» բառը նոր մտցրած բան պէտք
է համարել, անհրաժեշտաբար առաջ եկած
անուները սիւնակներով զրելուց: ¹

Երբ այսպէս տեսնում ենք թէ ինչպէս
Խորենացին այս կամ այն անունի վրայ եղած
ծանօթութիւնն անմիջապէս անունից յետոյ

1. Սիւնակներով գրելուց յետոյ, ինչպէս Տպագրի
մէջ է, Արայ անունն հետից ծանօթութիւն դնել իսկ
շաղկապով, «իսկ մերոյն Արայի որդի» ... մի անմիջ բան
է: Եթէ այդ հասուածը ծանօթութիւն չիկեր, այն ծանա-
կակ Խորենացին իւր սովորական ձևով կրգրէր. «Ս ս մե-
րոյն Արայի որդի» ...: Այդ աղաւաղուած դասաւորու-
թիւնից առաջացած մի սխալ բարգմանութիւն է արել Հ.
Ստեփանեան, իսկ շաղկապը դարձնելով իսկապէս մակ-
բայ, Այստեղ իսկ շաղկապով սկսում է Հայոց անունները
նոյն ձևով, ինչպէս և մեր բազաւորների անունները:

կցում է «սա» դերանունով, այն ժամանակ հասկանալի է լինում թէ ինչու Հրաչեայի և Փառնաւազի մասին գրելիք ծանօթութիւնն սկսում է «յիշեցուք զանուանս զայսոսիկ» խօսքերով: Այստեղ գրելիքն անմիջապէս անունների կտեւից չէ դրած, ուստի և պէտք էր անունները կրկնել և նոր դնել ասելիքը: «Յիշեցուք զանուանս զայսոսիկ, Հրաչեայ, սա կոչի Փառնաւազ, առ սովաւ ասեն» Այս ժամանակ, ծիշտ դատելով, անհրաժեշտ է Հրաչեայ և Փառնաւազ անուններից յետոյ եղած միջակէտը (իսկապէս բութը), որ զըտնում ենք ձեռագիրների մէջ, և որ ի զուր տեղն աւելորդ են համարում ոմանք (Հմմտ. Ա. դ. Ագամ նախաստեղծ, սա կեցեալ . . .):

Բնագիրն այսպէս վերականգնելուց յետոյ բոլորովին պարզ երևում է Խորենացու Մար Աբասի և Անանունի համեմատութիւնը: Երկու դէպքում էլ Նարեզգոդոնոսորի ժամանակակից է Փառնաւազը: Եւ քանի որ Խորենացին պարզ յայտնում է, որ ըստ Մար Աբասի Բագրատունիք ծագում են այն հրէայից, որին Փառնաւազն ստանում է Նարեզգոդոնոսորից, ուստի և շատ պարզ է, որ Փառնաւազ անունը ուրիշ աղբիւրից առած ցանկի մէջ մտցրած է Մար Աբասից, միմիայն Բագրատունեաց ծագման պատմութիւնը բաց չթողնելու հա-

մար¹։ Այսպիսի բան հեշտութեամբ կարող էր անել, քանի որ նա «յարմարելով է կարգում ամենը»։ Իսկ թէ այդպէս Մար Աբասից առաժ Փառնաւաղը կը դառնար մի ուրիշ ազբիւրից առաժ Հրաչեայի որդի, ուստի և «դոյզն ինչ կասեալ յարդարոյն» այդ կարող չէր արգելք լինել մեր պատմագրին՝ լրեն «արդարաբան» կոչելու։ Բաւական էր, որ նա հաւատացած էր, որ Մար Աբաս ճիշտ է գրում, և ինքը ճշտութեամբ առնելով հայկազն Փառնաւաղին հայկազն թագաւորների շարքի մէջ՝ իւր տեղում և իւր ժամանակին՝ Մարուգոդոնոսորի օրով էր դնում։

Ետրինացին այնուհետեւ էլ չէ յիշում Մար Աբասի անունը։ Ետրանից ուրիշ բան առաժ էլ չէ կարող լինել, քանի որ ինքն էլ — մէկզի դրած Տիգրանի պատմութիւնը, — ուրիշ բան չունի, բացի երգից առաժ Վահագնից և անունների լոկ ցանկից և մի քանի ստուգաբանութիւններից՝ Առաւանից Առաւանեանք, Զարեհից Զարեհաւանիցն ազգ։ Եթէ նոյն իսկ Զարեհ, Արմիզ, Բազամ՝ անունները Մար Աբասից առաժ լինի, սորա անունը աալու կարիք չունէր, մէկ՝ որ սոսկ

1. ԻՅ. գլխի վերջի մասը, որ Է Բագրատունեաց ծագունը, Ա. ձեռագիրների մէջ առանձին վերճագիր ունի։

անուաններ են. մէկ էլ որ այնքան ազատութեամբ է օգտուում, ժամանակով յետ տանելով գոցա:

Մենք թողնում ենք Բ. գրքի Վարդաշակի և Արշակի պատմութիւնները համեմատել Անանունի հետ:

Խորենացու Մար Աբասի և Անանունի այս համեմատութիւնն արդէն պարզ ցոյց է տալի մեզ, որ ինչ որ Խորենացին Մար Աբասից է առնում՝ Մար Աբասի անունով էլ յիշում է: Ձէ խորշում նոյն իսկ միւլնոյն դիւի մէջ, մի քանի տող յետոյ, նորա անունը կրկնելուց: Մար Աբասի համար առանց անունը տալու միայն «ասէ» գործ է ածում Ժ. ԺԱ. և ԺԲ. գլուխների մէջ, բայց միշտ այն դէպքում, երբ վերևում մի երկու անգամ յիշել է նորա անունը և յայտնել, որ նորանից է քաղում: Իսկ որտեղ Մար Աբասի անունը չէ տալի, այդ առած է ուրիշ աղբիւրից, ուստի և չկայ Անանունի մէջ, որ պատահականութիւն համարել չենք կարող:

Այս ի նկատի ունենալով՝ զարմանալի կրլինէր, որ մեր պատմագիրը Մար Աբասից քաղելիս միշտ յիշէր նորա անունը. յիշէր նաև զանազան աղբիւրներից «յարմարած ու կարգած» պատմութեան մէջ. ետեւէ ետեւ կրկնէր անգամ փոքրիկ դէպքերում (Ա. իբ. իգ),

իսկ Տիգրանի և Աժդահակի ընդարձակ պատմութեան մէջ զանց անէր այդ Պարզ դատողութիւնն ասում է, որ Տիգրանի եւ Աժդահակի առասպելը կարող չէ Մար Արասից առած լինել:

Միւս կողմից՝ այս յենում է և անոր վրայ, որ Տիգրանի և Աժդահակի մասին յիշատակութիւն անգամ չկայ Անանունի մէջ: Իսկ մենք տեսանք թէ սրբան զուգընթացաբար իրար համեմատ են Խորենացու յանուանէ յիշած Մար Արասն և Անանունը: Անանունի հեղինակը, Մար Արասից քաղելիս կարող էր դուրս ձգել մի երկու դէպքեր, ինչպէս են Արծրունեաց ու Գնունեաց ծագման պատմութիւնը, թերևս և Շամիրամի մահը: Բայց որ նա դուրս ձգէր Մարաց թագաւորին սպանող ու նորա երկրին տիրող Տիգրանի ընդարձակ ու նշանաւոր պատմութիւնը և, որ գլխաւորն է, ընդհակառակը, Հայկի սերնդի իշխանութիւնը վերջացնէր Նարուգոգոնոսորի ժամանակ և մէջ բերէր Բարեկացոց ու Մարաց իշխանութիւնը հայոց վրայ, — այդ դժուար է ենթադրել: Մնում է, միայն ընդունել, որ Մար Արասի մէջ չէ եղել Տիգրանի մասին յիշատակութիւն, ուստի և չկայ Անանունի մէջ: Փոփոխողը, աւելացնողն ու յարմարողը Խորենացին է և ոչ թէ Անանուն:

Խորեհային ուրեմն, Տիգրանի առասպելն ուրիշ աղբիւրից առնելով՝ հիւսել է իւր պատմութեան մէջ: Կամ աւելի ճիշտ ասած, եթէ Հայկազանց թագաւորներից Փառնաւազի անունն ու Բագրատունեաց ծագման պատմութիւնը (թերեւս և Զարեհ, Արմոզ, Բագամ անունները) Մար Արասից է առած, պատմութեան ամբողջ ծրագիրը, հիմունքը վերցրած է ուրիշ աղբիւրից:

Ո՞րն է այդ աղբիւրը, որի համար «ասէ» «ասէ որ պատմէն» է գնում:

«Հիւսումնս պիտոյից»:—«Չորս հազներգութիւնը»:—Տեսնենք ինչպիսի աղբիւրներ է յիշատակում մեր պատմագիրը ԺԹ. գլխի մէջ: Այստեղ յայտնում է, որ իւր առաջին գրքի մէջ (ի գիրս յայտոսիկ) պիտի յարմարելով կարգէ զամենայն ... զազգիս մերոյ զաւազագոյն զարս և զնախնիս և նոցա մասին եղած պատմութիւնները, ոչ թէ իրենից սարքելով այլ որ ինչ ի գրոց. իսկ ըստ նմանեաց ապա եւ որ ինչ ի քանից արանց իմաստնոց և յայտոսիկ քաջատոհմաց: Այնուհետև յայտնում է, որ ինքն իւր կողմից արդարաբան պիտի լինի, և եթէ սխալ անէ՝ մեղքն իրենը չէ, այլ իւր աղբիւրներինը: Բայց իւր գրածի ճշմարտութեան մի ապա-

ցոյց է համարում «զուգութիւն բարբառոյ (իւր աղբիւրների ?) և հաւասարութիւն թուոյ կարգի (ցանկի) պատանկաց» [մերոց արանց, անշուշտ, եբրայական ցանկի հետ]¹։ Եւ ապա պատմագիրն իւր աղբիւրների այսպիսի ընդհանուր յիշատակութիւնից յետոյ՝ աւելայնում է. «Եւ այսոցիկ այսպէս կարգելոց, ... սկսայց քեզ և որ ինչ գլնի այսոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից»։ Այս հատուածը բառացի նշանակում է. «Այս (անունների կարգն իրենց ծանօթութիւններով) այսպէս կարգելուց յետոյ, պիտի սկսեմ (կարգել կամ պատմել) քեզ սոցանից յետոյ եղածները պիտոյից հիւսման պատմութիւնից» (առնելով)։ Չնայելով որ Խորենացու լեզուն այստեղ շատ պարզ է, բայց և այնպէս հ. Ստեփանէն այդ հատուածը թարգմանած է. «Այս այսպէս կարգելով, ... կըսկսեմ քեզ պատմել այնուհետեւ եղածները պատմական կարգով»։ Պատմել «ի հիւսման պատմութենէ պիտոյից» ոչ մի կերպ կարելի չէ հասկանալ պատմել «պատմական կարգով»։ Բացառական հոլովը «ի պատմութենէ» (որի նախդիրը նախադաս-

1. «Հաւասարութիւն բոլոր կարգի պատմանց» իրօք գտնում եմք ժԹ. գլխի եբրայեցոց ևս հայոց ցանկի անունների մէջ։

յատկացուցի վրայ է դրած) շատ որոշ ցոյց է տալիս, որ այստեղ մի աղբիւրի յիշատակութիւն է անում՝ պատմագիրը, ինչպէս և վերևում դնում է նոյն հոլովով «ի գրոց», «ի բանից արանց իմաստնոց»: Ուրեմն պատմագիրն ասում է թէ նախ այս կամ այն աղբիւրից առնելով՝ պիտի կարգէ մեր նախնիքների անուններն ու նոցա մասին եղած զրոյցները, և ապա պիտի սկսէ պատմել մի զրքից, որ կոչում է «պատմութիւն հիւսման պիտոյից», կամ «հիւսումն պիտոյից»: Ահա մի մասնաւոր աղբիւրի յիշատակութիւն, որի վրայ ուշադրութիւն չեն դարձրել Խորենացու քննադատները:

Խորենացու պատմութեան ո՞ր մասն է այդ աղբիւրից առած: Եթէ «այսոցիկ այսպէս կարգելոց» խօսքի տակ հասկանանք թէ ԺԹ. գլխի մէջ կարգուածները և թէ այնուհետև եկող երեք գլուխները, որոնցից ԻԲ. գլուխն է. «Կարգ թաղաւորաց մերոց» ... այն ժամանակ պէտք է ընդունել, որ այդ աղբիւրը վերաբերում է Տիգրանի պատմութեանը, քանի որ սորանից յետոյ այլ ևս պատմութիւն չկայ, այլ լոկ անուններ են, որոնցից երեքը, ինչպէս տեսանք, հաւանօրէն, Մար Աբասից է առած, իսկ Վահագնի մասին գրածն իւր ականջով լսած երգից: Իսկ եթէ այդ «այսոցիկ այսպէս կար-

գելոց» խօսքի տակ հասկանանք միայն ժԹ. գլխի մէջ կարգած տնուներն ու զրոյցները այն ժամանակ պէտք էր կարծել թէ այդ «Հիւսուեմն պիտոյից» կոչած գիրքն իրրև ազրիւր ծառայել է նաև յաջորդ ի. գլխի պատմութեան համար. «Վասն Արայեսան Արայի և թէ սորա որդի Անուշաւան, որ Սօս անուանիւր»։ Սակայն այդպէս հասկանալ կարելի չէ։ Պատմագիրը պարզապէս ասում է թէ պիտի սկսէ պատմել «որ ինչ զկնի այսոցիկ» այսինքն իւր արդէն կարգած անձերից յետոյ կատարուածները ¹։ Իսկ ի. գլխի պատմութիւնը ոչ թէ ժԹ. գլխի մէջ կարգածներից յետոյ եկողների մի պատմութիւն է, այլ նոյն ժԹ. գլխի մէջ կարգած առաջին երկու անունին է վերաբերում։ Այսպէս հասկանալով, ուրեմն, այդ «Հիւսուեմն պիտոյից» կոչուած աղբիւրից առած պատմութիւնը պիտի որոնենք ոչ առաջ քան իԱ. զլուխը. ասել է Պարոյրի և միւս հայկազն թագաւորների մասին գրածների մէջ։

Եւ այստեղ ահա մենք գտնում ենք դարձեալ մի մասնաւոր աղբիւրի յիշատակութիւն, որ մէջ կրթերենք Ա. օտեսակի ձեռագիրներից։ Եւ այժմ ահա զուարճայայց՝

1. Հմմտ. Բ. հե. «Իսկ որ ինչ զկնի մահուան և նստողու ... պատմե՛ սոյոց համարելով՝ երկրորդեմք»։

ոչ փոքր ինչ կրելով խնդութիւնս հասանելով ի տեղիս յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք¹ ի թագաւորութեան հասանին յաստիճանս Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել եւ քաղումս ասել առարկութիւնս² քանից³. զորոյ⁴ մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի չորս հազներգութիւնս զարգասաւորին ի քանս և զիմաստնոյն և ի մէջ իմաստնոց իմաստնագունի» (Ա. իա):

Ի՞նչ է ասում այստեղ պատմագիրը: Ծանախընթաց գլխի վերջում և այս գլխի սկզբում յայտնում է թէ պիտի թողնէ Ասորեստանցոց թագաւորութեան ժամանակ եղած հայոց աւագագոյն մարդոց ոչ կարևոր

1. Այս սերունդի բառը պակասում է Ա. մեռագիրների մէջ. մեկից Տպագրից եւմ աւելացրած: Տպագիրն այս հատուածի մէջ շատ աղաւաղուած է:

2. «Առարկութիւն» բառի նշանակութեան համար հմեռ. Բ. ժգ. «եւ դարձեալ պատմի առարկութիւնն Կրիւսեայ եւ Նեփսանեքայ»:

3. Տպագրի մէջ՝ առարկութիւնս նառից:

4. Տպագրի մէջ յոգնակի «զորոց», որ յարաբերում է յոգնակի բունով դրած «քաղումս առարկութիւնս քանից (նառից) իսոխն», եւ այսպէս կրկնած է՝ ինչպէս յաճախ՝ այսպիսեաց բանից:

գործերը¹, և ապա ուրախութեամբ յիշելով որ Հայկի սերունդները թագաւորութեան են հասնում, այդ պատճառով (վասն որոյ) արժան է համարում կարճ չկապել ինչպէս վերելում այլ երկար գրել, կամ իւր խօսքով «մեծ գործ կատարել և բազումս ասել առարկութիւնս բանից» (Ճառից), շատ պատմութիւններ անել:

Արդ, որո՞նք են այդ թագաւորների մասին գրելու արժան համարած «մեծ գործն» ու «շատ պատմութիւնը»: Վարրակի և Պարոյրի համար պատմածի մէջ միայն տեսնել չենք կարող այդ «մեծ գործն» ու «շատ պատմութիւնները»: Այդ պատմութիւնն ընդամենը մի տասնութ տողով է անցած, որից մեր Պարոյրին միայն երկու — երեք տող են վերաբերում: «Յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձև և շուք խոստանալով նմա»: Ասել թէ թողնում է Ասորեստանցոց ժամանակի աւագագոյն մարգոց ոչ կարևոր պատմութիւնները և թէ որովհետև Հայկի սերունդները թագա-

1. «Այլ կարի շատ շինի, թէ գամենայն՝ որ ինչ արժան է՝ ապիցեմք ի ճատիս (այս գլխի մէջ) զնախակարգեչոց (վերելում ժԹ. գլխի ցանկի մէջ դրած) արանց զբանս եւ զգործս»: «Թողլով զոչ կարեւորագոյնսն ի բանիս, ասասցուի որ ինչ հարկաւորն է» (Ա. ի. իա):

ւորութեան են հասնում ուստի արժան է համարում մեծ գործ կատարել և շատ բաներ գրել—և այնուհետև գրել միայն տասնութ տո՛ղ, և հայոց մասին իսկապէս երկու երեք տո՛ղ: Այսպէս հասկանալ կարելի չէ, ինչպէս անում են Խորենացու քննադատները:

Այսպէս ուրեմն, այդ գրելու արժան համարած «մեծ գործն, ու շատ պատմութիւնները» պէտք է տեսնել ոչ միայն Պարոյրի, ինչպէս անում են ուրիշները, այլ հայկազանց բոլոր Թագաւորների պատմութեան մէջ, որոնց «սիրելի» «քնիկք և արեան առուք և հաւաստի հարազատք» է տնուանում և որոնց մէջ իսկապէս մի միայն Տիգրանի պատմութիւնն է անում¹:

Ուրիշ ոչ մի կերպ կարելի չէ հասկանալ պատմագրի խօսքը թէ հայկազանց Թագաւորների համար «մեծ գործ» պիտի կատարէ և շատ բաներ» պատմէ²:

1. Այդ «չափ սասնութիւններից» պէտք է դուրս ձգել անշուշտ Ի. Գլուխը՝ Սենեֆերիմի որդոց մասին, որ պատմադիր մոռացած շինելով իւր Տեղում անէ՝ այստեղ, Մար Աբասից առնելով, միջանկեալ է դնում, ընդհատելով հայկազանց քաղաւորների պատմութիւնը:

2. Հ. Ստեփանեան այդ հատուածը բարգմանում է. «Ուստի մենք այստեղ մեծ գործ պիտի կատարենք և պատմենք շատ իրողութիւններ»:

Սակայն այս Խորենացու խօսքերի մի կողմն է միայն: Եւս պարզաբար յիշում է նաև, որ այդ «մեծ գործի» «հիմունքը» կարգացել է մի հեղինակի «Չորս հազներգութիւնների» մէջ, որին այնքան գովում է ինքը, Թէ այդ հեղինակը Մար Աբաս չէ՝ այդ մասին խօսք անգամ չինել չէ կարող (Հմմտ. Միաբան, Խոր. Պատմ. Ուս. եր. 74): Այդ «արգասաւորն ի բանս» մեր պատմագրի ժամանակ շատ յայտնի մի հեղինակ պիտի կղած լինի և հանրածանօթ, և ծանօթ նոյն իսկ Սահակ Բագրատունուն, որ պատմագիրը նորա անունը չէ տալիս:

Հերոգոսի կամ Դիոգոր Սիկիլիացու մէջ որոնել այդ «Չորս հազներգութեանց» հեղինակին, ինչպէս անում է շնորհ Միաբան, լոկ ենթադրութիւններ են: Ինչու պէտք է իւր «մեծ գործի» և «շատ պատմութիւնների» համար իբրև աղբիւր յիշէր Դիոգորին, եթէ սորա գրուածների մէջ, նոյն իսկ շնորհ Միաբանի կարծիքով, հաւանօրէն չկար Պարոյրի մասին անգամ որևէ յիշատակութիւն, էլ չենք ասում Յիպրանի մասին:

Արդարև, «հիմունք» բառը մտածելու տեղիք է տալիս, բայց կարելի չէ՝ հակառակ Խորենացու ասածին՝ այդ բառից եզրակացնել, որ «Չորս հազներգութեանց» մէջ «Խորենացու»

ցին չէ կարդացել Պարոյր — Վարդապէի բուն պատմութիւնը, այլ միայն հիմուէք, այսինքն այնպիսի ըստ որ երաշխաւորում էր Պարոյր — Վարդապէի պատմական գոյութեանը:

Եստի, այդ վկայութիւնն ինչպէս անսանք, այստեղ միայն Պարոյրի և Վարդապէի պատմութեան մասին չէ, ինչպէս ընդունել են մինչև այժմ, այլ հայկազանց թագաւորների մասին ընդհանրապէս Ապա բռնադատ բացարութիւն է ասել թէ մի որևէ մարդու պատմութեան հիմունքն այս կամ այն հեղինակի գրուածի մէջ կարդացած լինել նշանակում է այնպիսի բան կարդացած լինել, որ երաշխաւորում է այդ մարդու պատմական գոյութեանը: Եթէ ես այսօր ասեմ թէ իմ գրած այս ինչ պատմութեան, օրինակ Գէորգ Դ մեծագործ կաթողիկոսի կենսագրութեան, հիմունքը կորդացել եմ այս ինչ հեղինակի այս ինչ գրուածքի մէջ, մի թէ այդ կրնանակէ թէ ես այդ հեղինակի այդ գրուածքի մէջ Գէորգ կաթողիկոսի «բուն պատմութիւնը» չեմ կարդացել, այլ այնպիսի բան, որ «երաշխաւորում է» Գէորգ կաթողիկոսի «պատմական գոյութեանը»: Պարզ հայերէն լեզուով այդ կրնանակէ, որ իմ գրած պատմութեան, կամ կենսագրութեան, հիմունքը, հիմնական, էական մասը կարդացել եմ այդ հեղինակի

գրուածի մէջ:— ուստի և վերջուի նորանկոյ:—
բայց իմ գրած պատմութեան միակ աղ-
բիւրը չէ եղել այդ գրուածքը: այլ ղենցել
եմ և ուրիշ աղբիւրներ:

Այսպէս և երբ Թորենացիս գրուած է
Թէ իւր գրեկիք «մեծ գործի» «շատ պատ-
մութիւններն» այսինքն հայկազանց Թագա-
ւորների պատմութեան «հիմունքը» կարդացել
է «Զորս հագներգութեանց» մէջ, նա ուզում
է ասել Թէ իւր գրած պատմութեան հիմնա-
կան՝ էական մասը կարդացել, ուստի և վերջուի
է այդ գրեկիք: Բայց այդ դեռ չէ նշանակում,
որ նա իւր պատմութիւնն ամբողջ այդ գրեկի
է առել: Հիմնական մասն՝ այո՛, բայց և ու-
րիշ աղբիւր է ունեցել այդ պատմութեան
համար: Եւ եթէ մի փոքր ուշադրութիւն
գարձենք, կրտսենենք, որ այդպէս է և այդ-
պէս էլ վարուում է մեր պատմագիրը: Եւ իւր
հայկազանց Թագաւորների համար ունի մէկից
աւելի աղբիւրներ, առնուազն երեք աղ-
բիւր:

Նախ Մար Աբասը: Մենք տեսանք, որ
Մար Աբասի (որից վերցնում է Անանուն)
մէջ կայ Ասորեստանցիների իշխանութիւնից
յետոյ Հայկի սերնդից իշխողների պատմու-
թիւն: Այդ գիտէ Թորենացին և նա Մար
Աբասից է առնում Նարուզոտնոսորի ժա-

մանակակից հայկազն Փառնաւազի անունն ու պատմութիւնը:

Սրկրորդ աղբիւրն է «Զորս հագներգութիւնը», որից առնում է Խորենացին իւր հայկազանց թագաւորների պատմութեան հիմնական մասը: Այդ իսկ պատճառով Խորենացու պատմութիւնը տարբերում է Մար Աբասից (Անանուն): Այդ տարբերութիւնը տեսել ենք վերևում:

Երրորդ աղբիւրն է ժողովրդական երգը Վահագնի համար:

Ապա, Պարոյրի պատմութիւնն անելուց յետոյ աւելացնում է մեր պատմագիրը. «Այլ այս եթէ առ այլս այլազգաբար պատմի, մի ինչ սքանչանար»: Եթէ այս ակնարկութիւնը Մար Աբասի համար չընդունենք, ուրեմն և մի չորրորդ աղբիւր էլ է ունեցել՝ գոնէ հայկազանց թագաւորութեան սկզբնաւորութեան և Պարոյրի համար, զի խնդիրն այստեղ այդ մասին է:

Ահա ձեզ երեք—չորս աղբիւր հայկազանց թագաւորութեան պատմութեան համար. աղբիւրների որոնց մէջ նոյն պատմութիւնն «այլազգաբար» է պատմուած, այլազգաբար թէ անունների և թէ թագաւորութեան ժամանակի նկատմամբ: Ի՞նչ պիտի անէր խոհուն և դատող պատմագիրը: Անշուշտ,

նա պէտք է բացատրէր, թէ ինչից է առաջացած նոյն պատմութեան այդպէս այլազգաբար» լինելը, և ապա որևէ կշռադատութեամբ, — ի հարկ է ամենն իւր հասկացողութեամբ, — պիտի ընտրութիւն անէր իւր «այլազգ» ազրիւրների մէջ, մէկն առնէր, միւսը թողնէր: Եւ յորենացին այդպէս էլ անուամէ անմիջապէս նոյն գլխի վերջում և յաջորդ (ԻԲ) գլխի սկզբում, հայոց թագաւորների «կարգը կանոնելուց» առաջ:

Ես ասում է. մինչգեռ ուրիշ ազգերի թագաւորների գործերը գրուեցան «յիւրեանցըն յիշողութեանցն, վերակացուաց», մերոնք՝ անիմաստասէր բարք ունենալով՝ այդպիսի բան անել չտուին: Ուստի և նոցա գործերը «մնացին նշանակեալ ի վերջինսն»: Ուրիշ խօսքով մեր թագաւորների ժամանակակիցները չեն գրել նոցա գործերը, այլ ժամանակով շատ հեռու մարդիկ, վերջերն են գրել այդ պատմութիւնները, ուստի և տարբեր կամ այլազգաբար պատմութիւններ են անում:

Բայց ընթերցողի մտքում կրճնուի իսկոյն մի հարց. եթէ ժամանակակիցները չեն գրել, այլ վերջինքն, յետնագոյն ժամանակի մարդիկ, նոքա ո՞րտեղից պիտի գիտենային այդ պատմութիւնը: Այս էլ մտածում է մեր պատմագիրը, ուստի և անմիջապէս կցում է

իւր բացատրութեանը. Ապա թէ նախեւ
ուստի մեզ զնախնեաց մերոց գիտել կանուանա-
այսպէս, իսկ զբազմաց և զգործս¹, առեմ-
ի հնոցն դիւանաց քաղղէացւոց, անորեւտա-
նեաց և պարսից, վասն մտելոց անուանց և
տործոց նոցա ի քարտէս արքունի, իբր գոր-
ծակալաց և վերակայուաց աշխարհիս ի նո-
ցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց»:

Արդ, այդ «վերջին» (յեաննադոյն) գրողնե-
րից մէկն է հենց Մար Աբաս, որ ըստ Մարտիրոսա-
յնու՝ Մինուէի արքունի դիւանի Վի մատեա-
նից, որի մէջ իբր եղել են հնոց և նախնեաց
պատմութիւններ, մեր ազգի պատմութիւնը
քննել հասնել է²: Բայց այդ մատենանը հայաց
պատմութիւնը խօս ամբողջութեամբ չունէր
տղլրից մինչև վերջը բոլոր ճշտութեամբ: Ռու-

1. Ա. ձեռ. իսկ Տպագիրն ունի. «Ապա երկ
անխցին ուստի մեզ զնախնեացն մերոց բազմաց այնպէս
գտանել զանուանս եւ գործս» ...

2. Խորհեացու խօսքն այնպէս պէտք չէ հասկանալ,
քե այդ «մատենակ» մէջ հայոց պատմութիւնն առանձին եր
գրուած, այլ քե հայոց մասին յիշատակուող բիւ-
ներ կային այդ գրքի մէջ, եւ այդ յիշատակութիւ-
ներից օգտուելով, քաղղէի կազմել է Մար Աբասը
հայոց պատմութիւնը. ինչպէս մեծ այժմ յունական ու
հունաստանի անթիւրերից հանուով ենք հայոց բնութեա-
նէր ստուգելն ու պատմութիւնները:

աքի և Մար Արաղի գրածն էլ պակասաւոր մի-
բան պիտի լինէր. թէ չէ ինչո՞ւ պն ժամա-
նակ պիտի գրէր Խորենացին. «Միթէ մա-
տեան մե՞քձ փայցէ ինձ ... որով ... վերուստ ի
քեզ իջուցանեմ անսխալ»: Իսկ մի աղբիւրից
քաղած պատմութիւն էր միայն: Ուրիշ վեր-
ջիններ էլ ուրիշ աղբիւրներ գործածելով կա-
րող էին քաղել և կազմել «այլազգարար» հա-
յոց պատմութիւն: Այդպիսի վերջին գրող-
ներից է և «Չորս հազներգութեանց» հեղի-
նակը: Եւ եթէ մենք այժմ յունական ա-
լափնական աղբիւրներից օգտուելով յաճախ
իրար հակասող ու «այլազգ» հայոց պատմու-
թիւն ենք կազմում և դեռ մեր թագաւոր-
ների անունների ցանկը չենք կազմել ճշտու-
թեամբ, — ինչո՞ւ ուրեմն Խորենացու աղբիւր-
ները, որոնք նոյն ձեով զանազան աղբիւրներ
գործածելով՝ կազմել էին հայոց պատմու-

1. Այլ խնդիր է, թէ այդ «վերջինն» իսկապէս
խողոքացոց, ասորեսանցոց ու պարսից աղբիւրներ են
գործածել, թէ միայն յունական աղբիւրներ ևւ Ասուա-
ժառուէ, ևւ այնպէս են ներկայացրել, որ իբր առաջին
աղբիւրներից են օգտուել: Նկատեմք ևւ այս: Կարելի չէ «Ապա-
նք ասորի», ուստի մէզ գնախնեացն մերոց գիտել (կամ
չտանել) զանուանաւ ... խօսից եզրսփայցել թէ իբր նորե-
կացին ասում է թէ ինքն է առնում խողոքացոց, աս-
որեսանց ու պարսից աղբիւրներից (Կարագ. Բ. պ. Հ.
Ա. եր. 184): նորեկացին միշտ ասում է, որ ինքն

Թիւն, իրար չպիտի հակասէին թէ անուններով և անոնց շարքերով և թէ իրողութիւններով:

Այսպէս, շատ պարզ ու խելացի է Խորենացու բացատրութիւնը, թէ ինչու իւր աղբիւրները, որոնք վերջնոց գործ են, հակասական են և այլազարար: Մենք ևս ուրիշ տեսակ բացատրութիւն տալ չէինք կարող:

յուևարեկնից է առնում: Իսկ եթէ նորա աղբիւրների մէջ սասած է եղել թէ պատմութիւնն առած է վերոյիշեալ ֆաղդական եւլն աղբիւրներից, իմիջ Խորենացին էլ, փոխանակ գրեալու ... «Ուստի վերջնոցն (պատմագրաց, որ իւր աղբիւրներն են) զնախնեացն մերոց գիտել զանուանս» ... կարող էր գրել «Ուստի մեզ ... գիտել»: Որովհետեւ իմեն էլ, թէպէտ եւ վերջնոց մտնով, ֆաղդաւոց, սաստնուանցոց գրածներից իմացած է համարում իրեն: Այսպէս եւ յամախ նա յիշում է աղբիւրներ, որոնցից անմիջապէս չէ օգտուել, այլ Եւեթիմոսի միջոցով, յայց վերջինիս տեսնել չէ օտիս եւ համարում է թէ քուն աղբիւրից է առած իմիջ: Մի բան որ այժմ էլ շատերն սնուն են, մանաւանդ մեր լրագիրները, որոնք ուշաց թերթերից ֆաղդելով, գերմանական կամ ժրանսական թերթերի անուներն են գնում, որովհետեւ սոքա են իրեն աղբիւր ծառայել ուշաց թերթերին: Այսպէս Եովհաննէս կարուզիկոսն էլ, որ Խորենացուց է առնում, այնպէս է դնում, որ իբր թէ իմեն էլ ֆաղդական եւլն աղբիւրներից օգտուողը. «Եւ այսքան անուամբ եւ գրոյցք թէ հարցեալ չին՝ յորմէ գուր գիտել, գիտացել զի ֆաղդեացոց մասնեամբն մեզ ընձեռեցան, որք կան ի նիմուէ եւ յԵրեսիս առ Տիթերի գրեալ» (Մակվա, 1853, եր. 14):

Եւ այնուհետեւ արդէն յաջորդ գլխի մէջ, իւր անձնական զգացումները յայտնելուց յետոյ, նախ քան Թագաւորների «Կարգը» դնելը, բացատրում է թէ ինչպէս է ընտրութիւն անում իւր աղբիւրների մէջ և ինչո՞ւ մէկին աւելի հաւատ է ընծայում քան միւսին: Մինչդեռ մի աղբիւրը Մար Արաս (Անանուն) հայոց իշխանութիւնը վերջացնում է Նաթուզոդոնոսորի օրով և այնուհետեւ հայերին ենթարկել է տալի Բաբելացոց ու Մարաց, Խորենացո՞ւ միւս աղբիւրի մէջ հայերն անկախ Թագաւորութիւն ունին և Մարաց ու Պարսից (Գլխի և Գոյն) ժամանակ: Այս վերջինիս ճշմարտութեան համար վկայ ունի ս. Գրքը: «Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ Թագաւորութիւն, վկայէ և Երեմիա մարգարէի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ: Հրաման տուր, ասէ, այրարատեան Թագաւորութեանն և Ասորացեան գնդին: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ Թագաւորութեանն առ այնու ժամանակաւ», աւելացնում է մեր պատմագիրը, որի համար, գիտենք, երկու տարբեր պատմաւածքներից ճշմարիտն այն է, որ համեմատ է ս. Գրքին (ՏՆԱ. գլ. Գ. եր. 72 հա.):

Այսպէս ուրեմն, Խորենացին իւր ձեռի տակ ունեցած առնուազն երկու գրաւոր աղ-

բիւրից, որ են Մար Աբաս և «Չորս հազներգութիւնք», հիմնուելով Ս. Գրքի վերայ, ասեցի կէրու է ասլիս երկրորդին՝ Հայկազանց Թագաւորութեան պատմութիւնն անկիս: Բաւարի և այդ պատմութեան, — որի մէջ մի երկու խօսք Պարոյրի համար է ասոււմ և քնդարմակ ու երկար միայն Տիգրանի համար է գրոււմ — «հիմունքը», հիմնական մասը վերջնոււմ է «Չորս հազներգութիւնք»: բայց արուոււմ է երկրորդորար նաև Մար Աբասից (Փառնաւազի համար, զուցէ և Զարեհ, Արսնոց, Բագամ) և Վահագնի համար ժողովրդական երգից:

Միւս կողմից՝ մենք տեսնուք, որ ԹԹ. դիւի մէջ «Հիւսոււմն Պիտոյից» կոչած դիրքն է աղբիւր դնոււմ նոյն Հայկազանց Թագաւորաների և կամ Տիգրանի պատմութեան համար: Ինքն իրեն ասաջ է գալիս այն միտքը, թէ միեւնոյն պատմութեան համար այս երկու տեղ յիշածները՝ «Հիւսոււմն Պիտոյից» և «Չորս հազներգութիւնք» միեւնոյն աղբիւրն են: Երկու կոչոււմը՝ «Հիւսոււմն Պիտոյից» և «Չորս հազներգութիւնք», ոչ միայն իրար չեն բաջասոււմ, այլ լրացնոււմ են մէկմէկու:

Ի՞նչպիսի գրուածք է եղել այդ աղբիւրը: «Հազներգութիւն» բառը, որ սովորաբար նշանակոււմ է քերթուած, վիպածանութիւն

և քննութեամբի մասնորո, և ապա Կոր պատմական գրուածք ու անոր մասերը, Կարող է ցոյց տալ որ բանաստեղծական էր այդ գրուածքը, հին բառով, մի բանաստեղծութիւն» կամ «ստեղծարանութիւն», որի համար իբրև նիւթ ծառայած էր Տիգրանի պատմութիւնը: Անշուշտ, այդ բանաստեղծութիւնը, կամ «ստեղծարանութիւնը» իւր մէջ պիտի ունենար, ինչպէս ամէն պատմական բանաստեղծութիւն, ընդ շատ հատուածներ ու սխալական կամ թէ ճարտասանական մանրամասնութիւններ, որոնք բանաստեղծական երևափայտութեան ստեղծագործութիւն են: Բայց ինչպէս ամեն պատմական բանաստեղծութեան, այդպէս և այդ «Չորս հագներգութեանց» էական մասը պէտք է պատմական լինէր, և այդ էտեան մասն ահա Խորենացին առել է և իբրև հիմունք դրել իւր հայկազանց թագաւորների պատմութեան համար:

Միւս կողմից թէ Խորենացու «Հիւռուսի պիտոյից» կոչում պիտքը նոյնպէս բանաստեղծական կամ բանաստեղծական, ստեղծարանական գրուածք է եղել, այդ ցոյց է տալիս նոյն իսկ կոչումը, որ պատմագիրը տալիս է այդ գրուածքին: Եայանի է, միջնադարեան գաղտնիքներում «պիտոյք», յունական խրէս, բառով կոչում էին այն ճարտասանական կամ

բանահիւսական վարժութիւնը, որով մի իմաստալից ասացուած ու խօսք կամ որևէ անձի պատմութիւն ու արարք ընդարձակում, ամենց նում էին այս կամ այն եղանակով ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ ճառ կամ բան: Այդ ճարտասանական վարժութիւնները իրենց կանոններով նոյն իսկ մեր գրականութեան սկիզբներում աշխատել են մտցնել մեր մէջ թարգմանիչները: Յայանի է Մորենացուն վերագրուած «Պիտոյից գիրքը» որի մէջ բացի կանոնների բացատրութիւններից կան և օրինակներ «հրահանգիցն աղագաւ առ մանկունս»:

Այս գրքում¹ ի միջի այլոց գտնում ենք «Սահման ներբողինի», որի տեսակին պատկանել է և Տիգրանի մասին գրուածքը: «Ներբողեան է ըան արտադրական եղելոյ ըարեաց ... Ներբողելի է զդէմն, [տնձնաւորութիւն] և զիրս, և զժամանակս, և զտեղիս ... Զգէմն որպէս զԴիմոսթենէս, կամ զՊղատոն: Զիրս որպէս զարգարութիւն կամ զողջախոհութիւն» ... Այնուհետև բերած է նշլած, այսինքն պատմական անձնաւորութիւններ գովելու կանոնները, մասերի բաժանելով ներբողեանը:

1. Մատենագրութիւնք Մովսէսի Խորենացոյ, Վեճեփ. 1865. եր. 413:

Եթէ փոքր ինչ ուշադրութիւն դարձնենք Խորենացու հայկազանց թագաւորների պատմութեանը (հարկաւ դուրս պէտք է ձգել Երեմիա մարգարէի վկայութիւնը, Մար Աբասից առած Փառնաւազի մասը և պատմագրի բացատրութիւնները թուեկեաց երգերի մասին), կը տեսնենք, որ Տիգրանի վրայ զըրուած այսպիսի մի ներքողեանի բնաւորութիւն ունի այդ ամբողջ պատմութիւնը մինչև Վահագն: Ասել չի ուզիլ, որ քանի որ Խորենացին պատմութիւն է գրում և ոչ թէ ներքողեան, մենք չենք կարող պահանջել, որ նա իւր ճարտասանական աղբիւրը ծայրէ ի ծայր արտագրած լինի,—նա շատ տեղ կրճատում է, և կամ ամեն բան իւր աղբիւրի կարգով չէ բերած: Բայց եղածն էլ բաւական է մեր կարծիքը հաստատելու համար: Բաւական է միայն, որ այդ պատմութիւնը բաղբաւենք Պիտոյից զլքի ներքողեանի կանոնների հետ:

Ահա այդ կանոններն իրենց կարգով ու բաղբաւատութիւնը:

1. «Եւ ի գովելն պարտ և արժան է նախաշաւիղ առնել ըստ տեղւոյ պատճառին»: Այսինքն նախ նիւթը, եթէ որևէ անձն է, ուրեմն անձը գովել ընդհանրապէս: Եւ Խորենացին իւր հայկազանց և Տիգրանի պատմութիւնն սկսում է ընդհանուր գովեստով (Ա. իա. իբ. իգ. իդ):

2. Ապա գնե՛ք զազգն՝ և զնոյն բաժանե՛ք և զաւառս և ի նախաժնոցս և ի հարսնս: Տիգրանի - ներբողեանից Թորհնացին կարեք շունչէր զգաւառիս, պակօքն Տիգրանի հարստեանիս Հայաստանի գոյքը մոռնելու իւր պատճառաւ մեջ: Իսկ Տիգրանի նստածնագ Հայկին և նորա մեծաւոր հարսերին՝ Պարպուկց սկսած՝ գիտենք գովելով յիշատակում է Տիգրանի պատմութիւնից առաջ:

3. Ապա գնա՛ւ նոնքն և բաժանել յուսուսն և ի վարժս և յօրէնս: Այս մտաք մեջ պիտի պատմուէր ներբողելի անձի ծընունդը, սնուելը, կրթութիւնը, մանկեականի կեանքն ու վարմունքը (Հմեռ. «Մովսէսի ներբողեանի» մեջ համապատասխան հաստուածները՝ Ծ - Թ, կր. 415 - 417): Ըստ ինքեան հասկանալի է՝ որ այս մտն իբրև պատմութեան համար «ոչ կարեօք» բան պիտի կրճատէր Թորհնացին: Սակայն և այնպէս ձերնդեան, ինչպէս և նախընթացում յիշուած «գաւառի» հայրենիքի մասին գտնում ենք Աժդահակի երաղի մեջ:

4. Եւ ապա զմեծ զլուխ ներբողինին որունել զգործսն և զնոյն բաժանել յանձն և ի մարմին և ի ղիպուածս:

... «Զանձն յիմաստութիւն և յողջախոհութիւն, յարութիւն և յարդարութիւն»: Տեղ-

նենք ինչպէս է գովում Խորենացին Տիգրանն ի անձը (ներքինը): Աքանց կացեալ զլուխ արութիւն ցուցեալ՝ «արարկեշտն» զբնասորը ի ցանկութիւնս մարմնոցն չափաւոր մեծիմաստն, արդարազատ, հաւատարատէր կշիռս ունելով, ելև Ռարեմն ոչ մի գիծ պակաս չե:

Բ. «Ձմարին» ի գեղեցկութիւն և ի զորութիւն և յերազուցիւն: Խորենացի. «Խարտեաշս այդ և պղերեկ ճայրիւ հերաց Ծրուանդեանս Տիգրան, երեսօք գունեան և մեզուակրն, անձնեայն և թիկնաւէան, առոյզաբարձն և գեղեցկոան»: «...Աստարեաշս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ»: Արժուանեման պացեալ թեօք... սքանչելի դիւցազն»: «Բայց գովեմ զքաջահասակն զիմ և զծիզակաւորն և զամենեկին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի, քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրկարս պատշաճեալ և դժով ոչ զք ունելով իւր զոյգս: Ռարեմն դարձեալ ոչ մի գիծ պակաս չէ:

Գ. «Ձգրպուած» ի նորութիւն և յնչնդութիւն և ի սիրելիս: Այսինքն գոված անձի կատարած մեծ դէպքը պէտք է նորութիւն և ընչեղութիւն պատճառէ և սիրելի դարձնէ նորան: Տիգրանի մեծ պիպուածն է Աճգահակի հեք կռուելն ու նորան յազթելը, որ պայպէս է վերջացնում Խորենացին.

«Եւ այսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ յաճախէր փառս Տիգրանայ: Մեր Թագաւորի «Ճոխութեան» և «ընչեղութեան» մանրամասն նկարագիրն (Ա. իդ) աւելորդ ենք համարում արտադրել: Ընթերցողն ինքը կը տեսնէ Խորենացու մէջ: Իսկ «պիտելի» լինելու համար բերենք միայն. «Ամենեցուն՝ որ առ իւրովքն էին ժամանակօք նախանձելի, և յետնոցս ըղձալի ինքն և ժամանակ»: Ուրեմն դարձեալ ոչ մի գիծ պոկաս չէ:

5. «Եւ ի վերայ այսոցիկ զնել զբաղդատութիւնն յարադրութեամբ ներբողեցելու մն զմեծագոյնան ընդունել: Այսինքն ուրիշ նշանաւոր անձերի հետ բաղդատել զոված անձին և նորան աւելի մեծ համարել: Այդ բաղդատութիւնն ևս գտնում ենք Խորենացու մէջ Տիգրանի պատմութեան վերջում (Ա. լա):

6. «Եւ ապա զ՝ ի վերայ բանին՝ ի կատարման ըստ պատճառի»: Այսինքն ինչպէս ընդհանուր գովեստով սկսուած էր, այդպէս և ներբողելի անձի վրայ արած գովեստն ամփոփել և վերջացնել: Այսպէս էլ անում է Խորենացին: ԼԱ. գլուխը, որ Տիգրանի պատմութեան վերջաբանն է, սկսում է Տիգրանին գովելով, և ինչպէս «պիտոցից» կանանները պահանջում են, վերջում բաղդատութիւն է

անուճ շատ Տիգրանների մէջ և գտնուճ որ
«մի է և միայնակ ի հայկազանց» Տիգրան և ին:

Այսպէս տեսնուճ ենք, որ Տիգրանի
պատմութեան մէջ պահուած են «պիտոյից
գլքի» ներբողեանի ճարտասանական կանոն-
ները, այն էլ մեծ մասամբ նոյն կարգով, ինչ
կարգով որ «պիտոյից գիրքն է պահանջուճ: ¹
Եւ այդպէս էլ պէտք է լինէր, քանի որ մեր
պատմագիրը ԺԹ. գլխի մէջ պարզաբար յայտ-
նուճ է թէ հայկազանց և Տիգրանի պատ-
մութիւնը պիտի առնէ «ի հիւսման պատմու-
թենէ պիտոյից»: Կը նշանակէ, եղել է մի պի-
տոյից գիրք, որի մէջ հիւսուած են, եղել զա-
նազան բանահիւսական կամ ճարտասանական
օրինակներ, ի թիւս որոց և մի ընդարձակ
ներբողեան հայոց թագաւոր Տիգրանի մասին:
Այդ գիրքը հայոց մէջ հանրածանօթ է եղել.
հանրածանօթ է եղել և նորա հեղինակը. ուս-
տի և Խորենացին բաւականանուճ է գլքի
անունը ապրով միայն և գովելով նորա «իմաս-
տուն» հեղինակին և կոչելով նորան «արգա-
տաւոր ի բանս»: Վերջին խօսքը ակնարկուճ

1. Թողնուճ ենք, որ հետաքրքիր ընթերցողն ինք
մտերւանաստեղծի համեմատէ Հայկազանց, իսկապէս Տիգրա-
նի պատմաբանը, «պիտոյից գրի» հիմնեւորդ գլխի հետ,
«ստեման Յերբողիկի», եւ ետեւում դրած օրինակի հետ՝
«ներբողեան Մովսէսի»:

է կամ այն բանին, որ գրքի հեղինակը շատ այգալիտի բանքը կամ ներբողեաններ է գրած եղել, կամ շատ պերճաբան քերթող է եղել:

Այսպէս մի կողմից «հազմերգութիւն» բառից իմանում ենք, որ Հայկազանց և Տիգրանի պատմութիւնը վերցրած է մի «բանասիրական» «ստեղծաբանական» գրուածքից, իսկ միւս կողմից տեսնում ենք, որ Խորենացին նոյն պատմութիւնն իրօք վերցրած է մի «հիւսուձն պիտոյից» կոչած գրուածքից: Այդ երկու աղբիւրը նոյնանում են: Պատասխան մի բան չենք համարում և այն, որ Ա. տեսակի ձեռագիրների մէջ փոխանակ «ի հիւսման պատմութենէ պիտոյից» գտնում ենք «ի հիւսման պատմութենէ բանից», որ կանոնաւոր ձևով է «ի պատմութենէ հիւսման ըմբից»: Արդ «հիւսուձն բանից» մի բառով «բանահիւսութիւն» նշանակում է «բանաստեղծութիւն»: Թայտնի է թէ ինչպէս Խորենացու բառերը յաճախ թարգմանուած են: Այսպէս և այստեղ «հիւսուձն պիտոյից» թարգմանուած է «հիւսուձն բանից»: Թարգմանողն հասկացել է թէ ինչ է անուամբ Ծագիտէ Խորենացու գրածի բուն իմաստը, որ այնպէս է թարգմանել, որ «ճարտասանական» աղբիւրը դարձած է մի «բանահիւսական», «բանաստեղծական» աղբիւր: Վերջին բառերու

անշուշտ, իրենց սկզբնական իմաստով իբրև «բան շինել» պէտք է հասկանալ, ինչպէս և պիտոյից կանոններով զբաժ ճառն նոյնպէս համարուում է իբրև «բան հիւսել», «բան գործել»:

Ինչու Մորենացին այդ «բանապտեղծական» կամ ճարտասանական աղբիւրը «Չորս հագներգութիւն» է կոչում: Կամ այն պատճառով, որ այդ «արգասաւորն ի բանս» քերթողն իւր «պիտոյից հիւսումն» չորս հագներգութեան, չորս գրքի էր բաժանած, որոնցից մէկի մէջ էր Տիգրանի ներբողեանը. կամ աւելի այն պատճառով, որ Տիգրանի ներբողեանը չորս հագներգութեան, չորս մասի էր բաժանուում: Եթէ ուշադրութեամբ կարդանք Տիգրանի պատմութիւնը, կրտսնենք, որ չորս մասի ևս բաժանուում է:

Առաջին: Այս մասի մէջ, որ վիպական հանգոյցն է, եղել են Տիգրանի գովեստն ու յաջողութիւնները: Գովեստի մէջ յիշատակուած են եղել, ինչպէս սովորաբար լինում է քերթուածի մէջ և ինչպէս պահանջում են պիտոյից կանոնները Տիգրանի նախորդները Պարոյրից սկսած: Անշուշտ շատ բան ասած չէր լինիլ սոցա մասին, ալ զրքերից քաղած ու յարմարեցրած մի բան, գուցէ սոսկ անուններ, Տիգրան թագաւորի ազգաբանու-

Թիւնը յայտնելու և հայոց Թագաւորու-
թեան սկիզբը ցոյց տալու համար: Այդ ընդ-
հանուր գովեստից յետոյ պիտի գային Մա-
րաց Թագաւորի երկիւղն ու երազը, խոր-
հուրդը և որոշումը Տիգրանուհուն կնութեան
առնել և թուղթը:

Երկրորդ: Այս մասի մէջ, որ զարգա-
ցումն է, պատմուած է եղել պատգամաւորի
գալը. Տիգրանի յօժարութիւնը իւր քրոջը
տալու, նորան ճանապարհ դնելը և Աժդա-
հակի նորան արած ընդունելութիւնը: — Այս
մասը Խորենացին շատ համառօտ է անցնում,
սկսելով. «Եւ առանց յերկարելոյ ասացից»
խօսքերով: Համառօտելու պատճառը հասկա-
նալի է: Բացի իւր բերած բովանդակութիւ-
նից, ուրիշ առանձին պատմական դէպք չէ
տեսնում: Կենաքից առած վիպական մանրա-
մասնութիւնները նորան չեն հետաքրքրում:
Օրինակ, Տիգրանի՝ իւր քրոջը ճանապարհ
դնելու հաւաստեալ ընդարձակ նկարագրի
համար նա բաւականանում է միայն ասելով
«Յուզարկէ զքոյր իւր որպէս օրէն է թագա-
ւորաց»:

Երրորդ: Այս մասը, որի մէջ զարգա-
ցումն իւր ծայրին է հասնում, սկսում է
«Զկնի այսորիկ ասէ, թէ» ... խօսքերով, որից
պարզ երևում է թէ նոր մաս է սկսւում: Եւ

քովանդակութիւնն էլ հենց նոր մաս է ցոյց տալի: Մարտց թագաւորն աշխատում է սիրելի դառնալ Տիգրանուհուն, նորա ձեռով թակարդ լարել Տիգրանի դէմ: Տիգրանուհին ստիպուած երեսանց ընդունում է նորա առաջարկը, բայց նենգութիւնը յայտնում է եղբորը: Պատգամաւորութիւն է լինում, և յայտնի թշնամութիւն սկսւում:

Չորրորդ: Վիպական լուծումն է այս մասը: Երկու կողմից զօրաժողով են լինում և կռուի պատրաստութիւն տեսնում: Կռիւը երկարատևում է, որովհետև Տիգրան զեղա իրացն հնարէր յարգարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ: Սա ազատւում է: Ծակատամարտ: Տիգրան և Աժդահակ կռւում են, բայց Խորենացին, դժբախտաբար, այդ կռուի մանրամասն նկարագիրը կրճատում է գրելով. «Եւ զի՛ երկայնեմ գրանս»: Աժդահակ սպանւում է, նորա սուէնն ու կինը գերւում է: Ուրեմն չարը պատժւում է: Իսկ բարին, Տիգրանն ու Տիգրանուհին վարձատրւում են. մէկի փառքն է աւելանում: միւսն իւր եղբայրութեան համար «թագաւորապէս» ուղարկւում է բնակելու Տիգրանակերտում:

Ահա՛ մի իսկ վիպական նիւթ, արժանի գեղարուեստական բանաստեղծութեամբ մշակուած լինելու, որի գեղեցկութիւնը Խորե-

նացու համառօտած, և մասամբ անշխարհք կերպով կրճատած, գրութեան միջից ևս ցտլում է, նիւթի և գործողութեան միութիւնը սկզբից մինչև վերջը պահած է և, որ զխաւօրն է, ամենայն բնականութեամբ բաժանւում է միայն շորո «հազներգութեան»: Ծրկորոզ և երրորդ «հազներգութիւնների» սկզբին դրած Խորենացու խօսքերը. «Եւ առանց յերկարելոց ասացից» «Զհնի այսորիկ ասէ, թէ»... խօսքերը նոյն իսկ ցոյց են տալի մի մասից անցնւմը միւսին:

Եւ այս գեղեցիկ նիւթը, որ գեղեցիկ ևս մշակուած պիտի լինէր «ի բանս արգասաւորի և իմաստունի» ձեռով, իւր գեղեցկութեան մեծագոյն մասը, ժողովրդական երգից է ստանում: Հեղինակը իրենից չէ ստեղծել այլ ժողովրդականն է առած և ճարտասանորէն ու ստեղծարանորէն մշակած:

Թէ Տիգրանի մասին երգեր եղել են «ի հինսն մեր», տեսանք, այդ պարզագէտ յայտնում է Խորենացին: Բայց նա չէ ասում, որ այդ երգերն անձամբ է հաւաքել ժողովրդից: Այլ ընդհակառակն, նա իւր աղբիւրների ընդհանուր յիշատակութեան մէջ յայտնում է, որ իւր «հնագրութիւնը հաւաքում է» ուրիշներից: Այդ իսկ պատճառով իւր պատմութեան սխալ կամ ուղիղ լինելը թողնում

է ստաջին «հաւաքողներին»: «Իսկ ըստ որոց հաւաքումն Աստուծոյ լինել յայտնիս, և մարդկան գովելիս կամ բարեկիս, և մեր այնացիկ օրար էլ բացակացեալ»: ժողովրդից անձամբ ժողովողի լեզու չէ այս: Բացի այդ՝ նա Տիգրանի մասին երգերն անցեալ ժամանակով է յիշում. «Զորմէ ասէին ի հինսն մեր»: Այդ երգերը գրուում են հին սիրնգի բերանին, սի հինսն¹: Ուրեմն այդ երգերը Խորենացին անձամբ չէ լսած ժողովրդից: Եւ քանի որ Տիգրանի պատմութիւնը մի գրաւոր աղբիւրից է առած, անհաւանական չէ կարծել, որ այդ երգերի յիշատակութիւնն ևս իւր միակ գրաւոր աղբիւրի մէջ գտած պիտի լինի:

Մենք այնքան ցոփոր ենք այն մտքին, որ Խորենացին ինքն է օգտուում ժողովրդական երգերից, որ սկզբում ըստ երևութին տարօրինակ կըլծուի, որ նա իւր յիշած երգերի համար գրաւոր աղբիւր ունեցած լինի: Սակայն զարմանալի չէ այդ: Մեր պատմագիրն ամեն երգեր անձամբ չէ առած ժողովրդից: Թուեղեաց կամ վիպասանաց երգերն անգամ թէպէտև ծանօթ են նորան և նոյն իսկ Սա-

1. Հինն. Բ. դր. «Իսկ ի չեաւանէ սրբոյն՝ օսն հմտ արքունն, որպէս անդ ուրեմն յի հիւնսն արեհացիսն Սոկրատայ զմոյշիսինդն»:

հակ Բագրատունուն¹, նա ժողովրդից չէ լսած, թէ չէ՝ այդ երգերի մասին չէր գրիչ թէ «պահեցին ախորժելով, որպէս լսեմ» մարգիկ կողմանն... Գողթան» (Ա. Լ.): Կընշանակէ այդ երգերի որեւէ ժողովածու է ծանօթ եղել Խորենացուն, իսկ այդ հին երգերի պահուած լինելը Գողթն գաւառում՝ նա լսելով գիտէ: Այս ինկատի ունենալով նոր հասկանալի է լինում թէ ինչո՞ւ նա Վահագնի երգի մասին այնպէս շեշտելով ասում է. «Ձայս երգելով ոմանց բամբռամբ, լուաք իսկ ականջօք մերովք (Ա. Լ.): Այդ հարկաւոր էր այդպէս շեշտելով յայտնել, որովհետեւ նա առաջ ԺԹ. գլխի մէջ ասել էր, որ ուրիշներին «հաւաքածներին», «ի գրոց» է օգտուելու, — և մինչև Վահագն այդպէս էլ արել էր, — իսկ այստեղ ինքն սնձամբ է ժողովրդից առնում:

Արդ, այդ երգերը բոլորը Խորենացու ճաշակով բանո՞ճ ու «փծուն» են եղել: Բացառու թիւն չեն կազմել նոյն իսկ թուելիաց կամ վիպասանաց երգերը, քանի որ մեր պատմագիրն այս վերջիններն ևս ստիպուած է եղել «Ճմարտելու», «Ճմարտապատմութիւն» շինելու: Ազոնք բոլորն առասպել են: Բայց ինչպէս տե-

1. «Արտաշիսի վերջոյ գործք բազում ինչ յայտնի են և քեզ ի վիպասանացն, որ պատմիմ ի Գողթան» (Բ. խր.):

սել ենք (Ա. գլ. եր. 22), հայ ժողովրդական բանահիւսուածքեան բոլոր նիւթերից միմիայն Տիգրանի մասին եղածներին առասպել կոչու- մը չէ տալիս: Այս բացառութիւնը, որի մա- սին իւր տեղում խօսել ենք, այժմ հասկանա- լի է լինում: Եթէ նա ինքը ձեռին ունեցած լինէր Տիգրանի մասին ժողովրդական երգերը և անմիջապէս այդ երգերից օգտուած լինէր, դժուար է կարծել, որ ամեն միւս տեղերում ժողովրդականն առասպել կոչէր, իսկ այստեղ ոչ: Ըստ Խորենացու, ուրեմն, Տիգրանի մասին եղածներն առասպել չեն (Տե՛ս Խորենացու հայեացքն առասպելի վրայ, գլ. Գ. եր. 72 հտն.), որովհետեւ Տիգրանի մասին նա ժողո- վրդական «փծուն» և «անոճ» երգերը չէ իւր ձեռի տակին ունեցած, այլ այդ երգերի իրեն Խորենացու ճաշակով գրական մշակութիւն կրածը, սի «զարդարեալ» և «ոճով և հան- դերձ պատճառաւ շարագրած» պատմութիւն, որ նա այլ ևս առասպել կոչել չէր կարող: Այդ մի պատմութիւն էր, որ ոչ թէ առաս- պելի պէս «ճշմարտութիւն իրացն այլարա- նարար յինքեան ունէր թագուցեալ», այլ ամ- բողջ արդէն «ճշմարտուած», «ոճով» պատ- մուած, առասպելական մասը դուրս ձգած և «ճշմարտապատմութիւն» շինած¹: Ուրիշ խօս- քով, դա «երգարան բանաւոր» էր:

1. Ինչպէս յետոյ կրօնական, Տիգրանի կոնք վիշապ

Վերջին բառը մեզ յիշեցնում է Ա. զրբի
Պ. դուխը. «Թողադս անիմաստաւեր բարուց
առաջնոցն մերոց թաղաւորաց և իշխանաց»
Կարելի չէ այս գլուխն իբրև փաստ մէջ բե-
րել, ինչպէս անում է շնորհ. Միաբան Կ.
հերքելու համար Էմիլի կարծիքը թէ «հայ-
կական աղբիւր» են եղել «Չորս հազներգու-
թիւնքը»: Այդ գլխի մէջ Խորենացին նախ
գանգատուում է, որ մեր «առաջին թաղաւոր-
ներն» ուշադրութիւն չեն դարձրել իրենց
ժամանակի յիշատակի արժանի գործերը մա-
տենագրել տալու, մի բան որ բնաւ չէ մեր-
ժուռն որ Խորենացու ժամանակ լինէր «վերջ-
նոց» գրած մի հայկական պատմական աղբիւր
Արդարև, այնուհետև Խորենացին գանգա-
տում է. «Ուրպէս այժմ և առ հինան հայաս-
տանեայց լիալ անսիրելութիւն իմաստութեան
և երգարանաց բանուորաց», և քիչ յետոյ ա-

Աժդահակի դէմ, վիշապաց մայր Անոյշի ու վիշապագանց
գերուելն ու Մասիսի վրայ բնակութեան առասպել է, որ
չէոյ, բերեւ ժողովրդի բացառութեան հեռեւեղով, դար-
ձած է կոիւ ընդդէմ Մարաց բազումը Աժդահակի, Մա-
րաց բազումն է մարացոց գերաբիւն, ճիշդ ինչպէս ինկզ
Խորենացին վիպասանք «ճշմարեղով» վիշապ Արգազանին
գարձնում է Մարացոց սեր Արգամ, եւ վիշապագանց դէմ
կաւր Մարաց դէմ կաւր:

ւելացնում է. «Միթէ մատեան մերձ կոյցե՞
ինձ, ... կամ դպրութիւնք քոց հայրենեաց,
որովք ... ի վերուստ ի քեզ իջուցանեմ ան-
սխալ: Բայց միթէ կարելի է այս խօսքերը
տառացի ճշտութեամբ հասկանալ: Չէ՞ որ մեր
պատմագիրն այնպիսի ժամանակում էր ապ-
մուծի երբ հայ դպրութիւն կար արդէն, և նա
օգտուել էլ է այդ հայ դպրութիւնից: Ան-
շուշտ, չկար մի այնպիսի դպրութիւն, որով
հեշտութեամբ կարելի լինէր ամբողջ հայոց
պատմութիւնը անսխալ գրել սկզբից մինչեւ
վերջը: Այս մասին է ահա՛ մեր պատմագրի
գանգատը, ինչպէս և ոչ այնքան իւր ժամա-
նակի քնդհանուր անսիրելութիւն իմաստու-
թեան, է յանդիմանում նոր քրոն առաջ-
նոցն մերոց թագաւորաց և իշխանաց» «ա-
ռաջնոցն մերոց նախնեաց», «թագաւորացն
մերոց և այլոցն առաջնոց» (Ա. գ. իա): Խո-
րենացու այս խօսքերը երբեք չեն թելադրում
մեզ կարծելու թէ նորա ժամանակի բոլոր
հայերը իմաստութիւն և բանաւոր երգարան-
ներ, այսինքն իմաստալից երգարաններ (Տեա
տես բառի բացատրութիւնը գլ. Բ. եր. 34
հան.) չեն սիրել, և թէ ինքը Խորենացին
մենակ բացառութիւն է կազմել, Եւ ի՞նչպէս
կարելի է փարձել այդպիսի բան՝ Ե. դարու
գրական շարժումից յետոյ: Ազգի ընդհանրու-

Թիւնը կարող էր «թուլամիտ»՝ առգէտ ու «վայրենի» լինել՝ «փծուն» երգեր ու երգարաններ սիրել. բայց այդ չէ մերժումս որ Պորենացու նման «իմաստուն» մի մարդ, քերթող, մէկն «ի վերջնոցն» այդ փծուն երգերից օգտուելով, միացնելով անոնց հետ և իւր պատմական տեղեկութիւններն այս ու այն սղաբիւրից քաղած, գրէր մի ճարտասանական բնաւորութիւն ունեցող պատմական բանահիւսուցիչութիւն: Եւ այդ է պատճառը, որ երբ մեր պատմագիրը, որ ոչ փծուն աղբիւրների մեծ պակասութիւն ունէր, իւր ձեռի տակ ունենում է հայկազանց Թագաւորների և Տիգրանի պատմութեան համար՝ իւր ճաշակով գրած մի պատմական աղբիւր, այն ժամանակ իրաւամբ բառ չէ գտնում անոր յայտնի հեղինակին գովելու համար. «Արգասաւոր ի բանս, և իմաստուն և ի մէջ իմաստնոցն իմաստուն»:

Այս աղբիւրից ահա մեր պատմագիրը քաղում է իւր հայկազանց Թագաւորների պատմութեան «հիմունքը» և աւնում է Տիգրանի ամբողջ պատմութիւնը, այնքան ընդարձակ, ճարտասանօրէն ու բանաստեղծաբար գրուած: Բայց որքան էլ նա ցանկանում է «որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել», ստիպուած է կրճատե-

լու և առանց յերկարելոյ զբանս՝ ասել թէ չէ՛ պէտք կըլինէր ամբողջ չորս հազներգութիւններն էլ արտագրելու:

Ամփոփենք մեր եզրակացութիւնը:

Խորենացին Տիգրանի պատմութիւնը Մար Աբասից չէ առնում: Եւ երկու տեղ յիշում է՝ որ այդ պատմութիւնն առնում է մի գրաւոր աղբիւրից, որի հեղինակի անունը, ծանօթ ենթագրելով, չէ տալիս, այլ բաւականանում է միայն նորան գովելով: Տիգրանի պատմութեան մէջ յիշած «ասէ», «ասէ որ պատմէն», «ասում է պատմողը» խօսքերը վերաբերում են այդ հեղինակին: Այդ գրուածքը, որ Խորենացին կոչում է Հիւսուսն Պիտոյից, կամ «պատմութիւն հիւսուսն Պիտոյից», եղել է մի բանահիւսական ու ճարտասանական գրուածք, հաւանօրէն շորս հազներգութեան» բաժանուած: Խորենացին անձամբ չէ օգտուած իւր յիշած ժողովրդական երգերից, այլ իւր աղբիւրի հեղինակն է ճարտասանօրէն մշակել ժողովրդական բանաստեղծութիւնը: Երգերի յիշատակութիւնը նա իւր աղբիւրից է առել:

Թէ իրօք պատմական երգերի վրայ է հիմնուած այդ պատմութիւնը, այդ աներկբայ ցոյց կըտայ մեզ անոր բովանդակութեան ուսուսնասիրութիւնը:

Հակասական կարծիքներ:—Տիգրանի ու Աժդահակի և Հեղոթոտի մէջ պատմուած Կիւրոսի ու Աժդահակի առասպելների նմանութիւնն աչքի չընկնող է: Ընկնի կարծիքով Կիւրոսի և Աժդահակի աւանդութեան մի հայ ժողովրդական պատմուածքն է այդ, որ պահել են հայ երգիչները¹: Պ. Խաղաբեկանն, անշուքա, Խորենացու սարքածն է համարուձ Տիգրանի առասպելը: «Հեղոթոտի պատմութի ձևով շինած մի արաւեստական պատմուածք, քիչ քիչ նորա փաստերը համադրելի չեն²: Իսկ պ. Գարագաշեանը (Ընն. Պատմ. Ա. եր 194 հտն.) հակասական կարծիքների մէջ է ընդունում: Ծա գրում է. «Հեղինակ Մարիբաւսեան պատմութեան դժգոհանայ և զԱժդահակայ տեսնելով առ Բաննփոնի Տիգրան զոմն հայ»:

1. Халат. Арм. Эноцо, кр. 178. Էնթն այս կարծիքը յայտել է իւր *Мудііуа о дреснеі Арменіа, Москва, 1881*. աշխատութեան մէջ, որ մեկ մեռի տակ յուկիմք:

2. Նորա փաստերն են՝ 1, որ նա «մեզ համագիչ է արդեմ, որ հայոց վկայր գոյուրիւմ յէ ուկեցիչ». 2, երկու պատմուածքի «մանութիւնը». 3. Հայոց առասպելի պատմուածքը ժողովրդական վիպական ոչիւն չունի, այլ ընդհակառակն խոսած է «գանազան աղբիւր-աներց», գանազան գրեւորց:—Բայց մեկ գիւնիք բէ ինչպէս է հետազոտում պ. Խաղաբեկանն այդ աղբիւրները:

բարեկամ՝ Կիւրոսի և գործադիր ի պատե-
րազմունս նորա, Հերոզոտոսի մէջ ևս կար-
գալով Աժգահակայ երայր, և հրամանաւ
նորա ի գործ գրուած միջոցներն ի կորուստ
նէլ զԿիւրոս յորմէ որպէս թէ կը կառնած էր
Աժգահակ (Հերոզ. Իպր. Ա. 127)՝ զԿիւրոսէ
պատմուած առասպելը կը զարմունէ Տիգրա-
նայ վրայ: Սակայն անմիջապէս (Եր. 196)
աւելացնում է. «բայց Տիգրանայ և Աժգա-
հակայ կռիւը կ'ակնարկէ ուրիշ հին առաս-
պել մը. այն է Թրիպայի և Աժի-տահակայ
առասպելը (զորմէ տես վերագոյն էջ 51), զոր
թերևս հին հայ երգիչք առած էին ի Զեն-
տաւեստայ»: Իսկ իւր կոշու՛մն արած տեղում
պ. Գարագաշեանը զարմանալի չէ համարում
որ հնդկական առասպելն ինչպէս պարսից մէջ
կար, այդպէս և հայոց մէջ լինէր:

Ո՛րն է այս հակասական կարծիքներից
ընդունելին: Ժողովրդական են այդ երգերը,
կամ ձիշտն ասած, ժողովրդական երգերի՞
վրայ է հիմնուած այդ պատմութիւնը, թէ՞
չինձու «կամամտածական» բան է:

Շինծու կերևին, եթէ այդ երգերն իրօք
լինէին Կիւրոսի ժամանակակից Տիգրանի մա-
սին, ինչպէս զնում է Խորենացին: Բայց
Խորենացու սխալը, որ կարող է իւր ազդեւրից
առաջացած, լինել դժբախտաբար մոլորեցրել

է և մեր քննադատներին: Տիգրանի մասին
երգերն ու գովեստներն եղել են Մեծն Տիգ-
րանի մասին, և Խորենացին (թերևս Խո-
րենացու աղբիւրը) ինչպէս սրամտութեամբ
նկատում է պ. Գեղցեր, «թիւր գիտնականու-
թեամբ՝ Կիւրոսի ժամանակակից՝ Բսենեփոնի
վիպասանութեան մէջ գործող Տիգրանին վե-
րապրեց զայն, մինչդեռ երգերը բնականաբար
Ղուկուղղոսի ժամանակակիցը կրգովաբա-
նէին»: ¹

Անշուշտ, բուն երգերը չէ բերում Խո-
րենացին և շատ բան իրենից, իւր կամ իւր
աղբիւրի լեզուով է պատմում, բայց ամե-
նայն ինչ որ նա ասում է, խկապէս Մեծն
Տիգրանին է վերաբերում: Փորձենք քննել
և մենք կը տեսնենք, որ երգերը ժողովրդա-
կան են:

Մեծն Տիգրանն եւ երգերն նորա մասին:—

Պ. Գարագաշեան ² խօսելով Մեծն Տիգրանի
մասին՝ գրում է. «Յիրաւի է կոչել մեծին
Տիգրանայ ժամանակն, աննման փառաւորու-
թեան հետ, թէպէտ և կարձ՝ հայ ազգի մը
անձնաւորութեան ժամանակ, այնպէս որ:

1. Հ. Գեղցեր, Համառոտ պատմ. Հայոց, քաղզմ.
Գր. վ. Գարսնիստեան, Վիեննա, 1897, եր. 8:

2. Գնն. Պատմ. Հայոց, Բ. եր. 129:

ըստ մեզ, ի Տիգրանայ և այսր պէտք է
խնդրել հայ ազգ. ի Տիգրանայ և անոր Հայր
ազգին է անկերպարան. առ Տիգրանաւ կը-
ծնանիս կըհասնի ի չափ: կըծերանայ միան-
գամայն: Զարմանալի երեւոյթ: Բայց ըստ
մեզ՝ այն է մանաւանդ զարմանալի, որ մեր
սոհակային աւանգութիւնն այս անձին ժա-
մանակէն և պատմութենէն, բացի չոր հա-
մառօտութենէ՝ ոչ այլ ինչ պահած է, բայց
ՄԾԾ անունը: Ինչ որ եղանք և ենք՝ եղանք
և ենք Տիգրանաւ: Այս գնահատութիւնը
վերջի չափազանցութիւնը թողած, մեծ մա-
սաճ Ծիշա կարելի է համարել: Միայն աղքատ
Տիգրանի օրով միանգամից պարսաստ չէ ծըն-
ւում. նորանից առաջ արդէն ազգը անկեր-
պարան աստուածեան վիճակից դուրս գալ է
սկսել, և կարելի չէ ասել թէ ազգային աւան-
դութիւնը չէ պահած Տիգրանի ժամանակի
«աննման փառաբորութեան», «հայ ազգի
անձնաւորութեան» յիշատակը:

Այդպիսի ժամանակը, որ իրօք դիցազ-
նակա՞ն էր հայ ազգի համար, «քան և հինգ
ամբ...անխառն յաջողութեան», երբ «հաւատա-
յին սուտաբարտաք թէ ոգի ինն իցէ» Տիգ-
րան, չէր կարող իւր խորին սպաւորութիւնը
չանել հայ ժողովրդի երեւաբացութեան վրայ:
Ըւ մի ժողովուրդ, որ գիտէր երգել իւր թա-

գաւորութեան հիմնադրի՝ Արտաշէս թագաւորի Արտաշատ մայրաքաղաքի հիմնարկութիւնը, զիտէր և նոյն Տիգրանի թոռան պատմութիւնից մի վէպ ստեղծել, չէր կարող չերգել այդ թագաւորական ցեղի ամենից փառաւորին, արքայից արքայ Մեծն Տիգրանին։ Բայց պ. Գարագաշեանը, դժբախտաբար, գլխի չէ ընկնում, որ Տիգրանի անունով մնացած երգերը Մեծն Տիգրանին են գովաբանում։ Թէ չէ՝ նա անտեղութիւններով լի չէր համարիլ Խորենացու (իսկապէս իւր աղբիւրի) այդ երգերից քաղած պատմութիւնը։ Արդարև, եթէ Զսենեփոնի յիշած Տիգրանի վրայ համարենք այդ երգերը՝ անտեղութիւններ ունին իրենց մէջ։ Բայց մի անգամ եթէ Մեծն Տիգրանի վրայ ենք մտածում, ոչ միայն բոլոր անտեղութիւնները վերանում են, բացի հարկաւ Խորենացու կամ իւր աղբիւրի մտցրածից, այլ և տեսնում ենք թէ ո՞ր աստիճանի հիացել ու փառաւորել է ժողովուրդն իւր սիրելի թագաւորին։

Եւ ժողովրդի այդ սքանչացումն ու ոգեւորութիւնն է անցնում երգերից մեր ծերունի պատմագրի պատմութեանը, սր յափրշտակուած ու երիտասարդացած գրում է. «Ձի ո՞ դք ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն

կացցէ՛ սորա յիշատակօքն ոչ զուարճասցիս
և յորդորիցի այսպիսի այր լինելէ: Մեծն
Տիգրանն է եղել այդ մարդը՝ որ «ամենեցուն
թագաւորացն մերոց հարստագոյն և խոհե-
մագոյն» և արանցն այնոցիկ և ամենեցուն
քաջ»՝ «ամենեցունց՝ որ առ իւրովքն էին
ժամանակօք՝ նախանձելի» և յեանոցս ըղձալի
ինքն և ժամանակ իւր»՝ ժողովրդի իդէալա-
ցած բաղձանքն է այդ՝ յետագայ քաղաքա-
կան աղէտների միջոցին» մի բաղձանք՝ որ
թերևս իւր աղբիւրից՝ անցնում է Պորենա-
ցուն» և նա ցանկանում է. «Եւ սիրելի էր
ինձ յայնժամ զալ Փրկչին և զիս դնել և
առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել և
նոցա տեսութեամբն խրատձանալ և յար-
դեացս վտանգից ապրիլ: Այլ վաղ ուրեմն
փախտաւ ի մէջ պատահումն այն» թէ ար-
դեւք և վիճակ» (Ա. իբ.): Մի խօսքս որ ա-
սասած է մեր պատմագիրը ոչ թէ այդ զլիսի
մէջ եղած լոկ անուանների ցանկի համար» այլ
միայն Տիգրանի համար» «որ լիններորդ ի
նախնեաց մերոց պաակաւորաց էր» հուժկու»
անուանի և յողթողս ընդ այլ աշխարհա-
կալս»:

Ասել թէ մի պատմագիր ինքը շինծու
թագաւոր կըստեղծէր իրենից և ապա այն-
պիսի կրօնական ու հայրենասիրական անկեղծ

զգացմունքով կողեորուէր այդ թագաւորով: —
այդ մեզ անհասկանալի է՝:

Բայց մենք տեսնենք. պ. Գարագաշեանի,
նկատած անտեղութիւնները՝:

1. Խորենացին կամելով մեծ քան զա-
մենայն աշխարհակալ թագաւորս ցուցանեչ
զՏիգրան՝ կատարել կուտայ նմա այնպիսի
գործ մը: զոր պարսկական պետութեան հը-
զարագոյն ժամանակն անգամ. շիրքան վճարել
Դարեհի և Զսերքսի պէս թագաւորք, այն է
նուաճել զՅոյնս... «Իբր յոյները, հարց-
նում է այնուհետև պ. Գարագաշեան, Սլա-
զայի և Պեղապանէսի՝ թէ յուեան գաղ-
թականութեանց, որ Փոքուն Ասիոյ արեւմը-
տեան եզերքն էին, կամ թերևս Արքիպեղա-
գոսի կղզեացի»:

Խորենացին մեզ չէ ասում թէ ո՞ր յոյ
նէրը, այլ թէ Տիգրանը ոչ սակաւ ժամանակ
յոյներին էլ իւր ձեռին նուաճելով՝ հազան-
դեցնում էր: Այսքան միայն: Արդ եթէ բո-
նանք պ. Գարագաշեանի պատմութեան երկ-

1. Տպագրի մէջ վերելում դրած հասուածի շարձ-
նակութիւնն ադանտուած է: Ա. ձեռագիրներն ունին.
բայց արդ ես առ օստաց բազաւորութեանքն կսցեայ,
ընդ նոցայն գմերս ազգի ածից զկարգ բազաւորացն: Զի
մեռայ. աշխարհիս ընկի՛ պատկառոյթ արք այնոքի՛ս...:

2. Գարագաշեան, Քնն. Պատմ. Ա. կր. 189, հոգ.

րոյոց մնալը (եր. 130—153), ուր Թէոդոր
Բոէյնաքի (Theodor Reinach) «Միհրդատ Եւ-
պատոր, զրքից բերում է Մեծն Տիգրանի
պատմութեան համար մի ամբողջ հատուած,
կը գտնենք այնտեղ, որ քունի անդամ Տիգ-
րանի զօրքերն անցնում են Կապադովկիա:
Նա արիւում է Ասորիքին կործանելով Սե-
լեփեան պետութիւնը, տիրում է դաշտային
Նիլիկիային: «Անտիոք» մին յարքայանիսն քա-
ղաքաց Տիգրանայ՝ հարկանէր դահեկան ի
պատկեր նորա, և միում ի զօրավարաց նորն
Մազադատեայ յանձնէր վարել զԱսորիս իր-
րե սասորայ (Ապոյ. Անոր. 48) . . . Եարե-
մուտս արկ նա ձեռն ի վերջին ծաղիկ պսակին
Մելեփեանց, ի դաշտայինն Նիլիկիա: Բազում
քաղաքաց ծաղիկոց բնակիչք խախտեալ ածան
ի Հայս (Իիոն Կառ. ԼԶ. 37, Պլուտ. Պոմպ.
28), Դադմեալ . . . Հայք մտին երրորդ ան-
դամ ի Կապադովկիա, կալան զԱրիորարզան
իբրև ի վարմի և արեւեցին մայրաքաղաքին.
ընակիչք Մաժաքայ, որպէս նւ այլոց մտնա-
սան քաղաքաց Եունաց, ընդ բնաւ իբրև
բիւրք երեսուն (300,000) ածան առնել շէն
գնոր նիստ արքայից արքայի, ահաւորին Տիգ-
րանայ) 77 ն. ք. գՔր. (Ապոլիան, Միհր. 6,
7) Սար. ՅԱ. 14, 15) ՏՔ. 2, 9): — Կար-
գանք շարունակութիւնը. «ՀԾԱԾՆԱԿԱՆՈՒ-

Թիւնն էր յուժի յաշխարհս այն ինչ նուա-
ճնալս, որպէս ի Կիլիկիա, յԱսորիս, ի Միգ-
դոնիա (Միջագետք հիւսիսոյ), որ սուաւել
քան կիսով չափ էին յունացեալք ընդ իշ-
խանութեամբ Սելեկիանց»:

Ահա որ յոյներին է նուաճում Տիգրանը:
Դորքս Սելեկեան պետութեան և Կապադոզ-
կիայի յոյներն են: Եւ որքան ճշտութեամբ
արտայայտուած պահուած է Մեծն Տիգրանի
կարծատե տիրապետութիւնը յոյների վերայ.
«Եւ զյոյնս ոչ սահաւ ժամանակս ընդ իւրե
նուաճեալ հնազանդէր»:

2. Եթորենացւոյն պատմութեան այս
մասին մէջ ևս կը գտնենք երևելի հակասու-
թիւն մը: Եթորենացին յետ դնելոյ զՊարոյր
առաջին թագաւոր և նովաւ բարձեալ զօտար
լուծն ի պարանոցէն Հայոց՝ առ Տիգրանաւ,
զոր իններորդ կը դնէ ի Պարուրէ՝ զՀայս տա-
կաւին ընդ օտար լծով կ'ենթագրէ, քանզի
ասէ. Սա (Տիգրան) զմեզ որ ընդ լծով էինք՝
արար լծադիր և հարկապահանջ»:

Նախ, Եթորենացին ոչ մի տեղ չէ ա-
սած թէ Պարոյրի ձեռով «օտար լուծն»
բարձեալ է ի պարանոցէն Հայոց»: Նա Պա-
րոյրին դնում է այն իշխանների կարգում,
իբրև վերջին, որոնք ասորեստանցոց թագա-
ւորութեան օրով իշխում էին Հայաստանում:

և Պարոյրը «ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարդակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարգանապալայ» (Ա. իա) ¹: Պարոյր իշխանն ուրեմն միայն օգնում

1. Այս ընթերցուածը ճիշտ է ևս համեմատ վեր-
նագրին. «Օգնական շինի (Պարոյր) Վարդակայ Մարի՝
բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ»: Այս ճիշտ
ընթերցուածն ունին №№ 1665, 616 Ա. ձեռագիրները.
միւսներն էլ ունին Մարի: Իսկ Տպագիրն ունի. «Ոչ փոքր
ինչ օգնականութիւն գտեալ ի Վարդակայ Մարի,
բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ»: Պարզ
սխալ է այս ընթերցուածը, քանի որ մի փոքր ներհնում
Խորենացին պատճառով է քի Վարդակայն է տրուած
նախ և ետևոյն: Այս սխալ ընթերցուածից այսպիսի
սխալ եզրակացութիւն է անում շնորհ. Միաբանը (Խոր.
Պ. Ուս. եր. 50). «Սա (Պարոյր) ոչ փոքր ինչ օգնակա-
նութիւն գտեալ ի Վարդակայ Մարի» — հարկաւ, ընդ-
դէմ Սկսւոյն որոշում, որից եւ խոշոր է իշխանութիւնը:
Բայց ուր մնաց խօսքի շարունակութիւնը «բառ-
նալով զթագաւորութիւնն ի Սարդանապալայ». ուր մնաց
եւ միւս խօսքը. «Յինքն էլ զման մեր նախնար յանգու-
ցանկ զՊարոյր . . . Եւ այսպէս զթագաւորութիւնն ի Սար-
դանապալայ յինքն առեալ տիրէ (Վարդակայ եւ ոչ
Պարոյր) ստորեւանի եւ նիւնուի»: Ուր մնաց եւ գլխի
վերնագիրը: Եւ այս սխալ եզրակացութիւնն անում է
շնորհ. Միաբան, որպէս զի կարողանայ հիմնել իւր կար-
ծիքը քի իւր Խորենացին Պարոյրից առաջ. կղած իշխան-
ներին թնկ չէ համարում: Այս մտքին յետոյ կու խօսք
կըլինի:

է Վարդափէսին) և սա այդ օգնութեան համար «Թագաւորութեան ձև և շուք է խոստանում նորան»: Արքայից արքայութիւնն անցնում է Մարաց, և եթէ հայ իշխաններն այնուհետև թագաւոր անունն են կրում, այդ չէ նշանակում, որ նորա ազատուած էին արքայից արքաների օտար լծից: Յոյն զլխի վերջում հենց այդ հայ իշխաններին ու թագաւորներին դնում է «իրրև դորժակալք և վերակացուք աշխարհիս ի նոցանէ (արքայից արքաներից) կացելոց, և մեծ կողմնակալք»: Իսկ յաջորդ (ԻԲ.) զլխի սկզբում այդ «Թագաւորութեան աստիճան» ունեցողներին այսպէս է կոչում. «... ի թիւ մերոց արտոնց, մննաւանդ թագաւորաց»: Եւ ինքը պ. Գարսազաշեանն էլ դրում է (Ա. եր. 186). «Ի բանից աստի Խորենացւոյն կը հեաւելի... թէ ի Խորենացւոյն այնպէս ցնծութեամբ թագաւոր կոչուած Պարոյր և յաջորդք նորա՝ Նորին իսկ Խորենացւոյն վկայութեամբ, ոչ այլ ինչ էին եթէ ոչ Զաղդէացւոց և Պարսից կողմէն դրուած դորժակալներ, վերակացուներ և մեծ կուսակալներ»: Այսպէս նոյն իսկ պ. Գարսազաշեանի խօսքով երեւակոյցական մի բան է դառնում Տիգրանից առաջ հայ թագաւորների ազատուած լինելն օտար լծից: Եւ չգիտենք ո՛ր մնաց այդ յերևելի հակասութիւնը»:

Բայց մենք անցնենք Մեծն Տիգրանին, որի պատմութեան վի յիշողութիւն է նորանից առաջ օտար լծի տակ լինելը և նորա Երով օտար լծից ազատուելը Հայկողանց թագաւորների պատմութեան մէջ:

Յայտնի է, Մեծն Տիգրանի նախորդներից Արտաշէս Ա.-ի օրով (189 թ. Հ. ա.) են հայոց իշխանները թագաւոր անունն ստանում: Մեծ Հայքի թագաւորներն այնուհետև հետզհետէ ընդարձակում են իրենց երկիրները: Սակայն Տիգրանից առաջ, «ի վախճանն էլ դարուն Բ.-ի յառաջադէմն իսողացք Մեծին Հայոց արգելաւ ի Պարթեաց, որ առին զՄարս և զՄիջագետս ի Սելեկեանց անտի վատթարելոց: Արշակ Թ. (Միհրդատ Բ. 114—86) ետ պատերազմ ընդ Հայս, յաղթեաց թագաւորի նոցա Արտաւազդայ (Յուստ. ԽԲ. 2. 16), եւ էտ պատանդ զՏիգրան, իշխան թագաւորագն (Յուստ. ԼԸ. 3. Սար. ԺԱ. 14, 15):... Ետ մեհու Արտաւազդայ Միհրդատ չէտո յանձն տալ Տիգրանայ զուստութիւն եւ զաթոռ հարցն իւրոց՝ քայց տալով նմա թողուլ դաշտմէ 70 զուստոս կամ «հովիտս» ի Հայոց (95 ն. ք. զԶր.):... «Հայն խոնարհեալ, այլ ոչ նուաճեալ» (Սար. ԺԶ. 1. 19) վկայէ յայտնապէս, թէ Պարթեք ոչ նուաճեցին երբէք զՀայս»:

Եւ ահա՛ իսկոյն տեսարանը փոխւում է: Այդ «խոնարհեալ» և պատանդ տուող ազգը բարձրանում է: Նորա թագաւորը, Մեծն Տիգրան, որ ազատութիւն գանելու համար իւր երկրից եօթանասուն «հոփիտ» է ապիս Պարթևաց թագաւորին, մտածում է «խնդրել զվրէժ իւրոց նախնի թշնամանաց: Գունդ մի հայացի եմուս յերկիր իշխանութեանն Պարթևաց և լինէր միջամուխ մինչև յԱրբեղս և Նինուէ, աւերել, գերփել զերկիրն ընդ որ անցանէր: Պարթևք ստիպեցան կռել դաշինս ի վնաս իւրեանց, քարձուցանել ի հայս զեւթանասուն հոփիտսն, զորս հանեալ էր նոցա ի նոցանէ յամին 95, նաև տալ նոցա զերկոսին գաւառսն ծաղկեալս հիւսիսային Միջագետաց, այն է զՄիգդոնիա և Ուռհայաստան (Սար. ԺԱ. 14, 15): Հանդերձ այսու հարկ տղել նոցա կռել դաշն նիզակակցութեան ընդ յաղթողին (Յուստ. Խ. 1) եւ թողուլ կամաց նորա գիւրեանց հին ձեռակերտս (աւատ) ի հիւսիսոյ արեւմտից»: — «Տիգրան էր յայնժամ (72 թ. Թ. ա.) հզօրագոյնն ի թագաւորս յառաջակողման Ասիայ: Տէրութիւն նորա ձգէր յափանց անտի կուր գետոյ մինչև յերբս Յորդանանու և ի լեւրանց աշխարհին Մարաց մինչև ի ստորոտս Տաւրոսի. այլ շինուած յօտարոսի մասանց,

կազմեալ յամս 25, իբրև կոյտ իմն բեկորոց
խրելոց ի զրացի արգաց... ի հարաւոյ կողո-
պուտք Սելեկեանց... իսկ առ սահմանօքն
Պարթեւաց՝ շար իմն մանր մանր թագաւո-
րութեանց, որոց էին բնակ թագաւորք կամ
տոհմային իշխանք, այլ ի սերտ հպատակու-
թեան... Յարևելից և ի հիւսիսոյ այլ ձեռա-
կերպք (fief) գաշնաւոր անուամբ, որոց պարտ
էր տալ զօր ի թիկունս թագաւորին, որ կո-
չէր զանձն «Արքայից արքայ»:

Միթէ կարող էր ազգի քաղաքական
կեանքի մէջ կատարուած այս մեծ և յան-
կարծական յեղափոխութիւնը չթողնել ժո-
ղովրդի երևակացութեան վրայ ոչ մի ազդե-
ցութիւն: Եւ որքան գեղեցիկ համառօտութեմ
է Մորենացին, գուցէ տեղ տեղ և երգի խօս-
քերով. «Արանց կացեալ զլուխ և արութիւն
ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զընդ
կացեալսս՝ լծադիրս և հարկասպահանջս կա-
ցոյց բազմաց»:

3. «Մորենացին որ զՏիգրան կամէր ցու-
ցանել իբրև զմին ի մեծամեծ աշխարհակալաց
Ասիոյ... կանխելով կուտայ նմա կարգել և
յարդարել իւր զինուորական զօրութիւն և
անագին ըննակ մը կազմել... Դժուարին է
սակայն հաւատասլ թէ ժողովուրդ մը որ
յետ ընկձեալ մնալոյ դարերով գրեթէ առանց

զինուց և զինուարութեան ընդ օտար շքադի-
այն ինչ սկսած էր սրադի նիւզակաւ և սողե-
ղաճի վառեալ հեռեակ և հեծեալ ունենալ
և ի մօտոյ ճակատ յարդարելով կռուել սորս-
վի՛ յանկալի՛ ալնախէս զօրացաւ մինչև տիրել
Փոքրան Ասիայ, զՅոյնս հոսպանդեցնել և
ջնջել Մարաց թագաւորութեան պէս աշխարհ-
հակալ տէրութիւն մը ի հզօրագոյն ժամա-
նակի նորաս:

Նկատենք նախ որ սկանկներդի բառն
աւելորդ է: Խորենացին ոչ մի տեղ չէ ասած
թէ Տիգրանը նախ գօրքը կարդաւորեց և
ապա շրջակայ երկիրներին տիրեց: Այդ տաղը
ինքը պ. Գորագաշեանն է: Խորենացին Տիգ-
րանի յաղթութիւննէն ու նորա հարստու-
թիւնը նկարագրելուց յետոյ միայն անցնում
է զօրքի նկարագրին. «հեռեակամարաքն ի
վերայ ուսոց միոց բերեալք, և պարսաւորքն
առհասարակ դիպապեղունք, և շերտաւորքն
ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք, մերկքն
վահանօք և զգեւտիւք երկաթոյ պարածած-
կեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական
էր տեսիլն միայն, և որ ի նոցայցն պահպա-
նակոց և զինուց փողմանք և շողիւնք,
զթշնտմիսն արտօհալածել»:

Այժմ տեսնենք թէ ինչպէս է նկարա-
գրում պատմութիւնը Մեծն Տիգրանի ա-

Հագին բանակը՝ «Նախարարը և սեպուհը
էին շուկայ ի՞նչ և ոգի՝ յորոց կապակի հեծե-
րագործն կուռ վառեալ, ինքն և երիվարք նորա-
յԱզուանից անտի էին զբահաւորն պատե-
նագէնք, իսկ Վիրք, զբացիք նոցա՝ արեգնա-
ւորք կորովիք: Թարգաւորն Մարաց Ատրպա-
տականի, փեսայ Տիգրանայ՝ մարթէր գու-
մարէլ հետեւեալ 40,000 և հեծեալս բիւք
(Մար. ԺԱ. 13. 2): Մարք ասցին արեգնա-
ւորս հեծեալս: Արաբացիք զայրուծին անա-
պատի: Կորգուացիք ռահմիրայք էին և շի-
նողք կամրջաց, վարձկան՝ Հեյլէնք և այլ ևս
ազգի ազգի գունդ զօրաց: Ընդ ամենայն
ասին, իբրև 500,000 պարս:

Յանկարծական փոփոխութիւն, չէ՞ այն՝
հայ բանակի և այն էլ ի՞նչ փոփոխութիւն:
Եւ միթէ Խորենացին ուղիին է ապուս-
Աւելացրէք վրան և փախժամացած ու ճո-
խացած թաղաւորի և նախարարների զէնք
ու զբաժների շքեղութիւնն ու փայլքը:

4. Նախորդ հաստուածի մեջ տեսնեալ
որ պ. Գարագաշեանը Մարաց տէրութիւնը
նուաճելն ևս անտեղութիւն է համարում
Տեանէնք ինչ է ասում մեր պատմութիւնը
Մեծն Տիգրանի համար:

«Որ ուղիի կարեօրն էր՝ Բրտաշն Մեծին
Մարաց (Դարեհ, որպէս հաւանութեան էր

բստ Ապպիանուս, Միհրդ. 106) ետես զՀայս
եկեալ հասեալ մինչեւ ի դուրս Եկրատանայ,
որք եւ այրեցին զապարանս նորա (Իսիդոր
Քարակացի Գ. 6): Այսպէս ամենայն արուար-
ձանք բռնադատեցան ընդունել զվերին իշխա-
նութիւն նորա ծանր ծանր պայմանօք, էր որ
աւելի, էր որ պակաս: Թագաւորք Աղուանից
և Վրաց առ Կուր զետով, թագաւորք Մա-
րաց Ատրպատականի — (Միհրդատ արքայ
Ատրպատականի արար կին զմին ի դստերաց
Տիգրանայ, Դիոն. Կաս. ԼԶ. 16) — եւ Մեծին
Մարաց, որպէս և թագաւորք Կորդուաց և
Ադիաբենայ զվերին Դիզադաւ եղեն հարկա-
տուք ի ժամանակի խաղաղութեան, և ձեռն-
տու զօրօք և սատարօք ի պատերազմունս:

Ուրեմն ո՛ւր մնաց Մարաց նուաճելու
«անտեղութիւնը»: Ինչ որ ծիծաղելի կայ Թո-
րենացու պատմութեան մէջ՝ ոչ թէ Մարաց
տէրութիւնը նուաճելն է, այլ այն, որ մեր
ճերուկի պատմագիրը, թերեւ իւր աղբիւրից
խարուած, Տիգրանին ղնում է իբրեւ ժա-
մանակակից եւ դաշնակից Կիւրոսի: Այսպէս
ղնելուց յետոյ նա Տիգրանին Մարաց տէրու-
թիւնը վերացնել է աալի Կիւրոսի աջակցու-
թեամբ. «Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄա-
րացն ի բաց բառնալով զիշխանութիւնն» (Ա.
իդ.). «Օժանդակ կոմօք և յօժարութեամբ

գիւրոս ունելով, զիշխանութիւնն Մարայ և Պարսից յինքն յափշտակեաց» (Ա. լա): Անշուշտ անտեղութիւն է ասել, որ Գիւրոսն իւր յօժար կամքով օգնել է Տիգրանին՝ յափշտակելու Պարսից տէրութիւնը, որ իրեն Գիւրոսինն էր¹: Սակայն այդ անտեղութեան վրայ ոչ մի բան կարելի չէ հիմնել այն պատճառով, որ Տիգրանի թուականն և Պարսից Գիւրոսի անունն ու նորա աջակցութիւնը ոչ թէ երգինն են, այլ երգը մշակողինը: Եթէ Գիւրոսն և իւր աջակցութիւնը դուրս ձգենք, — և անպատճառ պէտք է դուրս ձգել, — այն ժամանակ կրմնայ, որ Տիգրանը յափշտակել է

1. Դժուար է կարծել, որ խելք գլխին մի մարդ այդպիսի բան գրէր: Ուստի և շատ հաւանօրէն Պարսից բանը, երբ Պարսիցաց բանին չէ փոխանակած, պէտք է համարել եկամտոս մի բան, գուցէ Աստուածաշնչի ազդեցութեան ռակ մտած գրչագիրների մէջ: Գրչակները հեշտութեամբ կարող էին, Աստուածաշնչի մէջ միասին կրկնուած «Մարաց և Պարսից» ձեւին վարժուած լինելով, Պարսից բանն աւելացնել: Այս հասանակն է բուն մեզ, մանաւանդ որ առաջին անգամ նոյն միտքը խորենացին քրեշ է առանց «Պարսից» բանի: Թովմա Արծրունու մէջ (եր. 38) թեպէ և պատերազմի մէջ Տիգրանն է Աժդահակին սպանում, բայց «Գիւրոսի զինուածայ զօրուն» ոչ սակաւ սասակնունս առնէր, մինչև միակողմն զօրուն Աժդահակայ վասնեսայ սուսերաւ՝ սիրէ (Կիւրոս) Մարաց և Պարսից»:

Մարաց և Պարսից տէրութիւնը: Այս դէպ-
քում Պարսից բառը փոխանակած է Պարթևեաց
բառին, ժողովրդի յիշողութեան մէջ ևս Մեծն
Տիգրանի կռիւների մէջ հին Պարթևների
տեղ նոցա փոխանակած նորագոյն (Ասասնեան)
Պարսիկները կարող են անցած լինել: Պարսիկ
անունը հայոց զբաղի արևական ազգերի հա-
մար միշտ աւելի ժողովրդական եղած կարող
է լինել հայոց մէջ, և է՝ քան Պարթև անունը:

Այս անհետեւ թուական, այսպէս, եթէ
մի բան ապացուցանում է, այն է, որ երգը
մշակողը, Տիգրանին Նիւրոսի ժամանակակից
դներով և Նիւրոսին՝ Տիգրանին յօժարու-
թեամբ օգնել տալով հանդերձ, թողել է երգի
մի գիծը թէ Տիգրան (Մեծն) Պարսից (Պար-
թևաց) տէրութիւնը յափշտակել է և ստի-
պել նոցա «կռել լսոյն նիզակակցութեան»
հայոց հետ: Այս այսպէս արդէն պատմական
գիծ է: Այնուհետև արդէն աւելորդ աշխա-
տանք է ցոյց տալ, ինչպէս անում է պ. Գա-
րագաշեան, որ Նիւրոսի ժամանակակից Տիգ-
րանը չէր կարող «գիշխանութիւնն Մարաց և
Պարսից յինքն յափշտակել»: և այն «համար»
և յօժարութեամբ օժանդակ ունենալով Նիւ-
րոսին:

5. Անտեղութիւն է գտնում և այն
բանի մէջ, որ Տիգրանը շինել է Տիգրանա-

կերտ քաղաքը: Պ. Գարագաշեանն աշխատում է յոյց տալ, որ Կիւրոսի ժամանակակից Տիգրանը չէր կարող շինել այդ քաղաքը, որ Մեծն Տիգրանի շինածն է Ա. դարում Բ. ա: Աւելորդ աշխատանք: Ժողովրդական երգով Տիգրանակերտի շինողը Տիգրան Թագաւորն է միայն, իսկ թէ Խորենացին, կամ իւր աղբիւրը, ժողովրդի երգած Տիգրանին, որ Մեծն Տիգրանն է, արեւ են Կիւրոսի ժամանակակից, այդ նոցա սխալն է:

Սոյնպիսի աւելորդ աշխատանք է Տիգրանակերտի տեղն այստեղ ու այնտեղ որոնելը, թէ արդեօք Փայտակարանի Տիգրանակերտն է, թէ արդեօք Զոկաստանի Տանակերտն է¹: Խորենացին երկրորդ անգամ էլ յիշում է (Գ. ԼԲ.) միևնոյն Տիգրանակերտը, որի որմուէքն էին «ի հայկազնոյն Տիգրանայ հոճեալ և յարմարեալ», և այս Տիգրանակերտը նա Միջագետքում գիտէ: Ուրեմն հայկազն Տիգրանի շինած Տիգրանակերտ ասելով՝ նա հասկանում է Մեծն Տիգրանի Միջագետքում շինած քաղաքը: Ուստի և նորա պատմութեան բուն աղբիւրը, երզը, շատ լաւ պահել է Տիգրանակերտի շինութեան յիշատակն ևս: Աւելորդ չի լինիլ այս-

1. Χαλιατ. Αρμ. Θποστ. եր. 187.

տեղ բերենք այդ քաղաքի՝ նկարագրից մի
երկու դիժ: «Տիգրանակերտիւ թուէին ար-
գարե յարուցեալ քաղաքը մեծամեծք հնոցն
Ասորեստանի և Բաբելոնաց, հանգերձ պա-
րսպօքն յաղիւսոց յիսուն կանգնոց ղարձրու-
թեամբ, լայնք մինչեւ քաւական լինել շինու-
թեան ապաստանաց, հանգերձ ամուր միջ-
նաբերգան, հոյակապ ապարանիւքն ար-
տաքոյ պարսպաց»...: Սւ իգուր չէ, որ Խո-
րենացին Տիգրանակերտի պարիսպների համար
գրում է. «ի Հայկազնոյն Տիգրանայ հոծեալ
և յարմարեալ որմննքն»:

Այս հինգ կէտերն են պ. Գարագաշեանի
միջ բերած «անտեղութիւնները», որոնք բո-
լորը ինչպէս ընթերցողը կը տեսնէ, վերանում
են, երբ Տիգրան անուան աակ Մեծն Տիգ-
րան ենք հասկանում: Մենք թողնում ենք
պ. Գարագաշեանի քննադատութիւնը (Ա.
եր. 190. հատուած 42) թէ ինչպէս «ան-
հաւատալի» է Աժդահակի ինամութեան և
Տիգրանին գաւելու «անհամ առասպելը»:
Այդ քննադատութիւնը բնաւ արժէք չունի,
քանի որ նա այդ առասպելն իբրև առասպել
չէ քննում, և Խորենացու բնագիրն աղծա-
տում էլ է: Նա այսպիսի առարկութիւններ է
անում. «Բայց միթէ այնչափ անմի՞տ էր
(Աժդահակ), մինչև զիւր նենգաւոր խորհուրդ

յայտնել համարէն ժողովոյ նախարարաց: Եստ և առաջ պ. Գարագաշեանը նեղութիւն չէ կրում Խորենացին նայելու: Այնտեղ այգ-պիսի բան չկայ: Աժգահակը իւր երազը մի-այն իւր խորհրդակիցներին է պատմում: Հինգ անգամ խորհրդակիցք են յիշուած և մի անգամ թարնկամք. և ոչ մի անգամ «հա-մարէն ժողով նախարարաց»: Եւ եթէ պ. Գա-րագաշեանը իբրև առասպել քննէր, անշուշտ կը տեսնէր, որ թագաւորները շատ յաճախ նոյն իսկ իրենց նախարարներէ «համարէն ժո-ղովի» հետ այգպիսի խորհուրդ են տնում: Պ. Գարագաշեանի կարծիքով «յիմար» է Աժգահակ, «զի զայն սոսկալի դաւաճանու-թիւն կը խորհի փատարել ի ձեռն Տիգրա-նուհւոյ», «անտեղութիւն» է, որ Աժգահակը Տիգրանին երկու տէրութիւնների սահմանա-դաւան է հրաւիրում տեսակցութեան, և նմանները:

Բայց մենք թողնենք այդ անարժէք խօս-քերը և շարունակենք համեմատել Խորենա-ցու հայկազն Տիգրանի պատմութիւնը Մեծն Տիգրանի պատմութեան հետ:

6. Մեծն Տիգրանի պատմութեան մէջ կարդում ենք. «Երկրքին թագաւորքն (Տիգ-րան և Միհրդատ) եզին պայմանս, զի յա-մենայն մարտս պատերազմաց զուս աայցեն

երկուստեք ծախիւք՝ երկիրն նուաճեալ յետ
յաղթութեանն լիցի Միհրդատայ, իսկ ա-
ւարն, այն է զերիք, անասունք և զանձք՝
Տիգրանայ» (Յուսա. ԼԸ. 3. 5): Եւ այդ ա-
ւարն ու զերին, որ Տիգրանն առնում է Կա-
պադովկիայից, սակաւ բան չէ: Իւ չենք
խօսում միւս երկիրներից առաժ աւարների
ու հարկատու ազգերից ստացած գանձերի
մասին: «Ի պահպանութիւն այսպիսի և այս-
չափ զօրաց պիտոյ էր թագաւորին ամբաւ
զանձ. և Տիգրան իբրև զՄիհրդատ ունէր
քաղաքս մեծամեծս լի զանձուք, որպիսի էին
Ողականն և Բողբերդ ոչ հեռի յԱրտաշատէ,
և Արտագերք առ Եփրատաւ» (Արածանի:
Ստր. ԺԱ. 14. 6): Լսենք և արքունիքի
նկարագիրը. «Արքունիքն՝ ունայն շքով և
պերճութեամբ արկանէր ահ ժողովրդեան որ
տղայն էր: Թագաւորն մեծապատիւ մեծա-
րեալ, մինչև կոչիլ աստուած, ոչ երբէք երևէր
ի հրապարակի՝ եթէ ոչ մեծաշուք սպասու,
զգեցեալ պատմիւնան նկարէն, գաւազան,
ի սպիտակէ և ի կարմրոյ (Դիոն Կաս. ԼԶ.
52), և վերարկու ի ծիրանւոյ խորշխոր-
շան, զլուխն պսակեալ ըարձր աստնղազարդ
խուրի: Յորժամ գային առ նա յայգօրել՝
թագաւորք չորք ձեռատունկք կային յոտին,
ձեռօք կցելովք առ զահոյիւ նորա. և ի հե-

ծանել նորա ի ձի՛ ընթանային նորա առաջոյ
նորա հետի, լոկով պատմուճանաւ: Փարթա-
մացած հայ իշխաններն ևս անշուշտ պիտի
հեռեէին իրենց թագաւորի օրինակին:

Այժմ՝ տեսնենք թէ ինչպէս այս պատ-
մութիւնն անում է Խորենացին իւր սեղմ
ոճով: Նա ասելով, որ Տիգրանը մեր ազգը
բարձրացրեց և մեզ «լծադիրս և հարկապա-
հանջս կացոյց բազմաց», աւելացնում է.
«Մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց
պատուականաց և զգեստուց և պէս պէս գու-
նոց և անգուածոց՝ արանց հասակաց և կա-
նանց միանգամայն բազմացոյց. որով տգեղա-
գոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք,
և գեղաւորքն ըստ ժամանակին առհասարակ
զիւցազնացեալք»:

7. «Խաղաղութեան և շինութեան բե-
րող, իւրով և մեղու. զհասակս ամենեցուն
պարարեալ», գրում է Խորենացին Տիգրանի
համար:

Եւ արդարև, Մեծն Տիգրանի ձեռով
նուաճուած Ասորիքի համար ասում է պատ-
մութիւնը. «Ոգի առ Ասորւոց աշխարհն զամս
չորեքտասան (Ապպիան. 17.) թէպէտ ընդ
օտար իշխանաւ՝ վայելեցին խաղաղութիւն,
հանգիստ և աւուրս բարենշանս»: Եթէ օտար
աշխարհն այսպէս բարգաւաճում էր նորա

օրով, որչափ ևս աւելի լուն երկիրք: Ծուա-
ձուած ազգերի աւարով լիացած ու զարթա-
մացած՝ անշուշտ հանդիսաւ էր վայելում Հա-
յաստան, որի շինութեան համար Տիգրանը
հրէանէր և յոյներ էր գաղթեցնում: Եւ
որքան գեղեցիկ ու բուն վիպական ձևով է
արտայայտուած այդ շինութիւնն ու լիու-
թիւնը. «Իւզով և մեղու զհասակս ամենեցուն
պարարէր»: որ անշուշտ ժողովրդական երգի
խօսքերն են: Իւզ ու մեղրը մինչև այժմ մեր
ժողովրդի մէջ վիպական սիրելի կերակուրն է.
Դաւիթն իւր հայրենի իւզ ու մեղրով է
անուում, և ժողովուրդն իւր երգի մէջ մէկին
լաւ խնամելու համար ցարդ երգում է. «Բեզ
կուտացնեմ մեղր ու կարագ»¹:

8. Մեծն Տիգրանին է վերաբերում, ինչ-
պէս տեսանք, և Մարաց նուաձումը: Բայց
Խորենացու մէջ միայն այդ յիշողութիւնը չէ
պահուած: «Սա նախ յառաջագոյն դաշնա-
ւոր եղեալ Աժդահակայ, որ ի Մարաց էր,
տայ նմա զքոյր իւր Տիգրանուհի կնութեան,
ըզիւք խնդրելով Աժդահակայ: Այս խնամու-

1. 9. Խաչատուր իւր սովորական մեռով այս
«իւզ ու մեղր» էլ Աստուածաշնչից է հանում: 2X որ
այնտեղ էլ, Ծայի, է. 15. 22. գործածած կնչ «իւզ ու
մեղր կերպէ» խօսքը:

Թիւնն ևս պատմական յիշողութիւն է: Արդէն տեսանք, որ Մեծն Տիգրանի փեսան էր Ատրպատականի Մարաց Թագաւորը, որ շարքս կին զմին ի դստերաց Տիգրանայ» (Ռիսն Կաս. Զ. 16): Միայն հայոց առասպելի մէջ Տիգրանուհին որ սոփոտաբար նշանակում է Տիգրանի դուստր (Մեծն Տիգրանի հայրն էլ, հաւանօրէն Տիգրան անունն է կրել), Տիգրանի քոյրն է: Այսքան տարբերութիւն, հարկաւ Վարդէ մտնել ժողովրդական երգի մէջ:

9. Քննենք առասպելի Մարաց Թագաւորի յարաբերութիւնը Տիգրանի հետ: Աժգահի «յառաջագոյն դաշնաւոր» է Տիգրանին. փեսայանում է և ապա նորան շար նիւթել է ուզում, բայց յաղթւում և սպանւում է Տիգրանից: Այսպէս և Մեծն Տիգրանի փեսան՝ Մարաց Թագաւորը դաշնակից է հայոց Թագաւորին և յիշւում է նորա պատերազմների մէջ: Մենք չգիտենք թէ այդ փեսան ինչպէս է վարւում, երբ Տիգրանի աստղը թեքւում է: Բայց շատ շուտով, Տիգրանի անմիջական յաջորդների Արտաւազգի և Արտաշէսի ժամանակ արդէն տեսնում ենք Մարք Թշնամացած են հայոց հետ: Արտաշէս Թագաւորը նոյն իսկ կռիւ է ունենում Մարաց հետ և Պարթեւաց օգնութեամբ յաղթւում է նոցա:

Գիտենք, պատմական իրողութիւնները ժողովրդի յիշողութեան մէջ երբեմն կցւում ու միանում են իրար, և մի քանի մօտիկ ժամանակներում իրար յաջորդող թագաւորների պատմութիւնից կազմւում է մի պատմութիւն: Արդ, տեսնում ենք պատմութեան մէջ Տիգրան թագաւորը Մեծ Մարաց մայրաքաղաքն առնում, աւերում է և նոցա թագաւորին ստիպում ծանաչել իւր իշխանութիւնը: Փոքր Մարք նախ դաշնակից են հայոց, նոցա թագաւորը հայոց թագաւորի փեսան է: Ապա շուտով թշնամանում են այս երկու ազգերը, հայք և մարք: Մարաց թագաւորը հայոց թագաւորին վնասել է ուղում և հայոց թագաւորը յաղթում է նորան: Եւ այս ամենը կատարւում է մի քանի տասնետկ տարիների ընթացքում: Եւ այս ամենը հեշտութեամբ կարող է պատմուել մի հայոց թագաւորի՝ Տիգրանի և մի Մարաց թագաւորի՝ Աժդահակի վրայ: Եւ պատմուած էլ է:

Այսպէս Տիգրանի և Մարաց թագաւորի յարաբերութիւնն ամբողջապէս Մեծն Տիգրանի և նորա անմիջական յաջորդների՝ Մարաց հետ ունեցած յարաբերութեան պատմութեան մի ժողովրդական յիշողութիւն է միայն:

10. Մեծն Տիգրանի մակդիրն անգամ «մեծն» պահուած է Խորենացու մէջ երգից առած այս Տիգրանի վրայ. «Արդ յառաջ քան զձեռնարկելն մեր ի բանս որ յաղագս Մեծին Տիգրանայ» (Ա. իգ). մինչդեռ Պոմպէոսի ժամանակակից և հռոմայեցոց հետ կռուող Տիգրանին, որ իսկապէս Մեծն Տիգրանն է, Խորենացին միւս Տիգրաններից որոշելու համար «միջին» է կոչում: Ժողովրդական երգն ուրեմն ճշտութեամբ պահել է իւր գոված թագաւորի մակդիրը՝ Մեծն:

Մինք յետոյ ուրիշ գծեր էլ կը տեսնենք. որ Խորենացու մէջ Երուանդեան Տիգրանի վրայ են ասուած, բայց իսկապէս Մեծն Տիգրանին են վերաբերում: Այստեղ այսքանով բաւականանանք: Այս բերած կէտերն արդէն լիուրի ցոյց են տալի, որ երգից առած Տիգրանի պատմութիւնն ամբողջապէս Մեծն Տիգրանինն է: Հարկաւոր է միայն դուրս ձգել Ռհ. գլխից «Կիւրոսի աջակցեալ», ԻԾ. գլխից «Դաշնաւորութիւն մտերմութեան» որ ի Կիւրոսէ առ Տիգրան, կապ սիրոյ պարսկայնոյն և հայկազինն» և ԼԱ. գլխից «Օժանդակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ունելով» խօսքերը, որոնց բոլորի իմաստն էլ նոյն է՝ Կիւրոսի բարեկամութիւնն ու օժանդակութիւնը:

«Մեծին Տիգրանայ» երգից առած այս պատմութիւնն, ըստ ինքեան հասկանալի է, պէտք է հանել այն տեղից, ուր կայ Խորենացու պատմութեան մէջ, և դնել իւր իսկական տեղում: Երդն ու գովեստը Պոմպէտի ժամանակից Մեծն Տիգրանի, ըստ Խորենացու՝ միջին Տիգրանի վրայ է եղել, նորա վրայ էլ պէտք է պատմել այսուհետեւ: Եւ այսպիսով Խորենացու պատմութիւնը, որ յաղագս Մեծին Տիգրանայ, որ . . . էր հուժկու, անուանի և յաղթողս ընդ այլ աշխարհակալս», ստանում է իւր իսկական պատմական արժէքը, և միանգամայն այդ պատմութիւնը դառնում է Խորենացու Հայոց պատմութեան կարեւոր մասերից մէկը: Երգը մեծ ծշտութեամբ պահել է Մեծն Տիգրանի պատմութիւնը: Դժբախտաբար, Խորենացին, թերևս հետեւելով իւր աղբիւրին, սխալուել է իւր ժամանակագրութեան մէջ: Մենք այդ սխալի պատճառները ներքևում՝ կրտսնեմք: Այստեղ աւելորդ չի լինիլ, որ մի երկու խօսքով տեսնենք թէ ինչպէս է նկարագրում երգը Մեծն Տիգրանին:

Մեծն Տիգրանի նկարագիրը ժողովրդական սրգերի մէջ:—Մենք տեսնք, Խորենացին անմիջապէս երգերից չէ առնում Տիգ-

րանի պատմութիւնը, այլ մի գրաւոր աղբիւ-
րից, որ կոչում է «Հիւսուսն Պիտոյից» սի-
չորս հագներգութիւնս: Այս ի նկատի ու-
նենալով, արդեօք կարելի է ընդունել, որ
Յիզրանի արտաքինի և ներքինի նկարագրու-
թիւնը ժողովրդական լինի կամ ժողովրդա-
կան տարերք ունենայ իւր մէջ: Անշուշտ:

Մեր մինչև այժմ արած ուսումնասի-
րութեան մէջ տեսանք, որ Յիզրանի պատ-
մութիւնը շինծու չէ, այլ ամբողջապէս պատ-
մական է և վերցրած ժողովրդական երգերից:
Ինչքան էլ այդ պատմութեան առաջին զը-
րոզը «արգաստւորն ի բանս» այդ պատմու-
թիւնը «Պիտոյից» կանոններով մշակած լինի,
— ինչպէս որ է իրօք, — նորա պատմութիւնը
երեւակայական ու «կամամտածական» չէ: Այս-
պէս և ինչքան էլ նա Յիզրանի մարմնի «գե-
ղեցկութիւնը, զօրութիւնն ու արագութիւ-
նը» գովէր, ինչպէս պահանջում էր «ներքո-
ղեանի ստհմանը», կարելի չէ ասել, որ այդ
գովեստի գծերը, «կամամտածական» լինին և
ոչ թէ մեծ մտամբ բուն աղբիւրից՝ ժողովր-
դական երգից առած: «Մերքողեան է բան
արտադրական եղելոյ ըարեաց», ասած է Պի-
տոյից գրքի մէջ (եր. 413) ամենից առաջ,
և ոչ թէ կամամտածական մի բան: Այսպէս
և եաւից դրուած «Մովսէսի ներքողեանի»

մէջ (417 հա. ժ. ժա. ժբ.) այդ ներբողեանի հեղինակը գովում է Մովսէս մարգարէի մարմնի «գեղեցկութիւնը, զօրութիւնը և երազութիւնը», բայց նա այդ ամենն իրենից չէ շինում, այլ Աստուածաշնչից է վերցնում կամ Մովսէսի կեանքի այս կամ այն դիպուածից է հանում:

Բայց որքան զժգոյն է այդ ամենը, ոչ մի մակդիր, ոչ մի կենդանի նկարագիր. իսկ ընդհակառակն, Տիգրանի գովեստը որքան կենդանի է, վառ ու գունաւոր և մակդիրներով հարուստ: Դնչից է առաջանում այս երկու ներբողեանի միատեսակ գովեստի՝ մարմնի գեղեցկութեան և զօրութեան նկարագրի այս մեծ տարբերութիւնը: Հարկաւ ոչ միայն այս ներբողեանների հեղինակների ճարտասանական շնորհքի տարբերութիւնից, այլ աւելի այն հանգամանքից, որ Տիգրանի գովեստն առնուած է ժողովրդական երգից: Երգի մէջ արդէն պատրաստ զանէ է ներբողեանի հեղինակն այդ իսկ հովերական մակդիրներն ու նկարագիրները. «Մարտեաշս այս և աղէքեկ ծայրիւ հերաց . . . երեսօք զունեան, անձնեայն և թիկնաւէան, առոյգարարձն և գեղեցկոտն . . . կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ . . . սքանչելի դիւցազն, արծուանման սլացեալ թեօք, քաջա-

հասակն) նիղահաւորն) ամենեւին բոլոր ան-
դամովք համեմատն և ի գեղեցկութիւն աւար-
տեալ հասակի) առոյգ ամենայնիւ ընդ իր-
եարս պատշաճեալ և ուժով ոչ զոք ունե-
լով իւր զոյգ) հայկազն իազմարիւրաւորս
«Բազմարիւրաւոր» Տիգրան) — մի մակդիր)
որ միայն Մեծն Տիգրանին և նորա կէս
միլիոն զօրքին է վերաբերում: Իսկ միւս
մակդիրները) արդեօք աղո՞նք ևս բուն պատ-
մական են) այսինքն արդեօք երգը Ճշդու-
թեամբ պահել է Մեծն Տիգրանի նկարագի-
րը: Անշուշտ) կարելի չէ պահանջել) որ Առա-
ջին դարում Բ. ա. ապրող մի Թագաւորի
արտաքինը Ճշդութեամբ պահած լինի այն
ժողովրդական երգը) որ դարեր շարունակ
բերնէ բերան անցնելով) ամենավաղը Ե. դա-
րում գրուած պիտի լինի: Ժողովուրդը սի-
րում է իւր երգի մէջ իդէալական պատկեր-
ներ ստեղծել և պատմական անձերին անգամ
իւր սիրած իդէալական կերպարանքը տալ:
Բայց և այնպէս անհնարին է) որ երգը չո-
րոշէ պատմական անձի արտաքինի և ներքինի
այս կամ այն գիծը: Ուրիշներին ենք թող-
նում ընդարձակօրէն համեմատելու երգի
Տիգրանի և Մեծն Տիգրանի արտաքինը) —
եթէ վերջինս կայ նկարագրուած ուր և է:
Մենք կրբաղղատենք մեզյայտնի մի երկու գիծ:

Մեծն Տիգրան նկարագրուում է. «Անհա-
րին փառասէր և ժիր. եօթանասներեմնի չէր
կորուսեալ զիր կայտառութիւն . . . Մարմինն
էր զօրեղ: Միթէ այս կարճ նկարագիրը նոյն
խակ ամբողջագէտ՝ չէ՞ բովանդակում իւր մէջ
երգի Տիգրանի նկարագիրը: Ի՞նչ են «անձ-
նեայ» թիկնաւէտ, առոյգարարձ, կատարեալ
հասակաւ կամ քաջահասակ, և ուժով նմանը
չունեցող» բառերը, եթէ ոչ այս «զօրեղ
մարմնի» զարգացումը: Եւ մի մարդ որ եօ-
թանասուն տարեկան չէ կորցնում իւր կայ-
տառութիւնը, մի՞թէ երգը ծշմարիտ չէ
նկարագրում, կոչելով նորան «երեսօք գու-
նեան, առոյգ ամենայնիւ»: Ինչ որ Տիգրանի
արտաքինի համար ասացինք, նոյնը պէտք է
ընդունել և անձնական յատկութիւնների հա-
մար: «Զանձն յիմաստութիւն և յաջախօհու-
թիւն, յարութիւն և յարգարութիւն», ասած
է «Ներբողեանի սահմանի» մէջ: Ինչքան էլ
Տիգրանի պատմութիւնը զբողը Պիտոյից
պահանջած այդ չորս յատկութիւնները գնում
է Տիգրանի համար, կարելի չէ ասել թէ ան-
հիմն ու մտացածին բան է գրել նա: Արանց
կացեալ զուխ, և արութիւն ցուցեալ, զազգս
մեր բարձրացոյց, այսպէս է գովուած Տիգ-
րանը, որ և «արանցն այնոցիկ և ամենեցուն
քաջ»: Եւ արդարեւ «անհնարին ժիր», եւ ան-

գուն և արի է նկարագրուում Մեծն Տիգրանը՝ մի մարդ, որ մօտ 45 տարեկան հասակում թագաւորում է, քսան և հինգ տարի շարունակ քաջութեան և աշխարհակալութեան զործերով զբաղւում. մօտ եօթանասուն երկու տարեկան հասակում (69—68 թ. Ք. ա.) կտրում անցնում է «զամենայն աշխարհս Հայոց կոչել զիրիտասարգս ի զէն վասն հայրենի աշխարհին». գրում է «գգովանդակ աշխարհն ի զինուորութիւն, կաշեալ զուժեղագոյնսն միայն ընդ գրօշու». բաժանում է այդ զօրքը վաշտերի ու զնւերի և կրթում է կարճ ժամանակում, օրչափ հնար է, ըստ Հոռօմոց օրինի, որպէս զի կարողանայ հռովմայեցի լեգէոնների դէմ կռուել: Ահա՛ «արութիւն ցոյց տուող» թագաւորը:

Տիգրանի ներքին յատկութիւնները սովորաբար շատ բարձր չեն համարում: Բայց պէտք չէ մոռանալ, որ օտարներն են նկարագրած նորան և նկարագրած են իւր մեծ գաշնակցի՝ Միհրդատի հետ համեմատելով: «Թէպէտ չկարէր նա գալ ի կշիռ համեմատութեան ընդ դրացւոյն իւրում (Միհրդատայ) ոչ հանձարով և ոչ բուսով բարուցն՝ ունէր ընդ նմա զոյգ հաւասար եռանդն մեծանալոյ»: Ինչքան էլ Տիգրանը բախտաւոր աստղի տակ ծնուած լինէր և քաղաքական հան-

գամանքները նպաստաւոր լինէին նորան, մի-
թէ կարելի է կարծել, որ նա առանց ներքին
մեծ արժանաւորութեան, առանց «խոհեմա-
գոյն» և «մեծիմաստ» լինելու կարող էր
այնքան մեծ յաջողութիւն ունենալ: Այն ժա-
մանակ, արդարև, նա պէտք է «ոզի իմն»
լինէր, ինչպէս հաւատում էին ժամանակա-
կիցները, մի հաւատ, որի յիշողութիւնը
նոյնպէս մնացել է երգի մէջ: Մա կոչւում է
«կատարեալ ղիցաւզն հասակաւ և բնու-
թեամբ», «սքանչելի ղիցաւզն» (Ա. իգ. Հմմտ.
Ա. լա. «բայց ըստ ղիցաւզնութեան կարծեաց
... մի է և միայնակ հայկազանցս» Տիգրան
Ա. իգ. «Գեղաւորքն... ղիցաւզնացեալք»):
Ճիշդ է հռոմայեցոց հեռու նեցած յարաբե-
րարեութեան մէջ երևում է նորա անզու-
շուրթիւնը, բայց պէտք չէ մոռանալ, որ, ինչ-
պէս ճիշդ գտտում է Ռէյնաք. «Բսան և
հինգ ամբ... անխառն յաջողութեան ետուն
նմա սխտակալել... Սուտակոսպաք հաւա-
տային թէ ոգի իմն լցէ և ինքն յաստղ իւր
յուսացեալ էր: Թողնում ենք այդ պերճա-
բան» Թագաւորի հովանաւորութիւնը յու-
նական գպրութեան և ճարտասանութեան.
Թողնում ենք և այն, որ իւր երկիրը ծաղ-
կեցնելու համար՝ յոյն և հրեայ գերիներ է
բերում Հայաստան:

Գալով նորա արդարադատութեանը, չափաւորութեանն և ուղղախոհութեանը՝ գուցէ արամազիր լինէինք կարծելու: որ այդ հատուածը ճարտասանական ծագում ունի: Սակայն Խորենացին հենց այդտեղ յիշում է հին ժողովրդական երգերն ու գովեստներն իբրև աղբիւր: Խորենացուն չհաւատալու ոչ մի տեղիք չունինք: Մնում է, ուրեմն, Տիգրանի գովեստը՝ «պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս» և ի խրախճանութիւնս օրինաւոր... և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր» համարել ժողովրդի իդէալացումն, քանի որ Մեծն Տիգրանի համար ասում են, էր «մէտ ի հեշտանս» և արեւելեան սովորութեամբ բազմաթիւ փանայք ունէր: Այդպիսի մի գաղափարական նկարագիր է անշուշտ այն հաւասար արդարադատութիւնը, որ հայ ժողովուրդը ցանկացել է, որ իւր սիրելի թագաւորն ունենայ: «Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ մտացն լծակաւ կշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր և ոչ զնուաստն արհամարհէր» այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ ասարածել զգեառաս»:

Նկատենք զարձեւալ վերջին անգամ, որ այդ ինչպէս և վերևի խօսքերը, ինչքան էլ

ասոնց բովանդակութիւնը երգից առնուած լինի, գուցէ սակաւ բացառութեամբ՝ բառացի երգինը չեն հարկաւ: Խորենացին միշտ իւր սիրած ճարտասանական լեզուով է պատմում կամ իւր աղբիւրի ճարտասանական ոճով ու լեզուով:

Խորենացու հայեացքը մեր պատմութեան շրջանների վրայ.— Ի՞նչն է մոլորեցրել Խորենացուն, կամ իւր աղբիւրի հեղինակին, որ նա երգից առած Տիգրանի պատմութիւնը փոխանակ իւր տեղում և ժամանակում, այսինքն Միջին Տիգրանի վրայ, պատմելու՝ տալել, Կիւրոսի ժամանակ է դրել:

Ժողովրդական երգը, գիտենք, թուականներ չէ տալիս. երգից կազմած պատմութեան ժամանակագրութիւնը պատմութիւնը կազմողինն է: Եթէ մեր պատմագիրը կամ իւր աղբիւրը, այդ ժամանակագրական մեծ սխալն անուժ է, ազոր համար մի ներքին պատճառ եղած պիտի լինի: Ուզում ենք ասել, երգն այնպիսի գիծ պիտի ունենար իւր մէջ, որ յարմար գար մեր պատմագրի, կամ նորա աղբիւրի, պատմական ծանօթութիւններին, նորա հայեացքին հայոց պատմութեան շրջանների, հայ իշխանական հարստութիւնների վրայ, և որ խաբէր նորան՝

այդ ժամանակագրական սխալն անելու համար: Տեսնենք ուրեմն նախ, թէ ի՞նչ զիտէ Սորենացին մեր հին պատմութիւնից և ի՞նչ հայեացք ունի մեր հարստութիւնների վրայ:

Մեր նախնական պատմութիւնից շատ տեղեկութիւններ չունինք: Մարաց տիրապետութեան ժամանակ և առաջ ոչինչ չգիտենք: Հաւանօրէն հայերն առանձին թագաւորներ պիտի ունեցած լինին այդ ժամանակ: Կիւրոսի ժամանակակից մի Տիգրան թագաւորի անուն տալիս է Քսենեփոնը, և կարելի է կարծել, որ պատմական անձն լինի նա: Պարսից Դարեհ թագաւորն, ըստ սեպագրութեան, մեծ կռիւներ է մղում հայոց դէմ, և այնուհետև հայերը ենթարկւում են Պարսից և ապա Մակեդոնացոց ու Սելևկիացոց: Վերջիններիս ժամանակ յաճախ կառավարել են բնիկ հայ իշխաններ: Նոքա ձգտել են անկախութեան և երբեմն յաջողել են, երբեմն կրկին ենթարկուել Սելևկեանց, մինչև 189 թուականին Արտաշէս (Ա.) և Զարեհ, թերևս հին հայ թագաւորների ցեղից, հիմնում են երկու անկախ հարստութիւն: Արտաշէսի ցեղը զօրանում է, և նորա յաջորդներից Մեծն Տիգրանն, ինչպէս տեսանք, միացնում է երկիրը: Արտաշէսի բնիկ ցեղը թագաւորում է մինչև Զրիոտոսի. թուականու-

Թեան սկիզբները: Այդ միջոցից մի առժամանակ իշխում են զանազան ազգի խառն թագաւորներ, և երկիրը մէկի ձեռից միւսին է անցնում. մինչև վերջապէս 66 թուին Թ. յ. Պարթեւաց Վաղարշ Ա. թագաւորի եղբայր Տրդատ Ա. բարձրանում է հայոց գահը, և պարթեւական, Արշակունի ցեղը հաստատուում է Հայաստանում:

Այս է Հայաստանում իշխողների ընդհանուր համառօտ տեսութիւնը, որքան յայտնի է օտար աղբիւրներից: Ուրեմն երկու կամ երեք հարստութիւն. բնիկներ և օտար Արշակունիք, կամ մի աւելի ընդարձակ պատկերով.

1, Բնիկ, հին հայ իշխանութիւն կամ թագաւորութիւն.

2, Օտարների, Պարսից և Սելեւկիացոց տիրապետութիւն, բայց կան հայ իշխաններ իբրև կուսակալներ, զոնէ Սելեւկիացոց օրով.

3, Դարձեալ բնիկների հայ թագաւորութիւն Արտաշէս Ա.-ից սկսած.

4, Սոցա անկումից յետոյ խառն իշխանութիւն և երկրի մէջ իշխողների ստեպ փոփոխութիւն.

5, Օտար Արշակունիք հայոց գահի վրայ հաստատուած:

Արդ ի՞նչ գիտէ Խորենացին այս պատ-

մութիւնից: Ծա գիտէ նոյնպէս.

1) Բնիկ, շատ հին հայ իշխանութիւն.

2) Օտարների (Ասորեստանցոց) տիրապետութիւն, որի ժամանակ սակայն շարունակուած է հին ցեղն իրրե կուսակալութիւն.

3) Բնիկների այդ ցեղը հայ թագաւորութիւն է հաստատուած.

4) Սորա անկումից յետոյ շփոթ իմն ամբոխից լեալ, այլ զարամբ ելանէին արեւ աշխարհիս, ուստի և Խորենացին բան չէ պատմում (Ա. լա):

5) Օտար Արշակունիք թագաւորում են Հայաստանում:

Համեմատութիւնը պարզ ցոյց է տալիս, որ Խորենացու գրածը պատմական հիմունքից զուրկ չէ. նորա դրած իշխանութեանց կարգը կատարելապէս այն է, ինչ որ մենք օտար աղբիւրներից գիտենք: Եւ ի զուր չէ ասած թէ պատմագիրներն իրենց առասպելներն ու զրոյցները, իրենց պատմածն օգից խօ՛ չեն վերցնում: Խորենացին պահել է մեր երկրի հին քաղաքական պատմութեան յիշողութիւնների, բայց, աւանդ, միայն ընդհանուր ձեով: Տեսնենք այդ յիշողութիւնները:

Արշակունիք ըստ Խորենացու օտար ծագում ունին, մինչդեռ նոցանից առաջ իշխող հայ թագաւորները բնիկ հայ են, այն արիւ-

նից, որ զգում է Խորենացին իւր երակների մէջ: Նա Հայկազանց Թագաւորների համար գրում է. «Զանզի այսօրիկ արք ի մերոց Թագաւորաց են սիրելիք, որպէս ընիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք»¹, «Մեր Թագաւորների միջից այս մարդիկն ինձ սիրելի են որպէս բնիկներ»...: Այս խօսքերը զանազան մեկնութիւնների տեղիք են տուած: Ոմանք կարծում են թէ մեր պատմագիրը Հայկազանց Թագաւորներին ընիկ է անուանում, ի նկատի ունենալով հայ իշխաններին Պարէտից մինչեւ Սկայորդի, որոնք իբրեւ թէ ըստ Խորենացու ընիկ եւ հարազատ չեն: Խորենացին այդպիսի բան չէ ասում, այլ նորա քննադատներն են միայն ուզում այդպէս հասկանալ: Եւ այդպէս հասկանալ են ուզում, զի Յովհաննէս կաթողիկոսն էլ այդպէս է հասկացել: Այդպէս հասկացողներից է և Շնորհ. Միաբան,² որի փաստերը, սակայն, համոզելի չեն և հիմնուած են բնագրի սխալ ընթերցուածի ու մեկնութեան և կամայական փոփոխութեան

1. Ըստ Ա. մեռագիրների: Տպագիրն աղտաւորուած է ունենալով «ի մերոյ բագաւորէն»:

2. Միաբան, Խոր. Պատմ. Ուսումն. եր. 49 հոգ.

վրայ¹։ Յովհաննէս կաթողիկոսի գրածը ճշմարտելու համար հարկ է եղել նոյն իսկ ՌԲ. գլխի մէջ եղած «Պարոյր, որոյի Սկայորդուոյ» խօսքերի վերջին երկու բառն «ընդմիջարկութիւն» համարել, բառեր, որ, ինչպէս ինքը Շնորհ. Մխարանն ասում է, կան բոլոր ձեռագիրների մէջ, Բայց նա այդ ժամանակ աչքից փախցնում է, որ հարկ պիտի լինի ջնջել և մի ուրիշ բառ, անուանների ցանկի գլխին դրած «Ծննդաբանութիւն» բառը։

Մեր պատմագիրը (Ա. ա.) ծրագրում է «գորոհի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանել զըովանդակն»։ Այդ պատճառով և իւր առաջին գիրքն անուանում է «Ծննդաբանութիւն հայոց մեծաց», այսինքն որդէցորդի ազգաբանութիւն։ Արդ, համեմատ այդ ծրագրին՝ նոյն իսկ ԺԹ. գլխի մէջ հայ նախարարների ցանկի վերնագիրը գտնում ենք «Համեմատաբանութիւն ծննդաբանութեան ազգիս մերոյ . . . մինչև ցՍարդանապատ»։ Եւ այդ Ծննդաբանութեան մէջ են Արայից սկսած մինչև Սկայորդի։ (Հմմտ. եր. 404 հտ.)

1. Այդ սխալ փաստերից ինչ որ կարելու էր՝ մեք տեսնեմք վերեւի ծանօթութիւններից մեկում (եր. 455)։ Այդ այն էր՝ իրեւ թէ Պարոյր Վարդակի օգնութեամբ խոյուն է իշխանութիւնը Սկայորդուոց։ Մնացածներն աւելի եւս անարժեք են։

Շատ պարզ է ուրեմն, որ ինչպէս Արան է, յՍորենացու խօսքով ասենք, ի ծննդոց Հայկի, նոյնպէս և այդ ծննդաբանութեան մէջ մտած մեւ իշխանները, Սկայորգին էլ հեաները, որոնք որդէց որդի ծագում են Արայից, հետեւաբար և Հայկից: Սկայորգու որդին է Պարոյր, և սորա սերունդը շարունակուում է մինչև Վահէ: Այսպէս երեւակայական է դառնում յՍորենացու մէջ Հայկից մինչև Վահէ ոչ բնիկներ, Հայկից չսերուածներ որոնելը: Պարոյրի ժամանակ ցեղի փոփոխութիւն չէ լինում, այլ միայն «նախարարներն» սկսում են «թագաւոր» անունը կրել: Թէ մեր հասկացածը ճիշտ է, այդ հաստատուում է և հետեւեալով, յՍորենացին գրում է. «Մեր թագաւորների միջից այս մարդիկը սիրելի են ինձ որպէս ընդհաներ» . . . : Արդ օր թագաւորների միջից այդ մարդիկը, Պարոյրից մինչև Տիգրան (ինչ որ դնում է այդ իՐ գլխի մէջ) սիրելի են մեր պատմագրին որպէս բնիկներ, եթէ Պարոյրից առաջ հայ թագաւորներ չկան, իսկ Տիգրանից յետոյ Վահագնից մինչև Վահէ եկողները նոյնպէս բնիկ են և հայկազն, Տիգրանի ու Պարոյրի սերունդ: Մնում է ուրեմն ընդունել, որ յՍորենացին հայկազանց թագաւորներին բնիկ, հարազատ է անուանում ի նկատի ունենալով ոչ թէ նախորդ իշխաններին,

այլյաջորդ հարստութիւնը, Արշակունի թագաւորներին, որոնք պարթեական, ուստի և օտար ծագում ունին և բնիկ չեն:

Այսպէս Խորենացին երկու հայ իշխանական ցեղ զիտէ միայն, բնիկներ և օտար Արշակունիք, բնիկ թագաւորներ և Արշակունի թագաւորներ¹, Նորա բնիկ թագաւորները, որոնց անուանում է նաև «առաջին թագաւորք» (Բ. է. Ը). Արշակունիներից առաջ Հայաստանում իշխող հայ թագաւորական ցեղի մի յիշողութիւն է, սակայն ժամանակագրական մի խոշոր սխալով: Ծիշտ այն միջոցին, երբ, ըստ օտար հաւաստի ազբիւրների, Հայաստանում

1. Խորենացու Արշակունի կոչած առաջին քաջաւորները մի օտարիակ խարնուրդ են: Վաղարշակ եւ Արշակ յիշողութիւն կարեւի և համարել Պարթեւների, Արշակը Պարթեաց Արաւան Գ. քաջաւորի որդի Արշակի, որ առաջին անգամ (34 ք. Բ. 1.) փորձում է Հայաստանում քաջաւորել, իսկ Վաղարշակը Պարթեաց քաջաւոր Վաղարշի Ա-ի, որ երկար պատերազմներ է վարում, մինչև վերջապէս յաշողում է իւր եղբորը Տրդատ Ա-ին հայոց գահի վրայ բազմեցնել: Այժմեհեսե Արաւշուք, հաւանօրէն, Միջին Տիգրան եւ Արաւագը վերցում են բնիկ Արաւշուքան ցեղից եւ, թեպէս Արշակունի անունով, դուռն են վերջին երկուսն իրենց սեղում եւ ժամանակում: Արշամ, Արգար եւ Անանուն ասորական են եւ հարազատների շարքի մէջ մտնած. իսկ վիպական օրուկի, Երուանդի եւ Արաւշուքի մասին ձեռք չեն:

Արտաշէսից սերուած բնիկ հայ հարստութիւնն էր թագաւորում և դեռ պիտի թագաւորէր մինչև Բրիստոսի թուականութեան սկիզբները: Խորենացին զնում է օտար Արշակունեաց հարստութեան սկիզբը: Մի անգամ որ օտար Արշակունեաց սկիզբը յետ է քաշած և դրած Բ. դարում Բ. ա. երբ բնիկ Արտաշիսեան ցեղն էր իշխում, բնականաբար Խորենացու մէջ բնիկ թագաւորներն ևս խախտում են իրենց տեղից և յետ տարուելով դրւում են առաջ՝ Մարաց և Պարսից թագաւորութեան օրով, Է—Դ. դարում Բ. ա.: Իսկ բնիկ թագաւորներից առաջ եղած օտարազգի փրապետութեան յիշողութիւնը, որ իսկապէս Պարսից և Մակեդոնացոց ժամանակին է վերաբերում, աւելի ևս յետ քաշուելով ընկած է Ասորեստանցոց օրով: Այսպէս և իւր կողմից նախապարսկական հայ իշխանութեան յիշողութիւնն էլ աւելի ևս առաջ պիտի ընկնէր:

Թէ ինչ պատճառներից և աղբիւրներից է առաջացել Խորենացու այս սխալ և յարմարեցրած ժամանակագրութիւնը, այդ մի կողմն ենք թողնում, թէպէտև անհնարին չէ այդ պարզելը: Դառնանք մեր խնդրին թէ ինչու Խորենացին կամ իւր աղբիւրը սխալուել է և երգից առած Մեծն Տիգրանին

տարել Կիւրոսի ժամանակ է զրել: Մենք չորս հանգամանքի մէջ ենք տեսնում այդ սխալի հիմունքը:

1. Մեծն Տիգրան առաջին հին Թագաւորներից է: (Ոստանիկ կամ Արքունի տուն):—Խորենացին իւր աղբիւրից աննելով գրում է Տիգրանի պատմութեան վերջում. «Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ Թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբօխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց անուամբ իւրով Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառան զայսոսիկ ի Ճառայութիւն նմա հրամայէ (Տիգրան): Եւ զՈստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս իբր Թագաւորական զարմն» (Ա. Ը.)¹:

Ումինց է սերուած այդ Ոստան ազատութիւնը. Տիգրանից թէ Տիգրանուհուց: Մինչև այժմ հասկացած են Տիգրանուհուց².

1. Մեզ բնում Կ ք Կ այսեղ բնագրի աղաւաղում կայ. վերնագրի մէջ դրած Կ. «Յաղագս ք Կ ր աղագաւ յարկեաց զոյր իւր Տիգրանուհի ի Տիգրանակերտ», իսկ բնագրի մէջ այդ «Կ ր աղագաւ» խօսքը բացատրուած չեմք գտնում:

2. Ինձիճեան. Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի Բ. եր. 132 հո.: Սակայն Ինձիճեանը ոչ միայն Տիգրանուհու սերունդները, այլ ևւ մոտ ուղիկողներին

բայց այդպէս հասկանալու համար առանձին հիմք չկայ: Իսկ Տիգրանից հասկանալու համար չէ խանդարուժ այն հանգամանքը որ «հրամայէ» բայից յետոյ Տիգրան անուներ չկայ և զօրութեամբ է հասկացուում: «Սորա» դերանուան տակ Տիգրան կարելի է հասկանալ, ինչպէս և յաջորդ գլխի վերնագրի մէջ. «Թէ ո՞յք ոմանք սորա զարմք» . . . հասկանում ենք Տիգրանի համար: Թէ թագաւորներից էլ կարող են ազնուական ցեղեր սերուած լինել, այդ տեսնում ենք լա. գլխի մէջ. Վահագնից, Վահանունից, Առաւանից, Առաւենեանից, Զարեհից, Զարեհաւանիցն ազգ: Այսպէս և Տիգրանից է սերուած Խորենացու «թագաւորական զարմ» համարած Ոստան ազատութիւնը:

Այս շատ պարզ երևում է Խորենացու մի ուրիշ վկայութիւնից, որով նա այդ ցեղը հայ թագաւորներից է սերուած համարում: «Եւ գունդս և պահուպանս դրան արքունի պատրաստէ զչորսս» զմի մի իւրաքանչիւր վառելովք ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան ի հարանց ստացեալ զիւղս և զաստակերտս: Իսկ աստ ուրեմն պարսից

սերունդները ինչպէս և «թագաւորազունք Արշակունեաց», համարում է այդպէս կոչուած:

Թագաւորութեանն, որպէս լսեմ, յայ-
լոց յարուցեալ գունդս և ոստանն անուանել-
ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջ-
նոց, թէ վասն ընդդիմութեան իրիք լինելոյ
շկապեալ (վարիանտ՝ նշկահեալ) և ի բաց
ընկեցեալ զազգն և զայլս ի տեղիս նոցա յա-
րուցին գունդս անուամբ արքունի: Այլ առա-
ջինն հաստատ ի զարմից Թագաւորացն ա-
ռաջնոց. որպէս այժմ ի Վրաց աշխարհին,
որ Սեփիծուղն¹ կոչի» (Բ. է.):

Խորենացու այս վկայութիւնից իմանում
ենք, որ Ռաթան աղատութիւնը կոչուել է
և Արքունի: Այս երկու կոչումը միասին
գտնում ենք և Եղիշէի մէջ. Գիունդ կազմէր ի
Հայոց մեծաց զազատ և զազատորդի և յԱր-
քունի տանէ զՌատանիկ մարդիկ»: Բազում
և այլ ազատ մարդիկ, որ Ռատանիկան անուա-
նեն յԱրքունի տանէ»: Ուրիշ տեղ Եղիշէն
պարզաբար Արքունի տուն է յիշում առանց
Ռատանիկ բառի. «Եւ զայլ բազում զօրս
յԱրքունի տանէն արկ յինքն»²:

Այդ ցեղի «Արքունի տուն» անունը ցոյց

1. Այս բառը վրացերէն նշանակում է «արխարդի»
բառ պ. Մառի. «Սեպուն» բառի սուղաբանութիւն (От-
дѣльный оттискъ изъ „Запис. В. Отд. им. русс.
Арх. Общ.“ т. IV. кр. 395—397):

2. Եղիշէ. Տփիսիս. 1879. եր. 11. 107. 135:

է տալիս, որ այդ ազատութիւնն իրօք «Թագաւորական զարմ» է համարուել, ինչպէս դնում է Խորենացին, յատկապէս Արշակունիներէց առաջ Հայաստանում իշխող հայ Թագաւորների զարմ: Եւ արգարեւ, Արշակունեաց օրով հին հայ Թագաւորական ցեղը չէր կարող ոչնչանալ, այլ պիտի մնար իբրև մի ազնուականութիւն: Եւ այդ ցեղը մնացել և նոյն իսկ յարատեւել է մինչև Յովհաննէս կաթողիկոսի ժամանակ, համարուելով շարունակ իբրև Թագաւորական զարմ: Յովհաննէս կաթողիկոսը պարզաբար Տիգրանից սերուած է դնում այդ ցեղը (առնելով հարկաւ Խորենացուց), իւր ժամանակի համար աւելացնելով. «Եւ ի սմանէ (ի Տիգրանայ) առեն լինել զՈստանիկ ազատութիւն բարձին, որ այժմ դեռ եւս կայ եւ սլահի անուամբ իբր Թագաւորական իմն զարմ զնոսա իմացեալ» (եր. 15):

Այսպէս Խորենացին «հաստատ» գիտէ, որ այդ Ոստանիկ կամ Արքունի տուն կոչուած ազատութիւնն է ի հին զարմից Թագաւորացն առաջնոց որ ի Հայկոյ: Միւս կողմից նա պարզաբար ասում է թէ այն աղբիւրի մէջ, որից Տիգրանի պատմութիւնն է առնում, յիշուած է եղել, որ այդ Ոստանիկ կամ Արքունի տուն ազատութիւնը

սերուած է Տիգրանից: Եթէ նոյն իսկ այդ աղբիւրի մէջ Տիգրանը իբրև մեր առաջին հին թագաւորներից մէկը յիշուած չլինէր, Խորենացին ինքը պէտք է այդ Տիգրանին զնէր իւր առաջին հին թագաւորների մէջ: Նորան միջին Տիգրանի հետ նոյնացնել չէր կարող, որովհետև Միջին Տիգրանին մեր պատմագիրն Արշակունի գիտէ, այսինքն ոչ առաջին հին թագաւորներից: Պէտք է ուրեմն Տիգրանը հայկազն կամ հին թագաւորների ցանկի մէջ մտնէր, որպէս զի նորանից կարողանար սերուած լինել առաջին հին թագաւորներից ծագող Ոստանիկ կամ Արքունի տունը:

2, Տիգրանը ընդ թագաւոր է:— Խորենացին կամ իւր աղբիւրը Տիգրանի համար ունի մի զիծ ևս. նա, ինչպէս և մեր միւս առաջին հին թագաւորները, «բնիկ և հարազատ» է (Ա. իբ. հմմտ. Ա. լա. «Հաւաստի պատմել զըուն և զառաջին Տիգրան): Այդ «բնիկ» լինելն իսկապէս Մեծն Տիգրանին կամ Խորենացու Միջին Տիգրանին է վերաբերում. բայց մեր պատմագիրը կամ իւր աղբիւրը «բնիկ» Տիգրանին չէր կարող նոյնացնել Միջին Տիգրանի հետ, որովհետև սորան նա Արշակունի, այսինքն օտար ծագումից գիտէ: Մնում էր ուրեմն, որ այդ

«բնիկ» Տիգրանը՝ որ միանգամայն մեր առաջին հին թագաւորներից է, դրուէր մեր պատմագրին (կամ իւր աղբիւրին) ծանօթ միակ բնիկ հարստութեան, հայկազն թագաւորների ցանկի մէջ:

Կարող էր արդեօք երգի մէջ, որի վրայ հիմնուած է Խորենացու աղբիւրը, Տիգրանը բնիկ, հարազատ և մեր առաջին (ոչ Արշակունի) թագաւորներից համարուել: Անշուշտ: Մեծն Տիգրանի առասպելի կազմուելու և նորա մասին եղած երգերի կենդանի ժամանակը եղել է անհրաժեշտօրէն Մեծն Տիգրանից քիչ ուշ, այսինքն Քրիստոսից քիչ առաջ և ապա մեր թուականութեան առաջին դարը: Այդ միջոցին հայոց բնիկ թագաւորների տեղը բռնում են օտար թագաւորներ, և այդ բաւական չէ, երկիրը վրդովմունքի մէջ է ընկնում այդ մարացի, պոնտացի, վրացի թագաւորների օրով, մինչև պարթևական Արշակունի օտար ցեղն իշխում է հայոց վրայ: Այդ օտար թագաւորների խառնաշփոթ և խռովայոյզ տիրապետութեան ժամանակ տեղիք ունէր հայ ժողովուրդը յիշելու իւր առաջին բնիկ թագաւորներին և մանաւանդ «խաղաղութեան և շինութեան բերող» Տիգրանին, իւր «բնիկ և հարազատ» թագաւորին, և ասելու նորա համար «յեա-

նոց ըզձայի ինքն և ժամանակ իւր: Երգն ուրեմն շատ ճշտութեամբ պահել է Մեծն Տիգրանին վերաբերած մի գիծ, որ Խորենացին (կամ իւր աղբիւրը) Միջին Տիգրանի համար չէր կարող ընդունել, որովհետեւ սարան նա Արշակունի գիտէ:

3, Մարք:—Երրորդ հանգամանքը, որ Խորենացուն կամ իւր աղբիւրի հեղինակին պատճառ է եղել երգի Տիգրանին Միջին Տիգրանի հետ չնոյնացնելու, այլ դնելու հին բնիկ Թագաւորների մէջ, Մարաց Թագաւորների ժամանակ, է այն, որ երգի մէջ յիշուած են եղել Մարք: Այս ազգի անունն արդարև կարող էր մտնել Մեծն Տիգրանի երգի մէջ, քանի որ նա, ինչպէս տեսանք, կռիւ, դաշնադրութիւն և նոյն իսկ խնամութիւն է ունեցել նոցա հետ:

4, Աժդահակ՝ Մարաց Թագաւոր:—Կարող էին արդեօք Կիւրոսի և Աժդահակի անուններն ևս յիշուած լինել մեր երգի մէջ: Թէպէտև ժողովրդական անաքրոնիզմը մեծ Թռիչքներ է անում, բայց և այնպէս դժուար է կարծել, որ մեր ժողովուրդը Կիւրոսի մասին յիշողութիւն չունէր և պարսից այդ մեծ աշխարհակալի անունը կապած մեր մեծ աշխարհակալի հետ: Արդ մեզ համար անհասկանալի է: Մենք Կիւրոսի անունը

Խորենացու կամ իւր աղբիւրի աւելցրած՝ «յարմարեցրածն» ենք համարում: Այդ պարզ երևում է պատմութեան ընթացքից. Կիւրոր ոչ մի դեր չէ կատարում: Մա միայն «աջակցում է» Տիգրանին. «կամօք և յօժարութեամբ օժանդակում է» նորան, «միաբան և բարեկամ է» նորան, — խօսքեր, որոնք բոլորը նոյն իմաստն ունին և որոնց չլինելը բնաւ չէ խանգարում պատմուածքին: Աժդահակի վախը միայն Տիգրանից է, և սա մենակ կռուում և սպանում է նորան առանց Կիւրոսի: Մոյնը կարելի չէ ասել Աժդահակի համար: Սա, (ինչպէս և իւր անունը Աժդահակ) էական տեղ է բռնում պատմութեան մէջ, այնպէս որ եթէ դուրս ձգուի ամբողջ պատմուածքն արդէն կոչնչանայ: Գուցէ կարելի լինէր կարծել, որ Մեծն Տիգրանի երգի մէջ Աժդահակ անունը յիշուած չէ եղել, այլ միայն Տիգրանի կռիւը Մարաց որ և է թագաւորի հետ. բայց երգը մշակողին ծանօթ է եղել Զսենեփոնի պատմածը մի հայ թագաւոր Տիգրանի և Աստիազէսի ու Կիւրոսի մասին, և նա ժողովրդական երգը մշակելիս Մարաց թագաւորի անունը փոխել է Աժդահակ և իրենից աւելացրել Կիւրոսի անունը: Սակայն մենք ոչ մի ուրիշ հիմք չունինք ընդունելու, որ Խորենացու աղբիւրի

հեղինակին ծանօթ է եղել Բսենեփոնի յիշած Տիգրանը, բայց եթէ միայն այն, որ Տիգրան Կիւրոս և Աժդահակ անուները միասին են յիշուում: Բայց այդ կարելի է բացատրել այնու, որ ժողովրդական երգի մէջ հենց յիշուած է եղել Մարաց Աժդահակ թագաւոր անունը. իսկ այս հանգամանքը միայն բուական էր, որ երգը մշակողը, — որին առանց Բսենեփոնի ևս ծանօթ կարող էր լինել Մարաց Աստիագէս թագաւորը, ինչպէս ծանօթ է Մարենացուն, — Մարաց Աժդահակ թագաւորի դէմ կռուող Տիգրանին դնէր Մարաց թագաւորների օրով, յատկապէս Աստիագէսի ժամանակակից, և ապա իրենից աւելացնէր Կիւրոսի անունը, որ իրեն հաւաստեաւ կարող էր ծանօթ լինել առանց Բսենեփոնի:

Կարող էր արդեօք հայ ժողովրդական երգի կամ զրոյցի մէջ լինել Մարաց Աժդահակ թագաւորի անունը, այն էլ Մեծն Տիգրանի անուն հետ կապուած:

Աժդահակի առասպելն եւ անոր պատմական զոյն ստանալը: — Մեր մինչև այժմ արած հետազոտութիւնից տեսանք, որ Տիգրանի պատմութիւնն իւր շատ մանրամասնութիւններով բուն պատմական յիշողութիւն է: Սակայն այդ պատմութիւնն ունի

և առասպելական, յատկապէս ամպրոպի վիշապի առասպելի բնաւորութիւնն, որ ինչքան էլ Մեծն Տիգրանի պատմութեան ազդեցութեան տակ և եւհեմերական մտածութեամբ պատմական դոյն է ստուցել, բայց դեռ երևում է պարզապէս որոշ առասպելական գծերով:

1) Աժդահակ անունը մեզ ծանօթ Աժի Դահական, Վիշապ Դահակն է, որի դէմ կռոււմ է Պարսից մէջ Թրայետաօնան. սորան համապատասխան է հնդկաց մէջ Ինդրայի յատկութիւններն ունեցող Տրիտա ամտուածը, որ կռոււմ է նոյնպէս Վիշապի դէմ: Աժդահակի վիշապ նշանակութիւնը ծանօթ է Խորենացուն:

2) Ոչ միայն առասպելական Աժդահակ անունը և նորա վիշապ նշանակութիւնն է մնացել, այլ և Աժդահակի կինը՝ Անոյշ, յիշուում է (Ա. լա.) պարզաբար իբրև «մայր վիշապաց»: Հաւաստեալ կարելի է ասել, որ այս խօսքը ժողովրդական ծագում ունի, թէպէտև Խորենացին գործ է ածած մի տեղ, ուր առասպելի բովանդակութիւն չէ բերում, այլ Տիգրանին է գովում: «Մայր վիշապաց» ասելով մեր պատմագիրը հասկանում է «մայր զարմիցն Աժդահակայ» կամ «մայր մարացւոց», այսինքն Մուրացանների: Կարելի չէ կարծել

Թէ նա վերջին ձևերը դարձրած լինի «մայր վիշապաց» քանի որ նա «ճշմարտապատմութեան» համար միշտ հակառակն է անում, այսինքն վիշապք և վիշապագունք դարձնում է Մարք և Մուրացանք: Այստեղ Խորենացին մոռացմամբ ժողովրդական ձևն է դրել և ոչ թէ մեկնութիւնը:

3) Տիգրանի առասպելի մէջ այդ «վիշապաց մայր» Անոյշը բնակում է «որդուվքն իւրովք յանդորրութեան սպառուածի փլածի մեծի լերինն» (Մասեաց), այսինքն այն լեռան վրայ, որ ինչպէս գիտկնք՝ վիշապների կամ վիշապագանց բնակարան է ըստ վիպասանաց: Արդ որոնք ենք այդ «վիշապաց մօր» որդիքը, եթէ ոչ նոյն Մասեաց վիշապները կամ վիշապագունք:

4) Նոյն Մասիս լեռան վրայ է մնում և Վիշապ Արտաւազը, որ ինչպէս տեսանք՝ փոխանակած է Աժիդահակային (տես է. գլ. 356 հտն.): Միւս կողմից Մասիսի վիշապագանց համար կայ և զարմք Աժդահակայ՝ կոչումը: Արդարև Խորենացին չէ ասում, որ վիպասանաց երգի մէջ «զարմք Աժդահակայ» չիշուած լինի, և այդ կոչմանն տակ նա մարք է հասկանում, բայց զարմք Աժդահակայ՝ Խորենացու հնարածը չէ: Այդ կոչումը նոյն ձևով կարող էր առաջուց մեկնուած լինել

իրրև մարք և Մուրացանք և սոցա իմաստով զործածութեան մէջ մտած, ինչպէս Խորենացին մեկնում է վիշապք և վիշապազունք իրրև մարք: Եթէ այդ եւհեմիրական մեկնութիւնը դուրս ձգենք, մնում է միայն մի առասպելական յիշողութիւն, թէ Մասիսի վրայ բնակող վիշապազունք են «զարմք Աժգահակայ», վիշապ Դահակի և նորա կնոջ «վիշապաց մայր» Անուշի:

5) «Վիշապաց մօր» երևան գալը մեր առասպելի մէջ մի պատահական բան պէտք չէ համարել: Վիշապի կանայք յաճախ դուրս են գալիս ամպրոպային կռուի մէջ: Այդ կանայք գերւում են ամպրոպային աստուծուց, երբ սա յաղթում է վիշապին: Դնդրայի կռուի մէջ Ահիի (վիշապի) դէմ՝ նոյն իսկ վերջինիս մայրն է դուրս գալիս¹: Ամպրոպային առասպելի մէջ, ինչպէս տեսել ենք, դուրս են գալիս և աստուածային կանայք, ամպրոպի աստուծու քոյրը կամ կինը, որոնց յափշտակում է վիշապն և արգելում իւր բուրգում: Մեր առասպելի մէջ Տիգրանուհին նոյն զերն է կատարում:

Աժգահակի և Տիգրանի առասպելն ունի այսպիսով ամբողջապէս մի ամպրոպային ա-

1. Mannhardt, Germ. Mythen. եր. 76, 84:

առասպելի բովանդակութիւնն: Աժդահակ, ամպ-
րոպային վիշապը, որից սերւում են «Աժդա-
հակայ զարմք», վիշապներ կամ վիշապա-
զունք, յափշտակում է Տիգրանից (սկզբը-
նապէս ամպրոպային աստուած) սորա քրոջը
և պահում իւր մօտ: Բայց Տիգրանը յար-
ձակւում է իւր Թշնամի վիշապի վրայ, սպա-
նում է նորան, ազատում քրոջը և գերում
է վիշապի կնոջը, «վիշապաց մօրն» և քնա-
կեցնում նորան իւր սերնդով Մասիսի վրայ:

6) Տիգրանի տեղ սկզբնապէս ամպրո-
պային աստուած եղած պիտի լինի: Մեր
ամպրոպային աստուածը, ինչպէս տեսել ենք,
է Վահագն: Սա ևս եղած պիտի լինի սկզբը-
նապէս վիշապ Աժդահակի դէմ կռուողը:
Այս ենթադրութիւնը հաւանական է դառ-
նում այնու, որ Աժդահակի դէմ կռուող
Տիգրանը նորա հայրն է, մի հանգամանք, որ
պատահական կարելի չէ համարել: Այդ
ազգակցութիւնը մեր պատմագիրը կամ Վա-
հագնի մասին երգողներից առած պիտի լի-
նի, կամ Տիգրանի մասին պատմող աղբիւրից:
Առասպելաբանութեան մի ընդհանուր յատ-
կութեամբ, մանաւանդ երբ առասպելն սկսում
է կորցնել իւր դիցաբանական կերպարանքը
և պատմական գոյն ստանալ, յաճախ մի աս-
տուածութիւն կամ դիւցազն բաժանւում է

երկսի. ստեղծուած է աստուծու կամ դիւ-
ցազնի համար հայր կամ որդի, որի վրայ
պատմուած է, երբեմն փոխուած ձևով, միև-
նոյն հին առասպելը: Չրոյցի այսպէս երկսի
բաժանուելը (die Zweispaltung der Sage) ան-
հրաժեշտ պիտի լինէր այն ժամանակ, երբ
արդէն մարք և վիշապք պկսիլ էին շփոթուել
պատմողների գիտակցութեան մէջ, երբ ա-
ռասպել և իրականութիւն խառնուած էին:
Վիշապաց ազգի տեղ անցուած էր Մարաց
ազգ, հարկաւոր էր, որ ամպրոպային աս-
տուծու տեղ ևս մի պատմական անձ անց-
նէր: Եւ ս'վ կարող էր աւելի յարմարաւոր
լինել այդ դերը կատարելու համար քան
Մեծն Տիգրան, մի թագաւոր, որ իւր կեն-
դանութեան ժամանակ հենց աստուած կամ
դիւցազն է համարուած, որ մարաց հետ
իրօք նման յարաբերութիւն ունեցած է,
ինչպիսին պատմուած էր առասպելի մէջ:

Ասացինք բուն առասպելը ստացել է
պատմական գոյն, վիշապաց ազգին փո-
խանակել է մարաց ազգ, վիշապաց թագաւոր
Աժդահակը դարձել է մարաց թագաւոր, և
նորա սերունդ վիշապազունք դարձել են մարք:
Ի՞նչպէս է եղել, որ վիշապ բառին մար բառն
է փոխանակել: Եստ պարզ պատճառով. մար
նշանակուած է օձ, վիշապ: Արդարև մեր մատե-

նադրութեան մէջ չկայ պարսկերէն մար (=օձ) վիշապ) բառը գործածուած, բայց մի թէ ամեն պարսկերէն բառեր, որ մեր ժողովրդի մէջ եղել են և կան այժմ մտնել են մատենադիրների մէջ: Պարսկերէն լեզուն դեռ Բսենեփոնի ժամանակ ծանօթ է եղել հայերէն և նոյն իսկ հայ կանանց, ուստի «մար» բառի «օձ» նշանակութիւնն ամենահին ժամանակներից կարող էր ծանօթ լինել մեր ժողովրդին, ինչպէս և այժմ ծանօթ է: Մի անգամ որ վիպասանների գիտակցութեան մէջ մար նշանակում է վիշապ, այն ժամանակ հեշտ հասկանալի է թէ ինչպէս հին առաքելական օձերի կամ վիշապաց թագաւոր Աժդահակին կարող էր փոխանակել Մարաց թագաւորը, և նորա սերունդն՝ Աժդահակայ զարմք՝ կարող էին համարուել Մարաց Աժդահակ թագաւորի սերունդ մարք:

Բառերի այս համանման նշանակութեան պատճառով, ինչպէս լինում է յաճախ առասպելաբանութեան մէջ, բուն առասպելը կարող էր հեշտութեամբ եւ հեմերաբար մտածուելով պատմական կերպարանք ստանալ և Մասեաց վիշապների գերութիւնը համարուել Մասեաց ստորոտներում բնակող Մարաց գերութիւն Մեծն Տիգրանի ձեռով, որ յայտնի է իւր Հայաստան բերած բազմաթիւ գերիներով:

Այսպիսով պատմուածքի մէջ երկուութիւն է մտնում, առասպել և իրականութիւն խառնելու բն. ճիշտ ինչպէս շատ ժողովրդական առասպելների մէջ, ինչպէս և մեր արդի ժողովրդական վէպի մէջ, որ թէ պատմական և թէ առասպելական կերպարանք ունի: Զի ինչպէս բուն սկզբնական առասպելը հետզհետէ պատմական գոյն է ստանում, յաճախ պատահում է, որ սկզբնապէս բուն պատմական զրոյցն ևս որ և է պատճառով հետզհետէ առասպելի կերպարանք է ստանում և իրեն քաշելով միացնում իւր մէջ առասպելական գծեր և նոյն իսկ ամբողջ միջադէպեր: Այսպիսի փոփոխութեամբ մեր Սասնու ծռերի Դաւթի մասը, որ պատմական է, առասպելական գոյն է ստացած և միացրած իւր հետ Մհերի մասը (որ սկզբնապէս բուն առասպել է), տալով նորան պատմական գոյն: Այսպէս և մեր հին վիպասանքի մէջ Արտաշէսի Մարաց հետ ունեցած բուն պատմական իրողութեանը միացած են վիշապների առասպելներ, քանի որ ժողովրդի գիտակցութեան մէջ մարք և վիշապներ սկսած են շփոթուել: Ասել չի ուզիլ, որ Աժդահակի առասպելը պատմական գոյն ստանալով՝ իրեն պիտի քաշէր Տիգրանի պատմութիւնից շատ գծեր, որոնք բուն պատմական են. և շատ առաս-

պելական գծեր ևս պիտի կերպարանափոխուէին: Օրինակ, առասպելի յափշտակութեան տեղ անցել է Մարաց թագաւորի խնամութիւնը. այսինքն վիշապի և ամպրոպային աստուծու սկզբնական թշնամութիւնը մեղմացած է պատմական բարեկամական դէպքի ազդեցութեան տակ. աստուծուհին այլ ևս չէ յափշտակուում, այլ խնամութեամբ առնում է, և Աժդահակն սկզբում բարեկամ է Տիգրանին, զոնէ ըստ երևութիւն: Այս ամենը կարող էր կատարուել և նոյն իսկ ժողովրդական երգիչների կամ պատմողների բերանում: Բայց ժողովրդի մարդը, ինչքան էլ առասպելին պատմական գոյն տայ, միշտ աւելի շատ առասպելական գծեր է պահում, միևնոյն առասպելի մի պատմուածքի (վարիսնտի) մէջ աւելի միւսի մէջ պակաս. յաճախ միևնոյն պատմուածքի մէջ պատմականն և առասպելականը կից ապրում են միևնոյն անձի համար. օրինակ ժողովրդական պատմուածքի մէջ Աժդահակը թէ մարաց և թէ վիշապաց թագաւոր կարող էր յիշուել: Իսկ երբ այսպիսի մի առասպել մշակում է մի ճարտասան կամ քերթող, ինչ ասել կուղէ՞ որ նա վիշապները դուրս պէտք է ձգէր և պահէր միայն մարք և Մարաց թագաւոր Աժդահակ: Եւ քանի որ նորան յայտնի է

Մարաց Աստիագէս թագաւորը՝ սորա հետ
ևս պիտի նոյնացնէր մեր առասպելի Աժգա-
հակին. ուստի և մեր առասպելի մէջ Մարաց
Աժգահակ թագաւորի գէմ կռուող Տիգրա-
նին պիտի համարէր Մարաց Աստիագէս թա-
գաւորի ժամանակակից և իրենից աւելացնէր
կիւրոսի անունը: Ուրիշ խօսքով նա շարու-
նակել է ժողովրդի մարդու գործը՝ ժողովրդ-
դական պատմութիւնը կատարելագէս պատ-
մական գոյն է փռել: Ծիշտ այդպէս է
վարւում և մեր պատմագիրը՝ երբ նա վի-
պասանքի մէջ երևան եկող վիշապներն
ու վիշապազունք դարձնում է մարք, մի մեկ-
նութիւն և առասպելի կերպարանափոխու-
թիւն, որ Խորենացուց առաջ արդէն սկսած է
մտնել մեր վիպասանքի մէջ (տես եր. 329):

Ամփոփենք մեր եզրակացութիւնը:

Երբ մի անգամ տեսանք թէ Տիգրանի
առասպելն ինչ պատմական յիշողութիւններ և
ինչ առասպելական գծեր ունի իւր մէջ, այժմ
քսա ինքեան երևում է, որ այդ առասպելը
շինծու բան չէ: Աւելի ևս քիչ կարող է սյգ
պաասպելը շինուած լինել Հերոդոտի պատ-
մածի վրայ, ինչպէս կարծում է պ. Գարա-
գաշեան¹, քանի որ դա մեր Մեծն Տիգրանի

1. Գնն. Գաւ. Հայոց. Ա. եր. 51. Հալաթ.
Արմ. Թոսո, եր. A178.

պատմութիւնն է: Ինչքան էլ նմանութիւններ գտնենք Կիւրոսի ու Անտիադէսի և Տիգրանի ու Աժդահակի առասպելների մէջ, այդ զարմանալի չէ, քանի որ Կիւրոսի առասպելն ևս հաւանօրէն մի հին միթոս է, պարսից պատմութեան ազդեցութեան տակ պատմական կերպարունք ստացած: Սակայն մենք աչքի զարնող առանձին նմանութիւններ չենք գտնում այդ երկու առասպելների մէջ: Այլ ընդհակառակն շատ էական կողմերով նոյն իսկ նման չեն անոնք: Օրինակ, Հերոդոտի պատմածի մէջ ամպրոպային բնաւորութիւնը չի երևում. չկան ամպրոպային վիշապները. չկայ ամենից գլխաւոր գիծը՝ Աժդահակի կնութեան առնելը Տիգրանուհուն, այսինքն սորա գերուելը և գերութիւնից ազատուելը, որ ամպրոպային աստուծու և վիշապի կռուի կեդրոնն է կազմում: Պարսից առասպելի մէջ չկայ «վիշապաց մայր» Անոյշ և սորա գերուելը, որ նոյնպէս առասպելական գիծ է: Կիւրոսի մայրը՝ Մանդանէն Աժդահակի դուստրն է, և Կիւրոսն Աժդահակի թոռը, մի դիժ, որ առասպելից շատ հեռու է և նմանները: Այս մեծ և էական տարբերութիւնները մէկդի են դնում քննադատները և կանգ են առնում այնպիսի վիպական գծերի վրայ, որ առասպելի մէջ էական

նշանակութիւն չունին. օրինակ, Աժգահակի կրազ տեսնելը, մի վիպական գիծ, որ ամեն ազգերի վէպերի մէջ և ամեն ժամանակ խիստ տարածուած է: Սակայն այդպիսի գծերի մասին աւելորդ է կանգ տունելը: Եւստ Կանճաքից պիտի լինէր մեր առասպելը «սարքոզր», որ Հերոդոտի պատմածի վրայ մի առասպել շինէր և այնպիսի փոփոխութիւններ մտցնէր մէջը, որոնցով նորա «շինածը» մի կողմից առասպելի նախնական կերպարանքն աւելի հաւատարմութեամբ պահած լինէր քան Կիւրոսի առասպելը, իսկ միւս կողմից այդ «շինծու բանը» լինէր մեր Մեծն Տիգրանի պատմութեան յիշողութիւն:



ՀԱՄԻՐԱՄԻ ԱՌԱՍԳԵԼԸ

Աղբիւրը:—Շամիրամի և Արայ գեղեցկի մասին պատմելիս (Ա. Ժե.) Խորենացին աղբիւր չէ յիշուամ, ոչ Մար Աբաս և ոչ առասպել կամ երգ: Բայց ինչպէս արդէն տեսել ենք (Կր. 390), ուրիշ տեղից գիտենք, որ «ի Հայկայ մինչև ցԱրայն Գեղեցիկ, զոր սպանեալ կաթոտն Շամիրամ» (Ա. Կ.), ուստի և Արայի պատմութիւնն առնուած է Մար Աբասից: ԺԷ. գլխի մէջ ևս, ուր պատմուած է Շամիրամի կոտորելն իւր որդիներին, նորա կռիւը Զրադաշտի հետ և փախուստը Հայաստան և նորա սպանուելն իւր որդի Մինուասից, աղբիւր չէ յիշուած: Բայց յաջորդ ԺԸ. գլխի մէջ յայտնուամ է, որ այս պատմութիւնն առած է Մար Աբասից: Այս գլխի վերնագիրն է. «Յաղազս թէ որպէս հաւաստի նախ լեալ պատերազմ նորա ի Հնդիկս և զկնի մահուանն (մահ) նորա ի

1) Տես «ի բանսն՝ որ գնմանն» խօսքի և «բանսն» բառի բացատրութիւնը Բ. Գլ. Կր. 40 հոսն.

Հայս», ¹ այսինքն թէ ինչպէս Շամիրամի պատերազմը Հնդկաստանում հաւաստեալ առաջ է եղել և յետոյ (եղել է) նորա մահը Հայաստանում: Ապա գրում է մեր պատմագիրը. «Ունիմ ի մտի և զԿեփաղիոնին, վասն ոչ տալ զմեզ բազմաց ծաղրել. զի ասէ ի բազմաց (Տպ. ի բանից) այլոց՝ նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, եւ ասլա զպատերազմն Շամիրամայ ընդ Ջրադաշտի, եւ զյաղթելն ասէ Շամիրամայ, և ասպա ուրեմն զպատերազմն Հնդկաց: Այլ հաւաստի մեզ թուեցաւ որ ի Մարիբաս Կատինայն է քննութիւն քաղզէական մատենից քան զայսոսիկ [այսինքն Կեփաղիոնի պատմածը Շամիրամի մասին]. քանզի ոճով իմն ասէ [Մար Աբաս] և զպատճառս պատերազմին [Ջրադաշտի հետ] որի հետեանքն եղել է Շամիրամի մահը Հայաստանում] յայտնէ. իսկ առ այսոքիւք և առասպելք սշխարհիս մերոյ զբազմահմուտ առորին արդարացուցանեն: աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ» և այլն:

2) № 1671 Ա. ձեռագիր. միւս Ա. ձեռագիրները տո՛րպէս թաղը յունիմ. իսկ №№ 1665, 616 «մահուան» մեծի փոխանակ ունիմ «մահ»: որ անեղի ուղիղ և խեղճանորհն: Ետունակութիւնն եւս առնում ենք № 1671 ձեռագրից, որին համեմատ են միւս Ա. ձեռագիրները լեյիմ տարբերութիւններով: Տպագիրն աղաւաղուած է: յունենայով Շամիրամի պատերազմը Ջրադաշտի հետ եւ սորան յազրեղը:

Խորենացին Կեփաղիոնի մասին և նորա գրածը Շամիրամի համար առնում է, հաստատ կարեղի է ասել, Եւսեբիոսի քրոնիկոնից, Թէպէտ և վերջինիս անունը չէ տալիս ¹: Այստեղ իրօք որ առանց «ոճի» և առանց «պատճառները» յայտնելու բերած է Շամիրամի ծրնունդն, նորա պատերազմը Ջրադաշտ մոզի հետ և յաղթելը, ապա Շամիրամի պատերազմը Հնդկաստանում և փախչելը. նորա սպանելն իւր որդիներին և իւր սպանուելն Եփնուաօից: Մար Արասի մէջ սյս ամենը, Թէպէտեւ Կեփաղիոնից տարբեր, բայց ոճով և պատճառաբանուած է պատմուած եղել (Ա. Ժէ.), ուստի

1) Կեփաղիոնի վիպագրի՝ վասն ասորեսանեաց բազաւորութեանն: «Ապա ի նոյն յարեայ՝ ասե [Կեփաղիոն] եւ զԺնունդն Շամիրամայ. եւ զգարաւ ըջօ մոգ (ի) արքայի Բակորացոց զպատերազմեան եւ զպարտութեան ի Շամիրամայ. եւ զանս բազաւորութեանն նիւայ ամս ծր. եւ զվախման նորա: Յե որոյ բազաւորեայ Շամիրամայ ամ պարիսպ Բաբելոնի զայն ձե օրինակի, որպէս եւ թագաւոց իսկ ասացեայ ի, կօտիայ եւ զեմնի եւ էրոդոսայ, եւ այլոց՝ որ յեո նոցա: Ապա եւ զգորածողովն շինեչ Շամիրամայ ի վերայ հնդկաց աշխարհիւ վիպագրի, եւ զպարտութիւն նորա եւ զփախուս. եւ թէ զհանդ ինկնին զիւր որդիսն կոտորեաց. եւ ինկն ի նիւեայ որդոյն իւրոյ սպանաւ: Եւսեբի Կեսարացոյ ժամանակագրանք, Վենետիկ 1818 թ. 90 հոգ.

և Խորենացին, Հնդկաց հետ պատերազմը հա-
ւաստի համարելով առաջ եղած է դնում և
մնացածն առնում է Մար Աբասից:

Այսպէս ԺԷ. զլ. Շամիրամի պատմու-
թիւնն առնում է Մար Աբասից: Բայց նա
Մար Աբասի պատմածը Շամիրամի մահուան
մասին հաստատելու համար յիշում է թէ
Շամիրամի մասին առասպելներ եղել են հայոց
մէջ: Դժբախտաբար նա շատ բան չէ բերում
այս առասպելներից, այլ բաւականանում է
Շամիրամի մահուան կամ վերջի մասին միայն
յիշելով, որովհետև խնդիրն այն է, որ հաս-
տատէ թէ Շամիրամը Զրապաշտի հետ պա-
տերազմելուց Հայաստան է փախած և այստեղ
սպանուած, ինչպէս դնում է Մար Աբաս հա-
կառակ Կեփաղիոնի, որ նորան Հնդկաց պա-
տերազմի մէջ փախած է դնում և այս պա-
տերազմից յետոյ սպանուած: Այնուհետև ԺԶ.
զլիսի պատմութիւնը, գիտենք, Խորենացին այն-
պիսի դարձուածներով է պատմում, որոնցից
պարզ երևում է դարձեալ, որ իւր ժամանակ
աւանդութիւն եղել է հայոց մէջ թէ Վանայ
հնութիւններն ու բամբարտակ գետոյն, վերա-
գրուած են եղել Շամիրամին: Կեղծիք կարելի չէ
համարել այս պատմութիւնը, ինչպէս կարծում
է պ. Խալաթեանը այն հիմամբ, որ ոճերի և դար-
ձուածների համար օգտուած է դարձեալ Յւսե-

բիտսի Զրոնիկոնից: Մենք այդ մասին կանգ առնել չենք ուզում: զի խնդիրն այն չէ թէ Խորենացին ինչպիսի «ոճաբանութիւն» ունի. արդեօք նա իւր սեպհական ըստերով ու դարձուածներով է նկարագրում որեւէ բան, թէ այս կամ այն տեղից օգտուելով է անում իւր սեպհական նկարագիրը: Նկատենք միայն, որ այս կողմից ոճի աղքատութիւնը յատուկ է Խորենացուն: Մա յաճախ միշտ նոյն ձևով ուրիշներից օգտուելով է նկարագրում: Ինչպէս Յովհաննէս կաթողիկոսը, երբ նա նոյն իսկ իւր ժամանակի անձերն ու զէպքերը նկարագրելիս օգտուում է Խորենացու դարձուածներից: Բայց ոչ ոք կարող չէ ասել թէ որովհետեւ Յովհաննէս կաթողիկոսն, օրինակ, Աշոտ Թագաւորին և նորա «յարգարած կարգերը» Խորենացուց օգտուելով է նկարագրում: ուստի և նա սուտ է գրում և պատմութիւնը սարքում է: Դա ոճի առանձին յատկութիւն և աղքատութիւն է միայն: Այսպէս և Խորենացին Վանայ նկարագրի մէջ ինչքան էլ Մեսեթիոսից կամ ուրիշներից օգտուած լինի, նորա նկարագրի հիմքը մնում է իբրև իրողութիւն. դա Վանի և նորա հնութիւնների նկարագիրն է, և թէ այդ հնութիւնների շինողը Խորենացու ժամանակ համարուել է Շամիրամ: Բայց մենք դառնանք մեր խնդրին:

Ոչտար, Եամիրամ, Աստղիկ (Անահիտ)։ Երբ մի անգամ ըստ Խորենացու վկայութեան Եամիրամի մասին առասպել եղել է Հայոց մէջ, ըստ ինքեան անհաւանական չէ, որ մի ժողովրդական զրոյց եղած լինի Եամիրամի և մի հայի, Արայի, յարաբերութեան համար ևս Թէպէտե Խորենացու ազբիւրը գրաւոր է, Մօր Արաս, բայց վերջինիս ազբիւրը կարող է ժողովրդական եղած լինել, ուստի և Եամիրամի և Արայի զրոյցը ժողովրդական ծագում ունենալ։ Տեսնենք այս զրոյցի բովանդակութիւնը, համեմատելով ուրիշ ազգերի մէջ եղած նոյն զրոյցի հետ։ Բայց նախ Եամիրամի բնաւորութիւնը։

Եամիրամն ըստ հնոց դուստր է Ասորեստանցոց Միլիթատա գիւցուհու կամ ասորական Դերկեսոյի։ Մանայն բնաւորութիւնն ունի, ինչ որ իւր մայրը՝ սեմական ազգերի սիրոյ գիցուհին, Դերկեսոյ կամ Աստարտէ (Atargatis), բարեխացոյ և ասորեստանցոց Ոչտարը։

Ասորեստանցոց մէջ այս սիրոյ գիցուհին մի հզօր հրամանատար, մայրեկ աստուածուհի է, պատերազմի գիցուհին, նեա-ազնիւղ զինուած, այրական ու պատերազմական բնաւորութեամբ, ճակատամարտի և որսի թագուհին։ Բայց Ոչտարը միանգամայն և փարթամ

պողոթնութեան, հեշտութեան և զգայական սիրոյ զիցուհին է: Նա կապուած է Արուսեակ մելորակի հետ, և նորա սիմբոլն է Գիշերավարը (Արուսեակն արեւը մանկուց լեռայ): Փիւնիկէում և Ասորիքում այս սիրոյ զիցուհու նուիրական թռչունն էր աղաւնին: Նորա պաշտամունքը Բաբելոնացոց մէջ ցոփ և անառակ էր. նոյնպէս բուռն զգայական և անբարոյական էր ասորական Աստարտէի, ըստ Կտեսիասի, Դերկետոյի պաշտամունքը: Նոյն բնաւորութիւնն ունի և փիւնիկական Աշտարտը՝ որ պաշտուում էր կանաչ բլուրների և սրբազան անտառների մէջ: Շատ տեղեր հին ժամանակ եղել են Շամիրամի անունով բլուրներ: Այսպէս Ստրաբոնը գրում է Կապադովկիայի Դիանա քաղաքի համար. «Զազաքն շինեալ է ի վերայ վիոյ ի սարահարթ ըարձրաւանդակաց անտի՝ որ կոչին Շամիրամայ: «(Ստր. ԺԲ. 2. 7): Պ. Գարագաշեանը բերելով այս հատուածն աւելացնում է. «Տիանայ՝ որպէս և գաւառն Տիանիտիս՝ կը յիշեցունեն զԱնահիտ... և էր արգարե, ըստ նմին Ստրաբոնի՝ ոչ կարի հեռի ի Տիանայ, անուանի մհհեանն Անահիտայ Պերասիայ»: «Բայց քա-

1) Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P.D. Chantepie de la Saussaye, Leipzig. 1897, I եր. 190 հո. 197 հո. 225 հո.

ղաք նուիրեալ բուն Անահտայ էր Զեղա, յորմէ
ասէ Ստրաբոն թէ էր ի վերայ բարձրաւան-
դակի, որ կրկոչուէր Շամիրամայ: «Զեղա, ասէ
Ստրաբոն, ունի մեհեան անուանի նուիրեալ
Անահտայ, այն է դիցն զոր պաշտեն և Հայք»: ¹

Սեմական ազգերի սիրոյ աստուածուհու
պաշտամունքը Կիպրոսից կղզիների վրայով ան-
ցած էր և Կիւթերա և Սիկիլիա, ուր փիւնի-
կեան Աշտարտի անբարոյական պաշտամունքը
խառնուած և միացած էր յունական Ափրո-
դիտէի պաշտամունքի հետ: Այս դիցուհին
պաշտուում էր և Հայոց մէջ: Մեր Աստղիկը,
որ համապատասխան են դնում Ափրոդիտէին,
համարւում է ասորիներից փոխառութիւն:
Նորա անունն իսկ՝ Աստղիկ, ըստ Հոֆմանի,
թարգմանութիւն է ասորերէն Կաուկաբտա
(kaukabta) բառի, որ նշանակում է աստղիկ,
Արուսեակ (Venus) մոլորակը, ² մեր այժմեան
ժողովրդական լոյս-աստղը: Սակայն ինչքան
էլ Աստղիկը, որի պաշտամունքի մասին շատ
տեղեկութիւն չունինք, սեմականների սիրոյ
դիցուհին լինի՝ մտած հայոց մէջ, հաւաստի
յայտնի է, որ հնումը մեր Անահտի պաշտա-
մունքը նոյն է եղել, ինչ որ սեմական սիրոյ

1) Գարագաշեան, Քնն. պատմ. Հայոց Բ. եր. 167 հս.

2) Gelzer, Zur arm. Götterlehre, եր. 123. 132.

դիցուհունը: Անահիտը, թէպէտեւ իրանական ծագում ունի, կրել է սեմական ազդեցութիւն: Ստրաբոնը գրում է թէ պարսից բոլոր աստուածները պաշտում են հայերը մանաւանդ Անահտին, որին զանազան տեղերում և Սկեղիքում մեհեաններ են կանգնած, և թէ նորան այր և կին գերիներ են նուիրում. և այնուհետեւ աւելացնում է. «Մինչև ցայս վայր չիք տեղի զարմանալոյ. բայց դիցապատուութիւն հայոց երթայ անդր ևս, զի սովորութիւն է առ նոսա արանց աւագաց ձօնել դիցն զգոտերս իւրեանց կուսանս. այլ այսչէինչ արգել յետ տալոյ զանձինս ի պռնկութիւն ի մեհեանսն Անահտայ գտանել արս որ ոչ խղճիցեն առնուլ զնոսա ի կնութիւն: 1 Անահտի այս պաշտամունքը կատարելապէս նոյն է, ինչ որ սեմական սիրոյ աստուածուհունը: Հայոց մէջ այս անառակ պաշտամունքը գտնելը շատ բնական է, երբ ինկատի ունենանք, որ Հայերը հարաւից և արևմուտքից ոչ միայն սահմանակից են եղել սեմական ազգերին, այլ և Հայաստանի հարաւային և արևմտեան կողմերի բնակիչները սկզբնապէս եղել են ասորիք և յետոյ են հայացած: Այսպէս Անահտի մեհեաններ եղել են Սկեղիքում և

1) Գարագաշեան, Քնն. պատմ. Հայոց Ա. եր. 267 հօ. Gelzer, Zur arm. Götterl. եր. 113.

Տարօնումն ուր, ըստ Ստրաբոնի, բնակիչներն առաջ եղել են ասորիներ: Տարօնի Աշտիշատում Անահաթի հետ եղել է և Աստղիկի պաշտամունքը: Անահաթի մի ուրիշ մեհեան եղել է Վանից հարաւ՝ Անձեացեաց մէջ: Եոյն տեղերում Պաղատոյ լեռան գլխին նաև Աստղիկի պաշտամունքը²: Վանայ մօտ Արաամետում ևս Աստղիկի պաշտամունքը յայտնի է Թոմա Արծրունուց (եր. 53 հա.): Այնուհետև Վան քաղաքը, առաջին անգամ Խորենացու մէջ, կոչւում է քաղաք Շամիրամայ: Եոյնը յիշում է և Թոմա Արծրունին (եր. 63. 240. 252). բացի այդ սա յիշում է Ծուաշ գաւառում Շամիրամ բերդ (եր. 258 հա. 281), ամրոցն Շամիրամ (եր. 270): Շամիրամ գիւղ այժմ Եւմբուլէ սարի պտորտում յիշում է Սարգիսեանը իւր տեղագրութեանց մէջ (եր. 272.):

Շամիրամի անունով այս տեղերի կոչումները հայոց մէջ Խորենացու ազդեցութեամբ մտած համարելու համար ոչ մի հիմք չունինք:

2) Մ. Խորենացու մասեակարուչիւնք. եր. 294, 301. «Տուեալ յայնմ տեղոյն զեղս ախակափնս առ ի կատարէն զպղծութիւնս ախսից... առեալ ի յստուածոցն ծարս քարախածոս ի պատիւ ախսիցն, որպէս զծարսն Կիպրիանոսի առ ի պատիւ Յուսիմեայ կուսին» (եր. 294):

Մոյն իսկ պ. Խալաթեանն, ինչքան էլ Շամիրամի մասին առասպելները Խորենացու սարքածն է համարում: ստիպուած է ասելու, որ Խորենացին Շամիրամի զրոյցների համար ընդհանրապէս «իրրև կլակէտ ունի (ИСХОДИТЬ) Հայաստանի տեղագրական անունները, որոնք կապուած են Ասորեստանի աշխարհակալ Թագուհու անուան հետ»: Ուրիշ խօսքով, Խորենացու ժամանակ եղել են Շամիրամի անունով տեղեր և Խորենացին այդ անուններից զգտուելով սարքել է Շամիրամի մասին զրոյցները: Իսկ այդ տեղագրական անունները յիշուած են, զրում է պ. Խալաթեանը, «ըստ բևութին, միայն Ը.—Թ. գարից, այսինքն նոյն ժամանակից, երբ այդ միջոցին զօրացած Արծրունի իշխանների մէջ ձգտումն է առաջ գալիս Ս. Գրքի մի ակնարկութեան հիման վրայ՝ իրենց ցեղը հանել Ասորեստանի Թագաւորներից»: Որքան հասկանում ենք պ. Խալաթեանին, նա ուզում է ասել, որ այդ տեղերի անունները Շամիրամի անուանը կապել են շատ ուշ ժամանակում Արծրունի իշխանները: Սակայն պ. Խալաթեանը այդ ասում է լոկ խօսքով: Բայց, ինչքան էլ Արծրունիք իրենց հանէին Ասորեստանի Թագաւորներից, ոչ մի հիմունք չունինք թէ նոքա իրենց նախնի համարած Սենեքերիմին, Սանասարին կամ

Աղբամենիքին թողած՝ մի հին պուռնիկՇամիրամի անուանով պիտի կոչէին իրենց Վանտոսպը: Եթէ Շամիրամի անուանով տեղեր և բլուրներ եղել են հնումը շատ կողմերում և նոյն իսկ Կապադովկիայում և Պոնտոսում, և եթէ սեմականների այդ սիրոյ դիցուհին ի թիւս այլոց պաշտուել է և հայոց մէջ, կարող են ի հնուց անտի եղած լինել Շամիրամի անուանով կոչուած տեղերը Հայաստանի յատկապէս այն կողմերում, որոնց բնակիչները սեմականներին սահմանակից են եղել, և ուր այնքան յարկի է եղել այս դիցուհին: Միւս կողմից եթէ Արծրունիք և Աղձնեաց բզեշխները, իսկ ըստ Թոմա Արծրունու և Սասնոյ բնակիչները, իրենց սերած են համարում Ասորեստանցիներից, կարծում ենք, այս ևս մի պատմական յիշողութիւն է միայն, քանի որ այն կողմերի հայ բնակիչները ծագել են իրօք ասորիներից: Տեղական ժողովրդի մէջ եղել է այս պատմական յիշողութիւնը, որ յետոյ կարող էր հեշտութեամբ կապուել Ս. Գրքի մէջ յիշուած Սենեքերիմի որդոց հետ: Սենեքերիմ և իւր որդիքը կարող են յետոյ Ս. Գրքից մտած լինել, բայց ոչ Ասորեստանցիներից ծագման զրոյցը: Այդ զրոյցը հին պէտք է համարել, ինչպէս հին են նաև Շամիրամն ու իւր զրոյցները և ոչ սարքովի բան: Տեսնենք այս զրոյցները:

Պշտարի ու Պզդուրարի եւ Շամիրամի ու Արայի առասպելները: Ասորեստանցոց Պշտարը, որ չամուսնացած աստուածուհի է, իւր տարփանքի համար հոմանիներ է որոնում. բայց նա հեշտասէր կողմի հետ ունի և մի սոսկալի մահաբեր կողմ, որով նա իւր սիրականին մահացնում է և ապա վշտից հետևում է նորան մինչև Սանդարամետի բանդը՝ իւր տարփածուին յարութիւն տալու համար: Պշտարի առասպելից յայտնի է Պզդուրարի նշանաւոր վէպը:

Հրաշալի գեղեցիկ դիւցազն է Պզդուրար, որին սիրում է Պշտարը: Դիցուհին ինքն իրեն առաջարկում է գեղեցիկ Պզդուրարին, մեծ պարգևներ և իշխանութիւն խոստանալով նորան, որ իւր կամքը կատարէ. բայց Պզդուրարը մերժում է նորա բոլոր առաջարկութիւնները: Այդ ժամանակ Պշտարը զայրանում է և սպանում Պզդուրարին:— Այսպէս սպանում է նա իւր մի ուրիշ տարփածուին ևս, Տամմուզին (Tammuz), որի մահը ողբում է նա յետոյ և Սանդարամետ է իջնում նորան յարութիւն տալու համար:

Ասորեստանցոցու Բաբելացոց մէջ այս առաս-

1. Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye, Leipzig, 1897. I. ևր. 192, 216.

պելլիպաշտամունքն և սկարիւրարարողութիւննե
նեբօփ: Սոյնը կար և ասորոց մէջ Աթարի (Athar)
և Ատտեսի (Attes) համար իսկ Փիւնիկեցոց
մէջ Աշտարտի պաշտամունքի հետ միացաճ
էր նորա սիրական Ադոնիսի պաշտամունքը:
Տիւրսուում նոյն իսկ Ադոնիսի յարութեան
տօն էին կատարում:

Արդ ինչ է մեր Շամիրամի և Արայի զը-
րոյցը: Ինչպէս չայրասիրան այն և կաթնոտն
Շամիրամ, նոյն է, ինչ որ իւր մայրը սեմա-
կանների սիրոյ աստուածուհին, մարտիկ և
տարփազին զիցուհին Իշտար—Աստարտէ—
Ատարգատիս կամ Դերկետոյ, նոյնպէս և մեր
Շամիրամի և Արայի զրոյցը նոյն է, ինչ որ
Իշտարի և Իզդուբարի այս վէպը: Համեմա-
տութիւնը շատ պարզ է: Մեր Արան նոյնպէս
գեղեցիկ է, ինչպէս Իզդուբար: Ազնիւ և ու-
րիշները: Ինչպէս Իշտարն Իզդուբարին, նոյն-
պէս և Շամիրամն Արային իշխանութեան խոս-
տումներ է անում իւր կամքը կատարելու հա-
մար: Բայց Արան հաւանութիւն չէ տալիս
ինչպէս և Իզդուբարը: Իշտարը զայրանում և
մահացնում է Իզդուբարին. այսպէս և Շա-
միրամ տիկինն «ի սաստիկ ցասման լիալ» գա-
լիս կռում է Արայի դէմ, և Արան մեռնում
է այդ սիրոյ պափճառով: Այնուհետև մեծ
մայր Իշտարը սաստիկ ցաւում է և Սանդա-

յամետ է իջնում իւր տարփածուն յարու-
թիւն տալու համար: Ծոյն յարութեան մի-
ջարէպր կնայ և մեր առասպելի մէջ, միայն մեր
հեթանոս հայերի հաւատալիքով պատմուած,
և այս շատ բնական է: Թորենացու և Անա-
նուի մէջ այդ յարութիւնը քրիստոնէական
հայեացքով փոփոխութեան է ենթարկուած,
որ նոյնպէս շատ բնական է:

Առլէզք եւ Արայի յարութիւնը:— Թայանի
է, որ մեր հեթանոս հայերն ունեցել են,
ըստ Եգնիկի, «ի շանէ ելեալ» Արալեզք
կամ Առլեզք կոչուած ոգիներ, «աներևոյթ
զօրութիւնք», որ պատերազմի մէջ ընկած վի-
րաւոր քաջերին կամ զիւցանգներին ըիզում
և ողջացնում են: Այս հաւատալիքը, ինչպէս
երևում է, շատ հին պիտի լինի, քանի որ
Պլատոնի հասարակապետութեան մէջ բերուած
Էր հայի յարութիւն առնելը, թէպէտ և ա-
ռանց Արալեզների, մեր այս հաւատքի հետ
նոյն ընդհանուր գծերն ունի: Այստեղ ևս Էրը
քաջասիրտ է և սպանւում է պատերազմի մէջ:
Ծամն օրից յետոյ, մինչ ուրիշների դիակները
նեխած էին, Էրինը անխախտ և ամբողջ են
դանում: Բերում են առն, և տասնեյկու-
երորդ օրը, երբ խարոյկի վրայ էր բարձրա-
ցած, կենդանանում է Էրը: Ըմինն առաջին
անգամ այս առասպելը համեմատութեան

բերելով Արա դեղեցկի առասպելի հետ, աւելացնում է թէ Պլատոնի՝ առասպելի իմաստը, «քաջք անկեալք ի պատերազմի, յառնեն, ոչ այլ ինչ է, բայց եթէ բուն հեթանոսական վարդապետութիւնն նախնի Հայոց: Եւ նա աշխատում է իր հայը նոյնացնել Արա Հայկազնի հետ: Այս հաւատն այնքան զօրեղ է եղել, որ նոյն իսկ քրիստոնէութեան ժամանակ Դ. դարում, ըստ Փաւստոս Բիւզանդի (Յ. դար. լգ. գլ.)՝ շնայելով որ Մուշեղ Մամիկոնեանի գլուխը մարմնից կտրուած էր, բայց «ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա ... իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա»: Այս պատճառով գլուխը կպցնում են մարմնին և դնում մի աշտարակի տանիքում, կարծելով թէ «վասն զի այր քաջ էր, Առլեզք իջանեն և յարուցանեն զդա»:

Այսպէս պատերազմի դաշտում իբրև քաջ ընկնում է և Արան. «գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, եւ հրամայէ զընել զնա ի վերնատունն ապարանից, իսկ ի գրգռել միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ՝ քինախնդիր լինել մահուան Արայի՝ ասէ. հրամայեցի աստուածոցն իմոց լեզու զվէրս նորա

1) Վեպֆ Հնոյն Հայաս. եր. 146 հուն.

ել կենդանացի»: Եւ Շամիրամն իրօք սպասուեմ է, որ Արան պիտի կենդանանայ. «Միանգամայն եւ ակն ունէր դիւթութեամբ վրհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տռփական ցանկութենէն»: Զրիստոնեայ մատենագիրը, որ այդպիսի աստուածների զօրութեան չէր հաւատում, Շամիրամի ձգտումն՝ աստուածների ձեռով Արային կենդանացնելու բացատրում է «դիւթութեամբ վրհկութեան»: Միւս կողմից նա չէր կարող երբեք հաւատալ, որ աստուածները կամ Շամիրամ իւր կախարդութեամբ կենդանացրած լինին Արային. ուստի և պիտի գրէր թէ «նեխեցաւ զի նորայ հրամայեաց ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել»: Այստեղ եթէ վերջացնէր, առասպելը թերի կըմնար, զի հայերը գրգռուած էին և նոքա հանդարտում են, երբ իմանում են, որ Արան յարութիւն է առել. «Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան գաղարեցուցանէ զխաղմն»: Ուստի և Արայի յարութիւն առնելու պատմութիւնը պէտք էր պահել, միայն մի ձեռով բացատրած: Եւ նա բացատրած է շատ պարզ կերպով. «Զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ, համբաւէ զնմանէ այսպէս. լիզեալ աստուածոցն զԱրա և կենդանացուցեալ լցին

զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք: Դարձեալ քրիստոնեայ մատենադրի համար մի յարմար առ թէ էր այս առասպելի մէջ բացատրելու նաև Առլեզնիբի պաշտամունքի խարէական ծագումը. «Կանպնէ և նոր իմն պատկեր յանուն դիւաց, և մեծապէս զոհիւք պատուէ. ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրա»: Այս գրուածքը մութն է. «նոր իմն պատկեր» բառը կարելի է հասկանալ թէ Շամիրամը նոր աստուածութիւն չէ հաստատում, այլ եղած աստուածների համար «մի նոր պատկեր» արձան է կանգնում: Բայց կարելի է և այնպէս հասկանալ թէ նա նոր աստուածութիւն, Առլեզնիբի պաշտամունքն է հաստատում: Այն ժամանակ այդ հակասում է նոյն իսկ առասպելի էութեանը, քանի որ հայոց մէջ այս հաւատքի գոյութիւն ունենալն արդէն ենթադրւում է, որ հայելը հաւատում են թէ Արան կարող է յարութիւն առնել և յարութիւն է առել: Հակասութիւնն իսկ ցոյց է ապրիւ որ քրիստոնեայ մատենադրի կողմից է աւերացրած այդ: Այս հաստուածն Անանունի մէջ (Սէբէա, եր. 6.) դանում ենք այսպէս. «Ծւ այնպէս հանէ համ-

բաւ Արալեզաց տիկինն Շամիրամ» որ դարձեալ մութն է:

Ինչպէս էլ լինի, այս գծերը պարզ կերպով քրիստոնեայ հեղինակից են մտած հին առասպելի մէջ, որ քրիստոնէական ձևով և հայեացքով է պատմուած: «Ծթ է այդ և հեմերական յաւելումները դէն դնենք, գրում է պ. Գեղցերն այս առասպելի համար, կրմնայ միայն ասորական սիրոյ աստուածուհու և իւր տարփածուի առասպելը: Շամիրամի զրոյցի մէջ պահուած է Աստղկի առասպելը», աւելացնում է նա: ¹

Թէ Արան ժողովրդական զրոյցով յարութիւն է առել, այդ տեսնում ենք և Թոմաս Արծրունու մէջ: Այստեղ (եր. 215) գտնում ենք մի այսպիսի աղճատուած կտոր. «Ծւ դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանատուպ, ի տեղուջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յերիվարաց արկման դաշան, ի վերայ Լեզուոյ գեաւզն, որ զօրացն գեղեցիկ առասպելաբանն սպիանած վերայն սպանելոցն ի մանկանցն Շամիրամայ»: Վերջին ընդգծած մասը աղաւաղուած է: Այսքանը միայն հասկացուած է աղճատուած ձևից թէ Շամիրամի մանուկներից ըս-

¹) Zur armen. Götterlehre, Nr. 132:

պանուածնների վերջերի սպիանալու մի առասպել է դա: Բայց բնագիրը վերականգնելը շատ հեշտ է: Ազճատումը միայն տառերի՝ յ, ց, ե, ի և լն՝ մէջ է: Պատկանեանն արդէն սկզբի երեք բառի համար իբրև ծանօթութիւն դրնում է. «Թերևս՝ ուր զԱրայն գեղեցիկ (տեսնոր. Բուզ. յէջն 20): Այնուհետև «սպիանած» բառը շատ պարզաբար կամ աշխարհաբար ձևով «սպիացած» կամ աւելի «սպիանալ» պէտք է կարդալ: Անհասկանալի «վերայն» բառը «վիրացն» է, քանի որ վերջերը պէտք է սպիանան: Այսպէս բնագիրը կըստանանք. «Ուր զԱրայն գեղեցիկ առասպելաբանեն՝ ըսպիանալ վիրացն սպանելոյն ի մանկանցն Շամիրամայ»: Մենք «սպանելոցն» բառն ևս եզակի «սպանելոյն» գարձրինք (Հմմտ. Դորենացի. Ա. Ժե. մեռանի Արայ ի պատերազմին ի մանկանցն Շամիրամայ). մի անգամ որ «զարայն» դարձած է «զաւրացն» ետեից պիտի բերէր և «սպանելոցն» յոգնակի թիւը: Թովմայի այս կտորից իմանում ենք, թէ առասպելաբանում են, որ Շամիրամի մանուկներից սպանուած Արայ գեղեցիկի վերջերը սպիանում են, ուստի և Արան կենդանանում է, չեզոռոյ գիւղում:

Նոյն զրոյցը գտնում ենք և այսօր: Ներսէս Սարգիսեանն իւր Տեղագրութեանց մէջ

զրու՛մ է նոյն գիւղի մասին. «Զորմէ ասի յոմանց տեղի լինել անկմանն Արայի ի Շամիրամայ, որոյ զոմն ի համանեացն զԱրայ կարծեցուցեալ լուր եհան եթէ ղին լիզեալ ողջացուցեալ են. և յայնմանէ, ասեն, մնաց անուն գեղջն Լէզք»: ¹ Ինչքան էլ Սարգիսեանը ժողովրդից է առնում, ինչպէս պարզ երևում է «ասի յոմանց» «ասեն» բառերից, բայց նա ժողովրդականը հաւատարմութեամբ արձանագրել չէ կարողանում ընդգծած տողերի մէջ: Եւ ենթարկւում է թորենացուն: ¹ Աւելի հաւատարմութեամբ գրի է առնում նոյն զրոյցը Սրուանձտեանը Գրոց Բրոցի մէջ (եր. 52): «Լէզքը իւր անունով և հին պատմութեամբ յայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արայ գեղեցկին մեռած մարմինը լգեր ու կենդանացուցեր են եղեր. և Արայլէզք անունով կուռք ու աստուած շինեցին պաշտեցին այն ժամանակ հայեր այս գեղի բարձր պագաթին

1) Կ. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեհեօիկ, 1864. եր 264.

1) Հմմտ. Խորենացի Ա. ժն. «Զմի ոմն ի հունանեաց իւրոց զարդարեալ . . . համբաւե զմմանե աշապես, լիզեալ աստուածոցն զԱրայ իւր կենդանացուցեալ»: Հմմտ. Անանուն (Սեբեոս եր. 5). «Զարդարե զմի ոմն ի հունանեաց իւրոց այր պաշտածող, եւ համբաւե հանե զԱրայի լիզուլ աստուածոցն եւ յարուցանել»:

վրայ՝ ուր այժմ Ամենափրկչի մատուռն է: 2.

Այս պատմութեան էութիւնը, չէզոք գիւղի հետ կապուած այս առասպելը, թէ Շամիրամի մանուկներից սպանուած Արայի վէրքերն այդտեղ են սպիանում, Խորենացուց չէ ծագում ոչ Արծրունու և ոչ միւսների մէջ, զի ըստ Խորենացու նախ՝ Արան յարութիւն չէ առնում՝ և ապա նա սպանւում է Արայի դաշտում, Այրարատում, և այնտեղ էլ Շամիրամը հրամայում է պտուածներին լիզել նորա վէրքերը: Եւ երբ նա հաւատացնում է հայերին թէ Արան յարութիւն է առել, նոր գալիս է Վանայ կողմերը (Ա. ԲԳ.):

Ասել թէ Արծրունին և Սրուանձաթեանն իրենցից ստեղծում են այդ զրոյցը, ելակէտ ունենալով միայն չէզոք անունը, այդ հեշտ պրոծնելու մի միջոց է միայն: Եւ այդ հեշտ ու պատրաստի միջոցն է բանեցնում պ. Խալաթեանը խեղճ Թովմա Արծրունու վերաբերմամբ ևս:

2) Թե ումից և առնու՞մ Սրուանձեանն այս զրոյցը՝ յայտնի չէ. երբ արդի ժողովրդական զրոյցները չեն ազդեր, այն ժամանակ կարող էինք ենթադրել թէ ևս Թ. Ածրունուց և առնու՞մ ևս թէ ևորս ձեռքի և եղէ՞ք մի ձեռագիր, որի մէջ Արայի վերսերի սպիանալու կտորն աղճատուած չէ եղել: Դժուար է ենթադրել, որ Սրուանձեանը կրկնականգնէր այդ աղճատուած կտորը: Սրուանձեանի գիրքը օտյն էրեք օտարի վաղ է հրատարակուած քան Պապկանեանի՝ Թովմայի հրատարակութիւնը:

Սորա պատմածները «Շամիրամի և Արա-
յի» ինչպէս և մի քանի հայ նախարարների
և թագաւորների մասին, ինչպէս են Հայկ
Տիգրան Ա., Վահագն, Երուանդ, Արտաշէս
Բ. և ուրիշները, բնաւ պէտք չէ համարել,
ինչպէս կարող է երևալ, Խորենացու բերած
վիպական հատուածների վարիանտների, և այս
հիման վրայ այս վերջիններիս իսկութեան հա-
մար ապացոյցներ կաղմել, Միանդամ ընդ միշտ
պէտք է իմանալ, յարուժ է կարուկ կերպով
պ. Խալաթեանը, որ Թոմասը իւր պատմու-
թեան հին մասը գրելիս սովորաբար [այն
բայց միայն սովորաբար] կրկնում է Խորենա-
ցու ասածը, կամ թէ մշակում է նորա զրածը
ոչ առանց Փանտաստիկական յաւելումների,
որոնց նպատակն է մեծացնել Արծրունիներին:
Եւ այդ ամենն այնքան ակնյայտնի է, աւելաց-
նում է պ. Խալաթեանը, որ նոյն իսկ «ժամա-
նակի կորուստ է» այդ քննելը¹⁾։—Եւ ոյսպէս
վերջացաւ «սովորաբար» Խորենացի և «Փան-
տաստիկական յաւելումներ» և «ժամանակի
կորուստ» այդ քննելը, Թ. Արծրունին էլ գը-
տաւ իւր դատավճիռն ու գնահատութիւնը,
Խորենացու մեղքը միշտ այն է, որ նա շատ
բան պատմում է, որ իրենից առաջ ուրիշները

1) Халат. Арм. Эпосъ кт. 151.

չեն պատմել: Իսկ Թովմա Արծրունու մեղքն էլ այն է, որ նա Խորենացուց յետոյ է ապրել և Խորենացուց օգտուել է, թէպէտ և կան բաներ, որ նորանից տարբեր է պատմում, ինչպէս այս Լեզուոյ գիւղի զրոյցը: Այդ գէպքում նա «Ֆանտաստիկական յաւելումներ» է անում:

Բայց Թովմա Արծրունին, օրինակ, Տիգրանի և Արտաշէսի պատմութիւնն անելիս իբրև աղբիւր գնում է՝ յոգնակի թուով. «Որպէս ցուցանեն առաջինքն ի պատմագրաց (եր. 36), «Որպէս բացայայտեն գիրք պատմագրացն» (եր. 52): Այդ սուտ է գրում նա. միայն մի աղբիւր ունի, Խորենացի. մնացածը Ֆանտաստիկական յաւելումներ են: Ուրիշ տեղ (եր. 44) նա գրում է. «Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոց» ի Մամբրէէ վերձանողէ և ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, և միւսումն Թէոդորոս Բերթոլ: ... Այստեղ էլ նա սուտ է գրում: Կամ երբ Հայկի և Բէլի պատերազմի մասին գրելիս աւելացնում է. «Զոր (գԲէլ) ոմանը ի պատմագրաց ասեն փախստեամբ դարձեալ գնաց յԱսորեստան» (եր. 24), — այստեղ էլ նա «Ֆանտաստիկական յաւելում» է անում, որովհետև Խորենացին այսպիսի բան չէ յիշում: Կամ երբ Թովմա Արծրունու

մէջ Հայկը Բէլին ասում է, «Շուն գու, և երամակ շանց՝ որ զկնի քո տողեալ սահին»։ այստեղ էլ «Ֆանտաստիկական» յաւելում է անում, զի այդ չկայ Խորենացու մէջ... բայց չէ՛, այդ «Ֆանտազիա» չէ, զի բարերախտաբար մնացել է Անանունը (Սերէոս, եր. 4), որի մէջ կայ «Շուն ես գու և յերամակէ շանց՝ գու և ժողովուրդ քո»։ — Այդպէս հեշտ կերպով կարելի չէ պրծնել մի պատմագրի համար, որ աղբիւրներ է յիշում, և որ ինքն իւր համար ասում է թէ ձեռնարկելով գրել «Որ ինչ իսկզբանց անտի շինութեանց աշխարհիս Հայոց ի Հայկայ աղեղնաւորէ և ի նորուն զարմից և ցկաթոս և վափաշոս Շամիրամն տիկին Ասորեստանեայց եւ ի նմանէ յայլս եւ յայլոց եւս յաւէտ ձեռակերտք եւ շինուածք յիւրաքանչիւրոցն յերկրիս մերում՝ եղեն՝ մեր առ ամենայնն անձամբ հասեալ եւ աշօք տեսեալ»... (եր. 293)։ Թո՞մա Արծրունին Խորենացուց անշուշտ, խիստ շատ է օգտուում. բայց նա ունի և ուրիշ գրաւոր աղբիւրներ։ Խնդիրը հարկաւ այն չէ, որ Թո՞մա Արծրունին ևս կարող է այս կամ այն բանն իրենից յարմարեցրած լինել, բայց ամեն ինչ, որովնա տարբերում է Խորենացուց, նորա յարմարեցրածը համարել կարելի չէ։ Այդպիսի յերկրումները կամաց կամաց և բազմաթիւ մարդոց ձեռով են

պատրաստուում՝ Նւ երբ մենք ոչ մի փաստ չունինք այս կամ այն պատմութեամբ համար թէ Արծրունու իրեն սարքածն է, չենք էլ կարող նորա «Ֆանտաստիկական յաւելումը» համարել: Այսպէս և երբնա պատմում է թէ առասպելաբանում են, որ Շամիրամի մանուկներից սպանուած Արայ գեղեցկի վէրքերն ըստ պիտանի շն շնուոյ գիւղում մենք իրաւունք չունինք ասելու թէ նորա ազբիւրը Խորենացին և իւր «Ֆանտազիան» են: Նորա ազբիւրն այստեղ ժողովրդական գրոյցն է: Մենք այդ կրտսններք ներքեում ևս: Այստեղ աւելորդ չի լինիլ մի երկու խօսքով կանգ առնելք պ. Խալաթեանի մի ուրիշ կարծիքի մասին ևս:

«Արայի գրոյցն արուեստական կերպով շինուած է մի ամբողջ շարք գրաւոր յիշատակարանների վրայ», գրում է պ. Խալաթեանը (եր. 145): Նւ այդ «գրաւոր յիշատակարաններն» են Դիոգոր Սիկիլիացի, Աստուածաշունչ, Եզնիկ, Փաւստոս, Կղեմէս Աղէքսանդրացի: — Թէ Խորենացին կամ իւր ազբիւրը՝ Մար Աբաս Շամիրամի պատմութեան համար կարող էր օգտուել այս կամ այն գրաւոր յիշատակարաններից և օգտուած էլ է, այդ մի կողմն ենք թողնում: Բայց շատ զարմանալի է, որ այդ գրոյցը «սարքողը» ըստ պ. Խալաթեանի՝ մի կտոր Դիոգոր Սիկիլիացուց է առել:

մի կտոր Աստուածաշնչից, մի կտոր Եզնիկից՝
մի կտոր Փաւստոսից, մի ուրիշ կտոր էլ Կղե-
մէս Աղեքսանդրացուց, մի բառ էլ «Արա» (= գե-
ղեցիկ) պարսկերէնից է առել, մնացածն էլ «իւր
հարուստ երևակայութեամբ» լրացրել է, և
կամ «բիրլիական — քրիստոնէական հայեացք-
ներով» առաջնորդուած՝ Յովսէփ գեղեցիկի
պատմութեան ձևով «ողջախոհութեան զգաց-
մունքից» Արային մերժել է տուել վաւաշ Շա-
միրամի սէրը՝¹ (մի ողջախոհութիւն, որ հա-
յերն անպատճառ բիրլիական քրիստոնէակա-
նից պիտի սովորէին), — և ահա դուրս է եկել
մեր Շամիրամի և Արայ գեղեցիկի առասպելը,
պատահաբար ճիշտ նոյնը, ինչ որ Շամիրամ —
Իշտարի և իւր գեղեցիկ ու ողջախոհ սիրա-
կան Իզդուբարի առասպելն է, մի առասպել,
որ սեպագրութեանց մէջ կարդացուած է: Պ.
Թալաթեանի ճանապարհը շատ երկար ու պա-
տահականութեամբ լի է: Կարծում ենք կարճ
ու բնական ճանապարհն այն է, որ ասինք թէ
քանի որ սեմականների սիրոյ վաւաշ, բուռն
զգայական դիցուհու պաշտամունքը մտած էր
մեր մէջ, ուստի և այդ առասպելն ևս, որ
նոյն դիցուհու առասպելն է, կարող էր դիցու-
հու պաշտամունքի հետ մտնել հայոց մէջ: Այս

1) Халат. Арм. Эпосъ. кт. 143 հսб.

կասէր անշուշտ պ. Խալաթեանն, եթէ այդ առասպելն ամենից առաջ յիշուած լինէր ուրիշ ամեն մի մատենագրի, օրինակ՝ Փաւստոսի, Ծղնիկի մէջ, բացի Խորենացուց: Եւ Խորենացին մեղաւոր է, հարկաւ որ ինքն է ամենից առաջ յիշում այդ: Բայց մենք դառնանք Վանայ Լէզք կամ, ըստ Թոմայի, Լեզուոյ գիւղին:

Լէզքի եւ Արտամնտի գրոյցները:— Սրուանձտեանը վերևում յիշուած գրքի մէջ ասում է թէ Լէզք գիւղի բարձր գագաթի վրայ, ուր այժմ Ամենափրկչի մատուռն է, «ընեռագրով քարեր լեցուն են. և ծուլածոյ հին պղնձէ կենդանեաց փոքր արձաններ գրտնուեցան մեր օրերը դեռ ևս քանի մի տարի առաջ»: Այս նկարագիրը ցոյց է տալիս, որ Լէզքը շատ հին ժամանակ արդէն, Արծրունուց և Խորենացուց շատ առաջ մի գեր է խաղացել: Դա հաւանօրէն եղել է կրօնական պաշտամունքի տեղ, որի հետքերը մինչև այժմ մնում են. «Այս Լէզք գիւղի մօտերը կայ մի թոնիրի ձևով աղբիւրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ Թոնիր կրկոչեն, ուր յաճախ գնացողներ կան, շատերուն իբրև ուխտատեղի»: Հեթանոսական պաշտամունքի մնացորդը լինելը շատ պարզ է: Բայց ինչ պաշտամունքի

մնացորդ է այդ: Եամիրամի— Իշտարի— Աստղի: Այս բացատրում է մեզ «Սուրբ Թոնրի» հետ կապուած առասպելը՝ որ բերում է Սրուանձտեանը: «Մի միայն մէկ ձուկ կերևի այդ ջուրին մէջ. և որին որ երեւի՝ անոր ըսխտն ու ուխտը կը կատարուի: Դա կնկան կերպարանք ունի եղեր. և արծաթ է օղն ալ իւր քիթն անցուցած՝ կը տեսնուի տակաւին: Երէցկին է եղեր դա. կին կարի զեղեցիկ. երբ նստած Թոնրի շուրթն հաց կը թխէ, աղբատ մը կուգայ հաց կ'ուզէ, կուտայ: Կերակուր կուզէ, կուտայ: Գինի կ'ուզէ, կուտայ: Թշուառականը կը համարձակի պազ մի ուղելու, երէցկինը կը վարանի, բայց . . . պազն ալ կուտայ: Եւ յանկարծ նոյն վայրկենին երէցը ներս կը մտնէ. երէցկինը ամօթէն ու ահէն ինքզինքն կը ձգէ ի Թոնրի կրակին մէջ . . . կրակն ջուր դառնալով՝ ինքն ալ ձուկ: Աստուծոյ հրամանով յաւիտենական յիշատակ կը մնայ նոյն տեղ:»¹

Այս զրոյցն ինքը պ. Խալաթեանը համարում է, նոյն իսկ իւր «Հայոց վէպի» մէջ, Եամիրամի առասպելի շրջանին պատկանող մի պատմուածք, որ «Թերեւս ի հնուց անտի Հայաստան է մտած Ասորիքից և ժամա-

1) Մրուանձտեան, Գրոց Բրոց, եր. 53. Այս առասպելի վարխաւոր, ոչ մի ճշդի հետ յկապուած, Տ. Նասասարդեանի Հայ յոդ. հիփոսքներում է. գիրք. եր. 39.

նակի ընթացքում կորցրել է իւր արտաքին, հիթանոսական պարական, բայց ոչ ֆարուլան: Այս զրոյցի հնագոյն ձեւը բերած է Դրոյոր Սիկիլիացին. Դա Դերկետոյ դիցուհու զրոյցն է, որ իւր դուստր Շամիրամի ծնունելուց յետոյ ձուկ է դառնում յանցաւոր սիրոյ համար: 1 Պ. Խալաթեանն այս մասին խօսած է իւր մի ուրիշ աշխատութեան մէջ 2, որ ցաւ է ձեռի տակ չունինք: Մինք չենք յիշում թէ այս տեղ նա ինչպէս է հաստատում իւր այդ կարծիքը, բայց մենք այդ ճիշտ ենք համարում: Շամիրամի մայրը Դերկետոն (Atargatis) ջրի աստուածուհի է: Սորա սրբազան կենդանիքն են Փիւնիկիայում և Ասորիքում աղաւնին և ձուկը: Ասկաղոնում նորա պատկերը ձկան մարմնով էր հանած, տաճարը շինուած էր ձկնառատ լճի մօտ: Հերագոլսում դիցուհու տաճարի գաւթում կար Շամիրամի պատկերը, մօտին լիճ, մէջը սուրբ ձուկը: Սորա տօնի օրերը ջուր էին բերում նորա տաճարը և սրսկում: 3 Այս ամենը յիշեցնում է մեր Վարդափառին, որ Անահտի կամ Ասաղկի տօնն է համարւում: ջուր սրսկելը և աղաւնի բաց թողնելը մի սովորութիւն, որից երևում է, որ մեզնում

1) Халат. Арм. Эпосъ, кр. 150. [1885.

2) Очеркъ народн. арм. сказокъ, Москва,

3) Chant. Religionsg. I. кр. 225.

ևս այդ աստուածուհուն նուիրական եղած են աղանին և ջուրը: Պ. Խալաթեանը կարծում է թէ Լէզքի այդ առասպելը կորցրել է իւր հեթանոսական պարական: Բայց այդ ճիշտ չէ: Սուրբ Թոնրի³⁾ ջրի ու ծկան պաշտամունքն իսկապէս հեթանոսական է և ոչինչ չունի քրիստոնէութեան հետ: ³ Այս պաշտամունքը հարկաւ նոր չէ և գալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից. նոր չէ և այդ Սուրբ Թոնրի հետ կապուած առասպելը, որ սիրոյ աստուածուհու այս պաշտամունքի հետ ի հնուց անտի մտած պիտի լինի Հայոց մէջ, իսկապէս ոչ թէ մտած, այլ հայացած ասորիները պահած են այդ կողմերում:

Ինչ է եզրակացութիւնը: Այսօր Վանայ նոյն Լէզք գիւղի մօտ, ուր ըստ Արծրունու սպիանում են Շամիրամի մանուկներից սպանուած Արայի վէրքերը, գտնում ենք սեմականների սիրոյ դիցուհու հեթանոսական պաշտամունքը. և որ գլխաւորն է, այդ պաշտամունքի տեղի հետ կապուած է, թէպէտ և առանց Շամիրամ անուան, մի զրոյց, որ քրն-

3) Թոնիրն ու բոճրում այրուելը բոյորովին ուրիշ մտիւ է, որ եկել կապուել է սեմական սիրոյ դիցուհու այս առասպելին: «Սուրբ բոնիր» գուցէ հերանասական օջախի պաշտամունքի մնացորդ լինի: Կլ. Ե. Հայկի առասպելը էր. 244 հօն.

նութիւնը ցոյց է տալիս թէ նոյն սիրոյ աստուածուհունն է: Այսօրուայ այդ զրոյցն ու պաշտամունքը չկան Մորենացու և Արծրունու մէջ և չեն էլ կարող սոցանից անցած լինել ժողովրդին: Դա հնութեան մնացորդ է: Եւ երբ այսօր Մորենացուց անկախ դառնում ենք սեմական սիրոյ աստուածուհու պաշտամունքն ու առասպելը Վանայ մօտ Լէզք գիւղում, միթէ դա ապացոյց չէ, որ այդ տեղը հնումը նուիրական է եղել Շամիրամին: Եւ միթէ այսօրուայ այդ պաշտամունքն ու զրոյցը, որ շինծու չեն, չեն վկայում, որ նոյն տեղում կամ Վանայ մօտիկ ուրիշ տեղերում արդարև եղել են Շամիրամի վերաբերեալ ուրիշ զրոյցներ ևս: Եւ եղել են այդ զրոյցները ու կան ցայժմ որոնցից մէկն է Արծրունու դրածը, այսինքն Արայ գեղեցկի սպանուելը Շամիրամի մանուկներից և նորա յարութիւն առնելը. մի ուրիշն է Շամիրամի մահուան մասին Մորենացու պատմածը. մի երրորդն է արդի զրոյցը Շամիրամի մասին, որ բերում է Ն. Սարգսեանն իւր Տեղագրութեանց մէջ:

Լէզք գիւղի հետ կապուած այսօրուայ այդ մի զրոյցը միայն, որ Մորենացուց անկախ գոյութիւն ունի, ցոյց է տալիս որ մենք իբրևառուք չունինք Շամիրամի մասին պատմուած արդի միւս զրոյցը «Մորենացու ազդեցու-

Թեամբ կազմուած մի նորագոյն զրոյց» համարելու, ինչպէս կարծում է պ. Խալաթեանը (եր. 149): Մորա պատճառաբանութիւններից գլխաւորն այն է, թէ «գործողութեան տեղը միևնոյն է, Վանայ լճի շրջակայքը»: Սակայն այդ կարող չէ հաստատել թէ այսօրուայ Շամիրամի մասին զրոյցները Խորենացուց են անցած ժողովրդին: Չէ որ Լէզք գիւղի այդ Սուրբ Թոնրի առասպելի համար ևս գործողութեան նոյն տեղն է. բայց այդ առասպելը Խորենացուց չէ մտած ժողովրդի մէջ: Գործողութեան տեղի նոյն լինելը կարող է մինչև իսկ պ. Խալաթեանի կարծիքի հակառակը հաստատել: Եթէ մի հին զրոյց յարատեւում է ժողովրդի մէջ, ասել չի ուզիլ ամենից աւելի այնտեղ պիտի յարատեւի, ուր առասպելը կապուած է որոշ տեղի հետ: Եթէ հնումը Շամիրամի զրոյցները Վանայ մօտերն են այս կամ այն տեղի հետ կապուած, շատ բնականօրէն մենք այսօր ևս նորա առասպելներն աւելի շուտ նոյն տեղերում կրգտնենք քան որևէ ուրիշ տեղում:

Խորենացին չէ ասում թէ Շամիրամի մահն իւր իմացած զրոյցով յատկապէս յոր տեղի հետ է կապուած: Մա միայն ընդհանուր ձևով գրում է. «Աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ»: Ենթադրաբար իմանում ենք Վա-

նայ կողմերը: Իսկ արդի զրոյցը որոշ կերպով
ցոյց է տալիս այդ տեղը. Շամիրամի վերջը կա-
պուած է Արտամետի հետ: Եւ այս իւր առան-
ձին նշանակութիւնն է ստանում, երբ գի-
տենք, որ ըստ Թոմա Արժրուենու (եր. 53 հտ.)
նոյն տեղում եղել է Աստղկի պաշտամունքը:

Այնուհետեւ պ. Խալաթեանի երկրորդ
պատճառարանութիւնն է թէ Սարգիսեանի
բերած արդի զրոյցի մէջ ևս «վհուկ և հեշ-
տասէր» է դուրս գալի Շամիրամ ինչպէս Խո-
րենացու մէջ: Սխալւում է պ. Խալաթեանն
ասելով թէ այդ գծերը «Խորենացու իւրա-
տեսակ պատկերացումն են Շամիրամի մասին»
(своеобразное представление): Շամիրամի հեշ-
տասիրութիւնն ու տափանքը, հոմանիներ օ-
րոնելը, գիտենք, Խորենացու ստեղծածը չէ:
Իսկ ինչ որ վերաբերում է Շամիրամի վհուկ
լինելուն Խորենացու մէջ, իսկապէս նորա յու-
ռութներին, ինչպէս և ուլունքները ծովը ձգուե-
լուն, նոյն իսկ պ. Խալաթեանը կարծում է
թէ այդ կարող է լինել «Խորենացու ժամա-
նակների յետնագոյն (?) զրոյցների արձա-
գանգներ» (եր. 148 հտ.): 1 Եւ երբ մի ան-

1) Իսկապէս յե՞նց հասկանում «Խորենացու ժամա-
նակների յետնագոյն զրոյցների արձագանգներ» (ОТГО-
ЛОСКИ ПОЗДНИХЪ СКАЗАНИЙ) բառերով ինչ է ուզում

գամ Խորենացու ստեղծածը չեն այդ գծերը: ուստի և ոչ մի արժէք չունի այն թէ Խորենացու և արդի գրոյցի մէջ Շամիրամը վհուկ ու հեշտասէր է դուրս գալիս: Այդ կընշանակէ միայն, որ նոր գրոյցի մէջ Շամիրամը ինչպէս իւր անունը, նոյնպէս և իւր բնաւորութեան այդ երկու էական գծերը պահել է: Բայց այդքան միայն: Էլ ուրիշ ոչ մի նմանութիւն չենք գտնում Շամիրամի մասին Խորենացու պատմածի և մեր արդի գրոյցի մէջ, որ բերում է Սարգիսեանը: Ի դուր է կարծում պ. Խալատեանը թէ Խորենացու Զրադաշտի և արդի գրոյցի ծերունու մէջ մի համեմատութիւն է գտել: Այդ երեւակայական է միայն:

Բաղդատութեան համար մենք այստեղ կրբերենք Արամեանի գրոյցը, որի բնագիրը գտնելը գժուար է: Եկատենք առաջուց, որ մենք չենք վստահանում ասելու թէ Սարգիսեանը հաւատարմութեամբ գրի առած լինի

ասել պ. Խալատեանը: Խնդիրը նորա համար այն չէ, թէ այդ գրոյցները Խորենացուց 1500—2000 օտի առաջ են ստեղծուած, թէ մի քանի հարիւր օտի միայն առաջ. այն այն թէ եղև են Խորենացու ժամանակ գրոյցներ Շամիրամի մասին թէ չէ, և Խորենացին այդ գրոյցներէն է օգտուել թէ չէ, յիմիկ գրոյցները հնագոյն թէ ոչ ժամանակներում ստեղծուած:

ժողովրդական զրոյցը՝ առանց այս կամ այն բանի մէջ ենթարկուելու Խորենացուն։ Լեզքի զրոյցի մէջ նա ցոյց է տուել, որ ինքը հարազատ զրի առնող չէ։

Էութեանք և զմիւս տառապելն զոր ասեն զՄամիրամայ, զոր և համառօտ՝ բանիւ յիշէ Խորենացի ասելով. Ռելունքի ծով Մամիրամայ, Թագուհին՝ Մամիրամ՝ որ մի ի հզօր և ի մեծագործ ինքնակալացն էր, շրջագայեալ, ասեն, երբեմն դրօսանաց աղազու յերկրին Վասպուրականի՝ տեսանէ ուրեք մտնկունս խմբեալ ի մի. և մերձ եղեալ առ նոսա տեսանէ զհրատեալ նոցա ուլունս ի գեանի՝ ի զնին կան նոցին. իսկոյն ծանուցեալ զպատուականութիւն նոցա՝ առնու ի ձեռաց մանկանցն և պարգևս տուեալ արձակէ զնոսա Ռւլամբքն այնոքիւք՝ սկսանի Մամիրամ մագեղ և կախարդել, և ըստ ապականեալ արտի իւրոց զամենար, շարութիւն զործել ընդ երկիրն համօրէն. զոր կամէր առ ինքն կոչել ի լրուծեալ տափանացն՝ զօրութեամբ ուլանցն ոչինչ զըժուարէր, և զոր կամէր կորուսանել՝ և յայնմ յաջողէր անաշխատ, մինչև սասանել ամենայն ումեք և չկարել ծիկ հանել, ծերոյ ուրեմն որ երթեկէր առ նա և ամենայն իրաց նորա հմուտ և իբր խորհրդական էր, բազում ժամանակս խորհելով ի մտի թէ զիարդ զերծուցէ

զերկիրն ի ձեռաց նորա կամ ի զօրութենէ
ուլանցն, յաւուր միում մինչքեռ: յԱրամեա-
քաղաքին էր ընդ թողուհոյն, ժամ դիպող:
քտեալ՝ յափշտակեալ ի ձեռաց նորա զուլունս
փախչի: Զայրացեալ Շամիրամայ և ի ցնաման
մեծի եղեալ յարձակի զհետ նորա և չկարա-
ցեալ հասանել՝ առ անհնարին կատաղութենն
զգէսն պարսատիկ զործեալ քանզի յոյժ եր-
կայն և թաւ էին և ապառաժ մի ահեղ մե-
ծութեամբ եղեալ ի նմա արձակէ զհետ ծե-
րոյն և առ մեծի բռնութեան զերծեալ հե-
րացն ի զլսոյն՝ և ապառաժն մեծ գլորեալ
անկանի ի փոս մի առ Արամեառաւ, զոր և
ցուցանեն մինչև ցայսօր: Իսկ ծերն առեալ
զուլունսն փախչի ի ծովեզերս Դատվանայ և
անդ արկանէ ի ծով և զերծանի երկիրն առ
հասարակ ի մոզական շարութենէն Շամիրա-
մայ: Ահաւասիկ զրոյցքն «Ուլունք ի ծով Շա-
միրամայ»:

Խորենացու պատմութեամբքի և այս զրոյցի
նմանութիւնն այն է, որ երկսի մէջ Շամիրա-
մը մի վառաշու չար վհուկ է, որ ունի ու-
լունքներ, որոնք վերջը ծովն են ընկնում: Մնա-
ցածն ամբողջապէս տարբեր է: Խորենացու
մէջ ոչ մի բան չկայ այն մասին թէ ինչպէս է
Շամիրամն ուլունքները ձեռք բերում և
այս կազմում է արդի զրոյցի առաջին մասը:

Խորենացու մէջ չկայ և զրոյցի երկրորդ մասը թէ ուլունքները ինչ զօրութիւն ունէին և թէ Շամիրամն ինչպէս իւր կիրքն էր կատարում ունոնց զօրութեամբ: Ըստ Խորենացու Շամիրամը հոմանիներ է ձեռք բերում ոչ թէ ուլունքներով, այլ նոցա «պարգևելով զամենայն իշխանութիւնս և զգանձս» կամ «զկամս ցանկութեան» կատարել է ապլիս, արնծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց» ինչպէս Արայի զրոյցի մէջ է:—մի բան որ անում է և Իշտարը: Մենք չգիտենք՝ Խորենացու մէջ յուռութք—ուլունքներն ինչի են պէտք գալիս: Այնուհետև զրոյցի երրորդ մասն ևս շուեի Խորենացին: Զրագաշտը Ասորեստանի կողմնապետն է, որին հաւատում է Շամիրամը իւր իշխանութիւնը, այսինքն կառավարութիւնը նորան է թողնում: Սա ուզում է բանակալի վերայ ամենայնի: Շամիրամ կռւում է նորահետ, յաղթւում է, փախչում է Հայաստան, ուր ամառներն անց էր կացնում, և այստեղ որդին սպանում է նորան: Մեռնելուց առաջ՝ ըստ առասպելին, նա ուլունքները ձգում է ծովը: Իսկ զրոյցի ծերունին երթևեկութիւն ունի Շամիրամի մօտ, «ամենայն իրաց նորահետ և իբր խորհրդական էր» այսինքն գիտէր, որ Շամիրամն ուլունքների զօրութեամբ:

է չարութիւն գործում: Բարի ծերունին ժողովրդին ազատելու համար՝ խլում է ուլունքները ու փախչում: Շամիրամն ետևից ընկնում է. մազերը պարսատիկ շինում. և պոկում: Եւ այսքան միայն: Զրոյցից մենք մինչև անգամ որոշ չգիտենք թէ արդեօք Շամիրամը մեռնում է թէ չէ: Միայն նորա ուլունքները ծերունին ծովն է ձգում և ժողովուրդն ազատում է նորա մոզական զօրութիւնից:

Ասել կարելի չէ թէ այս զրոյցը ստեղծուել է Մորենացու մի խօսքի ազդեցութեան տակ թէ Շամիրամ վաւաշ է և թէ «Ուլունք Շամիրամայ ի ծով»: Այս նոյնպէս կարող է Արտամետում պատմուած Շամիրամի հին առասպելի մնացորդ լինել, ինչպէս Լէզքի Սուրբ Թոնրի առասպելն է:—

Աւելորդ չի լինիլ վերջում նկատել, որ Մորենացու բերած առասպելով Շամիրամի վախճանն ուրիշ տեսակ է լինում: Այստեղ Շամիրամն իւր թշնամիներից հալածուած փախչում է. առասպելը պատմում է նորա «զհետևակ փախուստն, և զպասքումն և զիղձքս ջրոյն և զարբումն, այլ և ի մօտ հասանել սուսերաւորացն, և զյուռուլման ի ծով, և բան ի նմանէ՝ ուլունք Շամիրամայ ի ծով: Այլ . . . և Շամիրամ քար»: Շամիրամն ուրեմն իւր ուլունքները ծովը ձգելուց յետոյ քար է դառնում:

ՎԱՐԴԳԷՍԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Վաղարշապատ եւ իւր առասպելը:—
 Ըստ պատմական տեղեկութեանց Բ. զարում
 Բ. յ. հռոմայեցիք, երբ պարթևների հետ
 կռուելով առնում են Հայաստանի մայրաքա-
 ղաքն Արտաշատ և աւերում (163 թ. Բ. յ.)
 շինում են մի քաղաք, ուր պահում են զօ-
 ռեղ բերդապահ զօրք (գառնիզոն): Այս քա-
 ղաքը, որ շուտով այնուհետև հռոմայեցիք,
 այնտեղ ծագած մի ժողովրդական ապստամ-
 բութիւն զսպելուց յետոյ, հրատարակում են
 իբրև Հայաստանի գլխաւոր քաղաք, կոչւում է
 Մոր Բաղաք, 1 կամ մօտին եղած մի
 հին քաղաքի, կամ հին մայրաքաղաքի,
 Արտաշատի նկատմամբ, որից և շատ հեռու
 չէ: Սակայն շատ չէ անցնում: Մոր Բաղաքը
 կոչւում է և Վաղարշապատ: Ըստ Խորենա-
 ցու (Բ. կե.) հայոց Վաղարշ Թագաւորը (190
 —210 թ. Բ. յ.) պատեաց պարսպաւ և
 զհզօր աւանն Վարդգէսի, պատեաց պարս-
 պաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց

1. Римская история Θ. Моммсена, т. V. Москва 1885, стр. 397.

Վաղարշապատ, որ և Նոր քաղաքը, Մորենացու այս պատմութիւնը թէ Վաղարշապատը Վաղարշ թագաւորի անունով է կոչուել՝ անհիմն և շինովի համարել կարելի չէ, քանի որ Նոր Բաղաքի Վաղարշապատ անունը կայ և քանի որ իրօք Բ. դարի վերջում և Գ. դարի սկզբում Հայաստանում թագաւորել է Վաղարշ: 1 Եթէ Նոր Բաղաքը կրում է Վաղարշ թագաւորի անունը, կրնանակէ նա որևէ ձևով աշխատել է այդ քաղաքը բարձրացնելու ու մեծացնելու համար:

Ազաթանգեղոսի մէջ Վաղարշապատը բերդաքաղաք է և միանգամայն մայրաքաղաք Գ. դարի առաջին կէսից արդէն. Մոսրով և Տրդատ թագաւորներն այնտեղ են նստում (եր. 26. 30. 80). «ի Վաղարշապատ, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց» (եր. 96): «Ղօղեալ էին յառքայական կայանին՝ ի նմին թագաւորաց ի Վաղարշապատն քաղաքի» (եր. 99): Սակայն ինչպէս երևում է, Արտաշատը դեռ չէ ընկնում. Վաղարշապատի հետ Ազաթանգեղոսի մէջ յիշուում է և Արտաշատը թէ իբրև բերդ և թէ իբրև կրօնական կետրոն: Բիւզանդի մէջ (Գ. դար. Ը. գլ.) Տրդատի որդին Մոսրով Դ. դար

1. Գարագաշեան. Բն. պատմ. Հայոց, Բ. եր. 263 հօ.

բում, ինչպէս երևում է, Արտաշատում էր նրա-
տում և այստեղ, «մինչև ի դաշտն Մեծամո-
րի ի բլուրն որ անուանեալ կոչի Դուին», որ
կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Ար-
աշատու, նա տնկել է տալիս անտառ, շի-
նում է «զապարանն արքունականս» Տիրան
Թագաւորը (Գ. դպր. ԺԲ. զԼ.) Արտաշատից
ընդառաջ է ելնում Յուսիկ կաթողիկոսին, և
«մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ» յեկեղե-
ցին դառնային. և նստուցանէին զցանկալի
մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետականս
Վաղարշապատն ուրեմն մի առ ժամանակ իր-
բև մրցակից է հանդիսանում Արտաշատի դի-
մաց, և այնուհետև դարձեալ բարձրանում է
Արտաշատն ու յետոյ Դուինն Արտաշատի մօտ:

Արտաշատն ունէր անցեալ և պիտի պար-
ծենար իւր հնութեամբ, հիմնադիր ունենա-
լով հայոց հին թագաւորներից Արտաշէսին:
Շատ բնականօրէն արտաշատոց մրցակից վա-
ղարշապատցիք ևս պիտի աշխատէին իրենց
Ծոր Բաղաքի սկիզբը հին ցոյց տալ և կապել
որևէ հին հայ թագաւորի անուան հետ, ճիշտ
ինչպէս մեր իշխանները ձգտում էին իրենց
ցեղի հնութիւնը ցոյց ապու՝ այս կամ այն
թագաւորից սերուած համարելով իրենց: Ար-
տաշատն ունէր իւր հիմնարկութեան առաս-
պելը, նոյնը պիտի ձգտէին ունենալու և վա-

ղարշապատցիք: Ծոր Բաղաք կոչումը, ինչպէս
և Վաղարշապատ, շատ նոր էր և չէր կարող
նոցա համար պատիւ լինել և առասպելի նիւթ
առաջ հետեւաբար Վաղարշապատի առասպելը
պէտք էր կապել մի հին անուան հետ, մի այն-
պիսի անուան հետ, որ միանգամայն առնչու-
թիւն ունենար Վաղարշապատի հետ: Այդ
անունն է Վարդգէսի անուն, որ, ըստ Խորե-
նացու, Վաղարշապատի հին կոչումն է: Առաս-
պելը շինուած է Վարդգէս մանուկի վրայ:

Առասպելի մէջ պատմում են թէ Վարդ-
գէս մանուկը հատուած գնացեալ ի Տուհաց
գաւառէն, գալիս նստում է Շրէշ բլրի, Ար-
տիմէդ քաղաքի, Բասաղ գետի մօտերը «կը-
ռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»: Ծա-
կին է առնում թագաւորի քրոջը և շինում
իւր անունով աւանը, որի մէջ Տիգրան թա-
գաւորը հրեայ գերիներ է բնակեցնում և ա-
ւանը մեծանում է:

Նախ նկատենք, որ «կռել կոփել զդու-
ռն» մի անմիտ բան է թարգմանել տօ-
сать да брать врата, ինչպէս անում է պ.
Խալաթեանն ըստ Հմինի: Կռել կոփել նշանա-
կում է պարզաբար թակել, ծեծել. իսկ մէկի
դուռը թակել, ծեծել, որքան գիտենք, ցարդ
ևս մի քանի տեղ հայոց մէջ նշանակում է մէ-
կի աղջիկն ուղել: Այդ մի դարձուած է, որ ե-

րեւի հին սոգորութիւնից է ծագումն Մեր հե-
քաթների մէջ ցարգ և սթագաւորի աղջիկն ու-
զելիս խնամախօսը զնում թագաւորի-դուռը ծե-
ծում է եւ նստում դռանը «խնամանքարի» վրայ-
որ նշան է թէ աղջիկն ուղում են Ուրեմնէ կռել
կոփել զգուռն Ծրուանգայ արքայի» նշանակում
է աղջիկն ուզել Պ. Խալաթեանն այս առաս-
պելը շինծու է համարում, որովհետեւ Վարդ-
գէս տնունը, ինչպէս և Արաթմէդ քաղաքը,
բոլորովին անյայտ է՝ մեր մատենագիրներին
և յոյն ու հռոմայեցի պատմիչներին, ուստի
և Խորենացու «հնարածն են այդ տնուկներն»
և առասպելը Սակայն այդ դատողութեան
հիմքը սխալ է։ Եթէ այդպէս դատելու լինինք,
սուտ և հնարովի կարելի է համարել շատ ու
շատ բան ոչ միայն մեր, այլ և ամենայն ազ-
գերի մատենագիրների մէջ։ Միթէ քիչ բան
կայ այս կամ այն պատմագրի մէջ, որ ուրիշ-
ները չեն յիշում։ Պ. Խալաթեանը միշտ այն-
պէս է դատում, թէ ինչ որ Խորենացուց ա-
ռաջ (դեռելով Խորենացուն ամենազաղը Ը.
դարու վերջում և Թ. դարու սկզբում) յի-
շուած կայ՝ Խորենացին, ուրիշներից է առել և
սարքել, ինչ որ Խորենացուց յետոյ է յիշուած
կամ կայ՝ Խորենացուց են ուրիշներն առել և կամ
նորա ազդեցութեան տակ է շինուած։ Իսկ ինչ որ
Խորենացու մէջ կայ և ուրիշ տեղ չկայ, կամ

պ. Թալաթեանն ինքը չգիտէ թէ կայ թէ չկայ, այդ էլ սուտ է և Թորենացու շինածը: Այսպէս Վարդգէսի աւան, Արաբմէդ քաղաք ու լիշները չեն յիշում. Բասաղ գետը միայն Ատողիկն է յիշում, այն էլ Թորենացուց առնելով: Իսկ Շրէշ բլուրը — թէպէտև Հայաստանում չորս Շրէշ բլուր են յիշում, բայց ոչ մէկը Վաղարշապատի մօտ չէ: Ապա

1) 9. Խաչաքեանը կոչումն է անում Այշանի Այրաբաս, եր. 204, ուր հարդում ենք. «Շրէշ բլուր ըստ այժմու գիտութեան ընկաց կողմանցն՝ ոչ մի այլ գեղ չորս են, բայց բազում մղոն օր տարակայքի Վաղարշապատ ընդ արեւմուտս յահեկե Մեծաւորի եւ կոյիև Շրէշի բլուրս, վասն առասուրբանք բուսուցանելոյ գրանջարն շրէշ եւ բոխ. իսկ յայլագգեաց կոյիև Գըրլար, այսինքն կարմիր, վասնզի կարմրահող առաւպարս են, եւ գոգք ևնցին մակադատեղ իաշանց»: Վաղարշապատցի, որքան հարցուփորձից իմացանք, ի հետոց մի միայն Շրէշ բլուր գիտեն, եւ այդ բլուրն այժմեան գլխից հիշուի է ընկնում: Բասն եւ հիւզ տարի առաջ բաւական մեծ եւ բարձր հողաբլուր էր, բայց այս տարիներ ընթացում գիւղացիք բլրի հողը շարունակ կրում են արտերն ու այգիները՝ պարտաւանելու համար, եւ բլուրը հեզհեզ իջնում է: Եւս հեռաբլրի կրիներ այդ Շրէշ կոչուած բլրի կազմութիւնն ուսումնասիրել, բլուրն ինչպէս երեւում է, ընկան չէ այլ արուեստական եւ ծառայելի իբրև գեղեզանաւանդ միջից կմախներ, հիւս անօրներ եւ իրեղևներ շատ են դուրս եկել: ամբողջը կազմուած է բազմազան-կիւրծից, գոյնզգոյն շերտերով մեծ կանոնաւորութեամբ շրջուած, որոնց մէջ մոխիրը մեծ տեղ է բռնում: Այս բլուրը միայն, որի հիւս արագան:

ուրեմն, ըստ պ. Խալաթեանի, Խորենացու
Հնարածն են Վարդգէսի աւան, Արտիմէդ քա-
ղաք, Բասաղ գետ և Շրէշ բլուր: Զարմանա-
լի մարդ է այդ Խորենացին, որ գրչի մի շար-
ժու մով առանց որևէ կարիքի, ոչ միայն մի ժո-
ղովրդական առասպել է ստեղծում, և մի Ե-
րուանդ Թագաւոր և նորա փեսան Վարդգէս
մանուկ, այլ և չորս հինգ աշխարհագրական
անուններ՝ Վարդգէսի աւան, Արտիմէդ քա-
ղաք, Բասաղ գետ, Շրէշ բլուր, այլ և մի «խոր-
հրդաւոր (ТАИНСТВЕННЫЙ) Տուհայ գաւառ»: ¹
Եւ գիտէք, այդ անունները նա Ափրիկայի
խորքում, Սահարայի անապատի համար չէ
ստեղծում, որ ոչ որ չկարողանայ սուտն իմա-
նալ, այլ Վաղարշապատի համար, որ «Բ. դա-
րուց Բ. յ. Հայաստանի մայրաքաղաքն է եղել,
իսկ Դ. դարուց մինչև այժմ, բացի այդ և

յինելը պարզ երևում է, այժմ յայտնի է Երէշ անունով:
Սակայն պոֆ է նկատել, որ Խորենացու ձեռագիրների մէջ
կայ եւ Երէշ բերդ ընթերցուածը, այնպէս որ նախ պոֆ է
որոշել՝ Երէշ բլրի քէ բերդի մասին խօսք պիտի լինի:

1. Այս «խորհրդաւոր Տուհայ գաւառն» այնքան էլ
կասկածելի չէ պ. Խաչաթեանի համար եւ կարող է Խորե-
նացու ստեղծածը լինել, զի խորհուրդը կամ գաղտնիք
գտել է պ. Խաչաթեանը: Այդ անունն մէջ նա տեսնում է
Քասեանի Մեծ եւ Փոքր Տու (=Տուֆ, Տուաց) գիւղերի
անունները, որ յիշում են Փարպեցիին եւ Սեբեոս, միայն
Դու ձեռով:

հայոց կրօնական կեդրոն է դարձել, և Է. դարում և աւելայնոնք մենք, նոյնպէս նշանաւոր է եղել, երբ մեր կաթողիկոսների առանձին խնամքի առարկան է եղել հոյակապ եկեղեցիներով զարդարել այդ քաղաքը: Եւ ահա այդ տեղի համար այդ ժամանակներում ստեղծուած է Խորենացին այնքան անուններ: Պ. Խալաթեանն այնպէս է խօսուած, որ կարծես մեր մտանագիրները Հայաստանում, եղած բոլոր հին ու նոր աշխարհագրական անունները գրել են և նոցա բոլոր գրածներն իրեն քաջ ծանօթ են, և կամ երբ մի յոյն մտանագիր, Սուլիզաս, պատահաբար գրում է Նոր Բաղաքի շինուելու մասին և չէ յիշում ուրիշ անուններ, ուրեմն և գոյութիւն չեն ունեցել այդ անունները, և կամ իբր թէ նա, պ. Խալաթեանը, հաստատ գիտէ, որ Հռոմայեցիք այդ Նոր Բաղաքը հիմնել են մի ամոյի երկրում, և չէր կարող մի Վարդգէսի աւանի մօտին կամ տեղում շինուած լինել: Կարծես պատմութեան մէջ քիչ են պատահում այդպիսի դէպքեր, որ հին գիւղի տեղում կամ մօտին շինուած են նոր գիւղ, կամ նոր քաղաք. ժողովուրդը մի առ ժամանակ պահում է հին անունը և նոր գիւղի կամ քաղաքի վրայ, մինչև նոր անունը մոռացութեան է տալիս հին անունը: Այսպէս և Նոր Բաղաք անունը

կարող էր յետ մղել Վարդգէսի աւան անունը, իսկ Վարդարշապատ անունը այժմ մոռացութեան է տուել և Նոր Բաղաք անունը: ¹

Հրէից զերութ ին մեծն Տիգրանի ձեռով: —
Խորենացին գրում է թէ Վարդգէսի աւանում
«Տիգրան միջին յարշակունեաց նասոյց զհա-

1. Կրնե՞րէն պ. Խաչաբեանն եւ բնբեցողները, որ այսպիսի տարրական բաների մասին եւ՛ք գրում: Բայց պ. Խաչաբեանին կարող էինք յիշեցնել, որի՞նչ, իւր ծանօթ. ֆաղափն Ալեքսանդրապոլ եւ բերդը, որ ռուսներն են շինած 1834 թուին հին Գիւմրիի կամ Կունայրիի մօտ, բայց ժողովուրդը զիս պահում է Գիւմրի անունը, քակեալ է գրականութեան մէջ, բացի հեռախօսութիւնից, որքան գիտեմք, միայն Ալեքսանդրապոլ է յիշուում: Գ. Խաչաբեանի հայրենի ֆաղափ հետ յիշեմք եւ մեր հայրենի գիւղը Թագազեղ (—նոր գիւղ), որ նոյն ժամանակներում շինուած է հին նշանաւոր Աստապատ անանիւթի մօտ, բայց դեռ ժողովուրդը այս նոր Թագազեղի վրայ պահում է հին անունն եւս՝ Աստապատ, այլ էւ նոյն իսկ մի գոռոյց այս գիւղի հիւճարհութեան եւ անուան համար, իբր քե Ս. Վարդան Մամիկոնեանի մարմինն Աւարայի դաշտից այստեղ են՝ թերած ու պետած: ուստի եւ գիւղի անունը կոչուում է՝ Աստապատ: Բայց այդ Թագազեղը (—նոր գիւղը) շինուած է Ժ. դարում, կասէ պ. Խաչաբեանը, եւ ուստաց բոլոր ֆարեգների վրայ չկայ Աստապատ անունը, այլ միայն Թագազեղ, այն էլ բուրմերէն՝ Տագազեղ, — ուրեմն սոսքե էւ սար ֆոյի Աստապատ անունը, եւ շինովի Ս. Վարդանի այստեղ բնգնուելու շրջան եւս: Այն չէ՞ ասում արդե՛ր պ. Խաչաբեանը եւ Վարդգէսի աւանի համար:

տարակ առաջնայ գերութեանն հրէից, որ եզե
քաղաքագիւղ կ'աճառօք: Ըստ պ. Սալաթեանի
(կր. 386) այս հակառակ է Փաւստոս Բիւ-
ղանդի տուած արժանահաւատ տեղեկութիւն-
ներին: որովհետեւ նա թուելով այն քաղաք-
ները, որտեղ գետեղուած են եղել հրեայ գե-
րիները, հենց Վաղարշապատի մասին այդպի-
սի բան չէ ասուած: Դարձեալ դատելու նոյն
եղանակը: Բայց Փաւստոսը նրանց է թուում
այն, աւելացնենք, բոլոր քաղաքները ուր
հրեայ գերիները գետեղուած են եղել: Սա նկա-
րադրում է միայն թէ ինչպէս պարսիկներն ա-
ւերում են հայոց ամբողջ երկիրը, և յանուա-
նէ յիշում է մի քանի քաղաքներ և այն տե-
ղերից տարած հայ և հրեայ գերիներն ու նո-
ցա թիւը: Այս են.

Արտաշատ «9000 տուն երգ հրեայս և 40
երգ հայ»: Վաղարշապատ «ինն եւ տասն երգս
հազար» (=19 երգս 1000). Երուանդա-
շատ «երգս 20000 հայ և երգս 30000 հրեայ»: Զարեհաւան «5000 երգ հայ և 8000 երգ
հրեայ»: Զարիշատ «14000 երգ հրեայ և 10000
երգ հայս»: Վան «երգս 5000 հայ և 18000
երգս հրեայս»: Մախճաւան «երգս հայս 2000
և հրեայս երգս 16000»:

Ի՞նչ կրկարծէ այս հարիւր կարգալուց
յետոյ ընթերցողը: արդեօք «հենց» Վաղար-

շապատի համար հրեայ դերիներ չէ յիշում
Բիւզանդը, թէ հենց Վաղարշապատի համար
աղաւաղուած է բնագիրը: «Ինն եւ տասն երգ»
հազար» ինչ հայ թէ հրեայ: Միթէ կարող
էր Բիւզանդն իւր այնքան կրկնութիւնների
մէջ մի առ մի ասել թէ իւր յիշած քաղաք-
ներից ամեն մէկից որքան հայ և որքան հրե-
այ են տարել և Վաղարշապատի համար չա-
սել նոյն իսկ թէ այնտեղից ինչ են տարել դե-
րի: հայ թէ հրեայ: Եւ վերջապէս տեսէք
բառերի դասաւորութիւնը. «Ինն եւ տասն եր-
գըս հազար» Միթէ պարզ չէ, որ այտեղ
ամբողջ բառեր են սկսած և երկու թիւ է յի-
շուած եղել: Պ. Խալաթեանն աղաւաղուած
բնագիրն էլ յօգուտ իրեն բանեցնել գիտէ: 1
Սակայն պ. Խալաթեանի մեթոդն երկայրի
սուր է. այն ժամանակ նա կասէր, Խորենա-
ցին Վաղարշապատի հրէական գերութիւնը
Բիւզանդից է վերցրած: Որովհետեւ առանց
այն էլ նա գրում է. «Չնայելով Փաւստոսին
հակասելուն մեր պատմագիրն ակամայ պա-
հում է Փաւստոսից առած մանրամասնու-
թիւններ հրէից գերութեան մասին»: Եւ այդ

1. Աղաւաղուած է հաւաստաւ եւ Արտաշատի մասը
գի անհաւաստի է, որ այդ քաղաքից 9000 երգ երեայ
գերի օսնէին եւ հայ միայն 40 երգ:

«մանրամասնութիւնները» որոշում է նա իւր աշխատութեան երկրորդ մասում (եր. 80): Խորենացի. «Յորում Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն հրէիցն»:— Բիւզանդ. «Զայս ամենայն բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զբահանայապետն Հրէից զՀիւրկանդոս զառաջին ժամանակաւ»: «... Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ»...

Եւ գիտե՞ք ինչու է զծած Խորենացու և Բիւզանդի մէջ «առաջին» բառերն ևս, թէպէտ և նոյն իմաստը չունին: Որպէս զի ցոյց տայ, որ այդ «առաջին գերութիւն» ասածն էլ Խորենացին Բիւզանդից թելագրուած է սարքել: «Եւ այս ինչ առաջին գերութիւն է, որի մասին ասես թէ հարեանցի յիշում է Խորենացին»: բացականշում է պ. Խալաթեանը և ապա հարցնում. «Ե՞րբ է եղել երկրորդ գերութիւնը և ո՞ւմ ձեռով:— մեզ ոչինչ յայտնի չէ»: Անշուշտ պ. Խալաթեանին կարող է յայտնի չլինել, զի նա Խորենացին կարդացել է և շատ անգամ կարդացել, բայց ինչպէս ասին մատչեանացս, մղուածք է, որ Խորենաց

քին նոյն Արշակունի միջին Տիգրանի համար
նրկու հրէական գերութիւնն է պատմում: Յայն
Բ. դարի ժգ. գրիտ մէջ. մեզիս գիրի քա-
ղու՛մ ի հրէիցն: հասի շուրջ գիտգամայիդ քա-
ղաքաւ: և այնուհետև ժգ. գրիտ մէջ այս
գերութեան համար գրու՛մ է. Ուկ թագաւո-
րն Հայոց Տիգրան գգերութիւնն հրէիցն նքու-
տուցեալ ի յԱրմաւիր և յաւանիս Վարդգէսի
որ ի վերայ Թաւաղ գեաղա: Այս առաջին գե-
րութիւնն է, որ շղիտ, Բիւզանդ: Այս ևրի-
բարդ գերութիւնը, որ Բիւզանդիանն է, պատ-
մում է ժժ. գրիտ մէջ. Պարզագո մարանու-
թեան Տիգրանայ և Արտաշիզի, և առաջեալ
ասպատակի Պաղեստինէ, և գերտ թիւն Հիւր-
հանու քահանայապետի և այլ քաղաքութեան
հրէիցա: Յ՛ւ գճիւրիանու կապեալ տանն Տիգ-
րանայ հանդերձ գերութեամբն: և Տիգրան
հրայման սայ Թարգաւիրանայ նապուցանել գգե-
րեալն Հրէից . . . ի քաղաքն Եւսթրամայա: Ահա
և երկրորդ գերութիւնը նրկէ Թարեւապին Բիւ-
զանդից ագասուած է, այս երկրորդ արշաւանքի
համար միայն կարող է լինել: և գուցե
Թարեւապուն խարոզներից մեկն էլ հինց այդ
աւրժանահաւատառ Բիւզանդն է եղել, որ մեր
պատմագիրը Տիգրանին կենդանի է պահում
և մանանկից պարկէւոց այդ արշաւանքին Պա-
ղեստին: և Հիւրիանասին Հայաստանն է գիրի

բերում՝ մինչդեռ, նա պարթևաց գերին է ե-
ղից և Բարեշուն ապրուելը լրատ Յովսեփոսի:

Տիրարանի առաջին արշաւները Պաղեստինն և Պաղեստինք քաղաքը պաշարելը որ պատմական իրողութիւնն է: Դուրենացին կարող չէ Քիւսանդից առած լինել: այլ սւրբ: ազո-
րութից: Այս արշաւների գերինն են ահաւոր
և կթէ: Տիրարան հետոյ գերինն է բերել: այս
ժամանակ միայն եղած կարող է լինել: Եւստ
բնակեցնում է Կարգութի առանձն: Այս աւան-
նի հրեական գերութիւնը: Դուրենացին կարող
էն հարկաւ: գրաւոր ազգութից և առանձն լի-
նէ: Նա ազգութի չէ յիշում: Բայց մենք ա-
ւելի հաւանական ենք: հաւանում: որ նա ա-
ռան լինի նոյն Կարգութի առանձն առաջելից:
Առաջադի բոլորութիւն լինելը: պատմելու ձեւն
այս շինութիւնն աւանդաւ զնոյնացի Կարգութի
մանն կը Իսկ կոտից գրաւուն: Երաւանդացի
արքայի: Այս Երաւանը՝ առաջինն է առաջա-
կեացն: որ ի նպակաւնց: զորոց գործի կին
առանդը Կարգութի սին շինեաց զառանա զայս յա-
րաւ Տիրարան միջին յարշաւաննաց նոյնացի
զհասարակ առաջնոյ գերութեանն Հմէից սը-
նդէ: քաղաքագեղ զամաստք: Այս ամբողջից
մենք ընդգնած: բնակել: միայն Դուրենացա-
բացառութիւնն են և յաւերաններն ենք: հա-
մարում: Եւստանն առաջադի բոլորութեան
թիւն:

Սրուանդ եւ Մեծն Տիգրանս։— Ենչպէս կարող էր Խորենացին իմանալ որ նորգի¹ մէջ յիշուած Արուանդը յատկապէս Սրուանդ առաջին ստիպուածացն է՝ Տիգրան Ա-ի հայրը, և ոչ թէ Սրուանդ Բ. հարցնում է պ. Խաչաթեանը։ Ետտ հետ կերպով բաւական էր որ առասպելի մէջ յիշուած լինէր «առաջին» «հին» «բնիկ թագաւոր» բառերից մէկը, և մեր պատմագիրն այդ Սրուանդին պիտի նշնացնէր իւր առաջին բնիկ թագաւոր Սրուանդի հետ, և ոչ թէ Արշակունի Սրուանդի հետ. ճիշտ ինչպէս երգի Մեծն Տիգրանին դրած է բնիկ թագաւորների ցանկի մէջ։ Իսկ Վարդգէսի աւանի առասպելի մէջ յիշուած Տիգրանին, թէկուզ սա ևս բնիկ բառը կրէր, մեր պատմագիրն անհրաժեշտօրէն պիտի տարբերէր Սրուանդեան Տիգրանից և նշնացնէր Արշակունի միջին Տիգրանի հետ, քանի որ իւր պատմական ծանօթութիւններով միջին Տիգրան Արշակունին է արշաւել Պարթևստին և հրեայ գերիներ բերել։ Ասկայն առասպելն աւելի ճշտութիւն է պա-

1. Ազիսեմ պ. Խաչաթեանը որտեղից գիտէ որ Վարդգէսի վրայ երգ եւ ոչ չոկ գրոյց; Խորենացին «չառասպելն ասեմ» է ղևում: Այ «առասպել» և ոչ «ասեմ» բառից դեռ կանչի չե կգրակցանէ թէ այդ առասպելը երգուել է և ոչ թէ պատմուել:

հել, քան Խորենացին: Մենք գիտենք Խորենացին առնելով մի գրաւոր աղբիւրից, որ ժողովրդական երգից է ծագում, իւր Հայկազն Տիգրանի (=Մեծն Տիգրանի) հայր դնում է Սրուանդ Սակաւակեաց. «խարտեաշս այս և աղէբեկ ծայրիւ հերաց Սրուանդեանս Տիգրան» (Ա. իդ.): Իսկ այստեղ Վարդգէսի առասպելի մէջ պատմում է, որ նոյն Սրուանդ արքայի քոյրն առնում է Վարդգէս մանուկն և շինում է իւր անունով աւանը և անմիջապէս թէ Տիգրանը (=Մեծն Տիգրան) այնտեղ բնակեցնում է հրեայ գերիներ և աւանը մեծանում է: Ուրիշ խօսքով աւանը շինւում է Մեծն Տիգրանի հօրաքրոջ ամուսնու ձեռով, բայց Տիգրանն ևս մասնակից է լինում, բնակեցնելով այնտեղ հրեայ գերիներ, որ միևնոյն թէ աւանն ըստ առասպելին իսկապէս շինւում է Մեծն Տիգրանի օրով: Խորենացին միայն սխալ մեկնելով այդ Սրուանդին ու Տիգրանին, որ հայր ու որդի են ըստ առասպելին, բաժանում, հեռացնում է իրարուց, մէկին թողնելով երգի բնիկ Մեծն Տիգրանի հայր, իսկ միւսին, որ նոյն Մեծն Տիգրանն է, նոյնացնելով իւր Արշակունի միջին Տիգրանի հետ: Այսպէս այն հանգամանքը, որ երկու տարբեր առասպելի մէջ ևս, հակառակ Խորենացու բացատրութեան, Սրուանդ և Տիգրան

(=Մեծն Տիգրան երկու դէպքում էլ) հակառակ Խորենացու բացատրութեան) անունները միասին են դուրս գալիս, եթէ մի կողմից վկայում է երկու առասպելների վաւերականութեանը, միւս կողմից ցոյց է տալիս նաև, որ ժողովրդական առասպելի մէջ հենց Մեծն Տիգրանի հայր համարուել է Երուանդ: Այս անունով հայոց թագաւոր մեզ յայտնի է բայց Երուանդ անունը, կարող էր գործածական լինել հին հայոց մէջ: Դ. դարում Բ. ա. Հայաստանի շատ սատրապներ կրել են Երուանդ անունը,¹ և նոյն իսկ Հայաստանի վերջին պարսկական (?) սատրապն էլ (190 թ. մօտերը, Արտաշէսի և Զարեհի թագաւորելուց առաջ) կրում է Երուանդ անունը, որին թագաւոր է անուանում Ստրաբոնը:² Իսկ Մեծն Տիգրան այդ ժամանակից շատ հեռու չէ (ծնուած մօտ. 40. թ. Բ. ա. ըստ Ռէյնալդի):³ Անշուշտ, մենք չենք ասում, որ

1. Hübschmann Arm. Gramm. I. եր. 40.

2. Халат. Арм. Эпохы, եր. 234 հս: «Վերջին պարսկական սատրապ» կոչումը մեզ համար անհասկանալի է, քանի որ այդ ժամանակ պարսիկները չէին իշխում Հայաստանին: Դժբախտաբար քննադիրը մտնի թակ չունիմք: Երեւի պարսկական ծագման պատճառով այդ Երուանդը «պարսկական սատրապ» է կոչում:

3. Գարագաշեան, Գնն. պատմ. Հայոց, Բ. եր. 131.

Մեծն Յիզբանի հայրը, որի անունը պատմաբան մէջ հաւատարմաբար յայտնի չէ, Երուանդ կողմած լինի, բայց մի անբնական բան էլ չէր լինիլ, որ ժողովրդական առասպելը պահած լինէր ճշտութեամբ այդ անունը: Եամենայն դէպս, մեզ համար այն նշանակութիւն ունի, որ մի առասպելի մէջ Մեծն Յիզբանի հայրն է Երուանդ, և միւս առասպելը Վաղարշապատի սկիզբը կապում է Մեծն Յիզբանի այս հօր և հենց իրեն Մեծն Տիգրանի հետ:

Այս առասպելի մէջ կարող է պահուած լինել բուն պատմական յիշողութիւն ևս, թէ Վարդգէսի աւանը շինուած է Մեծն Տիգրանի և իւր հօր ծրով: Սակայն առասպելը հաւաստեալ առանձին արժէք ու նշանակութիւն է ստացած և զարգացած յետոյ, երբ Վարդգէսի աւանը, Ծոր Բաղսք և Վաղարշապատ անունով, Հայաստանի մայրաքաղաքն էր: Միւս կողմից առասպելն ամբողջապէս կտրուող է այս ժամանակներում ևս ստեղծուած լինել և կապուած ժողովրդական առասպելի յայտնի և սիրելի դիւցազն Մեծն Տիգրանի և իւր հօր անունը: Ոնչպէս լինի այս առասպելի սկիզբը պատմական յիշողութիւն ունենայ իւր մէջ թէ Վաղարշապատի փառքը բարձրացնելու համար միայն յետոյ ստեղծուած լինի այդ երկրորդական է. մեզ համար միայն

այն նշանակութիւնն ունի, որ Վարդգէսի՝ առ
զանի առասպելը ժողովրդական է և, հա-
կառակ Թորենացու բացատրութեան, պատկա-
նում է Մեծն Տիգրանի առասպելի շրջանին:

ԺԱ.

ԵՐԳԳ 8808 ԵՒ ԳԱՐՈՒՑ. ՍԱՆԱՍԱՐԻ
ԱՌԱՍԳԵԼԸ ԵՒ «ԳՈՒՍԱՆԱԳԱՆ».

Սուրբ Գրքի աւանդութիւններ հայոց մէջ:—
Ոլումպիոդորոսի հին անգլիւ զրոյցների բովան-
դակութեան մասին տեսանք Հայկի առասպե-
լի մէջ: Խորենացին որովհետև առանձին նը-
շանակութիւն է տալիս այս զրոյցներին, ուս-
տի մանրամասնօրէն պատմում է թէ ինչպէս
է հասել իրեն անոնց բովանդակութիւնը: ¹
Մենք այդ մասին երկար կանգ առնել չենք
ուզում, զի հայ ժողովրդական առասպելնե-

1 Գասմագիտն այս զրոյցները լսել է ի Գորգի եւ ի
Բական անուն կոչեցելոց, եւս եւ երրորդ ոմն Դաւիթ:
Այս երեքից մէկը՝ «վարժեալ փիլիսոփայութեամբ», պատ-
մել է հայ ծերերին (որոնց թում եւ մեր գասմագիտն է
եղել) թէ երբ ինձը Յունաց մէջ փիլիսոփայութիւն է սո-
վորելիս եղել, մի օր Յունաց իմաստունների մէջ խօսք է
բացուել վասն աշխարհագրութեանց եւ բաժանմանց ազ-
գաց, եւ այդ ժամանակ Ոլումպիոդորոս, ո՛ր կատարեալապէս
իմոսսա (ի մէջ իմաստնոց յունաց), պատմել է Բսիսու-
րեայի մասին ելլն:

քին չեն վերաբերում այդ գրոյցները: Սակայն նկատենք որ չգիտենք ինչ հիման վրայ պ. Խալաթեանը (եր. 43) գրում է Ուղմպիս գործի գրոյցների մասին: «Հայոց անդիր հին գրոյցներ, որոնք աւանդուում էին հին ժամանակներում յունաց իմաստունների մէջ»: Խորենացու մէջ այսպիսի բան չկայ: Ուղմպիս գործը իւր պատմածը Զսիսութեանի Սեմի և ին մասին պարզապէս աւանդում է մի մատենանից, բայց նա այդ անուանում է «գրոյցս անդիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ»: որովհետեւ ինքը մատենք չէ տեսել, այլ ուրիշներն են իրեն պատմել թէ մատենանի և թէ անոր բովանդակութեան մասին: ¹ Արդարեւ, նա իբրև վկայութիւն յարում է. «Զոր և [նաև] բազումք ի գեղջկաց գրուցեն մինչև ցայժմ»: բայց ինչ հիմունք ունինք կարծելու թէ այդ «գեղջուկներն» անպատճառ հայ գիւղացիք պիտի հասկացուին, և ոչ թէ, օրինակ, ասորի: Մի թէ ան-

1. Ա. Գ. Վասնցից մեզ, ասէ [Ուղմպիս գործը], գրոյցս անգիրս յաւանդութենէ ի մեզ հասեալ, գոր է բազումք ի գեղջկաց գրուցեն մինչև ցայժմ: Մասեալ չէ ասչ գրասխուքրեայ և գորդոց նորս, որ այժմ ոչ ուրեք երեւի, յորում, [իմասեմին] ասեմ, կարգ չէ ասչ բանից այսպիսի: Յեռ նաւելոյ Բսիսութեայ ի Հայս...: Ուղմպիս գործի պատմածը շատ պարզ կերպով այս մտեանից է ծագում:

ասարոց կամ արիշնորի մէջ աւանդութիւնս
ներ շեն եղել Թոյի առաջանի Հայաստանի լիւս
ներս վրայ նստելու մասին: Եւսերիոսի Քրոս
նիկանի մէջ, «Աղէքսանդրի բաղնիքի վան
ժրհեղեղին, ի նմին զրոց՝ [Բերոսոսի] գործէ աւ
ստջաւնս վերնագրի տակ, զանուամբ ենք Քսիս
սուրբի սպասմութիւնը և վերջում. «Յն
դին՝ յորում վայրի ելեալ կային, հայոց աշս
խարհն է ... Եւ ի նաւէն՝ ուր (կամ որ) շո
քաւ դադարեաց ի հայս, և ցայտմ ստիպա
ինչ մասն ի կորդուացուոց լերինն, ի հայոց աշս
խարհին մնալ նշխար տսնն. և ոստոնց քերել
բերել ի Տեփածոյ նաւին նաւթոյ՝ ի բժշկու
թիւն և ի քննոց ցաւոց ինչ բժժանաց»: Թոյն
Եւսերիոսի Քրոսնիկանի մէջ «Արիղեւայ վան
ժրհեղեղին» վերնագրի տակ (եր. 48 հան.),
Քսիսու թրիսի պատմութեան մէջ կտրուամ
ենք. «Եւ նաւն երթեալ յաշխարհն հայոց դա
դարեր. և ի փայտից դեղ օգնականութեան
բնակչաց աշխարհին պարգևեր»: Միթէ այս
քանը միայն բաւական չէ հաւաստիացնելու,
որ յունաց գրքերի մէջ գրուած են եղել Քսի
սութիւնի Հայաստան ելնելու մասին, թէ
այդ աւանդութիւնները կամ զրոյցներն օտար

1) Եւսերի Կեսարացոյ Ժամանակահանդէս, մ. Ա.
եր. 31 հոմ.: Եղև սեղում եր. 86 Թան. 4, բերած է
Յովսէփոսի Բերոսոսի նոյն հատեալերը:

ծագումը ունին ¹ և թէ Ոլոմպիոդոտոսի յիշած գեղջուկներն անպատճառ հայ չպէտք է լինին:

Թէ նոյն իսկ Խորենացին Ոլոմպիոդոտոսի պատմածը, որ ծագում է մի մատենակցի, և նորա յիշած գեղջուկներն օտար է համարում, այդ պարզ երևում է նորա խօսքերից, որ վերջը յարում է. «Բայց առանել բաժնաւորսն հինքն արամազնեաց ի նուագաբանքուն և յերգսցոց եւ պարուց զսյսոսպիկ ասեն յիշատակօք»: Կընշանակէ Խորենացին տարբերում է «հինքն արամազնեաց» և Ոլոմպիոդոտոսի մատենան ու նորա «գեղջուկները», քանի որ երկուսի մէջ բաղդատու թիւն վերելով ասում է թէ «բայց աւելի յաճախ հինքն ² ա-

1) Ինչքան էլ Ոլոմպիոդոտոսի պատճած այդ գրոյցնէր ծագումն օտար է, բայց շատ կանխածնի է՝ որ Խորենացուն պատմողները (Գորգի, Բանան, Դաւիթ), կամ ինքը Խորենացին, իրենցից բան աւելացրած չլինին Ոլոմպիոդոտոսի պատմածի վրայ: Այդ յաւելումը անկ օտանում ենք Յրօհի անունի ստուգաբանութեան մէջ:

2) «Հինքն արամազնեաց» դարձուածի համար, որ օտարականներէ սեղիք է օտել, կարելի է համեմատութեամբ ընել նոյն դեպքերով գործածական արդի «հիւ մարդ» կամ «հիւ հաջ» ձեռք: «Հիւ մարդիկ շարունակ (հայտնի) բաներ շատ ցիտին, կրպակներ: Ողորմածիկ վերունեց Աղունք հիւ մարդ էր, ինչ շատ էր կասեռ...» (Տ. Նաւասարդեան, Հայ ժող. հեթանոսներ է. Գիտ. էր. 31): Հմե. արան բառի գործածութիւնն այստեղ եւս իրեն պատճառած է:

բամազնեաց պատմում են այդ բաները (զայսոսիկ) իրենց երգերի մէջ:

Խորենացին այս երգերի բովանդակութիւնը չէ բերում. բայց «զայսոսիկ» դերանունից պէտք է ենթադրենք, որ երգերի մէջ յիշում էին Ոլոմպիոդորոսի զրոյցների բովանդակութեան նման բաներ՝ Մոյի, Սեմի, Տարբանի մասին և թէ սոցա անուճները ժողովրդական ստուգարանութեամբ կապում էին Սիւսարի, Տարոնի ու Յրոնքի և այս կամ այն տեղի հետ: Բայց կարող էին Խորենացու դարում հայ ժողովրդական զրոյցների և նոյն իսկ երգերի մէջ յիշատակուած լինել Մոյ, Սեմ և Նն: Չգիտենք պատասխանն ինչ՞ու բացասական պիտի լինի:

Վերևում մենք տեսանք, որ Հայոց դրացի սեմական ազգերի աւանդութեամբ, ըստ Բերոսոսի և ըստ Արիդենայ, Բսիսութբէսի (Մոյի) նաւը Հայաստան է ցամաք ելնում և թէ «ցայժմ» մինչև գրողի ժամանակը մընում է, աւում են, նաւից նշխարներ և Նն: Այս աւանդութիւնը, եթէ նոյն իսկ հայերից լսուած չլինի և գրուած, կարող է հայոց դրացիներից հայերին ևս անցած լինել: Զրիստոնէութեան ժամանակ նոյնը կարող էր աւելի զօրեղանալ: Եւ այս աւանդութիւնն արդէն իրօք գտնում ենք հայոց մէջ Դ. դարում:

Փառաստոս Բուզանդը (Գ. դար. Փ. զԼ.) զըրու՛մ է թէ Մծբնացոց եպիսկոպոս Յակոբ գալիս է յի լերինս Հայոց, ի լեառնն Սարարազաց ի սահմանս այրարատեան տէրութեանն ի գաւառն Կորդուաց ... տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէնս: Եւ նա ձեռք է բերում տապանից մի կտոր: Այս զրոյցն այժմ պատմեաւում է Մասիսի վրայ: Իսկ Սրուանձտեանի ¹ մէջ Սիփան սարի համար գտնու՛մ ենք. «Բնակիչները մէկ բան կերպեն այս լեռան վրայ իբրև հին երգ, և կ'ըսեն, Նոյայ տապանն եկաւ ի Սիփան, ասաց.

«Սիփան, առ զիս, առ զիս:

Սիփանն ասաց.

«Դնա ի Մասիս, զնա ի Մասիս:

Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»:²

«Տապանն Կորդուաց լեռներէն գալով առ Սիփան Գրգուռայ գլխով անցեր, և քսուելով քով՝ գրգուռելով՝ այս լեռան սուրուի գլուխը տաչեր անցեր է ի զեր»։ Հին Մասիի շէանում մի մեղատու կայ այժմ, մեծ ուխտատեղի, Նոյայ

1) Գրոց Բրոց, եր. 56.

2) Նոյնը յսէ կե՛ս Հին Նախիչևանի Աստապոս գիւղում, միայն Սիփանի օեղ փոքր Մասիսն է շիշու՛մ Սիսանունով:

ապրիլի անունով որ համարուած է Սոյի քե-
րեցիանքս 1

Ահա Սոյի համար մի զրոյց ու երգէ որ
խորին հետ թիւնից է գալիս և այս կամ այն ձեւ
առի պահուած է այս կամ այն տեղի: հետ կա-
պուած: Բ՛վ կարող է ասել թէ այս ինչ երգն
ու զրոյցը: որ Դո գարից ցայժմ կոչ հարց: մէջ
է եղի և Թորենացու ժամանակ Աստուածա-
շնչի պատմութիւնները շատ վաղ ժամանա-
կում կարող էր հայ ժողովարդն ասել և իւր
րոյցներ կասելով իւր եղիլի այս կամ այն
տեղի հետ և նոյն իսկ բանաստեղծութեան
երգի նիւթ շինել: Այս մի տեսակը երկայն
է քրիստոնեայ ազգերի հին պատմութեան
մէջ: Սոյը տեսնում ենք է մի տրդի ժողո-
վրդական երգերի մէջ 2 Բայց հարկաւ այս
կամ այն տեղի հետ կապուած այդ զրոյցնե-
րը ու երգերը ոչինչ չեն ասացաքստում
բայց ելին Սուրբ Գրքի և յասկայէն հին կը-
տակարանի սգոցեցութիւնը հարց վրայք Օրին
մի մատենագիրները և հին գրականութիւնը
թերթելու շինինքս գուցէ շատ այդպիսի օրին

1) Լսելով այս մատուի սկզբի օսկ մի սկա-
զի արձանագրութեամբ քառ պիտ շինի որ այժմ ծած-
կուած է ծեփով:

2) Այդպիսի երգեր կարելի է տեսնել Գարեգին: սա-
Յովսէփեանի շքրակնեցի մէջ, եր. 21.

նամենք կարանէնք ինչպէս զերեսով դրամ
 նոյն տարանի գրգռէ է: ¹ Բայց այդ կրթութեան
 ներքեւ երբեք ունի կանգ առնելը մի պար-
 տիով ճիշտ գրգռի վրայ որ և Թորենացոս
 առաւել յերի ճեպ է կապուած: Այստեղ մի
 երկու խոսք այդ ճիշտ երգերի տեսակի մասին:

Թորենացոս խոսքերից կարելի չէ կարմարաց-
 նելս թէ նորա ժամանակ նոյն: Անոյն էլն մասին
 ընդարձակ ժողովրդական վիպական երգեր են
 եղիչ հայոց մէջ: Պարուց երգերիս համար հա-
 լաստեալ կարելի է ասել որ կարն քնարական
 երգեր են եղել նման մեր արդի երկատողե-
 րին և քառատողերին, որոնք և բոլոր ազգե-
 րի ժողովրդական պարերգերի ամենահին տե-
 սակն են: Իսկ «ցոց երգեր» Թորենացոս
 սարքածք կը համարէին: Եթէ է չլինէր Ազգայնա-
 ղեցուսի մէջ (եր. 112) պուշք բառը որ սոյ

1) Վարդան աշխարհագիրը Բրիտոսիս երկրագոյ
 մոզէրից մէկ գերեզմանը դնում է Մոկաց գաւա-
 ռում: Մոկաց գաւաթի է իշխանակազ: զոր կան
 քաղում վանորայ. նախ Աննկափրկիյն գերեզման քա-
 զաւորի Մոզոց Գասպարայ (Արշաղեացոյց Վար-
 դանայ, 4. Գոլիս. 4. Կասանեան, եւ ժողովափու. Ան-
 պոսի. եր. 26): Եղև աւանդութիւնը պատմում է այժմ:
 (Փշրանքներ, Գ. Ս. Յովսէփեանի, եր. 84): Հմն. Սրուպե-
 ղրեան Գոց Բոցայ եր. 74 հոմ. Ս. Գրի աւանդութիւ-
 թի այս կոսմ պի ռեքի հեց կայտուած: «Վանկի ծրուկոյ,
 «Ղանկայ քեր» երն:

վորաբար բերում են այդ բառի նշանակութեան համար. «Թրգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ մարդկանն, կէսքն ի բերդամիջին, և կէսքն զբողաքամէջն լցին խնձոյիւք առ հասարակ, համարէին հարսանեացն զպարսն պարել և զկաքաւսն յորդորել: Վրան կաւելացնենք և երկու օրինակ. Վաքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն դիւաց զարշելեաց խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի»: ¹ «Հարսանիք էին, և ցոյցք և ղամբարք առադաստաց»: ² Այսպիսի գործածութեան մէջ ցուցք կամ ցոյցք բառն ստանում է պարի մի տեսակի, կամ հարսանեաց պարի իմաստ, որով և երգք ցցոց պարերգերի մի տեսակն է միայն, հաւաստեալ նոյնպէս քնարական կարճ աներ: Այդպիսի երգերի մէջ ևս կարող էին Ս. Գրքի այս կամ այն աւանդութեան և Հայոց այս կամ այն տեղական անուան մասին յիշատակութիւններ եղած լինել, ինչպէս նոյնը գտնում ենք մեր արդի պարերգերի մէջ: ³

1) Ս. Գրքար Նարեկացու Մատենագրութիւնի, Ոգրութեան, քան 21. եր. 49:

2) Առակի Աղոսպիսեան, 4-րդ առակ, եր. 172. (Տպագրուած Վենետիկ, 1854, Միկրար Գոյի առակների հետ):

3) Մրուանման, Համով Հոսով, եր. 291, 305, 320, 338. Նաւասարդեան, Հայ ժողովոյ, Հեփարներ 2-գիրք, եր. 90 հօ:

Սանասարի առասպելը: Այս հին առասպելն ևս հաւանօրէն Ս. Գրքի ազդեցութեան տակ է կազմուած. Հայոց մէջ:

Թոմա Արծրունին (եր. 121) Սասունցոց կամ Խուլթայ լեռնականների համար գրուած է. «Եւ գիտեն զսաղմոսսն զին թարգմանեալսն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին: Սոքա են գուեսք Ասորոց, որ չուեցին զին Սորամելեայ և Սանասարայ որդւոյ Սենեքերիմ արքայի թագաւորի Ասորեստանի և Նինուէի, յորոց անուն ինքեանք Սանասնայք զինքեանս անուանեն»: Արծրունու այս վկայութիւնից իմանում ենք, որ Խուլթայ լեռնցիք հնուց լաւ ծանօթ են եղել Ս. Գրքին, քանի որ սաղմոսները հին թարգմանութեամբ հանապազ ի բերան ունին: Այնպիսի կիսավայրենի ժողովուրդն, ինչպէս են Սասունցիք ըստ Արծրունու, սաղմոսներից աւելի շուտ կարող էին իւրացնել Աստուածաշնչի վիպական պարզ պատմուածքները և ժողովրդական ստուգաբանութեամբ որևէ կապ դնել իրենց Սիմ սարի և Սեմ անուան, իրենց Սանասունքի և Ս. Գրքի Սարասարի միջև: Եւ Արծրունու վկայութիւնից արդէն գիտենք, որ Խուլթեցիք ասորական ծագումից են համարել իրենց և յատկապէս Սանասարից: Թէ այդ կողմերի բնակիչներն սկզբնապէս

պարսի են եղել և յետոյ Տարսուսէն պէտք յայտնի է: Աստուածաշնչեց յայտնի է և այլն որ Սենեքերիմ Թաբալայի որդեզ՝ Ազրայէլեք և Սարասար իրենց Տարս սպանելուց յետոյ փախչում են յերկիրն Արարատայ (Թորոս Թագ ԺԹ. 37): Բայց թէ որքեզ պատմական յիշատեցութիւն է Ասնատուրի բնակիչներէ և այն նստաբնից: որ է Սարասարից ձագիկ: Թէ յետոյ Ա. Տրքի ազգից: Թեպէք սակզճուած մի բան: որ առկի Տաւանական է: պէտք գճուար է առկ: Աստուանց գեղա: Թորոսայի ժամանակ պէտք աւանգութիւնը եղել է ժողովրդի մէջ: Իսկ աւանգութիւնը եղել է և Արարատայ ժամանակ: քանի որ սա ևս (Ա. իգ.) Ազրայէլի և Ասնատայի ըստ Աստուածաշնչի: ճարտար փախչիք պատմելուց յետոյ յարուճ է: Ետոց զմին յարեմաից Տարսայ աշխարհիս միտայ: մերձ ի սասճանս նորին Արարատայ: բնակիչուցանէ Ահարաբին մեր քաջ նախնին: ոչոնքն զԱսնատայն: և ի սակնէ մերայ լինն զՄիսն ասպտակ մասն: և

Պ Իարատայից (Ա. եր. 169): որ առկի յիշատակն ի Թորոսայու Տաւանայ թիւները բռնելու համար: Արարատայից ձագիկ: Ասնատայից ձագիկ: համարելով: Աստուանց: հայրենական: թեպէք և յարատայ: Աստուանց ձագիկ: Ասնատայից: բայց որքեզ

Տրեւելոցի նա առում էր իբրև թէ Թորքեանոցի նախնային Արժ շեան կողմերն է ընտ-
փեցնում «Արժ և Ասեւապար ճայքի նստումը»
Բեան նայեալ, և թէ մինչ Թորքեանոցին սրտ
Արժ անունն թ Սանապարայ կրտսերի հարեւ
սրտը (Աւ զո) թ Սեւայ կրտսերի կողմեայ
սցնորաւ ճայք սրտ հարտաւ թիւնը կրտսեր-
այքնն է Թորքեանոցին ընտ շէ ասում թէ
Արժ շեան անունը Ասեւապարից է ասում է
ինչ որ միայն Սեւայցի Արժ և կողմից անունը
Ասեւապարի ժողովարդն թնք իւր կրտսեր Ասե-
ւապարն (և ոչ Արժ ասրի կողմից) հարեւ է
Ասեւապարից հը մի հինջ շարինը ասեւա-
թէ Թորքեանոցին է սարեւ այս ասեւապար
և նա սինքան սգեցեալիւնն է անեցեա
որ ոչ միայն Արժունից իւրացեւ են նոր
րա սարեւը այլ և Ասեւա կրտսերիկն
քեանակունիցը մանի գեա սր շէ սպացո-
ցաւն: սրտի ընդունել անհրաժեշտաւն սր
Թորքեանոցին իտապէս Ասեւ Արաս դրից ասե-
ւաւնն Թորքեանոցին (Ա. ից) ժողովարդից է աս-
եւ այս ասեւապարի նր թէ Արժունից և
Արժ շեան ընտկիւնիցը որ են Սանապար:
Ասեւապարից են ճարուն — մի ասեւապարի նր
որ շարդ ճա կենդանի մնում է մի «Ասեւա-
ճարի» մը: Մի ժողովարդան մեծ վէպն
գրաւն է կրտսեր կրտսերի Սանապարի և

Արամիլիքի կամ Բաղդասարի փախչելով Հայաստան, ուր և շինում են Սասնու բերդը։ Այսպիսով մեր արդի վէպի առաջին ձիւղի աւանդութեան հնութիւնը մինչև Խորենացին և Մար Աբաս է հասնում։

Թէ Արծրունեաց նախահօր, Սանասարի կամ իւր եղբոր, մասին Խորենացու ժամանակ առասպելեղել է, այդ շատ պարզ ասում է նա Բ. գրքի Է. գլխի մէջ, Այստեղ մի առ մի պատմում է զանազան ցեղերի և նոցա անունների ծագումը և իբրև նախարարական տներ հասաատուելը Վաղարշակից։ Արծրունի բառն «արծիւ ունի» ձևով բացատրելուց յետոյ, կցում է. «Թողում զառասպելեացն բաջաղանս, որ ի Հաղամակերտին պատմին. մանկան ճիրհելոյ անձրև և արև հակառակեալ և հոգանի թռչնոյ պատանւոյն թալկացելոյ»։ Այս թռչունն ըստ ինքեան արծիւ է հասկացւում։ Պատմագրի խօսքերից պարզ իմացւում է, որ Արծրունի բառն ըստ առասպելին հանել են այն արծուից, որ հոգանի է արել նոյն ցեղի նախահօրը, ըստ Խորենացու, Սանասարին։ Բայց այս աւանդութիւնը նա արհամարհում է, «Թողում զառասպելեացն բաջաղանս» որովհետև իրեն աւելի հաւանական է թւում «արծիւ, ունի որք արծուիս առաջի նորա կրէին» բացաւորութիւնը։ Դժբախտարար Խորենացին իւր

արհամարհանքի պատճառով առասպելից շատ քիչ բան և շատ սեղմ ոճով է բերուում: միևնոգից մեր արդի վէպի շատ վարիանտներ ևս չունինք: որ կարողանայինք համեմատել թէ արդեօք այս աւանդութիւնը մնացել է ցարդ թէ չէ: Պատմուածքի մտաւեր, արծուի հովանի անելը, շատ տարածուած ժողովրդական է: Մեր մի նշանաւոր հեքաթի մէջ ևս արծուը հերոսի վրայ թեւերը փռում ա, շուաք անոււմ, որ դինջ քնի»: 1 Եթէ այս հեքաթը յիշոււմ ենք, անոր համար է միայն, որ բովանդակութեամբ շատ նման է մեր ժողովրդական վէպի մի պատմուածքին, Սանասարի կամ իւր եղբոր Բաղդասարի վէպի Պղնձէ քաղաքի ճիւղին:

«Գուսանականն» — Խորենացին երեք անգամ յիշոււմ է (Ա. ժգ. ժգ.), որ Արամի պատմութիւնն առնոււմ է Մար Արասից՝ բայց վերջըն աւելացնոււմ է. «Թէ ընդէր այսօքիկ ի բուն մատեանս թագաւորացն կամ մեհենիցն ոչ յիշատակեցան, մի ոք ընդ այս երկրայացեալ տարակուսեցի: ... Բայց թէպէտև ոչ ի բուն մատեանն, սակայն, որպէս

1) Տ. Նատասարդեան, Հայ ժող. հեթ. Բ. 17. ուր առասպելական Ձմրուիս հալսն և դուրս գալիս, իսկ Յոյն հեթարի վարիանտի մէջ, Սրուանձօտեան Մանանայ, եր. 181. արծու և:

Մար Աբրահամ Կաստիլոսայ պատմէ՛ ի գիտցունց
մեծանց եւ յաննչանից արտունց ի գուտանուկեա-
նէն այս գաւառնի ժողովեալ Թ դիւաննի արքեպ-
սկոսաց, ինչպէ՛ս մի մուլթ կտոր որ պատճառաւ է ե-
ղեչ մեծ յարձակեան խորեհնացու վրաց լայց
զժբախտութբայ սխալ հասկանալով յնապի՛րը։
Մենք կը գիտընենք դոնէ սխալն ուղղել։

Պ. Գարապաշեանը (Վրն. պատ. Ա. եր. 153)։
նորան հետեւերով և պ. Խալաթեանը՝
վերելի հատուածի վերջին մասն այսպէս և
հասկանուած «Փոքր և աննչան արտունց ոմանց
մեքոք երգեր է ժողովուած և պահուած էին
յարքուծի դիւանին Յիմուէի»։ Սակայն այդ
սխալ է։ Փոքր և աննչան մարպիկը ոչ թէ ժո-
ղովողներն են, որոնք կարող են և շատ նշանա-
ւոր եղած լինել, այլ փոքր և աննչան մարպիկան-
ցից, նոցա բերանից, որ է գուտանականից են ժո-
ղովուած այդ պատմութիւնները։ Հմմտ. Ա. ժ. թ.
«ի բանից արտունց իմաստնոց... յորոց մեք ...
Չանացաք հաւաքել զհնարութիւնս»։

Այսպէս սխալ հասկանալուց յետոյ պ-
Գարապաշեանը զարմանալի է գտնուած թէ ինչ-
պէս «փոքր և աննչան մարպոց ձեռամբ հա-
նուած հաւաքածոյ մը մուծաւ ի դիւան ար-
քունի» և որ զլիսաւորն է, եթէ Ասորեստան-

1) Халат; Арм. Опись. ер. 134: նոյն մեռք-
եւ հ. Ստեփանի քարգանուրեան մէջ։

ցիք, ըստ խորհրդացու, պէտք չունէին «զանգ»
գոց օտարաց և վաշխարհաց ի բացեայ և ըն-
հասիրաւն զինս և զգրոյցս նախնականս յիւ-
րեանց թագաւորաց կամ մեհնից մատենանս
գրեչ, էլ ինչպէս, առում է նա, ընոյն գրոյց-
ներն ի ձեռաց փոքր և աննշան մարդոց առ-
նելով գրին յարքունի դիւանին իւրեանց. ոչ
ապաքէն հակասութիւն է: Սա ևս շնոր հասկե-
նար, թէ թագաւորաց մատենաններուն և սր-
բունի դիւանին մէջ ինչ տարբերութիւն կայ:
Ետև քան հակասութիւն որոնելը, կարծում
ենք, պէտք էր ջանալ հասկանալ:

Հակասութիւն անել տմեն մարդ կարող է և
մեծը չենք ասում թէ մեր ծերունի պատմահայ-
րը հակասութիւններ չէ անում. բայց այնպիսի
ձևով հակասութիւն որ այստեղ վերագրում են
խորհրդացուն: կարծում ենք ոչ մի մարդ չի անի:
Ինչպէս, միթէ կարող է, որ և է մարդ գրեչ
թէ հայոց այսինչ պատմութիւնը չկայ այսինչ
օտարազգի աղբիւրի մէջ, ոչ ժամանակակիցնե-
րից գրուած և ոչ յետագայում զրոյցներից
գրի առնուած, և մինչև իսկ պատմաաբա-
նել թէ ինչու չկայ, և ապա անմիջապէս
կցել թէ նոյն պատմութիւնը նոյն աղբիւրի
մէջ կայ գուսականից, այսինքն գուսանե-
րի բերանից ժողովուած: Եւ այսքանը բաւական
չէ, անմիջապէս աւելացնել մի երրորդ պատմա-

աւարանութիւն էլ թէ ինչու նոյն պատմութիւնը չկայ նոյն աղբիւրի մէջ: Այսպիսի հակասութիւն ոչ մի մարդ չի անիլ: Շատ հասկանալի է ուրեմն՝ որ «բուն մատեանք թագաւորացն կամ մեհենիցն» և «գիւան արքունեաց» բառերի տակ նոյն իմաստը կարելի չէ հասկանալ:

Թէ բուն մատեանք թագաւորացն և մեհենիցն» ասելով մեր պատմագիրն այստեղ հասկանում է Ծինուէի մատեանները՝ շատ պարզ երևում է նոքա գրութեան եղանակից: Այդ մատեաններից մէկն է եղել և այն մատեանը՝ «որ ունէր զբուն հնոց և զնախնեացն ըմնս» (պատմութիւնները), որից և Մար Արաս քաղում է (հանեալ) հայոց պատմութիւնը: Ծինուէի այս մատեանները կոչում է երեք անգամ «գիւան արքունի» (Ա. Ը. Թ.):¹ Այս արքունի գիւանում ուրեմն, այս բուն ? մատեաններում չկար յիշած պատմութիւնը և չէր էլ կարող լինել, ասում է Խորենացին, բայց, աւելացնում է նա, գուսանականից զբրուած կայ ՚ի գիւանի արքունեաց:

Ո՞րն է ուրեմն «արքունեաց գիւանը»:

1) Հմեռ. Ա. իա. «ի հնոց դիւանացն քաղդեացոց, ասորեստանեաց և պարսից... ի քարտէս արժուի»:

2) «Բուն» ածականը, որքան հասկանում ենք, ցոյց է տալիս մատեանների պատմութեան հարազատութիւնը իրեւ ժամանակակիցներից գրուած:

Եթէ Նինուէի «արքունի գիւանը» չէ: Կարո՞
ծում ենք Մծբինի արքունեաց գիւանը: Այժմ
գիւանը յիշում է Խորենացին ուրիշ տեղեր:
«Որ ինչ ի քարտէս գիւանին Եղեոսիայ՝ որ է
Ուռհայ, որ յաղագս թագաւորացն մերոց
պատմէր, որ մատենանքն ի Մծբնայ էին փո-
խեալ անդր» (Բ. Ժ.): Իսկ այս փոխադրու-
թիւնն Արգարի ձեռով է լինում. «Փոխէ ի նա
(Յղեոսիա) զարքունիս իւր՝ որ ի Մծբին . . .
և զմատենանս մեհենիցն վարժարանին, և մի-
անգամայն զղիւանս թագաւորացն» (Բ. իէ.):
Մծբինի գիւանի սկիզբը դրուած է ըստ Խո-
րենացու, Վաղարշակի ձեռով, երբ Մար Ա-
բաս Նինուէի գիւանի մի մատենանից քաղում
բերում է հայոց պատմութիւնը, նա «առա-
ջին իւրոյ գանձուն համարելով դնէր յարքու-
նիսն» (Ա. Թ.): Կընշանակէ հայոց արքունի-
քում, որ Մծբինում է, պահուում էին, ըստ
Խորենացու, հայոց պատմութեան վերաբե-
րեալ մատենաներ: Կեղծիք է թէ իրողութիւն,
այդ մասին չէ խնդիրը: Եոյն արքունեաց կամ
թագաւորաց գիւանում կարող էին գուտաններ
րի բերանից գրուած պատմութիւններ էլ պա-
հուել: Եթէ ասորեստանցոց համար «պար-
ծանք ու բարգաւաճանք» չէին օտար հայ ազ-
գի «հին համրաւներն» ու «նախնական զրոյց-
ները», հին հայոց քաջութեան գործերը գրի

աւենել և զնեյ իրենց թաքաւորաց մանտեանս
տերի մէջ, անշուշտ իրենց հայոց համար պարս
Ծանք պիտի լինէր այլ: շէ՞ որ Վաղարշապէր հա
յոց պատմութիւնն ունենալ է ուզում անոր
համար, որ իմանայ «զքաջաց արդեւք եթէ
զվասաց անցեալ ունիցի զանդի»: Այսպիսակ
զերանում է այդ «հակասութիւնը»:

Բայց մտում է Խորենացուն մի «զօրմա
նալի խոստովանութիւնը»: որի վրայ աւելի
մեծ ուշադրութիւն պիտի դարձնել քան եղած
է: Դա Մար Արասի աղբիւրնեւթ խնդիրն է:

Խորենացու խօսքերից մենք իմանում
ենք, որ Մար Արասի գիրքը երեք աղբիւրից է
կազմուած եղել. Նինուէի արքունի դիւանի
մի մատենն, որից Մար Արաս քաղում է մի
այն մեր ազգի հաւատարի պատմութիւնը. իւր
ժամանակի անցքերն էլ նա աւելացնում է
այն պատմութեան վրայ, այսինքն Վաղար
շապի և Արշակի պատմութիւնները: Ապա
Մար Արաս օգտուել է և «Կրօնանախա
նից»: Մեզ համար հետաքրքիրն է այս վեր
ջինը: Նախ թէ նա ո՞ր շագնդ է օգտուել գու
ստնականից:

1) Խորենացի Արշակի պատմութեան վերջում գր
ում է. «Աստուօր սպարիմ բակի ծերունոյն Մար Արաս
Կառնայ, (Բ. Բ.)», որով ուզում է հասկացնել, որ այդ
պատմութիւնների համար օգտուել է նաև Խորակից:

Մտրեմնացիին Արամի պատմութեան վերջում
ասում է թէ «այտարիկ» շին յիշատակուել ասա-
րեւտանցոց մնատեաններում և ասարթէ և այս
ինչպէս Մար Արասը պատմում է Գուսանակա-
նից ժողովուած կայ (Մըծրիի) արքունեանց
դիւանում և Ռութին Մար Արասը պարտաբար
ասած է եղել թէ քուսանականից է ծագում
այր պատմութիւնը իւր մնատեանի մէջ Քայց
ի՞նչ պիտի հասկանալ այտարիկ և այս Գերա-
նուների ստի. միայն Արամի պատմութիւնը
ինչպէս բնականօրէն պիտի հասկոցուէր Թէ Եթ
Հայկոց մինչև ցԱրամ պատմեալքն, ինչպէս
հատկանում է պարագայեանը Սա պատմա-
աբանած չէ ինչու է այդպէս հասկանում քայց
մենք ուղիղ ենք համարում այդպէս հասկանալը
Ծիշտ նոյն տեղում Մար Արասից բերում է
Մտրեմնացիին մի պատմաբանութիւն թէ ինչու
այր պատմութիւնները չկան բուն մատեաննե-
րում և որովհետեւ Միտար հրատայել է (1) այրել
այրադում մատեանս և զգրոյցս առաջնոցն և (2)
իտի որ առ իւրովք ժամանակք դադարեցուցա-
նելու որ ինչ փասն իւր միայնոյ գրել և թէ Մար
Արասի այս պատմաբանութիւնը միայն Ա-
րամի գործերի համար լինէր այն ժամանակ
պէտք չէ յիշուած լինելը պատմաբանու-
թեան առաջին մասը, բաւական կը լինէր մի-
այն երկրորդը Թէ այտարիկ դերանումն

տակ լոկ Արամի պատմութիւնը միայն չէ հասկացուում, այդ երևում է աւելի Խորենացու իրեն պատճառաբանութիւնից թէ «Մի» յառաջ քան զՅինոսի ժամանակս թագաւորութեանն է, յորում ոչ զք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր»: Արդ Արամը Յինոսի ժամանակակից է, «սակաւուք ամօք» նորանից առաջ սկսում է կատարել իւր քաջութիւնները և «սակաւ ամօք» նորանից առաջ մեռնում (Ա. ԺԿ. ԺԵ.): Ուրեմն այս առաջին պատճառաբանութիւնն իսկապէս Արամի ժամանակին չէ վերաբերում, այլ նորանից առաջ: Այսպէս Մար Աբասի և աւելի Խորենացու պատճառաբանութիւններից երևում է, որ «այսօրիկ» դերանուան տակ պէտք է հասկանալ Հայկից մինչև Արամ պատմուածքները: Կընշանակէ Մար Աբաս իւր գրքի մէջ յիշած է եղել, որ Յինոսից առաջ և Յինոսի ժամանակ եղած հայոց պատմութիւնը քաղուած է գուսանականից: Խորենացին այդ ասում է առանց կամենալու, որովհետև առանց մտածելու արտագրում է իւր աղբիւրը և նորա պատճառաբանութիւնը: Ես մոռանում է, որ այսպիսով մեծ հակասութեան մէջ է ընկնում, և վերջը կարծես զգում էլ է, որ այդ չպէտք է անէր և աւելացնում է. «Այլ զայս աւելորդ եղև մեզ երկրորդել»:

Այստեղից առաջ է գալիս այն խնդիրը թէ Վաղարշակի նամակը և Եփեսոսէի այն հռչակաւոր մատեանը որ կեղծիք են, իրեն Քորենացու կեղծածն են թէ իւր աղբիւրի՝ Մար Աբասի որից և Մորենացու մէջ են մըտել: Բայց այդ մենք կըթողնենք, որովհետև հարկ կըլինէր շատ հեռուն երթալ և ձեռք առնել մի բազմակնճիւ խնդիր՝ Մար Աբասի և Անանունի խնդիրը: Մեզ համար բաւական է որ այստեղ Մորենացու կողմնակի, եթէ կարելի է այսպէս ասել, գրչից փախցրած խօսքից իմանում ենք, որ Մար Աբաս իւր գրքի մէջ յայտնած է եղել, որ այդ հին պատմութիւնները գուսանականից են ժողովուած: Հայկի առասպելի մէջ մենք տեսնք, որ մեր պատմագիրը միայն գրաւոր աղբիւրից՝ Մար Աբասից է առնում այն, առանց իւր կողմից ակնարկութիւն անգամ անելու թէ ժողովրդական ծագում ունի: Միւս կողմից մենք այնտեղ մեր հետազօտութեամբ այն եզրակացութեան եկանք, որ առասպելը ամենայն հաւանականութեամբ ժողովրդական հիմունք

1) «Գուսանական» բառի գործածութիւնն էլ բերելուցոյց է քաջաւոր Խորենացիև ուրիշից է առնում այդ, որովհետև հայոց ժողովրդական գրոյցներն ու երգերը նա ոչ մի տեղ գուսանական չէ անուանում, այլ առասպել ու վիպասանք:

արևի Մար Արաւ օգտուած է ժողովրդական
զրոյցից: Այժմ այս կողմնակի մուտք անկար
վաթիւնը: Գրի վրայ սկզբում աշարքաւթիւն
չէր գարձրել: Գայիս է հաւարտրացիկու այդ
եզրախաչու թիւնը:

Արդեօք Արաւի պատմութիւնն է ա օճոք
ժողովրդական հարաւմ'ս թե՛ ամբողջարեւ
չինձու է և գուսաննեքի վերադրուած Պե Մաւ
լաթեանի հետեւութիւննեքը գեռ հասնողից
չեն: Թե՛ Մարեանացու և իւր արքիւրի՝ Մար
Արաւի աւելջրած բաներ կան այդ պատմու
թիւնն մէջ՝ վերթել կարելի չէ հայց ի է պատու
եւութիւնն ամբողջարեւ չինձու է սպա արեւ
չենը կարտր: Մակոյն մենք այդ մեթ թնջրի
մասին կանգ առնել չենք ազու՛մ: Գրովհետե
պատմի՛նն գուսաննարեւութեան կարտր է սպա
է թնջրէ և կարձուած ենք: Կայ օճի Մար Արաւի
և Անանու՛նի խնդրի հետ ժողովրդական ձրո
քում ու՛նի Արաւի պատմութիւնը թե՛ սո՛ւ
բողջարեւ չինձու է Արաւ Արաւի մեթ սպա
չէ խանգարու՛մ: մի և հայ ժողովրդական օր
գասարեւելիքն Մարեանացու հայաց պատմու
թեան մէջ: Ուստի անցնենք մեր ընդհանուր
եզրախաչութեան հայց նախ քան այս մի եր
կու խօսք և սողաչափութեան մասին:

Նրբերի չափը: Կարձոք ենք արդեօք այս
մասին այժմ հաստատ մի բան ասել: Ինչպէ՞

անուճին ուրիշները, մեքն աշխատելով թոյց
տալ թէ ինչ պարզ կամ խորասանկ չափով են
կրօել մեր հին վիպասանները: միւսն աշխու
տելով թոյց տալ: որ այդ չափը գոյութիւն
չունի: Կարծու՛մ ենք: ճշ: Մենք պէս մտախն
էլ պատեղ կանգ ցունել չկնք ուզու՛մ: Միայն
այրքանը պետք է պահել, որ ապարդիւն
պշտատանք է մի քանի տողից մի հին չափի
մտախն կղրակացութիւն հանել, առանց
առաջուց հաստաք ապացուցանելու թէ
կոր Սարկնացին մի կրօն բազմապիտութիւն է
բերում: Թէկուզ նշքն քսկ կրօն բազմապի
կոր՝ ընաքի ձեռք բառացի է բերում և
կոր փոփոխութիւն է մացնում մեջը: Բացի
այդ՝ առկնք Սորենացին անփոփոխ բերում
է մի քանի հաստուածներ, միթէ կարելի է
այդ հաստուածների չափի մտախն խոսել առ
առանց ձեռագիրների հպմեմտութեամբ ընա
գիրը վերականգնելու: Թէ Վահագնի մասին
հաստուածը ժողովրդական էրգէ և մի որոշ
չափով է գրուած և կըն իսկ ժողովրդի սի
րած կրկնութիւններով և հանգիտութիւն
ներով սերկնէր երկին և երկու, երկնէս և
ձիւանի ծով: «զկարմրելի եղեղնակ», «հուր հեք»,
«շեկունք արեգակունք»: այդ չափ պարզ է
բերում է ամեն կարգացողի որ ներդաշնա
կու իւնից բան է հասկանում: Բայց միթէ

կարելի է տեսլ, օրինակ, թէ այդ երգի առաջին չորս տողը միայն ժողովրդական պիտի համարել, որովհետեւ անոնց մէջ կայ «կանոնաւոր ութմոս և 7-վանկանի շափ», իսկ միւս տողերը ոչ, որովհետեւ խառն են 6, 7, 8, 10, 12 վանկերից: Եւ ո՞վ ասաց, որ մեր հին վիպասանները կանոնաւոր հաւասարութիւ վանկերով տողեր են կազմել և ոչ թէ խառն, երկար ու կարճ տողեր, նայելով իմաստին, ինչպէս նոյնն անում են այժմ մեր արդի վիպասանները կամ «սացողները, ինչպէս իրենք իրենց կոչում են Վասնու ծռեր» պատմողներն ու երգողները: Եւ վերջապէս ո՞վ ասաց, որ Վահագնի երգի առաջին տողերն, օրինակ, 7-վանկանի պիտի կարդանք, ինչպէս դնում է պ. Խալաթեանը և ոչ թէ 8-վանկանի, քանի որ շատ ձեռագիրների մէջ այսպէս է.

Նրկնէր երկին, երկնէր երկիր,

Նրկնէր և ծովն ծիրանի:

Շատ պարզ է ուրեմն, որ շափի մասին խօսելուց, այս կամ այն եզրակացութեան զարուց առաջ գոնէ պէտք է նախ բնագիրը վերականգնել: Առանց այդ բնագիրը ձեռի տակ ունենալու ամեն մի ենթադրութիւն և սրամտութիւն.

1) ХАЛАТ. Арм. ЭПОСЪ. кр. 207:

ընդունայն վաստակ կրմնայ: Եւ երբ մենք Մարենացու բնագիրը կունենանք ձեռի տակ, այնուհետև միայն կարելի է ուսումնասիրել չափը՝ ի նկատի ունենալով մեր շարականների ու հին տաղերի և մեր արգի ժողովրդական երգերի չափը: Աւելորդ չի վնիլ նկատել, որ ինչպէս ուրիշ տեղ տարիներ առաջ յայտնել ենք, մեծ ազգակցութիւն ենք տեսնում մեր արգի ժողովրդական երգերի և Սասնու ծառերի չափի և մեր հին վիպասանաց երգերի չափի մէջ, որքան կարելի է գաղափար կազմել Մարենացու տպագիր օրինակից: Դա ազատ ռիթմական չափ է, որ և մեր հին շարականներին յատուկ է, և որ միայն հայոց բանաստեղծութեան սեպհական չափը չէ:



ԵԶՐԱԿԱՑՈՑԹԻՆՆ

Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ յիշուած առասպելները ոչ թէ կեղծիք են և շինծու, այլ իրօք եղել են Հայոց մէջ: Խորենացին կամ ինքն անձամբ, կամ իւր աղբիւրների միջոցով օգտուել է հայ ժողովրդական առասպելներից:

Հայոց մէջ չեն եղել «անընդհատ և շարունակաբար վիպասանութիւնք երևելի գործոց», միութիւն և «ամբողջութիւն» կազմող մի մեծ «երգ», որ «պարունակէ յիւքեան զշրջան ժամանակի իբրև եօթն հարիւր ամաց», կամ «մի ընդարձակ բանաստեղծութիւն, յորում ի հնոցն մերոց աւանդեալ լինէր պատմութիւն թագաւորացն մերոց» նման Նահապանայի: Խորենացին օգտուում է առասպելների համար զանազան գրաւոր և բերանացի աղբիւրներից, որոնք յաճախ իրար հետ առնչութիւն չունին: Նա ինքն առասպելները շատ անգամ մեկնելով, և այս ու այն աղբիւրներից առած պատմութիւնները յարմարեցնում է և որոշ ժամանակագրութեամբ և ազգաբանութեամբ մի պատմութիւն շինում: Եւ եթէ մի ամբողջութիւն կազմող վիպասանու-

Թիւն կայ հայոց մէջ, այն ձևով ինչպէս, Էմինն է դնում, այդ Խորենացու գրած պատմութիւնն է, ինչ որ մեր պատմութեան հին առասպելական մասին է վերաբերում:

Խորենացու մէջ եղած հայ ժողովրդական առասպելները «ազգային երգեր» չեն միշտ, այլ յաճախ սուկ պատմութիւններ և գրոյցներ: Աւելի ևս պակաս «պատմական երգեր» են այդ աւանդութիւնները, որոնք իբր թէ «հայոց բոլոր պատմութիւնը կաւանդէին ամենահին ժամանակներէն մինչև մեր թուականութեան առաջին կամ երկրորդ դարը» ինչպէս կարծում է պ. Ֆետտերը:

Հայկի ու Բէլի, Արա. գեղեցկի և Շամիրամի, Անգեղճուրքի, Վահագնի պատմութիւնները ղիցաքանական կամ ղիցազնական առասպելներ են՝ շատ չնչին պատմական գոյն ստացած: Նոյն բնաւորութիւնն ունեցել են սկզբնապէս և Տիգրանի ու Աժդահակի, Արտաւազգի և Արգաւանի կռիւները և վիշապ Արտաւազգի շղթայուելը Մասիսի մէջ: Այս վերջին երեք պատմութիւնները՝ իբրև վիշապազանց առասպելներ ամպրոպային կռուի միևնոյն առասպելի տարբեր պատմութիւններ են, բայց կրած են պատմական ազդեցութիւն և իրենց մէջ ընդունած և միացրած են պատմական յիշողութիւններ ևս:

Պատմական յիշողութիւններն սկսում

են Արտաշատի հիմնարկութիւնից (180 թ. Բ. ա.) : հայոց բնիկ հարազատ և առաջին թագաւորութեան հիմնադիր Արտաշէսից (Ա.) : Այնուհետև ժողովուրդը երգել և պատմել է նորա մերձաւոր յաջորդ ու զաւակ Մեծն Տիգրանին (ծնուած շուրջ 140 թ. Բ. ա.) : սորա որդի Արտաւազդի և թոռան Արտաշէսի (Բ.) պատմութիւնները և այս երեքի յարաբերութիւնը Յարաց հետ : Այս բնիկ հարատւութեան յիշողութիւնների վրայ աւելացել են Միհրբատի, Հրադամիզդի և Յրշաղիւնեաց հարստութեան հիմնադիր Տրդատ Ա-ի պատմութիւնից յիշողութիւններ : Վերջին պատմական յիշողութիւնն է Տրդատ Ա-ի ժամանակ Աբանաց արշաւանքը (72 թ. Բ. յ.) : Ռեբեմն ընդամենն 252 տարուայ պատմութիւնն է նիւթ դարձել ժողովրդական երգերի և զրոյցների :

Պատմական—առասպելական երգերն ու զրոյցները կազմում են երկու շրջան :

ա. Տիգրանի շրջան : որին վերաբերում են և Վահագնի ու Վարդգէսի առասպելները, ամպրոպային Վահագն Տիգրանի որդի դարձած, իսկ Վարդգէսը նորա հօր Երուանդի փեսայ : Միայն հիմունք չունինք ընդունելու, որ այս երեքի մասին եղածը մի ամբողջութիւն է կազմած եղել և ոչ թէ միևնոյն շրջանին պատկանող անջատ առասպելներ կամ երգեր եղել են :

Յ. Արտաշէտի շրջան: օրին վերաբերում
են Աստուածաբանի, երուսաղիմի Արտաշէտի և
Երզնասանի առասպելները: Այս պատմութիւն-
ներն արդէն միացած են եղել և մի ամբողջու-
թիւն են կապուել իրրե. հայոց «Վիպասանք» թե-
պետ և կարող էին նոցն Վիպասանքի այս կամ
այն միջոցէ պէտէն իրրե առանձին գրոց կամ երգ
ևս արտաել թէ ժողովրդի և թէ վիպասանների
մէջ: Աստուածաբան անուանակոչութեան ա-
ռասպելը նոյն շրջանին պատկանող մի անշատ
բան կարող է եղած լինել:

Թարեւայցին Տիգրանի առասպելն առնուով է
մի տրամադր պահու ընդ «Հիւսուսն պիտոյից» կամ
«Չորս հազներգութիւնք»¹, որ հիմնուած է
սակայն ժողովրդականի վրայ, իսկ Արտաշէտի-
նը «Վիպասանքից»: Թէ առնչութիւն ու-
նեցել է Տիգրանի առասպելը Վիպասանքի հետ

1. Դուցե անհետսրհիւ յիմի յիշելու որ «Բագմավեպ»
1850 ղեկ. եր. 315) կայ յիշատակուած Դաւրի (Դաւր
անյաղոք) վերագրուած մի հիմ վիպասանութիւն՝ «Գառ-
տազն Հայոց եւ Մարաց»: Հաւաստեալ Տիգրանի վրայ է եղած
այդ հիմ վիպասանութիւնը, որի օրհնից են.

«Նւ արդ ներգործող ի միտ երեւիւր առ խորհուրդս
փողարիմ

«Մեծողւոյ Տիգրանայ զեղանիմ Տիգրանուհի,

«Եւր ներգործեալ զփողարազն, նաււ ողջամիտ աշ-
խարհածուհի:»

Թէ չէ այդ չգիտենք: Սահայն կարելի է ենթադրել որ Տիգրանի և Արտաշէսի շրջաններն ինչպէս պահանջում է վիպական ոգին, ձգտել են միանալու, կեդրոն ունենալով Մարաց, որ է վիշապաշանց հետ ունեցած յարաբերութիւնը թէ ըստ պատմականին և թէ ըստ անասպելականին: Վիշապազունք սերունդ են վիշապ Աժդահակի, որին յաղթում է Տիգրանը, և որի սերունդները գերում է սա և բնակեցնում Մասինի ստորոտներում: Ապա նոյն Մարքս որ է վիշապազունք են երևան գալիս և Արտաշէսի շրջանի մէջ, որով ըստ ինքեան մի անհաւանական բան չէ դառնում որ այս երկու պատմութիւնները թէ անջատ և թէ կից ևս պատմուէին:



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Ե Ր Ե Ս

Ներածութիւն 3—9

Ա. Առասպել:

Վէպ: Ջրոյց: Վիպասանք: Առասպելներ: Երգեր: Երգք առասպելաց: Երգք վիպասանաց: 10—27

Բ. Մի քանի բառերի նշանակութիւնը Խորենացու մէջ:

Բան, բանք: Երգ, բանիցն: Երգարանք բանաւորք: Բանք երգոցն: Ի բանսն՝ որ զնշմանէ: Բան ի նմանէ: Ասել: Վիպասանք: Երգք վիպասանաց: Ի թիւ սանել: Թուել: Թուելաց երգք 28—70

Գ. Խորենացու հայեացքն առասպելի վրայ և առասպելների մեկնութիւն:

Առասպել: Առասպելի մէջ եղած ճշմարտութիւնը հաւաստելը: Ոճով պատմուածք: Այլաբանութիւն առասպելի մէջ: Թէ ինչպէս է Խորենացին մեկնում առասպելները: Հայոց առասպելները: Այլաբանութիւն եւ մեկնութիւն: Որքան արժէք ունի Վարդարեալ, պատմութիւնը: Թէ ինչն է Խորենացին սահաւ է օգտուում առասպելներէց: 71—95

Դ. Վահագնի առասպելը:

Կարծեցեալ թէոգոսիտ: Վահագնի առասպելը: Վահագն աստուած: Վահագն արեգակ: Մի նմուշ պ. Խալաթեանի հետա-

գօտութիւնից: Համեմատական եղանակը:
 Վահագն ամպրոպային աստուած: Երկնի
 եւ երկրի երկունք: Մերանի ծովի երկունք:
 Յայտերի: Կարծիք եղեգնիկի: Ժնունգ կայ-
 ծակ: Ամպրոպային աստուծու արտաքինը:
 Վեշապ եւ ամպրոպային կռիւ: Վեշապա-
 ղաղ: Վահագն, Վերեթրագնա: Վահագն,
 Հերակէս 96—175

Ճ. Հայկի սուսայելը:
 Երեւնացու աղբիւրը: Հայկ, Օրին: Հայկի
 առասպելի ժողովրդականութեան խնդիրը:
 Ժողովրդական սօսագրականութիւն: Մակ-
 դիրներ: Տարօրինակ կարծիք: Հայկի ու-
 բէլի եւ Սմբատի ու Հեփթաղի կռիւները:
 Սմբատի ու Հեփթաղի եւ Տրդատի ու Պեթա-
 թաբաւարի կռիւները: Հայկի ու բէլի եւ
 Ստեփանոսի կռիւները: Հայկի ու
 առասպելի էութեանը վիպականութիւնը:
 Կան ձեւեր, Գերեզմանք կամ Գերեզմա-
 նակք: Արդի գրպցներ: Առասպելի կա-
 պուկը: աշտարակարճնութեան Գրա: Ա-
 ռասպելի ծագումը 176—258

Զ. Անգեղ Տուրքի սուսայելը:
 Անուկը: Անգեղ տուն եւ Անգեղեայ: Ա-
 ռասպելը: Անգեղ աստուած 259—283

Է. Վիպամանի:
 I. Պատմական—կենցաղական:
 Երգանք: Ապրանկանը Վիպամանի վէպ:
 Ապրանկանը արձականքը: Ոսկէօզ, շեկափակ
 պարանը: Վարձանք (գլխադրն): Ուրբշ
 կենցաղական գծեր: Գնչապետ Կանգնուած
 վէպը: Արասպէս Ա. եւ շեկապետ Արաս-
 շապ զարգացի: Արասպէս Բ. եւ Վիպամանը:
 Տրդատ Ա. եւ Վիպամանի զարգացումը: 283—325

2. Առաւելեւ անձնական Մարտի
 Վիշապազգուհի եւ Վիշապա: Վիշապազանց
 առասպելը: Սեւ լեռան կամ Մասիսի վի-
 շապիկը: Առասպելի վարդապետները մեր
 եւ ուրիշների մէջ: Արտասուզգի բնաւոր
 բուժման եղանակները: Արտասուզգի դեռ
 կամ վիշապ: Վիշապ: Արտասուզգի անաս-
 պելը եւ համանման առասպելներ: Քաջք. 395—379

Ը. Տիգրանի առասպելը:

Աղբերը: Մար Աբաս եւ Անանուն: Հիւ-
 սունս պիտոյից: Գորս հազներգութիւնը:
 Հակասական կարծիքներ: Մեծն Տիգրան
 եւ երգեր նորա մասին: Մեծն Տիգրանի
 նկարագիրը ժողովրդական երգերի մէջ:
 Խորենացու հայեացքը մեր պատմութեան
 շրջանների վրայ: Մեծն Տիգրանն առաջին
 հին Թաղաւորներից: Ոստանիկ կամ Աբ-
 ջուրնի տուն: Մեծն Տիգրանը բնիկ Թաղա-
 ւոր: Մարք: Աժդահակ Մարայ Թաղաւոր:
 Աժդահակի առասպելն եւ անոց պատմա-
 կան գոյն ստանալը 379—510

Թ. Շամիրամի առասպելը:

Աղբերը: Իշտար, Շամիրամ, Աստղիկ (Անա-
 հեա): Իշտարի ու Իզդուբարի եւ Շամի-
 րամի ու Արայի առասպելները: Առլէզք
 եւ Արայի յարութիւնը: Թոմա Արծրունու
 յիշած առասպելը Վանայ լեզուայ գիւղի
 համար: Լէզքի եւ Արտամետի զբոյցները: 510—549

Ժ. Վարդգէսի առասպելը:

Վաղարշապատ եւ իւր առասպելը: Հրէեց
 գերութիւն Մեծն Տիգրանի ձեռով: Ե-
 բուանդ եւ Մեծն Զգրան 550—568

**ՓԱ. Երգք ցցոց և պարուց. Սանասարի
առասպելը և «Գուսանականն»:**

Սուրբ Գրքի աւանդութիւններ Հայոց մէջ:

Սանասարի առասպելը. «Գուսանական»:

**Արամ. կողմնակի վկայութիւն Հայկի առաս-
պելի ժողովրդական ծագման: Երգերի**

չեփը 568—593

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ 594—598



